Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

330

8-89
8-22

?011

E ?003

ԾԱՂԿԱՔԱՂ ՀԱՅՈՒԱԾՔ

8-82
Ա 4
Ծ-22

ԾԱՂԿԱՓԱՂ ՀԱՏՈՒԱԾՔ

ՅՕՏԱՐԱԶԳԻ ՄԱՏԵՆԱԳՐԱՅ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ


ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆԻՑ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՐՁԱԿ

ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ
1873

3928



4962
47


ՅԱՌԱՋԱԲԱՆ

Եռանդն յամաց հետէ արծարծեալ յաղգիս՝ ի բանասիրութիւն և՝ ի կիրթ ախորժակս, յորդորէ զմեզ օժանդակել ջանից նորա՝ ըստ մերումս կարի, մանաւանդ՝ ի դիւրութիւն վարժարանաց և վարժապետաց։ Յայտնի է ամենեցուն, զի՝ ի զեղչիկ և՝ ի ճարտարահիւս չարագրութիւն՝ ոչ բաւեն քերականութիւնք և բառարանք և կանոնք քերթողականք. այլ պարտ է քերականին վերծանել սահել զընտիր ընտիր չարագրածս նախնեաց, և տոգորել՝ ի նոսին, որպէս զի ըստ այնոցիկ և չարագրածք իւր յաջողեսցին։ Քերականական չարագրութիւն ոչ՝ ի ճոխութեան և՝ ի խրթնութեան բառից է, այլ յընտրութեան նոցին. ոչ յանտուոր ձևս բանից, այլ՝ ի ճարտար հիւսուած նոցին, զորս է ուսանել յօրինակազիր մատենից։ Յատուածաչունչ գիրս մեր, յորս են ամենայն ազգի ազգի մատենագրութիւնք, պատմականն և վարդա-

պետական, ճարտասանականն և բանաստեղծական, վսեմն և գեղեցիկ, խիստն և փափուկ, չեն՝ ի նոսա բառք խրթինք և ձևք շարադրութեան անտուղղք. զի ընտրելագոյն բնականն է և ինքնագարդ գեղեցկութիւն։ — Զսոյն է իմանալ և զճարտասանութենէ. զի ոչ՝ ի բոմբիւնս բանից, և արուեստակեալ ձևոց, ոչ՝ ի հեռաւոքառեալ խմաստս և յասխական ճոռոմ և ճամարտակ բացատրութիւնս է ճարտարախօսութիւն, այլ յընտրութեան բանից և ձևոց, իմաստից և բացատրութեանց, զորս դիւրագոյն է օրինակօք ուսանել։ Գիտէ և Համբակ Հռետորականին, զի պարտ է առենախօսի անդէն՝ի սկզբան յայտ առնել զպատճառս առաջիկայ ճառին, և համառօտել զպատմութիւն իրացն՝ զորոց է վէճն և դատաստան, և զկարևորութիւն նոցին ցուցանելզորպէս զիառաւելագոյն մտադրութեամբ լուիցեն ունկնդիրք։ Այլ զիտել զկանոնս զայս սակաւ ինչ զօրէ. Կիկերոնին յառաջարան յաղագս Միլոնի ճառին յոյժ առաւել օգնէ առ այս, քան զամենայն կանոնս։ — Նոյնպէս և՛ի վերջաբանին՝ յայտ է, զի պարտ է քաջի առենախօսի բովանդակել կարճ՝ի կարճոյ զամենայն վաստակաբանութիւն իւր, և մանաւանդ յուզել զկիրս ունկնդրաց. և զսոյն զայս է ուսանել՝ի նմին ճառի։ — Օրէնք են նամակագրութեան զոլ հակիրճ ըստ ոճոյն, և ընտանեկան՝ առանց Հանդէս առնելոյ նամակագրին իւրումն Հանճարոյ. զայս ևս է ուսանել յօրինակս անդ, մանաւանդ Կիկերոնին և Պեւինեայ տիկնոջ։ Զնոյն իմա և զայլոց ազգի ազգի մատենագրութեանց. զի յօրինակս անդ ուսանին Համբակք զորս ակն՝ի գործ դնելոյ զկանոնս. զի, օրինակ իմն, այլ է գիտել զձևս տաղից, և այլ ձևագրել զայնս, որ յաջողէ օրինակաւ և վարժիւք գեղեցկագիր դպրիս Այսորիկ աղագաւ զառաջիկայ մատեանս երկասիրեալ տամք՝ի լոյս՝ առ՝ի վարժ ճարտասանից, Հատընտիր՝ի քաջաց մատենագրաց։ Եւ քանզի չէր գտանել առ մերազնեայս՝ ամենայնի օրինակ պատկանաւոր, մանաւանդ առենականին և նախերգանաց, նամականւոյ և սոցին նմանեաց, Հարկ եղև յօտար աղգաց տալ առ այժմ զսոցին ճաշակ. որ եթէ լիցի ընդունելի, խրախոյս առցուք տալոյ ապա և՛ի մերոցն ընտիր ծաղկաբաղ։

ԿԱՆՈՆՔ

ԱՐՈՒԵՍՏԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ



Յամենայն ժամանակի եղեն արք՝ որ զօրութեամբ Հարատարախօսութեան գիտացին իշխել այլոց, սակայն քաջ մատենագիրք և քաջ Հարատարախօսք ՚ի ծաղկեալ ևեթ դարս կացին: Ճշմարիտն Հարատարախօսութիւն չյաջողէ առանց կրթութեան հանճարոյ և խոցականին հրաշանագաց. զի խաւիր մեծ է ընդ այս և ընդ բնականն այն դիւրութիւն խօսելոյ, որ ձիրք ևեթ բնութեան է՝ տուեալ որոց զօրաւոր են կիրք, հզօր զգայարանք, և աշխոյժ երեւակայութիւն: Սրբա զգան սաստկապէս, ըմբռնեն ոչ ինչ նուազ, բայաւորեն ազդողաբար, և գործնական ևեթ տպաւորութեամբ ներգործեն յայլս զհիացումն մտաց իւրեանց և զզացմունս: Մարմին առ մարմին խօսի անդ, շարժմունք և նշանք առ հասարակ գործակից լինին ՚ի նմին: Ի՞նչ շարժի ամբոխն և ձգի զհետ. ի՞նչ և առաւելագոյնք ՚ի մարդկանէ յողդողդին և համոզին սաստիկ ինն կամ ողորմ բարբառով ազդու և ՚ի դէպ շարժուածով, արագ արագ և քաջզօրա-

ի բառից հնչմամբք: Այլ սակաւուց այնոցիկ՝ որոց անյողդողդ են միտք, կիրթ ախորժակք և փափուկ զգայութիւնք, առ որս ոչ գնան յեղյեղմունք ձայնի, շարժուածք, և անոտի բառից հնչմունք, պարտ է դիտել ըստ օրինի կարգաւ և կապակցութեամբ ընծայեցուցանել նոցա ըզբանն. չէ բաւական բաղնել զունկն նոցա և զաչս գրաւել, պարտ է յոգիս նոցա ազդել, և շարժել զսիրտս առ միտս նոցա խօսելով:

Զոր ոմն ասեմք, ոչ այլ ինչ է՝ բայց կարգ և յեղյեղումն խմասից, որ եթէ լիցեն քաջ կապակցեալ և կուռ զհետ միմեանց ածեալ, ասի ոմն ազդու, զօրաւոր և հակիրճ. իսկ եթէ յամր յաջորդեն խմասք և ՚ի ձեռն բառից ևեթ կցորդին, որչափ և ընտիրք լիցեն, ասի ոմն ճապաղ թոյլ և դանդաղ:

Յառաջ քան զկարգն որով ունիմք յանդիման առնել զխորհուրդս, պարտ է միւս այլ կարգ հանրագոյն և հասատագոյն ունել զխաւոր տեսութեանց և խորհրդոց, սահմանելով ըստ այսմ զխաւոր կարգաւորութեան զեղն նոցա՝ յորում առաջարկութեանն պարտ է բովանդակել, և ընդարձակութեան նորա դալ ՚ի յայտ: Զայս նախկին գծագրութիւն յար ՚ի մտի ունելով, յաջողէ սահմանել ըստ չափու զմիջոցս եկամուտ և յարակից խմասից՝ որ ունին ընդ զայնս: Զօրութեան հանճարոյ է յանդիման առնել զայս ամենայն հանրական և զմասնական խմասս ամուր ըստ իւրեանցն բնիկ տեսութեան: Ամենանուրբ ընտրութեամբ պարտ է զանազանել զտարբ խմասս ՚ի բնէնաւորաց, և խելամտութիւն՝ զոր վարժիւք մտաց նագրութեան է տուեալ՝ գուշակէ զարգասիս այսր ամենայնի գործողութեան մտաց: Եթէ առաջարկութիւնն փոքր ի ինչ ընդարձակ լիցէ կամ բազմամասնեայ, դժուարին է միով ակնարկութեամբ տեսանել զայն, կամ համօրէն ՚ի վերայ կալ այնոցիկ նախկին միով ձգամբ հանճարոյ. և յետ զմտաւ իսկ քաջ ածելոյ՝ դուն ուրիք յաջողէ ըմբռնել զամենայն մասունս նորա: Ապա չէ մարթ ըստ արժան բաւականին

պարապել յայն. և այսուհիկ ևեթ է հնար հաստատել, ընդարձակել և ամբառնալ զնորհուրդս. և որչափ յաւելուցու ոք տալ մատծուխթեանցս այսոցիկ այժ և հաստատուխթիւն, նոյնչափ դիւրագոյն լինի ապա իրացուցանել զայնոցիկ բացատրուխթիւն:

Սակայն կարգաւորուխթիւնս այս ոչ է ոճ, այլ խարխիս նորին՝ որ՝ի վեր ունի զայն, վարէ և ուղղէ զարժմունս նորա և նուաճէ զայն ընդ օրինաց. առանց այսորիկ մոլորի և քաջ մատենագիրն, գրիչ նորա խաղայ առանց առաջնորդի, և ոչխար բանիւ անկանոնս և ձեւս տարադէպս ըստ դիպուածոյ անձամբ գրէ: Որչափ և պայծառ իցեն երանգք զորս՝ի կիր առնու, որչափ և գեղեցիկ զմատունան յօրինեսցէ, եթէ բոլորն խիստ իցէ կամ հազիւ զգալի, ոչ է քաջ մատենագրուխթիւն: Այսր աղագաւ որք հանգոյն խօսիցին իւրեանց մատենագրին, թէպէտ և կարի քաջ խօսողք իցեն, այլ չեն բարւոք մատենագիրք. և որք առաջնումն բոցոյ երևակայուխթեան հպատակին, չկարեն պահել զայն անչէջ. որք երկնչելոյն թէ գուցէ անկցին՝ի մտաց նոցա խմաստք անկցորդք դիւրաւահք, և որք յայլ և այլ ժամանակս դրեն հատուածս այլ և այլ, չկարեն երբեք զօդել զայնոսիկ ընդ իրեարս առանց բանագբօս ձևոց անցմանց: Եւ համառօտ ասացեալ, են իսկ յոլով ձառք կարիատուխք, այլ սակաւք յոյժ միաձոյլք:

Սակայն ամենայն առաջարկուխթիւն մի ինչ է, և որչափ իսկ իցէ ընդարձակ, մարթ է ամփոփել զայն՝ի մի ձառ: Դադարք, հանգիստք և հատուածք չունին տեղի՝ բայց ուր զայլ և այլ իրաց իցեն ձառք, և կամ ուր զմեծամեծ դժուարին և զանման իրաց առաջի կայցէ ձառել, և խոչ ընդ ոտն հանձարոյ ընդ առաջ ելանիցէ բազմապատկուխթիւն իրաց, և հարկ յարակից հանդամանաց: Ապա թէ ոչ բաժանմունք բազմաւք փոխանակ ամրակուռ գործելոյ զձառն՝ քակտեն զվիճուխթիւն նորա: Լուսաւորագոյն առ աչս թուի մատեանն, այլ առաջարկուխթիւն մատենագրին նմանեալ, ոչ տպաւորի՝ի միտս ընթերցողին, չէ իսկ ախորժելի՝ի լուր՝ բայց չարայարուխթեամբ խօսիցին, բարեյարմար կապակցուխթեամբ խմաստիցին, տակաւ՝ի լոյս գալով առաջարկուխթեանն, ասպիճանեալ ամբարձմամբ և մի օրինակ յառաջատուխթեամբ, զորս գադարումն եղծանէ կամ թուլացուցանէ:

Ընդհէր գործք բնուխթեանն ամենակատարք են. զի իւրաքանչիւր յայնցանէ է մի ինչ սմբողջ, և գործէ ըստ միջանկենագիրն առաջարկուխթեանն անխլիրա: Պատրաստէ նա լուխթեան զերծանս արգասեաց. յօրինէ միով ներգործուխթեամբ զնախադիծ բնուխթիւն էից, հանէ զնոսա՝ի լոյս, կատարէլագործէ՝ի սահմանեալ ժամանակի յարատև չարժմամբ. հիացուցանէ գործն, այլ գրոշմ ատտուածային զորոյ բերէ նա յինքեան զսիպ՝ առնէ զհիացումն զայն: Միաք մարդկիզէն չկարեն ատեղծանել ինչ, և ոչ ածել ինչ՝ի լոյս, բայց բեղնաւորեալ՝ի փորձոյ և՝ի խորհելոյ, աերմանք արգասեաց նորա են հմատուխթիւնք իւր: Եթէ նըմանող լինի նա բնուխթեան յերկս և՝ի վաստակս իւր, եթէ ամբառնայ հիացմամբ՝ի զինն գերակայ ճշմարտուխթեանց, եթէ կցորդէ զայնս և կազմէ նոքօք մի ինչ և միակարգ, եթէ կցորդէ խնչամուխթեամբ՝ի վերայ անսասան հիմանց արձանս անմահականս:

Այս թևերուխթեան առաջարկուխթեանն, և վասն ոչ բաւականապէս խնչամեալոյ իրին՝ զորմէ ձառէ, գտանի ոք տարակուսեալ, և չգիտէ ուստի զձառն սկսանել: Առաջի լինին նմա իմաստք բազումք. այլ զի չէ նորա կշռագատեալ զայնս և կարգաւորեալ, չգիտէ զոր քան զոր նախակարգել, և կայ մնայ տարակուսեալ: Այլ որոյ յօրինեալ իցէ զառաջարկուխթիւնն, և ժողովեալ և կարգաւորեալ զամենայն իմաստս կարևորս ձառին, գիտէ երբ զգրիչ՝ի ձեռն առնուլ, զգայ զի հասեալ են երկունք մտացն՝ի ծնունդ, ստիպէ ածել զայն՝ի լոյս, և ախորժանօք բուռն հարկանէ՝ի գրիչ, իմաստք կուռ զհետ միմեանց յաջորդեն, և ոճ նորա յաջողէ բնական և դիւրին. ախորժանացն զհետ գան աշխոյժք, սփռին ընդ ամենայն, և շունչ լինի և հոգի ամե-

նայն բացատրութեանցն տան, ամենայն ինչ անդ ևս քան զևս կենդանանայ. յերանակ Ճառին ամբառնայ, խմաստք իբրաքանչիւր պայծառանան, և տպաւորութիւն կցորդեալ ընդ լուսոյ՝ յաւելու զայն, ածէ տանի յառաջ, և յասացելոյ անտի յասելին ցոլացուցանէ, և լուսաւոր և ցանկալի զոձն յօրինէ:

Զինչ որ այնպէս զկերմութիւն Ճառիցն եղկացուցանէ, որպէս իցէ ամենայն ուրեք տիպս բանից դեղափայլս յաճախելոյ. չինչ որ այնպէս աղօտացուցանէ զլոյն՝ որում պարտ է հաւասարապէս զամենայն մասունս Ճառին Ճառագայթիւքն լուսաւորել, որպէս կայծք՝ որ 'ի բաղմանել բառից ընդ իրեարս թօթափին, և որք հազիւ խաղեալ զաչս՝ թողուն զնոսա 'ի խաւարի: Խմաստք են գեղափայլք, որք 'ի խաւարի ևեթ փայլեն. կողմնակի ածին 'ի լոյս, այլոց գիմացն կալով 'ի տառեբի. և բաղում այն է, զի դէմք նոցա որ ածին 'ի լոյս՝ են մի յանկեանցն, յորում միտք որչափ գիւրաւ զբօսանին՝ նոյնչափ առաւել հեռանան 'ի գլխաւոր գիմացն, ընդ որս տուեալ են հասարակաց միտք նկատել զերս:

Զինչ հակառակ Ճշմարիտ Ճարտարախօսութեան, որպէս 'ի կիր առնուլ խմաստս նրբինս, և զհետ լինել թեթև և անօթի խորհրդոց՝ որոց չինչ հաստատութիւն, և որք որպէս թիթեղն ոսկւոյ կառնելոյ, որ կորստեամբ ևեթ հաստատութեան առնուն փայլուածն: Վասն որոյ որչափ առաւել յաճախեն խմաստք այսպիսիքն նուրբք և փայլունք, այնչափ նուազէ Ճառին այժ և լոյս, եռանդն և ոձ: Բայց միայն եթէ խմաստն այն իցէ հիմն Ճառին, և մատենագրին չկայցէ այլ ինչ առաջի՝ բայց զուարճանալ, յայնժամ արուեստ խոնարհագոյնս խօսելոյ դժուարագոյն թերևս պատահէ քան զարուեստ զբարձունս խօսելոյ:

Զինչ հակառակ բնականին գեղոյ քան զձիգն՝ զերս սովորականս և հասարակ Ճամարտակօրէն բացատրելոյ, որ նուաստացուցանէ յոյժ զմատենագիրն: Ոչ միայն չզարմանայ ոք ընդ նա, այլ և աւաղէ զկորուստ ժամանակին խաղալոյ նորա ընդ վանկս՝ առ 'ի զբուցել ոչ ինչ աւելի քան զոր ամենայն ումք է ասել: Այս թերութիւն է ամուլ մուտց մշակելոց, որոց Ճոխութիւն մեծ է բառից, այլ ոչ և խմաստից. վասն որոյ վաստակեն նոքա 'ի վերայ բառից, և Ճամարին տալ խմաստս՝ զձև բանիցն փոփոխելով, և յատկաբանել եղծանելով զբնին՝ բարբառ, և զնշանակութիւնս բառից կամակորելով: Այսպիսեաց և ոչ սուեբքք են ոձոյ, թող թէ ոճ. պարտ է ոձոյ դրոշմել զխմաստս, իսկ նոքա գծագրել ևեթ գիտեն զբառս:

Պարտ է ապա առ 'ի քաջ մատենագրէ՝ գիտել լիով զպատՃառս Ճառին, խոկալ յայն առ 'ի նկատել յայսոսպէս 'ի նմա զկարգ խմաստից, շարայարել զայնս շղթայաշար՝ օղեցն առհասարակ մէն մի խմաստս բերելով, և յառնուլ 'ի ձեռն զգրիչ՝ ածել զայն ընդ նոյն կարգ խմաստից, մի՛ նեբել նմա հեռանալ անտի, մի՛ յամել ուրեք, այլ ընթանալ միօրինակ ընդ ասպարէզն սահմանեալ նմա: Յայսմ իսկ է սաստ ոձոյ, և այս կացուցանէ զմիութիւն նորա, ուղղէ զդնացս, և յօրինէ զայն Ճշգրիտ և պարզ, հաւասար և բացայայտ, կենդանի և կարգաւորեալ: Յայս նախկին կանոն թելագրեալ 'ի հանձարոյ, եթէ յաւելցի փափկութիւն և ախորժակ, քաջ ընտրութիւն բացատրութեանց, և զգուշութիւն՝ հասարակաց անուամբք զերս իբաքանչիւր անուանելոյ, եղանի ոձն ընտիր. իսկ եթէ յաւելցի և անվստահութիւն ընդ նախկին չարժուին, արհամարհութիւն փայլման, և անողոքելի ընդդիմութիւն զուարճախօս երկդիմութեան, եղանի ոձն ծանր և մեծավայելուչ: Ի վերայ այսոցիկ եթէ ոք մատենագրեսցէ որպէս խորհի, և իցէ հաւանեալ յոր ինչ զայսս կամի հաղորդել, այս հաւատարմութիւն ընդ անձին՝ որ վասն այլոց գործէ զպատՃաճն վայելչութիւն և զշնորհաւորութիւն ոճոյ, տացէ նմա ընդունել զամենայն արգասիս Ճառին, եթէ միայն զներքին հաւանութիւն իւր մի կարի իմն նախանձու 'ի յայտ ածիցէ, այլ անկեղծութեամբ քան վստահութեամբ, բանիւ քան թէ կրիւք:

Կանոնք չկարեն ընդ առեղն հանճարոյ. եթէ չիցէ հանճար, ընդունայն են կանոնք: Քաջ մաեստագրել է քաջ իսկ խորհել, քաջ ղգալ, և քաջ զնորհուրդսն ի յայտ ածել. այսինքն է ունել միանգամայն միտս, հոգի և ախորժակս: Որ է՝ զամենայն իմացականին զօրութիւնս միանգամայն ի կիր արկանել, իմասք ենթակայ լեզուի են ոճոյ, բարեյարմարութիւն բառից յաւելեալ ի նոյն՝ արգասիք զգայուն զգայարանաց. շատ է խուն ինչ զգայութիւն ունել լսելեաց՝ առ ի խորչելոյ յանյարմարութենէ ձայնից, և կրթել և կատարելագործել զայնս ընթերցմամբ քերթողաց և ճարտասանից՝ առ ի նմանող լինել նիւթաբար քերթողական յանդից և ճարտասանական դարձուածոց: Արդ նմանողութիւն չէ և չէ ստեղծանել, և յարմարութիւն ձայնից չէ աւելի ինչ քան զենթակայ, և գտանի ի ճառս իսկ թափուրս յիմաստից:

Ցեղանակ ճառին ոչ այլ ինչ է, բայց ճահաւորութիւն ոճոյ ընդ իրացն՝ զորոց ճառքն են: Ոչ է պարտ այնմ գոլ երբէք բռնազբօս. պարտի բնաւորապէս լինկութենէ իրացն գալ յառաջ, և պատշաճել հանրական իմաստից ճառին: Եթէ մաեստագիրն ի հանրագոյն իմաստս ի վեր ամբառնայ, և պատճառք իսկ ճառին բարձրագոյնք իցեն, ի նոյն բարձրութիւն և լեզուանակ ճառին Թուի ամբառնալ. և եթէ հանճար մաեստագրին կալեալ զայն ի բարձրութեան անդ՝ առ իրաց իւրաքանչիւր լոյս պայծառ, և զդեղ երանգոյ ազդուութեան նախագծին, և միանգամայն ասացեալ՝ յանդիման առնէ զիմաստս իւրաքանչիւր բացայայտ և կենդանագիրն նկարուս կազմեալ իւրաքանչիւր կարգ իմաստից պատկեր ներգաշնակ և խօսուն, անդ լեզուանակ ճառին ոչ բարձր եւթէ՝ այլ և վսեմ եզանի:

Քաջ մաեստագրութիւնք այնոքիկ եւթէ են, որ ունան յազգէ յազգ. ամբաւ հմտութիւն, անշրջ իրք, և գիւտք իսկ նորանորք ոչ երաշխաւորեն զնոցայն անմահութիւն: Եթէ զմանուճից իրաց իցեն ճառք, և առանց կիրճ ախորժակաց գրեալ, առանց ազնուականութեան և հանճարոյ, կարիցեն, ղի զհմտութիւնս զործս և զգիւտս գիւրին է բառնալ առնուշ ի կիր ածել, և բարւոք ևս ճարտարապետն գրչի մարթի է զայնոսիկ մաեստագրել: Ահա ամենայն արտաքոյ են մարդոյ, իսկ ոճ յինքեան իսկ ի մարդումս է, և չէ մարթ բառնալ զայն ի նմանէ, ոչ ածել այլուր, և ոչ այլայլել: Եթէ ուրուք բարձր է ոճ, ազնուական և վսեմ, գովեսցին նա յամենայն ժամանակի. զի ճշմարտութիւն եւթէ է տևող և յարակայ, արդ ոճոյ գեղեցկութիւն յամբաւ ճշմարտութեանցն է՝ զորս բարձեալ բերէ յինքեան: Իմանալի գեղեցկութիւնք առհասարակ՝ որ են ի նմա, և հաճոյութիւնք՝ յորոց կազմի, են ճշմարտութիւնք շահեկաք, թերևս և պատուականագոյնք մարդկեղէն մտաց քան զօգտութիւնս պատճառաց ճառիցն:

Վսեմութիւն ի բարձրագոյն պատճառս եւթէ ճառիս կարէ կալ: Իանատեղծութիւն, պատմութիւն և իմաստասիրութիւն, երիքին իսկ զնոյն իրաց ճառն, և իրքն մեծ յոյժ, ասեմ իսկ զմարդ և զՀամագոյս: Իմաստասիրութիւն նկարագրէ զՀամագոյս, իսկ բանաստեղծութիւն նկարէ և գունագեղէ, նկարէ նա զմարդ և մեծացուցանէ զնա, և գեր ի վերոյ ամբառնայ, գիւցազունս և դիս ի մարդկանէ ստեղծանէ: Պատմութիւն զմարդ եւթէ նկարագրէ, և նկարագրէ զնա որպէս և էն, և ըստ այսմ յեղանակ պատմագրին ոչ երբէք եզանի վսեմ, բայց ի նկարագրել զաւադագոյնս ի մարդկանէ, և ի յանդիման առնել զմեծամեծ գործս նոցա, զմեծամեծ արուեստիւնս, զմեծամեծ յեղափոխութիւնս. իսկ այլ ամենայն ուրեք շատ է՝ զի իցէ ծանր և մեծավայելուչ: Ցեղանակ իմաստասիրին՝ մարթի իսկ գոլ վսեմ ի ճառել նորա զօրինաց բնութեան, Համագոյից, զանսահման համատարփակ վայրէ, զնիւթոյ, զշարժմանէ և զժամանակէ, զհոգւոյ, զմարդկեղէն մտաց, զդգայութենէն և զկրից. իսկ այլ ամենայն ուրեք շատ է՝ զի իցէ ազնուական և բարձր: Այլ լեզուանակ ճարտասանին և քերթողն ուր զմեծամեծ իրաց խօսին՝ միշտ իսկ պարտի գոլ վսեմ. զի ի ձեռս նոցա է յաւելուլ ի մեծ

ծուլթիւն իրացն երանեալ յեպտեղմունս և երեւելեաց սրչալի և հաճոյ իցէ նոցա. և զի դարձեալ հաստանէ նոցա նկարագրել միշտ և մեծացուցանել զնոր՝ զորոյ խօսին, պարտ է նոցա ամենայն ուրեք ի կիր արկանել զամենայն զօրութիւն, և հանդէս առնել ամենայն ընդարձակութեան հանճարոյ իւրեանց:

ՊԻՖԻՖՈՆ. Ի ձառն չօգանալոյ փաղդխոյան ձեմարանին:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՐՋԱԿ

ԾԱՂԿԱՓԱՂ ՀԱՏՈՒԱԾՔ

ՅՕՏԱՐԱՋԳԻ ՄԱՏԵՆԱԳՐԱՅ

ՊԱՏՄԱԿԱՆՔ

ՃԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊԱՏՈՒԻՐՔ Ա.Ր. ԱՅՍ

Կիկերոն սահմանէ զայն բացատրութիւն իրաց՝ որ խակիկք են առաջարկութեան, կամ եկամուտք՝ այլ պատկանաւորք այնմ և յարակիցք:

Երեք ինչ կարևոր են պատմութեան. զի իցէ համառօտ, բացայայտ, և ճշմարտաւոխ:

Պատմութիւն համառօտ է և ճշգրիտ, եթէ ոչ՝ ի բացուստ սկսեալ և ոչ՝ ի բաց ընդարձակի քան զպահանջեալն յառաջարկութենէն. եթէ թողու՝ ի բաց զմանրապատում հանգամանս, ուր բովանդակութեան իրացն ևեթ պէտք իցեն բացատրութեան. եթէ ոչ արտաքոյ առաջարկութեան ելանէ. եթէ տայ և զլսեալն՝ ի միտ առնուլ. եթէ լսէ ոչ միայն զշնորհակարս գաւառն, այլ և զանպիտանս. եթէ միանդամ ևեթ ասէ զկարևորն, եթէ ոչ աւելի ինչ ասէ:

Պատմութիւն բացայայտ է, յաւելուն նոյն ինքն, եթէ իրքն յիւրեանց տեղւոջն իցեն և՝ ի բնական կարգին. եթէ չիցէ ինչ՝ ի նմա մթին և պատ՝ ի պատ, ոչ արտուղի, ոչ՝ ի

ցանկալեաց ինչ մոռացեալ, և ոչ աւելի ինչ քան զոր խըն-
գրէ ոք գիտէ. զի ընդոյն հանգամանս համառօտութեան պա-
հանջէ և բացայայտութիւն. քանզի յաճախ առ երկարա-
բանութեան քան առ մթութեան գտանի պատմութիւնն
դժուարիմաց: Պարտ է ոչ ինչ նուազ փոյթ ունել և յատա-
կութեան բառից իւրաքանչիւր, և լուսաւորութեան բա-
ցատրութեանց առհասարակ. և է այս հատարակաց կանոն
ամենայն ազգի ազգի ճառից:

Առ ի ձշմարտիւ առնելոյ զպատմութիւն՝ պարտ է ա-
ռաջի առնել զերան, որպէս է սեւանիլ ի բնութեան. զի-
տել զպատշաճն նկարագրի, բարուց, և հանգամանաց իւ-
րաքանչիւր ուրուք. միաբանել զպատմութիւնն ընդ հան-
գամանս տեղւոյն, և պահու՝ յորում այն անցք անցեալ
իցէն, և ժամանակի՝ որ ի կատարումն իրացն իցէ կարևոր.
և առնուլ ի հաւանսիս զնոցին համբաւոյ, և զնոցին խոհ
ունկնդրոյց կարծիս: Պարտ է դարձեալ, յաւելուլ նոյն
ինքն, յեռուլ զպատմութիւն՝ ուր ոչ ինչ առնանէ ճառին,
և մի ուր ոչ ինչ օգնէ առաջարկութեան. այլ ի ձահ պատ-
կանաւորել զայն և յօգուտ ի կիր արկանել:

Պատմութիւն ածէ ելս ի յանդիման առնել եղեան
ինչ ծանր խոպոպէս, զոր տպա հարկ իցէ թեթևացուցանել
պատճառանօք և փաստաբանութեամբ: Եթէ դէպք պա-
հանջիցեն զայն, պարտ է ճարտարութեամբ այսր անգր ի
ջատագովութեան յեռուլ զմեռնուս իրացն, իւրաքանչիւր
մասին պատճառս ի նուազուցն եղեանն, հետ ընդ հետ
սպեղանի ի վէրայ վիրացն ածելով, և պաշտպանութեամբն
զառելի գործոյն մեղմեալ զպատասխանութիւն, ուր հակա-
ռակորդին ցուցեալ իցէ զայն՝ որպէս կամք էին մեզ ցու-
ցանել, կամ ուր ծանօթ իցէն իրքն ունկնդրաց՝ և ուր չիցէ
ինչ մեզ փոյթ այլազգ զերան յանդիման առնել:

Եւ ոչ ըստ պահանջելոյ գտանի է պատմութիւն, ուր
փաստաբանն յանդիման առնէ բացայայտաւին և պայծառ
երանգով որ ինչ ոչն է ի նպաստ իւր, և լռէ կամ թօղու
ի մեծան որ ինչ իւր է նպաստաւոր: Հակառակ այսմ թե-

թութեան հանճար ճարտարախօսին քօղարկէ ըստ կարի
զհակառակնեղիսն, հարկանցն անցեալ զնոքօք՝ եթէ չիցէ
մարթ լուել զայնս, և յինու և ընդարձակի ի մասուն եւեթ
նպաստաւորս:

Սոքմիք պարզ օրինօք յաջողեաց Կիկերոնի գոլ, ոչ ա-
սացից հանճարեղագոյն՝ զի այս բնութեան է շնորհ, այլ
նրբագոյն և ճարտարագոյն ի հռետորս:

Ի պատմութեան որպէս և յայլ մասունս ճառին օգնէ
յոյժ յուզել անուղղակի զկիրս առանց յայտնի առնելոյ
զձիգն որպէս ի յուզելն զայնս ուղղակի: Ընդմանաւ սա,
թափ անցանի, տիրէ մեղմով ի սիրտս, և գերէ զնոսա
յանզգաստից, այնչափ առաւել վասահ յարգասիս ճգանցն՝
որչափ չգործել ինչ ձիգն: Որպէս վկայ եւեթ իրացն խօսք
վիսատաբանին. և ուր նրբն ինքնին ահարկու են կամ գորո-
վահան, կամ զրդեն ի ցասումն և յատելութիւն, քաջ
զգուշանայ չիասնել ի պատմութիւն իւր զկիրս՝ զորս կամի
զարթուցանել ի լսողս: Յանդիման առնէ զպատկեր զորու-
թեան և տկարութեան, անիրաւութեանց և անմեղութեան.
ցուցանէ ոչ ինչ աւելի քան զընդհձել հզօրին զտկարն, և
զտկարին անկանել ընդ նեղաւ հեծեծանօք. և որչափ ինչ
պարզ բացատրէ, այնչափ առաւել շարժէ զլսօղս:

Ի շարժել զկիրս անուղղակի՝ ոչ ի վանդ արկանի վիս-
տաբանն զպաշտօն իւր և զդատ:

Պատմութիւն, յայտաբանութիւն, նկարագիր, զորս
առնէ, կարէն աւելի կամ նուազ յուզել զկիրս՝ առանց
ինչ հեռանալոց. այլ յորժամ ինքնին շարժեալ ի կրից՝ ջա-
նայ շարժել զմիտս և չկարէ, և ձախողանի ամենայն ինչ զնո-
վաւ կայ անկարելիր, և ինքն միայն յուզեալ, ներհակա-
նալս այսուիկ ծայր կացուցանէ զառաջարկութիւն իւր
զդօնական, նուազս զձշմարտանմանութիւն իւր, և յամենայն
զօրութենէ մերկ զշնարս իւր: Այս առ անվրէպ պատրաս-
տելոյ զշարադած ուղղակի շարժութեան կրից, պէտք են
նախ զանուղղակի շարժուն առնուլ ի կիր, և յուզել այ-
նուիկ զկիրս ունկնդրաց: Եւ իբրև առանին, և հծծիւն

պատմուԹեան լինի լսելի, կամ արտասուք կարեկցուԹեան Թանան զաչս, յայնժամ Ճարտասանին պարտ է խառնիլ ի խուռն նոցա, և բերել յանձին պղպջս կրից առաւել քան զնոսա զորս ի ցաւուն կամ ի գուԹ շարժէ: Չի ոչ ևս յայնժամ ինքն Թուի շարժել զնոսա, այլ մանաւանդ առնուլ ի նոցանէ շարժուն. ոչ ևս ի կիրս իւր լինի անձնատուր, այլ ի կիրս լսողաց. և ի խառնելն ի նոսին՝ յայլոզէ նմա ձգել զնոսա զհետ: Ուղղակի շարժուԹեան կրից կէտ վանդաւոր և փափուկ այն է՝ պատկառ կալ ունկնդրացն կարծեաց, և յենուլ զայն ի նկարագիրս նոցին. և մի միայն խնամս ի ներքս անկեալ, որ ի միտս լսողաց հակառակ այնմ ելանէ, եղծանէ զայն:

ՄԱՐՄՈՆԴԷԼ. Տարերք ՔաւատիրուԹիւն:

ՆԱԽԱՄԱՐԴՆ ՊԱՏՄԷ ԶՈՒՆԱԶԻՆ ՇՈՒՐՃՈՒՄՆ ԵՒ ԶԶԳԱՑՈՒՄՆ ԵՒ ԶԴԱՑՈՒՄՆ ՈՐ ՑԵՏ ՍՏԵՂԾՄԱՆՆ

Տակաւին ի յոշ ինձ գառնայ վայրկեանն հրճուալից և պահուցանողական յորում ծանեայ զառաջինն զնմն սեպհական էուԹիւն. ոչ գիտեի Թէ զնէ իցեմ, ուր իցեմ և ուստի գայցեմ: Ի բանալ աչացս զիպան յիս զդայուԹիւնք, լոյս և կամար երկնից, երկիր դալարի և ջուրք բիւրեղապէս գրաւէին զանձն իմ և շնչէին յիս հոգի և անճառ բերկրանս ազդէին յիս: Կարծէի զառաջինն եԹէ հակքս համօրէն յիս ինքն իցեն, և մանն անձինս համարէի զնոսա:

Տակաւ հաստատեի յինքնատեղծ յայս կարծիս, և ահա դարձուցի զաչս իմ յաստղն լուսապայծառ. նշոյլք նոցա շլացուցին զաչս իմ, և յակամայս փակեցի զարտաքնուն իմ, զի ցաւեայց ականոցիս:

Յառնուլ զիս ստուերայց, համարեցայ եԹէ ահա կուրասի զնմն էուԹիւն:

Եւ միւնդհոս լքեալ և ընդարմացեալ խորհէի ընդ յեղափոխուԹիւն անձինս, և ահա ձայն յունկն իմ հնչեաց, աւաչք Թռչնոց և սօսաւիւն հովմոց դաշնակաւորս իմն յօրինեին նուագս, որոյ քաղցրուԹիւն ազդէր ի մասունս հոգւոյս. ընդ երկար լեալ ունկնդիր համոզակեր լինէի անձին, եԹէ ես ինքն իցեմ այն դաշնակաւորուԹիւն:

Այն ինչ մտախորհ հիացեալ կայի ընդ նորոգաւորս այս կենդանուԹիւն, և ի մոռացօնս ինձ դառնայր լոյս՝ որ կանխաժամօթ մասն էր էուԹեանս, և ահա բացան անդրէն աչք իմ. ով քանի խնդուԹիւն էր ինձ ի գտանել անդ միւսանգամ զնչուլագեղ զարարածս. և խինդք սրտիս անցին զանցին քան որ ի նախկին զգայուԹեանս, և գոգարեցան առ վայր մի զբօսանք ձայնից:

Երջիկ զաչս իմ ի տեսիլ բիւրուց էակաց, և ի միտ առի վաղվաղակի եԹէ հնար էր ինձ կորուսանել և գտանել զնոսին, և Թէ էր յիս զօրուԹիւն ըստ կամի եղծանելոյ և միւսանգամ վերաստեղծելոյ զայս գեղեցիկ մասն իմոյ էուԹեանս, և Թէպէտ Թուէր ինձ անբաւ ի մեծուԹեան և վասն բիւրապատիկ փոփոխմանցն և վասն երկնեղանգ գուՆոց, բայց համարեի համբարեալ զնոսա ի մասն ուրեք անձինս:

Տակաւ անայլայլակ աչօք նկատեի և անվրդով լսէի, և ահա սիւք ԹեԹևընԹայց և հոմմաբեր էած ինձ բուրմունս անուշից, որ նուագեալ Թուլացուցին զսիրտ իմ, և ազդեցին յիս սէր և զրգանս առ անձն իմ:

Ծփեալ ի համայն զգայուԹեանցս, և յորդորեալ ի հաճոյից չքնաղ և վսեմաբերձ էուԹեանս՝ յանկարծ ի վեր վազեցի և Թուէի վարեալ յանծանօԹ ինն զօրուԹենէ: Ջայլ մի յառաջեալ, անդէն զկայ առեալ արձանացայ, ի նորասքանչ զրից մարմնոյս հարեալ յապշուԹիւն. կարծէի փախչել յինէն գոյուԹեանս, և առեալ փոխուԹիւնս իմ վերդվին զէս համօրէն, կարծէի եԹէ ամենայն ինչ խառն ի խուռն կուգային:

Ամբարձեալ զձեռս իմ՝ ի գլուխս ջջայփէի զձակատն իմ և զաչս, և ընդ բովանդակ մարմինս իմ. և համարեցայ յայն-ժամ ԹԷ ձեռն իմ իցէ առաջին գործարան էուԹեանս, զգայուԹիւնք որ նուաճ՝ ճշդարտագոյնք էին և անԹերիք, որով և վայելքն գերազանցք քան զՀաճոյս՝ զորս ազդէին յիս լոյս և ձայն, մինչ զի կամակար մատուցի զանձին առաջ նորոգուԹիւն՝ յոյս հաստատուն մատն իմոյ էուԹեանս, և գիտացի ԹԷ տակաւ ընդարձակիէին խորհուրդք մտացս և ճշմարտեալ տարբրանային:

Զօր ինչ ձեռամբ ջջայփէի ՝ի մարմնի իմում՝ զգայուԹիւնք ընդ զգայուԹեան ձեռինս փոխանակէին, և յոր հպէի կրկին երևոյԹս մտաց ազդէր ՝ի հոգիս:

Վաղվաղակի ՝ի միտ առի անյապաղ՝ ԹԷ զօրուԹիւն զգայուԹեան ծաւալեալ էր ընդ անձն իմ բովանդակ, և ծանեայ զահման իմոյ էուԹեանս զոր յառաջն անպարագիր համարէի:

Յիս ինքն զաչս իմ դարձուցեալ մեծատարը զանձն իմ վարկանէի, մինչ զի այլ ամենայն արարածք զորս նկատէի՝ ԹուէԷին առ նուաճ կէաք մնանուկք լուսանշոյք:

Հարուստ ժամն հիացեալ սկսնուի ընդ անձն իմ, և ակն կատոյց լեալ ընդ ձեռն իմ՝ զարժուածս նորին զննէի, և անհեգեգս իմաստասիրէի զամենայնէ. համարէի ԹԷ շարժուած ձեռացս էուԹիւն ինն էր փախստական, և նմանօրինակ գիպաց անանձրպետ յաջորդուԹիւն. և այն ինչ մերձեցուցեալ յաչս իմ զձեռս, և ահա մեծացաւ նա քան զմարմինս իմ բովանդակ, և Թագուցեալ ծածկեաց յաչացս զլոյսն զոր ընկալեալ էի:

Վարանեալ սկսայ ՝ի միտս իմ մի գուցէ կեղծակարծ ինչ իցէ որ յաչս զգայուԹիւն. զի տեսեալ միանգամ ճշմարտապէս ԹԷ ձեռն իմ մատն ինչ փոքրիկ էր մարմնոյս, չկարէի ՝ի միտ առնուլ՝ ԹԷ զիաղդ մարԹ էր նմին այնչափ մեծանալ մինչև անհեգեգ ԹուէԷ ինձ մեծուԹեանն: Վասն որոյ եղի ՝ի միտս իմ չջայփականին ևԷԹ լինել սպասաման՝ որով ցարդ չէր իմ պատրեալ, և անձնատահ լինել յայլ-ամենայն զգայուԹեանց և յէուԹեանց:

Օգտաւատոյց եղև ինձ խորհուրդս. զի այն ինչ ոտս առեալ ընԹանայի բարձրագլուխս և երկնադէտ, ընդհարայ մեղմով ընդ ծառ մի արմատնի. ահաբեկ ընկրկեալ ձգեցի զձեռն իմ յէակն օտարոտի, զոր և այնպէս համարեցայ զի զգայուԹիւն ընդ զգայուԹեան ոչ փոխանակեաց. ՝ի բաց փախեայ ՝ի նմանէ պահուցմամբ, և զայն առաջին նուագ ՝ի միտ առի՝ ԹԷ գոն այլ էակք արտաքոյ քան զիս:

Ընդ գիւտս նորահրաշ առաւել վըգովեցայ, քան ընդ այլս ամենայն, և յոչ կամացս հաստատեցայ յայս կարծիս, և մտախորհ լեալ ընդ դէպս անակնկալ, հաստատեցի ԹԷ և զարտաքինոյ զնոյն օրինակ զփորձ առնուլ արժան է որպէս զմարմնոյս և ԹԷ չէր լինձ մարԹ այլով իւրք զգայուԹիւն նոցին հաւաստել, բայց շջայփամբ ձեռինս: Վասն որոյ կամեի ձեռնհաս հպիլ ամենայնի. կամեի ըմբռնել զաԹեգսն, տարածեցի զբազուկս իմ առ ՝ի ընդգրկել զծագս տիեզերաց. բայց ուշանայուԹեան օգոյ գիրկս արկանէի:

Իւրաքանչիւր փորձ հանգիպեայ ՝ի զարմացումն գրաւէր զիս, զի զամենայն արարածս միապէս հպաւորս ինձ համարէի, մինչև յետ բազում գիպաց՝ ուսայ աչօքս զձեռս իմ ուղղել. այլ քանզի այլազանք էին տպաւորուԹիւնք ձեռացս, քան զոր յաչացս ընդունէի, վասն որոյ և ոչ զուգաձայնք էին զգայուԹիւնքս ընդ միմեանս, որով և ոչ անԹերի՝ մատցս դատաստան. որով և բովանդակ իմն էուԹիւն ոչ այլ ինչ Թուէր լինձ՝ բայց գոյուԹիւն ԹերակատարՀ:

Խորատուս լեալ յանձն իմ, որ ինչ էիս, և որ ինչ լինելոցն էի, խորհուրդքս այսոքիկ տարագնդիք լքեալ կորացուցին զանձն իմ. և որչափ ՝ի նոսին մտախորհ լինէի, այնչափ ևս վարանք յեզակարծ ընդ առաջ լինձ ելանէին: Պարտաւեալ ՝ի վարանմանցս և վատակնեալ ՝ի յուզմանց հոգւոյս, կՀոտեցան ծունգք իմ և ընկողմնեալ հանգեայ: Ծամ հանգստեան նորոգատուր զօրուԹիւն ՝ի զգայարանս իմ յաւել:

Ա՛յսպէս բազմեալ կայի ընդ ստուերաւ սաղարԹագեղ ինչ ծառոյ յորմէ պտուղք բոսորագեղք ողկուզօրէն կա-

խեին առաջնամերձ հպատոր ձեռինս: Ի մերձենալ առ նա մեղմագոյնս՝ թօթափեալ անկան յոտսոց ծառոյն, որպէս թօթափիլի թռուզ վաղահասուկ:

Ի ձեռս առի զմին 'ի պտղոցս. և յաղթական զնս ինքն համարեի, և պանծալի ընդ զօրութիւն իմ, երբոր զի 'ի ձեռին կալեալ ունէի զեակ մի բռնադակ. այլ ծանրութիւն նորին թէ և դիւրաւար թուէր ինձ ընդդիմադրութիւն ինի հոգեկան, այլ բերկրեի յանձն իմ՝ տեսեալ զնս յաղթական նմին: Մերձեցուցի զնս յաչս իմ, և զննեի զձև նորին և զերանգս. և 'ի բուրել անուշից և ևս մծաղցնս կալոյ զայն առ ինս մերձ առ շրթունս իմ, և հոտոտեի մեծաշունչ զանուշահոտն քաղցրութիւն, և վայելեի 'ի հեշտարար տարփս ունգոյ. զի էր անձն իմ բռնադակ 'ի սիւքս անուշարարս: Բայց բերան իմ 'ի կլանել զօդն կենդանարար, բացաւ միւանդամ 'ի տուր և առս շնչոյ և անդէն խմացայ եթէ էր 'ի ներքս յինս զօրութիւն հոտոտելեաց նուրբ և զողարիկ քան զառաջինն... Ճաշակեցի:

Ո՛վ քմահարար ճաշակացն, ո՛վ նորաձաքնէ զգայութեանն. ցայն վայր հաճոյք ևեթ էին վայելքս, իսկ ճաշակ ազգեաց ինձ հեշտալիս: Վայելք ներքին ծնան յինս միտս՝ սեպհականելոյ յինս ինքն զարարածս. Թուէր ինձ եթէ յէութիւնս իմ փոխարկեցաւ պտղոյն գոյութիւն, և թէ մարթ էր ինձ կերպարանափոխ առնել զեակս հանօրէն:

Անձնագանձ իշխանականին խորհրդովք, և յորդորեալ 'ի հեշտալի զգայութեանցն, միանգամ և միւսանգամ ձգեցի զձեռն իմ 'ի պտուղս, զի ոչ պարտաւեր բազմակք իմ արբանակել հաճոյիցս. այլ տակաւ թմբիր ախորժական ընդ բռնադակ զգայութիւնս իմ ծաւալէր, և ծանրարեռնեալ մտանից մարմնոյս նհանգիստ զեռանդն հոգւոյս:

Համարեի եթէ աղօտացեալ խորհրդոց մտացս՝ յանդգնութեան կալեալ զնս ունէին, և բթացեալ զգայութեանց՝ ստուերածս զարարածովք արկանէին, և անտիպս և անկերպարանս առաջի իմ նկարէին զնոսա: Ցայնմ ժամանակի փակեցան աչք իմ անզօրք 'ի տեսանել, և ջնջեալ զօրութիւն միանանցս՝ ոչ ևս կարէին 'ի վեր ունել զգլուխն իմ, վասն որոյ և սա խոնարհեալ յեցաւ 'ի գալարիս, և անդէն ամենայն ինչ եղծաւ և անհետ ծածկեցաւ: Դագաղեցաւ միջնաշաւիղ խորհրդոցս, և կորեաւ յինէն գիտակցութիւն էութեանս: Ծանրաթմուն էր քունս, այլ չգիտեմ թէ և յերկար, տակաւին չունելով ծանօթս ջամանակէ, վասն որոյ և 'ի չափել զնոյն անբաւական: Զարթեայ և Թուէր ինձ ահա միւսանգամ ծնանիլիմ, և համարեի եթէ դագարեալ էիցէ առ վայր մի խմս գոյութիւն: Զգուութիւնս իմ այս զոր յանձին զգայի, ազգեաց յիս երկիւղ, և ծանոյց ինձ եթէ չէ ինձ մարթ կեալ յաւերժաբար:

Ա՛յլ ահա նոր օրինակ տագնապ, զի ոչ գիտեի եթէ կորուսի արդեօք 'ի քուն հանդստեան մանն ինչ յէութենէս. 'ի համար զգայարանս իմ կոչեցի, և կամեի տեսանել և ճանաչել զանձն իմ: Ցայսմ վայրի հասեալ արփենոյն 'ի ծայր ասպարիզին շնջոյց զջահ իւր լուսաբորբոք. ջմարթայ անդէն 'ի միտ առնուլ՝ եթէ ահա կորուսանեմ զտեսութիւն. զի գիտակ անխուսափելի էութեանս՝ ոչ երկնչէի կորուսանել զգայութիւն իմ, և խաւար որ ծածկէրն զնս՝ ընդ վայր 'ի յուշ իմ ածէր զերևոյթս առաջին քնոյս:

ՊԻՖՖՈՆ. Բնական պատմութիւն մարդոյ:

ՈՒԽՏ ԻԳՈՄԵՆԵՑՑ

Իգումենէ որգի Դևկալիոնի, Թոան Մինովայ, ընդ այլս 'ի Թագաւորացն երթեալ էր 'ի պաշարումն Տրովագայ. և յետ կործանման քաղաքին իբրև դառնայր այսրէն, յարեաւ մրրիկ սաստիկ, մինչև նաւատեսին և ամենեցուն իսկ՝ որ փորձք էին նաւարկութեան, համարել անհրաժեշտ 'ի վերայ հասեալ կորուստ: Ամենայն ոք առաջի աչաց նկատէր զմահ, ամենայն ոք տեսանէր զանդունդս բացեալ առ 'ի կլանել զինս, և ամենայն ոք ողբայր զաղէտս իւր՝ ոչ ակն ու-

նեղլով տխուր հանգստեան, յոր Թագէոցն ևեթ վայելէն հոգիք՝ ընդ սուրբսկանն անցեալք ընդ գետս: Յայնժամ Իդումենայ՝ զաչս յերկինս ամբարձեալ, բազկատարած կարդայր առ Պխիդոն. Լուր աստուած հզօր, խնկեցող ալեաց ծովոյ, լուր հնչիւս. եթէ լինի տեսանել ինձ միանգամ զկրետէ՝ ապրեալ՝ի զայրագին մրրկացս, մատուցից քեզ զոհ՝ որ նախ եղիցէ ինձ ընդ առաջ:

Յայնմ վայրկի որդի նորա անձկանօք տեսանէին հօրն՝ փութայր ընդ առաջ նորա, գիրկս արկանել նմա. ոչ գիտեր հեքն, զի յօրհաս իւր Ձեպէր: Մազապուրծ՝ի մրրկէն անդր՝ի նաւահանգիստն ցանկալի Ժամանեալ հայրն զոհանալով զՊխիդեայ վասն ուխտին լսելի լինելոյ. այլ ծանեաւ անդէն քանի աղետաբերք էին նմա այնոքիկ: Անդստին նախագնիկ իմն զինք ընդ ուխտ իւր անհանձար ձնիէր զսիրտ նորա. խիթայր հանդիպել իւրոցն, և Թուէր նմա տեսանել որ քան զամենեսեան սիրելին էր նմա: Իսկ անողոքելին՝ի դիս անողորմն Նեմեսիս որ հսկէ՝ի պատուհաս մահացուաց, և մանաւանդ գոռոզ արքային, մահաճամոյր աներևոյթ ձեռամբն մղեր զԻդումենէ յայգիսան: Հասեալ նորա՝ի ծովեզրն, այն ինչ զաչս՝ի վեր էառ՝ի տեսիլ որդեկին զարհուրեալ ընկրկեցաւ, և աչք իւր շուրջ ածեալ հետազօտէին զայլ ոք՝ի նաւազ սիրելեաց առ՝ի զոհ: Իսկ որդւոյն անկեալ զպարանոցսն հայրենի, ոչ կարեր՝ի վերայ կալ անկարելիր ապշութեան հօրն. և տեսանելով զարատուս նորա, ասէ. Ա՛հ ինչ է քո արամութիւնդ, հայր, յետ բազմամեայ պանդխտութեան դարձ արարեալ յտեղս քո՝ի ցնծութիւն որդեկիդ, և ընդէր արամեալ կաս. զինչ մեղայ, զի գարձուցանես զաչս քո յինէն: Բայց հայրն հեղձամղձուձուկ՝ի վայրկի մի անբարբառ, և ապա հառաչանօք՝ի խորոց սրտի ասէ. Ա՛հաղ, զինչ երդուայ քեզ, ով Պխիդոն, քանի՛ ծանրագնի փրկեցեր զնա՝ի նաւաբեկութենէ. մատ՝ նեա զնա անդրէն ապեաց և ծովոյ՝ի կածումն, զի կորեայց ես, և կեցցէ որդեակն իմ: Ահա արիւն իմ, աննուազ զինք, փոխանակեացի արիւն իմ ընդ նորայն: Ասաց, և զդգ ընդ

բանին մերկեաց զդաշոյն՝ գնաց զիւրումին. այլ ոչք մերձն կային հասին կալան արգելին զնա:

Անդ ծերունին Սուիրոնիմ Թարգման դիցն կամաց եղեալ նմա, զի չէր ինչ հարկ մնալ զձեռն իւր յարիւն որգեկին՝ առ՝ի հաշտ առնելոյ զՊխիդոն, և ասէր. Յանգուցն երդեալ, անհաճոյ է դից պաշտօն անգթասեանն. զդոյշ լեր յաւելուլ՝ի մեղս երդմնիդ զկատարումն նորին հակառակ օրինաց բնութեան: Զնէն Պխիդեայ զաւարակս ձիւնափայլս հարեալ, հեղ զարիւն նոցա շուրջ զծաղկատակ բաւիսաւ նորա, և ծխեցան խունկք քո՝ի հոտ անուշից առաջի դից:

Բայց Իդումենէս, զլուխ՝ի վայր արկեալ, կայր անմտութեամբ. բորբոքեր յաչս նորա մոլեգնութիւն, մահաւոր գիմաց նորա այլափոխեալ արագ արագ շրջելն գոյնք, և դողդոջէին անդամք նորա: Իսկ որդին ասէր. Ահաւասիկ ես, հայր իմ, ահաւասիկ որդեակ քո պատրաստ՝ի մահ՝ առ՝ի հաշտ առնել զդիս, մի՛ ձգեր՝ի վերայ քո զպատուն ապատուածտասան. մեռայց մեռանիցիս՝ի մահս ուսանիցիս. հար զիս, հայր, մի երկնչիր, չէմ ինչ վատասիրտ և հօրդ առաքինւոյ անարժան որդի: Յայնժամ Իդումենէս խելացեղ այսահարեալ իմն՝ի ժանտից գժոխայինոց, յանպատրաստից որոց մերձն կային՝ մխեաց զսուսերն՝ի սիրտ պատանւոյն, և յետս ձգեալ զայն ծխաշունչ արիւնաթաթաւ՝ մինչ կամէրն արկանել զայն՝ի կոզս իւր, դարձեալ՝ի վերայ հասեալ որք շուրջն կային՝ արգելին զնա:

Այնկաւ մանուկն յարեան իւրում Թաւալգլոր, ծանրացան արտեւանունք նորա՝ի տապերս մահու, և աչք նորա կիսաբացք առ խուն ինչ նշոյլ լուսոյ անհանգուրժելիք՝ փակեցան՝ի տպատ: Որպէս շուշան չքնաղագեղ հարեալ առ արմն՝ի խոր այրասուր՝ տապատ անկանի՝ի դաշտի, չէ հորուսեալ զդեղ ձիւնափայլ, չև զպայծառութիւն ակնապարալ, այլ ոչ ևս ընդոստն մնունդ՝ի յերկրէ և ոչ ևս կեայ, այսպէս զաւակն Իդումենեան իբր զծաղիկ մատաղատունկ գետաբուսիկ՝ի սկզբնաբոյս հասակին անկանէր կարեալ:

ՖԵՆԵԼՈՆ. Տկեսաք.

ՄՈԼՈՐԵԼ ԿԻՄՈԴՈԿԵԱՑ ՅԱՆՑԱՌԻ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ ԵՒԴՈՐԻ ՀԱՍԱՆԵԼ ԱՌ ՀԱՑՐ ԻՒՐ

Յառաջ խաղայր, և յիշատակք յանկալիք վոխան երկիւղի զուչ նորա գրաւէին: Յեղեղէր նա 'ի մոլ գնին ահագին հուչակաւոր կղզւոյն՝ ուր հաես զարև. զբաւիղն՝ որոյ զբազմամանուած չքնաղ գաւերք կրճատացիք գեռ ևս 'ի պարս իւրեանց կերպարանէին. գնդարագէան Պետառ և գյանդուգնն Իկար, գիդոմենէ և զորդի նորա, և մանաւանդ զքորան երկոսին Թշուառս՝ զՓեդրա և զԱրիադնէ: Եւ ահա յանկարծ 'ի միտս լինէր զարտուղի անկեալ 'ի ձանապարհէն, և զգայեալն կորուսեալ: Աղաղակէ 'ի ձայն մեծ, և բարբառք նորա կորնչին ընդ օդս. յորջք անկեալ աղաչէր զդիս անտառաց գնապետայս և զդրիադս, և չտան նմա պատասխանի: Հառաչել համախմբեալ գնոսա 'ի ձորն Մինոտևեայ, ուր Արիագացիք հանեն նոցա նուէրս մեծահանդէս: Եւ լսէ 'ի հեռուստ գնոսոյ ջուրց, ընթանայ վազվազակի, յանձն լինել 'ի նայադս, մինչ 'ի ծագումն այգուն:

Աղբիւր յորդաջուր ընդ անտառ կաղամախեաց բարձանց գահավիժէր փրփրագէզ 'ի ժայռէ սեպացելոյ: Եւ 'ի սորոտ ժայռին կանդնեալ կայր բագին յաւերժահասանց, ուր ուղևորք ուխտս և նուէրս մատուցանէին: Կիմոդոկէս գերկս արկեալ զբազկաւն պաղատեր առ դիս վայրացն՝ սփոփել 'ի հոգոց գնայր իւր. և ահա հաես զգնի երիտասարդ գնս յեցեալ 'ի ժայռն ննջէր: Գլուխ նորա խոնարհեալ գկրծովք 'ի ձախակողմն կոյս, և յեցեալ 'ի փայտ նիզակի, աջ նորա Թողացեալ գնիզակաւն, ունելով մեղմիկ զտոհանէ շանն, որ Թուէր շահանջել. լոյս աստեղն գիշերայնոյ շողեալ ընդ ոստս նոճենաց երկուց՝ լուսաւորէր զդէմս որսորդին, որպէս գնս ապերեան աշակերտի գքուն Ենդիմիոնի նկարեալ:

Տարփաւոր գշնային անտառայ համարեցաւ զպատանին գուսան Կիմոդոկէայ, և հառաչանս գիցուհւոյն գշնել հեզասիրտ հոգոյ, և ձառագայթ լուսնոյ հարևանցի ընդ մայրիս նշոդեալ Թուեցաւ նմա ժպտաւէն սպիտակափայլ դէմսառն Անահտայ՝ որ խուսէրն:

Չահի հարեալ Օրիորդին յերկիւղ զսրբազան խորհուրդն ազգիելոյ, և 'ի գուռս անկեալ ազաղակէր:

« Ահաւոր քոյրդ Ապոլլոնի, խնայեա 'ի յանդգնութիւն կոչսիս և մի նեփսիք քովք գնս հարկանէր. միամօր եմ հօր իմոյ, և մայրն իմ վազ իսկ ընդ հարուածով քոյ անկեալ. ոչ պանծացաւ ընդ ծնունդ իմ»:

Ի ձայնէ նորա սկսեալ շանն հաջել, և 'ի հաջելոյ անալ զարթնոյր որսորդն, և ապշեալ 'ի տեսիլ օրիորդիս 'ի գուռս, յարեաւ անդէն:

Իսկ Կիմոդոկէ խառնեալ, և 'ի գուռս որպէս անկեալն կայր, ասէ.

« Մի եթէ գնո եղես որսորդն Ենդիմիոն »:

Եւ պատանին ոչ ինչ նուազ խառնեալ ասէ.

« Իսկ գու 'ի գուարթնոյդ արդեօք գո եղես »:

Յաւել գուսուն Գիմոդոկէ յ. « Հրեշտակ »:...

Յայնժամ պատանին հիւր ասէ տագնապեալ.

« Կին գու, յոտն կաց. Աստուծոյ միայնոյ արժան է երկիր պագանել »:

Եւ յետ վայրկի մի լուռթեան՝ յաւել քրմուհին.

« Եթէ չեղես գու յանմահից գո ընդ կերպարանօք մարդոյ Թաքուցեալ, պանդուխտ ոմն արդեօք եղես՝ 'ի մարդապայց ընդ անտառս երբև գնս տեսիլ ընդ որ հանդուան նաւ քոյին եմուս. 'ի Տիւրոսէ գաս 'ի մեծափարթամ քաղաքէն, Թէ 'ի հրաշագեղն Կորնելեայ՝ ազնիւ սարգեօք յատկնջականացն քոյ Ջոխացեալ. Թերևս գո յայնցանէ եղես, որք ծովէ 'ի ծով մինչև յարձանն Հերակլեայ գնան տարագիմք 'ի շահավաճառ: Մի գուցէ գժնեայն գուեղես Արէս գուս 'ի պատերազմ, կամ որպէս ուրուք 'ի մահկանացուաց՝ որք ընդ արքունի գաւազանաւ կալան գկողմն ինչ երկրի գնաչնաւէտ՝ և զգիշն սիրեն »:

Հիւրն ասէ.

« Ձեք ոք՝ բայց մի Աստուած, որ ես իշխան ամենեցուն, այլ մի տիար և ստրապետ եմ ես: Եւդոր է անուն իմ, որդի եմ Լասթենեայ: Ի Թալամ երթեալ, և արդ առ Հայրն իմ դառնամ, դիշերոյ ի վերայ հասեալ՝ հանգեայ առ աղբերաւս: Այլ քեզ առ ինչ դեպերել ստա միայնակ: Աշնարատ պահեսցեն երկինք զպատկառանս քոյ, զերկիւղ դեղեցկագոյն յետ երկիւղածութեան Աստուծոյ »:

Կերպարանք բանից նորա խռովեին զԿիմոդոկէ, և սէր և պատկառանս, երկիւղ և համարձակութիւն միանգամայն ի սիրտ նորա ազդեին: Նորանշան լինն և ներչակ իրերաց Թուէին նմա ծանրութիւն բանից առնն և շնորհք երեսացն, և գերաշխարհիկ ումն ինա համարէր, վհշ և վսեմ քան զամենայն ոք՝ զոր տեսեալն էր յայնմհայր, և ծանուցեալ:

Եւ յառէրուձ ի նմա կարծելով ձգութիւ՝ զոր ցուցանէրն Եւդոր ընդ ազէտս իւր, ասէ.

« Դուստր եմ ես Հովերոնի, որ զանմահական տագնն երգեաց »:

Հակիրճ առ այս ետ հիւրն պատասխանի.

« Այլ իմ գեղեցկագոյն քան զնորայն տեսեալ է դիրս »:

Եւ շփոթեալ Կիմոդոկէայ ընդ համառօտ պատասխանին, ասէր ընդ միտս.

« Ի Սպարատացւոց արդեօք ոք է սա »:

Եւ ապա պատմեալ նմա որ ինչ անցք անցեալ էին ընդ իւր, և ասէ ցնա պատանին.

« Ե՛կ ածից զքեզ առ Հայր քոյ »:

Եւ առաջնորդէր նմա, և օրհնորդն զնայր զինէ նորա, հիւրնեայր զողալով, և առ ի սրտապնդել սակաւիկ մի՝ փորձէր բարբառել, բանս ինչ գովեստից ի մէջ արկեալ զդեղեցկութենէ դիցաղարին գիշերոյ, հարսինն Էրիբեայ, և մոր Եսպերեայցն և Սիրոյ: Բայց պատանւոյն խափանեալ ըզբանս նորա ասէր.

« Զատեղս ևեթ տեսանեմ եա՝ որք պատմեն զփառս Աստուածոյ »:

Այս բանք յաւելին ապմիել զսիրտ քրմուհւոյն. չգիտէր զինչ այնուհետեւ խորհել զանունն անծանօթիկ, զոր յանմահից ոք ի սկզբան անդ համարեալ էր: Վարաներ ի խորհուրդս իւր. մի արդեօք յամպարշտաց ոք եղեալ՝ որ գիշերի թափառեալ շրջին ընդ երկիր, տեսիլք մարդկան և հալածեալք յաստուածոց. կամ հէն ծովային իջեալ ի հաւէ, յափշտակել զորդիս ի հարց: Արհաւիրք ի սրտի նորա խլրտեին, այլ ոչ իշխեր զատգնատ սրտին ի վեր հանել. և հիացումն անշնարին կալաւ զնա ի տեսանելն զի խոնարհեալ պատանւոյն զձանապարհայն ի ստրուկ մի լքեալ ի բացի՝ եղբայր իւր կոչէր զնա, և տայր նմա զվերարկուն առ ի ծածկել զմերկութիւն իւր:

Եւ ասէ. Հիւրդ, յաստուածոյն ոք արդեօք համարեցար զգերիդ, ծածկեալ ընդ կերպարանօք ալքատի, առ ի հանդէս առնել սրտի մահկանացուաց:

Ոչ այդպէս, յաւել Եւդոր. այլ համարեցայ զնա մարդ մահկանացու:

Եւ ահա հողմն ցօղագին շնչեալ յարեւելից, այդ զհետ հասանէր. և ընդ հուպ ի լերանց Լակոնիոյ ծագեալ արեգականն անամպ և ջինջ ամենևին, ճառագայթարձակ ընդ երկինս խաղայր:

Եւ յանկարծ ի շրջակայ անտառէն ի դուրս վազեալ Եւրիմեդուսայ, դիմեր բազկատարած առ Կիմոդոկէ, և աղաղակէր.

Դուստր իմ, որպիսի վիշտս հասուցեր ինձ. լցի զօդս հեծեծանօք, կարծէի յափշտակեալ զքեզ ի Պանայ ի ժանտ ստուածոյն, որ Թափառեալ շրջի միշտ ի մէջ անտառաց, և ի կաքաւել նորա ընդ ծերոյն Սիլենեայ՝ ոչ ևս ոք հաւատարէ յանդգնութեան նորա: Զիարդ մարթ էր ինձ առանց քոյ երեւել առաջի տեառն իմոյ սիրեցելոյ: Աւաղ ինձ, դեռ ևս ի ծաղկի տիոց՝ յորժամ յափռնս Նաքսոսի հայրենեաց իմոյ զբօսնուն, յափշտակեցայ յանկարծ յանմեռիկ մարդկան՝ որ զնն ի ձեռին ընծանան ընդ սահմանս Թագաւորութեան Փռեեայ՝ զառ և զկապուա

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՈՒՆ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՍՍՀ ԱԿԱԴ.

մեծերվով։ Եւ ածին զնա ՚ի վաճառ ՚ի նաւահանգստի ուրեք Կրետացւոց, որ հեռի է ՚ի Թորդենայ երից աւուրց և կիսոյ գնացք սուրհանդակի։ Հայր քոյ եկեալ էր ՚ի Լեբենէ՝ փոխանակել ցորեան ՚ի Թէոդոսիոյ՝ ընդ գորգս միլեսացիս։ Եւ դնեաց զնա ՚ի հինից անտի երկուց ցլուց՝ որոց չև էր պատառեալ զակօս Դեմետրեայ։ Եւ գիտացեալ ընտանատրմութիւն իմ կացոյց զնա գիշերապահ առագաստին։ Իսկ յորժամ անագորուն հնչեցան արկին յարևէ զնպիքարիս, ինձ զքեզ յանձն արար Դեմոդոկ, զի եղեց քեզ փոխանակ մօր։ Որպէսի ՚ցաւոց տարայ ես յաւուրս մանկութեան քոյ. զգիշերն ՚ի գլուխ հանէի առ որբանատուք, և ՚ի վերայ ծնգաց իմոց զքեզ տատանէի։ Ցիմմէ ևեթ ձեռամ ՚ի քէն, դու ձիչ բարձեալ արտասուէիր։

Զայս ասէր, և գիրկս արկեալ փարէր զնովաւ Եբրիմեդուսա, և արտասուօքն Թանայը զերկիր։ Իսկ Կիմոդոկեայ յուզեալ գութք ընդ այնչափ խանդաղատանս դայեկին, համբուրէր զնա արտասուօք և ասէր.

Մայր իմ, Եւդոր է դա, որդին Լասթենեայ։

Իսկ պատանին յեցեալ ՚ի նիզակ իւր, հայեր զուարթութեամբ ՚ի տեսիլն. զի անժպիտ հանդարտութիւն դիմաց նորա՝ տեղի ետ քաղցր խանդաղատանաց. այլ յանկարծ յառաջիւն իւր դարձ արարեալ ՚ի հանդարտութիւն, ասէ. Դուստրդ Կիմոդոկեայ, ահա գայեակ քո, և ոչ ինչ հեռի է ասել տուն հօր քոյ։ Թէ ասցի Աստուած ՚ի հոգի քոյ։

Եւ պատասխանեաց անդամ ոչ մեացեալ Կիմոդոկեայ, սրանայր ՚ի բաց որպէս զարծուի։ Իսկ քրմուհին, որ հրաման եղեալ էր ՚ի հաւահմայս, մի յանմահից համարեալ պատուհասեալ զպատանին որսորդ, դարձուցանէր զերկաս իւր ՚ի բաց, թէ գուցէ ՚ի տեսիլ դիցն հասցէ նմա մահ։ Ածաւարեաց ապա ելանել մագլցի ընդ լեառն Իդմոն. և անցեալ ընդ աղբերան Արսինոեայ և Կլեփսիդրայ, բանիկը զդուռն տաճարին Հոմերոնի։

Քրմապետն Ծերունի զգիշերն ողջոյն Թափառեալ էր ընդ անտառս, և խնդրակս զնոր արձակեալ ՚ի Լեմարա, ՚ի Փերգէս և ՚ի Լեմնէ զի և ոչ բացակայութիւնն փոխանակի բգնչելոն յապահովէր զդուռն հայրենի։ Երկնչէր Դիմոդոկ ՚ի բանութենէ Հերոկլեայ, Թէպէտ և ՚ի Հռոմ էր նա յայնժամ, և ապեստ ևեթ սիրեցելոյ իբրուն կիմոդոկեայ կասկածէր։

Իսկ յորժամ եհաս նա ընդ գայեկին ՚ի տուն, հայրն տառապեալ բազմեալ կայր առ վառարանին ՚ի գետնի. և զգլխով ածեալ զձորձ իւր, արտօսր ՚ի մխիթ անդր ցօղէր. և յանակնկալ տեսիլ դաերն՝ փոքր միւս ևս առ մեծի խընդութեանն մեռանէր։ Դիմեայ ՚ի գիրկս նորա Կիմոդոկէս, և ոչ ինչ այլ ՚ի սկզբան անդ լսելի լինէր՝ բայց հեկեկանաւն հառաչանք, որպէս ՚ի բոյնս Թռչնոց՝ յորժամ մայրն բերեալ ջամբել կերր ձագուց։ Դադարեալ ապա Դեմոդոկ յարտասուաց ասէ. Դուստր իմ, ո՞ ՚ի գից գարձոյց զքեզ առ հայր քոյ։ Զի՞րդ եղև ինձ Թողուլ քեզ գնալ միայնակ ՚ի տաճար անդր։ Երկիւղ է ինձ ՚ի Թշնամեաց. խիթամ յարբանեկացն Հերոկլեայ որ արհամարհէն զաստուածովք և ծաղր առնէ զարտասուօք հարց։ Ա՛յլ ես տարագէմ ընդ ծով երթալոյ խնարհել անկանել յոտս կայսեր, ասէի ցնա. Տուր ինձ զնմն Կիմոդոկէ. ապա Թէ ոչ՝ բարձ և զկեանս իմ։ Աշխարհապոյժ առնէի զիմ վիշտ հայրենի, եղեալ ՚ի խնդիր զհետ քոյ ցորվայր ծագիցէ արեգական. հանդոյն Դեմեարեայ՝ յորժամ պահանջէրն զդուստր իւր յափշտակեալ ՚ի Պլուտոնէ։ Ողբմալի են աղէտք ծերունւոյ հօր՝ որ անզաւակեալ մեռանիցի. գնան իսկ նորա լցցի առեալ, և մանկտին զծաղուս եկեալ ասիցէ. Ա՛յս այր անօրէն էր, և անձեռն զնա արարին դիք. չէք նորա զաւակ որ ատցէ ըզմարմին նորա հողոյ։

Յայնժամ Կիմոդոկէ գեղեցիկ ձեռաքն զհայրն իւր ծերունի գգուելով, և զարծաթափայլ ալեան փայփայելով ասէ.

Հայր իմ, ատտուածածազգեցիկ երդիչդ անմահից, մեղսերեցաք ընդ անտառս, և երիտասարդ ոմն՝ կամ մանուկ ընդ յաստուածոյն ոք՝ գարձոյց զմեզ այսր:

ՇԱՂՈՊՐԻԱՆՆ · Վ. ԿԱՅՔ:

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԿԻՒՐՈՍԻ

Իբրև եղեն Կիւրոսի ամք երկոտասան՝ Մանդանէ Մայր նորա աճ զնա ի Մարս առ Աժդահակ հայր իւր, քանզի յոյժ ցանկայր նա տեսանել զմանուկն վասն բարի համբաւոյն՝ զոր լսէր զնմանէ: Եաես անդ Կիւրոս բարս ներհակիցս աշխարհին իւրոյ· քանզի անդ ամենայն ինչ պերճութիւն էր և զեղուութիւն և մեծագործութիւն: Զարգացեալ Աժդահակ ի հանդերձս երևելիս, զաչսն ի ծարիր և զդէմս ի սնդոյր շղարէր, և կեղծաւս ընդ վարսս իւր խառնեալ: քանզի սովոր էին Մարք մեղկիլ իբրև զկանայս, ծիրանազգեաց լինել, և քառամանեակս արկանել և ապարանջանս, ընդհակառակն Պարսից՝ որք անպաճոյճ զգեստուն: Ոչ շլացաւ Կիւրոս ի պայծառութենէ անաի, և ոչ պարսաւագիտ լեալ տեսելոցն՝ սիրոյ կալաւ զուսումն մանկութեան իւրոյ: Զմայլեցուցանէր զԱժդահակ աչսոյժ հանճարաբանութեամբքն, և ունէր ընդօրն առ ամենեսեան աղնուական և սիրելի բնաւորութեամբն: Ի բազմաց անտի հանճարել գործոց նորա՝ միտն և զայս ընթերցողք գուշակեսցեն:

Խորհեցաւ Աժդահակ մոռացուցանել նմա զհայրենիսն, և ետ պատրաստել մեծասպաս կոչունս ամենայն շայլութեամբ՝ ըստ յաճախութեան խորակացն և ըստ աղնուութեան: Իակ Կիւրոս յայն ամենայն սպասս ցանկալիս արհամարհանօք հայեցեալ, իբրև զարմանայր ընդ նա Աժդահակ, ասէ· Ոչ այսու բազմապատիկ և երկայն աշխատութեամբ

յաքեցուցանեն Պարսք զքաղց· համառօտ է առնոտա ճաշատարն, հացիւ և կոտեմաւ շատանան: Եւ հրամայեաց առեալ ի նմանէ բաշխել անձամբ զկերակուրս՝ որ էին ի սեղանի անդ, և ամենեցուն իշխանաց արքայի մատն՝ ըստ իւրաքանչիւր վաստակոց, միւսոյն զի ձիավարել ուսուցանէր նմա, և միւսում զի բարւոք ծառայէր արքային, և այլում զի ինամէր զմայր իւր, և տակառատպեաին Աժդահակայ, որում անուն էր Շակաս, ոչ ևհան բաժին· զի էր այրն ոչ միայն մատուռակ արքային, այլ և զամենեսեան որ կամէին մատանել առ արքայ՝ ինքն մուծանէր· և զի ոչ որպէս կամէրն Կիւրոս՝ մատուցանէր զնա առ Աժդահակ, գժուարեալ ընդ այն՝ եցոյց զպատուին իւր անդ: Եւ ի գժկամակել Աժդահակայ ընդ նախատինս իշխանին՝ զի յոյժ սիրելի էր նմա ճարտար մատուռակութեամբ բաժակին, ասէ ցնա Կիւրոս· Եթէ ոչ այլով իւիք քան զայդ, հնար իցէ գտանել ընորհս առաջի քո, հայր, դիւրաւ գտանիցեմ զայդ՝ ճարտարապոյն քան զնա մատուռակելով: Եւ զգեցեալ անդէն զկերպարանս մատուռակի՝ մատեաւ մեղմաքայլ և ակնածութեամբ, զինչակ ի յուս, և զբաժակ ի ձեռին բարեձևութեամբ ծայրիւք մատանցն ուսնելով, մատոյց արքային զնոյն ճարտարութեամբ՝ մինչև ի զարմանս զնա ածել և զմանդանէ զմայր իւր: Եւ ապա անկեալ զպարանոցաւ հաւոյն իւրոյ և համբուրեալ զնա, գոչէր խնդութեամբ· Աւաղ ո՛ Շակաս, կորուսեր զփառսդ, և ես կալայ զայն: Եւ Աժդահակ սիրեաց զնա և ասէ· Քաջ էս որդեակ իմ, և ոչ էր հնար լաւ ևս ապատուորել· այլ զկարեւորն մոռացար՝ առնուլ նախ զձաշակ զինւոյն: Քանզի այս սովորութիւն էր մատուռակին՝ արկանել սակաւ ինչ ի բաժակէ անտի յահեակ ձեռն իւր, և անձամբ նախ ճաշակեալ՝ ապա մատուցանել զբաժակն արքային: Պատասխանի ետ Կիւրոս· Ոչ ակամայ սխալեցի զայդ: — Եւ ընդէ՞ր: — Զի մի Թոյն իցէ ի բաժակին: — Թո՞յն, և ո՞րպէս: — Քանզի յառաջ քան զաւուրս զայսոսիկ ի կոչունն՝ զոր եառուր մեծամեծաց քոց իշխանաց, իբրև սակաւ մի ի բաժակէ այսի արբին՝

կոչնականացն ամենեցունշուրջ գալ Թուէբը աշխարհս և երբ գէնն և աղաղակէին և բանս զառանցելոց մատց բարբանջէին. նոցա զծառայութիւն իւրեանց մոռացեալ, և քո զարքայութիւն, և իբրև կաքաւել կամէիր՝ ոչ կարացեր յոտին կալ: — Եւ ո՞չ երբեք այդ անցք և ընդ Հայր քո անցին: — Ինաւ ամենևին ոչ: — Իսկ ո՞րպէս. և ասէ Կիւրոս. Քանզի ըմպելեաւ նա զծարաւն բուժէ, և այս միայն անցք անցանեն ընդ նա »:

ԹՕԼՆ. Հնախօսութիւն:

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ՊՕՂՈՑ ԵՒ ՎԻՐԳԻՆԵՑ

Բայց բարեբոյս բնաւորութիւն մանկանցն օր ըստ օրէ գայր յերկան. յաւուր միում կիւբրակէի ընդ այգն, մինչդեռ մարք նոցա երթեալ էին ի նախկին պատարագն յեկեղեցւոջ ի Բամբըմաւս, կին ոմն խափշիկ լեռնաբնակ եկն եկաց ընդ պատանեաք՝ որ շուրջ կային զՀուլիան, և էր նկհար մեռելատիպ, և փոխանակ հանդերձից կապերտ ծիլ ջուլ ածեալ սփածանելի: Անկաւ առ ոտս Վիրգինեայ, մինչդեռ զնախաձայն ընտանեացն պատրաստէր, և ասէ. Ցիս օրիորգիկ, զիա ի սարուկս հէք և փախստական, յամսօրեայ աւուրց շրջիմ Թափառական ի լերինս յայսոսիկ կնաման ի սուվ, և յաստպականեաց հալածական. յերեսաց տեառն իմոյ փախուցեալ եմ, յօժմենիէ ի Ճոխից գեսապինեայց Սեաւ գետոյ. նա ինքն հասոյց զիս յայս աղէտս: Եւ զայս ասացեալ՝ յուշացեր զիապուտակ հարուածս գանից ի մարմնի իւրում, և զսպիս վերացն, և յաւել. Գեաման խորհէի զանձն իմ կորուսանել, այլ երբև դիտացի զի դուք ասա քնակէք, ասեմ. Զև ևս մեռայց, են ասա սպիտակք բարեգործք: Վիրգինեայ գալարեցան ապիք, և զՀաշխին՝ զոր ընտանեացն պատրաստէր՝ մատոյց նմա, և

ասէ. Քաջալերեաց, եղկելի դու, կեր և արբ: Եւ ի ըսպառել հնդկին իսկոյն զկերակուրն և ի զօրանալ, յաւել Վիրգինիա. Ես եկից հաշտ առնել զտէր քո ընդ քեզ, եթէ կամիս՝ հէք աղքատիկ՝ ածել զնա առնա. յերեսաց աչեսիդ չարժեսցի նա ի գաւթ: Եւ հնդիկն ասէ. Ձրեւ տաիդ ինձ երինառաք, եկից ընդ քեզ ուր և կամիցիս: Յայնժամ կոչեաց Վիրգինիա զՊօղ և աղաչեաց զնա գնալ ընդ իւր. և հնդիկն առաջնորդէր նոցա ընդ անտառս և ընդ բարձրաբերձ լերինս՝ ընդ որս բազում Ճգամբ ի վեր մագլէին, և ընդ լայնածաւալ գետս՝ ընդ որս հեան անցանէին, մինչև հասին զվիշաւորըն ի սաորոտ լերին միոյ յեղը Սեաւ գետոյ, ուր էր տուն գեղեցկակէն և ծառատունկ ընդարձակ, և ամբոխ գերեաց յազգի ազգի վաստակս պարապեալ: Տանուտէրն ի միջի անդ ծխելեաւ ի բերանի և եղեգն հնդիկ յաջում ձեռին զդնայր, այլ բարձրահասակ, վախտ մարձիով և թխասիպ, խորտին և կացօն, սևաթոյր յօնիւք. Վիրգինեայ զգողանի հարեալ և զձեռանէ կալեալ Պօղայ, մատեաւ առ այրն և աղաչէր զնա, վասն սիրոյն Աստուծոյ ներել գերւոյն՝ որ անդ փոքր մի ի բացե կայր: Նորա յազքատին զգեստս մանկանցն վեր ի վերոյ ակնարկեալ, ոչ ինչ ի սկզբան անդ երեսս արար նոցա, այլ ի նկատել ըզչքնաղագեղ դէմս Վիրգինեայ, և զդիզձանիկ ընդ կապուտակ քօղոնին անկեալ խոպոպիս, և ի լուր քաղցրաձայն բարբառոյ նորա՝ որ ընդ բոլոր անձինն դողդոջէր, սրկ զծնկէն ի բերանոյ, և ի վեր առեալ զգուշն եղեգնեայ, երդուաւ երդումն զարհուրելի, և ասէ. Ոչ ի սեր Աստուծոյ՝ այլ ի սեր քոյին ներեալ ազանոյդ: Յայնժամ Վիրգինեայ ակնարկեալ գերւոյն մատչէլ առ տէր իւր, խոյս եառ ինքն ի բաց, և զհետ նորա Պօղ:

Եւ գարձ արարեալ նոցա ընդ զառ ի վեր լերինն՝ ընդ որ իջեալն էին, երբև ի կատար անդր հասին, վաստակաբեկ նգիեալ և ծարաւի նստան ընդ ծառով. զի աւելի քան զհինգ փարսախ արարեալ էր նոցա յելից արեգական անառաւալ: Յայնժամ Պօղ ասէ ցՎիրգինիա. Վաղ խակ օրս ընդ

միջեցաւ, քոյր իմ, և դու քաղցեալ և ծարաւի էս, և չէք ինչ ասա՛ ի ձաշակ. եկ ինքդ անդրէն առ աէր գերբոյն, խնդրել՛ի նմանէ կերակուր: Պատասխանի էս Վիրգինիա. և ասէ. Ո՛հ մի, եղբայր իմ, ահաբեկ արար զիս այն այն. չիշեա զոր մայրիկն մեր ասէ. Որ ուտէ զհոգ անզգամին, լցցի բերան նորա կոպճով: Կրկնեալ անդրէն պատանեակն ասէ. Եւ զինչ գործիցեմք, պատուիք ծառոցս անպիտանք են՛ի կերակուր. չէք ասա դամին, չէք կիսրոն առ՛ի զովացուցանել զպապակ քոյին: Եւ Վիրգինիա յաւել. Որ կերակրէն զձագս Թռչնոց՝ որ կարգան առ նա, ոչ Թողեմ զմեզ: Եւ զդէ ընդ բանին լսելի եղև խոխոջ ջուրց գահավիժելոյ. և ընթացեալ անդր հարին զպատուք յահանակիա ալեաց անտի, և որ զեզերեալք ջուրցն ածեցեալ էր ջրհոսեմ, քաղեալ և ձաշակեցին զայն: Այլ մինչդեռ հատատոտգոյն ինչ կերակրոյ՛ի խնդիր զայս ածէին, եահս Վիրգինիա՛ի ծառս անտառին մատաղատունկ ինչ հանգոյն արմաւենւոյ որ՛ի մէջ սաղարթուց՛ի գագաթանն բերէ պատուղ կաղամբաձև ախորժ՛ի ձաշակ: Բայց բուն ծառոյն, ոչ ինչ տուաւ րագոյն քան զբուսնս. այլ բարձր էր աւելի քան զվաթսուն ոտնաչափ. և Թէպէտ որակ փայտին յաղընհատև Թելից յօդեալ, այլ կարծրամիջ և անաելիտալի սայրատուր տապարաց: Իսկ Պօղ, ոչ ուշնելով ընդ խիր և ոչ դանակ, մտաբերեաց հուր հարկանել զծառոյն, այլ և այն գժուարին, զի ոչ դոյր նորա հրահան և ոչ յատաւածուա կղզւոջս կայծքար ուրեք է գտանել: Բայց հարկ՛ի հնարս դրդէ զհանճար, և յորվք՛ի պիտանեգոյն գիւանից կարօտութեան են արդասիք: Խորհեցաւնա ըստ օրինակի հնգկաց վառել հուր. և առեալ ընդ ոտիւք ոստ ծառոյ գօսացելոյ, ծակ՛ի նմա գործեաց սրածայր քարիւ, և սայրիւ նորին տաշեալ երիվեր յայլասեռ ծառոյ, միեաց զայն՛ի ծակ ոստոյն որ ընդ ոտիւքն էր, և արագ արագ շրջշրջեալ զայն ընդ ափ՝ որպէս որ զնաւնիչ յեռալ չոքոլաթին պատուակէ, և ահա ծուխ ընդ ծակն ելանէր, և Թօթափէին անտի կայծակունք: Ցայնժամ քաղեալ խոխ և կրկուա ցամաք՝ ելոյց հուր զարմանք

ծառոյն, և ահագին ճարճատմամբ կործան անկաւ արմաւենին: Նովին հրով և զպատուղ ծառոյն՛ի փշալից և՛ի սաղարթապատ՛ի կործր պատենիցն կեղևեալ, զկէս նորին կերան անեփ, զմիւս կէսն մարսի ընդ մսխրով, երկոքեան ևս ախորժ՛ի ձաշակ. և առաւօտին բարերարութեան իւրեանց յիշատակ յաւելոյր բերկրանս՛ի կերակրին: Բայց բերկրութիւն նոցա ազդիկը յածել զմտաւ զհոգս մարցն ընդ յաջողութիւն գարձի իւրեանց՛ի տուն, զոր Վիրգինիա յեղեղէր սահպ. իսկ Պօղ զօրացեալ կերակրովն, հանդարտէր զինս և ասէր. Հուսկ ընդ հուպհասեալ՛ի տուն սիրտս ցուցանեմք զպատասխանի:

Եւ յարուցեալ՛ի ձաշէն առ՛ի գնալ, վարանէին զի չէր ոք նոցա ուղեցոյց. այլ Պօղ, որ ոչն երբեք վհատեր, ասէ. Ի միջօրեայ արևն կոյս հանդիպի հիւղս մեր, պարտ է մեզ անցանել ընդ լեառնդ երեքսարեան՝ ընդ որ իջեալ յաղաւօտուս, հասցս ընթացուք, քոյր իմ: Այն էր լեառն Եռասեան, յերեցունց սարիցն ձեայ առեալ զանուանակոչութիւնն: Եւ իջեալ՛ի լեռնէ անտի Սեաւ գետոյ ընդ հիւսիսակողմն, և ժամս չափ ուղևորեալ, հասին յեզր լայնածաւալ հեղեղատի՝ որ հատանէր զնոցս նոցա: Կողմն այն կղզւոյս՝ ընդարձակ և անտառախիտ՝ ցարդ իսկ անծանօթ է, և յորմէից՛ի գետոյ և՛ի լերանց նորա չէք իսկ տեսուն. իսկ հեղեղատն յոր հասին՝ խաղայ ընդ ժայռս յորձանահոս: Ի խոխոջ ալեաց նորա երկուցեալ Վիրգինեայ, չիշեցեր հետևակել ընդ հուսն. յայնժամ Պօղայ առանձնեալ գնա, անց բեռամբն հանդերձ ընդ լայնջուր ապառաժս աներկիւղ՛ի յորձանացն և ասէր ցՎիրգինիա. Մի երկնչիր, հզօր եմ ես. եթէ չէր տանուտեառնն ներեալ աղախնոյն, մենամարտել ընդ նմա: Եւ Վիրգինիա ասէ. Դո՛ւ ընդ հսկային ընդ այնմիկ չարի. տես յոր վտանգ ածի զքեզ. ահ, քանի՛ գժուարին ես բարեբարել, չէք ինչ գիւրին քան զչար գործել:

Եւ իբրև հասին՛ի ցամաք, դեռ ևս պատանին բարձեալ բերեր Վիրգինիա, և կամէր ընդ լեառնն իսկ Եռասեան,

որ կէս փարախաւ հեռի էր անտի, ելանել բեռամբն. այլ ոչ ևս յերկարեալ ի տոկ, հարկեցաւ դնել զնա յերկիր և բազմեալ առ նմա հանդչէր: Յայնժամ ասէ ցնա Վիրգինիա. Օրս խոնարհի, եղբայր իմ, գու տակաւին յուժի կաս, այլ իմ սպառեաց զօրութիւն. Թող զիս առ, և փութա գու ի տուն՝ հանգուցանել զքոյս ծնողացն մերոց: Պատասխանի ետ Պօղ և ասէ. Մի լեր ինձ այդ. ոչ Թողից զքեզ. եթէ գիշեր ի վերայ հասցէ մեզ յանասխս. լուցից հուր, հարից միւս ևս արմաւենի. զպատուղ նորա կերիցես. և սաղարթիւքն յօրինեցից քեզ տաղաւար: Իր անդ զգեստեղբեն ծառ վաղումի և ի կոճղ նորա աձեցեալ տերիւք երկայնիք ցոցկինեայ. իբրև փոքր մի զօրացաւ Վիրգինիա, քաղեալ ի տերևոյ անտի՝ արար իւր արեխս ոտիցն վերա. ւօրելոյ ընդ քարուտս. զի առ հասցէիպ փութիցէ ի բարեբարել, մտացեալ էր ագանիլ կօշիկս: Եւ ի զովանալ ոտիցն ի տերևոց անտի, ոգի առեալ եհաս ի հնդիկ եղեգանց իւր ցուպ, և յուղի անկաւ՝ յեցեալ միով ձեռամբն ի Պօղ և միւսովն ի ցուպն եղեգնեայ:

Գնային հանդարտաքայլ յանասխն, բայց մայրիք բարձրաբերձք և սաղարթախիտք ծածկէցին յաչաց նոցա զլեառնն Եռասին՝ յոր դէմ եդեալ էր նոցա, և զարեգակին՝ որ ի մուտս խոնարհէր: Եւ ի գնալ փոքր միւս ևս յառաջ, մնջորեցան տակաւ յարահետ ճանապարհէն, և անկան ի բաւիղ անեզ անտառախիտ և ապառաժուտ: Յայնժամ ընդ. ոտից անդ Պօղ զՎիրգինիա. և ինքն խոռվեալ այսր անդր ընթանայր ինդրելր եզս ի մացառախիտ անտառին, այլ ի զուր: Ելնա ի կատար միոյ ի ծառոց բարձանց, դիտել տեառնել զլեառնն. բայց զգաստեղուն ևեթ մայրեաց տեսաներ չուրջանակի ի նշոյլս մանց արևուն փայլեալ: Վաղ իսկ ատուերք լերանց ձգտեալ երկայնեալ՝ ծածկէին զանտառս ընդ հովիտս, և ի տոմսխաղաղ հանգարտեալ երկկոյն՝ խոր լռութիւն պատէր զվայրսն անմարդիս, ոչ այլ ինչ լսելի լեալ՝ բայց բառաչ եղջերուաց ի հեռաստանէ գիմելոց ի դադարս իւրեանց: Խորհեցաւ Պօղ զի Թերևս ոք յորսոր-

դաց լուիցէ, և գոչեսցէ ուժգին. Եկայք, հասէք յօգնութիւն Վիրգինեայ: Այլ արձագանգք ևեթ անտառին կրկնեալ և երկայնեալ զնոյն անգրէն ձայն ասէին Վիրգինեա, Վիրգինեա:

Իջեալ ապա պատանուհոյն ի ծառոյ անտի խանջ և տխուր, խորհէր գիշերօթեալ առ տեղեաւն. այլ ոչ գոյր անդ ոչ աղբիւր, ոչ արմաւենի, և ոչ փայա ջրոյ ի հուր՝ և զիտրձ առեալ զի ամենայն հնարիւքն և ճգամբք չէր իմիք ձեռնհաս, սկսաւ լալ: Յայնժամ Վիրգինիա ասէ. Մի լար, եղբայր իմ, եթէ ոչ՝ կամիս ընկճել ինձ ի վշտաց. ես իսկ եմ պատճառք տառապանաց քոց, և մարդն մերոյ՝ որ հոգան արդ զմիջ. ահա չէ պարտ և բարերարել իսկ անհրաման ի ծնողաց. ոհ, զի անմտացայ յոյժ: Եւ զայս ասացեալ՝ սկսաւ և ինքն լալ. և ապա յաւէլ. Այլ, ևկ, Պօղ, յաղօթս կացցուք, զի ողորմեսցի մեզ Տէր: Եւ մինչդեռ զաղօթսն կատարէին, հաջել չան լսելի եղև, և ասէ Պօղ. Ասպահանուց է ձայնդ, Թերևս ոք յորսորդաց գիմէ նահանջ ի վերայ եղջերուաց: Եւ ի յաճախել կաղկանձելոյ շանն, ասէ Վիրգինիա. Հաջիւն շան մերոյ Թուի ինձ այդ, այո՝ հաջիւն հաւատարմին. Ծանօթ է ինձ ձայն նորա, մնա ուրեմն ի ցեմք ի հիւղ մեր և ի լեռնոտն մեր հասեալք: Վայրկի մի, և ահա եհաս շնին և փարեալ զոտիւք նոցա՝ հաջէր կաղկանձէր կոկոզէր և քծնէր: Եւ ի հիանալ նոցա ընդ այն, և ահա տեսին զի գիմեալ գայր Դոմինիկ. որ իբրև եհաս առ նոսա արտասուելով այրն սիրասէր ի խնդութենէն, յարտասուս հարան և ինքեանք՝ կոչեալ լուռ և անբարբառ: Եւ ապա Դոմինիկ ի հանդարտեալն՝ ասէ. Տէրդ իմ պատասխնեկիք, քանի հոգս յաւելիք մարդ ձերոց, որպէս տառապեցան նոքա ի չգտանելն զձէզ ի տան ի գառնալ իւրեանց ընդ իս յեկեղեցւոյ. Մարիամ յանկեան ուրեք պատպակեալ ի գործ՝ անդիտանայր ուր երթեալն էիք: Այլ անդր ընթանայր, ոչ գիտելով յո գիմէ ի ինդիր. և ապա առեալ զձեզոտիս ձեր մատուցի ի հոտոտելիս շնկանն. և նորա խնացեալ դողցես զմիտս իմ, սկսաւ խոկոյն հետազո-

տէլ զձեզ. և յուղի անկեալ, յար զձեան տատանէլով, ած զնս մինչև 'ի Սեաւ գետ: Այդ ունի 'ի բնակչաց պատմեաց ինձ, զի զաղախին նորա փախստական առ նա ինքն գար-ձուցեալ է ձեր, և նորա 'ի շնորհս ձեր ներեալ ազախնոյն. այլ ներուեն որպիսի՛. եցոյց ինձ զեղկելին ոանականալ 'ի կոձեզս, և անուր երեքճանի 'ի պարանոցին: Անոն ընկին, անդադար 'ի հետազօտելոյ, ած զնս 'ի լեառն՝ որ առ Սեաւ գետով, և զկայ առեալ անդ, հաջէը ուժգին առ միով յար-մաւենեաց՝ որ տապալեալ կայր, և ծխէին խանձողք առ նովաւ և ապա առաջնորդեաց ինձ այսր 'ի տարօրոտ Եգա-սանին լերինս, ոչ ինչ հեռի 'ի բնակութենէս մերմէ քան զչորս փարսախ:

Եւ եդեալ առաջի նոցա քաքաւ և միրգս, և հադա-զակ լի օշարակաւ՝ զոր մարդ նոցա պատրաստեալ էր, զինի չաքար կիտրոն և ընկոյզ հնդիկ ջրախառնեալ, կազդուրել զնոսա և զուայուցանել, ասէ. Կերայք, արբէք, զօրացա-րուք: Վիրգինիա ընդ յիշատակ հէք ազախնոյն և տատա-պանաց մարդն իւրեանց յոգւոց եհան, և կրկնէր և երեք-կնէր. Ո՛հ, քանի դժուարին է բարերարել. և մինչդեռ նոքա ճաշակէին, հուր էլոյց Դոմինիկ. և խնդրեալ 'ի ժայռս անդ բեւեկն՝ որոյ գալար իսկ ոսոք վառին բոցածաւալ, արար ջահ 'ի լոյս, քանզի գիշեր էր: Այլ իբրև յուղն ան-կան, մեծ ևս տագնապ տարակուսի հասանէր նմա վասն ոչ ևս կարելոյ մանկանցն հետևակել, զի ուռուցեալ էին ոտք նոցա և կարմրացեալ: Զինչ առնել էր նմա. ելանել 'ի ծըն-դիր օգնականութեան, թէ անդ ընդ նոսա կալ զդիշերն զայն. և ասէր. Ո՛ տայր ինձ զաւուրս յորս 'ի միասին զձեզ 'ի գիրկս տանիլ, այլ արդ դուք 'ի տիս եղեալ՝ և ես ծերա-ցեալ եմ: Եւ մինչդեռ 'ի վարանոն կայր, գունդ լեռնաբնակ հնդկաց անցանէր 'ի բացէ իբր քայլս քսան, և պարապլուխ նոցին մատուցեալ առ մանկունսն ասէ. Աղնիւ սպասա-կիկք, մի երկնչիք, տեսաք մեք զձեզ յառաւօտուս մինչ անցանելիքդ ընդ հնոջ ուժգին սեաղեսացեալ՝ խնդրել նմա շնորհս 'ի ժանտ տեառնէն. և մեք արդ, փոխանակ բարե-

բարուեցեանդ ձերոյ, բարձեալ տարցուք զձեզ 'ի տուն ձեր: Եւ յանկարծակի նորա առ հնդիկն. ջրիք ոմանք 'ի կո-րովեաց կազմեցին գահաւորակ յոստոց ծառոց, և նստու-ցեալ 'ի վերայ զմանկունսն՝ բարձին յուս իւրեանց. և Դո-մինիկեայ ջահ 'ի ձեռին առաջնորդեալ նոցա, գնային 'ի ձայն ցնծութեան՝ հնդկացն առհասարակ կարգալով նոցա օրհնութիւնս: Յայնժամ Վիրգինիա փղձկեալ սրտիւ ասէ ցՊօղ. Տեսանես, եղբայր իմ, զի ոչ Թողու տէր անվարձ զգործս բարիս:

Ի մէջ գիշերի հասին 'ի տարօրոտ բնակութեան իւրեանց, ուր 'ի կատար լերինն խիտ առ խիտ վառէին խարոյկք. և 'ի դիմել նոցա ընդ զառ 'ի վեր, լուան զբարբառս մարդոյն իւ-րեանց՝ որ ասէին. Գնաք էք, որդեակք մեր: Եւ եառն հնդկաքն հանդերձ պատասխանի. Այո՛ մեք իսկ եմք. Եւ ահա տեսին զնոսա և զՄարիամ, զի ջահիւք ընդ առաջ գային. և տիկինն Լադուր ասէ. Որդեակք չարաբաստիկք, ուստի գայք. ո՜հ, յորպիսի տառապանս արիէք զմեզ: Պա-տասխանի ետ Վիրգինիա, և ասէ. Ի Սեաւ գետոյ գամք, ընկալաք անդ ներուեն ազախնոյ ուժգին հնդկի փախստէի 'ի տեառնէ իւրմէ. նմա և զնախաճաշիկ մեր տուեալ էր ա-ռաւօտին, զի մեռանէր հէքն սովալուկ. նմին իրի հնդիկք լեռնաբնակք բարձեալ բերին զմեզ: Յայնժամ տիկինն Լա-դուր գիրկս արկեալ դստերն և ձիարկը բարբառել. իսկ Վիրգինիա 'ի Թանալ մայրենի արտասուացն զդէմս իւր, ասէ. Փոխարինեա դու ինձ, մայրիկ, զամենայն վիշտս իմ՝ զոր կրեցի:

Եւ Մարգարիտա զեպլեալ խնդութեամբ, փարեալ զոր-դեկաւն՝ ասէր. Եւ դու, որդեակ իմ, առաքինացար և դու: Եւ հասեալ 'ի տուն որդւովքն հանդերձ, եառն Ճաշ հնդկացն, որք ապա 'ի դառնալն իւրեանց՝ մաղթէին նոցա զամենայն յաջողութիւն:

ՊԵՌՆԱՐԴԻՆ ՏՐ ՍԻՆ-ՔԻԻՐ.

ՓԱԽՈՒՍՏ Ի ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂՑՆ·

Յուզի անկան անշշունչ և լռելեայն յափշտնես անդ կանխածանօթս, և տեսեալ զնաւակն պատրաստական որ մնայր նոցա, և տուեալ և ընկալեալ զնշան գաշնաւորեալ՝ մակն անդր· և նաւավարին մերձեալ զմի՝ ի խառնելեաց Թեւոցն՝ ի խելոյ՝ անջատեցաւ յեզերայ անտի, և ապա ձեռն արկեալ՝ ի միւս Թիակն, և Թիավարեալ երկոքեամբք բազկօքն՝ մեկնեալ հեռացաւ՝ դէպ ակն եդեալ հասանել յափշտնն որ՝ ի հանդիպոյ: Լուէր՝ ի սպառ և սիւք անդամ քաղցրաշունչ, և ջուրք լճին միատաղաղ երեւէին և գոգցես անշարժք բնաւին՝ եթէ ոչ շթեցուցանէր զնոսին նշոյլ լուսակիրն որ՝ ի բարձանց երկնից հայելատիպ յառէր՝ ի նոսա, և լսելի լինէր միայն ձայն դանդաղաշարժ ծփանաց բեկելոց՝ ի խիճս եղերացն, և խոխոջիւն պտուտից ջուրց որք ընդհարիկանէին՝ ի խարիսխս կամրջին, և զուգահետ ձղիւտին երկուց Թիակաց որոց ձեղքեալ զկապուտակ երեսս լճին ելանէին արտաքս քան զջուրսն Թաթաւուեք և ցօղատարափ, և միւսանգամ ընկղմէին: Եւ ահա սղեաց պատառելոց յընթացից նաւակին՝ կարկառեալ՝ ի յեռուստ՝ շաւիղ իմն գործէր՝ ի վէտ վէտ ակնառնս մանրածաւալ, և երթալով երթայր և հեռանայր յափշտնէն:

Իսկ ուղևորացն անմռունչ զգլուխս յեռս դարձուցեալ՝ հայէին ընդ լերինս և ընդ դաշտս արծաթափայլս՝ ի նշուլից լուսնոյ, յորս է ուրեք զի սեւասնէին և սուուերք ընդլայնեալք· և՝ ի համար արկանէին մի առ մի զշէնս և զառուս և զտապաւարս· իսկ տպարանիք սեաւն Հառոցերկեայ և աշտարակ նորին տափարակ՝ որ՝ ի բարձրագիտ վայրի հրուանգանին կառուցեալ էր՝ ի վերոյ քան զՀիւղն կուսակեալս՝ Թուէր եղեռնաւորի ուրուք կերպարան՝ որ կացեալ կանգուն՝ ի միջի սուուերայ գիշերայնոց և՝ ի մէջ տամակելոյն՝ ի քուն Թանձրութեան՝ աչքն՝ ի խորհուրդս անօրէնութեան· զոր

սեսեալ Լուկիայ սարսուռ ընդ մարմինն ընթացաւ, և խոնարհեցուցեալ զաչացն Հայեցուածք՝ ի բարձանց գարաւանդին մինչև՝ ի շէնն ուր ծնեալն էր, և յառեալ՝ ի վերջին սահմանս նորին՝ եռես զՀիւղ իւր, և զզաթամբ սաղարթախիտ Թզենւոյն որ ամբառնայր՝ ի վեր քան զրմնախակ գաւթին· հուսկ ուրեմն եռես և զպատուհան սենեկին իւրոյ· և քանզի բազմեալ էր՝ ի խորս նաւակին՝ եդ զաչ իւր յեզերս նորին, և հանդոյց զձակատ իւր՝ ի վերայ բազկացն որպէս Թէ նիրհելով, և արտասուեաց լռելեայն: — Ողջամբ կացջիք լերինք երկնադիտակք վերամբարձք յերեսս ջուրց և ելևէջք բլրոց ծանօթիք այնմ որ սնաւ՝ ի միջի ձերում, և որ՝ ի միտս իւր դրոշմեալ ունի զձեզ որպէս զդէմս սիրելեաց· և դուք հեղեղատք՝ որոց զնոսիոջանան ճանապէ որպէս զձայնս իւրոց տոհմայնոցն· աւանք սպիտակափիւռք՝ ի դարեւանդս լերինն՝ որպէս զՀօտս խաշանց տրօտականաց՝ ողջամբ կացջիք: Քանի՛ տխրագին են անցք՝ որում՝ ի միջի ձերում անեալ և հեռանայ՝ ի ձէնջ· ո՛չ ասպաքէն և որ բազդախնդիր ակնկալեօք մեկնի՝ ի ձէնջ կամակար՝ նահանան գոգցես յայնմ պահու ոսկեղինիկ երազք ճոխութեանց, և ընդ անձն իսկ զարմանայ եթէ զիարդ անսացող եկաց այնպիսեաց խորհրդոց· և Թերևս յետս նահանջէր յուղեցն եթէ ոչ՝ ի խաբուսիկ պատրանս յուսացիր լիներ անձին զառնալոյ միւսանգամ անդր փարթամագոյն: Ա՛յլորչափ և յառաջ ընթանայ՝ ի դաշտավայրն անդ՝ պարտասին և յափրանան աչք նորա՝ ի միօրինակ ընդարձակութենէ· Թանձրամած և մահաշունչ Թուէն նման օդք· մոանէ տխրագին և մայթոյզ՝ ի քաղաքս բազմամբոխս, և տունք առ տունս յարեալք և փողոցք՝ ի փողոցս խառնեալք շնչատատ առնեն զնա· և՝ ի տեսիլ հոյակապ ապարանից ընդ որս հիանան օտարք՝ մտախոհ լինի նա և հառաչէ անձկանօք ընդ անգամանն փոքրիկ զոր ելիք՝ ի հայրենի աշխարհին, և ընդ հիւղն զոր՝ ի բազմաց հեռի իւրձ լիներ սատանալ գնոց արծաթոյ՝ ի գառնալն ճոխագոյն՝ ի լերինս իւրոյ աշխարհին: — Ա՛յլոյդ և իղձք անգամ վաղանցիկք ոչ անդր քան զսահմանս հայ-

բենեացն ձգտեցան, և որ անգանօր համարէր կատարումն առնուլ յաւուր միում բռնադեակ խորհրդոց մտացն և որ այժմ յանօրէն բռնութենէ վարեալ աքսորի ի տար աշխարհս, և որ անչատեալ միանգամայն ի սիրայորդոր սովորութենէ և պատրեալ ի տենչալի իշձան Թողու լքանել զերբինան զայնոսիկ ծանօթան ի խնդիր անծանօթից՝ որոց և ոչ իսկ իշձ բերեալ էր գալ ի ծանօթութիւն՝ զիւրան անգամ ոչ կարելով հանգուցանել ի յոյս անդրէն վերադարձի յաւուր միում: Այլ ողջամբ կաց առնդ հայրենի, ուր ի բնակէն գաղտնածածուկ խորհրդով զոտնաձայն անցաւորացն գիտացեր որոշել յայնց՝ որում տենչմամբ մնայիր խորհրդազգած իմն երկիւղիւ. ողջամբ մնա և գու առնդ տակաւին օտար՝ առն ընդ որ յանցանէն յաւէին ականողիք գաղտաբողիք ի պատկառուա շառագունեան, և զոր օրհնեան անդորրաւէտ համարէին միաք հարսին ամուսնոյ. ողջոյն քեզ և եկեղեցիդ յոր զուարթամիտ ընծայայր հոգի ի փառաբանութիւն Տեառն, յորում խոստացեալ եր և պատրաստէր կատարումն արարողութեան հարսանեաց, որով մեծահանդէս օրհնելոց եր իշձ սրտի գաղտնածածուկ, և սեր ի պատուէր փոխարկեալ՝ ի նուիրակեան Համարելոց եր. ողջոյն ընդ քեզ. զի որ այնչափ ցնծութիւն ընորհեր ձեզ ամենուրեք, ոչ առ այլ ինչ վերոյիչ այժմիկ զգընծութիւն որդւոց իւրոց՝ բայց առ ի ներձել նոցա զտուդագոյն և զմեծագոյն խնդութիւն: — Եթէ ոչ նոյն ամենևին, այսօրինակ էին գոգոյս խորհուրդք Լուկիայ. ոչ անհանգիստ նոցին և երկուց այլոց ներգեհակից պանդխտելոց, մինչդեռ յաւաղէր նաւակն և գալով գայր և մերձենայր յափունս Ադդայ:

ՄԱՆԶՈՆի:

ԱՆՑՔ Ի ԺԱՆՏԱԹՏՆ ՄԻԼԱՆՈՒ

Ի սեռմոյ միոյ ի գրանց անտի լքանէր և մերձենայր ի մեռելոթաղս անդր կին ոմն ի մանկամարդ դէմս և ի մատաղատունկ տիս երիտասարդութեան զարգացելոյ՝ այլ ոչ բնաւ անցելոյ. գեղեցկութիւն նմին աքօղեալ և նսեմացեալ հոլանի երեսեր ի նմա, այլ ոչ խամրեալ և Թարշամեալ ի կրից և ոչ մեռելատիպ երիթացեալ, գեղ աղու միանգամայն և վսեմ որ փայլէ յերակունս լամբարացեալ: Պարտաւեալ նմին երեսին գնացք նորա այլ ոչ կիճուցեալք, այլ անԹաց և ցամաքեալ, այլ յայտնի տեսանէին ի նմա արտասուաԹոր լալընից հետք, և ի վիշտս անդ ցաւոյն երեսեր համբերատար և խորին անդորրութիւն՝ որ վկայ երաշխաւոր էր դիւրազգած ոգւոյն: Այլ զբան զդիմաց նորին երեսոյն ի գուժ շարժէր զանստղն՝ ի խառն անդ Թշուառացելոց, և արծարծեր ի հոգիս նոցա զկարեկցութիւն գոգոյս շիջեալ և մահացեալ ի սիրտս ամենեցուն, այն էր զի երբ ի ծոց իւր զդստրիկ ինամեալ վաղավախճան և խնամով դիաղարդիկ յարդարեալ, վարսք յերկուս բաժանեալ ի ձախատուն, և զգեցեալ պատմուճան ապխտակափառ, որպէս եթէ ձեռք մայրենի զարդարեալ էին զնա ի հանդէս կանխաւ խոստացեալ ի վարձս զգօնութեան: Ոչ ընկոմնեալ ունէր զնա ի գերկան, այլ վերամբարձ հանգուցեալ ի վերայ բազկին, և լանջք ի լանջս յեցեալք և Թուէր կենդանի, միայն գաստակ ձեռն փափկիկ և սպիտակ որպէս զմամ կախեալ տարուբերէր ի միոյ կողմանէ գանդաղաշարժ, հոգիաղերկ, և գլուխ հանգուցեալ ի յուսմօրն ծանրաքուն քան զինինջ. և Թէպէտ նմանութիւն իսկ գիմաց նորա ակն յայտնի ցուցանէր զնա մայր իւր, այլ վերա ի գէմն նորին նկարեալ՝ անկեղակարծ զնոյն հաւատոյ: — Մի ոմն ի գիակրաց անտի այր ձառագեմ ընդ առաջ եղև առնուլ զմանկիկն ի բազկաց մօրն երկիւղած իմն պատկառանօք և յակառայս վարանմամբ. այլ նորա յետս ընկրկ-

հեալ՝ առանց ցուցանելոյ ի դէմն զզայրոյթն և զարհամարհանս՝ ասէ. Մի՛ հուսկ լինիր դմա այժմ. ես ինքն հանդուցից զդա ի վերայ սայլիդ. զայս ասացեալ եբաց զձեռն և ցուցեալ նմա քսակ մի զրամոյ՝ Ա՛ռ, ասէ, զայդ, և հարկ ինչ ի կարկառեալ ձեռն մեռելոթաղին. և ապա յաւել ասել. Երդուիր ինձ, զի մի և մազ մի անդամ ի բաց բարձցես ի հանգերձից դորա և ոչ խակ ներեսցես այլոց ձեռն միեալ ի դոսին, և այսպէս դիազարդիկ գիցես ի հող դերեզմանին։ — Մեռելոթաղն զալ իւր ի լանջն տարեալ, և զդգեաս յաղթահարեալ ի ներաւեսիլ վշտաց մօրն քան յանկինկալ վարձուցն՝ երկիւղիւ պատկառանաց ձեռն ի գործ տալոյ փուճանակի պատրաստել տեղի ի սայլն անդ սակս վաղամեռիկ մանկանն։ Եւ մայրն տուեալ համբոյր ճակատու որդեկին, զեռելեաց և հանգոյց զնա որպէս յանկողնի, և սփռեալ ի վերայ պատառակալ ջինջ և մաքուր՝ բարբառեցաւ զայսոսիկ յետին բանս. Ողջոյն քեզ Կեկիլիա, հանդիր ի խաղաղութիւն. եկեսցուք և մեք յերեկոյիս առ ի կալ մեզ միշտ ի միասին. այլ այժմ աղօթեա դու վասն մեր, և ես աղօթեցից վասն քոյ և վասն այլոց։ — Ապա դարձեալ միւսանգամ առ մեռելոթաղն, ասէ. Եւ դու յանցանելդ ընդ այսր յերեկոյիս՝ եկեսցես առնուլ և զնա, և ոչ զնա միայն։ — Զայս ասացեալ եմուտ անդրէն ի տուն, և յետ սակաւ միոյ յառեցաւ ընդ պատուհանն ունելով կախեալ զպարանոցէ իւրմէ միւս այլ մանկիկ կրասերագոյն տակաւին կենդանի, այլ մահ ի դէմն նկարեալ. և եկաց մնաց անդանօր տեսանել զեղկելի յուղարկ առաջնոյ որդեկին, մինչև ի խլրտել սայլին և անկանել յուղի և լինել անհետ յաչաց, ապա անհետացաւ և ինքն։ Եւ զինչ այլ միայր նմա՝ բայց հանգուցանել յանկողնի զմիամօրն և ննջել առ նմա առ ի մեռանել ի միասին ընդ նմա. որպէս անկանի ծաղիկ գեղափթիթ ի ծայր ստեղան ընդ նորաբողբոջ փոքրիկ ծաղկան՝ ի շուրջ յածել սայրի գերանգւոյն՝ որ զամենայն խոտ դալար հաւասարէ ի դաշտի։

ՄԱՆԶՈՆԻ

ՅԱՆՑԱԽՈՏ ԱՔԵՆԱՑ

Երբեք ուրեք ընդ այնչափ նահանջս առ հասարակ ոչ տարածեցաւ տպակահարսրս այս ախտ. քանզի սկիզբն Աեթովպիոյ առեալ՝ անց Աեգիպտոս և անտի ի Լիբեասան ծաւալեցաւ և ի կոյսն մի աշխարհին Պարսից, ի Լեւոնս կղզի, և յայլ կողմանս ուրեք։ Եւ մի ի վաճառականացն նաւաց, որպէս հաւաստի կարծեմ, ած եմոյծ զայն ի Պիրէեան. զի անդ նախ ի վեր երևեալ ախտին՝ անտի զայրագին ընդ քաղաքն Ճարակեցաւ, և մանաւանդ ի խաւարային և ի մըղձկուա վայրս՝ ուր բնակիչք դաշտաց զմիմեանցք կուտակեալ խռնեալ բնակէին։

Ախտակրէլոյն տակաւ ամենայն անդամք մարմնոյն վարակեալ յախտին, և նշանք ահարկուք ի նոսա ի վեր երևէին. արագ արագ զայրանայր ախտն, և դուն ուրեք ոք ապրէր ի մահուանէ։ Անդէն յըմբռնել ախտին՝ նուաղէր նոցա հոգւոյն զօրութիւն, իսկ մարմնոյն թուէր և ևս արծարծանել, որպէս զի տագնապել նոցա յաղէտս գժնդակս, առանց զօրութեան համբերելոյ ցաւոցն՝ տոկալով ախտին։ Ջուն հառաներ յաչաց նոցա, խուճապել և հեկեկանք անընդհատ և սրիտուն ջղաց և ձգտուն սաստիկ ի վերայ հատանէին. և ի գառնակսկիծ ցաւն յաւելոյր տենդ գժոխրմբեր՝ փաղաղել զնոսա ի ներքուստ։ Բաղմահեղ կապտութեամբ մարմինք նոցա, աչք հրացեալք, սիրտ հեղձամըղձուկ, աղիք կեղեքեալ, և շունչ գարշահոտ ի նեխոյ տապանոսթեան արեան նոցա բուրեր ի բերանոյն։ Սոդեալք ընդ փողոցս գնային առ ի կլանել համարձակ զօդ, և ոչ կարելով զովացուցանել զտապ ծարաւոյն՝ որ տոչորիչն զնոսա, հոսէին զանձինս ի գետս ծածկեալս առատմանեօք։

Բաղմաց յեօթներորդում կամ յիններորդում աւուր հասանէր մահ. իսկ որոց տարաժամէին, կսկծելն ևս և յամբոդոյն տուայտանօք լինէր վախճան։

Բայց Թէպէտ և սակաւք յոյժ յաղթելոյն միւսանգամ ըմբռնէին յախաէն, այլ յոյժ էր ողորմելի կենդանուԹեանն նոցա մխիԹարուԹիւն. զի իբր կմախք Թուէին յաչս տեսողաց : Քանզի կէաք անդամալոյծք լեալ, և այլք ոչ ինչ զանգիլոյ կենացն յիշէին. բարեբախտ արդարև անզգայուԹեամբ ԹշուառուԹեանն, սակայն ոչ ևս ղբարեկամն ճանաչէին: Նոյն գարման մերթ կենարար և մերթ մահաբեր ախտակրելոյն լինէր , զի զամենայն օրինս բժշկականս և զիորձ հմտուԹեան Թուէր ծաղր առնել ախտին:

Ի Ճարակել նորա ընդ բազում գաւառս Պարսից , խորհուրդ կալաւ Արտաշէս արքայ՝ կոչել յօգնուԹիւն զԻպոկրատ զանուանին, որ էր յայնժամ ՚ի Կոլ կղզի: Այլ ՚ի Ճառնէ գանձուցն և աւագուԹեան ոչ շլացեալ այլն մեծախոհ, պատասխանի արար և ասէ. Ոչ ինչ խիԹ ցանկամ, և ոչ իւիք կարօտ եմ. և համազգեացն խոց ծառայել պարտիմ քան Թշնամեաց նոցա: Եւ ևն իսկ յԱԹէնս ՚ի սպասաւորուԹիւն, և աԹենացիք ընկալան զնա բազում շնորհընկալ գոհուԹեամբ, զի բազմագոյնք ՚ի բժշկայ նոցա մեռեալ էին յախաէն , փոխանակեալ զանձինս ՚ի վերայ հայրենեաց:

Անդ զամենայն հնարս արուեստին ՚ի գործ էարկ, և զանձն ևս յաճախ եդ ՚ի վտանգ. և Թէպէտ ոչ ըստ դիմադրաւ հայրենասիրուԹեանն և ըստ Ճարտար արուեստին եղեն համեմատ արդասիքն, այլ գէԹ սիրտս ևն և յոյս ՚ի սիրտ ամենեցուն արծարծեցոյց: Պատմեն զի առ ՚ի մաքրել զօդս՝ հրաման մեծ բորբոքեցոյց ընդ փողոցս քաղաքին աԹենացւոց. բայց կէաք Ակրոնի ակրականաացւոյ բժշկի ասեն ՚ի կիր արկեալ զհնարս զայս, և յաջողեալ:

ԳուԹի որդիական և բարեկամուԹիւն առատ՝ եռուն ՚ի սկզբան բազում օրինակս նախանձելիս. այլ առաքինուԹիւնն այն մահաւիԹ եղեալ գործոցն գրեԹէ ամենեցուն, գուն ուրիք այնուհետև երևեր ՚ի միջի: Անդ կապք քան զամենայն կապանս հզօրք՝ խզեցան, և աչք օրհասա-

կանացն ոչ այլ ինչ շուրջ տեսանէին ՚ի փակելն, բայց լուռ ամայուԹիւն, և ոչ ևս մահ՝ արտասուաց լինելք առիԹ:

ԽստասրտուԹեանս այսմիկ զհետ եկն ապերասան համարձակուԹիւն: Ընդ կորուստ բազմուԹեան լաւաց՝ որք խառն ընդ անօրէնս ՚ի մի գերեզման արկան, և ընդ կորզուստ մեծուԹեանց՝ որ յանկարծ բաժին եղեն կամ աւար աննշան քաղաքացոց, ՚ի խոր խոցեցան այնոքիկ՝ զորոց երկիւղ ևԹ ուղղէր զկեանս: Եւ ՚ի մոռ եգեալ զի ոչ ևս ինչ փոյԹ էր գից զառաքինուԹենէ, և զի մեռալոյս քան զվերԺինդրուԹիւն օրինաց հասանէր մահ, ըստ արդարավախճան կենացն նոր օրէնս յերիւրել կարծեցեալ, ժամ ՚ի ժամ մնալով մահու՝ պարտ համարեցան ՚ի գրգռանս զվայրկեան ժամանակին անցուցանել:

Յետ երկեամ ժամանակի զկնի առան. բայց տակաւին ուրեք ուրեք ՚ի վեր երևէր սերմն ժանտ ապականուԹեանն, ոչ ՚ի սպառ անհետ լեալ: Իսկ յետ ուԹևտասն ամաց գարձեալ անդրէն Ճարակեալ, գործեաց զինչն ողորմ տեսարան աղէտից և արհաւրալոյ ընդ ամ մի ողջոյն: Յերկոսին ևս նուագս կորեան բազմուԹիւն յոյժ քաղաքացւոց, յորս էին արք իբրև հինգ հազար՝ որ կարէին զէն առնուլ:

Այլ անփոխանակելի և մեծ քան զամենայն կորուստս եղև մահ Պերիկլեայ, որ յերրորդում ամի պատերազմին ժանտախտիւն վարակեալ՝ զրաւեցաւ ՚ի կենաց:

ՊԱՐԹԵՆԻՈՒՄԻ. Ոչ ևս որ Աճառեան:

ԻԴԻՊՈՍ Ի ԿԻԹԵՐՈՆ

Յետ ընդ երկար յածելոյ հասին Իդիպոս և դուստր որա պարկեշտագեղ առ ոտս ԿիԹերոնի: Եւ է ԿիԹերոն լեառն զոր հատանեն երրեակ ուղիք. յորոց մին առեալ տանի մինչև ՚ի բարգաւաՃ այգեստանեայս Փռվկիայ տա-

կաւ՝ի վեր ամբարձեալ ցերկնակամաւ ամպահերձն Պառնասոս. միւսն հանէ՝ի քաղաքն Եպիւբացւոց, զոր ընդ մէջ կրկին ծովուց կառոյց առաքինին Սիւսիւփոս, և երրորդն ինքանէ՝ի սահմանածայրս Ելիգեայ, և անտի ձգի տարածանի զափամբք զուարձագեղ և ծիծաղախիտ դեռոյն Աչիէոսի: Ընդ երկրորդ Ճանապարհն գնային տարագրեալքն երկոքեան, և հասեալ՝ի վայրն ուր բաժանին յայլոց, անդ զկայ առեալ դադարեցուին: Եւ էր վայրն տեղի սպանման Լայոսի: Ո՜հ, եղո՜ւկ ինձ, գոչեաց յայնժամ Իդիպոս, եղո՜ւկ ինձ. քանզի զայնչափ ժամանակ չէր ինձ փոյթ գիտել եթէ ո՛վ էր այրն անծանօթ զոր սպանի մոլեգնութիւ՛ն: Աւա՜ղ, դի՛ւ՝ի գարձին իմում՝ ի Դելփեայ, ուր երթեալ էի հարցանել զպատգամախօսն, ոչ կամելով գնալ՝ի Կորնթոս՝ զոր հայրենիս իմ լինել կարծէի, դիմեալ գնացի՝ի Թեբէ: Դուստր իմ, և իցէ՛ Ճանապարհս անձուկ և զառիթափ. իցէ՛ն գահավիժք յայմմ իմմէ և ժայռք ահարկու յահեղկէս. գլորիցէ՛ ասամնօր հեղեղատ զնոսովայոյզ ալիս՝ի խորս անդնդոց. ահա լսեմ զկարկաչ նորա, լսեմ և զնոսոքնել աղբերն, որ երբեմն նուիրական էր Մուսայից և արդ սիրելի Եւմենեայց: Դուստր իմ, տար զիս ընդ կրկին կամնեաք որք զասպնջական հովանիս արկանեն՝ի վերայ Նայադայ. Թուի ինձ տեսանել զնոսին: Երկինք առ հասարակ հրաբորբոք էին յաւուրն յայնմիկ, կողերք կաղնեացդ այդոցիկ թեքեալ խոնարհէին՝ի բուռն մրրկէ, հեղեղն արձակէր շառաչիւնս հանգոյն խռովայոյզ մռնչմանց բիւրուց անկելոց, զկեանն ճնշելով հեծեծութիւնս՝ի գաշան Արիսի: Ընդէր ոչ ունկն մատուցի ձախողակի գուշակութեանց. զնա՛րդ աներկիւղ կացեալ տեսի առ ոտս իմ զերադաձիչ արբայն օդոյ, զարծուն շանթահար առաղաղեալ: Ընդէր ոչ հաւատաց ընծայեցի կանուխ ազգմանցն յիս առ՝ի դից: Ո՛վ արբի, իցէ՛ն հասեալ էր ինձ զուրկ՝ի պարգեաց քոց լինել, կոյր և՝ի ժամանակին յայնմիկ, որպէս եմն այժմիկ:

Աչաիդոնեայ զդողանի հարեալ ընդ բանս Իդիպոսի փութացաւ պատասխանի առնել բանիցն նորա. Աչա՛, հայր իմ, է աստանօր հեղեղ որ Թաւալէ՝ի խորս անդնդոց զնոսովայոյզ կոհակին. գահավիժք կան յայմմ քումմէ և ժայռ ահարիւս՝ի ձախմէ, և ահա մերձ եմք երկուց կազնեացն հովանացելոց՝ի վերայ աղբեր միոյ արծաթափայլ ծորելոյ. զաւիթափ է Ճանապարհս, և բացուստ նշմարին պատուաքք Թէբէի: — Ո՜հ, դուստր իմ, տեսանե՞ս դու զքաղաքն Կադմոսի. տեսանիմ զայն և ես, և բնաւ խոկ կարծեմ ոչ՝ դնել՝ի դլուխ իմ զմահաբեր Թագ նորին: Այլ զկայ առցուք աստանօր. աստ է, այն ասացին, ասա՛ ինձ, ո՞չ աստ բազմեալ կայցէ սուուերը Լայոսի՝ի քարաժայռիս: — Ոչ, յաւել Աչաիդոնէ, չտեսանիմ ես զսաւեր Լայոսի բազմեալ՝ի ժայռիս: — Ա՜հ, տեսանեմ ես զնա, կրկնեաց անդրէն Իդիպոս, ահաւանիկ է մեծ և ահաւոր. ահա վերք նորա բերանալից և հոսանք արեանն որ յորդէն անտի. խոյս ասեն Թինեսպատիէ նորա, ինքն զիաթեաւալ անկեալ կայ՝ի կառան. ձեռքն կիթուցեալք լքանեն զերասանահաս. ձայն իմն որ կիսահատագ հնչէ՝ի լանջսն, անկարացեալ յօդել բարբառ մի ևեթ յերիթացեալ շրթունսն . . . ով դիք, ծանեաւ զորդին. դեմք վհհափառ, ընդէր փայլակնացայտ տիպօք առջայ խաղայք յիմ վերայ: Խռովին խորհուրդք իմ համօրէն: Ո՛վ սուուեր պատկառելի, եթէ ցարդ ոչ յայտեցաւ ցասումն քո վրէժխնդիր՝ խռովալից կենօքս, և ոչ լռումն էառ յանէսի առաւելութենէ թշուառութեանցս և ապեթից, դո՛նեա այժմեական ցաւ սրտիս լցուսցէ զմեզիս: Հայեաց առ զիս դամ մի՝ի դուստրն իմ. անմեղ է նա և հայցէ՝ի քէն վասն իմ թողութիւն: Սիրելիդ իմ Աչաիդոնէ, փարեաց զինեւ, դուստր իմ, եկ՝ի գիրկս իմ. ահա ես՝ի քեզ եմ ապատան, պաշտպանեա հօր քումմ: Ա՜հ, պաղատանս վասն իմ մատուսցես երկնից. ապաչեա զմեծն Արամազդ. ապաչեա զՄուսայս զսփոփիչն մահկանացուաց: Եւ դուք ահաւոր Եւմենեայք, թողէք զիս, ոչ է ձեզ տուեալ իշխանութիւն՝ի վերայ քաղցր և պարկեշտագեղ առաքինութեան, Աչաիդոնէ գիրկինդիսանէն ընդ իս, Թանայ արտասուօք զնոսին իմ. շրթունք նորա համբուրեն՝ի ձակատուս զաւրաժամ սպիտակացեալ զիմ ալիս:

Ա՛յս օրինակ բարբառէր Իդիպոս, իսկ Անտիգոնէ քաջ զբանիւք սփոփէր զՀայրն. այլ ի պատկեր մահուն զոր յանդիման աչացն նկատէր՝ խաղաղեցան տագնապք սրտի նորա և խանդաղատանօք բարբառէր. Դուստր իմ, տեսա՛ նէս զիս պատարագ պատրաստեալ ի սպանդ. հասեալ է ժամն իմ յետին. և թէպէտ ոչ գիտեմ եթէ զիարդ հաճոյ Թուեսցի դիցն զարդարութեան իբրեանց վերջին ցուցանել յիս զդրունն, բայց ահա վարիմ ես ի մահ: Դուստր իմ, առ ի ձակատէս գիսակս լինչ հերաց, և դիցես զայնս ի վերայ չերմի եղկելի մօր քո. կաթամբ և մեղու տուր քաւութիւնս ի վերայ ամօյն դերեզմանին, որ եկայ ունայ ցարդ անփառունակ: Ո՛հ, չեկայ ոք երբեք թագուհի և հարսն և մայր՝ որ այսպէս անշուք և զաղտագողի ելն ընկերեալ իւրեք ի ծոց երկրի: Դուստր իմ, ոչ մի ինչ խոչ կարասցէ արգելուլ զքեզ ի բարեպաշտն պարտուց յայսցանէ. վաճենայն սրբեսցէ մահ:

Ցետ ընդ երկար լռութեան՝ յաւել դարձեալ Իդիպոս. Ընդ հուպ մեռայց ես. ի սմին ասա պահուս զգամ միաձայնի զգօրութիւնն կենաց և զմահու. ջուններ կեանք այլ ևս ուսուցանել ինձ. և մահ տակաւ հրաւանգէ զիս: Ո՛վ լսող առընչեան, ոչ ևս շողշողես յաչս իմ: Բայց այլ լոյս փայլէ ի միտս իմ: Երջանիկդ օթևան, բայց զդրունս քո և ընկալ զնա որ երկիցս կոչեցաւ ի դերագահ աւազութիւն. և արքունին վարաձալ ի ձահ էր ձակատուն. ընկալ զայրն՝ որ զիարձ էառ ամենայն թշուառութեանց: Եւ դու, Անտիգոնէ, արիասիրտ դուստր և մեծանձն, մաղթեա վերստին զքեզ ութիւնն դիցն անմահից. տացեն երկինք զի այս վերջին դուէթք սրտիս և վերջին խորհուրդք հանդուցեալ ի վերայ քո, սրբանուէր զքեզ գործիցեն: Բայց զայս ևս հարկ սպասու մատուսցես ինձ, որգեակ, մինչ ես առ աղբերբս այսու սրբեցայց, երթ խնդրել ինձ ոչխար սևագեղմն, զի յաշս արարիչ դիցն սանդարամետականաց:

Անտիգոնէ թեթևագոյն ոտիւք քան զայծեամն սլանայ անդէն ի հովիտն, խնդրել ի հովուէ ումեմնէ զպատա-

րագն՝ զոր խնդրեաց ի նմանէ Հայրն նորա. Աւրդ սեղմ տուր ասաի, ասէ ցնա Իդիպոս: Անկանի առ ոտս նորա Անտիգոնէ: Կրկնեաց անդրէն Հայրն և ասէ. Ո՛վ դուստր իմ, ոչ է մեզ ընդդէմ կալ դիցն կամաց: Աւա՛ղ, թողում զքեզ մենաւոր ի կենցաղոյս. չկարեմ ապատան առնել զքեզ ոչ ի խուժադուժ եղբարս քո, ոչ յապիկարն Իամենէ, ոչ ի Կրէտն զոր փառասիրութիւն զանխուլ բորբոքէ, և ոչ իսկ յորդի նորին առատամիտ: Այլ երթիջիր, Անտիգոնէ, ի խնդիր Թեսէոսի: Դիւցազնն Աթենայ վճռակեցաւ ի դից պաշտպանել զբարի բարի խորհուրդս զոր տակաւին ածցես զմտաւ. յիշեսցէ նա զբարեկամութիւնն՝ որով յօդեալ եմք ի միմեանս: Դուստր իմ, երթ ի հուչակաւոր քաղաքն Աթենասյ ոտտովք աղերսարկուաց, հարկ իսկ է ցանգ վարել ըստ բաղդին:

Անտիգոնէ արտօսրաթոր աչօք փարեալ զծնկիւք արքային՝ հաղիւ լսէր զկեանն բանս նորա. և ընդ տխուր բախտ հարազատացն իւրոց խոկայր. և ոչ այնքան փոյթ էր նմա վասն անձինն վչտացն և ցաւոց՝ որչափ ընդ աղէտս որ հանդերձեալն էին հասանել ի վերայ նոցա. վասն որոյ և զՀայրենական անիծիցն զարագուշակ արգասիս կամէր ի բաց մերժել ի նոցանէ: Հայր իմ, աղաղակեաց նա, յառաջ քան զմեկնիլ քո յաշխարհէ ներեա՛ եղբարց իմոց. խնդուն դիք զսեւլիս ի լուր ըղձից բարուեթեան և սիրոյ՝ եթէ ոչ վասն ամենեցուն առ հասարակ զբարութիւն առ ի նոցանէ պաղատեացիս: Ո՛հ, ներեա՛ եղբարց իմոց, զի թեթևասցին առ յինէն ծանրութիւնք աղէտիցս:

Դուստր իմ, կրկնեաց Իդիպոս, ընդդէմ է քեզ այսպէս խօսել. ոգիք աղնիւ Անտիգոնեայ, զի հայ քո ընդ երջանկութիւն կամ ընդ թշուառութիւն. միեթէ ոչ ունիցիս դու միշտ անդորրութիւն խղճի, գովութիւն ի մարդկանէ և սէր յաստուածոց: Երթ դուստր իմ, ծանեայ զվիտս քո. ոչ առ այլ ինչ, բայց առ փրկութիւն որդւոցս իմոց տառապելոց խօսեցար զքէն: Աւա՛ղ, զի առ նոսա միայն մնայ քեզ այսուհետև նուիրել զկեանս քո, և աւուրք զոր կեցցես ըզ-

զացմանքդ այդուհիկ լսեալ, կեանք քո համբուն ՚ի նուէրս Ծախեսցին անձնամատոյց: Ա՛լ ոչ՝ այդքան առաքինու- Թիւնք մի մնասցեն անվարձ, դուստր իմ, հաւատա բանիկ Իգիպտոսի որ ՚ի մահ մատչի: Ողջամբ մնա:

Մեկնեցաւ Անտիգոնէ արտասուօք. և ահա վաղ ընդ- Ելոյթ հնչէ ՚ի լսելիս նորա ձայն իմն ահասւոր: Տակաւնուա- Ղեր տիւն, և միայն գոյն ճաճանչք երկայնաձիգք Թափ անցանէին ընդ խորին մթնոլորտին: Թուէր իմն եթէ սա- Բաւանդակք Պառնասեայ և սարք Ելիկոնի բոցս հատանի- Ցեն: Հեղեղատն հովտին արձակէր հանգոյն իմն ձայնից ողբոց Իգիպտոսի: Յանկարծ լսելի լինին հեռուստ դղրդիւն կա- ռաց գլորելոց ՚ի բարձուէ լերին, որ գահավէժ խորտակե- ցին: Ի խոխոմն անդնդախորս յհաս դառնայ Անտիգոնէ՝ և խռովայոյզ սրտիւ նշմարէ ՚ի մէջ երկուց կալնեալ բորբոքե- լոց զհէգ արքային Թէբայ. երեսք նորա ծածկեալք ՚ի քօղ երկայն, ՚ի միում ձեռին զսուսեր զոհին կալեալ, և ՚ի միւ- սումն անդ ղնասնարանն արիւնալից: Այս շուրջ պատեալ ունէր զեղկելի Թագաւորն, յորոյ ձառագայթիցն չանայնն աչիւնք կուսին. այլ յետ սակաւուց չիջանէր:

Եւ յորժամ այն աղջամուղջ ծածկեաց յաչացն զդէմս հօրն, և ՚ի խորհրդաւոր խաւարէ հնչեաց բարբառս յետին. Եղուկ, եղուկ, ողջամբ մնա դուստր իմ. խնկոյն ցոլացաւ և արեգական: Զահի հարեալ մերձենայ Անտիգոնէ, այլ զզե- նեալն միայն գանէ զգառնն և ոչ ինչ այլ. էգոյր ինչ ՚ի նըշ- խարաց Իգիպտոսի: Ակյսպէս ահա անհետացաւ յերկրէ որ- դին Լայոսի, չանթակէզ արդեօք ծախեցաւ, արդեօք յան- դունդս ընկղմեցաւ, եթէ կենդանւոյն վերացաւ յՈլիմպոս. խորհուրդք են զոր ծածկեցին ՚ի մահացուաց դէք:

Աչընաւգուէ դուստրն Իգիպտոսի մնաց մենաւոր, մերթ հեանայր և մերթ վշանայր. զերիս աւուրս ինդրեաց յայս- կոյս և յայն զմարմին հօրն առ ձնհեղնմս զուզք գիահանու- Թեան: Դեռ ևս բոցավառ ծխէին կաղինքն, և ինքն զար- հուրագին անցանէր ընդ վայրս սրբեալս ՚ի դառաստանաց աստուածոց: Հուսկ ուրեմն վաստակաբեկ լեալ գնաց ա-

պատան անկանել յալքաստին հիւղ հովուի ուրումն ծե- ղոյ, ակնկալեալ պատեհ ժամու ընուլ զվերջին կամ հօրն և երթալ յայրքուհիս Թեսէոսի:

ՊԱՅԱՆՑ. Ա. Տոիգոնէ. Բ:

ՍՈՂՈՆ ԵՒ ԿՐԻԱՍՈՍ

Ա՛րդ ասէն՝ եթէ ՚ի հրաւիրմանէ անտի Կրիւսոսի յա- բուցեալ չգքաւ առ նա Սողոն ՚ի Սարդի. և կրեաց յայն- ժամ Սողոն զդգեաս ըստ նմանութեան մարդոյ՝ որ ցամա- քին գոլով ցանդ ընակաւորս՝ զառաջին նուագն դէմ եգեալ ի ջանեցէ ՚ի ծով. քանզի գետ զոր և միանգամ յայն արկա- նիցէ նա՝ կարծեսցէ արդեօք ծով լինել. սակայն և Սողոն եկեալ անցեալ յայնժամ ընդ արքունիսն, բազում ոմանս տեսանէր յարքունի աւագացն՝ զարգս արկեալ բազմահան- դերձս, պերճս և սիգազեղմս՝ շուրջ զնուրեամբք զամբոխն ունելով զյուղարկաւորացն և զսիգաւորաց, զնոյնսն ինքն Սողոն՝ եթէ Կրիւսոսն ինքնին էիցէ. մինչև եկեալ եհաս նա ինքն առ արքայն, ողջոյն ընդելուզեալ ակամբք և գունակ գունակ հանգերձեալ պատմուճանօք, յարուեստս կիսաւածոյս ոսկւոյ, ՚ի զարգ փայլեալ գե- զապանծ՝ որչափ ինչ միանգամ յաչեաս փարելն կայցէ ՚ի գոյնս և պերճ և պայծառ, որպէս զի և տեսարան հրա- շագեղ ՚ի նեղբս ընծայել և առաւելահրաշ: Իբրև յանդի- ման եկն նկաց նմա Սողոն, և ինչ ամենևին ոչ կրեաց նա ՚ի հրաշից անտի, և ոչ ՚ի զինն աքանչելացն՝ ինչ մի ասաց նա երբեք՝ որում աչն կալեալ սպասէր Կրիւսոս, նա և յայնմանէ երեսէր յայնժամ ողջամիտ մարդկանն՝ եթէ ընդ փոքրոցի շուք փառացն ունչչ առնէր անդ Սողոն ծանծա- ղամիտ գեղատրին. հրամայեաց եւս յայնժամ Կրիւսոս բա- նալ սրեալ առաջի նորա զամենայն զգանձս իւր զսակաւ և զարծաթոյ, և առնուլ տանել զնա և միանգամայն զամե-

նայն հանդերձանս շքեղս և զպատաս գեղեցիկս ցուցանել նմա՝ որում և ոչինչ պէտք էին Սողոնի յայնժամ յայնպիսեացս անտի. քանզի և շատ իսկ ինքնին Կրիւսոս յիւրում անձինն 'ի գէմս բերէր նմա՝ խմնալ զինել զբոյս բարուցն նորա:

Աւրդ երբև զամենայն յայնժամ տեսեալ Սողոն՝ եկն եկաց միւսանգամ առաջի նորա, սկսաւ հարցանել զնա Կրիւսոս, եթէ գո՞ ոք 'ի մարդկանէ երբէք առաւել երջանիկ քան զինքն տեսեալ իցէ: Եւ պատասխանի Սողոն, եթէ 'ի քաղաքացոց անտի նորա եաես նա զոմն Տեղրոս անուն. և սկսաւ պատմել նմա՝ եթէ այր լաւ և առաքինի եւկաց Տեղրոս, և մանկունս բարեմոյնս և ախտաւորս եթող զկնի իւր, և կեանս վարեալ ոչ ինչ կարօտ կարևորաց կենցաղոյս, վախճանեաց փառաւոր մահուամբ նահատակեալ 'ի մարտի վասն հայրենի գաւառին: Կրիւսոսի այնպէս իմն թուէր՝ եթէ 'ի գոլէկաց ոք իցէ Սողոն և 'ի վայրենեաց, որ ոչ մեծերից արծաթոյ և ոչ ոսկւոյ երեսս ինչ արար նա և անդուստ չափեաց զերջանկութիւնն, այլ զառն միոյ սուսկական և զժողովրդական զկեանս և զմահ առաւել ընտրեաց քան զայնչափ զօրութիւն և զիշատս աւագութեան: Ա՛յլ յայսր ամենայնի վերայ, դարձեալ հարցանէր զՍողոն. Բայց ապա զինի Տեղրոսի զո՞ ոք այլ 'ի մարդկանէ ծանեաւ նա առաւել երջանիկ. Կրկնեաց Սողոն և ասէ, եթէ գիտէ նա զԿէնդոլս և զԲիտոնէնէ՝ արս եղբայրասէրս և մայրասէրս բնաւից վէհագոյն. որք և զմայրն իւրեանց գլխովին յորժամ եզինք կառաջիք վատակաբեկ գնային, ինքեանք ընդ լուծ կառացն մտեալք 'ի նեղբոյ՝ առին ածին զնա մինչև 'ի տաճար անդր Հերայ, և անդ քաղաքացիքն ծափահարք խնդակիցք երանի կարդային ցնծացեալ մօրն: Ա՛յլ ապա իբրև զզօն զոհեցին և նաման ընթերցին, և 'ի քուն մտեալք, ոչ ևս այլ յաւէրն յառնէլ 'ի գալ աւուրն. այլ զկեանս իւրեանց վախճանեցին, և անցաւ և անտրտում 'ի մէջ այնչափ փառաց հանդիսեցան մահու: Յայնժամ յաստուցեալ Կրիւսոս՝ ասէր առ Սողոն. Իսկ զմեզ զկնի ոչ

դասես դու 'ի թիւ երջանիկ մարդկանդ: Յայժամ Սողոն ոչ կամեցեալ՝ ոչ ընթել ինչ Կրիւսոսի և ոչ գարձեալ առաւել ևս 'ի սրամտութիւն շարժել զնա ասէ. Հելլենացս մեզ, ով արքայ Լիւգացոց, զայլն ամենայն չափով եաս առաւած. և 'ի չափաւորութենէ ասաի յայտնանէ ելանէ մեզ մանն մի և բաժին իմնասուութեան՝ անքոյթ և անդրդուելի՝ որպէս հաւանեալս եմ և հետևակ. ոչ արքայական և ոչ պերճ և պայծառ. որ և զկենցաղոյս զկեանս տեսեալ մեր ազգի ազգի և այլազան պատահարաց անկեալ ընդ կրիւք, ոչ ինչ նեղէ մեզ յառօրեայ բարիս մեծամամբ. և ոչ դարձեալ ընդ բարեբաղդութիւն մարդոյ սքանչանալ ինչ՝ որ ժամանակին փոփոխութեան ներքոյ գրաւեալ իցէ: Քանզի առն առն իւրաքանչիւր բազմօրինակ բնաւորեցաւ լինել հանդերձեալն, և անյայտ և կէսլակած: Իսկ որում եաս առաւած բարեբախտութիւն մինչև ցվախճան, զնա ինքն հանդիպիմբ մեք երջանիկ. իսկ որ տակաւին կենդանի և յաստի կենցաղս քաղաքավարի, դեռ 'ի վտանգ պաշարեալ կայ նորա երջանկութենէն, և անկայուն է և անվճար, ըստ որում և մրցանաւոր նահատակին՝ յաղթութեան ձայն մոռնեակին և պսակն:

Զայսոսիկ ասաց Սողոն և մեկնեցաւ անտի. արամեցոյց զԿրիւսոս և ոչ հրահանգեաց: Անդանօր 'ի Սարդի յայնժամ հանդիպեցաւ առաքեալն Եսոպոս՝ եկեալ անդր 'ի հրաւիրմանէ Կրիւսոսի, և պատուեալ առ 'ի նմանէ: Սորա տեսեալ՝ զի մարդասիրութեան ինչ ոչ հանդիպեցաւ Սողոն, ցաւեաց նմա և ջղաւ առ նա, խրատէր և ասէր. Ո՛վ Սողոն, ընդ արքայից արժան է, կամ՝ ոչ ինչ խօսել կամ զհեռաւորութեան: Իսկ Սողոն կրկնեաց անդէն. Եա՝ ծն և ծն դիքն, կամ ոչինչ, կամ զլաւն: Եւ այսպէս արհամարհեաց յայնժամ Կրիւսոս զՍողոն: Բայց ապա երբև մարտ եդեալ ընդ Կիւրոսի՝ վանեալ պարտեցաւ Կրիւսոս 'ի պաւերազմին, և զքաղաքն գլխովին կորոյս, և կենդանի ձերբակալ եղեալ՝ հանդերձեալ էր 'ի հուր տապակիլ, և հրատ խարուկին հազմ բորբոքեալ կայր, և ինքն կապեալ պրկեալ

այն ինչ եւանէը ՝ի վեր ՝ի խարոյկ անդր՝ ՝ի ղեկն տեսուչեան առ հասարակ պարսիցն, և ինքնին կիւրոս անդ մերձ կայր, ձայն մեծաձայն՝ որչափ ինչ բաւական էր արձակեաց Կրիւսոս բարձր, և գոչեաց երկայս. Ո՛վ Սողոն: Զարմացաւ Կիւրոս առաքեաց առ նա հարցանել, եթէ արդեօք ՝ի մարդկանէ՞ ոք էր Սողոնդ այդ կամ եթէ ՝ի դից ոք, զոր ՝ի տագնապ վերջին զդա միայն յօդնութիւն կարդայ: Իսկ Կրիւսոս ոչինչ ամենևին ոչ ծածկեաց ՝ի նմանէ: Ի հելլենաց անտի, ասէ, յիմաստնոց էր այրդ այդ, զոր ես ինքնին հրաւիրեալ կոչեցի առ իս, ոչ եթէ առ ՝ի լսել ինչ ՝ի նմանէ և կամ ուսանել հրահանգիլ՝ որոց միանգամ պէտք էին ինձ, այլ զի ինքնին նա տեսող լինէր լինելոյն և վկայ լինէր կայցէ երջանկութեանն իմում, զոր ՝ի կորուսանելն իմ հանդերձեցաւ լինէր մեծ ևս չար՝ քան զբարին ՝ի ստանալն իմում զնա: Բանզի համբաւ միայն էր ինձ և կարծիք բարեաց ժառանգութիւն գոյա, իսկ զարգիս փոփոխուելն նորա՝ ՝ի կիրս դժոգոհ աւադիկ վախճանիլ զնս արդեամբք և յաղէտս զբաժանմունս: Եւ զայսոսիկ տալա այրդ այդ Սողոն՝ անդուստ ՝ի վերուստ յայնժամ զոյժ մեանգ իմաստասիրելով՝ իսրատ եղ լինէր, դէտ ակն ՝ի վախճան կենացն ունել, և մի յանձնապատան ՝ի խորհուրդս անկայունս գոռոզութեամբ պերճանալ: Իբրև զպատասխանի զայս նորա բերին առ Կիւրոս, նա քանզի իմաստնագոյն էր քան զԿրիւսոս, և ըզբանն Սողոնի գլխովին հզօրացեալ տեսանէր յօրինակ անձին որ առաջն կայր, ոչ միայն արձակեաց զԿրիւսոս, այլ և ՝ի շուք պատուոյ կալաւ զնա՝ ցորչափ եկեաց նա: Եւ տալա այս մեծաձայն փառք եղեն Սողոնի, որ յարքայից անուն միով բանիւն վրիպեաց զմին, և վարժեալ դեղեցկատես հրահանգեաց զմիւսն:

ՊԼՈՒՏԱՐԳՈՍ. Ջուգակշիռք:

ՄԵՆԱՄԱՐՏ ՄԵՐՈՎԻՒ ԸՆԴ ԿԵԼՏՅՏՈՑՆ

Մերովէ յադեալ ճապաղեօք արեանցն, կայր անշարժ ՝ի վերայ յաղթական կառացդ, և դէտ ակն կալեալ հայեր ՝ի դիակուտն որովք ելից զպատն: Ա՛յսպէս գեշագէշ պատառեալ զՅոան հանդչէն առիւծն նուաւիդացի. քաղց նորա ցածուցեալ, և հոտ սպանդին դեռ ևս բուրէ ՝ի սրտառ նորա. մերթ բանայ և մերթ փակէ զպարատառեալ բերանն, ուր դեռ ևս տեսանին գնդակք աստեղիկք, ապա ընկողմանեալ գազարէ ՝ի մէջ փողոտեալ ոչխարացն. բաշք նորա արիւնաներկք՝ անկանին յայս կոյս և յայն ՝ի վերայ պարանոցն նորա. տարածանէ զձիրանն ահաբեկիչս, և զղլուխ ՝ի վերայ մագլայն խոնարհեցուցանելով՝ կիսաբաց աչօք դեռ ևս լզու զկակուղ գեղմանն որ շուրջ են զնովաւ:

Առաջնորդն Կելտաց հետս զՄերովէ, յամբարտաւան և ՝ի թշնամանալից հանգստեան: Վասնեցաւ բարկութիւն նորա, յառաջ մատուցեալ առ որդին Փարամոնտեայ, ձայն եբարձ ծաղր առնելով զնա և ասէ. — Պետ երկայնադէս, պլղուլ ինն օրինակաւ կամք են ինձ բազմեցուցանել զքեզ ՝ի վերայ գահոյից Հերակլեանն կելտացւոց: Պատանեակ քաջ, արժանի ես դու տանել զնշանակն որոյ յարքունիս Տեւտատոսի: Ոչ կամիմ Թողուլ զքեզ հաշել մաշել նախատալից ծերութեամբ:

Ծիծաղեցաւ գժոգոհ ծաղրս Մերովէ և ասէ.

— Ո՞ իցես դու, մինեակ յայնմէնէ և ՝ի վանկական տոհմէ իցես: Սարսուռ հռովմայեցի, չերկնչիցիս ՝ի գեղարդանէ իմմէ:

Եւ նմա պատասխանի Կելտացին, հեծելով առ մանչէլոյ բարկութեան իւրոյ.

— Մի ինչ է որ զնս երկեցուցանէ, գուցէ երբեք անկցին երկինք ՝ի վերայ գլխոյ իմոյ:

— Տուր ինձ զերկիը, ասաց ամբարտաւան սիկամբրացին:

— Զերկիը զոր Թողից քեզ, ազաղակեաց կելտացին, անդ քնակեսցես յաւիտեան:

Զայն իբրև լուաւ Մերովէ, յեցեալ 'ի նիզակին իւր՝ սաւեաւ 'ի կառացն 'ի վերայ ցլուցն, և 'ի գլխոյ նոցա խոյացաւ յերկիը, եկաց 'ի հանդիպոյ Կելտացւոյն որ գայր ընդառաջ նորա:

Բանակն ամենայն զկայ առեալ նկատեր զմարտ պատերազմին յոր խթախտեսին առաջնորդքն երկոքին: Կելտացիքն սուսեր 'ի ձեռին գիմեաց 'ի վերայ փրանկ պատանւոյն, սուիպեաց 'ի նեղ էարկ զնա, եշար և վիրաւորեաց ընդ ուսսըն, և ընդ եղջերըք ցլուցն արիանէր զնա: Իսկ Մերովէ հշուեաց զալաքն, և մեծաւ 'ի վահան Կելտացւոյն: Յայնմ պահու որդին Կղոդիոնի սրացաւ գիմեաց իբրև զյաղաղ, եդ զոտն 'ի վերայ գեղարդանն, և խոնարհեցոյց զնա 'ի գետին, զվահանն տապալեաց յերկիր: Եւ զի չէր մարթ Կելտացւոյն Թաքուցանել զանձն, երևեցաւ գլուխ նորա: Շչեաց, սրացաւ և եմուտ 'ի Ճակատն նորա տապարն Մերովէի, իբրև զկացին փայտահարն 'ի վերայ գիւէ ծառոյ: Գլուխ առնն պատերազմողն բաժանեցաւ 'ի մարմնոյն. ցնդեցաւ ուղեղն, և աչքն սրսորեալք անկան յերկիր: Եւ եկաց մեռեալ մարմին նորա տարածեալ 'ի վերայ երկրի. սրկէր ձգտէր գձեռան, զերկիւղ և զդուխ միանգամայն ազդելով:

Զայն իբրև տեսին Կելտք, զաղաղակ բարձին զյաւոյ. քանզի առաջնորդ նոցա՝ վերջին սերունդ էր Վերգինգետորյ՝ որ զայնչափ ամն գեղեցկացոյց զքաղդ Յուլիոսի: Համարէին եթէ 'ի մեռանել նորա՝ ելեալ պետութեանն ըստ ձեռն Հռովմայեցւոց՝ անցանիցէ առ փրանկս: Վասն այնորիկ և փրանկք ուրախութեամբ բոլորեին զՄերովեաւ, և 'ի վերայ վահանաց բարձրացուցեալ, զնա և զամենայն նախնիս նորա հռչակեին Թագաւոր, իբրև զքաջագոյն 'ի Սիկամբրացիս:

ՍՈՒՐԻՄՆ ՊԱՍՏԻՅԼԻ

Յերեքտասանհերրորդ աւուր ամսեանն յուլիսի 'ի գիշերային պահու ընթացեալ էր Ժողովրդեան 'ի Պասդիլ: Հնչեցին ձայնք հրազինուց, և գրգռութեան իմն լսելի լինէր բարբառ Թէ. Հասա 'ի Պասդիլ: Յօրագրաց անտի ոմանք լուեն իմն ընդ կործանուելն նորա ցուցանիէին, և բազմայ իսկ 'ի սոյն միտս յածէին խորհուրդք. 'ի ինդիր զինուցէր միշ Ժողովուրդն. և քան ընթանալոյ եթէ յանկէանոյն անդ ապիկար զինուորացն 'ի պահեստի կայցէ մնէր զինուց: Հասին անդր վաղվաղակի. այլ Սանկրէյլ, որ պահապան էր ամրոցին, արդէլ խուժանին մտանել 'ի ներքս, և ասէր իսկ եթէ արքունի հրամանաց պէտք իցեն առ այդ: Ոչ ինչ ոչ կամէր լսել ամբոխն. հասեալ գրոհ եառն 'ի ներքս, բարձին զթնդանօթսն և բազմութիւն մեծ հրազինուց: Ի նմին ժամանակի ամբոխ մեծ մարդկան պաշարեալ էր զՊասդիլ. այլ զի թնդանօթ գրկէին 'ի քաղաք անդր ուղղեալ հայեր, հարկ էր զառաջս առնուլ զնմին 'ի քաղաք անդր կարիցէ նա տեղալ: Յառաջ մտաեաւ մի ոմն պատգամաւոր 'ի Ժողովրդենէ անտի, և խնդրեաց մտանել 'ի ներքս, և հրամայեն եղև նմա: Անդ նորա ականատես լեալ 'ի վերայ եհաս՝ եթէ երեսուն և երկու զբիւեթացիք գտան նեղին անդանօր և ութսուն և երիւք ոմանք ապիկար զինուորք: Բան եհաս ընդ զօրականսն եթէ չև ամբոխն յարձակեալ ընդդէմ՝ մի՛ նոքա 'ի հուր ընծայցին: Եւ մինչ նոքա յայսմ էին, տեսեալ Ժողովրդեանն եթէ տակաւին չեն լուեացաւ հրեշտակին՝ ականց գրգռել. մինչև հարկ լինէր նմա ցուցանել զանձն առ 'ի ցածուցանել զամբոխն: Հուսկ ուրեմն գարձ արար նա 'ի մեծատանէրորդ Ժամու առաւօտուն: Զև անցեալ կէս Ժամու, և ահա եհաս անդր և այլ գունդ 'ի զէն և 'ի զարդ վառեալ, զաղաղակ բարձեալ եթէ, Զպասդիլ խնդրեմք: Պահակապանք նշան տային մի և

այլ յառաջել. այլ նոքա յամառեալ պնդէին: Դիմեցին անվեհեր արք երկու 'ի վերայ սահեանցն, ընդ որով կայր գունդն պահանորդաց, և տապարահար խորտակեալ զԸնդԹայս կամրջին՝ հոսեցին 'ի վայր: Դիմեցաւ անդր ամբոխն և ընդՀացաւ 'ի միւս այլ կամարջ անցանել և զնովաւ: Յայնմ պահու հաւր ԹօխԹափիէին պահապանք, և ահա յետս ընկրկէր ժողովուրդն՝ հրապշտեալ արձակելով. և այսպէս ժամանակս ինչ ձգէր գործ մարտին: Իսկ ընարողացն ժողով համախմբեալ 'ի ժողովարան քաղաքին՝ լսէին զառաջ զինուցն, զի ևս քան զևս յուզէր. հրեշտակս երկու մի զհետ միոյ առաքէին, հրամայեն տուեալ զօրագլխին ԹոյՀ տալ մտանել յամրոցն ընկատուս միոյ բարկէական զօրաց. իբրու զի այնուհետև քաղաքացւոցն անկանէր զինուորական պահպանութիւն քաղաքին: Հասին հրեշտակքն երկոքեան միասին զկնի, այլ յանկնարս մտանէին լսելի առնել զձայն իւրեանց առ ժողովուրդն խռովայոյզ: Ի դոխիւն Թմբկին և ընդ դրօշուն յօգս ամբառնալ՝ առ վայր մի դադարեցաւ հնչուն: Յառաջ անցին հրեշտակք, պահակապանք ուշին մատուցանէին. համայն և այնպէս յանկնարս ինն էր լսել զոր ասէին: Յանկարծ ինն չգիտեմ ուստի յարձակեցան հրացանք. դառ համարեցաւ զայն ժողովուրդն, և դիմեաց 'ի հնչուն դառել զդղեակն. սկսաւ ապա յայնժամ ամբաձիգ տեղալ 'ի նոսա գունդն պահապանաց: Հասին անդր անօԹովք պատերազմի զօրականն գաղղիացի, և այնուհետև սկիզբն լինէր մարտին: Յայսմ պահու 'ի ձեռս անկեալ տոմս ինն, զոր Պարոնն տը Պանսըվալ առաքէր առ Տըլընէկ, հրամանատար Պասդիլէեայ, ընԹերցեալ լինէր 'ի ժողովրդեան անդ քաղաքին: Ֆալալէբս ասէր 'ի սմին Պանսըվալ առ Տըլընէկ ժուժալ այլևս, խոստացեալ վաղ հասանել նմա 'ի զօրավիգն. և արդարև իսկ ընդ երեկոյանալ առուն խորհուրդք արքունեացն հասատատեալ էին 'ի գլուխ ելանել: Ա՛յլ Տըլընէկ անզգ և անօգնական՝ տեսեալ զժողովրդեան հաստատուն սիրտ, բուռն եհար 'ի պատրոյտ և 'ի պատրաստի կայր ընդ օգս 'ի վեր հանել զդղեակն: Ընդդէմ

ֆացին նմա պահապանք, և սահիկին անձնատուր լինել: Տուան նշանք և արիաւ համարջ: Մատուցեալ պաշարողաց՝ խոստանային չանցուցանել ինչ չարիս. այլ ամբոխն խուժեաց 'ի ներքս և լցան սրահք: Զուխցերացիք պատեհ գըտեալ՝ ապրեցուցանէին զանձինս. և զապիկարան խնամք գաղղիացի զօրականին միայն փրկեցին 'ի վայրագութենէ ժողովրդեան: Ի սմին ժամու յանդիման լինէր նոցա օրիորդն մնատալ և գողգոջուն. համարեցան Թէ գուսար իցէ Տըլընեայ. խլեցին զնա և տանէին հուրբ գառեալ. այլ անդէն զօրական ոմն առաքինի յափշտակեալ զնա 'ի մէջ էգին ձեռացն՝ կացուցանէր յակատամանի, և ինքն գարձեալ խառնէր 'ի նոսա:

Հինգ և կէս ժամ էր աւուրն. և ընարողացն ժողով 'ի մեծի անձկութեան տագնապէր, և ահա լսելի եղև խուլ մունչիւն, որ գայր և զօրանայր: Եւ ահա ամբոխ մարդկան յաղթութեամբ 'ի բերան ընդոյ ղգաւթին: Անդ ածաւ յաղԹանակաւ ոմն 'ի գնդէ գաղղիացի զօրականին վիրալից, սարգևնեաւ սպակեալ: Կարգադրութիւնք և փականք Պասդիլեայ անցուցեալ 'ի ծագ սլաքի, և մի ոմն յամբոխէն արիւնաշաղախ ձեռամբ 'ի վեր ամբառնայր զՇարմանդ պատրանոցին Տըլընեայ, զոր այն ինչ գլխատեալ էին: Զօրականք երկու 'ի գաղղիացի գնդէն՝ Էլի և Հիւլէն՝ ցյետին շունչ նոցա պաշտպանեցին նմա: Ջնան և այլ ևս պատարագք, Թէպետ և դիւցազնական իմն առաքինութիւն ոմանց ոմանց 'ի զօրականէն խնդրեալ էր ազատել զնոսա 'ի մոլեգնութենէ նէ ժողովրդեանն:

Թիէր. Պատմ. խռովութեանն գաղղիոյ:

ԿՈՏՈՐԱԾ ՆՇԻՉՆԵՐԵՑ

Հրատարակեն Ա. Թմկեանին, որ սեանկար իմն գետ կուսէ սպիտակ որմոց արքունի պալատանն երևի, վկայ արձանացեալ կայ մեծագունին 'ի գործս Թագաւորութեան

Մահմուտ, բարձման ատեմ Երևելեր։ Ահա ձեռնարկութիւն նորա, որ միայն կարէր վերսին ածել ՚ի կենդանութիւն զարքայութիւնն մեծ, ոչ այլ ինչ ընծայեաց առաջի՝ բայց արիւնուչտ և աղիտաբեր տեսարանս, որպիսի ինչ չիք նշմարել ուրեք ՚ի տարեգիրս այլոց պետութեանց, որ ՚ի հետս գնահատից դրոշմեալ կայ և հրկիզութեանց զաւերածովք անդ յիշատակարանացն Ահմէխատնի։ Մահմուտ մեծ իմն քաղաքագիտութեամբ պատրաստեաց զայն, և քաջութեամբ՝ արժանաւոր առն դիւցազին, եած զայն ՚ի գլուխ։ Դէպք ինչ գլխոյն զայս ՚ի վեր երևեցոյց վարանջութիւն։

Սպայ ոմն եպիսատոյն հհար զոմն ՚ի զօրուհէ անտի տաճկաց. տապալեցին անդէն Երևելիքն զկաթսայս իւրեանց։ Թագաւորն որ քաջածանօթ և կաղմ էր առ ամենայն, կայր յայնժամ ՚ի խորհրդեան ՚ի բաւրատանին Պեշիք Թաշոյ՝ որ ՚ի վերայ Վռափորի։ Աճապարեաց զարձաւ յարքունիս, և հառ զնուիրական դրօշն Մահմէտի. Միւֆթին և Իւլէմայք՝ զնաւաւ ժողովեալ, սահմանեն բնաջինջ կուսանել զԵնիչէրիս. զօրականք կանոնաւոր գնդից, և հաւատարիմք ՚ի Մահմետականաց անտի, ՚ի զէն վառեալ գումարին ժողովին ՚ի ձայն սուլդանին. ինքն իսկ արքայ յերիվար աշտանակեալ, ընթանայ զօրավարել բանակին։ Ենիչէրիք համախումբ ժողովեալք ՚ի հրապարակին Ահմէխատնի և ակն ածեն ՚ի նմանէ. հատանէ անցանէ նա բաղում անգամ՝ զբաղմամբոխ գունդս նոցա միայնակ, ՚ի մէջ բիւր մահուց քաջալերեալ վհհադոյն իմն զօրութեամբ, զոր ազգել սովոր է տիրականաց ինչ առաջադրութիւն մտաց։

Օրս այս կամ յետինն պարտ էր լինել կենաց նորա, և կամ սկիզբն ազատութեան նորա և իշխանութեան։ Ենիչէրիք անսասան ՚ի ձայն հրամանաց նորա՝ չառնուն յանձն կալ ընդ իւրեանց սպայիւք. և խուժեալ ժողովեցան յամենայն կողմանց մայրաքաղաքին արք իբր չորիք հազար։ Հաւատարիմ զօրականք սուլդանին Թհգանօճաճիքն և Պոստանճիք՝ տիրեն անցիցն մերձակայ Ճանապարհի Զիբաձակարանին։ Հրամանն ետ արքայ արձակել զհուր, և զօրականքն կային մնային տարակուսեալք. անդէն սպայ ոմն աներկիւղ մերձենայ ՚ի մի Թհգանօճիից անտի, և զատճանակ իւր արձակէ ՚ի բերան նորա, և ահա ընդ հրաձգութեամբոյն յերկիր կործանի առաջին դաս զօրուն Երևելերաց։ Ցետս ընդ կրունկն ընկրկին նոքա, և բնակարանք նոցա հրբակէզ լինին. անթիւ բազմութիւն նոցա՝ յանձուկ վայրի անդ փակեալ, կորնչի ընդ փլատակօք որմոցն։ Արք իբր հարիւր և քսան հազար ՚ի մայրաքաղաքին ևեթ ՚ի սուր սուսերի կորեան, ՚ի զոհ կատաղութեան խուժանին և սուր դանին. ջուրք Վռափորի ածեալ ամացին զդիակունս նոցա ՚ի ծովն Մարմարայ, և որ կենդանիք ՚ի նոցանէ մնացեալ էին ՚ի փոքրն Ասիա տարագիր եղեն։ Զայս օրինակ զերծանէր Թագաւորութիւնն։

Լ. ԱՄԵՐԴԻ. Ռոդևաորութիւն Ֆրանկաց։

ՄԱՐՏ ԵՒ ՄԱՀ ԿԱՏԻԼԻՆԱՅ

Եւ յետ հանդէս առնելոյ ամենայնի, պատուէր ետ նշան տալ, փող հարկանել, և հետևակազօրուն ոտն առ ոտն յառաջ խաղալ։ Զնոյն և Թշնամին արար։ Իբրև մօտ առ իրեարս հասին, ուր մարթէր Թեթևագէն զօրուն բախել ՚ի մարտ, մեծաւ աղաղակաւ զայրագինս դիմեցին, և զոհդս Թողեալ, ձեռն ՚ի սուսերս արկին։ Հինաւուրց զօրքն ՚ի յիշատակ արուեստից անցելոց մշեփնաբար կուռծ առ կուռծս ընդ Թշնամիս կռուէին, և սոքա անվհեռք ըզդէմ նոցին ոնէին. և սաստիկ լինէր անդ մարտ պատերազմին։ Անդ Կաթիլինա ՚ի ձակատու բանակին ընթեր ընդ զօրօքն շուրջ եկեալ՝ ձեռն տայր վաստակելոցն, առաջնորդ ընդ վիրաւորելոց փոխանակէր, ամենայնի խնամ տանէր, և յաշխոյժ անձամբ մարտուցեալ՝ զբաղումս դիմատապատ յերկիր արկանէր, զքաջն զօրականի և զհան-

Ճարեղ ապարատեան պաշտօն լցեալ անթերի: Պետրէոս իբրև եռես ՚ի վեր քան զակնկալութիւն զինեա յարձակումն Կատիլինայ, խաղացոյց ՚ի մէջ թշնամեաց զգունդն պրետորական. և խռովեալ զնոսա, և որոց աստ անդ ըզդեմ ունէին՝ սուր ՚ի վերայ եդեալ, արար կառորած մեծ. և անտի յաղ և յահեակ յարձակեցաւ: Մանլեոս և փեստլացին, որք ՚ի Ճակատու անդ մարտնչէին, անկան. և Կատիլինա իբրև եռես վայրապատեալ զիւրան, և զանձն սակաւուք ոմանք ինացեալ անօգնական, յիշեաց զաղնուականութիւն զարմին և զնախնեացն փառս, և դիմեալ ՚ի խառնուրդս մարտին՝ անդ զէն ՚ի ձեռին անկաւ մեռեալ:

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ. Կատիլինա:

ՄԵՏԵԼԼՈՍԻ ԸՆԴ ՅՈՒԳՈՒՐԹԱՅ ՊԱՏԵՐԱԶՄ

Իսկ Յուգուրթ իբրև եռես զվերջապահս բանակին Մետելլեայ յաւաղ անցեալ, քան զառաջնապահս իւր, իբր երիս հազար զօրաք հասեալ կալաւ զլեառնն՝ ուստի ի-ջեալն էր Մետելլոս, զի մի ՚ի խոյս տալ թշնամեաց՝ լեցի նոցա այն տեղի տպաւինի, և տապ մարտից: Հանապ, եռ յանկարծակի նշան, և յարձակեցաւ ՚ի թշնամին: Կէսք ՚ի նուիրեալսն զվերջապահս հարկանէին, այլք յաղ և յահեակ գրոհ տային, ՚ի նեղ և ՚ի տագնապ զհռովմայեցիս արկանէին, ամենայն ուրեք զամենայն կարգս նոցա աղմըկէին: Որ քաջասրտագոյնք իսկ ընդդեմ թշնամեացն զինեալքն էին, տեղի տային ՚ի կէզակարծ մարտն՝ նեռասհարեալք ՚ի բացուստս, և ոչ բաւեալ փոխանակիլ նոցա վէրս կամ գալ ՚ի կռիւ: Քանզի հեծելազօրն յաւաղագոյն խրատեալ ՚ի Յուգուրթայ ՚ի հալածելն ՚ի հռովմայեցւոց, ոչ կուռ ՚ի մի վայր սնդեր, այլ սփռեր ցիր և ցան: Եւ այսպէս նուիրագլեալք առաւելեալք թուով, իբրև ոչ կարէին տրտճելոյ զհռովմայեցիս ՚ի հետամուտ լինելոյ, հարկանէին շուրջ ՚ի թիկանց և ՚ի կողից զզրուեալ դունդս նոցա. և եթէ դիպուածոյն Թուէր խոյս տալ ընդ բլուրն քան ընդ դաշտ, երիվարք նոցա քաջալարժք էին ընդ թափուստս սրանալ, ուր զվնասն մեր արդելոյր մացառախիտ դժուարութիւն վայրացն:

Բայց մարտն յերկարեալ երիւսառեք անպարտելի՝ ողորմ և դժնեայ ընծայէր տեսիլ. կէսք ՚ի խմբից քակտեալ տեղի տային, այլք նոցին հետամուտ, ոչ կարգաց և ոչ դիւշուց էր պահպանութիւն. ուր ուրէք և հասանէր ումեք վտանգ, անդ զդէմ ունէր, անդէն փոխանակէր զվտրուած: Զէնք և նետք, ձիան և մարդիկ, նուիրագլիք և հռովմայեցիք խառն ՚ի խուռն, ոչ խորհրդոց և ոչ հրամանաց ազդեցութիւն, այլ զամենայն ինչ դէպք անօրինէին:

Օրն տարաժամէր և տակաւին անյայտ էին էք մարտին, մինչև ՚ի պարտասել ամենեցուն յաշխատութենէ և ՚ի ծարաւ: Իբրև եռես Մետելլոս զնուազիգացիս Թուլացեալս ՚ի դիմակալութիւն, տակաւ ՚ի մի վայր զզօրականն էաձ. կարգս եդ նոցա, և զքառեակ Էգեհոնական գունդս ընդդեմ հեռակազօրուն Թշնամեաց կացոյց, որ մեծաւ մասամբ ՚ի բարձունս բլրոյն խոնջեալ նստէին: Աղաչէր միանգամայն և յորդորէր զզօրականն, մի լքանել, և մի փախստական Թշնամւոյն Թողուլ զյաղթութիւն: Զէք ձեզ բանակեաղ, ասէր, և ոչ տեղի տպաւինի, ՚ի զէնս է ամենայն: Ահա և ոչ Յուգուրթ անգործ կայր յայնժամ, շուրջ գայր, քաջալերէր զզօրսն, վարէր զնոսա անդրէն ՚ի մարտ, և ինքն անձամբ ՚ի գլուխ այրընտիր զօրականին՝ զամենայն ձիսն ՚ի գործ արկանէր, ՚ի թիկունս հասանէր իւրոցն, զտարակուսեալս ՚ի թշնամեաց հասեալ վանէր, և զզօրաւորաց ՚ի բացուստս պատերազմաւ զդէմ ունէր:

Ահա օրինակ մրցեին Լիւբեանս զօրավարքն երկոքին, արք հոյակապք: քաջութեամբ հաւասարք, այլ ոչ նա զօրութեամբ: Մետելլեայ քաջք էին զօրականք, այլ տեղին դժպատեհ. իսկ Յուգուրթայ բաց ՚ի զօրացն՝ ամենայն ինչ

բարեպատեհ : Իբրև ՚ի միս առին հռովմայեցիք զի չէր նոցա տեղի փախստի, և ոչ հնար զթշնամին ձգելոյ ՚ի պատերազմ, և զի օրն ընդ երեկս էր՝ ՚ի բլուրն կոյս զրոհ եռուն ըստ հրամանի զօրավարին : Իսկ նուիրագացիք կորուսեալ զբարձրաւանդակն և ՚ի պարտութիւն մատնեալ՝ գարձան ՚ի փախուստ. բայց նուազունք ՚ի նոցանէ կորեան, այլոցն զերծեալ սրաբաշ՝ անառեղեակ գոլով թշնամւոյն վայրագ առնէն : Յայնմ վայրի Բոմիլկար, որ հրամանատար ՚ի Յուդրթայ կարգեալ էր ՚ի վերայ փղոց և հետևակազօրուն, իբրև եռես զՀռութիլիոս անցեալ յառաջ, էած տակաւ զզօրս իւր ՚ի տեղի տափարակ. և ՚ի փութալ դիմել նորա ՚ի զեան, ինքն պատեհ առեալ՝ լրիկ հանդարտիկ ձակատեցոյց զնա, և հնամ կալեալ լրտեսէր զգնացս թշնամւոյն : Իսկ իբրև գիտաց զի Հռութիլիոս նատէր աներկևան, և Յուդրթայ պատերազմին բարձրանայր շնինդն աղաղակի, երկեաւ զի մի գուցէ Հռութիլիոս իրազեկ լեալ ամպատրեսցէ իւրոյն պարտասելոյ ՚ի Թիկունս, զձակատ բանակին՝ զոր առ կասկած տկարութեան զօրականին անձուկ էր յօրինեալ՝ առ ՚ի խափանել զզուռ թշնամւոյն, ընդարձակեաց և խաղացոյց ընդդէմ բանակի տեղականին : Դէտ ակն ՚ի վեր ամբարձեալ տեսին յանկարծ հռովմայեցիք մրրիկ փոշւոյ մեծ. և քանզի մացառախիտն որ ՚ի դաշտին, արգելոյր զտեսիլ բանակին, համարեցան ՚ի սկզբան զիոշն անջրդի երկրին վեր ՚ի վայր ՚ի հողմոյ յուզեալ. այլ իբրև տեսին զի յարատևէր մրրիկն և ըստ յառաջ խաղալ բանակին գայր մերձենայր առ նոսա, ծանեան զգալուստ թշնամւոյ, և զկնառեալ առաջի պատնիշացն ձակատեցան կացին ըստ հրամանի զօրավարին : Իսկ իբրև բանակք երկոքին եկին հասին առ միմեանս, զաղաղակ հարեալ դիմեցին ՚ի վերայ միմեանց : Նուիրագացիք զառաջինն յօգնականութիւն փղոյն յուսացեալ՝ ժուժկալէին քաջութեամբ. այլ ՚ի տեսանելն զնոսա արգելեալս յոստոց ծառոց ցիր և ցան պաշարեալս ՚ի թըշնամեաց, ՚ի փախուստ գարձան. և բազումք զկնդնկէց լեալ, օգնականութեամբ գիշերոյ և մերձակայ բլրոյն անվնասք

ձողոպրեցան : Զորք Լեթ ՚ի փղոյն գերի վարեալ, այլք առհասարակ թուով քառասուն սպանան : Իսկ հռովմայեցիք թէպէտ վաստակաբեկք ՚ի յերկար ջուրն, պատնէշս ածելոյ և ՚ի պատերազմէ, սակայն ՚ի յամէ Մեսսալեայ առաւել քան զկարծիս՝ այնպիսակաղմք և զգուշաւորք եղեն ընդ առաջ, զի գարանակալութիւնք նուիրագացւոց չներեին նոցա յանհոգս լինել : Եւ իբրև ոչինչ հեռի էին յիրերաց, ՚ի մէծան գիշերոյ զառաջինն զթշնամեայ կարծելով յարձակումն՝ արհաւիրս ՚ի միմեանս և աղմուկս չիոնի գոչմամբ և աղաղակաւ արկանէին. և եթէ ոչ երկուասեաք հեծեալք ոմանք ՚ի վերայ հասանէին իրացն, նախձիր ազետալի յանդուգն վրնպակաւ ՚ի տեղւոջ անդ գործէր : Անդ յանկարծ ընդ երկիւղն փոխանակէր խնդութիւն. զօրականք զուարթագին ձայն տային միմեանց, լսել և պատմել զանցս իրերաց, և իւրաքանչիւր զանձին քաջութիւն յերկինս ամբառնայր : Ա յսպիսի բնաւորեալ են մարդիկ, ՚ի յաղթութեան՝ վատացս իսկ պարծել, իսկ ՚ի ձախողակս՝ լքանել և քաջագ :

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ · Յուգուրթ :

ԱՌՈՒՄՆ ԱՄՐՈՑԻ

Ոչինչ հեռի ՚ի Մոլուքայ գետոյ, որ բաժանէր ընդ տերութիւն Յուդրթայ և ընդ Իոկքոսի, էր լեառն քարաժայռ ՚ի դաշտի լայնանիստ և բարձրագագաթն, և ՚ի վերայ նորա ամրոց ոչինչ մեծակառոյց, յոր ընդ անձուկ վերելս էր մուտ, այլ ամենայն կողմանք լերինն ՚ի բնուստ և ձեռագործ սեպացեալք :

Զսա Մարիոս, զի անդ էին գանձք թագաւորին, եդ ՚ի մտի զնուռ զօրութեամբ առնուլ, այլ դէպք առաւել յաջողեցին նմա զայն քան զձգնարտարութիւն խորհրդոց : Քան-

զի հզօր էր ամրոցն զինուք և զօրօք, և պաշար ցորենոյ ՚ի նմա և ապբիւր ջուրց. և վայրն գժպատեհ ՚ի կառուցումն հողաբլոյ, աշտարակաց և կարևոր կազմածոց մարտի. և ճանապարհ բերդականաց անձուկ յոյժ և երկուստեք գահավէժ: Մեքենայք և մանգլինք մեծամեծ վտանգօք ընդ վայր մատչէին անդր. զի այն ինչ հուպ լեալ ՚ի հրձգուԹենե և ՚ի վնասց հոլովելոյ ապականէին. և ոչ զօրականք առ տեղւոյն անհարԹուԹեան դիմակալել զօրէին, և ոչ ՚ի մեքենայս անդր կալ անվտանգ առ ՚ի վարել զայնոսիկ. քանզամարտիկքն ՚ի նոցանէ անկանէին կամ վիրաւորք ելանէին, և տկարք երկիւղաբեկ լինէին:

Այնժ Մարիոս զաւուրս բազումս անավաստակ լեալ՝ վտաներ յանձն իւր. ձեռնԹափ արդեօք լինել ՚ի գործոյն՝ որ անօգուտ Թուէր, եԹէ բազդին Թողուլ զայօդուԹիւն, այնմ որ սահման լինէր իւր ձեռնառու: Եւ իբրև զբազում տիւս և գիշերս յայսպիսի ծուխս խորհրդոց տագնապեր նա, լիցուրացի ոմն ՚ի գաշնակից հեռակապնդէն զինուոր սոսկական, ըստ յայմոցելոյ բազդին եղեալ ՚ի բանակէն գՅըոյ, ոչինչ հեաԹ ՚ի կողմանէ ամրոցին ուր կռուէին՝ եաԹս ՚ի պատառուածս ժայռից խոնջուն՝ որ սողային. յորոց ՚ի միոյ յայլ և անաւ ՚ի միւսն ընԹացեալ առ ՚ի ժողովել, տակաւ մերձ ՚ի ծագ ամրոցին եհաս: Եւ ՚ի տեսանել զվայրն անմարդի, եկն նմա բնաւորապէս իղձ անծանօԹիցն հետազօտուԹեան: Կաղնի մեծ ըստ դիպաց ՚ի տեղւոջ անդ ՚ի ժայռս արմատացեալ էր, դուն ինչ հակեալ և տպա կոր ՚ի վեր ածեցեալ՝ ուր դիմէ բնուԹիւն բուսականաց: ՄերԹ ընդ ոստս նորա և մերԹ ընդ սպառ ժայռից սողոսկեալ լիցուրացին գծագրեաց պատակ բերդին. քանզի նուժիդացիք համօրէն ՚ի զինն պատերազմողացն կային: Եւ իբրև լրտեսեալ զամենայն որ ինչ ընդ հուպ կարևորն լինելոց էր, դարձ արար ընդ նոյն ճանապարհ, ոչ հարևանցի որպէս ՚ի վերելսն, այլ տեղեկանալով ամենայն վայրացն և շուրջ դիտելով:

Ապա աճապարեալ գայ առ Մարիոս, պատմէ զամենայն հնարս և յորդորէ զնա ընդ կողմն ընդ որ ԹիՀաղն էր՝ դիմել ՚ի բերդն, խոստացեալ անձամբ առաջնորդել՝ զվտանգ յանձն առեալ: Մարիոս առ ՚ի հաւաստել զբանս լիցուրացւոյն առաքեաց զոմանս լիւրոց անաւ, որք ըստ իւրաքանչիւր մտացն Թուելոյ՝ հետևին կամ գժուարին զգործն ցուցին: Բայց բդեշխին ոչ սակաւ խրախոյս առեալ, ընտրեաց ՚ի գինգ անաւ փողարացն և սրնգահարաց արս հինգ ԹևԹերընԹացս, և հարիւրապետս չորս ՚ի Թիկունս օգնականուԹեան առեալ նոցա, հրամայեաց ամենեցուն նոցա հնազանդել լիցուրացւոյն, և ՚ի վաղիւ անդր կատարել զգործն:

Եւ ՚ի սահմանեալ ժամանակին զամենայն ինչ կազմեալ նախ և պատրաստեալ, անկան ՚ի ջուր: Բայց հարիւրապետացն խրատեալ յառաջադոյն յառաջնորդէն, փոխեալ էր զղէն և զզարդ, և զոտս և զգլուխ մերկացեալ, որպէս զի հեշտաւս ընդ ժայռս վերելակել կարիցեն. և զսուր և զվահան կախեալ զԹիկանց, և վահանքն ըստ նուժիդեան տարազու կաշեայք, որպէս զի ԹևԹևադոյնք լցեն, և ՚ի բախել նոցա ընդ վէմս ոչ ուժգինս շառաչիցեն: Աւրդ լիցուրացին յառաջադէմ՝ զժայռից և զվիհաւորից արմատոց, որ ուրեք ուրեք ցցուեալ ՚ի դուրս գտանէին, արկեալ պարանս, դիւրեր նոքօք զհետ եկելոցն զվերելս. և վտասրտեալոց ՚ի խստուԹիէ ճանապարհին ձեռն կարկառեր. և ՚ի դիպել ափափայից՝ մի առ մի զնոսա անզգին արձակեալ, և ինքն ստանձնեալ զզգնս նոցա գայր զհետ. և ուր վտանգն էր՝ ինքն նախ արիաբար դիմագրաւեր, և ստեպ ընդ նոյն եւևէքս գործեալ զամենեսեան խրախուսեր: Եւ յետ երկար և բազում աշխատանաց, ուր ուրեմն հասին ՚ի կողմն ամրոցին Թափուր ՚ի պատերազմողաց. քան զի ամենեքեան որպէս և յայլ աւուրս՝ ընդգէմ Թշնամեաց երԹեալ էին: Այդ եղև Մարիոսի ՚ի ձեռն լրտեսաց յաջողուԹիւն գործոց լիցուրացւոյն, և Թիպէտս զօրն ՚ի բուն նեղեալ էր նորա զնուժիդացիս, սակայն խրախուսեալ յայնժամ զիւրան, և ինքն ՚ի մեքենայից արտաքս ելեալ, յառաջ մատչէր ընդ ասպարափակ հովանեաւ, և ՚ի բացուստ ՚ի ձեռն ապեղնաւորաց և

պարսաւորաց տագնապ ահագին հասուցանէր Թշնամեաց: Իսկ նուիրեալքն՝ որոց բազում անգամ տապալեալ և հերքեալ էր զմանգլխոնս հռովմայեցւոց, ոչ ի ներքս ի պարսպի ամրանային, այլ զուրս և զդիմէր արտաքոյ դեգերեալ՝ Թշնամանէին զՀռովմայեցիս, վատ կոչէին զՄարիոս, և զօրաց մերոց դերուԹիւն ապառնային, յաղողուԹեամբքն գոռոզացեալ: Ինքն պահու միւնդեւ հռովմայեցիք առ հասարակ և Թշնամիք սաստիկ պատերազմաւ դուն եդեալ երկուսեանք, առքա վան փառաց և իշխանուԹեան, և նոքա վան անձանց փրկուԹեան մարտնչէին, և ահա յեղակարծումն ի Թիկանց ձայնք հնչեցին փողոց· և նախ կանայք և մանկունք, որ կային ի զինի մարտին, փուԹացան ի փախուստ· ապա որք մերձ առ պարսպօքն էին, և ապա զինեալք և ապազէնք: Ուրանօր այս դէպք պատահեցին, անդ հռովմայեցիք սաստկագոյն մարտնչէին, և հասեալ վանեալ զՇնամիս՝ զբազումս ի նոցանէ տապստ արկանէին, և ի վերայ սպանելոցն դիականց գրոհ տուեալ ծառբաւք փառաց ի պարիսպս անդր դիմէին՝ ընդ հակառակս ընԹացեալ և ոչ ուրուք ցանկուԹեամբ աւարոյ յամեալ: Ա՛յսպէս յանգգնուԹեանն Մարիոսի օգնականեալ ի բազդէն, փառս ի վերինացս եգիտ:

ՍԱԼԼՈՒՍՏԻՈՍ· Յուգուրթ:

ՓԻԼԻՆԵԱՆ ԵՂԲԱՐՔ

Չայնու ժամանակաւ իշխէին կարքեդոնացիք ունդի մասին Աֆրիկէայ· և հիւբէնացիք իսկ հզօրք էին և բազմահարուստ: Դարձ աւազուտ միօրինակ էր ի միջի, ոչ գետ և ոչ լեառն զսահմանն նոցա որոշէր, որով երկար և անլուռելի մարտ պատերազմի էր ի նոսա: Իբրև երկուստեք դադարեցան զօրաց և

նաւատորմիղք ստէպ խորտակեալ ի փախուստ դարձան և նկուն եղեն իրերօք, խնԹացեալ Թէ գուցէ այլ ոք ի վերայ յարձակեցի պարսէզոց և յաղԹականաց պարտատեղոց, գուլ զինուց արարին, և դաշինս եդին: Զի ի նմին աւուր և ի ժամու դեսպանք արձակեալ յերկաքանչիւր աշխարհին՝ յորում վայրի և միմեանց հանդիպեսցին, այն լեցի երկօրեանց ազգացն սահման: Աւրդ ի կարքեդոնացւոց անտի արձակեալ եղբարք երիս փիլիսոփանք անուանակոչեալք՝ սուրՀանդակօրէն խաղացմամբ հատառօտեցին զՀռոմայարչ· իսկ հիւբէնացիք դանդաղեցին, այլ առ յուլուԹեան արդեօք եԹէ ըստ դիտից այսպէս պատահեալ՝ չունիմ ասել հաւաստեաւ: Բայց ի կողմանն յայնոսիկ մըրիկ որպէս ի ծովու արդելուս յաձախ զՀանապարՀորդս· զի ընդ դաշտ տափարակ և անծառաստանիկ հողմ ուժգին զաւազն ի վեր փոԹորկեալ ընու զբերանս և զաչս անցաւորաց, և հարեալ զնոսա շլացուԹեամբ խափանէ ի գնացից: Իբրև տեսին հիւբէնացիք զինեալ իւրեանց յետս, երկուցեալ վասն պարտուԹեանն ի պատուհասէ քաղաքացոցն, սկսան սոգանել զկարքեդոնացիս իբր յառաջ քան զժամադրուԹիւնն մեկնեալս ի քաղաքէն, և աղմուկ արարեալ զամենայն ինչ յանձն առնուին քան դառնալ յետս պարտուԹեամբ: Յայնժամ խնդրեցին կարքեդոնացիք այլ ինչ սահմանել պայման, բայց միայն իրաւացի· և զկնի Յոյնք ի խնդիր նոցա, եդեալ պայման՝ զի կամ ինքեանք ուր զսահման ժողովրդեան իւրեանց խնդրէին՝ անդ կենդանւոյն Թաղեսցին, և կամ ինքեանց նովին պայմանաւ յառաջ խաղալ ցոր վայր կամիցին: Հաճոյ Թուեցաւ փիլիսոփանց պայմանն այն, և անձնանուէր եառուն զկեանս իւրեանց ի շահ օգտի հասարակապետուԹեանն, Թաղեալք անդ կենդանւոյն: Եւ կարքեդոնացիք սեղան ի սեղոջ անդ կանդնեալ փիլիսոփանցն եղբարց և այլ ևս պաշտամունս ի քաղաքին օրինադրեցին:

ՍԱԼԼՈՒՍՏԻՈՍ· Յուգուրթ:

ԿԱՑՍԵՐՈՒԹԻՒՆ ՀՌՈՎՄԱՑ ԱՌ ԹԱՄԱՆԱԿՕՔ

ԳԱԼՍՏԵԱՆ ՏԵԱՌՆ

Յուլիոս Կեսար նուաճելովն զԳալլիացիս գործ գործեալ կարևոր հայրենեաց իւրոյ քան զայլ ամենայն աշխարհս՝ կալուածքիւնս հռովմայեցւոց. մինչև վասն այսր քաջութեան ձեռնհաս լինել նմա կանգնել ինքեան իշխանութիւն յաշխարհի իւրում: Զառաջինն հետամուտ եղև՝ ի չափ իշխանութեան Պոմպէի հասանել, և ձգնէր զկնի դերը՝ ի վերոյ անցանել զնովաւ:

Կարծեաց Կրասոս եթէ կարող իցէ և ինքն բազմադանձ հարստութեամբ իւրով բաժանորդ լինել փառաց հոյակապ արանցն, ըստ որում և յիշխանութեան հաւասար էր նոցա: Յայսմ մտաց խորհրդի խաղաց յանդուգնն՝ ի վերոյ Պարթևաց, ընդ որ զղջացաւ ինքն և հայրենիք իւր: Վասն թարեալ զնա Աւրշակունեաց, դառն կատականօք թշնամանեցին զամբարհաւածութիւն հռովմայեցւոց և զանյագ արծաթասիրութիւն զօրապետի նոցա:

Բայց այս նշաւակութիւն հռովմայեցւոց նկուն նուաճութեանն Կրասոսի՝ չեղև յետին յաղէտս նոցա: Զուգադատնձ իշխանութիւն նորա ընդ Պոմպէի և ընդ Կեսարոյ՝ բռնի ունէր զնոսա միաբանս. իբրև մեռաւ նա, խրատեաւցաւ ցանգն, և անագորոյն մարտիւ պատերազմաւ անգ՝ ի Փարսալիա՝ ի գլուխ հանին զթշնամութիւնն երկոքին նախանձորդք: Յայնժամ յաղթականն Կեսար հասաւ՝ ներ որպէս փայլակն յամենայն տեղիս, յԵգիպտոս, յԱսիա, ՝ի Մաւրիտանիա, ՝ի Սպանիա, և ամենայն ուրեք անպարտելի ցուցեալ՝ տէր յայտնէր Հռովմայ և բոլոր պետութեան: Իսկ Բրուտոս և Կասսիոս ՝ի վերոյ ամենայն ենախտեաց նորա՝ սպանին զնա որպէս զայր բռնաւոր, իբրու այն թէ յաղաւտութիւն հանիցեն զքաղաքակիցս իւրեանց:

Այլ անկանէր Հռովմ՝ ի ձեռս Մարկոսի Անտոնիոսի, Լեպիդոսի, և կրտսերոյն Կեսարու Հոկտաւիանոսի՝ որ թոռն էր քեռն Յուլիոսի Կեսարու և որդեգիր նորա: Բայց երեքին ևս յոյժ բռնութիւնք էին. և ձառ պատմութեան եռապետութեան նոցա և բռնանալոյն զողացուցանէ և ցարդ զմարգկան ընտութիւս յորժամ առնուցուն ընթեռնուլ: Այլ անհնարին բռնակալութիւն նոցա ոչ ունէր յերկարել. բաժանեն սոքա երեքեան զպետութիւնն. զիտալիա կալաւ Հոկտաւիանոս, որ և մերկացեալ վաղվաղակի զառաջին ժանտութիւն իւր՝ յայտ առնէր եթէ բռնաբար ձգեցաւ՝ ի նոյն յիշխանակցաց իւրոց: Կորեան ընդ Բրուտոսի և Կասսիոսի և որք ցայնժամ մնացեալ էին՝ ի կուսակիցս հատաբակատութեան: Անտոնիոս և Կեսար իբրև խորտակեցին զԼեպիդոս, յարեան՝ ի վերայ միմեանց, և հռովմէական պետութիւնն միահամուռ զինուորեցաւ ընդ ծով: Յաղթանակէ Կեսար յԱկտիական պատերազմին, ցերև և ցան կացուցեալ առ հասարակ զզօրս Եգիպտոսի և արևելից, զորս ածեալ էր ընդ իւր Անտոնիոս: Ամենայն բարեկամք նորա լքանեն զնովաւն. նա և սիրեցեալն իւր Կլէոպատրա, յորոյ՝ ի տարփանն զակատեալ էր: Բռնագատի և Հերովդէս հռովմայեցի, թէպէտ և յԱնտոնիոսէ ընկալեալ էր զամենայն, անձնատուր լինել յաղթականին. որով և հաստատ՝ ի թագաւորութեան Հրէաստանի՝ որ առ վաստութեան ծերոյն Հիւրկանեայ բարձեալ էր՝ ի սպառ՝ ի տանէ Ասմոնեանց: Ամենայն ինչ խնդարձի առաջի բախտին Կեսարու. Աղէքսանդրիա քանայ նմա զզրուսն իւր. Եգիպտոս կարգի ընդ դաւառս Հռովմայ, Կլէոպատրա անյուսացեալ՝ ի պահէզ զայն, գնայ զիւրումին զհետ Անտոնիոսի. տարածէ զձեռս իւր Հռովմ առ Կեսար, և կանգնի կայ նա միահեծան իշխան՝ ի վերայ ամենայն պետութեանն, և կարգան նմա անուն օդոստ և ինքնակալ: Նուաճէ ընդ ձեռամբ զվտարան Քեալ Կանտաբրեանս և զԱստուրեանս զկողմամբք Պիրենեան լերանց: Եթովպիա հայցէ՝ ի նմանէ զխաղաղութիւն. Պարթևք զարհուրեալք յետս առաքեն զզրօշն հան-

դերձ գերելովքն ի մարտին ընդ Կրաստոս. խնդրեն Հնդիկք զդաշնաւորութիւն նորա. ձայն զնուաց նորա լսելի լինի և ի Հռուսացիս և ոչ ապրին լերամբքն բարձամբք: Խոտարհի նմա Պաննոնիա, դողայ ի նմանէ Իլլիւմանիա, և օրէնս ի նմանէ ընդունի Վխուգէս: Յաղթողն ընդ ծով և ընդ ցամաք՝ փակէ զդրունս մեհենին Յանոսի: Տիեզերք ողջոյն կան խաղաղ ընդ իշխանութեամբ նորա, և գայ մոանէ Փրկիչն մեր յաշխարհ:

ՊՈՍԻԻՆ. Խօսք ի վեպս ազգաց:

ՀՌՈՎՄ ՄԱՏՆԵԱԼ Ի ՁԵՌՍ ԲԱՐԲԱՐՈՍԱՑ

Ամէ և յորժամ հասանէր ժամանակ խորհակման հնազոյ իշխանութեան Հռովմայեցւոց, և անկեղլի դասակնիքն հաւասար ամենեցունն վախճան դնէր և նմա, որ զուր պանծացաւ Թագաւորել յաւիտեան, դարձեալ կրօնիւքն տանուածպաշտութեան անկապուտ պահէաց Հռովմ մատնեալն խուժադուժ ազգաց՝ զնախկին փառան:

Ազգք որ յափշտակիցին զԹագաւորութիւն նորա, առ սակաւ սակաւ ընդելացան ընդ բարեպաշտութիւն քրիստոնէից, և օրինակաւ նոցա մերկացան զվայրագութիւն իւրեանց. զի և Թագաւորք նոցա իբրև յաջորդեցին յազգ իւրաքանչիւր զիշխանութիւն կայսերաց՝ առաւել քան զամենայն փառաց անուանն գեր ի վերոյ համարեցան պաշտպան կոչիլ եկեղեցւոյ:

Բայց պարտ և պատշաճ է զգաղանի դասատանն Աստուծոյ ի վերայ պետութեան Հռոմոյ և նորին իսկ Հռովմայ ցուցանել աստ, զոր յայտնեաց աստուածգնչէն Հոգին սքանչելացոյն Յովհաննու, և զոր սոյն սա այլ մեծարոյ, առաքեալ, աւետարանիչ և մարգարէ, բացատրեաց ի յայտնութեան գիրսն:

Հռովմ ի վաղուց հետէ յաճախութեամբ պաշտօն տանէր կուռ. վասն որոյ ծանր էր նմա նա և յաւուրս քրիստոսադաւան կայսերաց լքանել զնոսա: Մեծ իմն գրգիռ ծագեալոյն Թեաւրիկ զդիմով Հռոմուլոսի, զի նոցա ընծայեր զյաղթութիւնս նախնոյ պետութեանն:

Տաղտկացան կայսերքն ի սակս սակաւ հրեշտակութեանց նորա, զի խնդրէր ի նոցանէ զկանգնութիւն գրոշելոց, և սրբել զՀռովմ ի վայրկեան ունայնութեանց՝ նախատինս վարկանէր անուանն Հռոմոյ: Ոչ ինչ ազդեին նմա քարոզութիւնք աւետարանին և սիրելութիւն մարգարէութեանց, և տաւաղումն ի Բրիտաս բնաւ պետութեանն և նոցին իսկ կայսերաց, որք և ամենևին զՔրիստոսութեան զկոչին ունէին: Այնքան դժկամակեր աւագանին և բազմութիւն ժողովրդեանն Հռովմայ և ախտաւորքն ի բաց կալ ի մոլորութենոյ իւրեանց. մանաւանդ թէ անդադար զեկեղեցին Քրիստոսի ալարտել փութային, և զրպարտողք ըստ օրինակի հարց իւրեանց՝ ի նա հանէին զպատճառս ամենայն չարեացն որ անցին ընդ պետութիւնն. և եթէ ոչ էր կայսերաց զդէմ կալեալ նոցա, յօժարամիտք էին վերստին արծարծանել զհնոյր հալածանացն:

Ի չորրորդ դար եկեղեցւոյ, հարիւր ամաք զկնի Կոստանդիանոսի իբրև տակաւին այս իրք էին, յիշեաց Աստուած զբազմապատիկ ջանօքն վճիռս ծերակուտին ընդդէմ հաւատացելոց, և զժողովրդեան Հռովմայ՝ զծարաւելոց արեան քրիստոնէից զմեղկին դոչումն, որք հնչեցուցանէին զառ հաստարակ զամբիթեատրոնն մեծ, և մանաւանդ ի բարբարոսաց ձեռս զքաղքն արբեալ յարենէ վկայից ըստ մեծին Յովհաննու, ածեալ ի վերայ նորա զահագին պատուհասն զոր երբեմն ի վերոյ Բաբելոնի, զի և սա ինքն Բաբելոն կոչեցաւ: Նորս այս Բաբելոն համանման հնոյն պանծացեալ իբրև զնախինին ընդ յաղթութիւնս, շռայլեալ ի հեշտութիւնս, մեծութեամբքն պերճացեալ, պղծեալ գիւն պաշտամամբք և հալածող ժողովրդեանն Աստուծոյ, անկանէր տապալէր հանդերձ նմին կործանումն ահաւոր, զոր

և կանխաւ գուշակեաց աւետարանիչն սքանչելին Յովհան-
նէս: Ընդ աշխարհակալութեանցն զորս դիպն գրէր օգնա-
կանութեան՝ չկնաւ 'ի նմանէ և պարծանքն. յաւար մատ-
նեցաւ խաժադուժ ազգաց. երիցս և չորիցս կալան զնա,
կողոպտեցին, մերկացին, յապտակահարութիւն եդին, և տա-
սեր բարբարոսացն 'ի քրիստոնեայս միայն խնայեաց: Անդ
յաձխնացեալ՝ նշխարաց նախնւոյն Հռովմոյ 'ի վեր երևէր
այլ Հռոմ՝ ազգ քրիստոսագաւաս. և յորժամ հեղեղեր
յաշխարհն ազգն խժական՝ յայնժամ զկաստարեալն յաղ-
թութիւն 'ի գլուխ տարաւ Քրիստոս 'ի վերայ դիպն Հռով-
մայեցւոց, ոչ խորտակեալ միայն զնոսա, այլ և 'ի սպառ 'ի
մոռացօնս դարձուցեալ:

ՊՈՍԻԽ. Խօսք 'ի վեպս ազգայ:

ՁԱԿԱՏԱՄԱՐՏ ՌՈՓՈՍԱՑ

Չգիշերն՝ զոր հարկ էր անցուցանել դէմ յանդիման
թշնամեացն, իբրև հակող զօրավար, հսկայ լեառ ամենե-
ցուն 'ի քուն եմուտ, այլ ոչ այլ ուրեք առաւել խաղաղ
ննջեաց: Յառաջմէ անտի ցայգդյ աւուրն ահեղի, և յետ
առաջնոյ Ճակատուն՝ անխռով կայ, այնպէս 'ի բնակաւոր
իւրում պայմանին գտանի. և գիտեմք խոկ զի 'ի վաղիւ անդր
'ի ժամանակեալ ժամուն՝ զարթուցանել հարկ եղև 'ի խոր
քնոյ զերկրորդս զայս Ալէքսանդրոս: Տեսանէք սրպէս սա-
նայ 'ի յաղթութիւն կամ 'ի մահ: Իբրև ընդ կարգս ռազմի
Ճակատուն տարաւ զեռանդն իւրոյ հոգւոյն՝ անդէն վազա-
զակի, գոգ 'ի նմին ժամու, տեսաւ զի վաներ վկանդեր զա-
քակողմ Թևին Թշնամեաց, զօրացուցանէր զմերն զնախ-
տեալ, ժողովեր սպնդակազմ զգալիացն մերձ 'ի պարտու-
թիւն, փախստեայ առնէր զյաղթական սպանիացին, ար-

կանէր ահ ընդ ամենայն, և փայլակնացայտ աչօքն պակու-
ցանէր զնախաւուցեալն 'ի ձեռաց իւրոց:

Մնայր սոսկալի հետևակազօր սպանիական բանակին,
որոյ Թանձրախտուն սաստար գումարտակք, 'ի նմանու-
թիւն աշտարակաց, բայց աշտարակաց՝ որ գնային խրա-
մակարկատ առնել զնաոս իւրեանց, կային անսասան 'ի
միջի անդ ամենեցուն բեկեղցին, և հուր տեղային յամենայն
կողմանց: Երիցս գունդ գործեաց յաղթօղ պատանին խոր-
տակել զանհրկիւղ ռազմիկն, վանեցաւ երիցս 'ի քաջակո-
րով Կոմսէն Փոնթինեան, զոր կառնէին տեսանելին, և ա-
մենայն ակարութեամբքն Հանդերձ՝ յայտ իմն զգոն արա-
րեալ, զի ոգի պատերազմարձ՝ ակր է մարմնոյն յոր
ընչէ. հարկ է սակայն հուսկ ուրեմն տալ տեղի: Ի զուր ընդ
անսասան այրուձիոնէն իւրով նորով՝ ձեռն տպնտպալ զար-
շաւան իւր Պէգ՝ գալ անկանել 'ի վերայ զօրուն մերոյ պար-
տասելոյ. կանխեաց յառաջեալ զնովաւ իշխանն, գունդքն
փլուզեալք պաղատան գԹուրթիւն. բայց Սեպհէն Անկիւնի
քան զմարան ահագին լինելոց է յաղթութիւնն: Իբրև ա-
չալուրջ երեսօք խաղայր գնայր ընդունել զնոստուն որե-
ցոյն այնորիկ քաջի, սոքա միշտ 'ի խեթի զգուշութեան՝
կասկածեալ նոր իմն յեզակարծ յարձակումն, ահագին
իմն հրձգութեամբ զմերան 'ի մոլեգնութիւն գարձուցա-
նէն, և այլ ոչինչ տեսանէի՝ բայց նախձիրք կոտորածի. ա-
րեան Ճաղպաղիք սրարբեցուցանէն զզօրականն, մինչև մե-
ծի իշխանին չկանդրժեալ տեսանել զառիւծունն զայնա-
պիկ խողխողեալս իբրև ոչնարս վտառասրաս, ցածոյց զբոր-
բոքեալ սիրտն, և 'ի հեշտութիւն յաղթութեանն յաւել
և զներելոյ թողութեանն:

Չինչ հիացումն կալաւ յայնժամ զհինաւուրց զօրա-
կանն և զարիական սպայս նոցին, իբրև տեսին թէ չէք նո-
ցա փրկութիւն բայց միայն 'ի գիրկս յաղթողին, որպ ա-
կամէ հայելին յիշխանին պատանի՝ զորոյ զսերմ Ճախութիւնն
պանծացուցանէր յաղթանակ, և գեղ նորատեսիլ փայլէր
'ի նմա գԹուրթիւնն: Ապրեցուցանէր նա մտադիւր և ըզ-

կեանս քաջի կոմսին Փոխէնեհան. բայց գտաւ նա անկեալ ընդ հաղարաւորս վիրաւորաց, զորոց սպայ տակաւին ըզկոլուսան Սպանիա: Զգիտեր նա՝ թէ իշխանն որ վաճեաց զնորա զայնչափ հինաւուրց գումարտակսն 'ի կռուին Ռոքռոյ, զինացեալն սպառելոց էր 'ի գաշտն Լանոյ: Այսպէս առաջին յաղթութիւնն՝ այլոց բազմաց եղև առհաւատեաց: Կրկնեաց ծուխր Իշխանին, և անդ 'ի ձակատուն տեղւոջ մատոյց Աստուծոյն զօրութեանց զնուաճն զոր առաքէր նա առ նա. անդ ծնեցաւ Ռոքռոյին փրկութիւն, և ահագին սպառնալեաց թշնամւոյն՝ գարձ ամօթալից 'ի գլուխ նորին, հաստատութիւն վարչութեան խնամակալին, հանգիստ Գալլիոյ, և այսպիսի յաջող հմայիւք սկիզբն արքայութեանն՝ որում հասեալ էր լինել այսչափ հրաշալեբա: Գոհութեանցն սկզբնապար եղև բանակին, Գալլիա համօրէն զնին կցեցին. ամբառնային մինչև յերկինս զաւաջհաճաչակ փորձ հանդիսի Սեպտին Անկիլեին: Շատ իմն էր այս 'ի շքեղազարդել զայլ իմն կեանս քան զնորայն, իսկ նա՝ առաջին քայլ է այս ոտին ընթացից:

ՊՈՍԻԻՒ. Դաւթ. Իշխանին Գանտէի:

ԱՆՑՔ ԸՆԴ ՊԵՐՆԶԻՆԱ

Անդէն վաղվաղակի դիմեալք 'ի կամուրջն 'ի միւս, եկին խռնեցան անդ ամենուստ ամբոխ սպայից սուսերաց, ծանրաբեռն կառաց և անօթոց պատերազմի, և հոսեալք թափով ընդ զառ 'ի վայրն անհարթ և անհաւասար 'ի մէջ շիջաշէջ դիականց մարդկան՝ կարեմակոտոր արարին զնոսկելիս զըմբռնեալսն յանդգնութենէ, զինի ապա ընդ միմեանս բաղևեալ՝ բազումք այնոքիկ էին որք սատակապէս բռնութեամբ յերկիր տապալեալք՝ սատակամահ սպանին և զորս

շուրջ զնոքօք: Յայնժամ այր այր պակուցեալ, բովանդակ դասու դառնեալ ընթանան առ աղմուկն խռովայոյզ, այլ յօրղեալք և ամբոխեալք՝ թաւալագլոր խաղան և ըստ նոցանէ 'ի չարաբաստիկ անդադար անկելոցն ջարեալք խորտակին:

Այսպէս խառնաղանջ ամբոխ չուառականացգ զմիմեամբք թաւալչէին, դառնակսկիծ և մղձկին կանչիւք զօգս կոծելով: Յայն խառնուրդ ահագին ամենայն ոք կոխան և հեզձամղձուկ՝ անհնարինս ձգնէր ընդ ոտիւք ընկերին, առաջնայն և երկդամբք պինդ կալեալ զնոսին, որք անողորմք՝ իբրև զօսոխս յետս մղէին զամենեսեան: Ի զուր հարսուանք և մաքք ձայն առեալ գորովալիր կոչէին զամուսնիս իւրեանց և զորդիս, զորս վայրկեան մի միայն առ տարաբ յանջատումն անգարձ, դիրկս արկին առ նոսա, խնդրեցին տեղի հուպ մատչել առ նոսին, այլ ոչ ոք խնայամուսա եղև խորհրդոյ մատոյ իւրեանց. և այնպէս գանալիցք և վայրապատիկք՝ անկան ընդ խաժամուխս հրոսակաւ գրոհին: Ցահեղաձայն դղրդիւն բռնաշունչ մրրկին, 'ի բոմբիւն անօթոց պատերազմականաց, 'ի շչիւն և 'ի շառաչիւն փոթորկեղ օդոյն և գնգակաց, և 'ի ձայնիւն ոմանց, 'ի մեծագոչ կառաչ հեծելազանաց և ահագնալուր հայհոյանաց, չլինէին լսելի յոմանէն խառնամբոխ խուժանին պատասանք կորուսելոցն, որոց նա ևեթ էր պատճառ:

Խարեբաղդիկքն 'ի նոցանէ հասին կալան զկամուրջն, այլ ոտնփոխ լեալք 'ի վերայ դէզ դէզ վիրաւորաց՝ կանանց և մանկանց դիմեաւալ կիսամահ յերկիր կործանելոց, դէպ ևս առաջնոյր հարկանելով զնոսա 'ի ձիգն յետին, ժամանեցին ուր ուրեմն 'ի կիրճն անձուկ, և փրկեալս համարէին զանձինս, բայց խոչ ընդ ոտն և խափան լինէր ամենայնի՝ առ մէն մի վայրկեան՝ տատասան անկումն երիվարաց, տախտակ լինչ անձայն կամ կոշկոճեալ:

Նա և 'ի խեղս կամրջին՝ զափամբքն 'ի հանդիպոյն՝ էր եղեալ մօրուս, ուրանօր ընկղմեալք կային խորասոյզ կառք և յօղով ձիան, առաւել քան զոյժ յատպղումն և

խափան առնելով անցկին ընթացից: Անգ յայնժամ 'ի յոս-
սակորոյս գումարտակին՝ խոնելոց 'ի վերայ միայնոյ փայտին
փրկուելեան՝ շարժեցաւ պայքարուելի գժոխմբերը, յորում
անզօրքն 'ի հզօրագունից, կամ որոց ոչ անքոյթ էր ոտիցն
կայեան, գահավէժ ցնդմամբ Թօթափեցան 'ի գետ: Իսկ
այլք՝ առանց ինչ ընդ յետս հայելոց, անկակից փութով
զգուշացեալք անձանց, դիմագրաւ մոլեգին ընթացեալին
'ի կէս նպատակին, ոչ ինչ միտ եդեալ յուսահատութ և
բարկացեալ անիծից համհարզից իւրեանց և սալարաց կո-
րուսելոց:

Իսկ անդուստ այլոց քանի վէհանձն և անձնանուէր
սիրոյն խանդավառեալք. և առ իմ[2] կարճատի տեղիս և ժա-
մանակ ձառել ընդունել: Անգ էր տեսանել զօրականս և
սպայս ինքնին լծեալս կառաց՝ Թափել հանել 'ի հետաստան
զընկերս իւրեանց, զվիրաւորս կամ զնօթոցեալս: Եւ ևս
մեկուսի քաջ 'ի բաց յամբոխէն՝ զօրականք ոմանք անդր-
դոսաք ամենեին զէտ առեալ կային 'ի պահ 'ի վերայ շըն-
չաստաւ մարմնոյն սպայից՝ յանձն եղելոց 'ի խնամս իւ-
րեանց. և համայն Թէպէտ սրտեռանդն Թախանձեալք հո-
գալ եւեթ զանձանց փրկուելեան՝ կամակոր ընտրեին զդե-
րուելիւն կամ զմահ՝ քան զլծուել լքանել զառաջնորդս
իւրեանց:

Ի 28 և 'ի 29 (1) դեկտեմբերի պաշտօն յաւելան բովանդակ
աղէաքս այսոքիկ: Ոչինչ ընդհատ և 'ի մեծագեաց խաւա-
րին՝ նախձիրս արեան գործեցին Թնդանօթք Ռուսաց, զի
սեաւթոյր ամբոխ սրանց, ձիոց և կառաց 'ի վերայ ձիւնա-
պատ դեռոյն, և գոչիւն աղաղակին դէպ եաուն ամբաձիք
զօրաց նոցա ուղիղ գՀարուածան կշռեալ:

Լցեալ էր ջուխ ազեաւոյս. բազմուելիւն կառաց, Թնդա-
նօթք երկք, բիւրք բիւրուց սրանց, կանանց և մանկանց
աղայոց լքեալք Թոզան 'ի գետափին Թշնամեաց. և էր տե-
սանել զինոսա ընդ դասուց բեկեալոց Թափառեալս զգեղբրք

(1) Նոյեմբեր 1812:

գետոյն, յորոց և ոմանք անդր իսկ ամայնի զանձինս առ 'ի
լեզու. իսկ այլք՝ եդեալ զդլուխս իւրեանց 'ի հլուռս՝ ոտն ա-
ծեալ էլեն 'ի վերայ հատորոց սառանց, և այնպէս յուզէտ
յուկամ վարեալք երթային. մինչ այս մինչ այն, և ահա
ոմանք արկին զանձինս գլխիվայր ընդ հրաթաւալ բոցովք
կամրջին՝ որ կործան անկաւ 'ի վերայ նոցա. ցրտահարք
միանգամայն և տօթահեղք կորեան երկաւի յետս ընդդէմ
տանջանաց. որոց անդէն երևեցան դիահունք իւրեանց կու-
տակեալք՝ ընդ մոլեթս բաղխեալով հանդոյն հատուածոց սա-
ւառն. և տպրեալքն կային մնային Ռուսաց:

Սկիհիր. Պատմ. գաղղ. մնծի բանակին 1812:

ՄԵՆԱՄԱՐՏ ՈՐԱՏԵՍՑ ԵՒ ԿՈՒՐԱՏԵՍՑ

Կաեալ զուխտ դաշին՝ եռուորեակքն այնոքիկ ըստ պայ-
մանադրութեանն ելին 'ի ձեռս ատնուն: Ի խրախուսել իւ-
րեանցայնոցն զերկաքանչիւր և ևս կողմանս, Թէ հայրենի ա-
տուածքն, հայրենիք նոցա և ծնողք, քաղաքացիք ևմ առ-
անձին, և զօրականն 'ի բանակի՝ յայնժամ 'ի զէնս նոցա ակն-
արկեալ հային և 'ի ձեռս, գաղտնացեալք 'ի քնէ, և խրա-
խուսեալք առ ձայն քաջալերացն, յառաջ խաղան 'ի մէջ
ճակատուցն երկոցունց: Ասսի և անսի բանակեալ էին եր-
կաքանչիւր զօրք, զերծք յառաջնկայ վտանգէն, այլ ոչ 'ի
հոտոց. իբր զի զինեալուելենէ էր վէճն, յայսչափ սա-
կաւուց քաջալերեան և 'ի բաղդի հաստատեալ: Վասն որոյ
քաջալանիք միանգամայն և տարտամք՝ յանախորժ յայն
տեսարան դէտսին կալեալ յաւին:

Նշան արձակի, և ահա ոմերիմ զինուք՝ զօրէն բանա-
կաց երեքեին պատանիքն՝ զմեծամեծ զօրաց յանձին բերեալ
զերծոս՝ բաղխին ընդ միմեանս: Ո՛չ ասցա և ոչ նոցա յան-

դիման կայր աչաց՝ վտանգ իւրեանց, այլ՝ հատարակաց տէ-
րութիւն կամ ծառայութիւն, և թէ այն վիճակ բաղդի լի-
նելոց և յապայս հայրենեացն, զոր ինչ պատրաստեցեն
ինքեանք: Այլ ինչ յառաջին անդ բանման՝ շառաչիւն ար-
ձակեցին զինք, և շողացին սուսերք փայլակնացայտք, սար-
սափ անհնարին կալաւ զտեսողսն, յուսոյն և ոչ առ մի
կողմ Թեքելով՝ ընդարմացեալ կայր և բարբառ, և շունչ
բերանոյ:

Ի դիմի հարեալք ապա, յորժամ ոչ շարժուն միայն
մարմնոց, և երիւսաւեք զարկուածք սուսերաց և զինուց,
այլ և վէրք անդամ և արիւն տեսարան էին, երկաք ՚ի
հառմայեցւոց միմեանց զինի՝ խոցեալք զերեսին ևս ալ-
բայեցիս՝ անկան դիտատաստ: Յանկուծ սոցա իբրև ձայն
ուրախութեան եբարձ զօրն ալբայեցւոց, լեգէոնք հռով-
մայեցւոց յուսակտուր էին ապաքէն, բայց ոչ զերծք ՚ի
տագնապէ, ոչնստաւ անընչայեալք յաղագս միոյն, զորով
շուրջ կային երկքին Կուրատիոսք: Ըստ դիպաց ինն ողջան-
դամ մնաց սա. ամենեցուն զդէմ ունել միայնակ ոչ բաւէր,
այլ միոյ միոյ առանձին ընդդէմ խիզախէր: Վասն որոյ առ
՚ի զատանել զպատերազմ նոցա, փախուստ առնու, եդեալ
՚ի մաի՝ թէ հեռամուտ լինի իւրաքանչիւր ՚ի նոցանէ, որ-
պէս զնարդ ներքուստ մարմին վիրաւոր:

Փոքր մի հեռացեալ էր արդէն փախստեամբ ՚ի տեղւոջ-
ջէն՝ յորում եղև պատերազմ, յորժամ ՚ի Թիկունս հա-
յեցեալ տեսանէ հարուստ խորոցաւ ՚ի միմեանց՝ հեռա-
մուտս, և զվին ոչ յոյժ հեռի յիւրմէ, դառնայ ընդ կրունկն
սաստկութեամբ մեծաւ ՚ի վերայ նորա: Եւ յապաղակել
ալբայեցի զօրուն առ կուրատիոսեանս՝ ձեռն տալ եղբօր
իւրեանց, Որատիոս սաստկեալ այնուհետև զքինամին,
դիմէր յաղթական յերկրորդ պատերազմ: Յայնժամ հռով-
մայեցիք ապաղակաւ՝ որպիսի սովոր է լինել յանակնկալ
նպաստաւորաց, օգնեն զինուորի իւրեանց, և սա ածա-
պարէ վճարել զգործ պատերազմին: Վասն որոյ յառաջ
քան զհասանել երրորդին՝ որ չէր իսկ բացագոյն, եհար և
զերկրորդ Կուրատիոս:

Արդ՝ հաւասարեալ վիճակի մարտին, մնացին երկուս-
ակք մին ի, բայց ոչ յուսով և ոչ զօրութեամբ հանգէտ:
Զմին՝ մարմին յերկաթոյ անվթար, և կրկնակ յաղթու-
թիւն խրոխտ գործեր առ երրորդ մրցումն. իսկ միւսն ընդ
քարշ ածեալ զառ ՚ի վիրաց և զառ ՚ի յընթացից տաժա-
նաբեկ մարմին, և յաղթահարեալ իսկ՝ որ յառաջ քան
զինքն եղբարց կատորածիւ, մտաւքն ընդ առաջ յաղթական
Թշնամւոյն: Եւ չէզև իսկ այն պատերազմ: Խայտացեալ
հռովմայեցւոյն՝ ասէ. Զերկոսին պատարագեցի եղբարցս
ոգւոց. զերրորդն պատարագեցից պատճառ պատերազ-
միս այսօրիկ, զի հռովմայեցին տիրեսցէ ալբայեցւոյն:
Մինչ զսուսերն վերամբարձ ՚ի փող նորա, որոյ ձեռք գժուա-
րաւ ունէին զգէնան, և առնու զկողոպուտ զանկիւնն: Հռով-
մայեցիք հաչակաւ և օրհնութեամբ ընդունին զՈրատիոս
այնչափ մեծ ևս ուրախութեամբ, որչափ երկիւղալի էին
իրքն: Պառնան ապա թաղել իւրաքանչիւր զիւրան,
ոչ հաւասար սրտիւ. իբր զի սոցայս ածեաց ինքնահաճու-
թիւն. և նոքա ընդ՝ տէրութեամբ եղեն այլոց:

Լիվիոս:

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԵՐՄՈՊԻԼՆԱՑ

Սկզբ եղև Լևոնիդայ ՚ի Նմին գիշերի խորհուրդն Պարսից
՚ի դասալքք փախստեից նոցա, և ընդ այդն գուժկանք ՚ի
պահապանաց լերինն հասին առ նա կատարման խորհր-
դոյն: Ի լուր ահագին համբաւոյն՝ ժողովեալ ՚ի միասին զօ-
րապետք, կիսոցն լաւագոյն համարեալ տեղի առ ՚ի Թեր-
մոպիլէայ, իսկ այլոց կալ մնալ անդէն, Լևոնիդաս ապաչեաց
զնոսա պատեհագոյն ժամանակի պահել զանձինս. այլ
ինձ, ասէ, և խնդս ոչ է օրէն Թողուլ զյանձնեալ մեզ
պահն: Բայց Թեսպացիք հաւին յանձն մնալոյ ՚ի սպար-

տացուց. և Թեբացիք ջրեբարիւր այր՝ կէսք կամակար և կէսք ակամայ, կացին ընդ նոսա. իսկ այլոց պարապ դտեալ, խոյս եառուն ի պահակէն:

Յայնմ վայրի Լևոնիդաս մնաբերեալ ի յանդգնագոյն արուեստիւն, խօսեցաւ առ իւրսն և ասէ. Ոչ ևս աստ է մեզ տեղի մարտնչելոյ, ոչ զինուորակիցք իմ, այլ ի խորան անդր Փաերքսեայ պարտ է մեզ դիմել. կամ խողխողեացուք զինս, և կամ անդէն ի բանակին նորա կորնչուք: Խրախոյս ցնծութեան բարձին զօրքն առ հասարակ. և ետ նոցա Լևոնիդաս սակաւ ինչ առնուլ կերակուր, և ասէ. Ընդ սան դարապետին Պղատոնի չէտ այսորիկ ձաշ մեզ ընդ հուսկ պատրաստի: Եւ այս ամենայն բանք նորա ասպատորագոյնք ի սիրտ զօրականին ազդեին: Եւ մինչ կազմէրն յարձակել ի Թշնամիս, յուզեցան գութք նորա ի վերայ երկուց ընպարտացուց՝ ընդ որս բարեկամութեամբ և արեան մերձաւորութեամբ կցորդէր. և ետ միւսին ի նոցանէ գիր, և միւսումն պատուէր գաղտ առ աւագանին սպարապացուց: Նոքա եառուն պատասխանի. Ոչ ի հրեշտակութիւն կամք ասա, այլ ի պատերազմել. և վազվազակի անցեալ կացին ի սահմանեալ կայս իւրեանց:

Եւ ի մէջ գիշերի մեկնեալք ի պահակէն Լևոնիդայ իւրովքն, և արագ ընթացեալ ընդ դաշտն, զյառաջապահ գունդս տապատս արկեալ, հասանեն մինչև ի խորան անդր Փաերքսեայ. այլ նորա կանխեալ փախուցեալ էր. և դիմեն ի մերձակայ խորանն, սփռին ընդ բանակին, և չապին ամբեակ Թշնամեաց: Արշաւիրք առաջի երեսաց նոցա գնային, և ի գնալն յաճախէին պակուցանողական նշանք: Շշուկ խառնաձայն և ամբոխ ազաղակի գուժէին ըզկատարած զօրացն Իգարնեայ, և զմտալուտ երկիւղ կատարածի ամենայն բանակին ի համագումար զօրացն Ելլադայ: Աբիագոյնք ի պարսից ոչ ևս զձայն զօրավարացն լուեալ, ոչ գիտէին յո գիմել, զո հարկանել, և խառն ի խուռն յարձակմամբ զիւրեարս կոտորէին: Ա՛լ ոչ ինչ արփիաւիկիզն Ճառագայթք զյաղթական զօրականին

ջնկան փոքրիկ ածին ի տեսիլ, գունդ գործեցին վաղվաղակի, և շուրջանակի ի վերայ յարձակեցան յոնական գնդին: Անդ Լևոնիդաս ի թանձրատարափ նետից անհաւատալոտ, և ի վերայ գիական նորա մնեցաւ մարտ ահագին՝ Ցունաց ընդ գոռ պատերազմողս պարսկախռնբ բանակին մարանչելով, առ ի չուալ նոցա զիւառս աւարին: Անդ երկոքին եղբարք Փաերքսեայ, և ամբոխ բազում յոյժ ի Պարսից, անդ և սպարապացիք բազումք անկան: Բայց Թեպէտ և Ցոյնք նուաղեալք և պարտաւեալք՝ բարձին զզօրավար իւրեանց, և չորիցս ի նահանջելն իւրեանց վանեցին զԹշնամիս. և հասեալք ի պահակն, և անդր ևս քան զպատնէշն ընկրկեալք, երթեալ զկայ աւուն ի բլրակին մերձ Անթեղա: Եւ վայրիկ մի ևս անդ ժուժկալեցին, զիմամարտեալք ընդդէմ հեռամոլոց զօրացն, և զորս Իգարնէս յայնմ կուսէ պահակին ածէրն ի վերայ նոցա:

Ներեցէք ասասանօր, ոդիք քաջազունք, սիարտութեան բանիցս. ի վերայ բլուրն՝ ուր զվերջին հեծութիւնդ արձակեցիք, անդ արժանաւոր ևս կարացի մատուցանել ձեզ սպաս, փարեալ զվիրամատ ձերով, և ոտոզեալ արտասուօք զվայրս ներկեալս յարենիդ ձերմէ: Ա՛լ ճարտարութիւն իսկ բանից զինչ ի չքնաղ և ի գերաշնարհիկ զոհդ ձեր յաւելուլ կարիցէ: Պարսկայինն անկեալ սեռութիւն՝ ընդ որում ժուժկալեցէք ի կռիւ, այլ յիշատակ ձեր կացցէ. և օրինակ ձեր մինչև ի վախճան յաւիտեանց շարժեսցէ զսիրտս հայրենասէրս ի խոհուն և ի հիացումն:

Թեբացւոց ոմանց նախ քան զվախճան մարտին անձնատուր սանն լեալ ի պարսիկս: Թեսպացիք հաղորդք եղեն քաջութեան և բաղդին սպարապացւոց. այլ փառք սոցա մեծացուցին զվեսպացւոցն: Ա՛յսմ հասարակաց կարծեաց և այն համարեսցի պատճառք, զի զնորհուրդ փոխանակելոյ զանձինս ի վերայ հայրենեաց ի Թերմոպիլէ սպարապացիք երկնեցին ի մտի, հասատատեցան ի նմին, և կատարեցին զայն, ոչ ի չոյզ ինչ եռանդեան՝ այլ պարապով և անյողդողդ արիութեամբ. իսկ Թեսպացիք ի նախանձ նահ-


նուէիեան վառեալ, անդէն առ հասել յերանդն քաջուէիեան և առաքինուէիեան արիացան: Հարկ լեալ նոցա գերազանցել քան զայլս ի մարդկանէ, ուր սպարտացիք քան զանձինս գտան զեր ի վերոյ:

Ընդ կորուստ քաջամարտիկ պատերազմողացն Լակեդեմոն պանծացաւ յոյժ. և ամենայն որ ինչ ի նոսա պատկանեալ էրք՝ ցանկալի եղեն: Մինչդեռ էին նոքա ի Թերմոպիլէ, ունն ի տրաքինացւոց առ ի տալ նոցա զբաժամբոխ պարակախուռմբ բանակին զահաւոր կերպարան՝ ասէր ծածկել նոցա նեռաձգուէեամբն և տառեբացուցանել զրերեպին: Իսկ Դենեկէս սպարտացի պատասխանի տուեալ ասէ. Եւ զինչ քան զայդ լաւագոյն կայցէ, զի ի հովանւոջ լինցի մեզ մարանչել: Եւ այլ ունն ի սպարտացւոց, առաքեալ ի Լեռնիգայ ի Լակեդեմոն, արդելաւ յԱլպենոս վանն աշացն կալոյ ի տեսուէենէ: Ապր եղև նմա զի Ջոկատն Իգաուենեայ իջանէր ի լեռնէն մտանել ի պահակն, և զէն առեալ՝ հրամայեաց տարիք իբրում առաջնորդել իւր առ Թշնամին. և խառն ի խուռն յարձակեալ ի նոսա, ընկալաւ զվախձան՝ որոյմ մեռցին: Եւ երկոքեան ոմանք հրամանաւ զօրավարին ի բացեայ գտեալ ի մարտէն, ի գառնալն իւրեանց եղեն կատածելիք՝ իբր վառք և ապաժամանիք լեալ: Եւ առ յոյժ նախատանացն՝ մին չոգաւ զիւրումին, իսկ միւսն՝ ոչ կարաց այլազգ ընդել ընախատինն, բայց յիւս առաւս միոյ ի պղատեան Ճակատամարտին տալով զկեանս ի վերայ հայրենեացն:

Անձնանուէր հայրենասիրուէեանն Լեռնիգայ և զինուորակցաց նորա արգասիք առաւել եղեն յոյժ քան զամենայն պայծառ յաղթուէեանց. զի ուսոյց նա Յունաց զդաւանեալ ի նոսա զօրուէիւնն, և Պարսից ի պատրուակեալ ի նոսա ակարուէիւնն: Զարհուրեցաւ Թագաւորն Պարսից, զի այնքան նուազունք յաշխարհազօր բազմուէեան մարդկանն էին ընդ իւր զինուորք. և զարհուրեցաւ զարձեալ, զի այնքան ախոյեանս կրէր Ելլադա ի ծոցի իւրում անվեհեր որպէս զվեհապետին, և այլ ևս ութ հազար

սպարտացիս հանդերձ այնոցիկ՝ որ անկան ի Ճակատամարտին: Դարձեալ և հիացումն, որով սոքա լցին զԵլլադա, փութեցաւ ընդ հուսպ ի տենչալի նախանձ նմանուէեան նոցին: Յանկուէեւն փառաց, սէր հայրենեաց, և ամենայն առաքինուէիւնք գեր ի վեր ամբարձան, մեծանձնուէեան գերասխճանեալ յանհաս բարձրուէիւն: Ժամանակ էր անդ քաջայաղթ արուէեանց, և ոչ ևս ածելոյ չղթայս ի կապանս ազգի՝ որ այնպիսի ազնուական մտածուէեամբքն խրախուսեր:

ՊԱՐԹԵԼԻՄԻ. Ղեւոնդեան Ա. Ինարեան:



ՄԱՀ ԵՊԱՄԻՆՈՆԴԱՅ

Եւ Ճակատեցան ընդ հուսպ բանակքն երկոքեան առ միմեանս մերձ ի Մանտինէա քաղաք: Էին զօրք սպարտացւոց հանդերձ նիզակակցօքն, աւելի քան զերկուս բիւրս հետևակաց. և հեծեալք իբր երկու հազար: Իսկ Թեբացւոցն երեք բիւրք հետևակաց, և հեծեալք իբր երեք հազար:

Պայծառագոյն քան ամենայն ուրեք անդանօր ցուցաւ հանճար Եպամինոնդայ. նովին կարգաւ Ճակատու, որով ի Լևկտրա կանգնեաց զյաղթուէիւն, Ճակատեցոյց զզօրսն: Մի ի թևոց նորա սիւնադէպ յառաջ խաղացեալ՝ անկաւ ի վերայ սպարտական փալանգին, զոր ոչ արգելօք կարէր նա բեկանել, եթէ ոչ Եպամինոնդ հասանէր նմա ի թիկունս, և օրինակաւն իւրով և ընտրելով գինգաւն զօրացուցանէր զնա: Յերեսաց նորա զարհուրեալ սատանեցան Թշնամիք, և գարձան ի փախուստ: Զհետ եղև նոցա Եպամինոնդ, և ոչ ևս կարացեալ ի չափու ունել զարիուէիւն, և գունդ մի սպարտացւոց շուրջ պատեալ զնովաւ, տարափ նետից տեղային զնովաւ: Նա ընդ երիար պատսպարեալ զանձն ի մահուա-

նէ, և զամբոխ մարտակաց Թաւալգլոր արկեալ 'ի փոշւոջ, անկաւ ապա և ինքն տիգախոց, և եկաց երկաթեղն մնեալ 'ի կուրծս նորա 'ի վերուն: Ոչ ինչ նուազ գործեցան զինուորք նախձիրք. քանզի մարտակիցք նորա յաւելեալ 'ի ձիսն, և բուռն դիմամարտեալ առ 'ի Թափել զնա 'ի ձեռաց Թշնամեաց, ժառանգեցին զախտը սփոփուն ածելոյ զնա 'ի խոբան իւր:

Հանդոյն ինն և 'ի միւսում Թևի անդ յաղողութիւնք խառն ընդ ձախողութիւնս գործեցան: Բայց խոհական կարգաւորութեամբքն Եպամինոնդայ ոչ կարացին աթենացիք հասանել յօգնութիւն սպարտացւոց. քանզի այրուձին նոցա յարձակեցաւ 'ի վերայ հեծելազնդին Թեբացւոց. և հարուածեալ 'ի նմանէ, և յետս ընկրկեալ, կազմեցաւ անդրէն, և եհար զնգակաւ մի Թեբացւոց՝ որ 'ի մերձակայ բլուրս զկայ առեալ էր: Իսկ հետևակագունդն նոցա դեռ ևս 'ի փախուստ դառնայր, եթէ ոչ էլէացիք հասանէին յօգնութիւն:

Խոցումն Եպամինոնդայ արդէզկոտորածն, և զմոլեգնութիւն զօրականին կասեցոյց: Ձակատքն երկքեան առ հասարակ պահուցեալք, կային ձեռնթափ. և փողք ասի և անալի հնչեցին զնահանջ, և նշան յաղթութեան 'ի տեղւոջ ձակատուն կոզմանքն երկաքանչիւր կանգնեցին:

Բայց Եպամինոնդայ դեռ չունչն 'ի նմա կայր. բարեկամք նորա և սպայք շուրջ զմահճաքն կացեալ՝ հեղուին զարտօսր, և ընդ բանակն ամենայն լսելի լինէին հեծութիւնք ողբոց և յուսահատութեան: Վիրաբոյժք հաուն զվէրս, զի ընդ կորզել զերկաթեղն 'ի վիրացն՝ հարկ էր նմա մեռանել. այլ նա ընդ այն հոգայր, զի մի դուրջ ասպար իւր անկեալ լցէ 'ի ձեռս Թշնամեաց. և իբրև ցուցին նմա զայն, առեալ համբուրեաց զդործի փառացն իւրոց: Բայց ասկաւրն 'ի տագնապալ կայր զերծից մարտին. և իբրև զայն ևս գիտաց՝ եթէ յաղթեցին Թեբացիք, ասէ. Կեցի շատ և արդ գոհ եմ: Եւ ապա հրամայեաց կոչել առ ինքն զՏայիփանա և զՅոլիդաս զերիոսին զօրագլուխս, զորս բաւական համարէը փոխանակ իւր. և իբրև գիտաց՝ զի անկեալ էին 'ի մարտին, ասէ. Ասացէք ապա յԹեբացիս՝ խօսել 'ի խաղաղութիւն: Եւ պատուէր ետ խլել զերկաթեղն 'ի վիրացն. յայնժամ մի 'ի բարեկամաց նորա գոչեաց առ վշտին. Մեռանիս դու, Եպամինոնդ, այլ եթէ դեռ ոչ անորդի մեռանէիր: Եւ նա ասէ. Զյաղթութիւն Լևկտրայ և զմանուկ նեայ Թողում որդիս անմահս: Եւ զայս ասացեալ, էհան ղոգի:

ՊԱՐԹԵԼՈՄԻ. Ռոիլոտուրիւն Ալեքսանեան:

ՄԱՀ ԿԻՆԵՐՈՎՆԻ

Յակ 'ի նմին պահու գային հասանէին 'ի վայրն գահիճք Կիկերոնին, Երենիոս հարիւրապետ, և Պոպիլիոս Հազարապետ (այն՝ որ երբեմն 'ի հայրապանութեան գատաստանէն ապրեցաւ 'ի ձեռն Կիկերոնի), և ընդ նոսա պաշտօնեայք: Տեսեալ փակ զդուռն, խորտակեցին. իբրև ոչ գտին զԿիկերոնէ, և որ 'ի ներքս կային՝ վկայեին ևս ոչ գիտել ուր իցէ, պատուէն՝ եթէ յայնժամ պատանեակ ոմն Փիլոլոգոս անուն՝ գատախարակեալն 'ի Կիկերոնէ յիմաստս և 'ի վարժս ազատականս և էր իակ նա ազատագրեալն եղբօր իւրոյմ Կուինտոսի, գուշակ լինէր հազարապետին վան շալակին՝ զոր բարձեալ տանէին 'ի ծով ընդ շաւիղս անտառախիտս և հովանաւորս: Ապա հազարապետն առեալ ընդ իւր արս սակաւս, շրջան առեալ ընթացաւ յելս Ճանապարհացն. իբրև Երենիոս ատամնակ ձեռով յարուցեալ հետևեցաւ ընդ նոյն շաւիղ, իրագգած Կիկերոնէի և զեալ՝ հրաման տայր ծառայիցն անդէն 'ի վայր զդարգիճն հանգուցանել և ինքն ձախոյ ձեռամբն առեալ զծնօտն՝ որպէս և սովորութիւն իւրեանց էր՝ այնպէս անբիծ ակընկատոյց էր 'ի մարդախոշտան՝ դարշ և խռովացեալ հերքէն՝

և 'ի վերայ անոի երկնայեալ դիմաքն. որպէս զի և բազումք անդամօր քօլաձիպ եղեն՝ մի տեսանել զնա 'ի խողխողել զնա Երենիոսի: Եւ խոզխոզեցաւ նա անդ՝ այնպէս 'ի շալակէն 'ի դուրս կարկառեալ ձգեալ զպարանոցն, ա-մաց ինքն զոլով վաթսուն և չորից:

Բայց Երենիոս 'ի հրամանէն Աստուածոսի կարեաց զդէլ-լոբնորա և զձեռան՝ որովք արձանագրեաց նա զՓիլիպպեանն. քանզի և ինքնին Կիկերոնիս Փիլիպպեանս մակագրեաց զձառան իւր ընդդէմ Անտոնիոսի. և կոչին ևս Փիլիպպեանք այն մատեանք մինչև ցայսօր ժամանակի: Իսկ 'ի ժամուն՝ յորում բերին 'ի Հռոմ զՀատածս մարմնոյն Կիկերոնիսի, կայր Աստուածոս յատենի Ժողովոյն. իբրև լուաւ զկնան և ետես ևս ինքնին՝ 'ի ձայն բարձր ազազակեր. Արդ ահաւասիկ վախճան է տարագրութեանցն. և հրամայեր զդէլ-լոբնին և զձեռան դնել յատենին 'ի վերայ բեմին. տեսիլ քաջինելի Հռոմայեցւոցն, որք անդ ոչ զկնիկերոնիսին հաճարեցան տեսանել զդիակ, քան թէ զԱնտոնիոսին զպատկեր հոգւոյն:

ՊԼՈՒՏԱՐԿՈՍ. Ջուզակ[illegible]:

ՄԱՀ ԿՈՒՍՏԱՒ ԱՏՈԼՓԻ ԱՐՔԱՅԻՆ ՇՈՒԵՏԱՑ
(1632)

Յայնմ պահու աղ Թէն բանակին՝ որում Թագաւորն ինքնին առաջնորդէր, անկանէր 'ի վերայ ձախոյ Թէի Թըշնամեացն: Յառաջին Թափոյ անոի բանանան փինչանդացի զքաջհաւար հեծելազնդին՝ հարեալ ընկերիկեր Թէեւազին հեծելազունդն լեհաց և խառնաթիւ, որք ձախառեալ էին յայնմ Թէի, և խուճապ փախստի նոցա պակուցեալ և զայլս 'ի հեծելազօրուն՝ չիսթեր զկարգս նոցա: Ա՛յլ 'ի նմին պահու ապդ լիներ առ Թագաւորն, եթէ հեռեւակազօր նո-

քա 'ի փախուստ դառնայր յայնկոյս փոսոյն, և ձախ Թէն ևս կայր 'ի մեծի վտանգի յերեսաց ռաքաձգուԹեանց Թըշնամեացն որք առ հոդմաղացան էին, և փոքր միւս ևս դառնայր 'ի փախուստ: Անդէն աչալուրջ մնօք պատուէր տայր Հօրն զօրավարի հետամուտ լինել փախստէից ձախակողմեան Թևի Թշնամւոյն. և ինքն առեալ ընդ իւր զգունդն Սահնօքքեան՝ փուԹայր յօդնուԹիւն իւրոյ ահեակ Թևոյն: Օգտակարիկ երևեալ վազեալ անցանէր իբրև զնետ Թռուցեալ ընդ խրամն փոսոյն, այլ ոչ նոյնպէս յաջողէր զօրացն ամենեցուն որ զկնին գային՝ անցանել փուԹով ընդ խրամն, բայց 'ի սակաւուց ոմանց, ընդ որս էր Փրանց Ալբերտ դուքս Լաւնպուրկի Սաքսոնիոյ, որք անմեկին կային 'ի նմանէ: Դիմեր դէպ ուղիղ անդր ուր տագնապ մեծ 'ի վերայ կայր հետևակազօրուն իւրոյ. և մինչդեռ զաչս իւր շուրջ ածեալ դիտէր տեսանել զակարացեալ ինչ զկողմն Թշնամւոյն առ ուղղելոյ անդր զՀարուած իւր, առ կարճատեսուԹեան աչացն երԹեալ մերձենայր 'ի նոսին: Յայնժամ մի ոմն յազատաց կայսերական գնդին տեսեալ զի առնոյն ոք պատիւ արարեալ տեղի տայր յառաջամուխ եղելոյն, խակոյն հրաման տայր միւսմ 'ի զինուորացն արձակել զՀրացանն 'ի վերայ նորա: Արձակեաւ, ասէ, 'ի վերայ դորա, քանզի Թուի յակառուոր մարդկանէ լինել: Եւ զինուորին խակոյն արձակեալ զՀրացանն՝ հարիանէ զձախ բազուկ Թագաւորին: Իսկ և խակ հասանէն անդր ձեռով միասցորդ զօրաց նորա, և լինի տղմուկ և ազազակ մեծ, եԹէ՝ Արիւն հոսէ 'ի Թագաւորէն. վիրաւորեալ է Թագաւորն հրացանաւ Թշնամւոյ. և ահ և զարմացումն պաշարէ զամենեսեան: Իսկ Թագաւորին զբովանդակ զոյժ իւր կինքն հաւաքեալ, գոչէ առ նոսա. Ոչ մեծ ինչ է վնասք. փուԹացարուք գոք զկնին իմ 'ի պատերազմ: Ա՛յլ սակայն ընկճեալ 'ի ցաւոցն, և տեսեալ զի նուազի, աղաչէ զգունդսն Լաւնպուրկի լռելեայն իմն հանել զինքն 'ի միջոյ բազմուԹեանն: Եւ նա առ 'ի Թաքուցանել յաչաց հետևակազօրուն վհատելոյ զտեսիլն տիրական՝ առեալ զԹագաւորն ընդ

երկարագոյն Ճանապարհ կամի անցանել երթալ յաջակողմեան Թևն. և՛ դառնալ նորա՝ ընդուն՝ի Թիկնոց երկրորդ հարուած՝ որ խոպատ ուժգնագոյ արար զինս: Շատ է ինձ այս, եղբայր, զոչէ օրհասական ձայնիւ, դու փոյթ կալ ապրեցուցանել զանձն քո: Եւ անդին անկեալ՝ի գետին յերկնքարէն՝ի բաղում ևս հարուածոց խոցոտի մարմին նորա, լքեալ յիւրայոցն ամենեցուն, և փչէ զոգի, մատնեալ՝ի ձեռս աւազակաբարոյ խռովատից: Երիվարնորա արիւնաթաթախ փախուցեալ անտէրունչ՝ ազդ առնէր հեծելազօրսն Շուէետաց զմահ Թագաւորին, որք և մեծաւ սրամտութեամբ յարձակին Թափէլ՝ի ձեռաց անողորմն Թշնամեացն զառանդն զայն պատուական: Զմարմնոյ նորա գուսպարի կռիւ մահաշրջուկ, և դիակինն անչքացեալ Թաղն ընդ բլրով կռատակեալ մեռելոց:

Ի սուղ ժամանակի գոյժ աղեխին հաչակի յականջս բովանդակ զօրուն Շուէետաց, և ոչ միայն ոչ չինջուցանէ զեռանդն քաջացն այնոցիկ, այլ և առաւել ևս վառեալ բորբոքէ յարիւնահամաձ կատաղութիւն: Այս ոչ ինչ համարին նոքա զկենաց Թառամեցաւ, և մահ ոչ ածէ երկիւղ՝ի վերայ սատրնագուշնից՝ յորմէ հեռ ոչ պատկառեաց՝ի պատկաղարդ գլխոյ անտի:

Ցանդրագին եղև յաղթութիւնն, տխրագին ևս յաղթականին: Այրդ այժմիկ յանցանել ջնջանել մրճեղնութեանն՝ի միտ առնու մարդ զբովանդակ մեծութիւն կորսեանն եղելոյ, և աղաղակ ցնծութեան յաղթականաց փոխի՝ի լացութիւն և՛ի լքումն անմխիթար: Այն որ վարեր տանէր զնոսա՝ի պատերազմն, ոչ է ընդ դարձականան: Այնկեալ դնի նա՝ ամբ տարաւ զյաղթութիւնն՝ի գալոյ անդ խառն անծանօթ ընդ դիականց ռամիկան զօրականին: Եւ յետ բազում խոյզ և խնդիր առնելոյ, հազիւ ուրեմն գտաւ դիակին Թագաւորին ոչ կարի հեռի՝ի մեծէ վիմէ անտի՝ որ հարիւր ամաւ յառաջ կայր անդ ընդ մէջ Ֆլօսկրաբնի և Լիւցի, և այժմ՝ի յիշատակ աղեխոսի արկածից այսր աւուր կո-

չի Վէմ Շառնպաց: Այսմենէնի այլափոխեալ և անշան լեալէր մարմին նորա՝ի բազում վիրացն և՛ի ձապաղեաց արեանն, և՛ի կոխան լինելոյ ընդ ամբակոխ երկիրացս, յանագորոյն ձեռաց կապեալ կողոպտեալ՝ի զարգուց և յղգեստուց, և հանեալ՝ի ներքուստ շեղջակոյտ բազմութենէ դիականցն ածաւ՝ի Վայսնիկլս, և եդաւ անդ՝ի տեսիլ և յողբ զօրացն նորին և՛ի վերջին հանգոյր դշխոյին: Վրէժխնդրութիւն պահանջեալ էր զառաջին հարկն, և բազում արեանց ձապաղիք խաղացեալ՝ի հաշտ առնել զարքայ. արդ յառաջ մտեաւ յիւրաւունս իւր, և քաղցր արտասուք հոսէին՝ի վերայ մարդոյ: Զի ցաւ հատարակաց հետախաղաղ առնէ զառանձնական վանգս: Ի մեծէ հարուածոյ անտի ուշաթափ ինն լեալ զօրավարացն, կայնի անքարբառ արձանացեալ շուրջ զդագաղաւն, և ոչ ոք իշխեր տակաւին կշռել և խմանալ զմեծութիւն անդաւ կորսեանն այնորիկ:

Ըստ պատմելոյ Գևընհիլդերի, ՚ի տեսանել կայսեր զարիւնաղանգ վակաս Թագաւորին, զոր կատաւել՚ի պատերազմին առաքեալ էին առնա՚ի Վիեննայ, մորմոքեցաւ գթովաբար, և յանկեղծ սրտէ որպէս համարիմ. Սիրելի ևս էր ինձ, ասէ, վայելել եղկելոյն կեանս երկարս և խնդութեամբ դառնալ յերկիր Թագաւորութեան իւրոյ, եթէ միայն խաղաղութիւն գտանէր Գերմանիա:

Տիւնդր. Պատմ. երևանամատոյ պատերազմին:

ՄԱՀ ԿԱՐՈՂՈՍԻ Ա. ԱՆԳԼԻՈՑ

Զկնի ջրից ժամուց խօրին քնոյ, յարեաւ Կարոլոս յանկողնոյ իւրմէ, և ասէ ցՀերպէր. Գործ մի մեծ առաջի կայ ինձ կատարել, վասն որոյ և արժան իսկ է զի յարեայց վաղագոյն. և առնոյր զհանդերձս իւր ագանել: Խռովեալ

էր Հերպէր, և հարևանցի լինն յարդարէր զհերս նորա։ Ասէ ցնա Թագաւորն. Ախորժեմ զքեզ, զի զնոյն խնամոյ ի կիր արկանիցես, որպէս յերեկին և յեռանդ. և Թէպէտ չկոչ զնոյս կալ զուսուքս ընդ երկար, այլ սակայն կամ է ինձ ի զարդ փեսայի զարդարել։ Եւ զդեցեալ զհանդերձան, խնդրեաց և շապիկ մի առնուլ, և ասէ. Յորմէ է եղանակս, մարթ է ինձ զդոլանի հարկանել. իցեն Թերևս որ երկիւղի զայդ ընծայիցեն, այլ ես չկամիմ պատճառս տալ կարծեացդ։ Այն ինչ արեգակն ծագէր, եհաս անդր և եպիսկոպոսն, և սկիզբն լինէր կրօնական հանդիսից։ Եւ ընթերնայր նա, ի ինչ գլուխ աւետարանին Մատթէի, զսքանչարանս փրկչին Յիսուսի։ Տէր իմ, եհարց զնա Թագաւորն, մի արգելաք ընթերնալ իցէ քո զայդ գլուխ իբր վիճակիս ի մոյ պատկանաւոր։ Պատասխանի ետ եպիսկոպոսն և ասէ. Գիտացն լիցի տէրութեան քոյ, զի աւուր պատշաճի է աւետարանդ, որպէս և ծննդոցդն յայտ առնէ։ Յայնժամ յուզեցան գուշտ արքայի և գարձեալ սկսաւ աղօթել յաւելուլ յեռանդեանն։ Զատան ժամաւ մեղմով լինն հարաւ դուռն սենեկին. ոչ ինչ շարժեցաւ Հերպէր. և երկրորդ անգամ լսելի եղև բաղխել դրանն ամենայն, Թէպէտև քան զառաջինն մեղմագոյն։ Ասէ Թագաւորն. Երթ տեսանել Թէ ո՞ այն իցէ. և էր գինդապետն Հէքը. և ասէ Թագաւորն. Մուծէք զնա ի ներքս։

Տէր իմ, ասէ գինդապետն, ահաւանիկ ժամ է երթալոյ Ռուայթ–Հոլ. անդ զմի ժամ և առաւել ևս հանդիպիցէ տալ կաբին տէրութեան քոյ։ — Եկից ի մօտոյ, պատասխանի ետ արքայ, Թոյլ տուր ինձ։ Ել Հէքը և գնաց. և Թագաւորն վայրիկ մի ևս զանձն ժողովեալ, կալաւ ապա զձեռանէ եպիսկոպոսին և ասէ ցնա. Եկ երթիցուք. բայց դուռ ըզդուռն, Հերպէր. զայս երկրորդ անգամ ազդ առնէ ինձ Հէքը։ Եւ էջ նա ի փակարանն՝ որ հանէրն զնա Ռուայթ – Հոլ։ Հէքը բախեաց զդուռնն. Ճէքսըն և Հերպէր անկան յոտս նորա. և ձգեալ Թագաւորին զձեռս իւր ցեպիսկոպոսն ասէ. Արի կանգնեաց, վաղվիդ իմ բարեկամ։ Եւ

յորժամ բախեաց Հէքը զդուռն, միւսանգամ եբաց Կարտլոս, և ասէ ցինդապետն. Անոյ յառաջոյ, զհետ քոյ գամ։ Եւ անց նա ընդ դատաստանարանն ի միջ երկուց խմբից զօրականաց։ Ամենուս արանց և կանանց խռնեալ էին անդ նոր, վանդաւ իսկ կենացն զտեղի կալեալք անշարժ ի յետուստ հուսկ պահապան զօրացն, աղերս վան Թագաւորին արկանէին, միչդեռ անցանէր նա ընդ այն. և ինքեանք իսկ զօրականքն զլուծիւն կալեալ ոչ ինչ ընդդէմ դառնային նոցա։ Ի ծայր սրահին ընդ օրին անցս լինն գործեալ էր զայն դիպեր, որ զհպ ուղիղ հանէր ի տեղի կառափմանն, պատեալ ի սեաւ, երկուք ոմանք կանդուն կային առ տապարաւն, և էր նոցա հանդերձս արկեալ նաւատաեաց և դիմակս առեալ զերեսաց։

Եհաս անդր Թագաւորն ուղղաձեմ գնացիւք, և շուրջ զնովս յածեցուցեալ զաչս իւր, խնդրեր խօսել ընդ ժողովրդեանն։ Այլ զօրականին կալեալ էր զլայրն, և չէր ուժք մեք մեծնալ առ նա։ Եւ գարձաւ Թագաւորն առ Ճէքսըն և առ Թոմլինսըն և ասէ ցնոսա. Զնզ միայն իցէ լսել ձայնիս, ապա առ ձեզ գրանս իմ գարձուցանեմ։ Եւ կարճ ի կարճոյ խօսեցաւ առ նոսա, զոր պատրաստեալ ինչ էր յառաջագոյն։ Ծանր լինն հանդարտութեամբ ցուցանելով եթէ միակ պատճառ աղխից ժողովրդեանն՝ էր արհամարհութիւն իրաւանց արքայի, և Թէ չէր արժան ժողովրդեան խառնիլ յիրս անդ պետութեան, և զի ի այն ևեթ պայման մարթ էր աշխարհին գտանել ի խաղաղութիւն իւր և յաղատութիւն։ Եւ միչդեռ խօսէր նա, մերձեցաւ ոմն ի տապարն. գարձաւ առ նա Թագաւորն և ասէ. Մի զնասեր տապարիդ, զի մի չար ևս լինի պատահիցէ։ Յաւարտ խօսիցն՝ այլ ոմն գարձեալ մօտ առ տապարն մատեաւ. և Թագաւորին կրկնեալ անդրէն երկիւղապին ձայնիւ և ասէ. Զդուշացիր տապարիդ. զդուշացիր տապարիդ։ Անշշունչ և անբարբառ լռութիւն ունէր ըզվայրն բովանդակ. և Թագաւորն եդ ի գլուխ իւր գլխոնոց ինչ մետաքսեայ. և գարձեալ ցդահիճն ասէ. Մինչ

խո՛չ ի՛նչեն քեզ հերքս իմ: Պատասխանի ետ խոնարհութեամբ և ասէ այսր. Ակաչեմ զքեզ, տէր, զի ընդ զլխանոցաւդ զեւ տեղիցես զդոսա: Եւ ամիսփեւեաց արքայ՝ օգնելով և եպիսկոպոսին: Աւե ցնա Թագաւորն. Յիմ կոյս են արդարութիւն և Աստուած ամենակարող: Աւե ցնա Ձէքքըն. Այո տէր. քայլ մի աւէթ մնայ քեզ անցանել, որ Թէպէտ լի է ահիւ և անձկութեամբ, այլ սակայն և սակաւավախճան ևս է. այլ և այն յուշ լինի քեզ, արքայ, զի զմեծ իմն Ճանապարհ գործիցես դովաւ յերկրէ յերկինս:

Թագաւորն ասէ. Յապահանացուէս յանապատականն անցանեմ Թագաւորութիւն, ուր և ոչ մի ինչ կայցէ երկիւղ: Եւ դարձեալ առ դահիճն, ասէ. Զիա՞րդ կայցեն հերք գըլխոյս: Եւ հանեալ՝ի բաց զվերարկուն և զնշան արքոյն Գէորգայ, ետ ցեպհակոպոսն և ասէ. Յիշեսջիր զնա: Մերկացաւ ապա՝ի զգեստուցն և արկաւ անդրէն զվերարկուն. և զակն՝ի կոճղն դարձուցեալ, ասէ ցդահիճն. Տես զի կայէ ա՞ս հասատատուն. և նա ասէ. Չատատուն է տէր իմ: Աւե Թագաւորն. Աւ սակաւ մի կամ ես յաղօթս, և յորժամ ձգեցից զձեռն իմ, յայնժամ.... Եւ ժողովեալ զանձն, ասաց բանս ինչ դաշն ձայինիւ. ամբարձ զաչս իւր յերկինս, և՝ի ծունր իջեալ՝ եդ զդլուխ իւր՝ի վերայ փայտին. և դահճին բուռն հարեալ զհերացն, զի ընդ զլխանոցսն արկանիցէ, Թուեցաւ Թագաւորին եթէ կամիր նա հարկանել, և ասէ. Կաց մնա՛ հրամանիս. և նա ասէ. Այո՛ տէր, հրամանդ քո մնամ: Սուզ ինչ՝ի վերայ անցեալ՝ ձգեաց արքայ զձեռս իւր. եհար անդէն դահիճն, և՝ի մի յայն հարուած անկաւ գլուխն՝ի գետին. զոր առաջի արարեալ ժողովրդեան և ասէ. Աչաւագիկ գլուխ մանչին: Եւ խուռ իմն և երկարաւս հեծութիւնք հնչեցին ընդ Ոսկի-Ձոր Խաղաւմբ՝ի ժողովրդենէն անկանելին՝ի տեղն սպանութեանն, Թաթեւել զձաչկինակս իւրեանց յարիւն արքունի: Թուանգք երկու հեծելաղօրաց անգր հասեալք, ընդ կրկին առաջս զամբոխն՝ի բաց արձակեցին: Իբրև ամենեքեան դնացին, բարձաւ մարմին արքայի, և եդաւ՝ի դագաղս: Կամք եղեն

Քրմուհւոյ տեսանել զնա, և ուշի ուշով զննեալ զմարմինն, ամբարձ ինքնին զգլուխն, իբրու տեսանել եթէ արդարև անջատեալ էցէ յիրմանէն, և ասէ. Վայելչակազմ է յոյժ մարմինս, և ցուցանէ եթէ երկայնօրեայ լինելոց էր սա՛ի կեանս իւրում:

ԿԻԶՈՑ. Ձեղափոխութիւն Ազգիս:

ՄԱՀ ԴԻՒՐԵՆԻ

Գուժեաց բօթս այս գառնադէտ ընդ Գաղղիա համբէն, որպէս զմեզ Թանձրախիտ որ զլոյս երկնից ծածկիցէ, և եղիցի զամենայն սիրտ խաւարաւ մահու՝ յարհաւիրս և յերկուս կալեալ զամենեսին: Ընդ լուր մահուն Դիւրենի, այլ ամենայն Թուէր իմն տեսանել զսպառազուռս բեկուսին արքայական բանակին. զսահմանս մեր ոտնակոխ, և կազմ զՀընչնամիս մեզ՝ի սիրտ Պետութեանս: Իսկ ապա մոռացեալ զօգուտ հասարակաց, զմահ մեծի առնն աշխարհին ամենեքեան. և ընդ աղէտալին արկած բերանք կոծեցան և աչք հարան յարտասուս: Ամենայն ոք փառս անձին համարէր դիտել ինչ և խօսել զկենացն և զառաքինութեանց. զնչրն սիրելութենէն առ ամենեսին ասէր ոք, այլ ոմն՝ եթէ հիանային ընդ նա բնաւք անհամաձայն, և միւսն Թէ սարսեին յերեսաց նորա և Թշնամիքն անգամ առանց իրիք տեսլութեան: Այլ մարմինք արքային ընդ մահ նորա, և գովաբանութիւնն՝ի փառս հոյակապ մահացելոյն մեծ ևս էին և չքեղագոյն գրուատիք առաքինութեանց նորա: Ի ցաւ արքային իւրոյ և վիշտ յաւել ժողովրդոյն. ընդ քաղքաւն ուսոյ հանց մարմին նորա՝ զնոյն կիրս էր տեսանել, որ ինչ երբեմն՝ի պետութեանն Հռոմայ, յածել յերկրէն Աւորոց՝ի շիրիմս կայսերաց զաճիւնս Գերմանիկեայ: Ազնեալ կայմն առնիք, տխուր և մուժ լռութիւն՝ որ գրաւեալն էր զՀրա-

պարակս, 'ի հեծուելիւնս ևեթ քաղաքացեացն բեհանէր. աւագանին սպազդեաց յօժարականք եին զդագաղն արկեալ զուսովք՝ տանել քաղաքէ 'ի քաղաք. քահանայք և միանձունք վառեալք 'ի նախանձ, զարտասուս իւրեանց և զաղօթս ուղղիկ նմա տային. և քաղաքք, առ որս նոր էր տեսարանն դժնդակ, 'ի բռնադոյն ցաւս լուծանէին քան զուղղեկացն, և իբրու այն եթէ 'ի տես դագաղացն կրկին զնա կորուսանել, անդրէն 'ի կոծ և յարտասուս հատանէին:

ՄԱՍԳԱՐՈՆ. Դամբանական Դիւրևևի:

Ի ՆՈՑՆ

Մեռանի Դիւրէն. աղմկեցաւ ամենայն. գեղևեցաւ բաղձն. լքաւ յաղթուելիւն. բարձաւ խաղաղուելիւն. Թուլացան դաշնակցեալ խորհուրդք առաքինիք. 'ի ցաւոց խորտակեցաւ արուելիւն վաշտուց և 'ի վերիժուց զօրացաւ. անշարժ կայ Ճամբարն համօրէն. ընդ կորուսան խոհան վերաւորք, այր եղեն պատճառք, և ոչ զընկալեալ վիրացն: Հարք կխսամահք փութեցուցանէն զորդեական յաշխատանս մահաղաւս սպարապետին իւրեանց: Բանակն 'ի կոծ պաշտէ նմին զմահուն վերջին պաշտօն. և համբաւ՝ որ սիրէն սփռել ընդ տիեզերս զանցս նորանշանս, սրացաւ եղեց զնեղոսպ պանծալն վարուք իշխանիս և 'ի մահուն՝ ողորմ կսկիծ:

Քանի՛ հառաչանք անդէն, քանիո՛ն արտասուք, որչափ գովուելիւնք հնչէն ընդ քաղաքս և ընդ շէնս: Տեսեալ ուրուք զարտորեկին աձել, օրհնէ զիշատակ առնն, յորմէ հնձոյն ակնկալուելիւն. և այլ ոք որ դեռ ևս յանդորրու վայելէր զհայրենին ժառանգուելիւն մանրէ նմին զյաւելուածս հանգիստ, որ փրկեաց զնա 'ի շփոթից և յանդգնեալ մարտին. ատ զանմահականն մատուցանէն

զպատարագ վասն հոգւոյ նորա որ ոչ անհայեաց առ օգուտ հատարակաց յանձն իւր և 'ի կեանս. և այլուր կանգնեն նմին շքեղ դամբարան 'ի տեղւոջ՝ ուր ակն ունէին ամբառնալ նմա զյաղթականն. այր այր ընտրէ անձին մատն փառաւոր 'ի չքնաղ վարուց նորա յառնուալ 'ի գրուատիս, և իւրաքանչիւր ոք հատկէալ 'ի հառաչանաց իւրոց և յարտասուաց, հիանայ ընդ անցեալն, ողբայ զառաքեակսն և ընդ գալոցսն գողայ: Ա.յսպէս արքայուելիւնն համօրէն յողբս համակեալ ընդ մահ պաշտպանին իւրոյ, և մահ առն միոյ ևեթ հատարակաց եղեն աղէտք:

ՖԼԵՇԻՒ. Դամբանական Դիւրևևի:

ՄԱՀ ՀԵՆՐԻԿԻ ԴԵՒՈՑԻ

Մխա դիք, տեարք, ահաւոր պետուելեանցն՝ յորս մեք 'ի ներքուստ աստի ակնարկեմք, մինչդեռ դողամբ մեք ընդ ձեռամբ նոցա, Ա.ստուած հարկանէ զնոսա մեզ 'ի խրատս. պատճառք՝ բարձրուելիւն նոցա է, և այնչափ չընդայ ընդ նոսա, զի չգիտիցէ պարտ բաշխի տալ զնոսա 'ի խրատս այլոց: Մի՛ քրթմնջէք, քրիստոնեայք, Թէ զի տիկինս ընտրեցաւ առնել մեզ զայս ազգեցուելիւն. չէք ինչ գժնէ աստանօր վասն նորա. զի որպէս յառաջիկայսդ տեսջիք, նովին հարուածով որ զմեզն խրատէ՝ կեցուցանէ զնա Ա.ստուած: Պարտ էր հաստատ գիտել զոչնչուելիւնս մեր. բայց եթէ անակնկալ հարուածք պակուցիչք պիտոյ իցեն սրտից կախարդելոյ 'ի սէր աշխարհի, շատ խակ մեծ է այս և կարի ահագին:

Ո՛վ դիչեր աղետաբեր, ով դիչեր ահաւոր, յորում հնչեաց յանկարծահաս իբրև զբնդիւն Ճայնելոյ որոտման այս բօթ սոսկալի. Տիկինն ահա մեռանի, Տիկինն մեռաւ: Ո՞վ ոք 'ի մենջ ոչ յանձն իւր առ զաղգ հարուածոյդ, որ-

պէս եթէ դեպք ինչ եղեռնաւոր զտուն իւր յաւէր դարձուցանէին:

Յառաջին անդ չզուկ նոքանչան ախտին, յամենայն կողմանց ընթացք ի Սէն-Քլօ. ամենայն ինչ արհաւրօք լի, բայց միայն ի սրտէ Տիկնոջ. ամենայն ուրեք ձիչ և գէր լսելի, ամենայն ուրեք ցաւք և յուսահատութիւն և կերպարանք մահու:

Թագաւոր, Թագուհի, արքայեղբայր, արքունիք ողջոյն, համօրէն ժողովուրդ, ամենայն խոնարհեալ անկեալ, ամենայն յուսակտուր. և Թուխմ տեսանէր զլրումն մարգարէաբարոյ բարբառոյն. Թագաւորն սգացեալ, և իշխանն զգեցեալ զսպականութիւն, և ձեռք ժողովրդեան երկրին ձգեալն ի ցաւոց և յայշտութենէ:

Բայց իշխանք և ժողովուրդք ի նանիր հաչէին հառաչէին, ի նանիր արքայեղբայրն, ի նանիր Թագաւորն ինքնին զրկալինգ ունէր զՏիկինս: Յայնժամ գոյր նոցա ասել այր ցընկեր ընդ սրբոյն Ամբրոսիոսի. Պինդ ունէի զքաղաքական, այլ զոր ունէիս վաղ իսկ կորուսեալ էի: Ի գորովալիր անդ գրկախառնութենէն՝ Թագաւորէ ի նոցանէ բամբիշնն. և մահ հզօրացեալ՝ ի միջոյ անտի արքայական բազկացն յափշտակէր զնա ի մէնջ:

Իսկ զնարդ. էր ինչ պարտ այսպէս հապճեպ տագնապաւ զնալ նմա: Այս յոլովս ի մարդկանէ առ փոքր փոքր վնասն այլայլութիւնք, և սովոր է մահ պատրաստել զնոսա ի հարուած իւր վերջին. իսկ Տիկինս՝ յայգուէ ցերեկ անց իրրև զնոսա դաշտի. վաղորդայն ծաղկեալ կայր, և որով գեղով, պետք գուք. ընդ երեկս տեսաք ցնա ցամաքեալ. և աղջիկ բանք ասուածեղէն տատիցն՝ որովք կուսական զոզոդութիւն մարդկայնոց՝ հանդերձեալ էին այսպէս ձրշգըրաիւ և ըստ նկարագրելն կատարել ի վերայ բամբշնոյ:

Աւադիկ, մեծաւ սրտիւն հանդերձ, բամբիշնս զարմանացաւքանչեաց և սիրատարփ. աւագին՝ որպիսի ինչ դործեաց զնա մեզ մահն. նա աւանիկ և նշանարդ այդ որ ինչ էին՝ անհետացոյն ի մինջ. սուրբդ այդ փառաց՝ չքացոյն ի միջոյ. և տես-

ցուք զնա մերկ կողոպուտս և ի տխրալի պատճառանացեղ:

Իշխանելոց է ի մեծն վայրս, ի սանդարամետական օթեւանան՝ նինջել անդ ի հող ընդ մեծամեծս երկրի, որպէս ասէն Յոբ, ընդ Թագաւորս և ընդ իշխանս չքաւոտեալս, յորս և հազիւ Թէ գտանիցեն նմա տեղի. այնչափ խծկեալ և խըճնեալ են կարգք, այնչափ ժիր և ժաման է մահ ի խճողել զնայրան:

Բայց ասա ևս պատրէն զմէզ ցնորքս. մահն ոչ Թողու մեզ այնչափ ինչ մարմին՝ մինչև զնայրս գրաւելոյ. ոչինչ տեսանի անդ երևելի, բայց չնրիմք ևեթ. մարմինք մեր խակ և խակ փոխին ի բնութենէն. իրան մեր, այլ ինն անուն ժառանգէ. նոյն իսկ դիական կոչումն, ասէ Տերտուղիանոս, քանզի գեռ ևս մարդկային ինն կերպարանս մեզ ի դէմս ածէ, չինայ նմա ընդ երկար. գառնայ չգիտեմ զինչ լինի, որոյ չէք լինչ անուն և ոչ ի լեզուի ուրեք. այսչափ ձշմարիտ է՝ Թէ ամենայն մեռանի ի նմա, մինչև տխրական ձայնքն անգամ ողբմելի նշանարեալ յիւացօրդացն նշանակիչք:

ՊՈՍԻԻՔ. Դաւթեանական Հնարիկեի Դշխոյ:

ՄԱՀ ՄԱՐԵՄԱՑ ՍՏՈՒԱՐՏԱՑ

Յաւուրն երիքշաբաթի յեօթն փետրուարի, կոմսն երկոքին հասեալք ի Ֆոգրինկէյ, խնդրեցին տեսանել զթագուհին. ընծերցան առաջի նորա զգաստակինք մահուն, և ծանուցին նմա պատրաստ լինել ի մահ ի վաղիւ ընդ առաւօտն: Ունկն եդեալ Մարիամու անխռով ցաւարտ ընթերցմանն, ապա կնքեաց զանձն նշանաւ խաչին յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, և ասէ. Հոգի որ խոժռեցի ընդ հարուածս մարմնոյն ի գահձաց՝ ոչ է արժանի երկնից հրճուանաց. և Թէպէտ ոչ ունէի ակն եթէ դըշ-

խոյն Անդղնոյ նախ առաջին օրինակ տայցէ անարգելոյ զսրբ-
բազան անձն Թագուհւոյ, սակայն և այնպէս արկանեմ
զանձն իմ յօժարակամ ընդ հարկաւ սահմանելով վասն
իմ ի վերին ի տեսչութենէն: Եւ եդեալ զձեռն ի վերայ
Աստուածաշունչ մատենին, որ մերձ առ նմա կայր, եր-
դուաւ համարձակ եթէ անպատրաստ է ի դաւակցութենէն զոր
Պապինկդոն նիւթեաց ի բառնալ զկնասն Եղնաբեթի: —
Ցիշեցոյց ի նմին պահու զաղաչանսն որ ի Թղթի իւրում
առ Եղնաբեթ, բայց ոչ ընկալաւ պատասխանի հաճոյա-
կան: Ապա ազաչեաց մեծաւ Թախանձանօք զի գոնեայ ի
յետին պահու անդ կենացն շնորհեսցի նմա դրան երեց իւր,
առ ի կարող լինել հաղորդելոյ բարեպաշտիկ կրօնից հրա-
հանգաց զոր հաւատք իւր պատուիրէին: Ասյլ և այս շը-
նորհք ոչ ժխտի առ անագորոն իսկ մահապարտս, ոչ
շնորհեցան նմա:

Մինչդեռ նոքա խօսէին՝ սպասաւորք նորա յարտասու
հարկանէին. և Թէպէտ պակուցեալ էին յերեսաց երկո-
ցուն կոմսին, հաղիւ բաւէին Թագուցանել զկոծ իւրեանց.
այլ անդէն ընդ մէկնել Գէնդի և Շրըղսըբերայ, ընծայան առ
թիկին իւրեանց կական բարձեալ մեծապէս ըստ ամենայն
սաստկութեան խանդաղատանաց և ցաւոց: Իսկ Մարիամ
ոչ միայն կայր մեայր անխռով և հանդարտ մտօք, այլ և
գոն գործեր սփոփել զանհնարին աղէտս վշտաց նոցին:
Մուխը եդեալ ամենայն սպասաւորքն որ շուրջ զնովբ,
գոհացան զԱստուծոյ զի ահա մերձեալ էր վախճան տա-
ռապանացն, և խնդրեր զօրութիւն վայելչապէս և արիա-
բար կրել և զոր մեայրն: Ձմեծ մտան երեկոյին հաներ ի
ամուսնել զդստր աշխարհի կաց մեայր իւր՝ և իւրով ձեռամբ
գրեաց զկտակն: Ձգրամ, և զականան պատուականս և զըզ-
գեստս իւր բաժանեաց ծառայիցն ըստ իւրաքանչիւր կար-
գի պատուոյ և արդեանց: Գրեաց Թուղթ կարճառօտ առ
Թագաւորն Գաղղիոյ, և միւս ևս առ դուքսն Կիզայ, գորս-
վաղիւ այլ վեհական մտօք յանձն արար զՀոգի իւր ազո-
Թիւն նոցա: Ի պահու ընԹրեացն Ճաշակեաց չափաւոր, որ-
պէս և սովորն էր, և խօսեցաւ ոչ միայն խաղաղ ոգւով,
այլ և զուարԹութեամբ. Էրբ վասն կենաց միոյ միոյ ի ծա-
ռայիցն, և խնդրեաց նէրսէսն՝ եԹէ էր ինչ էրբեք վի-
պեալ ի պարսան առ նոսա: Ըստ սովորութեան ժամուն
եմուտ յանկողին և ննջեաց սակաւ ինչ ժամս խաղաղու-
Թեամբ: Վաղ քաջ ընդ առաւօտն յարուցեալ առանձնա-
ցաւ ի մենանոց իւր, և եկաց ընդ երկար յաղօթս: Յու-
Թերորդում ժամուս գաւառացն մեծ և պաշտօնեայք նորա
մտեալ ի ներքս գտին զնա տակաւին ի գուշս առաջի սե-
ղանոյն: Անդէն վաղվաղակի յոտն եկաց, և վեհմակերպ
տեսլեամբ, և անվեհեր և զուարԹագին իսկ, յառաջէր ի
տեղին մաշտոցի, յեղեալ ի վերայ երկուց սպասաւորաց
Պաւլէգի: Չամակեալ էր ի հանդերձ ազատական, այլ
վայելուչ և շքեղ, զոր վաղ ուրեմն ի բաց եդեալ էր և դուն
ուրեք ի ծոմական ինչ աւուրս միայն արկեալ զանձամբ:
Պատեր Գուարն Աւգուստոս կախեալ կայր զպարանոցին ա-
նուշահոտ ուլամբք ոսկի շղԹայիւս, վարդարան ղգեստով,
և խաչ փղոսկրեայ ի ձեռին: Ի սաորոտ սանդղոցն ընդա-
ռաջեալ ընկալան զնա կոմսքն երկոքին, հանդերձ բազում
որերով մերձաւոր կողմանց. անդ Թոյլ եաուն Պր. Անտրէա-
սայ Մելվիլ, հազարապետի տան նորա, զոր արգելեալ ու-
նէին յերեսաց նորին ի բազում ևօԹնեկաց հետ, հրա-
ժարել ի նմանէ զվերջին ողջոյն:

Ի տեսանել զսիկիին, զոր սիրեր հաւատարմութեամբ,
յայնպիսի կերպարանս, լուծաւ յարտասուս, և յողբալն
զպչեաս բազդի նորա և զնւբ իսկ վիճակ գԺնդակ, զի հարկ
էր նմա այնուհետև տանել ի Սկովտիա զդոյժն ցաւագին,
ասէ ցնա Մարիամ. Մի լար, աղնիւդ Մելվիլ, առիթ է այդ
մեծի խնդութեան. քանզի այսօր տեսցես զՄարիամ Տառա-
պար ազատ յամենայն վշտաց, հասեալ ի վախճանն տաղտ-
կալի ցաւոցն, որում փոփաքեր ի վաղուց: Եղիցես ինձ ի
վկայ եԹէ մեռանիմ անյողդողդ ի հաւատս կրօնից խոց,
հաւատարիմ Սկովտիոյ, և անչեզի ի սիրոյն Գաղղիոյ:

Յիշեցի՛ զնա որդւոյ իմոմ: Այսա ցնա թէ չէր իմ ինչ գործեալ ՚ի նախատինս Թագաւորութեան նորա կամ պատուոյն և երաւանցն, և Թողեալ Աստուած ամենեցունն ոչք յանիրաւի ծարաւեցան արեան իմոյ:

Բաղում դժուարաւ մեծաւ և յետ ուժգին Թախանձանաց հաւանեցոյց զերկոսին կոմսն Թոյլ տալ Մելվիլայ և երից ՚ի ծառայից իւրոց և երկուց նաժշտաց, գալ զՏէտ իւր ՚ի կառափնատեղին: Եւ էր այն կանգնեալ ՚ի գաւԹին յորում գտանէին, սահակիկ մի բարձր ՚ի յատակէն, և ծածկեալ էր սեաւ քողով, նոյնպէս և աԹոռակն և բարձն և բուն: Եւ Մարիամ զուարԹագին դիմօք ընդ աստիճանսն, հայեցաւ նկատեաց անխռով զամենայն սպասս մահուն, և հինգեալ զանձն նշանաւ խաչի բազմեցաւ յաԹոռակին: ԸնԹերցաւ Պիլ ՚ի ձայն բարձր զվերնոյն, զոր լուաւ նա յանիոյնԹս, որպէս Թէ յափշտակեալ էգ յայլ խորհուրդս: Յայնժամ գահերէցն Բիէռբոլըրի սկսաւ ասել խօսս բարեպաշտիկս՝ ըստ արժան առաջնիակ դիպուածոյն, և մատոյց աղօԹս բարձրելոյն յօժանդակուԹիւն դշնոյին. իսկ նա յայս յանդիման ծանոյց ցի ոչ ըստ խղճի մտացն անսալ միոյն, և միաբանել ընդ միւսումն. այլ և ՚ի գուշս անկեալ ասաց աղօԹս ինչ ՚ի լսանին լեզու: Եւ յաւարտել բանից գահերէցոյն, ՚ի ձայն լսելի ամենեցուն Անգղիաբէն բարբառով յանձն արար Տէառն ղոլորմ վիճակ եկեղեցւոյ, մաղԹեաց յաջողուԹիւն որդւոյ իւրում, երկարուԹիւն կենաց և խաղաղաչէս ԹագաւորուԹիւն Եղիսաբեթի: Ապա նոյց եՀե յոյս քաւուԹեան ունէր միայն մահուամբն Ջրիստոսի, և առ ոտիւք պատկերի նորա հանդերձեալ էր հեղուլ կամաւորապէս զարիւն իւր. և ամբարձեալ ՚ի վեր զնայն և համբուրեալ, սկսաւ ասել այսպէս. Որ տարածեցեր զբազուկս քո, ով Յիսուս, ՚ի խաչին, ընկալ և զիս կարկառեալ բազկօք զԹուԹեթանդ քո, և քաւեա զմեզս իմ:

Յետ այսորիկ պատրաստեցաւ ՚ի կառափնումն. վերացոյց զքօղն և զարտաքին հանդերձան, և մինչդեռ մի ՚ի դահճացն փութայր գտեհկաբար օգնել նմա, մերժեաց հեզաբար և

ասէ ժպտելով, ԹԷ ոչ եմ սովորեալ հոլանել առաջի այդքան տեսողաց, և ոչ յայդպիսւոյ արբանեկէ սպասաւորել: Խաղաղ և անվհեր արուԹեամբ եդ զպարանոց իւր ՚ի կոճն, և մինչ ոմն ՚ի դահճացն ուներ զձեռաց նորա, միւսոյն երկիւղս հարեալ ՚ի բաց կարեաց զգլուխ նորին, որ մերկացեալ ՚ի զարգուցն՝ երևեցաւ ալեւորեալ ՚ի տառապանաց անաւ և ՚ի վշտացն: Ամբարձ զայն դահիճն մինչ դեռ ևս արիւնաԹաԹաւն էր, և գահերէցն գոչեաց. Այսպէս կորիցեն ամենայն Թշնամիք Եղիսաբեթի Թագուհւոյ. և կոմսն Բէքդի միայն կրկնեաց, ամէն: Իսկ բազմուԹիւն տեսողացն պնդեալ կային ՚ի լուռԹեան, և յարտասուս լուծեալ, ոչ այլ ինչ կարելով յայնմ պահու, բայց ողորմել և աքանչանալ:

ՌՈՊԵՐԴՍՈՆ. Պատմողիւն Ստուարտեանց:

ՑԱՋՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆՑ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

Եմուտ Ալէքսանդր ՚ի Բաբելոն մեծաշուք փառօք, որպիսի չէր երևեալ ուրեք. և զքեն վրիժուն Ելլադայ խընդրեալ, և զամենայն աշխարհն Պարսից ՚ի սուղ ժամանակի ընդ ձեռամբ հնազանդեալ, ապա ՚ի հաստատուԹիւն նորոյ պետուԹեանն, կամ մանաւանդ ՚ի յագուրդ փառասիրուԹեան իւրոյ անուանի լինել առաւել քան զԻրինիսոս, խաղաց գնաց ՚ի Հնդիկս, և անդր ևս քան զայգԹոյն հռչակաւոր ընդարձակեաց զիշխանուԹիւն իւր: Բայց որ ընդ անապատս ոգորէր, ընդ դէտս և ընդ լերինս, և ոչ կասէր երբեք յընԹանալոյ, հարկեցաւ լսել զօրականին, որ վաստակեալ խնդրէր արձակուրդ. և արձանս դերապանծ քաջուԹեանցն զսխմբք Աբրասպայ Թողեալ, ընդ այլ ճանապարհ դարձոյց զղօրս իւր, նուազելով զճանապարհային զամենայն

քաղաքս. և եկին եմուտ վերատին 'ի Բաբելոն, ոչ որպէս աշխարհակալոք, այլ աստուածաձեռալ ահաւոր և պատկառելի փառօք:

Բայց թագաւորութիւն նորա մեծազօր ընդ համառօտ կենաց նորա սահմանեցաւ: Երեսուն և երից ամաց մինչ դեռ երկնէր խորհուրդս մեծամեծս՝ որպիսի չէր ուրուք զմտաւ ածեալ, և հաստատութեամբ ամն ունէր բարեպատեհ եղից, վախճանեաց զկեանս իւր՝ մինչչև հաստատագոյնս հրաման առեալ վասն թագաւորութեան. և եթող զեղբայր իւր զանգոր և զակար, և մանկունս տղայս՝ որ անբաւական էին ծանուռ բեռինն: Բայց դառնագոյն ևս ազէտք տան իւրոյ և պետութեան այն էին, զի զզօրավարսն ուսեալ առ նմա 'ի պատերազմ և 'ի սեր փառաց՝ զհետ իւր թողոյր:

Յառաջատես եղև որոյ չետ մահուն գործելոց էին. և առ չգայլայլացուցանելոյ զնոսա, և առ ահին զարձեալ զի մի անլսողս զնոսա արասցէ, ոչ ժառանգ ցուցանել զոք յաջորդ իշխանութեան կամ խնամակալ որդւոցն. այլ դուշակեաց միայն զի 'ի ձատղոիս պատերազմից յուղարկաւորեսցեն զնա բարեկամքն իւր. և 'ի ծաղկեալ հասակին վախճանեաց զկեանս իւր յոյժ թախծեալ և տագնապեալ վասն անցիցն որ անցանելոց էին չետ իւրոյ մահուն:

ՊՈՍԻԻՔ. խօսք 'ի վէպս ազգաց:

ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՊՊԻԱՍԱՑ

Զարմանային Նեստոր և Փիլոկտետ 'ի տեսանել զմարդասիրութիւն Տելեմաքայ, զփոյթ նորա 'ի բարերարել, զյօժարութիւն 'ի սպասաւորել, զդիմել նորա ամենայն ուրեք յօգնութիւն, և զնախահոգ խնամս կարօտութեան

քոլորից: Չհաւատային Թուէին նոցա իրքն, և ոչ ևս ձանձնէին զպատանին. զարմանային մանաւանդ ընդ խնամս նորա 'ի յուղարկաւորութիւն Իպպիասայ. զի ինքնին իսկ երթեալ 'ի խնդիր գիայ նորա, հան զնա արիւնաշաղախ և սխեզծ 'ի ներքուստ չեզքահատելոց գիականց, հեղ զնա վառ ողորմարտասուս, և բողոք արկեալ ասէր. Հոդի վհատն՝ որ պիտեգ արդ թէ քանի մեծարոյ է ինձ քաջութիւն քոյին. այո՝ խիզախելդ քո գրգռեաց զնա, այլ մանկական աչխուժիցդ եր այն զառանցուն. և պիտեմ իսկ քաջ քանի կարեկցութեան հատակն այն իցէ արժանի. սերտիւ ինայր մեզ սիրել ընդ փոյթ զմիմեանս. իմ իսկ էին յանցանքս: Ո՛վ գիք, ընդեր բարձիք զնա յինէն՝ մինչ չև բռնադատեալ իմ զնա 'ի սէր:

Եւ ապա ետ Տելեմաք լուանալ զգի նորա անուշահոտ ջրովք, և պատրաստել փայտակոյտ 'ի խարոյկ: Հեծելին յաղթ մայրիք հարեալք տապարաւ, և 'ի գլխոց լերանց 'ի սուր թաւալելին. կաղնիք զառաւք, որք Թուէին ընդդէմ երկնից սպառնական, կաղամախք բարձրաբերձք, և նշդարիք՝ որոց գալարագեղ և տերևախիտ ամբառնային գագաթունք, և թեղջք՝ զարդք անտառաց՝ դիզին վայրաբերեալք 'ի գետափն Գալէսեայ: Այնգ չեղջակուտեալ զօրին չնուաճոյ մեծի յաւնէր փայտակոյտ, և բոց հարեալ զնմանէ, մրրիկք ծուխ ընդ երկին:

Յառաջ մատչէին սպարապետք յամրագնացք սպասուք, դլուխ 'ի խոնարհ, վիշտ գառնութեան 'ի վայրագ դէմսն բերելով, և ուղիս խնդացանելով արտասուաց: Չհետ գայր Փերեկկիդես ծերունի, ոչ այնչափ 'ի բազմայոլով ամացն ընկճեալ՝ որչափ 'ի տեսանելոյ զարև չետ մահուն Իպպիասայ՝ զոր 'ի տղայ սիոց յանձնձեալն եր, և յօրէ մահուան նորա չառնոյր ինչ 'ի կերակուր, և քուն ցանկալի հատեալ եր յաչաց նորա, և ոչ վայրկ մի յաղեկէզ ցաւոցն սփոփէր: Գնայր նա գայլ 'ի գայլ զչետ ամբոխին, համբաձեալ զչեռս իւր և զարտասուալից աչս 'ի վեր, և չգիտեր յո՞ գնայր: Չեչներ բարբառ 'ի շրթանց նորա, հեղձամըղ

ձուկ լեալ սիրտ նորա. այլ լուսնիւն նորա յուսահատ
և վհատեալ՝ի տեսիլ բոցածաւալ խարուկին փոխեալ՝ի
կատաղութիւն, գոչեաց և ասէ. Ո՞չ ես ուրեմն տեսիլ ըղ-
քեզ, ով Իպոլիտ. գու մեռեալ, և կեցից ես տակաւին,
ով նման Իպոլիտ. անգութ և անողորմ, ես քեզ ուսուցի
յաչս գնել զմահ: Ահա ունիմ թէ գու փակիլը զաչս իմ, և
պետին չունիս իմ ժողովիլը. այլ ո անողորմ դիք, յերկա-
րակաց զիս արարիք, զի տեսից զԻպոլիտոս մեռեալ: Սիրե-
ցեալ որգեակ՝ զոր այնչափ հոգովք փայփայեցի, ո՞չ ես ու-
րեմն տեսից զքեզ. այլ տեսից զմեռանիլ մօր քո առ վերջին՝
բողոքելով զինէն արգելորոյս. այլ տեսից զնոցահարսին քո
բաղնիք զկուրծս իւր և զդիահան խզել. և ես բնաւից
այսոցիկ գոայց չարեացապարտ աղետից: Ո՛վ սիրեցեալդ
հոգի, ի տիւրգիան այդր ի յալիս կոչեա և զիս. առիլն
է նման այսուհետեւ ըղյս. զքեզ միայն, ով նման Իպոլիտոս,
յանկամ տեսանել: Իպոլիտոս Իպոլիտոս, սիրեցեալդ իմ Իպ-
պոլիտոս, մի ես կեցից բայց առ՝ի հարկանիլ ածիւնացեալ
մարմնոյդ զսպատ յետին:

Եւ ահա բարձեալ բերէին զդիահն պատանւոյն Իպ-
պոլիտոսի տարածեալ՝ի գագաղն զարդարեալս արծաթի և
ոսկեհուռս ծերանեաւ: Խառնեալ էին աչք նորա՝ի լս-
տուերս մահու, այլ գեղեցկութիւն նորա ոչ՝ի սպառ էր-
ծեալ. գեռ ես՝ի գեղնեալ գէմս նորա երեսին շնորհք ընդ
ազօտ. զձիւնափայլ պարանոցաւ նորա՝ որ զուսումն էր խո-
նարհեալ՝ գեղածփելին վարսքն երկայնաձիգք քաջաճուքք,
գեղեցկագոյնք քան զԱֆսինն և զԴանիմիդեայ, որ ընդ
հուպ յաձիւն գառնալոց էին. և՝ի կողն երևէր վիրաբե-
րանն մեծաբաց, ուսոյն արիւն նորա հոսեալ՝ի սպառ, և
հոգի նորին սաորիկեալ՝ի սանդարամետս էր՝ի խաւարային
սահմանս Պլուտոնի:

Հուպ՝ի գագաղն տխուր կորահոր գնայր Տէլեմաք,
ծաղկունս զնուաւ սփռելով: Եւ իբրև հասին՝ի խարոյկն,
Տէլեմաք՝ի տեսիլ բոցոյն ծաւալելոյ ընդ ծածկոյթս գիա-
կանն, վտակս արտասուաց վերստին հեղեալ, ասէ. Երբ

խաղաղութեամբ վհատնդ Իպոլիտոս, զի բարեկամ չիշեմ
առ ձայնել. հաշտեաց ընդ իս հոգիդ այնքանոյ փառաց
արժանացեալ. եթէ ոչ սիրեի զքեզ, նահանձէի ընդ բախտ
քոյին. զերծար գու՝ի թշնամանութեանց՝ յորս մեք գեռ ես
տառապեմք. ելեր զերծար գու ընդ ուղի հրաշափառ: Յան-
դիման նոյն և ինձ պատահեր բարեբաստիկ մահ: Մի զհոգի
քո արգելցեն ալիք ստիւգականք. դաշտք ելիսականք բաց-
յին քեզ. դարուց՝ի դարս աւանդեսցէ համբաւ գիշատակ
քո, և հանգիցէ աճիւն քո՝ի խաղաղութեան:

Զայսոսիկ Տէլեմաքայ հեծեծելով ողբս առեալ, և զօրքն
առ հասարակ ձայն բարձեալ, գորովին ընդ Իպոլիտոս՝
պատմելով զքաջայաղթ արուեստիւնս նորա. և մորմոք մա-
հուն նորա, յիշատակաւ բարեմասնութեանցն, ի մտաց
ցօնս գարձուցանէր զԹերուեթիւնս յանդուգն մանկութեան
նորա և յոտն դատաստարակութեան: Խանդաղատանին մա-
նաւանդ ընդ գորով Տէլեմաքայ, և ասէին. Սա իցէ պատա-
նին գուռզ Հելլէն, սեգ արհամարհոտ և անհամբոյր. տե-
սէք քանի հեզ գասին արդ մարդասէր և բարեգութ. ան-
շուշտ նա ինքն Ախիլեոս, որում այնքան սիրելի էր հայր
սորա, սիրեաց և զսա. և զգերագոյնն՝ի պարգևս, զորս
շնորհեն մարդկան գիք, էս սմա ընդ խնամատութեան և
սիրտ դիւրագորով՝ի բարեկամութիւն:

Ի ծախել գիականն՝ի բոցոյ, զկերաչերմ մխրճիլն ցո-
ղեաց Տէլեմաք ջուր խնկահոտ. և ապա ամփոփեալ զա-
ճիւնն՝ի սափոր ոսկի ծաղկապսակ, ած զայն առ Փալաս,
մինչդեռ անկեալ գներ նա վկրալից, և՝ի մտհաղթաւեր
թմբուեթեան նկատեր զնուիրատուեր գրունս գժոխոց ա-
ռաջի իւր բացեալ: Բայց Տրոմախիլ և Նոսոփոկ առաքեալք
՝ի Տէլեմաքայ, զբժշկական արուեստին՝ի կիր արկեալ ըզ-
հնարս, նահանջեալ էին զօրհաս նորա: Գառնային՝ի նա
տակաւ ոգիք կենսականք. զօրութիւն խիս միտ և նուրբ և
ոեսին կենաց ընդ երակունս նորա մինչև՝ի նեբքս՝ի սիրտն
ծաւալեր, և սխորժ ջերմութիւն գողնայր զնա՝ի ցրտա-
սառոյց ձեռանէ մահուն: Բայց՝ի գագարել նուաղման՝

յաջորդեցին ցաւք, և սկսաւ նա ղալ կորստեան եղբօրն՝ որում ցայնկայր լեալ էր անդադ, և ասէ. Աւաղ, առ ինչ պղծեան խնամք առ ի կեանս իմ. ո՞չ լաւ ևս էր ինձ մեռանել, և զհոգին Իպոլիտոսի գնալ զհեա. աչք իմ տեսին զնա անկեալ զի ցուրտ առ ինև: Ո՛վ Իպոլիտոս, լոյս աչաց իմոց. եղբայր իմ, սիրեցեալ եղբայր, կորուսի զքեզ. ոչ ևս ուրեմն տեսից զքեզ. ոչ ևս զբարբառ քո լուայց, ոչ ևս փարեցայց զքեւ, ոչ ևս զվիշտս իմ կարացից պատմել քեզ, և ոչ ի քոյդ զքեզ սփոփել: Ո՛վ դիք սիրելիք մարդկան, դուք յինէն բարձէք զԻպոլիտոս. զի՞պ էհաւատալն, մի՛ արդեօք երազք էին: Ոչ, այլ հաւաստիք ամենեքին: Ո՛վ Իպոլիտոս, կորուսի զքեզ, տեսի զքեզ անկեալ դիտապատս. և պարտ է ինձ կեալ մինչև ինդրեցից զվրէժ քոյին, զոհել սուրբ քոց զանաղորմն Ադրաստ զազատնեալն յարիւն քոյին:

Եւ մինչդեռ Փալաս զայսոսիկ խօսէր, և դիւցազունքն երկոքեան չանային ողբել զվիշտս նորա՝ ահա գուցէ ի զայրանալոյ ցաւոցն անաղդականք սպէղանիքն լինէին, և ահա եաես նա զՏէլեմաք առ իւր: Ի սկզբան անդ սիրտ նորա՝ յերկոցունց ներհակակիր կրից կոծեալ տատանէր. մեթէ՞ լեալ ի սրտի նորա որ վասն անցելոյն անցելոց ընդ Տէլեմաք և ընդ Իպոլիտոս եղբայր իւր, և վիշտ կորստեան եղբօրն յաձախէր զողորմութիւնն զայն. բայց և զկեանս իւր ճանաչէր պարգև Տէլեմաքայ՝ որ փրկեացն զնա վիրաւից և կիսամեռ ի ձեռաց Ադրաստայ: Իսկ իբրև եաես զսափորն սակի՝ յորում ամփոփեալ կայր սիրեցելոյ եղբօրն ածիւն, ինքն յաչացն ուրաց արտասուաց, զեղուս զմարմնոյն Տէլեմաքայ հեղձամղձուկ անբարբառ, և ապա նուաղ ձայնիւ և հեկեկանաք ասէ. Աւրժանաւոր զաւակիդ Ողիսեայ, առաքինութիւն քո բռնադատէ զնա ի սէր քոյին. զուռ ինձ շնորհեցեր զնշխարեալ կեանս իմ՝ որ ահա շինանի. այլ պարզև դերագոյն յոյժ շնորհես ինձ սրտ զաձիւն հարազաւխ՝ որ առանց քո զի անհնազ զեշ անկեալ անգեղց, և հոգի նորա զաւիւքական ափամբք հեք թափառական՝ յանդղբելոյն Փարոնէ ձիայր միշտ մերժեալ: Պարտ էր ինձ այսքան շնորհս տալոցդ տատնել այնմ, զոր մահուչափ առեալ. ահ դիք, դուք ինքնին հատուսնիք գմա, և ի թշուառ կենաց ատի զնա աղատեսնիք: Իսկ զուս զիւցազն պատանդիդ, տուր և ինձ զյեան սպան զոր ետուր խնամս հարազատի, զն անհերի լեցին փառք քո:

Ատաց, և ոգեպատառ նուաղեցաւ յանկնարին ցաւոցն: Իսկ Տէլեմաք կարկեալ կայր, ոչ խնկելով բարբառել. մինչև ոպ անգրկն ի նուաղմանէն առեալ Փալատայ՝ ընկալաւ զսափորն ի ձեռանէ նորա, և համբուրելով զայն սակաւ, և յարտասուս իւր թանալով, ասէր. Աձիւն պատուական, ընդ խղ՝ զի և խնս ընդ քեզ խառնեսցի ի սափորիդ: Սուրբդ Իպոլիտոս, գամ զհետ ձեր ի սանդարամատս. զերկոցունցս իսկ խնդրեսցէ Տէլեմաք զվրէժ:

ՖԵՆԵԼՈՆ. Տիլեմաք:

ԳԵՏՆԱԴԱՄՐԱՆՔ

Սա՛ի ելանել Աստպետանն արահետ՝ ուղղեցի զոտս իմ ի վերին Կեկիլիայ Մետելլայ, ի հրաշակերտն գեղով և մեծվայելչութեամբ: Եւ իբրև անցանէի ընդ դաշտսն ա. ժայացեալս, տեսի զբազմութիւն մարդկան սղղրելոց ի սուրերի, և ի միում վայրի անհետացելոց յաչացս: Շարժեալ ի հետաքննութենէ՝ յառաջ մատեայ և մոի աներ. կիւղ յանձաւն՝ ուր տեսի զնտորասուզել սուրերացն խորհրդականաց, և ահա բացան առաջի իմ գաւիթք սուրերկրեայք՝ յաղօտ լուսոյ կանթեղացն պայծառացեալք: Եւ էր տեսանել ի վերայ որմոց տխուր սրահիցն զերկքակարգեան դագաղս եդեալս ի վերայ միմեանց: Տխուր լոյս կանթեղացն սփռէր ընդ համարան, և ընդ երկայնութիւն գերեզմանացն յամր շարժելով, ահաւոր ինն շարժուն արկանէր զերջոքն որ անշարժք են ցյաւիտեանս: Ի զուր ուշի ուշով

ունկն դնէի լսել ձայն, և ընդ այն ուղղել զոտս իմ ընդ անդնդայինն լռութիւն. և ոչ ինչ այլ լսէի՝ բայց զբաբախել սրտիս ի բացարձակ յայնմ միայնութեան: Կամէի դառնալ յետս, և ահա ոչ ևս էր ժամանակ. մուի ընդ թիւր ինն Ճանապարհ, և փոխանակ էլանելոյ ի դէպա-լեան սեղջոյնն՝ առաւել ևս միջամուտ եղէ յայն: Եւ յաւելոյր տագնապ սրտիս՝ յորժամ Ճանապարհք նորանորք և խաչաձևք էլանէին ինձ ընդ առաջ. և որչափ բուռն առնէի անձին գտանել զուղիղ Ճանապարհն՝ այնչափ առաւել մոլորէի. էր ոչ յամրաքայլ երթալի յառաջ, և էր ոչ անցանելի արագութեամբ, և ի ձայնէ արձագանգաց՝ որ կրկնէին զքայլս ոտից իմոց, համարեի պնդել ուրուք ոչնչի հետացս՝ հասանել առ իս:

Եւ իբրև զբաղում ժամս մոլորեալ չքնէի, նուաղէր սիրտ իմ, և նստէի ի մնաւոր կիզս ուրեք Ճանապարհաց ի քաղաքի անդ մեռելոց: Տագնապէր սիրտ իմ ի տեսա-նելս զոյս լապտերաց մերձեալս ի շիջանել: Եւ ահա ձայն ինն նուագաւոր նմանեալ երգոց երկնաւոր զօրաց՝ լսելի լի-նէր ի խորոց գերեզմանական բնակութեանցն: Այն ձայնք աստուածայինք մերթ լսէին և մերթ միւսանգամ լինէին լսելի. և թուէին առաւել ինն առնուլ դաշնակութիւն յան-ցանելն ընդ բազմապատիկ Ճանապարհն ասորերկրեայս: Ցոյն կայեալ ընթացայ ի վայրն ուստի լսելի լինէին ձայնքն հրապուրիչք, և գտի սրահ մի լուսաւորեալ լուսով: Անդ ի վերայ ծաղկազարդ շիրմի մատուցանէր Մարիէլ լինոս զնուագս քրիստոնէից. և օրհոցդք ծածկեալք ի քօղ սպիտակ՝ երգէին առաջի խորանին, և մեծ բազմութիւն մարդկան գումարեալ էր առաջնկայ գտանել մատուցման զոհիցն: Ցայնժամ գիտացի եթէ ի գեհենադամբանս եմ: Վաղվաղակի միանգամայն հասա ի վերայ իմ ամօթ, ապա-շաւ և զգաստութիւն: Տեսիլ աքանչելի: Թուէր ինձ տե-սանել ի բազմութեան անդ զկայսրուհին և զդուստրն նորա խնարհեալս ի վերայ ծնգաց, և առ ընդեր ունկնալով զՎո-րոթեոս և զԱեքատեհոս: Ոչ տեսին երբէք աչք մահկա-

նացուաց տեսիլ առաւել աքանչելի քան զայս. և ոչ պաշտօն առաւել արժանաւոր ընծայեցաւ երբէք Աստուծոյ, և նա չեցոյց երբէք այնչափ յայտնութեամբ զմեծութիւն իւր: Զկնի մեծ է զօրութիւն կրօնիցս՝ որ զՀարան իշխողին հնա-մայեցաց ստիպէ Թողուլ ի ծածուկ զառագաստն սրբոյ-նական, իբրև զկին մի պառնիկ, և ընթանալ գիմել ի ժո-ղովատեղն Թշնաւառացելոց, երթալ խնդրել զԲրիստոս ի վերայ սեղանոյ անշնաին ուրուքն վկայի, ի մէջ գերեզ-մանաց և ի մէջ մարդկանն՝ հալածելոց և արհամարհելոց: Մինչդեռ խորհէի զայսոսիկ, և ահա տեսի զմի սեն ի սար-կաւագաց խոնարհեալ յոտինն քահանայապետին, և ասե-լով բանս ինչ ի ծածուկ. և տուաւ նշան. և ահա լսեցին երգք, շիջան կանթեղք, և տեսին այն գեղեցիկ վերացաւ յաչաց իմոց: Մղեալ իբրև յալեաց ի ժողովրդենէ անտի սրբոյ՝ գտանէի զիս առ դրան գեհենագամբանացն:

Շադոպրիան. վ կայք:

ՄԱՀ ԳԵՐՄԱՆԻԿԵԱՑ ԵՒ ԴԱՐՁ ԱԳՐԻՊՊԻՆԱՑ Ի ՀՌՈՎՄ

ԲԵՐԵԼՈՎ. ԶԱՁԻԻՆ ԱՄՈՒՍՆՈՑՆ

Եւ յետ սակաւ միոյ վախճանեցաւ (Գերմանիկ) ի սուգ ամենայն բնակչաց գաւառին և շրջակայ ազգաց. լա-յին զնա ժողովուրդք և Թագաւորք օտարք, զի էր նա մար-դասէր յոյժ ընդ նիզակակիցս, հեզահամբոյր ընդ Թշնա-միս, դիմաք և բանիւք ակնածելի. զի գիտէր զմեծութիւն և զծանրութիւն բարձու իշխանութեանն ի չափու ունել, և ի նախանձուէ և ի գոռոզութենէ խոյս տալ:

Ցուզարկաւորութիւն նորա անշուք և առանց պատիե-բայ՝ փառաւորեցաւ գովութեամբ վարուցն և յիշատակաւ առաքինութեանց իւրոց: Էին որք զդէմս նորա և զհասակ, զօրինակ մահուն և զմերձաւորութիւն տեղւոյն՝ յորում

մեռաւն, Ճակատագրի մեծին Աղեքսանդրի համեմատէին։ Զի երկոքեան իսկ գեղեցկադէմք, երկաքանչիւր ազնուազգիք, այն ինչ զերեսամենիւք անցեալ՝ գաւաճանեցան յիւրեանցմէնոցն ՚ի մէջ աղգայ օտարաց։ Բայց Գերմանիկ քաղցրաբարոյ էր ընդ բարեկամս, բարեխառն ՚ի ցանկականին, չատացեալ միով հարսանեաւք, և հայր օրհնաւորեալ եւեթ զաւակաց. սակայն և ոչ ընդհատ ՚ի նմանէ պատերազմող, թէպէտ և ոչ իբրև զնա քաջայանդուգն, թէպէտ և խոհականեալ ՚ի նուաճելոյ զԳերմանիա յետ հարկանելոյ զնա բազմապատիկ յաղթութեամբք։ Եթէ ինքնիշխան էր և անուն և իրաւունք Թագաւորի էին նորա, վասն և հաւասարեալ էր դիւցազնին այնմիկ ՚ի փառս զնուաց, ո՛րում գթութեամբ և բարեխառնութեամբ և այլովքն եւ առաքինութեամբք քաջ ՚ի բաց գերազանցէր։ Մարմին նորա չէ այրեցեալ՝ եդաւ մերկ ՚ի հրապարակի քաղաքին անտիոքացւոց, ՚ի տեղւոջ՝ ուր Թագելոցն էր։ Հաւատացիք մահադէպն ոչ յայտնի երեւեցան ՚ի նմա. գութ ընդ նա, և կանխակալ կարծիք հակառակ կամ նպաստաւոր Պիսոնի, ներհակախոհ զայնմանէ եաւն գտաստան։

Խորհուրդ արարին փոխանորդք ընդ առեղակալն՝ որ էին անդ, վասն կացուցանելոյ զոք ՚ի վերայ Այորւոց. և յերկբայս եկաց խնդիրն ընդ Վիբիոս Մարսոս և ընդ Կն. Սենտիոս, զայլսն համառօտիւ անցեալ, յետոյ ապա տեղւոյ եա Սենտիոս՝ Վիբեայ, որ երիցագոյն էր հասակաւ և հզօրագոյնս հետամուտ իշխանութեանն։ Էր ՚ի քաղաքի Մարսիլիա անուն անուն կին դեղատու չարահամբաւ, սիրով սիրեցեալ ՚ի Պլանկինայ՝ Սենտիոս յղեաց զնա ՚ի Հռոմ ըստ խնդրոյ Վիտելլիոսի և Վերանոսի և այլոց բարեկամաց Գերմանիկեայ, որոց վաղ իսկ զբոզոք և զամբաստանութիւն պատրաստեալ էր ընդդէմ նորա որպէս ընդդէմ յայտնի մահապարտի։

Ագրիպպինա թէպէտ և ՚ի սուգ համակեալ, թէպէտ և խօթ, սակայն չհանդուրժեալ յամելոյ վրէժխնդրութեան՝ եւ՚ի նաւ, առեալ ընդ իւր զաճիւն Գերմանիկեայ և զորդիս իւր։ Ամենեքեան կարեկից լինէին նմա, զի տիկին վհչ յազգէ, ոչ ՚ի բաղում ամաց լինչ հարանեցեալ երջանկագոյն հարսանեաք, շուրջ պատեալ ՚ի սպասաւորիւաց և ՚ի մեծարանաց, բարձեալ բերելով արդ զմխիթ վաղամեռիկ առն իւրոյ ոչ աներկիւն ընդ հատուցումն արդարութեան, հոգ ՚ի մոլի ընդ կեանս իւր, և հէք վասն բեղնաւորութեան իսկ իւրոյ՝ որով առաւելագոյն կայր ՚ի վտանգի արկածից բախտին։

Այսանդ ձմերայնոյ խափան լինչնաւարկութեանն Ագրիպպինայ արկանելոյ՝ եհաս նա ՚ի Կորկիւրա կղզի, որ կայ հանդէպ Կալաբրիոյ. և եղև անդ զաւուրս քանի մի, սփոփել յանհանդուրժելի տրամութենէն։ Ի լուր գարձի նորա, մտերիմ բարեկամք և զօրականք՝ որք զննուօրեանն էին Գերմանիկեայ, և անծանօթք իսկ բազումք ՚ի մերձակայ քաղաքաց, հէնք առ ՚ի հաճել զԿեսար, և յոգունք ևս նոցին հետևեալ, գիմեցին ՚ի Բրունդուսիոն, ուր մեծագոյնն էր և ապահովագոյն մատոյց նաւաց ՚ի ցամաք։ Ընդ երևեալ նաւատորմին ՚ի հեռուստ՝ ոչ միայն նաւաշանպիտ և ծովեզը, այլ և պարիսպք և տանիք և ուստ ուստեք նչմարեր ծով, ծածկեին յամբոխ՝ որք ՚ի սուգ տրամութեան հարցանէին միմեանց, լսելեաւն թէ տղտղակաւ ցնծութեան ընդունել զեհաւորն։ Եւ մինչդեռ խորհէին տրպէս հիւրընկալել զնա, մատեաւ նաւատորմին մեղմով ՚ի նաւահանգիստ անդր, ոչ զուարթ թիավարելով ըստ սովորութեան, այլ սուգ ամենեին ազդելով։ Եւ յիջանել նորա ՚ի նաւէ անտի ընդ երկուս որդիս իւր, աչք ՚ի խոնարհ, բարձեալ բերելով զապիորն ածիւնահիւր, բարբառ հեծեծանաց յամենեցունց լսել լինէր, և ոչ զղդակահաց կամ զօտարաց, զարանց կամ զկանանց մարթ էր խարել զոլբս. բայց միայն զի ուղեկից Ագրիպպինայ յերկայն տրտմութենէն պարտասեալ էին, իսկ ընդ առաջ ելելոցն սատակագոյն էր նորոգ տրտմութիւն։

Տիբերի կրկին գունդս առենակալս յղեալ էր, պատուէր տուեալ ասպանութեան Կալաբրիոյ, Ապուլիոյ և Կամպանիոյ մատուցանել յիշատակի եղբօրորդւոյն սպաս մե-

ծահանդէս: Ջաճիւն նորա ուսով բարձեալ բերելին հա-
զարապետք, և յառաջոյ գնային զրօշք անշուք և խուրձք
գլխիվայր: Յանցանելն նոցա ընդ քաղաքս գաղթականս՝ ժո-
ղովուրդն ոգաղդեաց և ասէին, 'ի ձև յաղթականն ըստ
Հռոմէացեան վայրացն, այրելին ձորձս և խոշնիկս անուշունս,
և որ այլ ինչ նուիրի մեռելոց 'ի սպաս: Բնակիչք քաղաքաց
իսկ արտուղեաց գային ընդ առաջ, բազինս կանգնելին, մա-
տուցանէին զոհս դիցն ուրուականաց, և զսուգ իւրեանց
արտասուօք և կականաւ յայտ առնէին: Դրուստս մինչև 'ի
Տէրբաիինա էին ընդ առաջ ընդ Կլաւդեայ եղբօր Գերմա-
նիկոսի, և ընդ որգիս նորա որ կային 'ի Հռոմ: Մ. Վալե-
րիոս և Կ. Աւրելիոս բդեաշխ վաղ իսկ մտեալք 'ի պաշտօն,
ծերակոյտն և բազմութիւք յոյժ 'ի ժողովրդենէ դիմէին ի
Ճանապարհ անդր խառն 'ի խուռն, ողբս առեալ իւրաքան-
չիւր ոք առանձինն, չէր անդ տեղի մարդահաճութեան,
քանզ գիտելով ամենեցուն զինդութիւն Տիբերի 'ի՝ սրտե
ընդ մահ Գերմանիկեայ, թէպէտ և թագուցանէր նա զայն:

Տիբեր և Աւգոստոս չերևեցան արտաքոյ, անարժան
համարելով վհատութեան իւրեանց առաջի ամենե-
ցուն ողբալ, և կամ զի մի գուցէ 'ի զնին աչաց ամենե-
ցուն 'ի յայտ գայցէ ողբոյն ստութիւն: Իսկ յաղագս Ան-
տոնեայ մօր Գերմանիկոսի չգտանեմ՝ ինչ առ պատմագիրս
և ոչ յօրագիրս, զի երևեալ էցէ նա ուրեք յերևելի ինչ
պաշտաման, ուր ընդ Ագրիպպինայ և Դրուսոսի և Կլաւ-
դեայ յիշատակին յանուանէ և այլ ազգականք: Թէրևս
առ խօթութեան արգելեալ կայր նա առանին, և կամ առ
վշտին չՀանդուրժէր կալ 'ի զնին գառնութեան աղետիցն:
Այլ ինձ հաւանելի ևս Թուի, Տիբերի և Աւգոստեայ կա-
լով յարքունիս՝ կալեալ և զնա անդ յակամայս նորա. որ-
պէս զի հաւատարեալ ընդ նմա 'ի սուտ, մօրն օրինակաւ՝
արդարացի հանցին և հօրեղբօր չերևել արտաքս:

Օրն, յորում ածաւ աճիւն Գերմանիկեայ 'ի հերիմն
Աւգոստեայ, մերթ 'ի խոր լռութեան և մերթ յողբս և 'ի
հեծութիւնս էանց: Փողոցք քաղաքին լի 'ի խառնէ, և

ջահք բիւրաւորք ընդ դաշտն Աւրիսի բորբոքեալ· զօրականն
'ի զինս, աւագանին մերկացեալ զօրէնս պատուոյ, ժողո-
վուրդն կարգեալ ըստ ցեղից, դոչէին. Անկաւ ընդ Գերմա-
նիկեայ հասարակապետութիւնն, չէք ոչ ևս նմա յոյս
կանգնելոյ: Որպէս զի 'ի սատկութենէն և 'ի համարձա-
կութենէ բողոքոյ նոցա Թուէր ոչ ևս յիշել նոցա զառաքս
իւրեանց: Սակայն ոչ ինչ այնպէս կարեվէր եհար զՏիբեր,
որպէս զգուէթ և զմիծաղանս ժողովրդեան ընդ Ագրիպպի-
նա. զի կոչէին զնա փառս հայրենեաց, հարազատ արիւն
Աւգոստեայ, միակ նախատիպ նախնեացն առաքինութեան:
Եւ զաչս 'ի վեր ամբարձեալ հայցէին 'ի գից պահպանել
զորդիս նորա, և երկարակեացս առնել զնոսա քան զկա-
լածիչս նոցա:

ՏԱԿԻՏՈՍ · Ցարևգիրք:

ՅԱՐՁԱԿԵԼ, ՆԵՐՈՒԵՆՆՅՆ Ի ՎԵՐԱՅ ԲԱՆԱԿԻՆ ԿԵՍԱՐՈՒ
ԵՒ ԱՐԿԱՆԵԼ, ՇՓՈԹՍ Ի ՆՄԱ

Ի նմին ժամանակի այրուձին մեր և մեկնազէն հետևա-
կամարտք, զորս ընդ առաջին վանեալան 'ի յարձակմանէ
Թշնամեացն լինել ասացաք, միանգեւ 'ի ձամբարն ապաս-
տան գային, Թշնամեացն պատահէալք՝ անդրէն ընդ այլ
կոյս փախուստս խնդրելին, և ռամիկսպառք զօրականին՝ որ
'ի յեակոյս դրանէ ձամբարին և 'ի գլխոյ բլրոյն տեսին ըզ-
մերան յաղթողս անցեալս ընդ գետն, եբեալք 'ի դուրս յառ
և յապուռ, իբրև զազանս հայեցան, և զթշնամիսն 'ի բա-
նակս մեր տեսին երթևեկեալ շտապ շտապաւ 'ի փա-
խուստ աճապարելին: Անդէն և որոց զկարասին բարձեալ
գային՝ եղանէր աղաղակն և մանչևուն, և այլք այլոյր զար-
հուրեալ խուճապելին: Յայսմ ամենայնի խառնեալ այրու-
ձին Տրուվիրեան, որոց առ գալ իւրեանց նշանաւոր է համբաւ

քաջութեան, և՛ ի քաղաքէն՝ ի Թիկունս առաքեալ եկեալ էին առ Կեսար, իբրև տեսին զբանակեալսն մեր լցեալ՝ ի խռանէ Թշնամեաց, զգունդսն հարստահարեալս և զրեթէ պաշարեալս, ամփոփապաքն՝ հեծեալք՝ պարսաւարս Նուաստիգոյեցիք այսր անդր ցրուեալ և ընդ բնաւ կողմանս հեղեալ՝ ի փախուստ, յուսահատ եղեալ՝ ի մերոց իբացս՝ խաղացին գնացին՝ ի տուն, պատմեցին՝ ի քաղաքին, Թէ Հռովմայեցիք վանեալ գձձեալ՝ ի պարսուրեթիւն մատնեալ, և Ճամբար նոցա և կարասին՝ ի բուռն անկեալ Թշնամեաց։

Կեսար, յետ սրտաւնդելոյ զգունդսն տանկերորդ՝ ընթացեալ յայլ Թևն, իբրև եռես զի իւրքն նեղեալ տագնապին, և ամենեցուն՝ ի մի վայր յարձակելոյ՝ երկոտասան գնդին զօրականք խռնեալ կուտեալ՝ խափան լինէին միմեանց՝ ի կռիւ, ամենայն հարիւրապետաք գնդին չորրորդի կոտրեալք էին, և նշանակիրն կորուսեալ զնշանն՝ ինքն սպանեալ, այլոց ևս խիճին գրեթէ ամենայն հարիւրապետաք՝ էր որ վիրաւոր, էր որ սատակեալ, ընդ որս և նախաշաւիղն Պ. Սէքստիոս Բաքուլոս այրն կորովի, բազում և հասարոյ վիրօք հարեալ՝ մինչ չզօրել յոտին կալ, և այլքն յուսացեալ. և ոմանց՝ ի նորամուխ գաւաւիք եղեալ՝ ի կռուոյն ելանելին և՛ ի զինուց խուսափիլին. Թշնամիք՝ ոչ՝ ի գիմաց կուսէ՝ ի սաստիկ գագարելին գիմել, և ոչ յերկոցունց կողմանց. յաջմէ և յահեկէ՝ ի վերայ երթալ, և յանձկի և՛ ի կարաւոլ կայր գործն, և չզոյր ուստեք օգնութիւն առաքելոց, անդէն՝ ի նորամուխ անտի զմիոյ զինուորի զվահանն հանեալ, — զի ինքն առանց վահանի էր անդր եկեալ, — ընթացաւ յառաջին Ճակատն. և յանուանէ ձայնեալ զհարիւրապետան, և առ այլ ոմանս խրախոյս հարեալ, գրոհ տալ միահամուռ հրամայեալ էր, և զձկատան անօսրել, զի գիւր լինիցի սուր՝ ի գործ արկանել։ Նորա գալստեամբն խրախուսեալ զբուն և՛ ի յոյս արծարծեալ, զի իւրաքանչիւր ոք և՛ ի տագնապի իւրում չանայր գուն գործել առաջի զօրագլխին, հաճանչեցաւ փոքր մի Թշնամեացն բանութիւն։

ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ. Ճիշտ ակարանք։

ՀՌՈՄԻԶԴ ՀԱՂԱԹԻ ՅԻՒՐՈՑՆ. ԶՆՈՒԲԻԱ ԿԻՆ ՆՈՐԱ ԽՈՑԵԱԼ.

Ի ՆՄԱՆԷ ԿԱՐԵՎԻՐ, ՓՐԿԻ ՄԱՋՊՈՒՐ

Ոչ յայլ ինչ գոյր Հռոմիզդայ ապաստանել, բայց յեռագութիւն երիվարացն՝ որ զերծուցին զնա հանգերձ կնաւն։

Բայց կին նորա յոլ էր. և խակզբան անդ յերկիւղէ Թըշնամեաց, և վասն սիրոյ առն իւրոյ բուռն արար անձին առ Ժամն՝ ի փախուստ. այլ ապա յանդգնաբար արշաւասոյր ընթացից անտի ձգաեալ ընդերացն՝ ապերս արկանէր առն իւրում, փրկել զնա՝ ի Թշնամեաց գերութենէն ոչ անփառունակ մահու։ Գիրկս արկանէր նմա Հռոմիզդ, սփոփէր զնա և քաջալերէր զառաջինն. մերթ ընդ առաքինութիւն նորա զարմանայր, և մերթ կասկածէր Թէ գուցէ՝ ի ճնալն կենդանի՝ անկցի՝ ի ձեռս այլոց, յետոյ ապա ձգէ զառաջս, հարկանէ զնա, և ձգեալ յերդ Երասխայ, սւան զե գետոյն՝ զի մի և գիտակն նորա բարձցի յուժեքէ. իսկ ինքն ձիաթափ հասանէ՝ ի վիրս՝ ի հայրենին իւր Թագաւորութիւն։ Բայց Զենոբիա, զի այս անուն էր կնոջն, հեղնիկ ծփանօք ընդ եզերս գետոյն ածի յայնկոյս, զկինսդ ընդդէմ եւս բերելով զնշանակ։ Զոր տեսեալ հովուացս, և՛ ի վայել չգիտենէ գիմոյ նորա ծանուցեալ՝ զի չէր յաննշանից ոք, առեալ պատեցին զվերս նորա, արկեալ՝ ի վերայ ըստ գեղջկից հայթայթանաց ապեզանիս. և լուեալ զանուն նորա և զանցս, ածին զնա յԱրտաշատ։ Եւ անտի հասարակաց իմաստիւք ածաւ առ Տրդատ, և սիրով՝ ի նմանէ ընկալեալ յանձանձէր գշնոյսաբար։

ՏԱԿԻՏՈՍ. Տարեգիրք։

ՊՈՒԼՓԻՈՆ ԵՒ ՎԱՐԵՆՈՍ, ՄԻՄԵԱՆՑ ՈՍՈԽՔ, ԻՐԵՐԱՑ ՆՊԱՍՑ ԼԻՆԻԼ Ի ՄԱՐՏԻ

Լ֊ին ՝ի գնդի անդ ալք քաջք հարիւրապետք երիւ֊ յառաջադէմք ՝ի վերագոյն կարգս, Տ. Պուլփիոն և Լ. Վա֊ րենոս: Այնպատս հակառակութիւն էր ՝ի մէջ նոցա՝ ո քան զո նախապատիւ լիցէ, և զամենայն սմս կագէին զասահիմա֊ նէ օրերիմ գժտութեամբ: Յորոց Պուլփիոն, մինչդեռ մարտ սասրիկ էր զպատնիշքն. Զի՞ կաս, ասէ, վարանեալ, Վարենէ. կամ որո՞ւմ տեղոյ ակնունիս զքաջութիւնդ ցու֊ ցանելոյ. օրս այս գաս արասցէ զմերոյ պայքարայ: Զայս ասացեալ՝ ելանէ ըստ պատնէշն ՝ի դուրս, և յոր կոյս Թան֊ ձրախուռն երևէին Թշնամիք՝ անդր արշաւէ: Եւ ոչ Վարե֊ նոս յայնժամ մնայ ՝ի պատնիշին, այլ զանդիտեալ յամ֊ բոխն դառաստանէ, զկնի ընթանայ՝ դոյզն ինչ ՝ի բացուստ: Պուլփիոն արձակէ զաշտեայն ՝ի Թշնամին, և զսին ՝ի խռանէ անտի զյառաջամարտ նահատակեալ՝ հարեալ վիրաւորէ. յորոյ խոցէն և յանշնչանալ՝ վհատնօքն ծածկեալ պահէն զնա Թշնամիք, և ՝ի նա առհասարակ լինին նետաձիգ, և ոչ ոան Թոյլ՝ ընդ կրունկ դառնալոյ: Չարկանի Թափանցանց վհան Պուլփիոնի, և երեքԹևեան մի եռասայլ՝ վարսի ՝ի գօսին: Այս զխոյեալ խոխոչ զպատեանս սուսերին և ՝ի չանալ իւրում ձգել զսուրն՝ արգելոյ զաչն, և պատին անդ զնուաւ Թշնամիք: Ժամանակ նմա ՝ի Թիկունս հակառակորդ իւր Վարենոս, և օգնել վճռեցուսն: Նոյն ժամայն խու֊ ժանն ամենայն Թողեալ զՊուլփիոն դառնան ՝ի սա: Հա֊ մարին զնա խոց վիրաւոր երեքասրիւն: Բայց անդր արագ հասանէ Թրոյն Վարենոս, և ՝ի մօտուստ պատերազմեալ և սպանեալ մի ՝ի նոցանէ, զայլն փոքր մի ընկրկել: Յօժա֊ րագոյնս շահատակեալ անդ, և անկեալ ՝ի խորափիս մի, և ՝ի Թշնամեաց պաշարեալ, հասանէ նմա Պուլփիոն յօգնա֊ կանութիւն, և երիցքին ողջք անարատք, զբաղումս կոտո֊

րեալ, մեծաւ գոլովութեամբ գառնան մտանեն ՝ի պատնէշն: Այսպէս շրջբրջեաց բաղդն զոսոս զերկոսեան ՝ի պայքարի և ՝ի գուպարին, զի միմեանց ոսոխք՝ երբեաց նպատս լինի֊ ցին, և ոչ հնար լիցի ընտրել՝ ո՛ քան զո նախամեծար Թուի֊ ցի քաջութեամբ:

ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ. Յիշատակարանք:

ԿՈՐՆԵԼԻՈՍ ՇՈՒՐՋ ՏԵՍԱՆԵԼԵԱՑ ՍՈՒՏԵՐԱՄԱՐՏԻՑ ԵՒ ԲԻՐԱՒՈՐԱՑ ՓԱԽՍՆԱՅԻՈՑ ԿՈՐՆԷԼ, ԸՆԴ ՆՈՎԱՒ ԿԱՄ ՎԻՐԱՒՈՐԵԼ

Այս բդեշխութեամբ Մ. Լիկինեայ և Լ. Կալպուրնեայ արկածք իմն յեղակարծ պատահեցին, հաւասարք ազեակից ահագին պատերազմայ, ՝ի միում վայրկեան ժամանակի սկսեալ և կատարեալ: Աւելիսս սին, ՝ի ձերբազատ զարմ սերեալ, կառոյց մերձ ՝ի Փիլիպոս շուրջ տեսանելեաց տե֊ ղիս՝ առ ՝ի հանդէս ածել անդ զտեսարան սուսերամարտից, այլ ոչ հաստահիմն զայն պատրաստեալ, և ոչ զպահանդս փայտակերտիցն քաջ ամրացուցեալ. զի ոչ յառաջագոյն նուաթենէ, և ոչ ՝ի փառասիրութենէ հնոցս ունելոյ առ ժո֊ ղովրդեան, այլ յանարգ հաճախրութենէ եկեալ էր յայն: Անդր գունդագունդ դիմեցին զբօսասէրք, առ ինքնակալու֊ թեամբն Տիբերի յայսպիսեայ զբօսանաց վերնեալք, որք և կանայք յամենայն հասակէ, առաւել ևս վասն մերձաւո֊ րութեան տեղոյն, վասն որոյ ծանրագոյն եղեն ազէաքն: Ծայրալեր ՝ի խռանէ շինուածն մեծ, լուծեալ անկաւ ներ֊ քոյ և արտաքոյ, և զանթիւ բազմութիւն մարդկանն՝ որ զբաղեալ էին ՝ի տեսիլն և որք անդ շուրջն կային՝ արկ ընդ իւր համակործան և ընդ աւերակաքն ծածկեաց: Որք մի֊ անգամ անդէն և անդ փչեցին զոգիս, զերծանն՝ որպէս ՝ի հանդոյն աղէտս մարթ իցէ՝ ՝ի չարատանջ մահուն տառա֊

պանաց. Թշուառագոյն այնոքիկ գաղան, որ խելագար և կատղեալք՝ ոչ զրաւեցան ի կենաց. որք ի առաջ յերեսաց և գիշերի ի հեծեծանաց զկին և զորդիս իւրեանց Ճանաչէին: Վասն և այլք ի գոյժ չարեացն անդր հասեալք, էր որ զեղբայր իւր, էր որ զազգական, և էր որ զծնողս իւր ողբայր: Նոքին իսկ, որոց բարեկամք և ազգականք վասն այլոց երդս երթեալ էին, չէին զերծք յերկիւղէ. զի չէ ծանուցեալ ոչք ոմանք չարեալ էին յարկածիցն, առաւելագոյն խելթք կատաղանաց յաճախէին զարհաւիրս:

Իբրև սկսան զաւերական պեղել, խուռն ընթանային ամենեքեան ի վերայ անշնչացեալ մարմնոց՝ դիրկս արկանել նոցա, համբուրել զնոսա. և ոչ սակաւ անդ վէճք լինէին վասն որոց եղծեալ էր կերպարան, և որոց գէմք և ակք երկայնէլն առնէին զճանաչումն: Ցիսուն հազար ոգիք գաղան անդ ընդ խելագալ և ընդ ձնձեալ. և ծերակոյտն եւս վճիռ մի ևս ունէր, որոյ չիցեն հասք ամի ամի չորեքտարեաց հազար սեռասերտից, զսուսերամարտ ի հանդէս ածել, և մի շուրջ սեռասնեղեալս կայս կառուցանել՝ առանց հաստատուելեան տեղւոյն այց և ինդիր լինելոյ: Ասիկնոս վարեցաւ յայսոսիկ. և անկելոյն ընդ յեղակարծ արկածիւն՝ բացան տունք ազատարուն, և վիրաբոյժք և սպեղանիք ամենեցուն մատուցան: Եւ թէպէտ տիրատեսիլ յաւուրսն յայնոսիկ էր քաղաքն, այլ զնախնի որերոյ բերեր զնմանուելիւն, որք յետ մեծաց պատերազմացս առատաձեռն խնամովք դարման վիրաւորացն մատուցանէին:

ՏԱԿԻՏՈՍ. Յարեցիրք:

ՀԱՆԱՏԱՄԱՐՏՆ ՓՐԻՊՈՒՐԿԱՅ

Օ՛ն ակնկատոյց լեալ յառեցէք այսր զաչսդ. ահաւասիկ ոգոյն իմն պատրաստի ինչ քան ի Ութսուն ընդդէմ ի-

խանիս. և ի փորձ հանդիսի քաջութեան առաքինութեան նորա՝ հանդերձի պատերազմ, սպառել թափել զամենայն հնարս իւր և զամենայն զօրութիւն: Զինչ այս եղեւ որ աչացս լինի յանդիման. չէն մարդիկ և եթ գոլամարտ խմբեալք ի պատերազմ, այլ՝ լերինք անմատոյցք, այլ՝ խոխոջք և վախք ասի, և անսի անտառ անանցանելի, որոյ յատակ իւր ձահիճ, և յետուստ կուսէ վտակք ջուրց, պատնէշք նշանակերպք. ընդ ամենայն տեղիս ամուրք բարձրացեալք, և մայրիք հարեալք ընկեցեալք յանցս ոսկալի ճանապարհաց, և ի միջի անդ Մէռոսի իւրովք ախոնայարձակ նահատակօքն պատերացովք՝ փքացեալովք ընդ այնքան յաջողութիւնան և ընդ առուն Փրկարարիչ. Մէռոսի՝ զոր ոչ որ եռաս ընկրկեալ ի մարտս, Մէռոսի՝ զոր իշխանն Գոնաէի և արքունն Թիւռէն՝ ոչ երբեք ըմբռնեցին յանդգնասս ի զէնջի օրինաց մարտի, և զվկայութիւնս զայս մեծ՝ եռուն նմա, թէ չիք նորա քնաւ կորուսեալ և ոչ վայրկեան մի օգտատատոյց, և միշտ կանխեալ կալեալ զաւաջս ուշոյ նպատակի իւրեանց, որպէս թէ անդէն իսկ ի խորհուրդս նոցա գտեալ:

Արդ ասասիօր զաւուրս ուխտ, և ի ջորս այլ և այլ ձառկասս, որ ինչ մարթի է կրել և գործել ի պատերազմի՝ ի վեր երևեցաւ: Զօրք մեր՝ վատթարեալ թուին յընդդիմամարտութենէ թշնամեաց և յահագին խոժոռութենէ վայրացն, առ ժամս ինչ դոզ իբրև լքեալ եռաս զանձն իշխանին: Այլ իբրև զմիւս ոմն Մակաբէ, բազուկ իւր ոչ եթող գնա, և սիրտ իւր արի՝ սրամտեալ ընդ այնքան վտանգս եկին և հաս յօգնականութիւնն իւր: Իբրև այն ինչ տեսաս նա միջամտիս արշաւեալ նախ հեծելոյս ընդ գԺուարամատոյց բարձունսն, եռանդն իւր ձգեալ տարաւ անդէն զամենայն զկին իւր: Տեսանէ Մէռոսի զկորուստ իւր առ դուրս. ընդ որ ընթերք գնդից նորա կան բեկեալ, զմեացորդս բանակին ապրեցուցանէ գիշեր: Բայց յաւելցին ի վերայ և սասկի անձրևաց հոսանք, զի լիցի մեզ ամենայն արութեամբ և արուեստիւ՝ միանգամայն ընդ բոլոր բնութեան մեզ

մարտ: Թէպէտ և պարծանս ինչ կալցի Թշնամին Ճարտար և քաջայանդուգն, Թէպէտ և յահաւոր լեառն ուրեք պատնէշ ածեալ վերստին պատապարեսցի, յամենուստ հալածեալ՝ Թողեալ յաւար Սեպհին Անկիւնին ոչ միայն զրբմբաձիգ անօճս իւր պատերազմականս և զաղխս իւր, այլ զկողմանս Հայոց:

Տեսէք զնարդ գոլոյդ ամենայն. Փիլիպպուրիկ՝ յաւուրս ոտն յոգիս ապատան կայ, Թէպէտ և ձմեռն ի վերայ կայցէ: Փիլիպպուրիկ՝ որ երկայն ժամանակաք գերի կալաւ զՀռոմոս ընդ մերով օրինօք, և զորոյ մեծն Թագաւորաց այսպիսի փառաք կանգնեաց զանկումն: Վռոմս, Սփիս, Մայանս, Լանատ, այլ ևս քան քաղաք անուանի՝ բանան զգրուհան. Մէհսի ոչ բաւէ պահպանել զնոսա, և ոչ ևս երևի առաջի յաղթողին իւրոյ:

ՊՈՍԻՒՍ. Դամբանականաւք:

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԳԵՐՄԱՆՆԱՑԻՈՑ Ի ԿԵՍԱՐԻ

Կեսար՝ իբրաքանչիւր գնդի մէն մի եռեղակաւ և գանձապահ կարգեաց՝ լինել նոցա ի վկայս առն առն իւրաքանչիւր քաջութեան: Ինքն յաջոյ Թևոյն, սկիզբն արար մարտին, զի զայն կողմն Թշնամեաց ոչնչ պնդակազմ տեսանէր: Ի սակ նշանին՝ մերքն գաղանաբար յարձակեցան ի Թշնամին: Անդ յանկարծուստ արագապէս յառաջ զեռեալ խազացին Թշնամիք՝ չհողուզ մեզ տեղի բաւական արձակնկէց ի Թշնամի անդր լինելոյ: Յայնժամ մերքն զաշտէն ի բաց ընկեցեալ՝ սուսերօք մօտ ընդ մօտ մաուեան ի կռիւ: Բայց գերմանացւոց անդէն և անդ ըստ սովորութեան ասպարափակ արարեալ զգուշարանին, զդէմ կալան սուսերացն բռնութեան: Բազումք գոան ի մերմէ զօրականէս, որոց ի սպարափակ անդր ոստուցեալ և զվահան ի ձեռացն կորզեալ՝ հարկանէին ի վերուստ: Իբրև Ճակատ Թշնամեացն ի ձախակողմ Թևոյն վանեալ և ի փախուստ գարձեալ լինէր, յաջակողմ Թևոյն բազմութեամբ իւրեանց զմեր Ճակատն անհնարին տագնապէին: Զայն տեսեալ պատանին Պ. Կրասոս՝ որ սպարապետն էր հեծելազնդին, քանզի պատրաստագոյն էր քան զորս ի ռազմին կային, զՃակատն երրորդ ի Թիկունս արձակեաց մերոցն վտանգելոյ:

Զօրացաւ այսպէս պատերազմն, և Թշնամիք առ հասարակ Թիկունս գարձուցին, և փախեան անդադար մինչև հասին ի Հռենոս գետ՝ քայլս իբրև չիսուն հազար ի տեղւոջէ անտի: Անդ նուաղուցնք ոմանք՝ կամ յոյժ իբրեանց յուսացեալք անկան ի լոզ անցանել յայնկոյս, կամ գըտեալ մակոյկս զիրկուԹիւն անձանց հայԹայԹեցին: Ընդ սոսին և Ուրիովիստ գտեալ նաւակ մի կապտեալ կեզը գետոյն, փախեաւ նովաւ. զայլսն՝ ի վերայ հասեալ մերոյ զայրուձիոյն՝ կոտորեաց առհասարակ:

ՑՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ. Յիշատակարանք:

ՊԱՏԵՐԱԶՄ ԳԵՐՄԱՆԻԿՈՑՑ ԸՆԴԴԻՄ ԱՐՄԻՆԻՈՍԻ

Բայց Գերմանիկոս հետամուտ լինէր Արմինեայ ընդ առաստաս. և պատեհ գտեալ, զօրահատոյց արար զայրուձին՝ սիրել դաշտին, ուր նայն բանակեալ էր: Արմինիոս հրամայն տուեալ իւրոցն ամփոփել մերձ յանտառն, գարձոյց զնոսա յառաջ խաղալ: Բանակին այն անակնկալ խռովեցոյց զայրուձին. և գումարտակք՝ որ յօգնութիւն նոցա առաքեցան, ձգեալ ընդ գունդս փախստեից՝ յաւելին զխռովութիւնն, և մղեալ վարեին ի Ճախճախուտ անդր ծանօթ յաղթականին, և բազմամատնդ որոց էրն ծանօթ, եթէ էր Գերմանիկեայ ի Ճակատ զնգեցոնս կարգեալ: Որով

ահ անկեալ ՚ի Թէշնամիս, և մերոյն խրախոյս առեալ, մեկնեցան ՚ի միմեանց հաւասար մարտիւ: Եւ խաղացեալ Գերմանիկոս զբանակն յԱմիսիա, և ՚ի նաւահարմ անդր՝ որով ածեալ էր զլեգէոնս՝ գարձեալ զնաւս, մասին հեծելազօրն պատուէր առեալ զափսոքը ովկիանոսի ծովուն հասանել ՚ի Հռենոս: Կեկինա Թէպէա և սեղեակ էր Ճանապարհն ընդ որ զզօրան ածէր, հրամայեցաւ փուլթալ անցանել ընդ երկայն կամուրջն՝ որ ՚ի լայնատարած Ճահիճս անդ լիր երբեմն արկեալ էր ՚ի Լ. Դոմիտեայ. երիվուսանէք աղմուկք էին Թանձրախոզ մօրից և առուոց բաղմավտանգ, և անտառք շուրջանակի զառ ՚ի վեր տակաւ ամբառնային, զօրս յայնժամ Աւրմինիոս եղեալ զօրօք՝ ընդ կարճոյ Ճանապարհ Ճեղընթացս ածեալ զնոսա անդր կանխաժաման քան զզօրս մեր ծանրաբեռնիս գնելոք և կահիւք: Կեկինայ վարանեալ՝ զի հարկ էր նմա և զիամուրջն կիսաւեր ՚ի հնուելենէ նորոգել, և վանել զԹշնամին, խորհուրդ կալաւ հարկանել բանակ առ եւեղ, որպէս զի կէսք ՚ի վաստակն, այլք ՚ի պատերազմ ձեռն արկցեն:

Գունդն գործէին խուժադուժք բեհանել զպահ մեր, և ՚ի վերայ վաստակաւորացն անկանել շուրջանակի ՚ի կողմանց և ՚ի հանդիպոյ: Խառնին աղաղակք գործաւորացն և մարտից, ամենայն ինչ գժպատահ հառնմայեցւոց, տիղմն լպրծուա անկայ ընդ ոտիւք, և զօրք սպառազինք ծանրաբեռնիք՝ որք և ոչ ակընկոէց ՚ի միջոյ Ճահճոյ կարէին լինել. իսկ քերուսկացիք սովորք ՚ի մօրուաս անդ պատերազմել, յաղթանդամք, և նիզակք նոցա երկայնաձիգք հարկանել ՚ի հեռուստ: Մինչդեռ լեգէոնք ընկրկէին, գիշեր զնոսա ՚ի ձախողակ մարտին վերծոյց: Գերմանացիք յաջողութեամբն անխոնջք՝ զուրս ՚ի չքնաղ բլոյոյ ելեալ ՚ի ձոր անդր գարձուցանէին, ուստի հովին ոտղեալ և գործն աւերեալ, կրկնապատկեր զվաստակ զօրականին: Այն քառասներորդ ամ էր Կեկինայ զինուորութեան ՚ի հնազանդել և ՚ի հրամայել, յաջողութեան և արկածից փորձ, նուիրն և անվհեր: Զմտաւ ածեալ որ ինչ գէպք

կարէին տալ, ոչ այլ ինչ իմացաւ հնարս՝ բայց արգելուլ զԹշնամին յանտառի միջէն վերաւորը և գունդք ծանրաբեռնիք յառաջ անցանիցեն: Էր հովիտ երկայնաձիգ ընդ բլուրսն և ընդ Ճահիճս, ուր մարթէր Ճակատ անձուկ յարգարել: Կացոյց անդ զչինգերորդ լեգէոնն յայմմէ, և զահեակն՝ քան և միուսին լեգէոնի ետ, նմա դիմել ՚ի պատերազմ, և սմա զհետ հասանել:

Աչհանգիստ երիուսանէք անցուցին զգիշերն, խուժադուժք ՚ի խրախունս կոչնոյ զուարթ երգովք և ահագին դոչմամբք զատորակայ ձորն և զձայնատուբ անտառս լըռնէին. իսկ առ հաւոմայեցիս հրատք առկայծեալք, բարբառք ընդհատք, և զօրք այսր անդր ընկողմանեալք ՚ի պատնիշն, կամ ՚ի վրանս Թափառականք, չկարէին տալ քուն աչաց քան Թէ հսկիլն: Երաշ անդոհական զարհուրեցոյց զզօրավարն. քանզի Թուէր նմա տեսանել զԿուինտիլիոս Վարոս արիւնաթաթաւ ՚ի լճոյ անտի ՚ի վեր երևեալ, և լսել ձայնի նորա՝ զի կոչէր զինքն, և չլներ լսելի. աչ կարկառէր, և մերժէր ՚ի բաց: Ի լուսանալ առաւօտն, լեգէոնք ՚ի Թևս անդ կարգեալք՝ առ ահի կամ առ հետաքրքրութեամբ՝ զքեալ զկայս իւրեանց, փուլթացան անցին յայնկոյս մօրիցն, և զկայ առին ՚ի գաշտի: Աւրմինիոս Թէպէտ և կարէր անխափան ՚ի վերայ յարձակել, ոչ փուլթացաւ. այլ յընկղմել կարասւոյն խորասոյզ ՚ի տիղմն և յաղմկել զբոյսն շուրջանակի և ՚ի դրօշուն չփոթել կարդաց, զայն ժամ պատեհ համարեցաւ ձայն տալոյ զերմանացւոց ՚ի յարձակումն, յորժամ իւրաքանչիւր ոք զանձամբ պատազեալ՝ ոչ ևս լսէր զօրավարին: Ահա Վարոս, ահա նոյն Ճակատագիր գարձեալ զլեգէոնս մատնէ ՚ի պարտութիւն, ասաց, և ընտրելովք զօրականին պատառեալ ըզազգին, էհար մանաւանդ զձիանն. որք սահեալ ընդ երկրին Ճախճախուտ և արեամբ իւրեանց ոտղեալ՝ կործանէին զվերելեակս, ցանկելիր զհանդիպեալս կացուցանէին և առաքուր կոխէին զնոսա: Աւաւելագոյն ձիգն ՚ի վերայ արծուէնշան զրօշուն գործեցաւ, զոր չէր մարթ ածել

ընդ Թանձրատարափս նետից, և ոչ ՚ի տղմուտն կանգնել
զնոսա: Կեկլինայ, մինչդեռ խրախուսեր զՃոկատան, անկաւ
ձին ընդ նովաւ, և ինքն յերկիր կործանեալ պաշարէր ՚ի
Թշնամեաց, եթէ ոչ Լեգէոնն առաջին զդէմ ունէր նոցա:
Օգնեաց նմա ազահութիւն Թշնամեաց. զի նոքա Թողեալ
զկոտորածն՝ զՀետ եղեն աւարառութեան. և լեգէոնք ղեր-
ծան ընդ երեկս ՚ի դաշտ արձակ և ՚ի տրամ: Այլ և ոչ
ասա զկայ առնուին ջարիք. Հարկ էր պատնէշս շուրջ ա-
ծել, կանգնել հողաբլուրս. և կահք և գործիք պեղելոյ
զերկիր և զսիզաբոյս հատանելոյ կորուսեալ էին առաւե-
լագոյն մասամբ. ոչ ևս գոյին ոչ խորանք զօրականին, և
ոչ դարման վիրաւորաց. զպարէնս շաղախեալս ՚ի տիղմ և
յապաժոյժ բաշխէին ՚ի կերակուր: Արհաւիրք ալեաւոր
գիշերոյն, և բիւրաւորաց առ վաղիւն պատրաստեալ վախ-
ճան՝ ընուին զքանակն ողբովք:

Մի յերիվարաց յայնժամ ըստ գիպուածոյ կապակո-
ւոր, և ՚ի շռինդն ամբոխին զահանդեալ փախստական, և
առաջնուր զոմանս ՚ի հանգիպելոցն սատակեալ, սարսափ
այնպիսի ՚ի զօրան էարկ, իբր Թէ գերմանացւոց ՚ի վերայ ի-
բեանց հասեալ, գիմեցին առհասարակ ՚ի դրունս, մանա-
ւանդ ՚ի տաճնորդականն հեռի ՚ի Թշնամւոյն և ապահով-
գոյն: Կեկլինայ ՚ի վերայ հասեալ՝ զի ընդունայն արհա-
ւիրքն էին, և ոչ կարացեալ ոչ սասանիլ, ոչ աղերսանօք
և ոչ զօրութեամբ զդէմ ունել խաչմանել զզօրականն, առ
աեւմս զրանն անկաւ տարածեալ, արկանել անցից նոցա
խոչ՝ զգեցութիւն, զի զմարմին զօրավարին հարկ էր նոցա
առ ոտն կոխել. և հազարապետք զօրացն և հարիւրապետք
փարատեցին զտարապարա երիվարս նոցա:

Ցայնժամ ՚ի զինարան անդր բանակին զղօրան ժողո-
վեալ, և հրամայեալ լուսութեամբ կալ ՚ի լուր, ազդ արար
նոցա որ ինչ ժամանակն և հարկ պահանջէին, զի ՚ի զէնս
ևեթ էր նոցա փրկութիւն. այլ խիստ լռութեամբ զայնոսիկ
պարտ էր ՚ի կիր արկանել, զի պարտ էր նոցա կալ ՚ի բա-
նակին, մինչև Թշնամիք յուսով զբռամբ ածելոյ զայն՝ հուպ

մատիցեն, և յայնժամ յամենայն կողմանց ՚ի վերայ յար-
ձակեալ՝ մարթիցէ ինքեանց հասանել մինչև ՚ի Հռենոս. զի
՚ի փախուստ անդ անտառք բազումք, լիճք Թանձրատրոք, և
դժնեայ Թշնամիք առաջի կային նոցա, այլ յաղթականաց
միայր փառք և համբաւ: Յաւուրս յոյժ ածել նոցա որ
ինչ սիրելի առանին և որ ինչ պանծալի էր ՚ի զինուորու-
Թեան, լռեալ զարիածիլ: Եւ ապա զձիանն զօրագլխոյ և
հազարապետաց սկսեալ յիւրոցն, եւս քաջացն ՚ի մարտի
անաչառապէս, որպէս զի նահապետական հեծեալքն լեցին ՚ի
Թշնամիս, հետևակաց զՀետ նոցա գիմելով:

Ոչ ինչ նուազ և գերմանացիք յուսով և ցանկու-
Թեամբ և զօրավարացն տարաձայնութեամբ տապնապէին:
Աբմինիոս կամէր մնալ եւանելոյ տրտաքս հռովմայեցւոց,
և գարձեալ ՚ի մօրուս անդ գժուարակոխ ՚ի վերայ
հասանել նոցա: Գժնեադոյն էր խորհուրդ Ինգուիոմէրի,
և հաճոյ խուժադուժ զօրականին, շուրջ պատել զպատ-
նէշս զինուք, և առ ձեռն պատրաստ գյաղթութիւն խոս-
տանայր, և գերի բազում և աւար լնուլն: Հմպա, ՚ի ծա-
գել առաւօտուն, ընուն զիրաս, ոսոխ ՚ի նեղքս ամուր, տա-
ղտկին ընդ պատնէշս ՚ի վեր, ուր նուազունք ոմանք ՚ի
զինուորաց գոգցես իմն անշարժ առ ակին արձանացեալ
կային: Իբրև այն ինչ հասին կացին առ շրջապատնէշ բա-
նակին, նշան եւս գումարատակացն Կեկլինա, հնչեցին միան-
գամայն փողք և շեփորայք, և ՚ի գոչիւն աղաղակի զրոհ
տուեալ պաշարեցին յետկուսէ զգերմանացիսն՝ ձայն ար-
կեալ առ նոսա. Ոչ անտառք են ասա և ոչ ձահիճք, հա-
ւասար է տապարել և հաւասար դիք: Կարծէին Թշնամիք
գտանել անդ աւար անչափ և նուազունս ոմանս մեկնակա-
ղենս. այլ ՚ի հնչիւն փողոց և ՚ի շռիւն զինուց զահի մեծի
յանկարծակի հարեալ՝ խռովեցին վատասրտեալք ՚ի ձախո-
ղութեան, որպէս ՚ի յաջողութեան էին յանդգնք: Աբմի-
նիոս ողջ անարատ, Ինգուիոմէր կարեկիր, խոյս ետուն ՚ի
մարտէն, և ռամիկապատն սրոյ եղեն ճարակ՝ ցորչափ սիւն և
կատաղութիւն տևեցին: Գիշերախառն տապ գարձան լե-

գէմնք· և թէպէտ առաւելագոյն վերջք և հաւատալ առ-
վոյ վտանգեալք, այլ զամենայն ինչ՝ զղօրութիւն և զա-
ռողջութիւն և զլուութիւն գտանէին ՚ի յաղթութեան:

ՏԱԿԻՏՈՍ· Տարեգիրք:

ՆԵՐՈՒԽԵԱՆՑՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ Ի ՁՕՐԱՅՑՆ ԿԵՍԱՐՈՒ

Ի սոյա ևկիցն այնչափ փոփոխութիւն եղև իրաց, մին-
չև մերքն՝ ևս և անկեալքն վերաւորք, յեցեալ ՚ի վահանն
անդրէն ՚ի կռիւ խիզախէին· յայնժամ ռամիկսպասքն՝ տե-
սեալ զՁնշամին ահաբեկ, անդէն անդամ զինեալսյն ՚ի դի-
մի հարկանէին: Իսկ այրուձին, ՚ի քերել յանձնէ զկեղտ
փախստեանն քաջութեամբ, ընդ ամենայն տեղիս մղէր
զպատերազմն՝ անցանել զանցանել զղնդացն մարտիւք:
Բայց Թշնամեացն՝ և ՚ի յուսահատութեան անդ իւրեանց
այնչափ նահատակութիւն ցուցեալ, մինչև յանկանել ա-
ռաջնոյն, առընթերակայք նոցին ՚ի դիակունս նոցա ամ-
բարձեալք՝ ՚ի մարմնոյ անսի նոցուն կռուէին· և ՚ի սոյա
անկանել և զկտանալ դիականց, մնացեալքն իբրև ՚ի բլրոյ
ինչ խիճք նետաձիգ ՚ի մերսն առնէին, և զաշուհան յօդոյն
յափշտակեալ՝ այսրէն առաքէին· զի ոչ վայրապար քա-
ջացն այնպիսեաց համարելի էր՝ յանդգնել անցանել ընդ
գետն լայն, եւ անել ընդ բարձրաբերձ տիւնսն, միջամուխ
լինել ՚ի դժնդակ վայրն, զորս ՚ի կարի դժուարանոց գիւ-
րինս էր արարեալ ոգւոյն մեծանձնութիւն:

ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ· Ճիշատակարանք:

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆՔ

ԲՆԱԿԱՆ ԵՒ ՁԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏՈՒԻՐԳ ԱՌ ԱՅՍ

Նկարագրութիւն ՚ի բանաստեղծութեան և ՚ի Ճար-
տասանութեան ոչ սահմանի ՚ի տալ Լեթ զյատկութիւնս
երայց, այլ կենդանագրէ զամենայն մասունս իրին ցանկա-
լիս պայծառ երանգովք: Նկարագրութիւն, որ ոչ ՚ի տե-
սիլ ածէ զիրն իբր աչն յանդիման, ոչ Ճարտասանական է
և ոչ քերթողական: Պատմագրքք իսկ քաջք, որպէս Տի-
տոս Լիւիոս և Տակիտոս, պատկերս կենդանագիրս ընծա-
յեն· զի ուր զմենամարտս Ովմայեանց պատմեն, և ուր
զնաւամարտս գերմանացւոց, մարթ է և նկարս կոչել և նը-
կարագիրս զայնոսիկ:

Որչափ շատ է քերթող ՚ի նկարագիրն, նոյնչափ պարտ
է Ճարտասանին գոլ զգուշաւոր: Կանոն նորա է, ոչ միայն
յօձան դառին ՚ի կիր արկանել զնկարագրութիւն՝ այլ զի
և ամենայն մասունք նկարագրին յաւելցեն զօրացուցանել
զօձանն զայն: Որ ինչ ՚ի Ճարտասանական նկարագրու-
թեան զերևակայութիւն Լեթ հաձէ, աւելորդ է և յոռի:
Այսմ օրինակ նկարագիրս պատուհասին Փաւխոսի ՚ի հին
դերդումն ՚ի վերրեան Ճառից:

ՄԱՐՄՈՆԹԵԼ· Տարերք բանաստիրարեան:

ԳԱՐՈՒՆ Ի ՅՈՒՆԱՍՏԱՆ

Ի բարեբաստ նահանգիս ուր կամս, զաչալըջոց գեղա-
ծիծաղ աւուրց բերէ գարունն զմանուշակին. զի որով
մատուցանէն և որով խոստանայն, երկաքանչիւրովքն
բերկրէ զսիրտս բարեաց: Ձառագայթք արեգական ոչ ևս
՛ի գողորշեայ Թանձուէնց նահմացեալ, և չէ արծարծեալք
յերեսաց բոցակէզ շնկանն, լոյս ջինջ և անայլայլակ հանգ-
չի հեզաբար զերևելեաս առհասարակ, հանդոյն այնմ ո-
րով Յովհաննու Ճառագայթեն զիքն լուսատպակք:

Ի ծագել ծայրակարմիր Ճառագայթից նորա ընդ ոլորտս՝
ատատանին ծառոց տերևք նորընձիւղք, հնչեն քաղցրաձայն
ափունք Իլիսեայ յերգս Թռչնոց, և յիմիտ լերին գեղ-
ջուկ սրնգաց հնչեն արձագանգք: Եւ իբրև հանգերձի ՛ի
մայրն մատանել, ծածկին երկինք աստեղազարդ քօղոյին, և
յաւերժահարսունք Ատոիկեայ ելանեն երկչոտ ոտիւք
կայեմ տալ Թեթևս ՛ի դալարաւոլ: Ա՛յլ ընդ հուպ ծագէ
նա անդրէն, և ոչ ևս խնդրի զոյն ցայգական և երիկեան
պայծառաւորութիւնն. զի գոգես իմն նոր արեգակն ընդ նո-
րատեղծեալ սիեղերս սփռեալ ծաւալի, և յերանգս ան-
ծանօթս մահկանացուաց գունագեղ զարևելս: Վ՛այրկեան
՛ի վայրկեան յաւելու բնութիւնն ՛ի գեղ, և բոպէ ՛ի բոպէ
նկրտի ՛ի կատարումն բոլորից հինս ցուցակութեան գործ
ևեծ:

Ո՛ աւուրք գեղապայծառք, ո՛ գիշերք զուարճալիք. որ-
պիսի յայդ յիս ներգործեն տպաւորութիւնքն անդուլ
ազդեցեալք ՛ի ձէնջ ՛ի զգայութիւնս իմ: Ո՛վ գիք բերկրու-
թեանց, ով գեղ գարնային, յամենայն ՛ի փառս քո ա-
սանեմ զայս ամ զարդարեալ զքեզ: Դու յաղթահանակաւ
ընդ դաշտս Ելգադայ Ձեմ առեալ, և ՛ի վարսիցդ զծաղիկս
քակեալ սփռեիր նոցին ՛ի զարդ. և յերևել քո ՛ի հովիտս՝
հովիտք ՛ի գալարագեղ ՛ի մարգս. և ՛ի լերինս երևեալ քո՝
ծոմոր և Թիւմ բուրեին բիւր ազգի ազգի անուշահոտու-

թիւնս. և ընդ օդս սաւառնեալ, զզուարթութիւն երեսաց
քոց անդ ծաւալէիր: Սէր ՛ի բարբառ քո գիմեալ, Թօթա-
փեր շուրջանակի զնեռան հրաւառս, և երկիր ՛ի նոցունց
վառեալ բորբոքեր: Ամենայն ինչ ծնանէր վերստին առ ՛ի
զարդարել, և ամենայն ինչ զարդարեր առ ՛ի հաճոյ լինել:
Ա՛յսպէս երևեցաւ աշխարհ յերանեալն ՛ի համապարփակ վե-
հին, ՛ի բարեբաստ պահուն՝ յորում մարդ շացեալ ՛ի
պայծառաւորենէ օթևանին իւրոյ, և տպչեալ և հաճ ընդ
գոյութիւն իւր, ոչ առ այլ ինչ Թուէր ընկալեալ զվիտս՝
բայց առ ՛ի ճանաչել զբարեբաստութիւն իւր, ոչ առ այլ
ինչ զսիրտ՝ բայց առ ՛ի ցանկալ այնմ, և ոչ առ այլ ինչ
զհոգի՝ բայց առ ՛ի ղգալ զայն:

ՊԱՐԹԵԼԸՄԻ:

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԿԵՆՑԱՂ

Ա՛պոլոն զհովուական յանձն էառ կենցաղ, և արածէր
զնաւշինս Ա՛դմետայ արքայի: Նուագէր նա սրնգաւ, և գայլն
Ժողովէին հովիւք առ հաստարակ ընդ հովանեաւ նշդարեայ
առ եղերք ականակիտ աղբեր, ՛ի լուր երգոյ նորին: Եւ
որ վայրենաբարոյքն էին յառաջագոյն և անասնակենցաղք՝
ոչ գիտեյով ինչ այլ բայց միայն գազանանել և կարել
զնաւշինս, ոչ կաթն կթել, և ոչ մակարդել պանիր, և
Թուէր դաշտավայրն անապատ ամայի, ՛ի սուզ ժամանա-
կի ուսոյց նոցա Ա՛պոլոն զարուեստս՝ որ ախորժ ընծայեն
զկենցաղ:

Նուագէր նա զծաղկունս՝ որովք պսակի գարուն, զգ-
բաւմանեն՝ զոր շուրջ ծաւալէ, և զգեղ գալար՝ որ ընդ
գարշապարոք նորա բողբոջեն. նուագէր զամարայնոյ զգե-
ղերս հեշտալից՝ յորս զեփիւռք զովացուն մարգկան, և
ցօղք արբուցանեն ընծայեն ծարաւուտ երկրի: Յեռոյր ՛ի

Նուագս իւր և զմիրգս ոսկեփայլս՝ որովք վարձաւրէ սէրն երկոց մշակաց, և զՀանգիստ ձմերայնոյ՝ յորում զբօսաւսէր մանկանն պարս յօրինէ առ հրով: Նուագէր գարձեալ զանատաւախիտ լերինս և զձորձորս խորաձորս, ուր գեաք պատ՝ի պատ խաղան ընդ գեղածիծաղ մարգս: Ուսոյց և նա հովուաց սր այն իցէն անապատական կենաց բերկրութիւնք՝ որոց գիտիցեն զձաշակ շնորհի անպաճոյճն բնութեան:

Հովիւք անդանօր սրնգօքն նեթ իւրեանց գոան բարեբախտագոյնք քան զԹագաւորս. և բերկրութիւնք անհաման՝ի արամութեանց, փախստականք յոսկեձեղուն ապարանից, դիմեին հաճերամ՝ի հիւղս նոցա. խաղք և ծիծաղք և հրճուանք զհետ երթային ամենայն ուրեք հովուհեացն անուեղաց: Հանապազօր ածնք էին նոցա. գայլայլեսկք նեթ Թագնոց լսելի լինէին առ նոսա, և քաղցրաշունչ զեփիւռք յոստս ծառոց խայտացեալք. և խոխոջք վճիտ կոհակաց՝ի ժայռից հոսեալք, և նուագք հովուաց զհետ երթեալոց Ապոլոնի՝ի Մուսայից՝ի նոսա աղեալք: Նա ինքն մարզէր զնոսա յաստպարելի՝ի մրցանակ, և՝ի նեաս հար որս այծեմանց և եղջերուաց: Դիպ խակ եղեւն հովիւքն նախանձելի, և հովուականն կենցաղ Թուէր նոցա քաղցրագոյն քան զիսաւս իւրեանց, և հրաւիրեցին անդրէն զԱպոլոն՝ի վեր Յոլեմպոս:

Ուսիր որդեակ իմ, ՝ի վիպաց սասի՝ վիճակակից ըզքեզ լեալ Ապոլոնի. մշակեա զերկիրդ խոպան, ծաղկեցո նայատէս զանապատդ, ուսս հովուացդ զգեղգեղ ներդաշնակ, ամոքեսջիր զվայրենութիւն դոցա, ցանկալի արա դոցա զառաքինութիւն, ցոյց դոցա քանի՛ քաղցր է վայելել մեկուսի յամբոխ՝ի բերկրանս անմեղս անկապտելիս՝ի հովուաց: Նիւսցեն աւուրք, որդեակ իմ, եկեսցեն աւուրք, յորս վիշտք և հոգք դժդգակք դարանակալք ածոց, ցանկալի արասցեն քեզ զկենցաղ հովուական:

ՅԵՆԵԼՈՆ· Ցկևևաք:

ԲՈՑՆՔ ԹՈՋՆՈՑ

Տեսչութիւն գերահրաշ՝ի բոյնս Թռչնոցն սրատափայլէ. չէ մարթ առանց գորովելոյ նկատել՝ի նոսա զվերնահնամ բարուքն, որ զսակիարն Ճոխացուցանէ Ճարտարութեամբ, և զԵրահոգն նախահայեաց պատրաստէ:

Այն ինչ ծաղկափթիթ զարդարին ծառք, բիւրք բիւրուց արուեստագործ ելանեն՝ի գործ. կէսք շիւղս յորդից երկայնագոյնս բարձեալ բերեն՝ի ծերպս վաղճամանակեայ որմոց, և կէսք՝ի պատուհանս եկեղեցւոյ որմին առնս. ամենք զձիոյ գոլանան բաշս, կամ զծուէնս գզաթիցն զորս ոչխար Թափառական զգանկովք մորեներս Թողու կառուցեալ. և այլք՝ի բարձունս ծառոյ զկրկուտսն զոչխն վայրագարոյ զմիմեամբք կուռեալ կցորդեն, և այլք գարձեալ զվեառքան մանեալ զրօզ փշովք ոստայնանկեն: Ապարանք բիւրաւորք՝ի վեր ամբառնան, որոց մէն մի գադարք են Թռչնոց. և յիւրաքանչիւր՝ի նոցանէ բազմադիմի հրաշագործին այլակերպութիւնք: Զուն սպիտակափառ փոխի՝ի Թռչնիկ ծածկեալ յաղուամազս. որոյ այն ինչ Թեւքն բուսանին, հրաւանգէ զնա մայրն զանձաբրովքն սաւառնել. ապա հուպ ընդ հուպ Թեւածեալ գարի՝ի ծայր որոցոյն, պարագիտել անուն զոյն առաջին նուագ՝ զտեսիլ Համագոյից. և երկիւղահաւն հիացմամբ խուճապեալ անկանի առ եղբարս իւր, որոց չև ևս՝ի զնին կացեալ է առաջարանին: Այլ՝ի կոչ ծնողացն ելանէ միւսանգամ՝ի բնոյն գեռահասակ Թագաւորիկն օգոյ՝ բերկրելով գեռ ևս զդլխուիլ զղտակն մանկութեան, և յանդուգն աջք ձկտի ընդ լայնածաւալ տարածութիւն երկնից, ընդ գագաթն մշտատատան ձօձելոյ ոստոյն և՝ի խորաձոր մարգագետինս որ առ արմամբ իւրոյ բնիկ կաղնւոյն: Եւ մինչ գեռ հրճուին մայրիք ընդունել զնորեկ հիւրն, անդուսա Թռչնոն հինաւուրց՝ի Թոպանալ Թևոցն զօրութեան՝ գայ իջանէ յամին վտակաց ջուրց, և խաղայիկ՝ի միայնութեան

անվզդով սրտիւ գէտակին ուղի մահուն՝ անդ առ գետեզերբն՝ ուր երբեմն զնահդ սիրոյն գեղգեղեաց. և առ ծառուին՝ յորոյ ի կողերս երևին տակաւին բոյն իւր և ի ճառարուքք և քաղցրաձայն սերնդոցն պար:

Աստ առ տեղեաւս է նկատել և զայս օրէնս բնութեան՝ զի Թռչնոց մանուանց ըստ ազգի՝ գոյն ձուոցն է հաստարակաբար ըստ միոյ ի ճոխագոյն գունոց արուին: Զուռ սեակը-տուց հաւոյն, որ զբոյն իւր գնէ ի գժնիկն սպիտակ, ի հաղարջենին և ի մացառս պարտիզաց մերոց, սևորակ է ի գոյն արդիական քարին, յոր Թինհամիջք իւր հարկանին:

Տեսի երբեմն, որպէս յիշեմ, զբոյն մի Թռչնոյս ի վարդենւոջ՝ ի նմանութիւն խեցւոյ գաղտակրի. և ի նմա մարգարիտք ջրոյ կապուտակք, և վարդ ցօղաթուրմ կախեալ ի վերուստ. և արուն սևակատուց մօտ գարեալ կայր անդ անշարժ ի փոքրիկ Թփի, իբրև զծաղիկ փողիողեալ ի կապոյտ և ի ծիրանի:

Եւ պատկեր տեսչեան նոցա ցոլանայր ի ջուր առ երկ լճակին՝ հանգերձ արուեստաւոր հովանեաւ ընկուզենոյն, որ լուսաւորագոյն ևս զտեսարանն վերբերեր, և յեակուսէ նորին ծագէր արշալոյս: Այնք՝ որպէս ի գոյն պատկերի տայր մեզ Արարչապետն զՀաշակ իմն համադիւցին գեղեցկութեան, որով պճնեացն զնոսա:

Ոչ նոյն օրինք են և գունոց ձուոց հաւուցն մեծամեծաց: Թուի ինձ զի Թռչնոցն, որոց բաղումք լցեն էգք, և որոց չնոցէ գոյն փետրոց սեռական ըստ ազգի, նոցա ձուք հաստարակաբար սպիտակք լցեն: Զբայնոցն և անտառայնոց, որոց առաջինքն ի ծովու և վերջինքն ի բարձունս ծառոց դնեն զբոյնս իւրեանց, հաստարակաբար հարկանին ձուքն ի կանաչ կապուտակայինն, կամ զի այսպէս ասացից՝ զշուրջն կացելոցն իրաց առնուն զգոյն: Իսկ որոց ի բարձունս աշտարակաց և ի զանգակատունս պատսպարին, ի գոյն բաղեղան են գոյնք ձուոց նոցա, կամ կարմրակերպք ըստ գունոց որմոցն յորս բնակեն: Զայս ապա մարթ լցէ ունել հաստատութեամբ որպէս օրէն անփոփոխ, զի Թըռչունք առհասարակ տպաւորեն ի ձուս իւրեանց զնշանակ տարիանացն իւրեանց և զսխալս բուսոյ բարուցն և զտրաղուս կենաց:

Շատ իցէ տեսանել զայն գիւրաբեկ արձան առ ի գուշակելոյ փոքր ի շատէ զաղջ նորա և զսեբտնդ, զբարս և զսովորոյթ և զախորժակս. և Թէ ծովաշրջիկ արդեօք վարէր կենցաղ բազմավանդ, եԹէ երկնակագոյն ևս՝ հովտական կենցաղով կեալ ձգտաւորէր. վայրագասէն էր՝ եԹէ քաղաքացի, լերամնց՝ եԹէ մարգագ բնակիչ: Չետասխուզիցն հնութեանց մայրեաց տուգագոյն են գիտութեանցն հատասքք, քան որոց զքաղաքացն հետաղօտիցեն զհնութիւնս: Կաղնի կեղևեալ կամ մամռատպատ՝ յայտնագոյն ևս տայ մեզ խնամալ յորմէ զգաձուիեն ընկալաւ, որպէս ոչ սիրեն տապալեալ, որ չկարէ ցուցանել զձարտարապետն որ կանգնեացն զնա: Շերիմք և մտհարձանք են մտեանք յիշատակի վիպաց մարդկութեան. այլ բնութիւն ի բուն իսկ ի կեանսն տպաւորէ զնշանն զամենայն. չեն պէտք նմա ոչ քարանց և ոչ որձաքարի վիմաց՝ առ ի ըզդրեալն յաւերժացուցանելոյ: Թամանակն, որ եկեր ծախեաց զկերգ արձանագիրս արքայիցն մեծիցացուց ի մահարձան բրգանց նոցա, ոչ զօրեաց ջնջել և ոչ նշանախեց մի յորոց ի պատեան ձուոյն իւրոյ գրոշմեաց եգիպտահաւն Իսիս:

ՇԱԴՈՓՐԻԱՆ. Ոգի Փրիխտ:

ՍԻՐ ԹԽԱՄՈՐ Ի ՋԱԳՈՒՆՍ ԻՒՐ

Եւ մայրն այն կաԹոդին, որ այնչափ խնամով փուԹայր ի Թխել, և որ Թխեացն անհոնջ, և զրգեաց սիրով ղորդեական՝ որ չև ևին նորա, չհովանայ ի սիրոյն և յեա եղանելոյ նոցա ի ձուոց անտի. այլ տեսիլ նորեկ ծննդոցն՝

որք առ աղիաղէ ախարհաբեհանն տակաւին ևս պէաս ունին ինամոց նորա՝ յաւելու և ևս ՚ի նմա զսէր և զերկիւղ նորա. նոր ինամոց: Ոչ այլ ինչ Թուի նա հոգալ, բայց զձագուցն երամ. նոցին առկս ևեթ որոնէ կերակուր. և Թէ չգտանիցէ երբեք, պէղ զերկիր մագլցի, և զգիւտս գարմանոյն ջամբէ նոցա խնդութեամբ. և առ սէր նոցին ինքն մատղիւր կայ մնայ անասուաղ: Եթէ զարտուղի մոլորիցին՝ ձայն առնէ նոցա. եթէ օգք ինչ խառնիցեն՝ ընդ Թևօքն զնոսա ժողովէ, և կրկին Թիւք զնոսա. և այնչափ հոգ և տագնապ յանձին բերէ առ աղէա զորովոյն առ նոսա, զի հիւծեալ մաշի յայտնապէս, և գիւրաբ որոշի այնուհետև ՚ի մարեալ միջի մայրն որդեծնոյց՝ ՚ի խառնեալ վհատոյն, ՚ի գետնաքարշ Թևոյն, ՚ի կերկերեալ ձայնէն, և ՚ի խանդակաթեր գրպանացն ազգիազգեաց, որք առ հասարակ զմայրենի սիրոյ և զնամոց տան Ճշդութիւն զոհսս օրինակի:

Եւ ոչ միայն անձնամոռաց գտանի նա առ ՚ի ձագուցն պահպանութիւն, այլ և յամենայն ՚ի վտանգ գիմագրաւել ՚ի նոցին պաշտպանութիւն: Եթէ յանկարծ բազէ ընդ օդս երևեսցի, և ահա մայրն այն երկչոտ և ապիկար, և ՚ի փախուստ պատրաստական ՚ի բնէ, առ սէր որգւոցն անդրկ քաջութեամբ, խոյանայ հանդէպ աշադին Ճապուկին, և ՚ի սուիչ և ՚ի կառաչ և Թևոցն բաբախմամբ ահ արկանէ գիշատանձ որսողին. որոյ պարտեալ յանկարծելի ոսոխէն՝ մեկնեալ ՚ի բաց հեռանայ, այլևս իմիք ակն եդեալ որսոյ դիւրագիւտ: Թուի իսկ եթէ լնով ունի հաւ զամենայն հանգամանս զբարեմտին առաքինութեան. այլ գոգ ըստ դիւտ իմն առաւելագունց սիրոյ նորա և բնութեանն այն իցէ, զի եթէ երբեք ուրեք ՚ի Թուխս ոք տացէ նմա զձուս հաւուց ջրասերաց, նա զնոյն ինամս զոր առ իւր հարազատսն ցուցանէր՝ ոչ արգելու և յօտարաց անտի, այլ որպէս մայր քան Թէ գայեակ գարմանէ և յանձանձէ զնոսին: Եւ յորժամ ՚ի բնութեանն ազգմանէ բերեալք՝ ՚ի գետ ուրեք գիմեն նոքա անկանել, և ՚ի լողդ զբօսանել, անդ է տեսանել զերկելի գայեկին զվարանան և զտագնապ և զանհնա-

բին անձկութիւն սրտի, զի տակաւին ևս մայրը զանձն հատարել. փութայ Ճեպով խառնել ՚ի ջուր անդր զկնի նոցա, այլ յեաս ընկերկեալ յանընդել տարերաց լուծականն բնութեանն, յածի կոծի և Թափառեալ շրջի զգետափայմն, և զդողանի հարեալ յուսահատութ խռՃապէ. զի տեսանէ զձագան ՚ի մծատլուտ վտանգին, և ձեռն տալ և օգնել մտատղերամ որդեկացն ոչ ունի:

ՊԻՒՖՖՈՆ. Բնական Պատմ:

ԵՐԿ ԹՌՉՆՈՑ

Են են և բնութեան ժամանակք խրախճանութեան, յորս կոչէ նա ՚ի հանգէս զգաստ գաստ երաժշտաց ՚ի ծագաց աշխարհի: Փութան Ճեպեն առ նա Ճարատար նուագածուք՝ երգս սքանչելիս առեալ ՚ի բերան, որք և զկերջս տաղիցն ցանգ գեղգեղելով յածին ընդ աշխարհ, և զնոյն յաճախ նուագեն նուագ դաշնակաւոր: Գեղձանիկ սուզէ, ծիծառն Ճչէ, և տատրակ միչէ. նա գագար առեալ ՚ի բարձրաբերձն յոստս ուռենւոյ՝ ձայն տայ սարեկին, և սարեակ ջառնու յանձն ընկերձել բնաւ ՚ի նորեկ Ճարատարն. սա պատապարեալ ընդ հիւրընկալ յարկաւ՝ խառն հնչեցուցանէ զաւաչ բարբառոյն երբ առ Եւանդրիւս. և միւսն ՚ի Թաքստի կացեալ ընդ կաղնւոյն տաղարթիւք, յերկարագոյն նուագեօք զվռվռս արձակէ հանգոյնս հընչմանց օրսական փողոյն, որ ՚ի Թաւուտս անտառաց լսիցէ: Եւ կարմրալանջն Թռչուն զբարաւորաւ կայեակ համբաւանացին, ուր և զանպատճոյճն իւր եդեալ է զբունիկ, Շրռուողէ զերդն սուլ: Ահլ սոխակ իւրուն անխափ ձայնի, և չկամի զի ՚ի նոցայն ընկերջն նուագս. սպատեալ մեայ ժամուն յորում լռեալ գագարիցեն այլք, և պարս անձին համոզի զերկորին հանդիսոյն զարդարել զմանն:

Յորժամ կարապետք լուսեհան գիշերոյ և վերջացեալ տուընջենային աղմկաց՝ մարտ եղեալ կուսին զլեռ-կամքն լերանց և զափամբքն գետոց, ի խորս անտառաց և ի ծերպս հեղեղատաց. յորժամ տակաւ լուսս լինին մայրիք, և այլ ոչ ևս տատանին սաղարթք, և ոչ ծածանին դալարիք, և լուսին յերկինս կայ, և մարդ ուսնիդիր է յանդորրու, յայնժամ ասա երգաբանն այն արարածոց քաղցրաձայն հնչմամբ առնու նուագել զփառս Աբարչին: Գանգիւնս արձակէ նախ զուարճալից բերկրութեամբ՝ որ անդրէն կրկնին ի լերանց, և ահա նուագ խառնաձայն. ապա դաշն սկսեալ՝ ի սուրն վաղէ. անտի յաղօթն ի՛ջեալ, և անդէն ի հաւէրն վերառնէ. կայ երբեք և դադարէ, և դարձեալ առնու յուշիկ նուագել, և միւս ևս անգամ ուժգին խանդիւ ձգուղէ. սիրա նորա արբեալ է ուրախութեամբ, սիրա նորա բաբախէ սիրոյն ուժգնութեամբ: Անդէն և անդ նուաղն ձայն նորա, և լռէ խօսնակն. այլ վերստին առնու զայլ ինն յեղանակ նոր և գեղեցիկ: Ե՛ զի ողբերգական հնչէ նուագ թալացեալ և յեղյեղուկ. և է զի միաձայն յեղանակօք զնոյն նուագս ողբերգէ, ըստ վաղեմի աղգացն անապատնոյ և թախծագին երգաբանութեանց: Բազում անգամ և արտմութեան է երգն տարացոյց, և ոչ ուրախութեան միայն. զի ահա երգէ և որդեկորոյսն Թռչնիկ, և յեղանակն նոյն է, յեղանակ ուրախութեան. զի և չէք նորա այլ յեղանակ. սակայն քաջահմուտ ա-րուեստին գոլով՝ զմտան ևերթ փոխէ երաժիշտն և ուրախութեան նուագքն՝ ի կերգըլսականս փոխին և յողբականս:

Ողբ անժառանգելն կամին զմարդ, և կապտել զնա յիշատակութենէն՝ զոր սատակել ունի նա՝ ի վերայ արարածոց, կամին իմն յայտ առնել թէ չէք ինչ յաշխարհի որ վասն նորա իցէ արարեալ: Եւ ահա օրինակ իմն, թռչնոցն քաղցրաձայնութիւնք այնպէս հնազանդին մարգկեղենս լսելեաց, զի թէպէտ և ի բաց վարիցես յանուագաց ըզհիւրդ, և զբոյնս նոցա յաւարի առնուցուս, և զնոսա հալածական առնիցես, և զնուագ և թախարդիւք վերս ի վերայ գնիցես, հարկանել հարկանես զնոսա անհնարին ցաւովք, այլ լռեցուացես ոչ բնաւ: Քանզի նմին հակառակ, հարկ ի վերայ կայ նոցա հրամանաց Աբարչին կամեսար լինել: Ի գերուեհան մէք ունիմք զնոսա, և նոքա լքեն զառուն մեր երգոյն նուագք: Այսպէս ուրեմն և ի ցաւս անգամ գտանին դաշնակութիւնք. ոչ ապաքէն և այնոյ այր տառապեալ յօժարամիտ յերգս իցէ: Եւ հանուռս, թող հաւորսն անագորոյն՝ խժական ձարտարութեամբ բրեսցէ զաչս սոխակին. նա և ևս քաղցրաձայն գեղգեղեսցէ զերգս իւր: Նորս այս օգտապար Հոմեր՝ երգովք զկեանսն պաճարէ, և զգեղեցկագոյնս ի տաղից իւրոց ի խաւարել ականջացն յօրինէ...:

Այս հաւիկ զքրիստոնեին բերէ ի կենցաղումս զճշգրիտ օրինակ. հանդոյն նմին միայնութեան է սիրող՝ քան աղմկաց աշխարհի, և երկնից՝ քան թէ երկրիս ըղձակերա, և ի ձայն բարբառոյն բարեբանէ անդադար զքաջնչելիս Աբարչին:

ՇԱԴՈՊՐԻԱՆ· *Ոգի Քրիստ.*:

ԶՈՒ ԿԱՄ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԹՌՉՆՈՑ

Մինչ կէաք ի համագոյից անշարժք ի կայից իւրեանց հաչահեն հանապազօր գովութեամբ զԱբարչագործն մեծութիւն, այլք ընթանան քարողք աքանչելեաց նորա: Սուրան ընդ օգս իբրև սուրհանդակք, սահին ընդ ջուրս, վազեն ընդ լերինս և ընդ ձորս: Են որք ի թևս գարնայնոյ եկաւորեալք և ընդ քաղցրաշունչ օդոյ մեկնին տարագնացք՝ դաւառէ ի դաւառ զանկայուն հայրենեան շրջեցուցանելով. այլք ի բնակութիւնս մարդոյ գադարեն, պանդխտք տարաշխարհիկք՝ զվաղնջուց ժամանակաց աղերսեն զհիւրասիրութիւն: Իւրաքանչիւր ըստ թելադրեալ բնութեանն ընտրէ զիւր դադար. կամ բալանջն իւնակ

'ի հիւղս, ծիծառնիկ՝ դուստր Թագաւորի՝ զդրուձնս պալատանց բախէ. Թուի տակաւին սիրոյ լինել մեծուԹեանց, այլ ախուր մեծուԹեանց ըստ իւրոյ բաղդին. անցուցանէ ժամառնն յաւերակս Վէրսայլի, և զձմեռնն 'ի Թերէ:

Զև ծիծառնն անհետացեալ՝ խումբ այլ գաղԹականաց յառաջէ գայ 'ի Թևս հողմոյ հիւսիսի, փոխանակել զուլեւորեալն ընդ հարաւ, դի մի երբեք ամայացին դաշտք. այքս մեր: Ի մայրին աւուր աշնայնոյ, երբ հիւսիսի շնչէ ընդ արտորայս, և մայրիք մերկանան 'ի սպառ և 'ի յեռին սաղարԹոցն լուրեանց, խումբ իմն բաղից վայրենեաց տուղեալք համայն ըստ կարգի անցանեն անշշունչ ընդ տխրամած երեսս երկնից, և ուր ուրիք նշմարեն 'ի բարձանց օԹևման գոԹացի՝ մացառաց և ընձիւղ շրջապատեալ, անդ է տեղի իջևանի նոցա. և սպառեալ գիշերոյ՝ զգապԹամիք մայրեացն ոլորտս առնուն. և այն ինչ գոլորշիք երեկոյնեայք մածնուն 'ի հովիտն, երկայնաձիգ ուլանց կարկառամբ՝ փուԹանակի միրձին յալիս զջուրսն հնչեցուցանեալ. և զնորին լուսԹիւնն լուծեալ՝ միաձայն աղաղակաւ զեղուիւրսն գոչեցուցանեն: Եւ յաղօս նշոյլ շրագի՝ զոր Թէ տեսանիցեն նշողեալ ընդ անձուկ լուսամուտս միոյ ուրուք յաշտարակաց, ընդ առաւերախառն շամբս յորմունս անդր մատուցեալ հիւրքս ոահահորդք, բաբախմամբ Թեւոց և կարկաչմամբ խառն ընդ շառաչուկ հողմոյ և անձրևաց ողջունեն զօԹեվանն մարդկան ընկալուչ:

Մի է 'ի գեղանի բնակիչս առանձնոցացդ կոչեցեալն մարի ջուրց, պանդխտական ոչ յոյժ 'ի հեռաստանէ, որ յեղերս պուրակաց երևեալ, մխի սուզանի 'ի բաւիղս նոցին, մերթ երևեալ և մերթ ծածկեալ. արձակելով մընչիւն իմն նուրբ և խժական, զդնայ ընդ խրամս գղեկաց: Ախորժէ դարել 'ի նշանական քանդակեալս յորմս. յորս 'ի կալն անշարժ, սևաԹոյր փետրովքն և կնիքն սպիտակադրոշմ 'ի գլուխ, Թուի իմն Թռչուն գրոշմաւոր անկեալ յատպարէ վաղեմի ասպետի: Ի մօտել գարնայնոյ մեկնի յանծանօԹ աղբերահունս, ուր արմատ ուռենւոյ փայտացեալ 'ի ջուրց՝ ապաւէն է նմա. յորում ծածկի անտես յաչաց: Լօռք, մամուռք և ճարխոտք ջրայինք կախին զբուռնովք նորա իբրև զկերպասս գալարեաց. կոտեմ և ոսպն պատրաստեն նմա խորտիկ քաղցրաճաշակ. մեղմաձայն կարկաչ ջուրց դգչեն յուշն նորա. զփոխունք գեղեցկատեսիլք զաչսն պարարեն, և յաւերժհարսունք վտակաց՝ առ 'ի պարածածկիլ զգեստուն մայրն՝ ահեցուցանեն զնուաստ զաղկատս շամբից՝ պատատեալս յատր ծիրանի:

Ի հիւսիսական եկաւորաց ասի՝ են որոց ընտելացեալ քարուց մերոց՝ հրաժարին վերադառնալ 'ի հայրենիս. կէսք իբրև զհամհարզս Ոդիսեայ գերեալք 'ի Ճաշակաց քաղցրութեան պաղոց, և այլք որպէս զդասալիք փախստեայս 'ի նաւուցն Գուքայ ըմբռնեալք 'ի հրապոյրս հեշտանաց, յորոց և արգելեալ գադարեն 'ի կղզւոջ անդ իւրեանց, այլ բազում այնք են որք յետ ամսոյ ինչ քնակակցութեան՝ մեկնին առ 'ի մնալ յետեալք 'ի Թևս հողմոց և մրրկաց, որոց զյատակութիւն ալեացն պղտորեալ գիւրամատոյց առնել նոցա զորսն, որ 'ի պայծառութեան ջուրցն խուսէր և ձողոպրեր 'ի նոցանէ: Քաղցր և սիրելի են նոցա վայրք անծանօթք, և յածին ընդ ոլորտս երկրի շուրջ եկեալ ընդ ամպիս:

Այլ ոչ միշտ երամովին գան յայցելութիւն քնակութեանց մերոց. զի է զոյգ հիւրոց գեղանեաց՝ սպիտակք իբրև զձիւն, եկաւորեն ընդ եղեամն, և 'ի միգի նկանեն 'ի վայր բացարձակ, ուր չկոչ հնար մատչել առ նոսա անտեսաբար. և ժամն ինչ հանգուցեալք՝ ծրարին վերստին յամպս: Փութան երթ 'ի վայրն ուստի մեկնեցանն, և ոչ գտանեն՝ բայց փետուրս ինչ՝ միայն նշանակս անցից նոցա, ղորս հողմն առ տարաւ վաղվաղակի. բարեբախտ սիրելին մեւսոյից, որ հանդոյն կարապանց վերացաւ յերկրէ՝ ոչ ինչ Թողուով յիւրոցն նչխար յիշատակի՝ բայց զփետուրս ինչ 'ի Թևոց իւրոց:

Ըստ պատշաճի յարմարութեան համագոյիցս բնութեան, կամ ըստ օգտի մարդկութեան առհմանին աղգի

աղքի կենդանեացն առաքինութիւնք։ Թռչունք ՚ի մրրկալից ամիսս երևեալք՝ ախորժայիք են և գԺնեայք բարուք, հանգոյն եղանակին յորում երևին. ոչ գան ալ ըստելի լինին՝ այլ ալ լուիցեն. նա և ՚ի խուլ մանկիկնս մայրեաց է ինչ որ հեշտացուցանէ զանելիս։ Որք զերկ գագաթունս իւրեանց ձօճեն արտաքինութեամբ մայրիք, միայն հանգրուանք են տխրերանգ հուլիցն որ գան ձմերել ՚ի միասին, որոց գոն պահանորդք և յառաջապահք։ Բազում այն է ալ ազատ հարիւրեմեան, հինաւուրց Սիբիլլա անաստաւի, ուրոյն միայնակ գարեալ նստի ՚ի ծերակից իւր կաղնւոջմանդ ՚ի լռութեան քերցն բոլորեցուն, անխլիրա ամենևին և գոգցես խորատոյզ ՚ի խորհուրդս՝ աւանդէ հոգւոց վանից մարգարէականս։

Դիտելոյ է գարձեալ զի մրտմունք, սագք, բագք, կացարք, քարագր և սիրամարգք անընդունելք՝ որք ՚ի մնուդեն մեզ, յամայանալ երեսաց երկրի գան երևին. մինչ այլ տարաշխարհիկ թռչունք երևեալք յարմաեաց ժամանակի՝ համայն ՚ի զուարճութիւն մեր են, և որպես երաժշտական նուագաւորք ՚ի պայծառութիւն մերոց խրախճանացս առաքեալք։ Են և սակաւք ոմանք զարտաւղեալք յօրինոց ասի, որպիսիք են լորն և աղաւնին վայրենի, զորս զկնի հնձոց ՚ի դէպ է որսալ, զի և նորա յարմախս մեր պատրաստեալք գան ՚ի սպաս սեղանոց մերոց։ Այսպէս հողմն հիւսիսոյ զհիւսիսական թռչունն տեղոյ ՚ի մեզ իբրև զմանանայ, և զեփիւռ քաղցրաշունչ զսոխական ընծայաբերէ. յորմէ կոչմանէ աշխարհիս և ընչեացն հողմք, բարձեալ բերեն զպարգևս ինչ վերնոյնամ տեսչութեան։

ՆԱԴՈՊՐԻՈՆ. Ոգի Քրիստոս։

ԱՌԻՒԾ ԵՒ ՎԱԳՐ

Ի դասս շաղղամանուկդ կենդանեաց առաջինն է առիւծ, է երկրորդն՝ վագր. առաջինն՝ թէ և վատթարագոյն, այլ միշտ մեծ է քան զընաւս և յաձախ լուսագոյն. իսկ երկրորդն սակրաւարտ չար քան զամենեսին։ Առիւծ՝ ընդ աներևիլդ յանդգնութեանն յարէ զաղնուականութիւն և զգեղութիւն, և և զմեծանձնութիւն. մինչ վագր նուաստ է և վայրագ, անողորմ և անխրատ, ոչ առ հարկի բերելով ՚ի նոյն։ Զսոյն զայս և յամենայն կարգս իրաց է տեսանել, ուր միանգամ ըստ ուժոյ զօրութեանն և տատիճանին չափեալ էցեն։ Առիւծ, որ կարող է ամենայնի, չէ բռնաւոր հանգոյն վագրի, որ լիուլի զօրութեամբն չմարթացեալ վայելել, զվերին ընու զօրութեամբն զոր կարաց գրաւել անձին։ Ուստի վագրն առաւել երկիւղալի գտանի քան զառիւծ։ Սմա յաձախ ՚ի մոռացօնս անկանի թէ թագաւոր է, այս է հզօրագոյն քան զընաւս ՚ի կենդանեաց. զնայ հանգարտաքայլ և չյարձակի ՚ի վերայ ուրուք եթէ չդրդիցի նախ ՚ի նմանէ. ոչ ձեռնչացուցանէ զքայլսն, չասպատակէ յորս՝ բայց իբրև քաղցն նեղեսցէ զանձն նորա։ Սմին հակառակ վագր թէպէտ և յագի ՚ի մսոյ, բայց միշտ ծարաւի թռիւն արեան։ Զկնի նմա պարապ ՚ի գազանութենէ, բայց յորժամ պատրաստիցի ՚ի գարանակալութիւն. յափշտակէ և պատառէ զնոր աւարն նովին կատաղութեամբ որով նախ վարեցաւ, և ոչ բաւականանայ պատառելով զառաջինն. յաւեր և ամայի կացուցանէ զերկիրն յորում բնակի. ոչ ակն առնու յերեսաց և ոչ ահաբեկի ՚ի զննուցմարգկան. խոցոտէ, աւարն զերամս ընդել կենդանեաց, սպանանէ զանընդելն, յափշտակէ զթոժիլնս փղաց և զմատաղ ռնգեղջիւրս, և մերթ ևս յանգդնի և խեղախ ընդդէմ առիւծու։

Զև մարմնոյն ընդհանրապէս զոյգ ընթանայ ընդ բնութեանն։ Առիւծ աղնուական է կերպարանօք, բարձրու-

Թիւն աղդերըն համեմատ ընդ երկայնութեան մարմնոյն. յորդութիւն Թանձրախիտ բաշխեցն քօղարկեալ զուսան, հովանի ածէ երեսացն. աներկեան հայեցուածք աչացն և ծանր գնացքն, դոգաես համօրէն յայտ իմն առնեն զնորա ղյանձնապատան և զմեծաշուք քաջասրտութիւն: Վագրն երկայնագէղ իրանաւն և ամենևին ցածագոյն ղբարձիւքն իւրովք, գլուխն հողանի, աչքն գաժան, լեզուն արիւնեղանդ, միշտ արտաքս քան զբերանն ձգեալ, յայտնի ցուցանէ զն ի վատ եղեռնագործ և անյագ յանագորոնութեան, և բնածին իմն է ի նմա զայրոյթ մշանջեան և ցասումն կայր, որ ոչ ճանաչէ և ոչ խորէ ինչ. այս է որ դրդէ զնինքն յաճախ զորդիսն անգամ անյագ լափել և պատառել, և և զմայր նոցին՝ ի կամել նորա պաշտպանել զնոսին: Երանի՛ թէ ատարապայման իմն լինէր ի նմա այդ ծառաւ արեան, և շնջուցանէր զայն անգամին ի ծննդենէն, բարձեալ բնաջինջ զողջոյն զհրեշին ազգ՝ յիւրմէ սերելոց:

ՊԻՆՁՈՆ. Բնական Պատմ:

ԳԻՇԵՐ ՁԳՆԱՂ

Ա՛յն գիշեր մի յայնցանէ էր՝ յորում ստուերք թափանցիկք երևէին իմն ծածկել զգեղեցկութիւն երկնից Ելլադայ: Ձեր իսկ, և չէր այն խաւար. այլ հրաժեշտ ևեթ տուընջեան: Օդք քաղցր իբրև զկաթն և զմեղր, և տուաւտ շնչոյ զմայլումն անպատում: Լոյս խաղաղական սըփռեալ զբարձամբք Տայգետոսի և զՀանդիպակաց սարսանդիւք Կոլոնեայց և Ակրիտայ և մեծիմեան ծովուն: Տորմիլ մի յոնիականնաւուց իջուցանէր զառագաստս ի մուտս նաւահանգստին Կորնեայ, օրինակ իմն՝ յորժամ երամ ուղևոր ազատեսցէ ի վայր զնեաս պարզիցէ զգաղարել ի հիւրամեծար ափունս: Ալկիոնին հեծեծ մեղմիկ ի բնի իւրում, և հողմն գիշերոյ ածէր (առ Կիմոդոկէ) զբուրմունս խանդեփարին, և զդոչիւն Պիսիդոնի ի հեռուստ: Հովիւն բազմեալ ի հովտի՝ նկատէր զլուսին պար առեալ ի լուսափայլ աստեղաց, և բերկրէր ի սրտի:

Օրիոդ քրմուհին երթայր լռիկ ընդ լերինս, և զուարճանայր ի զնին հրաշալի վայրացն՝ զորս հինք խանձարուրս ասացին Լիկուրգեայ և Արամազդայ, յայտ իմն այսպէս առնելով՝ զի կրօնք և օրէնք պարտին գնալ զուգընթացք, և զի անգամին ի միտ ուստեք է նոցա ծագումն: Կրօնասէր ահիւ լցեալ, զքանչելիք նմա Թուէնի ամենայն շարժուն, ամենայն հնչիւն յաչս նորա. աղօտ մշմուկք ալեաց ծովու՝ Թուէր մնչիւն կիւբելեան առիւծուց իջելոց յանտառացն Եքալիոյ. և մերթ ընդ մերթ մնչել հաւփալին Թուէր երջերեայ փողն Ա՛նահատայ, յելանել նորա յորս ի բարձունս Թուրիոյ:

ՇԱԴՈՊՐԻԱՆ. Վ. կայք:

ԽՐԱԽՃԱՆՈՒԹԻՒՆ ՇԻՆԱԿԱՆԱՑ

Ոչ յետ բազմաց ինչ աւուրց կառաբեսցին աստանօր հանդէսք խրախճանութեանց անուանեալ Ս. Լէոնարդեայ: Յանկարծ էր ինձ յօժարեցուցանել զքեզ դնել ածնիւս զի ևիևսցես առ խս: Փորձեցից բանս ինչ պատմել զնմանէ. Թերևս կարացից զարթուցանել ի քեզ զիշզնդ: Ի մեր ատ դաշտավայր մի մշնաւ երկայն, և ի խորս անդ նորուն հովիտ, զորով պատէ անտառ մի վաղեմի կաղնեաց՝ բնակութիւն բուոց և բուիճակաց, որոց ոստք թօշնեալք և գօսացեալք սոսկումն շնորհ և պակուցումն ածէն տեսողաց: Հովիտն ոչ որպէս պատմեն քերթողք, գալարապեղ է և մանրախոտ, այլ սիզաբեր և ձախճախուտ: Մատն ինչ գետոյ երկայնածիգ ցամաք և բարձր ձգի ի դաշտէ

մինչ ցանառան, յորոյ ի միջոցին Ճարտարապետն հանձարեղ յօրինեալ է եկեղեցեակ մի սքանչելի, առանց ամենևին Ճարտարապետականին: Ի վերոյ եկեղեցւոյն են զանգակք երկու կախեալք ընդ պարանոցն ընդ վանաքի յարկաւ, զորս ոչ երբեք հնչեցուցանեն չնևականքն զերկոսեան ի միասին, բայց ի ժամանակի վերջաց. քանզի յայնժամ ամենայն հովիւ ժամահար է, և այն մղեգին սաստկութեամբ, և կամ վասն ծանրամբիս այսորիկ որ յերկրորդում աւուր Զատկին: Ծուռներամ յանտառ անգր դիմէ յայնժամ մարդիկն ի շրջակայից յայց մենաւոր վայրացն: Գան յամենայն կողմանց գիւղականք բոկոտն, կամ գրեա թէ բոկոտն, զի ոչ կարեմ ընաւ ասել զայս կամ զայն: Ընդ այն չեք երկբայել, զի ի պատիւ աւուրն արհանեն զանձամբ զբարեքիկ հանդերձան, և առաւելադոյն ուշ ի շապիկան ունին, որ ցայն նորք են, զի դեռ առանին ջծայրս խծծոցն յորոց անկեալք են, և դեղնաշորթք՝ բուրեն տակաւին զնիւս օծանելեացն, առ ի ցոյցս զի դեռադեռ ելեալ է ի ձեռաց ոստայնանկին: Ջնոսա տեսցես դուռանդանօր ընդ աղջկունս, ընդ որս ոչ որպէս մեքս սովոր եմք թէս ի թէս հարեալք, այլ արձակաբար թողեալ. որպէս զի եթէ չքաւեն ընթանալ, յետոյ արանցն ինան անշուշտ, սակայն և այն չպատահէ ընաւ, զի հուժկուք են և քաջկիրթք ի վազս հանդոյն օձից. և թուի զի ի գաւառս յայսոսիկ ընդ մի գրին ընդ արս և կանայք, զի ի նոյն ջանս և ի վաստակս հանդոյն արանց կրթեն զանձինս և նոքա. որոյ վասն ամենքեքին տասպիսարբք յարեւէ, և ձեռք տեռեալք, և նման արանց, որպէս յիշեցաք ի վերոյ, զգեստաւորեալք և յոտս: Ցորժամ ժամանեն յանտառն, երթան նախ յայց եկեղեցեկին, և ի կատարել զաղօթիսն դառնան սկիզբն առնել զբօսանացն: Ցեսցես անդ բանալ կողովոց, և հանել անտի տապկոցս պաղեալս, ձուս պնդացեալս, սոխս և սխտորս բուրաւորս: Այլ քան զամենայն տեսցես զնոսա պարապեալս ի ձգել զնկուցս տակնորից դիմենեաց լճակեցոյ սպիտակ կամ կարմիր գինեաւ, որք և վարին խակ

կոչնականաց ի տեղի տոմանաց, սրուակաց և բաժակաց. և է որ յոտն, է որ բազմեալ, և է որ յորսայս զգեստով սկսանին յօշատել երիգամբք զկերակուրսն, և ծաղքել ամենայն ծամելեօքն և գիրկս ածել զդիմենեօքն լի գորովական խանդաղատանօք, և տիրականօք ի գառարկելն: Ընդ կերն և ընդ խոմ՝ խառնին և զաւետական բանք: Ոչ երբեք տեսեալ է քո միտս արթուն առ ի խօսս ինչ արկանել կատականաց, և անդուստ պատասխանի ընդունել սպառակաւ կամ աքացի ոտնարձակութեամբ պաշտպանել անձին, զորմէ և ծաղր և քրքիջ առ հասարակ յակմբէն: Այս տարազ խնջոյից անոպայ Թուի քեզ, սակայն տեսեալ տեսի ես զնոյն օրինակ և առ բազումս ի քաղաքակիրթ արանց, որք զՀանճար և զախորժ զբօսանացն յայգիսիս գնեն բարեվայելչութիւնս: Ցառաջ անցցեն բանքս: Ջուրթակ բամբիռն և սրինգ յօրինեն անդանօր և դաշնակաւոր խմն միաբանութիւն ձայնից սքանչելութեր, գոզցես խմն արուաբոյ քան զկնոսութեան իրք: Երգեն և ցուցս հաճեմալս, գեղգեղելով և ծէքծէքելով զկոկորդն, մինչև ականջացն որ լսեն անզգայել առ այլ ինչ լսելոյ: Են են ի նոսա որ և զսեր առնուն յերդ: Ո՛ իերդարքայդ, և երբ բնաւ երգեցեր դու զայդպիսիս: Մեծամեծս վեհերկեն զաչեն, մինչև զանաթպզատունականն սեր մինչ ի խորս խակ անդ Թոքոցն նշմարել: Եւ աղջկունք ամօթիլեամբ պատասխանի առնեն նոցա աղուեսական հայեցիւք, զմիկսունն շրջելով կամ գոյթս խմն ոտիցն տալով, զի բերթք են քան այլ ինչ:

Ուր ուրեմն զբաւ լինի ակմբէն աղաղակաւ գոչմամբք և բարձրաձայն կաղկանչմամբք ծաղուց, որչափ բաւէն լանջք, և երբեմն և բանցի կռուաք. և գարձ ի առնոսն առնեն որպէս և մարթիցեն. քանզի արիւն գդիմենեացն մինչ ի ծունկսըն սողոսկեալ, ընթանան առատագելով հանդոյնս կայծականց: Եւ միթէ և ոչ մի ինչ զքեզ ի նորանչան իրացս հրապուրեն գալ այսր: Թուի խմն եթէ ծանրամբութիւնք վհենեակոյ գիւթեալ խմն են զքեզ, և լսել գայ ինձ ի քէն պատասխանի. — Եւ առ ինչ ոչ մանաւանդ քո խակ գալ

այսր, որպէս զի տեսցես կազմել ՚ի կիւս Ճանապարհայ զքաքար և զպղպակունդն. և զինչ չինականքդ առ մեզս առաւնօր. մեծավայելուչ իմն է անցանել ընդ փողոց, ուր ասսի և անտի զոռոլանի հարեալ կան մի առ միով վաճառողք այգպիսի խնկելեաց, և որպէս զի առաւել ևս իրքդ զբատիս առնուցուն, տեսցես դու կանայս գձուձս ՚ի դլուխ կրակարանացն գդակս կաւիս ունելով զդլխով, թաթախեալք և մրուրեալք յիւղս և ՚ի ձէնձերս որ բուրեն ՚ի տապակէ. տեսցէ հրաշագեղ. և յաւել զի անդ առ նոքօք պարոնայք և սիկնայք երիտասարդուհիք ՚ի վեր և ՚ի վայր ձեմս առեալ զդնան նազելով և սեթևեթելով. թող և զայլ բարեվայելչութիւնան, զորս չկամիմ ասել բովանդակ, որպէս զի մի կարծիցես եթէ ես զքոյ գեղջկային զուարճութիւնդ կամիցիմ աղարտել խմելք այսու գերագունիւք զոր ունիմ առաւնօր: Եւ զի այգպէս թուի քեզ, զպատիս մեծարանացս մատուցեալ, ոչ ևս այլ խօսեցայց զայնմանէ: Վայելեալ գու այգր ՚ի քոյդ, և ես յիմքս առա: Ողջ լեր:

ԿՈՆՏԻ:

ՓԱՐԱՑՐՆ ԿԱԼԻՓՍՆԱՑ

Հասին առ սեամն քարանձաւի գիւղուհւոյն, և զարմացեալ Տելեմաք, զի ՚ի գեղջկայնւոյն յանպատմոյծ պարզութեան տեսանէր զամենայն ինչ անհնահաճոյ: Զեր անդ ոսկի և արծաթ, ոչ կիճ և ոչ սիւնք և նկարք և անդրիք. քայլն այն ՚ի խուռոչ ժայռի կոփածոյ ՚ի խճէ և ՚ի խղունջ նաց ՚ի կամարան գմբեթարդս էր դրուագեալ. և գոգոց իմն դիպակազգեստ յաճուխնաձիգ որթոյ՝ որ յայլ և յայլ հեռակ զձապուկ ուռան տարածեալ պատէր: Քաղցրասիլք հոտմունք ընդ բոցակէզ արեգականէ զովացիկ զվայրն հայցուսանէին և հեշտալի. վտակք քաղցրակարկաչք զեռեալ

ընդ արօտս պճնեալս յանթառամ և ՚ի մանիշակ՝ ընդ ուրեք ուրեք գոլծէին պայծառ և յստակ քան զակն վտնեայ. և ծաղիկունք հոյլ ՚ի հոյլ գեղապիճիթք գեղերփնեին զդորգն կանաչագեղ, որ զքարայրն ծածկէր: Էր անդ ծառաստան վարսագեղ ոսկեխնձոյս, որ ՚ի քառահոլով եղանակս տարւոյ նորափթիթ՝ բուրեր անուշահոտ քան զամենայն խնկենիս. և պտակաձև զգեղեցիկ արօտիսն շուրջ պատեալ, յօրինէր գիշեր ՚ի տունջեան՝ անթափանց ՚ի ձառագայթից արփենից: Թաչնոց անթիւ լսելի լինէին անդ ձառագայական գայլայլիկք, և խոխոջ վտակի՝ որ ՚ի բարձանց ժայռի գահավիժեալ եռայր փրփրագեղ, փախատական ընդ արօտն գեռատհեռեալ:

Եւ էր քարայրն ՚ի գարևանդ բլրոյ, ուստի երևէր ծովմերթ վշիտ և միապաղաղ իբրև զբիւրեղ, և մերթ մրմռեալ անատաս ընդ ժայռ և ընդ խուեր՝ յորս ահագնագոչ լեռնաձև կոհակաբքն կոծեալ բեկանէր: Այլըր երևէր գետ՝ կղզիս ՚ի պտոյտն գործելով ամենածիրս ՚ի ծաղկաւէտ թմբեաց և ՚ի բարձրաբերձ կաղամախեաց՝ որ զևրոխատ գագաթունեան յամուռ ծրարէին: Եւ որք զկղզեական գործէին առուք՝ թուէին խաղալ ՚ի դաշտին, կէսք սրընթաց զկանակիա ալեան թաւալելով, այլք հանդարտահեաց հեզասահք. և կէսք պատ ՚ի պատ յեռս ընդ կրունկն դառնային յաղթերակուն անդր իւրեանց գոգոյս նկրտելով դժկամակ իմն զբազմազուարճ ափունեան թողուլ: Նշմարէին ՚ի բացեայ բլուրք և լերինք, որոց գագաթունք կորընչէին յամպս, և կոհակաւէտ ձեռվքն բազմակերպ զծիր տեսութեան գործէին և ակնապարար: Դալարագեղ զլերինս մատակայս ծածկէր այգեստան. և ուռք վարսագեղք մանեկաձև կախեալ, և ողկոյզք ծիրանեփայլք քան զծածկոյթ տաղարիացն առատագոյնք ծանրաբեռնէին զայգիս: Թզենի, ձիթենի, նռնենի և այլ ևս ազգի ազգի ծառք պըտղաբերք ծածկեալ զդաշտավայրն, յօրինէին զայն պարտէզ լոյնածաւալ:

ՖԵՆԵԼՈՆ. Տելեմաք:

ՏՕՆՔ ԱՆԱՀՏԱՑ

Եւ էր մերձ ոտն լեռնեանն Անահատայ, և կազմեին հանդերձեալին եղանել ըստ առաջնոցն Թաթիոր մինչև ի Ծայրս սահմանացն Մեսենիոյ և Լակոնիոյ: Այն հանդէս՝ առիթ երբեմն դժնդակ պատերազմացն Մեսենիացւոց ընդ Սպարտացիս, զնաղտագործսն հանդիսատեսից ևեթ ձգէր յայնժամ ի գնին զամբոխ: Եւ դասք ծերունեաց ընտրեցին զԿիմոդոկէ առաջնորդ խմբի օրիորդացն՝ որոյ անկ էր մատուցանել զնուէրս զգաստատիրի քեռն Ապոլոնի: Անկեղծ հրճուանօք ցնծայր նա ընդ պատիւն որ ի հայր իւր ի վեր ելանէր. քանզի թէ լսեր միայն Կիմոդոկ զգովեթիւնս դասերն, թէ հպեր և եթ ի պահան՝ առաջս ի նմանել, ի ծայր բարեբաստութեան և փառաց զանձն համարէր:

Բայց ոչ կարաց երթալ ընդ դասերն իւրոյ մինչև ի Լիմնոս, խափանեալ ի զոհէ զոր յեկաւորացն ոք նուիրեր Հռեզրանի: Վասն որոյ Կիմոդոկէ գնաց առանց հօր իւրոյ ի ոտն. բայց էր ընդ նմա գայեակն իւր Եւրիմեդուսա՝ դուստր Ակիմեդոնի նաքսոսացւոյ: Այլ ծերունին ոչ խառնէր ի հոգս, զի փոխանակն բռնելոյն Աքայիոյ երթեալ էր յայնժամ ի Հռոմ առ Գալերիոս կայսր:

Տաճարն Անահատայ կառուցեալ էր ի ծոց Մեսենիոյ, ի վերայ միոյ ուրուք ի լերանց Տայգետայ, յանտառի ուրբեք գիհեաց՝ ուր զկողերց ծառոց կախէին որսորդք զմորթս երեոց վայրի: Որմք նորա ի հնուենէն՝ ջորացեալ տեղւոյ առեալ կդոյն, որպէս արդ խակ նկատեն ուղևորք յաւերակս Հռոմայ և քաղաքին Ալենացւոց: Անդրի Անահատայ, ի միջավայրի տաճարին կանգնեալ ի բագնի, էր հրաշակերտ ուրուք յակատառոր քանդակագործ. և կայր նա յոտին, միով ոտամբն յառաջագէմ, և աջովն առնոյր նետ ի կապարճէն կախելոց զուսոք. և եղեիւն կերնիդ ոսկեզօծ և պղնձոտն՝ զկայ առեալ ընդ ազեզամբն՝ զոր դիցուհին ունէր ի ձախումն ի խոնարհ:

Եւ յորժամ լուսին ի միջոց ասպարիզին սփռէր զլոյս իւր զվհհենաւն, կիմոդոկէ պարագլուխ օրիորդաց կացեալ, հաւասարաթիւ յաւերժահարսանց Ովկիանոս, սկսանէր զնուագն ի պատիւ Սպիտակ Կուսին: Եւ դասք որսողայն պատասխանի առնէին երգոյ դասերացն.

Հարէք, հարէք կայթս ի թևեթև գարշապար,
Երագաձեմ ըղձիցանուէր առէք պար:

Մայր Անահիտ, շահատէտ անտառաց, ընկալ զուխտս ըղձ կուսանաց ընտիրք քեզ մատուցանեն, դասերք ոլքախոհք ի սիբիլեան երգս վարժեալք: Դու ի ծովածուփն ի Դելոս՝ ընդ հովանեաւ արմաւենւոյ ծնեալ, և ի դիւրել ջերմուռնս Լետովայ մոր քոյ՝ եօթնից կարապք ջքաղցրանուագ կղզեկաւդ պատեին երգովք: Եւ ի յիշատակ երգոյ նոցա ի գիցազարմ քուէդ հարազատ եօթնաղեանն յօրինեալ քնար:

Հարէք, հարէք կայթս ի թևեթև գարշապար,
Երագաձեմ ըղձիցանուէր առէք պար:

Ցանկալի են քեզ գետափունք, ցանկալի և ստուերք ծառոց, և գալարագեղ անտառք Կրագոսի, հովասունն Ալփիդեայ և նահմանառուերն Երիմանթեայ: Դու Անահիտ՝ որ ազեղն ահաւոր կրես ի ձեռին. դու լուսին՝ մահիկ ի գլուխ քոյին սքնեալ. դու Եկատէ՝ խիճ և սուսերք զինեալ. տուր երիտասարդաց զգաստութիւն, ծերունեաց հանդիստ, և Նեստորեան զաւակին սերունդ, ճոխութիւն և փառս:

Հարէք, հարէք կայթս ի թևեթև գարշապար,
Երագաձեմ ըղձիցանուէր առէք պար:

Եւ ի լսել երգոյն, առին ի բաց օրիորդքն ի գլխոց իւրեանց զպսակս սարդենիս, և կախեցին զբաճաւս գիցուհւոյն ընդ ազեզունս որսորդաց: Եւ զենեալ անդ եղջերուս սպիտակ գլխոյին լուսնեան, լուծաւ ամբոխն. և Կիմոդոկէ ընդ գայեկին իւրում դէմ եգեալ գնայր առ հայր իւր:

ԱՍԻԱԿԱՆ ԱՓՈՒՆՔ ՎՈՍՓՈՐՈՒ

Ծովային ասիական չէ ձեռակերտ մարդոյ, բնութեան անդ ալարեալ զամենայն: Զկնք անդ Պէօյիւք ափրէ և ոչ Թարապիա, ոչ ապարանք գեսպանաց, և ոչ քաղաքք Հայոց կամ Փրանկաց. անդ լերինք միայն, պարանոցք որ անջատեն զնոսա, հովիտք փոքունք՝ ի գորգ կանաչագեղ յարմատս քարաժայռիցն պարզեալք, վտակք որ սողին, հեղեղատք որ՝ ի փրփուրս իւրեանց սպիտակացուցանեն զնոսա, անտառք որ զկողից նոցա կախին և սողոսկին՝ ի հոսանսն, որ իջանեն մինչ յեզերս անթիւ խորշից ծովափանց. սաղարթուց և գալարեաց անդ զարմանալն ձև և երանգ. զոր և գրիչ նկարչի չգիտեմ Հարատարել. մնակք աստ անդ ցիր տաճիկ նաւաստեաց կամ այգորդաց սփռեալք ընդ ափունս զերերօք բացագոյն, կամ՝ ի սարահարթս ամբարձեալ անտառախիտ բլուրց, կամ համախումբ՝ ի ծայր խարակաց, ուր վարեն զքեզ հոսանք և խորտակին յալիս կապոյտ՝ որպէս զերկնից դիզերոյ. ձկնորսաց առագաստք լինչ սպիտակք քերեալ առ ծոցան խորաջուր սահին ասս՝ ի ասս. տարմ բազմահոյլ սպիտակաթոյր թռչնոց որ յափնածիր մարգս ցամաքին. արծուիք՝ ի գլխոց լերանց զծովս հոլաթև սաւառնեալ, խորշք խորհրդականք, ի սպառ կափուցեալք՝ ի պարեխաց և յանկարծակի կոձեղս ծառոց, որոց ծանրացեալ ոստք յամպոց սաղարթուց կքին զլեռնքն և խանձարուրս յօրինեն՝ ի ծովս, յոր խորշքն մտանեն. դիւզօրիք լինչ յատուկք խորշիցն թագուցեալք, ՝ի թիկանց ունելով բուրաստանս ընդ գարնանդս գալարի, գլուխս ծառոց առ ոտս ափափայց, զկարկուրայսն գգուելս առ գրամբք նոցա յալեաց ծիծաղախիտ, և զերասն աղաւնեաց՝ ի սանեսս իւրեանց. կանայք նոցա և մանկիկ՝ ի պատուհանս, ծերունիք յոտս միմարելից բազմեալ ընդ ստեաս. մշակք որ յանդաստանաց ելանեն՝ ի նաւակս, այլք ծանրաբեռնեն զմակոյկն՝ ի խրձունս դալար, և՝ ի մուրս կամ՝ ի ծագկա-

ձէտ հաւամրգի՝ առ յարտգել և յայրել ձմերանի. զօդեալ ուրուք զինի շեղջից սիզոցն կախելոց, որ զեղեալ՝ ի ջուրսն Թահան, ոչ զնաւն և ոչ զթիավար ոք նշմարէ. և Թուի բեկոր մեծ ծովափին զերծ յերկրէ ըստ զիպաց՝ ի ջուրցն հոսանաց, ծածանեալ զինքնամբք ծովուն կանաչագարդ իւր տերևովք և ծաղկօք անուշահոտ:

ԱՄԱՐԴԻՆ. Ուղևորութ. յԱրևելս:

ՀՈՎԻՒՆ ՅՈՐԴԱՆԱՆՈՒ

Կրկին շղթայք բարձունք՝ տարածեալք՝ ի հիւսիսոյ՝ ի հարաւ, որ ոչ ունէին մանուածապատ շրջանս և ոչ խորշս՝ երևէին յաչս Ճանապարհորդացն երկոցուն: Եթէ յաչխարհէն Յուդայ նկատեսցէ ոք, տեսանէ զլերինն՝ կոյտս կաւոյ և աւազոյ, որ բերեն զնմանութիւն կերպարանաց՝ խրձանց զինուց և դրօշուց ամիոփելոց, կամ վրանաց բանակի՝ զոր արկանիցեն՝ ի դաշտի: Իսկ եթէ յԱրաբացւոց աշխարհէն, են այնոքիկ Ժայռք սեաւք ուղղաձիգ արկեալք՝ ի վայր, որ ածէն Թափէն՝ ի ծոմէ զմեռեալ գետս ծծմբոյ և ձիւթոյ: Եւ Թռչնիկն իսկ երկնից՝ ոչ գտանիցէ անդէն զդոյզն լինչ խոտ առ՝ ի մնուդ. ամենայն լինչ ցուցանէ անդէն, եթէ վայրքն այնոքիկ հայրենիք են Ժողովրդեան խոտելոյ, և համարիցիս ընդել անդէն զաւրսափիւն պղծուածեան, ուսան՝ ի վեր երևեցան Սմմոն և Մովաբ:

Իսկ որ՝ ի մէջ կրկին լերանցս տարածեալ է հովիտ, բեբէ զնմանութիւն խորոց ծովուն, յորմէ՝ ի բազում ժամանակաց տեղի տուեալ իջեն ջուրքն. գաւառք տղի, մօրուք ցամաքեալք, աւազք շարժունք, և իբրու այն թէ ակօսաբեկ լեալ յալեաց: Այս և անդ բոյսք զաղջատեսիլք հազիւ կարեն աճել՝ ի վերայ անկենդան երկրին. տերևք նոցա պատեալք են աղւս որ մնոյցն զնոսա. և կեղևք նոցա ունին

զՀաշակ և զդոյն ծիոյ. փոխանակ քաղաքաց և զիւղից՝ երևին անդէն աւերակք աշտարակաց լինէ: Ի միջոյ հովտին անցանէ գետակ անգոյն, և իբրու այն թէ ընդ քարշ ածեալ՝ երթեալ ընկղմի՝ ի լիճն մահառիթ: Զէ մարթ նկատել զընթացսն նորա՝ ի մէջ աւազուտին, այլ զափամէքնորին ապա-կեալ են ուռենիք և եղեգունք՝ յորս թաքուցեալ արաբացւոյն, և սպասեալ ճիոյ յառնուլ զառ և զկապուտ Ճանապարհորդին և պանդխտին:

Խօսեցաւ Հերոնիմոս ընդ ասպնջականն երկոսին, որ զարմացեալ հիացեալ կային, և ասէ.

Տեսանէք դուք զվայրն հռչակաւորս օրհնութեամբ և անիծիւք երկնից. գետս այս է Յորդանան, և լիճս այս է Ծովն Մեռեալ: Եբեղ երևելոց էր նա յաչս ձեր. այլ քաղաքն անօրէնութեան, զորս ծածկէ՝ ի ծոցի իւրում, տպականեցին զջուրս նորա: Անգունդք նորա, անգունդք են լռելք, և չիք՝ ի նոսա ընչաւոր: Ոչ երբեք էանց նաւ՝ ի վերայ ալեացն նորա, և յափունան չերևին ուրեք թռչունք և ծառք և դալարիք. ջուր նորա գառն և յոյժ գառն, և այն չափ ծանր՝ զի և հողիք ուժգին հազիւ բաւին խառնել զինս: Աստէն երկինք թուին ոտջորել հրոյն որ զԳոմոր դարձոյց յաղտականութիւն: Զնն ասեն ափունք Պամիոսի և հովիք Տայիգետայ՝ ի վերայ Ճանապարհին Քեբրոնի ես դու, ի վայրն յորս լսելի արար Յեսու զձայն իւր՝ յորժամ կասեցոյց յընթացից իւրոց զարեգակն: Կոխես դու զհողն որ դեռ ևս ծխէ զյաւուրն Եհովայ, և որք մխիթարեցան ասա՝ ի սփոփիչ բանիցն Քրիստոսի:

ՇԱԴՈՊՐԻԱՆ. Ոդիար. ՅԱրևելս:

ՀՈՎԻՏՆ ՏԵՄՊԵՆՆ

Եւ անցեալք ընդ գետահասնուհան Տիտարեսայ, որոյ ջուրք պղտորագոյնք են քան զՊենէոսի, հասաք՝ ի Թռնիոս՝ որ հեռի է՝ ի Լարիսայ իբր հարիւր և վեցասուն ասպարիզք: Անդ Թողաք զնաւսն, զի անտի հովիտն սկսանի, և անձկանայ դէտն ընդ լերանցամէջս Ոսսայ՝ որ կայ յաջմէ, և Ողիմպիայ՝ որ յահեկէ, և բարձրութիւն նոցա սուղ ինչ աւելի քան զսահն ասպարիզ:

Ըստ վաղնջուց աւանդութեան՝ ի ոտսանուիենէ երկրի համարին փեռեկեաւ լերինքն, և տուեալ անցս ջրոյ որ ողողեալ ծածկէին զդաշտավայրս: Այլ այն հաւաստի խոկ է, զի՝ ի խնուլ զկիրճն զայն՝ ոչ ևս լցեն անցք Պենէոնի. քանզի երկիրն՝ ընդ որ գետս այս հոսէ, ընդունելով յինքն՝ ի գնացս իւր և այլ գետս բազումս, տակաւ՝ ի գետեղեցան՝ ի վեր ամբառնայ մինչև՝ ի բլուրսն և՝ ի լերինս որ շուրջ զդաշտաւուն կան: Լուաք խոկ, զի ևիէ Թեսալացւոց չէր հնազանդեալ Քսերքսէսայ՝ առնոյր նա զԳոմնոս, կանգնել անդ Թուման անտեղիատալի հոսանաց գետոյն: Կաըևոր է յոյժ քաղաքն՝ տեղւոյն ամրութեամբ, և է դուռն Թեսալիոյ՝ ի կողմանէ աշխարհին Մակեդոնացւոց, որպէս Թերմոպիլէ՝ ի կողմանէ աշխարհին Փովկիսացւոց:

Եւ տարածանի հովիտն յարևելս հիւսիսոյ. երկայնութիւն նորա քառասուն ասպարիզ, և ընդարձակագոյն լայնութիւն նորա իբր երկուս ասպարիզ և կէս. այլ ուրեք անձկանայ, իբր ոչ ինչ աւելի քան զՀարիւր ոտնաչափ:

Ծառք սաղարթագեղք զարմանալիք՝ կաղամախ և ասպ և հացի ծածկէն զլերինն. և առ առօրեայ նոցա բղխեն աղբերք ջուրց վճիռք իբրև զբիւրեղ. և ընդ միջ ծայրից նոցա բարձանց սահեալ անցանեն օգք զրեթէ ամենայն ուրեք խաղաղ, և ուրեք ուրեք զիլզիկօք ոմանք փարեալ՝ մշտադալարս զնոսա գործէ:

Ֆարայրք ներգործեալք՝ ի կողս լերանցն, և գետեղերք

երիտասարդ զալարագեղ ծածկեալ, զոգոյս իմն պատապարանք պատրաստեալ կան հանգստեան և զբօսանաց: Եւ առաւել յաճախէին 'ի մեզ զարմանք ընդ հանճարեղ կարգաւորութիւն զարդուցն, որովք պճնին վայրքն. զի այլուր արուեստ ձգնի նմանիլ բնութեան, իսկ անդ կամի իմն բնութիւն նմանիլ արուեստի: Սարդենիք և ազդ ազդ թփոց կազմին անձեռագործ կամարս և թաւուտս, նախանձ գեղեցիկ բերեալ ընդ ծառաստանս անկեալը 'ի տարօրոտ Ո. Լիմպեայ լերին: Գորգոյ իմն օրինակաւ ծածկէ բաղէդն զժայռս, և պատաղնձք զբաւնովք ծառոց սողոսկեալ՝ զգեցուցանեն զնոսա, և կոկերք նոցա հիւսեալք ընդ միմեանս՝ կախին որպէս զգրաստանդս և իբրև զձճանակս: Եւ հմաւօրիւ իսկ առացեալ, ամենայն ինչ 'ի չքնաղ վայրսն յաւելուս չուք գեղապանծ. ամենայն ուստեք պարարուն աչք, և հոգին կենդանանորոգ զուարթանայ:

Ոչ ինչ են զարմանք զի Յոյնք, եւանդունք զգայութեամբք, և բնակեալք 'ի ջերմահոս նահանգս, լիմարին 'ի տեսիլ և 'ի յիշատակ իսկ չքնաղագեղ հովտին: Ի համառօտագիծ պատկերս յայս, զոր ահա նկարագրեցի, պարտ է յաւելուլ և զպարսպացոյն կիսաւազս ծաղկանց՝ որովք հովիտն այն ծածկի, և զդայլայլիկս բազմերամ անհամար թռչնոցն՝ որ անդ գեղգեղեն, ամենայն թռչնոց վայրացն և քաղցրախառնութեան եղանակին մատուցանելով նոցա նուագս գողարիկս և յոյժ խանդաղատալիս:

Եւ գնայաք մեք մեղմաքայլ ընդ գնացս Պենէոն գետոյ, և աչք իմ թեպետ ձգեալ 'ի բաղում այլ ինչ զուարճալի տեսարանաց՝ 'ի դէտ անդր առեպ դառնային: Մերթ զցոլս ալեաց նորա նշմարէի ընդ մէջ սաղարթոյ՝ որ զեղերքս նորա առնեն հովանի, և մերթ 'ի գետեզերն մատուցեալ՝ զնաղալ ընթացս ալեացն նկատէի, որ գոգոյս իմն օգնեալք իրերօք՝ անձիկն և անխաւով գործէին զնաւերանց ասպարէզն: Ասեմ յԱմինտոր. Ա յսպիսի է սուրբ և խաղաղ հոգի. առաքինութիւնք 'ի նմա յիրերաց ծնանին, և գործակիցք են միմեանց. և ստուերք յոռութեանց օտարք

'ի նոցունց՝ պայծառագոյնս ևս զնոսա գործեն ներկայ: Եւ Ամինտոր ասէ ցիս. Այժմ իսկ և զպատկեր փառամոլութեան տեսցես, հանդերձ գժնդակ արգասեօքն:

Եւ տարաւ զիս 'ի կապան մի Ոսոյ լերին, ուր Տիտանացն ասեն մարտուցեալ ընդ դիս: Անդ ուղիս իմն սրընթաց գահավիժի 'ի ձոր քարաժայռ, Թափով հոսանացն զժայռսն դղրդելով: Եւ հասաք 'ի տեղի մի, ուր կոհակք ջուրցն բռնադատեալ, ձգնէին յանցս. և բաղխեալք ընդ միմեանս՝ փրփրագեղ 'ի վեր ամբառնային, և անկանէին մունչելով 'ի վիհ՝ ուստի յորձանատարոյս մոլեգնագոյնս անդրէն յիբերաս յարձակեալ խորտակէին ցնդեալք ընդ օդս:

Եւ մինչդեռ պակուցեալ կայի ընդ ահագին տեսլին, ամբարձի զաչս իմ և տեսի, և ահա լերինք ասաի և լերինք անտի ամբառնային առ հնոմ նահատուելոք, անչքդիք, և ակօսաձև խորագոր մինչև 'ի բարձունն սեպացեալք: Ջանչքիւք նոցա ամպք Թանձրագանգաղք ընդ մէջ տխուր մայրեացն տատանէին, կամ զամուլ ստուերք Թանձրամածեալ կային: Տեսի 'ի ստորև զբնութիւն եղծեալ. լերինք փլուզեալք՝ ծածկէին աւերակօք իւրեանց, ժայռս անդր ընծայելով 'ի տեսիլ՝ սպառնալից և խառն 'ի խուռն չեղջիւռ տեսլս զմիմեամբք: Եւ որ զբորութիւն խզեաց զզօդ մեծազանգուած բլրոցն. հնդմբ ամեհիք հիւսիսոյ, եթէ դղրդումն երկրի 'ի հիմանց, կամ Թէ մեծատատ վըհժինդրութիւն դիցն ընդդէմ Հսկայից, ոչ գիտեմ: Սակայն 'ի ձոր անդր ահաւոր տեսլեն աշխարհակալք զնկարագիրը աւերանացն՝ զոր ածեալ զեղուն զաշխարհս:

ՊԱՐԹԵԼԸՄԻ. Ոչղևոր. Ա ճաքարսևայ:

ՆԷԱՊՈԼԻՍ

Ոչ այնպէս քաղցր, ոչ այնչափ հեշտալի են ծաղիկք և պտուղք զուարթացեալք ի շաղ առաւօտու, որչափ տեսիլն Նէապոլսոյ ի թօթափել զմուխ գիշերոյ: Հիացեալ էի հանապազօր ի ժամանելս ի ծառաստանս Ծովախնեայս, ուր խոխոջէին ալիք երբէք զհեզաստահ աղբերս: Աքանչացեալ ընդ տեսիլն՝ յիշուի ի սիւն մի, ժամս ձիպս ընդէզ զօդն զովագին անխորհուրդ և անվախճան մտաք: Այնչափ զօշասիլ էր տեսիլն՝ զի թուէր ինձ եթէ առաւօտածայինն այն օդ կերպարանափոխ առնէր զգայութիւն իմ, և թուէր ինձ անպատում խնդութեամբ վերանալ ի հաստատուն թեան երբէք զարարած հոգելն:... Թաւալակերպ պայծառութիւն գաշտին, օդոյն բարեխառնութիւն, լերանց շուրջանակի բոլորք, զուարթարար ձայնք գեղոցն և ձորոց՝ այնպէս հրապուրիչք էն զգայութեանց ի Նէապոլիս, մինչև զանխափ հանդիսան չնորհել ամենեցուն: Կիսամերկ Նէապոլեցին՝ գոհ ընդ կեանն զոր ընդ այնպիսի երկնից յերկրի, ի ձեռս բերել միանգամ զնաքարակիսն բաւական յոգեպահիկ, ոչ ևս հոգոյ զաշխատութենէ, և զկես կենացն անցուցանէ՝ կալով անչարժ ընդ ճառագայթիւք արեգական, և զմիւս կեսն բազմել ի կառս՝ զձայն խնդութեան արձակելով, և զդիշերս ընկոզմանեալ ի կիսա ճանապարհս տաճարին, և ոչ ինչ հոգալով զվաղուեանն՝ ննջէ ընդ ոտիւք արձանաց առաւածոցն իւրոց:

ՇԱՏՈԳՐԻԱՆ · Վ. Կ.

ԴՂՅԱՒՆ ՏԻՒՐՈՍ

Ձարմանալի ընդ դիպս մեծի քաղաքին, որ բնակէ ի մէջ ծովու ի կղզւոջ. ծովեզրն որ առ նովաւ՝ բազմաղաւարձ է և բերրի. բերք նորա ընտիրք, և խիտ առ խիտ անդ քաղաք և գիւղք՝ ընդ երեսս դոգդես շարայարեալք, և օդք գաւառին քաղցրախառն. զի լերինք պատապարեն զծովեզրն ի բռնակէզ հնձմանց հարաւայնոց, և հիւսիս ի ծովէ զովացուցանէ զայն: Երկիրն այն առ Լիբանոնս կայ լերին, որոյ գագաթն յամէն ծրարեալ կցի յաստեղս. առաւամանիք յաւիտենից ծածկեն զարաեւան նորա, և հեղեղատք ուղևնահոսք ձիւնալիրք գահավիժին ի ժայռից սպացելոց զգագաթամբն: Այս կողիք լերինն տարածանի անտառս մեծ հինաւուրց մայրեաց, դոգդես լինն համամասից երկրին՝ յոր ամբառնան տաղարթախիտք երկնուղէք: Եւ առ ստորև անտառին ի դարևանդ լերինն արօտք արգաւանդք, ուր արջառք բառաչեն ձարակաւորք, և խաչինք մատաղ գառամբքն խայտալով ի գալարուղ անդ մայեն, և բիւրակնեայք խաղան անդադար վտակք ականակիսք: Իսկ առ ոտամբ լերինն հովիտ բուրաստանաձև, ուր գարուն և աշուն տիրեն աջակից՝ միրգս ընդ ծաղկունս խառնեալ. ոչ երբեք խորշակ ժամս խամրիչ և կիզիչ բուսոց, և ոչ դառնահոտ փչմունք հիւսիսի իշխեն զդրախտին այնորիկ եղծանել զերփնաղարդ գեղեցկութիւն:

Մերձ ի գեղեցկին յայն ի ծովեզր ամբառնայ ի ծովու կղզին, յորում քաղաքն Տիւրոս կառուցեալ հոյաշէն՝ ընդ ակնառնս ալեաց Թռուի ձեմել որպէս դշխոյ ծովուց: Վաճառականք ի չորից ծագաց երկրի անդ հասանեն, և բնակիչք իսկ կղզւոյն գերահռչակեալք քան զամենայն վաճառականս երկրի: Թռուի քաղաքն այն մտեղծն անգր ոչ միոյ ևեթ ազգի, այլ հանուրց ազգաց մայրաքաղաք, և միջնակէտ վաճառականութեան: Ամբարատակք կրկին մեծամեծք բազկաձև կարկառին անտի ընդ ծով, լայնատարը գոր-

ծեալ նաւահանդիստ՝ ուր չիք հողմոց մուտ: Անդ է տեսանել զնոտառախիտ կայմիցն, և ի լայատափայտիցն բազմաթիւ ծածկեալ գծով: Քաղաքացիք առ հասարակ պարտին ի վաճառաշահ, և բազմագանձ նոցին մեծութիւնք ոչ կասեցուցանեն զնոսա ի վաստակոց՝ առ ի յաճախել և ևս զյուսոսիկ: Գոյանի անդ ամենայն ուրիք բեհեզն նուրբ եդիպտացի, և հրաշափայլ ծիրանին սիւսլացի ձանձախատրիճ, որոյ կրկնաթել եբանդոյն անեղծ ի ժամանակաց է փայլուճն, և ներկանին նուաւ ասուիք բարակամանք՝ զորս կիտուած ոսկւոյ և արծաթոյ և ևս գեղազարդէ: Շահակիպք ընդ ամենայն ազգս են փիւնիկեցիք մինչև ի Գադէս, և յաշխարհածովն իսկ՝ որ պատի զերկրաւ՝ եղեն նոքա միջամուխ. և ընդ ծովն Կարմիր յարածուփ երթևեկեալ, ընթանան ի կղզիս անծանօթս ի խնդիր ոսկւոյ և խնկոյ առնուշից և ազգի ազգի էքնազապիւտ կենդանեաց:

Զյագեին աչք իմ ի հայելոյ ի մեծագործ տեսիլ քաղաքին այնորիկ, ուր ամենայն ինչ ի յոյզս էր: Ոչ ևս տեսանէի անդ, որպէս ի քաղաքս Ելլադայ, արս դատարկապորտս և հեսաբրքիրս՝ որք պարապեն ի լսել նորագոյն ինչ ի հրապարակի, և դէտ կան եկեալ հասելոց ի նաւահանգիստն: Այլ արք անդ ղբաղեալք, կեսք ի թափել զբեռինս ի նաւաց, այլք ի կրել զաղնամաղնս վաճառաց, կեսք ի վաճառել կամ ի մերկանացս զետեղել, և այլք գարձեալ ի գրի առնուլ զհամար առի և տրոյ ընդ այլազգի վաճառականս: Իսկ կանայք պարապէին անդուլ ի մանել զաւր, յասղնեգործել, և ի ծալել զդիպակս մեծագինս:

ՖՆՆԵԼՈՆ. Տկեւնաբ:

ՀՈՈՎՄ

Տեսաք ապա միւսանգամ զերինս Պէլոպոնեսեայ, և ի հեռաստանէ ողջոյն եառ հայրենեաց իմոց: Ոչ յամեցին և ափունք Իտալիոյ ի ծոցոյ ալեաց ի վեր երևել: Այլ յուզմունք սրտի նորանորք կային ինձ առաջի և ի բռնադատին: Ի դնել զոտս իմ յերկիրն՝ ուստի ելանէն հրովարտակք իշխանականք ընդ ամենեսին, պահեաւ սիրտ իմ յերեսաց մեծութեան որ ցայնժամ անծանօթ էր ինձ: Զի ընդ գեղեցիկ շինուածոց Ելլադայ՝ փոխանակէին ընդարձակատարը շինուածք, այլ ինն հանճար ի նոսա տպաւորեալ: Եւ որչափ յառաջ գնայի ընդ Ապպեանն արահետ, այնչափ յաճախէր յիս հիացումն. զի ճանապարհս այս սալայատակ ի ժայռից Թռւի ինն կազմեալ առ ի տոկ անցից ազգի մարդկան, և հատեալ անցեալ ընդ լերինս Ապուլիոյ, ընդ ծոց Նէապոլսոյ և ընդ դաշտավայրս Անքուբայ, Սպոլայ և անդաստանացն Հռովմայ, գործէ անցս երկայնաձիգ քան զերկաքարիւր մղոնաց, զարդարեալ ասոի և անոի տաճարօք, տպարանօք և շիրմօք. և գայ յանգի ի քաղաքն յաւերժական, ի մայրաքաղաքն սիրելեաց յարժանաւոր: Ի տեսիլ այսքան հրաշից եղէ ի զմայլման, որպիսի ինչ ոչ գուշակել և ոչ ընդ միտ անգամ կարէի ածել:

Բարեկամք հօր իմոյ, որոց յանձն եղեալ էի, գուն գործէին սթափեցուցանել զիս, այլ ի զուր. չրջէի անգադար ի Կապիտոլէ յԱտեանն հռովմէական, ի հայրենեացն Թագէ ի դաշն Արեսի. դիմէի ի Թաար Գերմանիկոսի. ի չերիմն Ագրիանոսի, ի կերկիէան Ներոնի, յԱմենագից մեհեանն Ագրիպպայ. և յարշաւանս անդ՝ զհասակարն հետաքննութեան ի մուտացնս տրկեալ էր զանփառունակ եկեղեցւոյ քրիստոնէից զայրագութիւն:

Ոչ պարտասէին աչք իմ ի զննին ժողովրդեանն որ յամենայն ազգաց երկրի համախմբեալ, և չուոյ գնդիցն հռովմայեցւոց, կելտաց, գերմանացւոց, յունաց և ափրիկեց-

ւոց, զանազանեալ իւրաքանչիւր զինու և զարդու իւրեանց։ Ծեր սաբինացի սանդալ ՚ի յոտս կազմեալ ՚ի կեղևոյ ցարտասոյ փայտ առ ծիրանագեայց առեներակալն, զես-պակ առն հիւպատոսի խափանելին կառք կնոջ պոռնկի. արջառք առուտրոյ Կլեառնիայ՝ ձգելին ՚ի հռովմէական հրա-պարակին զվրդովեանցն սայլն վաղնջական. տղամարդիք որոց ասպետ Հռովմայեցւոյ՝ արդելուին զձանապարհն դիցանուէր. քուրմք դիմելին խոնարհ արկանել աստուա-ծոց իւրեանց, և հռետորք առ ՚ի բանալ զվարժարանս։

Քանիցս եղև յայց ՚ի ջերմուկս զարդարեալս մատենա-գարանաք, և յատարանս՝ յորոց կէսք վաղ կործանեալ, և այլք էին կիսաւերք՝ առ ՚ի կանգնել աւերակաք նոցին այլ շինուածս։ Ընդարձակածաւալ ծիր տեսուելեան ընդ մե-ծահառոյց հռովմէական ճարտարապետութեան կցոր-դեալ. ջրմուղք՝ որ ճառագայթաձև ՚ի մի կեդրոն դիմեալ, ջուր ընդ յատենական կամարս ածեն տիեզերակալ ժողո-վըրդեան. անլռելի խոխոջք աղբերաց, բազմութիւն անդ-բեայ՝ որպէս ժողովրդոյ արձանացեալ անշարժ ՚ի մէջ յուզելոյ ժողովրդեան, արձանք յիշատակի ամենայն աշ-խարհաց և ժամանակաց, վաստակք թագաւորաց, հիւ-պատից և կայսերաց, կոթողք յաւիտենական ՅԵգիպտո-սէ, և շրիմբք բարձեալք ՅԱլպադայ. գեղ ինն, չգիտեմ որ-պիսի ՚ի լոյս նորա, սողոքք և կերպարանք լերանցն, խըս-տուելութիւն իսկ ընթացից Տիբերի, ջնկք դժուարընդել երի-վարաց՝ որ գնան անդր յուսմէ, անդաստան՝ զոր արդ ժո-ղովուրդ Հռովմայ չառեալ յանձն մշակել, սահմանեն ամի ամի ազգաց նուաճելոց ընդ իւրև զպատիւ տալոյ իւր կե-րակուր։ Եւ զի մի մի թուելցեմ. ամենայն ինչ ՚ի Հռովմ զիշխանութեան և մշակնկնութեան բերէ զինեք. զեղգիպ պատկեր իսկ յաւերժական քաղաքին տեսի ՚ի Կապիտոլին՝ քանդակեալ ՚ի քարեղէն ժայռս, զի մի և պատկեր նորա ջնջեսցի։

ՇԱՏՈԳՐԻԱՆ. ՎԿԱՅ։

ԲԵՏԻԿ

Երկիրն այն արգաւանդ, ուր բարեխառն է երկին և հանապազօր ջինջ և անամպ, ՚ի Բետիս գետոյ ընկալաւ զանուն, որ անցեալ ընդ այն՝ յոլիվիականն երթայ անկանի ՚ի ծով մերձ ՚ի Հերակլեայ արձանն, ՚ի տեղի՝ ուր ծով զայ-րագին փըլուզեալ երբեմն զամբարտակս իւր, անջրպե-տեաց գԹարշիշ ՚ի մեծէն Ասիրիկեայ։ Ամենայն բարու-թիւնք ոսկի գարուն Թուխն յարտակայեալ յերկիրն յայն. ձմերուկք եղկք են անդաստոյ, և ոչ երբեք գառնահոտք փչեն անդ հողմք հիւսիսի. և զամարայնոյ մեղմն զսօթի ղեփիւռք զովարարք, որ զմիջաւուրք հնչեալ հանապազ քաղցրախառնեն զօդս։ Երջանիկ իմն ընդ ամն ողջոյն է անդ տեսանել զուգաւորութիւն գարնայնոյ ընդ աշնան, որ Թուխն աջակից իրերաց յօրինել պարզ։ Հովիւք և դաշտք հարթածաւալք՝ երկնից ՚ի տարւոջ մատուցանեն հունձս. և զձանապարհս ցանկեն երկաւաւք տարդնեք և նռնենիք և յասմիկք, և այլ ևս Թուփք մշտադալարք և յարա-փեթիթք։ Ծածկեն զերկինս երամակք խաշանց, մատուցա-նելով զտաք նուրբ՝ ցանկալի ազգաց առ հասարակ ծանօ-թից։ Են ՚ի դեղեցկահնչիւն երկրի անդ և ոսկեհանք և ար-ծաթահանք. այլ բնակիչք երկրին պարզամիտք, և պարզ-մտութեամբն բարեբաստիկք, ոչ արժան համարին գրել ընդ մեծութիւնս իւրեանց զարծաթ և զոսկի, զոյն եւեթ վարկուցեալ մեծութիւն՝ որ զպէտս կարեւորս կենաց մարդ-կան անօրինել։

Ի սկզբան անդ վաճառականութեանս մերոյ ընդ նոսա, դասք զոսկին և զարծաթ ՚ի նոյն պէտս առ նոսա ՚ի կիր արկեալ, յոր ինչ ժամանակի, մինչև ՚ի խոփս արօրոյ ձու-լեալ. քանզի չուներով նոցա ընդ այլ ազգս առուտուր, չէին նոցա պէտք դրամոց։ Գրեթէ առ հասարակ հովիւք են կամ հողագործք. սակաւք ՚ի նոսա գտանին ձեռագործք, զի կարեւորաց եւեթ ՚ի տոյդ պէտս մարդկան արուեստից

ներքեն. մանաւանդ զի և բազումք թէպէտ և հովիւք կամ մշակք, պարապեն և յարուեստս կարեւորս անպատճառ և սահմանադիր կենաց իւրեանց:

Կանայք նոցա մանեն զսպրն գեղեցիկ, և կերպասս անոխ նուրբս և ձիւնափայլս ոստայնանկին. նոքա Թրքին հաց, և խոհակերքն. և ոչ ինչ դժուարին է նոցա վաստակն, զի կերակուր բնակչաց երկրին միրգ է և կաթն, և դուն ուրեք խաշ: Տրեխս Թեղեաց՝ի մորթոյ խոյոց՝ի պէտս իւրեանց գործեն, և արանց իւրեանց և որդւոց: Վլասս մաշկեայս կազմեն մոմապատս կամ՝ի կեղևոյ ծառոց. կաբեն զձորձս ընտանեաց և լուանան. կոկիկ և բարեկարգ զառնեն զամենայն ունկեն: Դիւբակազմք իսկ են ձորձք նոցա. զի՝ի քաղցրախառն նահանգին վերթ ինչ եւեթ նուրբ և Թեթև կերպասս, ոչ հատեալ և ոչ ձեւեալ, ՚ի ծալս վերուստ՝ի վայր երկայնաձիգս արկանեն զանձամբ առ՝ի ծածկոյթ, իւրաքանչիւր ըստ կամի յարդարեալ զայն զիւրեւս:

Արանց՝ բաց յերկրագործութենէ և՝ի հովուելոյ խաշինս՝ չիք այլ արուեստ, բայց հիւսնել զիպայս և դարբնել զերկաթ. և յերկաթոյ իսկ գրեթէ ոչ ինչ դարբնեն, բայց միայն անօթս երկրագործութեան: Ամենայն որ՝ի ճարտարապետութենէ պատկանին արուեստք՝ առ ոչ ինչ են նոցա պիտանացու. զի ոչ կառուցանեն նոքա ապարանս, առաւելագոյնս իմն համարեալ՝ի սէր երկրի զակատուն՝ շինել առ առն երկարատև յոյժ քան զկեանս մեր. այլ շատ համարին պատսպարել վարկպարագի յարկածից օդոց: Իսկ զայլ ամենայն արուեստս որ մեծարին առ Հելլէնս, առ եգիպատիս և առ այլ ամենայն բարգաւաճեալ աղինս, առեան որպէս գիւտս նանրասիրութեան և մեղկութեան: Ի լսել նոցա զայլոց ազգաց շինուածս հոյակապս, զսպասս ոսկեզէնս և արծաթեզէնս, զկերպասս ասղնագործեալս ոսկւով և ընդելուզեալս ականիւք պատուականօք, զընտիր իւղեփեղումիւնս, զհամագամ խոհարարութիւնս, և զնուագարանս՝ որոց ներդաշնակութիւնք կախարդեն

զլսելիս, ասեն. Աւաղ ազգացն այնոցիկ՝ որ այդչափ աշխատութիւն և հնարս ՚ի կիր արկանեն առ՝ի զեղծուն իւրեանց. աւելորդք այդոքիկ մեղկեն արբեցուցանեն և խոշտանգեն զսաստիկս իւրեանց. խակ որ վըխակք իցեն յայնցանէ, հրապուրեն առ՝ի սահանալ զայնոսիկ զրկանօք և բռնութեամբ: Արժան իցէ համարել սակաւածս, որ ձեռնակալք են մարդկան. մի թէ բնակիչք աշխարհագոյ այդոցիկ առողջապոյնք իցեն քան զմեզ և զօրաւորք, կամ երկայնակեացք քան զմեզ, կամ առաւել ընդ իրեարս միաբանք, և կամ ազնիւ և անդորր և զուարթ քան զմեզ վարիցեն կեանս: Նա աւանիկ հարկ է նոցա նախանձընդդէմ գոլ միմեանց, հաչել և մաչել վատ և անարգ մանաւանդ, յար՝ի տաղնապալի կալ փառասիրութեամբ, երկիւղիւ և ագահութեամբ՝ անձաշակք՝ի վայելից անապական և անխառն բերկրանաց. զի ընդ գերութեամբ կան կարծեցեալոց կարեացն, յորոց համարին զբարեբաստութիւն իւրեանց:

Եւ յառաջ ածեալ Ադովամայ զբանն, ասէր. Այսպէս ահա իմաստասիրեն Բեռիկեցիքդ, ՚ի բնութենէ եւեթ անարուեստ դատարարակեալք յիմաստութիւն: Գարշին նոքա՝ի մերմ քաղաքականութենէս, և պարտ է խոստովանել զի նոցայն գերազանցեկ ցանկալի պարզութեամբն: Հասարակաց վարեն կեանս, առանց լորաբաժին առնելոց զերկիր. տանուտէր իւրաքանչիւր հրամայէ՝ի տան իւրում որպէս արդարև Թագաւոր, և իշխանութիւն է նմա պատուհասելոց զորդիս իւր և զծառայս յանցաւորս. այլ մինչ չէ պատուհասեալ, հարցանէ զընտանիս իւր: Բայց դուն ուրեք պէաք լինին պատուհասք. զի անմեղութիւն բարւոյ, հաւատարմութիւն, հլութիւն, և առաքինութիւն չարեաց բնակեն յերանեաէս երկրին: Ասացէք, զորմէ աւանդեն յերկրէ յերկինս խոյս առեալ, Թուի տակաւին ասա՝ի տարրեւ առ նոսա ապաստանեալ: Զեն նոցա պէաք առեներց, զի խիղճ մտաց գոսացոյ է նոցա: Հասարակաց է նոցա ամենայն ինչ. պղծաբերութիւն ծառոց, արմտիք երկրի, և կիթ անդէոց, այնպիսի առատ պատրաստեն նո-

ցա մեծութիւնս, զի ազգն այն սակաւապէտ և զգաստ՝ չկարօտի քաշխից առ իւրաքանչիւր պէտս: Ի բարեբաստ գաւառին աղգատահմ իւրաքանչիւր ոչ՝ ի միում ուրեք զկայ առեալ, այլ տեղւոջէ՝ ի տեղի՝ ի սպառել բերոց և՝ ի չգտանել անգ ճարակ խաշին՝ փոխեն զվրան իւր: Եւ այսպէս չունելով ինչ նոցա անփական առ՝ ի պաշտպանել զայն յերեսաց այլոց, սիրեն զերեսս որպէս զեղբարս, և չեք ինչ՝ որ ագահել զսէր նոցա կարիցէ: Մերժուին մնոսի մեծութեանց և պատիւ բերկրանաց պահպանէ զնաղաղութիւն նոցա, զմիաբանութիւն և զաղատութիւն. ազատք են ամենեքին, և ամենեքին հաւասարք:

ՖԵՆԵԼՈՆ· Ցկեմար:

ՍՊԱՌՆԱՅՆ ԱՐԱՐԻԱ ԵԻ ԲՆՈՐՔ ԱՐԱԲԱՑԻՈՑ

Նկարեսջիք՝ ի միտս ձեր երկիր լիոն ապաւէր և ծարաւեաց, արփի հրաւառչոր, երկինք երաշտացեալ, դաշտս աւազակէնս, և լերինս քան զսոսս ցամաքագոյնս, զորովք շուրջ տարածեալ աչացն՝ խանջեալ լքանին, կենդանութեն դոլով անգ և ոչ մի ինչ նշան՝ յոր ինչեալ հանդչիցին: Երկիր մեռեալտիպ, կամ լաւ ևս ասել՝ երկիր կեղեքեալ՝ ի հողմոց, յոր ոսկերոտիք ևեթ և խիճք սատ և անդ սիւռեալք, և ժայռք ուղղաբերձ և կէսք թաւալեալ. անապատ ամենևին թափուր, ուր չեղև երբեք ուղևորին ընդ հովանեաւ ոգի կլանել, ուրանօր կենդանիկ ոք նմա չիք, և ոչ որ զկենդանութիւն բնութեանն՝ ի դէմս ածիցէ նմա. ամենևին ամայութիւն, քան զամայութիւն անապատաց ևս ահագին յոյժ. զի անդ ծառք թաւին լիոն բնակք առ միմեանցեան ուղևոր, որոյ ասասէն քան զամենայն միայնութիւն առաւել ևս անմարդացեալ կողոպտուտ յամենայնէ, քան մարդի և յանեղս բացավայրին՝ համայն ուրեք նշմարե զնոր

գերեզման: Ոչ յայլ ինչ ծագէ անդանօր լուսաւորութիւն առընչեան՝ ոսրագիծն քան զաղջամուղջ դիշերոյ, բայց զմերկութիւն իւր հոլանել և զտխարութիւն, և ածել նմա՝ ի տեսիլ զահագին վտանգն յոր անկեալ կայ, հետախաղաղ ծածկելով յաչաց նորա զպատեհչս սահմանափակս, և տարածելով շուրջանակի զանդունդն ամբաւութեան, որ անընդհատ կայ ընդ նա և ընդ երկիրն բնակացեալ. ամբաւութիւն՝ յորմէ՝ ի զուր ձգնիցի անցանել. զի քաղց և ծարաւ և սոսկ բռցառոչոր քաղեն սպառեն՝ ի նմանէ և զմէն մի վայրկեան նշնարեալ նմա ընդ մէջ յուսահատութեան և մահու:

Սակայն գիտաց Արաբացին ուղղոտ իւրով անցանել և ինքն հանել զվայրն, յորմէ՝ ի բաց դասաբկացեալ էր բնութեան. նոքին ապատանք են նորա, նոքին ամուրք հանգստեան նորա, և պահանորդք աղատութեանն: Այլ էր որով իւրք ոչ զեղծանիցին մարդիկ: Արաբացին այն ազատ և ինքնահրաման, ՝ի հանգստի և՝ ի ճոխութեան, փոխանակ մեծարանս դնելոյ անապատացս այսոցիկ՝ որ ազատութեան նորա են պատուարք, շաղախ զնոսա յեղեղունս. հատեալ անցանէ զնոքօք առ դրակիցս յաղգաց բառնալ՝ ի նոցանէ գերի և արծաթ. զանմարդի կայանս՝ ի դիւր երթևեկութեանց իւրոց առնու, յորս ձախողակի լիոն զուարճանայ նա քան ընդ ինքնիշխանն ազատութիւն. քանզի և յոր միանգամ բռնն հարկանէ՝ և ոչ մի ինչ է որ ոչ յաջողիցէ նմա: Թէպէտ՝ ի կասկածի կայցեն մերձակայքն հանապազ, և առաւել իսկ կայեն զօրութեամբ, սակայն՝ ի դերև հանել զհետամուտս այնոցութիւն նոցա, և ածէ անդադարհաս զամենայն զոր միանգամ՝ ի նոցանէն թափեաց: Արաբացի որ զասպատակութեան կեանս զայս կամիցի ընտրել, անդամն այնպէս զանձն՝ ի տոկս ճանապարհին. տայ զանձն՝ ի վարժս աքսութեանց և քաղցոյ և ծարաւոյ և տօթոյ, միանգամայն և զուզտ իւր հրաշանգէ՝ ի նոյն կէտ նպատակի: Ցետ ոչ բազում աւուրց ծնանիցի նորա, թէքէ զարուն ընդ որովայնին, և ամիսք գնա

այնպէս բեռնիս դժուարակիրս բառնալ՝ ի վերայ, զի վար-
ժեսցի տանել. և ոչ առնու ինչ ի բաց անտի, բայց զի զա-
ռաւելն ի վերայ յաւելուցու: Սկիզբն առնէ սանձ կերակ-
րոց նոցին արկանել, չթողացուցեալ զբուա յարաժամ
և զքուր ի ծարաւուն, և ձգէ երկայնէ տակաւ և զմիջոց
ժամանակին, յապաւեալ և զկերակուրն անգամ: Ա՛յն ինչ
յոյժ գան մարմնոյն, վարժէ յընթացս՝ յօրինակէ ձիանին
դրգռեալ, մինչև Թեթևաս հանգոյն նոցին և քան զնոսա կո-
րովիս յարդարել. ի վերջ՝ յաներկուանալ նորա զուժ-
ոյ, զթեթևընթացս վազնգն, և զժուժկալութենէ ուղ-
տուցն՝ յայնժամ ապա բեռնաւորէ զնոսա իւր և նոցա
կերակրովք. չուէ նոքօք, և ահա յանկարծ ի գլուխ սահ-
մանաց անապատին՝ անկանի ի վերայ որոց նախն ընդ-
առաջին, զառ և զապուռ ժողովէ յարկացն վայրաստանին,
և յաւարէն զուղտսն ծանրաբեռնէ. և թէ իցեն որ զնէտ
մնանիցեն, և փախուստ տապնապալիցեն հասցէ ի վե-
րայ, անդ հանդէս է մատոյ իւրոց և նոցա Ճարտարութեան:
Չեծեալ յուղտուցն օգապար՝ առաջնորդէ հօտին անդա-
դարս ի վազից զուխ և զդիչեր, ոչ ծարաւոյն և ոչ քաղցի
ուշ եդեալ. զերթս հարիւր փարսախս հեշտաւ հատանէ
յուխթօրեա, ոչ թօթափեալ ի թիկանցն զբեռինս յաւուրս
անդ վաստակոց և չուոյ, և ապ նոցա հանդիստ ժամուս
չափ յաւուրն և բուռն մի հայս: Այսպէս յաճախ զնոն և
կամ զսուտն աւուրս ընթանան անդրադարձին
ծարաւոյ. և թէ երբեք եղիւր վարահասս կիսով հե-
ռագոյն կայցէ՝ զքոյն առնուն զնոս. պատեք ծարաւոյն որ
զնոսա տապնապէն՝ շտապ զքայլափոխս, և յայն մի նուագ
զանցելոց և զնոյնքանի ապագայից ըմպէն զտեղի. զի եօթ-
նեկաց յոգունց են յոլովակի Ճանապարհք նոցա, և ըստ
Ճանապարհին են և պահոյն աւուրք:

ՊԻՒՖՖՈՆ. Բնական Պատմ:

ՀՈՐԻԶՐԴԱՆՈՒԹԻՒՆՔ Ի ՎԵՐԱՅ ԱՒԵՐԱԿԱՑ ՊԱԼՄԻՐԱՑ

Ա՛յն ինչ տակաւին ի մուտս լեալ էր արեգակն, և կա-
մար շառագոյն գեռ ևս յայս առնէր զհետս ընթացից նո-
ցին զբացական լերամբք երկրին Ասորւոց, և ահա լուսին
կարակնաձև ամբառնայր յարեւելից ընդ կապուտակ օդոյն
ասպարէզ, ի վերոյ գալտաձև գետափանցն Եփրատայ:
Անամպ էր երկին, և օդ հանգարտ և խաղաղական. նուազ
պայծառութիւն տուընչեան ամրքեր զարհաւիրս խաւա-
րի, և գիշերոյն զովութիւն մեղմեր տակաւ զտապ երկրին
բորբոքելոյ. մեկնեալ էին ուղտաերամակք ի գոմս իւրա-
քանչիւր, և գոյն անգամ շարժուձն կենդանական չերևէր
ղերեսաք տօթակէզ անապատին: Լռութիւն համատարած
պատեալ էր զամենայն, և միայն երբեք երբեք լսելի լինէին
կռիչք եղերականք հաւուց գիշերայնոց և աղուհասուց վայ-
րենեաց: Ստուերք գիշերոյ թանձրանային տակաւ, և աչք
իմ բաշտեալք յաղջամղին մթութենէն՝ զանազն և զղո-
մոյ հաղիւ նշմարիւին զընդ աղօտ կերպարանս: Վայրքն ա-
մայացեալք, գիշերն խաղաղաւէտ, և տեսարանն վսեմա-
կան՝ զերկիւղածութեան իմաստից սոսկուցին զինեւ արկա-
նէին: Տեսիլ անմարդաձայն քաղաքին, յիշատակ ժամա-
նակացն անցելոց, և առաջնկայս իրաց հանդամանք ընդ
նոսին համեմատեալ, այս ամենայն առեալ ձգեցին զմիտս
իմ՝ ի խորհուրդս մեծամեծս: Ննջայ՝ ի վերայ սեան միոյ
խորտակելոյ, և զարմուկն յետ՝ ի ծունկս եդեալ, և զձեռն
ի ծնօտի, հայեի ընդ անապատն, հայեի ընդ աւերակսն,
և այլ յայլմէ եղեալ դանդաչէր անձն իմ՝ ի ցնորս լինն
անրջականս: Ապաքէն աստանօր, ասէի ցանձն իմ, աստա-
նօր բարգաւաճէր երբեմն քաղաք Ճոխ և փարթամ. աստա-
նօր կանգուն կայր աշխոյժ թագաւորաց մեծապետաց: Ա՛յս
տեղիք անշէնք, ամբոխ բազմութեան մարդկան երեւեկեր
ի սոսս. այս որմնափակք անշշունչք, շհաւինն զինուց և
ձայնք ուրախութեան հնչէին ի սոսս. և այս դերբուկք

սեանց մարմարեայց կուտակեալք՝ ապարանս հոյակապս կազմէին. և այս սիւնք կործանեալք՝ զարդք էին մեծակառոյց մեհենից. այս հեաք Ջեմելեաց՝ հրապարակք էին հասարակաց: Էր երբեմն զի անդր խուռնընթաց Ջեպէին միահամուռ ժողովուրդք առ ի հարկանել զպատշաճ պարս սիս աստուածպաշտութեան, և ի պաճարել իւրեանց զպէտս կենաց իւրեանց: Ճարտար արհեստագէտք անդր կուտակէին զՀոխութիւնս աշխարհաց. անդանօր լինէին տուրևառիկ փոխոխմունք ծիրանեացն Տիւրոսի ընդ նրբաթել մետաքսից Ջենաց աշխարհին. ասրանիւթ օձոցացն Ֆաշմիրայ ընդ պճնազարդ կապերտիցն լիւդացւոց. բազմագունի ականցն Պալթիականին ընդ մարգարտաց և ընդ ծխանելեաց աշխարհին արաբացւոց. և ոսկւոյն Սոփիրայ ընդ Թուղեան անագին: Եւ զինչ ինչ մնացեալ էր արդ ի քաղաքէն մեծէ. կմախք ևեթ ազեատալիք: Զինչ ինչ նշխարեալ էր ի լայնածաւալ պեատութենէն. փիշատակ ևեթ աղօտ և մնամոլ: Ի կամարակապ գաւիթս սրբին, ուր աղմուկք շփոթից հնչէին անգադար, անդ կալեալ ունի զամենայն անգորրութիւն մահու. զբազմամբոխ հրապարակն փոխանակեալ է լռութիւն գերեզմանաց, և զՀոխութիւնս վաճառաշահ քաղաքին աղքատութիւն քաշումնելի: Աղբունական ապարանք՝ գադաթք լեալ են գազանաց, և առ սեմովք տաճարացն մնակալին հօտք ոչխարաց, և յայլ բնակութեան աստուածոցն որջանան զառունք զաղջամոմիք: Ո՛վ, զնաթրդ խաւարեցան այնքան փառք եւ պերճանք: Ո՛րպէս չքացան այնչափ վաստակք և աշխատութիւնք: Ա՛յսպէս ուրեմն՝ ի կորուստ դնան ձեռագործք որդւոց մարդկան: Ա՛յսպէս անհետ կորնչեն պերճութիւնք և ազգք համբերին:

Եւ վէպք անցելոց ժամանակաց յայտ յանդիման՝ ի միտս իմ՝ նկարէին. զմտաւ ածէի զամն զառաջինս յորս բազմաթիւ ազինք հոյակապք ունէին զվայրս զայնոսիկ. յուշ ածէի զԱորեսատեաց զափսիքք Ափրածանւոյ, զՔաղդէացին՝ զեզերքք Եփրատայ, զՊարսկին իշխեցող յին-

գոս գետոյ մինչև ցծովն Միջերկրեայ՝ ի համար բերէի զԹագաւորութիւնս Դամասկոսի և զԵդովմայ, զԲրուսաղէմի և զՍամարիայ, զդոս փղշտացին և զշահանդիրն Փիւնիկեցի, և ասէի ցանձն իմ. Ա՛յս երկիր ասորւոց, որ արդ Թափուր է՝ ի բնակչաց, քաղաք քաղաք հարիւրաւորք էին երբեմն՝ ի սմա, և գաշտավայրքս այսօրիկ լի էին գեղիւք և աւանօք և ագարակօք: Ամենայն ուրեք արտորայք արօրագրեալք, ամենայն ուրեք երիվեակք ձանապարհաց, և խիտ առ խիտ բնակութիւնք: Բայց, և զի երեն այնչափ հրաշակերտք մարդկեղէն ձարտարութեան: Ո՞ր այն պատնէշք Նինուէի, ո՞ր պարիսպք Բաբիլոնի, ո՞ր ապարանք Պերսեպոլեայ, և մեհեանն Արեգ քաղաքի, և տաճարն Երուսաղէմի: Ո՞ր իցեն գուժմարտակք նաւուցն Տիւրոսի, և մեթերք Արագայ, և գործարանք Սիփնի. ո՞ր խոշժան նաւատեաց և նաւապետաց, վաճառականաց և զօրականաց. ո՞ր մշակքն արօրագրերք, և հունձք և հարաւունք, և հօտք ոչխարաց, և միանգամայն ամենայն կենդանիք երեսաց շարժուն՝ որոյք պահէաք այս երկիր: Աւաղ, ահա յածեալ հրկիզեալ ես ընդ երկիրս ընդ այս աւեր և խոպան նացեալ. տեսի ես զվայրսն յորս հանդիսացան այնչափ ճոխութիւնք. և ահա լքեալ և միայնութիւն... Ինդրեցի զաղգս վաղեմիս և զարարուածս նոցա, և զհետս նոցին հազիւ նշմարեցի իբրև զհետս անցաւորի որ ընդ փոշի անցեալ էցէ: Տաճարքն կործանեալք, ապարանքն տապալեալք, նաւահանդիստքն խցեալք, քաղաքք աւերեալք, և երկիրն անբնակ՝ վայր գերեզմանաց: Ո՛վ աեր. և ուստի այսչափ տարօրինակ փոխոխմունք. և զի այսպէս ծայրայեղ անջափութեամբ այլափոխել բաղդի կոչմանցս այսցեկ: Էր վասն այսչափ քաղաք անկեալք և կործանեալք: Եւ էր ապագաւ նախնին այն ժողովուրդ ոչ ևս կենդանացեալ և ոչ ևս ածէ յաղգ և ի սերունդ:

ՎՈՒՆԵՑ. Աւերակք:

ԱՆԿԵԼԱՆՈՑ ԱՊԻԿԱՐ ԶԻՆՈՒՈՐՑԱՑ

Ոչ՛ ուրուք՝ ի մէնջ չիցէ տեսեալ երբեք զզօրականք հինաւուրց, յուրաքանչիւր ժամ աւուրն ասա և անդ դեռնամած Թաւալեալ՝ ի կռիւ յատակս տաճարին, որ՝ ի միջի անդ շքեղ օթևանաց նոցին կառուցեալ կայ: ՍպեղտակուԹիւն բազմաժամանակեայ ալեացն, սպիք Ճակատու նոցա, և մարմնոյն սարսուռ՝ զոր ամացն ևԹէ ծանրուԹիւն զօրացաւ՝ ի նոսա տպաւորել, այս ամենայն մեծարանս իմն զառաջինն՝ ի սիրտս մեր ազգին: Այլ յորժամ տեսանիցէ ոք զնոսա՝ զի բաղուկ՝ ի վեր ամբարձեալ և Ճգամբ իմն առ իրեարս զդողդոջուն ձեռան մերձեցուցեալ, զնա՝ որ առին է սիեզերաց և սրտի նոցա և երիկամանցն վկայ՝ կարդայցեն. յորժամ տեսանիցէ ոք զնոսա յեռանդագին պաղատանս անդ՝ ի մուտս օծս արկեալ բռվանդակ և զգաւան՝ որ՝ ի վերայ կայ նոցա և զանցեալ վիշտս վանգից. յորժամ նկատիցէ զնոսա խաղաղագին դիմօք յոտին կանգնեալ, տպաւորեալ ուշեալով՝ ի խորս ոգւոյն զանդորրուԹեան և զյուսոյ նշոյլս ՃառագայԹից, ապէ ասա, զորպիսի խանդաղատանս ոչ զգայցէ ոք յայնժամ: Ո՛հ, մի լիցի քեզ յայնմ պահու արտասուս՝ ի վերայ նոցա արկանել, մի՛ որ բերկրուԹեամբք ևԹէ զաչխարհի զերանուԹիւնն չափիս: Ապաքէն նուաղեալ է տեսիլ նոցա, սարսե և գողայ մարմինն, և մահ՝ ի համար արկանէ զքայլս ոտիցն, այլ զանհրաժեշտն զայն վախճան՝ յորոյ և յիշատակէն դու զարհուրեալ փախչիս, նոքա անվեղոյլ այնդուԹեամբ տեսանեն առ դուրս եկեալ հասեալ, և նաև ընդառաջ իսկ դիմեն նմին, յիշատակաւ Աչնորիկ՝ որ բարին է և ամենազօր, և զոր չէ հնար սիրել՝ առանց մխիԹարուԹիւն՝ ի նմանէ ընդունելոյ: Օ՜ն եկայք առ վայր մի՝ ի զնին հրաշեցս, որք զկրօնական կարծեօք արհամարհեալ անարգէք, և գերազանցիկս՝ ի լոյս զանձինս համարիք. եկայք տեսէք՝ ի մօտոյ զինչ առ երջանկուԹեամբ սոցա՝ կարծեցեալն ձեր

արժիցէ գիտուԹիւն: Այլ, կամ փոխեցէք զպայման վիճակի մարգկուԹեանս, և ևԹէ բաւականք իցէք՝ հաստատ կորզս արարէք զնոսա վայելից աշխարհս, և կամ ուսանիցուք գոնեա մեծարանս գնել կրօնից՝ որ զին՝ ի ձեռս նոցա մատուցանել ընդդէմ բանուԹեանց բաղդին: Եւ քանզի բանաւորացն քաղաքագիտուԹիւն ձեռնտպահ լեալ զգուշացաւ նմա, զի ոչ զօրէր խչխանուԹիւն նոցա յաղողել՝ ի մեզեղին յայս ձեռնարկ, գուք՝ որ մարդասիրադոյնքդ էք բնուԹեամբ, մի խիստս և մի ահաւորագոյնս քան զնոսա լինիջիք: Եւ ևԹէ անագորոյն վարգապետուԹեամբ կամիցիք բառնալ առ՝ ի ծերոցն, ի խօճացեալ և՝ ի անանկ մարդկանէն՝ զիմակն զայն առհաւատչեայ երջանկուԹեան, յոր ևԹէ ապաւինեալ է նոցա, ապէ ընԹացէք և՝ ի բանտս անդ և՝ ի տորեթկրեայ խորս՝ ուրանօր տառապեալքն չաբաղուկ տանջին՝ ի չղԹայս, և ձեռօք ձերովք փակեցէք և զդոյն զայն մուտս՝ ուստի նշոյլք ինչ լուսոյ ժամանեն առ նոսա:

ՆԵՌԻՐ:

ՉԵՆՔ ՏԵԼԵՄԱՒՑԱՑ

Տելեմաք, որ կայրն սրտաբեկ և անմխիԹար, Թողեալ զորտուԹիւն՝ առ զգէնս իւր, զորս խնասուհւոյն ԱԹենասայ պարգևեալ էր նմա, ՝ի կերպարանս Մենտորի՝ իբր Թէ՝ ի սալենատուոյ Ճարտարէ զպինոսիկ առեալ, բայց Հեփեստեայ զպինոսիկ տուեալ էր դարբնել՝ ի ծխամած խոռոչս լերինն Եաննայ: Եւ էին ողորկ և ջինջ իբրև զբիւրեղ, և փայլուն իբրև զՃառագայԹս արեգական:

Քանդակեալ՝ ի զլահն Պխիդ և Պալլաս կային՝ ի վեսեր, երկաքանչիւր իւր անուն զնորահերս քաղաքին կամելով զիտաս. եւաժանեաւն Պխիդ փեռեհեր զերկիր և երկինս սոս փռնչելով ընդոստնոյր բոցային և փրփրբեալս.

բաշք նորա 'ի հողմոց զուլամն փաղփեալ, սրունքն Ճապուկք հաստաջիլք կորովակի և թեթեւ ընդձեալք, և թռչելը ինքն Ճախր առնուլ քան քայլափոխս, զհետս անդամ արշաւասոյր սմբակացն ոչ թողուլ, և խրխինջ նոցա կարի գրեթէ գոյր լսելի:

Այլուր Աթենաս մատուցանէր բնակչաց նորոյ գաւառակիցն զպատուղ իւրատունկ ձիթենեացն. ուղէշն այն պաղատուր 'ի դէմս ածէր զցանկալի խաղաղութիւն հանդերձ լուսեթեամբ, զեր 'ի վերոյ խաղմական ամբոխութեանց՝ որոց երիվարն այն էր նշանակ: Գուսպարայողի արձանանայր պարզ և օգտակար պարգեւօքն դիցուհին, և քաղաքն հոյակապ 'ի նորին անուն յորջորջէր Աթենք:

Եւ այլուր գարձեալ շուրջ զդիցուհեացն գեղարուեստք բոլորեալ, մանկունք մատաղք թեւաբուսիկք ընդ հովանեաւ նորա պատսպարեին զարհուրեալք 'ի գազանային 'ի համայնատեր ցասմանէն Արեայ, որպէս գառունք զմարբն բառաչելով դիմեալք յերեսաց սովալլուկ գայլոյ՝ որ մոլեգնին բերանաբաց յարձակիւ խողխողել զնոսա: Իսկ ինքն դիցուհին խոժոռ և մեծասաստ յամենի առնէր գերահանձար անկուածովքն զժպրտութիւն Արքանեայ՝ որ իշխէրն 'ի վեդ գալ ընդ նմա 'ի ճարտարագոյն ասպայնականութիւն. և վաշուէրն ծիւրեալ անդամք և ապեղացեալ 'ի սարդ փոխակերպէր:

Ոչ ինչ 'ի բացէ նոյն ինքն Աթենաս 'ի սկայամարան Տիտանանց խորհուրդ տայր Արամազդայ, և խրախոյս դիցն առ հասարակ պակուցելոց: Նոյն ինքն գարձեալ նիզակ 'ի ձեռին այծենակաճ ասպարաւն կայր արձանացեալ յեզր Փանթեայ և Սիմոեայ, զձեռանն կալեալ Ոդիսեայ, քաջալերելով զդունդս Յունաց փախստեայս, և քաջաց զօրավարացն Տրոյացւոց և ահարկուին խակ Հեկտորի զդէմ կալեալ, և զՊդիսեա 'ի ներքս մուծանելով 'ի մահաւիճն կազմած՝ որ 'ի միում ևեթ դիշերի զՊրիամոս կործանելոց էր վինքնակալութիւն:

Անտի և Վեմեարէ դրուագեալ 'ի վահանին, յարդաւ-

ատաւոր անդաստանս Էննայ 'ի միջերկրայս Սիկիլեայ, ժողովեր զորեաւն վայրապատին ղհետ որոց և 'ի կուռն մերգայ վայրի առ 'ի մնուդ, ուսուցանէր վայրապատուն մարդկանն ձիւել ղկորդ, և 'ի բազմաբեղուն ծոցոյ երկրի հանել զնուագ իւրեանց, և մատուցանէր նոցա զարօր՝ ձգելով զերկնամոլն 'ի լուծ: Բանայր անդ երկիր ակօսաբեկ 'ի խոփ արօրոյն, և հունձք ոսկեփունջք 'ի վեր երևեալ՝ ծածկէին դաւառիկ արտորէս. հնձեր արտահունձ 'ի տայր գերանգոյ զբերս երկրի, վարձս ցանկալիս վաստակոց իւրոց. երկաթէն 'ի յաւեր ամենայն ուրեք պլուր պաշտեցեալ, առ 'ի պատրաստել ևեթ լուսեթիւն և բարօրութիւն անդադար պաշտելո:

Մերձ յանտառս ուրեք յաւերժահարսունք ծաղկապսակք պարեին ընդ արօտ առ գետափամբ. նուագէր Պան արնգաւ, և Փաւռնայք և մարդասպայք խնդամոլիք թինդս առեալ մեկուսի կայթս հարկանէին: Պատկեալ 'ի բաղեղն երևեր անդ Սպանդարամէտ, յեցեալ աջոյին 'ի սեզ իւր կարճաբուն, որթ տաղարթագեղ և ողկուզալից կրելով 'ի ձախումն. գեղ գիմաց նորա մեզի, այլ ամենատան ինն խանդագանօք նուագեալ կաթոդին՝ որպէս հիքին Արիադնեայ երևեալ, լքելումն մեծաւոր խորացոյզ 'ի վիշտս յօտար գետեզեր:

Հանդերձ սոքիմբք և որեար բազում ամենայն ուրեք անդ երևէին. ծերք զերախայրիս 'ի մեհեանս ընծայաբերելով, արուունք խոնջ 'ի վաստակոց տուընջեան՝ առ հարսունս իւրեանց դառնալով, և կանանցն ընդ առաջ նոցա զորգեական դպուածօք զձեռանէ առեալ բերելով: Հովիւք խակ երևէին անդ երգեցիկք, և կէսք 'ի նոցանէ 'ի նուագ սրնգի պարաւորք: Ամենայն ինչ յանդիման առնէր անդ խաղաղութիւն, լուսեթիւն և բերկրանս, ամենայն ինչ անդ գեղածիծաղ և գեղանախիղ: Եւ գայլք յարօտս անդ խայտային ընդ խաշինս, և առիւծունք և վագերք մերկացեալ ղգազանութիւն՝ ընդ մատաղերամ գառինս գնային Ճարտկաւորք, և համբակ հովուի արածէր զնոսա ցպտով: Պարն

ոսկեղինիկ հանդերձ համայն բերկրանօքն Թուէր անդ նկատեալ պատկեր ցանկալւոյն։

ՖԵՆԵԼՈՆ. Տիլեմաք։

ԱՄՓՈՓՈՒՄՆ ԴԻՒԱՆԱՅՑ ՎԱՐՈՍԻ ԵՒ ՋՕՐԱԿԱՆԱՑՆ ԱՆԿՈՂՈՑ

Եւ ցանկայր Կեսար զվերջին սպան մատուցանել զօրավարին և զօրականին. ի գուէթ շարժեալ և բանակն առ հասարակ վանն աղգակառացն խըրեանց և բարեկամաց՝ մտախոհք ի պատահարս պատերազմաց և ի բախտ մարդկան։ Ցղեցաւ նախ Կնկինա հետազօտել զնորս անտառին, և կամուրջս և լերս արկանել ի ձախճախուտս անդր և յանհատատ դաշտավայրս. և ապա միջամուխ եղեն ի տխուր անտառ անդր սոսկալի ի տեսիլ և ի յիշատակ։ Բանակեալք Վարոսի ընդարձակապատ ցուցանէր անդէն ի չափ զինապարանին զվատատակ ձեռին երից լեգէոնաց։ Անդր և պատանեք կիսաւեր և փոս Թերալից գուշակէին զամփոփեալ անդ զդիակունս, և ի մէջ դաշտին ոսկերոյն սպիտակ ցանկացեալ կամ խաղաղակոյտ՝ վախստէին կամ մարտուցելոց։ Անկեալ դնեին անդ բեկորք զինուց խառն ընդ անգամս ձիոց, և ի կոձղս ծառոց գլուխք մարդկեղինք մխեալ, և շըրջմանաւին բագինք խուժադուժք, յորս ածէալ էին ի սպանդ հաղարապետք զօրաց և գլխաւորք ի հարիւրապետաց։ Եւ ապրեալք ոմանք ի կոտորածէ մարաին և մազապուրծք ի գերուձենէ պատմէին՝ ուր զօրավարք անկեալ, ուր արծուեզօշք յափշտակեալ, ուրանօր Վարոսի զնախկին վէրան ընկալեալ, և յորում տեղւոջ չարաբաստիին բագինք գլխոյ երիվարովին երձեալ, ուր ուրեք Արմինիայ առ զօրսն առաջնախօսեալ. քանի կախաղանս դերուոյն, քանիսն վիհս հրամայեալ, և իբր զգրօշս և զարծուխս խրոխտագոյնս թշնամանեալ։

Արդ բանակն հռովմէական զերեամ մի յետոյ քան զկոտորածն զայն ի տեղի անդր հասեալ, զոսկերս երից լեգէոնացն ընդ հողով արկանէր՝ ոչ գիտելով զկըրոցն թէ զօտարաց, այլ որպէս զազգականաց և զարենակցաց թաղելով զաճիւնս, ախուրջք առ հասարակ և ոսկերիմք ևս քան զևս ընդդէմ թշնամեաց զպրագնեալք։ Կանգնեցին անդ չերիմ հողաբլուր, կեսարու զառաջին գուշէն արկանելով, սպաս չնորհապարտ մատուցեալ վախճանելոցն արտատուկցորդ կենդանեաց։ Բայց Տիբերի ոչ հաճոյ Թուեցաւ գործն այն. ոչ միայն ղի զՊերմանիկեայ զամենայն ինչ չարի մասին վարկանէր, այլ և զի ի պատկեր կոտրելոցն և անթաղ նոցին դիականց՝ զօրականն տաղտուկ ի պատերազմ և ահաբեկ ի թշնամեաց գտանէր, և զի դարձեալ ոչ ի դեպ Թըւէր նմա՝ զօրավարի ումեք սրբազան հանդիսիւ և հայրենասէր արարողութեամբ ի մեռելոցն պատուել։

ՏԱԿԻՏՈՍ. Տարեգիրք։

ԲԱՆՏԳ

Սկզբ գարձ գամ մի զաշ ի տխրագոյց սրմունան, յորում մարդոյս ազատութիւն ի ծանրաբեռն յերկաթս կաշկանդեալ, յորում անմեղութիւն և երբեք զի խառնակի ընդ եղեռան, յորում և յառաջ քան զվերջինն ընդ ամենայն անցանէն պատիժս պատուհասից. մտախոր, և թէ երբեք շղթայիցն խառն ահաւոր, եթէ խաւարն ահարկու, և հեծութիւնք խուլ և խորին՝ ոչ զսիրտ քո պղտեալ սանուցանեն կամ յետս գլեզ թէ ոչ սոսկումն վարեսցէ, մեա ի ցաւոց օթևանս նոցա, այնգետ գլեզ առ սուղ ինչ վայրկեան իջանել յայն սեաւ զնդան, որ չետես երբեք զլոյս արփենւոյ, և յայն խաթարեալ կերպարանս ծանիցզպատկերակիցսդ ի շղթայիցն ձմլեալք, ի ծուէնս ինչ

զկէս մարմնոյն ծածկեալ, ժահահոտք յանխափոխ օդոյն, և Թուէն զԹոյն եղերանն կլանել, և որդանն՝ որ զկէշս ՚ի գերեզմանի սպառեն, կեր լինին կենդանւոյն. սակաւիկ ինչ և անախորժ պաշտի նոցա կերակուր. պակնուն արտաքեակ ՚ի նմանաւիշտ ընկերացն աղէսից, և ՚ի սպառնալեաց անագորոյն պահապանին. ակնկալութիւն զնոսա ահաբեկիչ մահուանդ քան երկիւղ պատուհասին. այսպէս միտատանջ զմահ կոչէն ինքեանց ձեռնտու, զքաղցրագոյնն քան զյոյն կեանս ողորմելի:

Թէ են արքդ եղեռնաւորք, սակայն և այնպէս զԹուԹեան են արժանիք, և գատաւոր անարդար է դանդաղեալն ՚ի դատել զնոսա: Պատուհաս կապեցին օրէնք ՚ի վրէժ յանցանաց և ՚ի հատուցումն ազգի մարդկան. այլ գժնդակ բանալն ահանջանցն երկարաւԹիւն՝ ծանրաբեռնէ կրկին զաղէտս յանցաւորին, և եղծանին օրէնք՝ եԹէ ըստ չափ անցանեն. անիրաւութիւն մեծերեան առ յանցաւորն և առ մարդկութիւն միանգամայն, Թող զի մէն մի վայրկեանք, ՚ի բանալ անդ ծախեալք՝ կորնչին անպէտք յօրինակ բարուց:

Այլ անմեղ Թէ արքդ էջեն, ոմ ցաւք, ոմ գորովք. մարդկութիւն առ այս՝ կոծ ահաւոր և ազէկէզ ամբառնայ ՚ի խորոց սրտէ: Այս իմ՝ մարդ յաղատութիւն ծնեալ՝ ընդ բեռամբ հեծծ չղԹայից. հաղիւ ՚ի բանս խաւարչտին ընչէ այրն՝ ուր երկինք պարգևեցին զօդ և զլոյս եԹերին, քարշեալ բանի ՚ի գրկաց ամուսնոյն և որդւոց հայրն տանուտէր: Ցաւք, անյուսութիւն և քաղց պատեն զանդորր բնակութեամբ նորա. ձեռքն այն՝ որով զսիրելեաւն փարէր և ընդգրկէր զոյսն դեռածին, ձեռքն՝ որ զկեանս նոցա հայԹհայԹէր, որ սերմանէրն և հնձէր, ձեռքն այնոքիկ առ աշխարհն պիտանիք՝ ՚ի շղԹայս կան պարաւանդք յանիրաւի. այն սիրտ անարատ և անսոգիւտ դնի ՚ի վայր պղծեալ ՚ի խղճէ մեաց. համառօտ՝ անմեղութիւն հեծծ յօԹեանս եղերանց: Անդ՝ զկենաց մարդկան նա ինքն լոյ ողորմածին զԹշուառ պայման. անդ՝ յառեալ զաչս ՚ի նախախնամութիւնն վերին, արձակէ դառն հառաչանս: Զքաղդ քոյին,

ոմ մարդ, Թէ գիտացեալ վիշտք և մահ, սոքին են քոյոյ կեանցդ ասպարիզն Թերապիք կրկին մեծամեծք:

ՍԷՐՎԱՆ:

ՓՈՓՈՐԻԿ

Եւ ահա Թանձրանայր շուրջանակի մէզ մԹին հրահասն. արեգակն շառագունեալ, և ալիանունք ծովուն հարԹ և անծածան, և սերատեսակ ալեացն գոյնք յար ՚ի փոխոխման կային: Երկինք Թանձրամած պարածածկեալ. գմբեԹարդ խաւարին և բոցաճաճանչ յենոյր ղերկրաւս: Տիեզերք ամենայն յանշշունչ լռութեան ակնկալեալ կային կասկածանօք, ՚ի սիրտս մեր ազգելով ղերկիւղ: Պատսպարեալք անդէն յանդաստակ մեհենին՝ տեսաք, և ահա ՚ի խիտ առ խիտ հարուածս շանԹից պատառեցաւ մածուած հրընկէց վիպին զմեզ. ամպք Թանձունք գիզադիզ զմեզ մեամբք Թաւալեալք ընդ օդս, անկանելին յոտս անձրևաց յերկիր. հողմք սանձակոտորք յարձակեալք ՚ի ծով, մրրըկէին զանդունդս: Պնդիւնք որոտմանց, մռնչիւն հողմոց, կոծմունք կոհակաց, գանգիւն անձաւուց, գղղրդումն լերանց, խառնեալ ընդ միմեանս ՚ի չռինդն ահեղ՝ աւերածոյ սիեզերաց Թուէին գուժիկանք: Եւ ապա զօրացեալ հիւսիսի՝ վարեաց զզայրոյթ մրրկին ՚ի բոցակեզ նահանգս Աֆրիկէայ: Հայէաք զհետ նորա, և ահզիր յոտնին մեր ՚ի հեռուստ մռնչիւն նորա: Պայծառագոյն և պարզեցան երկինք. և ծովիս, որոյ մինչև յամպս փրփրադէզ ամբառնային կոհակք, հաղիւ զալիան յեզերս վարեր:

ՊԱՐԹԵԼԸՄԻ. Ղեղար. Ա. Գաբրաևեան:

ՓՈԹՈՐԻԿ

Մինչդեռ նաւաղք մռայլկոտք ծովուն վտանգաց, մրրիկ յեղակարծ խռովեցոյց զերկին և զծով: Հողմք չըզթայազերծք մնչելով մոլեգին՝ ի յառագաստս խուժէին. ալիք թուխք բախէին զկողն նաւուն, որ ընդ հարուածովքն հեծէր: Մերթ՝ ի վերայ լեռնակուտակ ալեացն ամբարձեալք, և մերթ՝ ի յորձախորս ալեաց՝ թուէր նաւս մեր լինել անդնդասոյզ. և ժայռս ևս հուպ առ մեզ տեսանէաք, ընդ որս կոծեալ խորտակէին ալիք ահեղագոչք: Յայնժամ՝ ի միտ առնուի զոր ասէպ լուեալն էր՝ ի Մենաւորէ, զի արք մեզք և զակառեալք՝ ի գրգանս՝ վտանգիրաք՝ ի վտանգս դառնին. քանզի կիսպրացիք առ հասարակ լուծեալք լքեալք լային կանացաբար. ոչ այլ ինչ լսելի լինէր անդ, բայց ձիչ աղիողորմ, աղաւաղանք ընդ կոթոսա հեշտութեանց, և խոստմունք սնոտիք՝ զոհս գիցն մատուցանելոյ, եթէ փրկութեան ևեթ հասանէին: Եւ զի ոչ ոք՝ ի նոսա գոյր զգաստ առ՝ ի հրամայել կամ՝ ի կատարել զնաւաստութիւն, պարտ անձին վարկուցեալ փըրկել ընդ խմբոն զկեանս այլոց, անցեալ կացի առ զեկաւն. զի նաւուղին գիտէիմարեալ որպէս զմի յաստուածածապարտից՝ չզգայր վտանգին. և խրախուսեալ զնաւաստին ահաբեկ, ինձանել հրամայեցի զառագաստս, և ի ուժ դին վարել: Եւ անցաք ընդ ժայռ և ընդ խութ մերձ քեզեալք արհաւրաց մահու:

ՖԵՆԵԼՈՆ. Տիւմաք:

ՄՐՐԻԿ ՅԱՆԱՊԱՏԻ

Հասանէր՝ ի վերայ գիշեր. լուսին՝ լուսաւոր առնէր զանապատն ամայի և չերեւէր ինչ յանհովանի միայնութեան՝ բայց անշարժ ատուէր առձիկ ուղտուն մերոյ և թափառեալ ատուէր հօտից ինչ վթաց: Զլուսնթիւն վայրացն ընդհատէին ձայնք աղաղակի վարագուց՝ որ մանրեին զարմատս բուսեալս, և ձայնք երդոց ծըղրդաց, որ խնդրէին՝ ի զուր յամուլ աւազուտսն զտուն առն երկրագործի:

Մինչեւ դարձ արարեալ լուսոյն՝ սկսանէաք դարձեալ ընթանալ զձանապարհս մեր: Ծագեաց արեգակն անձառապայծառ, նմանեալ երկնաքարի՝ ի կարմիր երկաթոյ. յաճախէր տակաւ ջերմութիւն: Զերրորդ ժամու աւուրն՝ ուղտն արաբացի զտագնապ ինն երևեցուցանէր. զքիթ իւր խորամուխ արարեալ յաւազ՝ փչէր ուժգին: Մերթ ընդ մերթ լսելի լինէր եղերական ձայն ջայլամանց. օձք և գետնաբուծք փութային մտանել՝ ի խորս երկրի: Աւազնորդն իմ նայէր յերկինս, և թալկանայր. և հարցեալ զպատճառս ամբոխանացն, ասէ. խնդամ՝ ի հողմոյ միջօրէին, փութացուք փրկել զանձինս: Դարձուցեալ զերեսս՝ ի հիւսիս, արագագոչ իբրև զուշան իւր արաբացի՝ դառնայր՝ ի փախուստ: Երթայն ևս զհետ նորա. այլ հողմն ահաւոր որ ըսպառնայր՝ թեթևագոյն էր քան զմեզ:

Եւ ահա յանկինակալս՝ ի ծայրից անապատին գայր հողմն ուժգին. պակասեր երկիրն ընդ ոտիւք մերովք, մինչդեռ սիւնք աւազեղէնք՝ ամբարձեալք՝ ի թիկանց մերոց՝ անկանէին՝ ի վերայ գլխոց մերոց: Մոլորեալ՝ ի բաւղի շարժուն լերանց՝ նմանեալ միմեանց, յայնկի առնէր առաջնորդն իմ, զի անծանօթ էր նմա ճանապարհն. ՝ի վերայ այլոց աղետից մերոց, յաւելաւ և այս, զի յարագութեան անդ ընթացից մերոց՝ սիկք մեր լքեալք ջրոյ ունայնացեալք էին: Շնչասպառ և պապաքեալ անհնարին ծարաւով. և պինդ ունելով զշունչ մեր, զի մի զբոյն կլանիցեմք. քիրսն

գԺնդակ գետօրէն հոսէր ի մարմնոյ մերոց: Սատականայր փոթորիկն, և պղերը մինչև գլխոն հնամեան երկրի, և զկնիզեալ խորս անապատին ամբառնայր մինչև յերկինս: Թաղեալ ի մէջ աւազոյ, կորուսանէի զառաջնորդն. և ահա լսեայ ձայն, և դիմեցի, ուսոի լսելի լինէր, և ահա այրն եղկելի կայծակնահար լեալ ի կիզիչ հողմոյ, մեռեալ էր ի վերայ աւազոյն, և ուղտն նորա առձիկ անհետացեալ:

Ի զուր ձգնէի ես ազդել չունչ կենդանութեան յընկերակիցն իմ Թշուառ: Եւ նոսայ հեռագոյն ի նմանէ, ունելով զանձից ձիոյս, և զոյսն իմ ի նա միայն եդեալ, որ զհնուր հնոցին Ազաբեանց փոխեաց ի շունչ զովագին և ի հոգմ քաղցրութեան: Ծառ մի ակակիայի, ամենեցեալ ի վայրին, եղև ինձ ամենր ապաստանի. ի թիկանց զաղիաղիուն պատուարին՝ մնայի անցանելոց մըրկին: Ի մերձենալ երեկոյին՝ հողմն հիւսիսոյ հնչէր միաւանգամ և կորուսանէր օդ զկիզիչ չերմութիւն իւր. աւազք թօթափեին յերկնից, երևեցուցանելով ինձ զաստեղս: Ջահլ անօգուտք. զի միայն զընդարձակութիւն անապատին երևեցուցանէին ինձ: Անհետացեալ էին ամենայն ահմանք, և ճանապարհքն խանգարեալք և եղծեալք: Տեսարանք աւազեղէնք ձևացեալք ի հողմոց, յամենայն կողմանց պատկերս ջրոյ առաջի առնէին աչաց, և զնորոգ ինն արարչութեան տային նոցա կերպարանս:

ՇԱԴՈՊՐԻԱՆ. Ղեւոնդեան:

ՆՇԱՆԱԿ ԵՒ ԱՒԵՐ ՄԲՐԿԻ Ի ԿՂԶԻՆ ԳՆՂՒՈՑ

Ամառն սօթակէզ, որ երբեք երբեք առջորև զմիջահասմանս երկուց յեղեղակաց, եհաս և այսր հրդեհել զերկիրը: Ի վերջ կոյս գեհեմբերի, յորժամ արեգակն հասեալ յայծեղջիւր՝ կշիռ զգաստութեամբ կայ կղզոյս

Փաղլոյ՝ հրակիզելով զսա եօթնեակս երիս, դադարեաց ի սպառ հողմն հարաւոյ՝ որ զամն ողջոյն ընդ աստանօր. և ամպրոպք փոչոյ երկայն ընդ ուղիս ի վեր մրրիկեալ՝ ընդ օդս կային. ամենայն ուրեք հեղձոտեր երկիր, այրեր դէղ դալար. ի կողից լերանց սողոսք ջերաջերմք վերածըխէին, և ուղիք ի նոսա գրեթէ ի սպառ էին ցամաքեալ: Ոչ ևս ընդ ծով ամպ ինչ երևէր. բայց միայն ի տուէ շոգի շառագոյն անդ ի գաշտոցայս ի վեր դիզացեալ, և ընդ արևմուտս որպէս հրդեհոյ բոյք երևէին. և գիշեր ինքնին ոչ մեղմեր զտաք սօթակէզ օդոց: Գոնդ լուսնի հրակերպ և սուսերացեալ ընդ մնառնլալատատ ծերն երկնից յառնէր: Թաշնիք զգետնեալք յեմակս բլրոց, և զպարանոց ընդ երկին ձգտեալ առ ի ծուծ օդոց, ի սխուր բառաչ ընուին զձորս. և կաթրատատնիին հովիւ նոցին՝ ընկողմնեալ յերկիր, խնգրեր զովանալ. բայց երկիր եւայր ամենայն ուրեք, և մրձկուտ այերք հնչէին յաղօտ բզզանս ձձեաց, որ զծառս իւրեանց խնդրեին բուժել յարենէ մարդկան և ջրոքոտանեաց:

Բայց ի սօթակն սատակութենէ գոլորշի բազում յովկիան ալեաց ամբարձեալ, սաւառնէին զկղզեաս որպէս հովանի լայնատարած. և ի կատարս լերանց ժողովեալ, չանեք ակօսաձև ի միգապատ ծայրից անտի երբեք երբեք հատանէին: Ընդ հուպ և որոտընդոստ ահագին ձայնմունք ընդ մայրիս անտառաց ընդ գաշտ և ընդ ձոր գոռմամբ հնչէին, և անկանէին յերկինց սարսափք հեղեղատաց, և ուղիք փրփրադէզք ի կողաց սառ լերինս գահավիժէին: Թորաձոր հովիս ծովացեալ ի ջուրց, սարահարթ բլրոյդ՝ յորում հիւղքդ կան՝ երևէր կղզեակ ի ծովամիջի. և սահանաբացք ի մուտս հովտիդ, ընդ որ խառն ի խուռն արտաքս հոսէին ընդ ալեաց գոչիւն ժայռք կոճեղք և հող: Եւ արդարև ընդ երեկս գադարեցին անձրևք, դարձաւ հողմն հարաւոյ և ընդ արևմուտս հիւսիսոյ վարեալ ամպոյ՝ ծագեաց արև մերձ ի մուտս իւր:

ՊԻՐՆԱՐՏԻՆ ՏՐ ՍԻՆ ԲԻՒՐ. Պօղ և Վիրգինիա:

ԹԱԹԱՌ

Ոչ ինչ կարի բացական էաք ՚ի կղզւոյ սրբոյն Գոմինի. ՚ի նոսի քան զփարախս հարիւր, և չև ևս դեպք ինչ նշանաւորք պատահեալ էին մեզ՝ յորմէհետէ մեկնեցաքն յափանց Գաղղիոյ: Ձողմն առաւօտին որ այգուն այգուն հանդարտագոյնս շնչեալ՝ հարկ առնէր մեզ պարզել զառագաստան զամենայն, տակաւ թռուչք ցրտանալ. և ահա գոգ ՚ի գոգ յեղակարծուց լինի յարեաւ հողմն յայրղակ, և գամ քան զգամ սաստկացեալ վարեր տանէր զնաւն մեր ընդ կոյս կոհակաց անհնարին երագութեամբ:

Սակայն պայծառ և գեղեցիկ էր օդն և հպատուտակ երկինն. յարեմտից կուսէ լինչանել անդ արեգական մեծաւ փառաք ՚ի ծով, եզերք երկնից բոցավառեալ՝ զլայնածաւալ հրդեհմանց բերկին զկերպարան. լուսափայլ երեսք ծովուն յանդիման առնէր տեսանելեաց զանեղծական լինն զլիճ մետաղաց ՚ի բովս հալելոց. և թէ յանկարծ ուրեք դէպ տայր հաւու թռչականի գալ անցանել ընդ այն կողմն երկնից, աչք մեր կորովաբիբ հետաւարեալ նշմարէին զնա հանգոյն լինի արծնաթոյր շամանդաղից, որ ՚ի թղթոց բորբոքելոց՝ թեթեւ թռուցեալ վերանան քան զբոց... Դէպ ուղիղ յարեգակն կոյս նաւարկեալ խաղայաք մեք. և թէ որ ՚ի զնին մերոյ ուղևորութեանս կայր ՚ի ժամուն, համարէր անշուշտ եթէ աճիւնանալ ՚ի հրաբորբոքն յայն վառարան դիմեալ երթամք, իբրև զթիթեռն անմիտ որ ղուսով Ճրագին թռիչս առեալ՝ ՚ի նոյն և զթեւան խանձաւիցէ. և սաւեր նաւուն սահ սահ այլափոխեալ յերես սաց ծածանմանց լուծական ալեացն՝ նորազաբնիչ լինն ընծայէր մեզ տեսարան, և զնաւն մեր սոսկալիթխոր շահապետ ծովուց երևեցուցանէր...:

Եւ ահա յանկարծակի կոհակք փոթորկեալք, շառագոյնք, լուսափայլք և փրփրաձեք դիզան բարդեցան զառաջեաւ նաւին մերոյ, որ Ճախր առեալ խաղայր ընդ ալիս:

Յեռանդն ուժգին հարան առ ժամայն պատոյտք ջուրցն հոսանաց, ծաւալեալք չուրջանակի անդր քան զբրիաչափս հարիւր. և թէ տեսանէր ոք զլոյսս կոհակացն պատոյտքելոց, իբրև ՚ի սաստիկ ջերմանէ արդեօք տագնապեալ զծոլն վարկանէր: Անդէն և անդ ամբարձաւ դիզաւ ջուրն բլուրձև, և յառաջէր քան զմեզ, և ՚ի գնալ իւրում երթալով երթայր և ածէր և ուռնոյր ահագին գոչմամբ. և ես զվասն էրն անգիտանայի, բայց և զարհուրեի ոչ ՚ի տեսլենէն: Գամ քան զգամ ՚ի հոսանուտ լեռնէ անտի հատաւ վերացաւ բարձրացաւ սիւն անհեթեթ մեծուհեթամբ, և մրըկեալ շչնչմամբ երկայնեցաւ ձգեցաւ և յամպս երկնից կցեցաւ: Անդ էր տեսանել տեսիլ վեմ և սքանչելի, զսիւնն բիւրեղեայ ընդ երկինս և ընդ երկիր կանգնեալ. և ճառագայթք արեւու երփն երփն զկատար նորին գեղազարդէին իբր զծիածան բազմագունի, և ստուեր ահագին զատուտուն անկեալ՝ պղնձի խարխաց զտիպ յաչս նկարեր որ ՚ի ձեռն վերայ հաստատեալ կայցէ:

Թաթառն, Թաթառն, ազազակեաց առ հասարակ նաւապետն և նաւատոմն:

Ընդ այս բարբառ՝ դողումն անակնկալ առ վայր մի անկաւ զնին. այն առաջին նուագ էր զի տեսի ես զթաթառն, և անդէն ՚ի միտ առի եթէ քանի ստապատիր բանք էին՝ զորս երբեմն ընթերցեալ էր իմ զայնմանէ: Կարծէի ես, ՚ի տեսիլ տագնապելոյ ծովուն մեծի, եթէ ահա անդէն ՚ի յորձանուտ ահագինս դիմեմք կուր լինել. այլ զուարթերես զմերձակայսն տեսեալ՝ վերստին ոգի առի: Լուռ եւեթ կայր նաւատոմն, ոչ յերկիւղ այլ ՚ի զարմանս ըմբռնեալ, և ՚ի մին միայն ուշ եդեալ հայեին՝ զի մի ՚ի թաթառն ընդհարցին:

Պահ մի ՚ի զնին տեսարանին կացեալ, ապա դոչեաց նաւապետն. Հապա ՚ի հուր. – զարձո զեկավարդ. – միա դիք, յառաջ. – հար...

Թնդաց ձայն ամբին յերեսս անդնդոց, և սիւնն խորտակեցաւ առ խարսխաւն, զգոլանի հարաւ, ամսանեցաւ

առ վայր մի, և փլուզեալ հոսեցաւ յանկարծակի երբե՛ք զահագին ինչ ջհնւաս ձիւնականաս:

Յետ սուղ ինչ պահու՝ և հեռք անգամ մեծի տեսարանին չերևէին 'ի ծովու, և գարձեալ վարեցաք մեք ընթացս մեր 'ի մուտս կոյս արևուն: Սմանս արեգական կիսով չափ ծովասուզեալ՝ զյեսին Ճառագայթս իւր արձակէր 'ի մեզ. յայնմհետեւ ծովուն ալիք տակաւ ստուերացան, և նաւն Ճոխաձեմ սուրայր ընդ նոսա երբև զնետ ոստոյնեալ 'ի լայնալիճ աղեղանէ, և երբու ընդ գիշերավար աստեղն երագուհեան եկեալ 'ի վսեր: Յայնմ վայրի լոյս արեգական շնչաւ յանկարծակի, (քանզի չէք յաշխարհի անդ վերջալոյս երեկոյին), և ալիք ծովուն և հեռք նաւուն, և ծովիք և նաւն և եղերք երկնից միանգամայն ծածկեցան յալքաժուղջս գիշերոյ:

ՀԱՆՆԸՐՒՆ:

ՊԱՏԹՈՒՄՆ ՎԵՍՈՒՎԻՈՅ

Յամին 1717, յամենայն ապրիլի, բազում տառապանօք ելեալ հասի 'ի գագաթն Վեսուվի, և տեսի անդ պատառուած մեծ և լցեալ ծխով՝ որ Թագուցանէր լինէին զնորս վէմն և զկերպարանս նորին. այլ 'ի խորոց ահաւոր անդնդոցն լսելի լինէին ձայնք պակուցիչք, որպէս թէ 'ի ներքուստ լընդերայց լերինն վերահնչեալք, և մերձ ընդ մերձ որոտումն՝ երբե՛ք 'ի Թնդմանց հրանօթոց, և զղղման կղզիոյդ 'ի բարձանց անտի տանց Թաւալելոյ 'ի փսղոցս: Եւ երբեմն 'ի փոփոխել ընթացից հողմոյն, ծուխն անօսրացեալ երևէցուցանէր զոց շառագոյն և զեղերս խառնարանին կարմրագոյնս և դեղնորակս իմն ստուերօք: Իրբև ժամ մի էանց, փարատեցաւ ծուխն հողմավար, և տեսանէաք ես ընդ ես զնան մեծի վէմն, յորոյ տափատակի նշմարէի հնոցս իմն երկուս գոգիկը յարակից. ձախակողմանին Թուէր երկու գլխաչափ բացուածով, և ցոլայր շառագոյն իմն բոցով, վերարձակելով քարինս առաջիկս կիզանուստս ահագին ձայնմամբ, յորոց անկանէին 'ի դուրս՝ վերոյիչեալ գղգիւնք ձայնիցն գործելին: Յուէմայիսի, յառաւօտուն երկրորդ անգամ եղև 'ի գագաթն վէսուվի, և տեսարան նոր յանդիման եղև ինձ: Ծուխն ծառացեալ բարձրացեալ Թոյլ տայր տեսանել զնառնարանն բովանդակ. որոյ շրջապատ ըստ ականն կշռելոյ Թուէր մղոնաւ չափ, և խորութիւն երբե՛ք գիրկս չիտուն: Յետ վերջնոյ այցելութեանս՝ բարձրանագոյն իմն կոնաձև կառուցեալ էր 'ի միջավայր յատակին, կուտակեալ 'ի քարանց արտաձգելոց 'ի հրաբղխէն, և յետս անդրէն 'ի ներքս անկելոց. սկայն 'ի նորաձայլ բլրի անդ երկոքին հնոցքն զոր 'ի վեր անդր յիշեցի. մի 'ի նոցանէ ահագին շառաչմամբ արձակէր առ մէն երիս կամ չորս վայրկեանս՝ խուռն առատ առաշիկ կիզանուստ քարանց, Թերևս ցերեկ հարիւր ոտնաչափ բարձրութիւն 'ի վերոյ գլխոյ խմոյ. այլ զի ոչ ընդէր հողին 'ի պահուն՝ անդրէն դէպ ուղիղ անկանէին 'ի վայր ուստի ելանէին: Իսկ միւսն՝ զեղեալ կարմրագոյն հոսանուստ եռացեալ նիւթով, որպէս է տեսանել 'ի հնոցի ապակեգործաց, զեռայր շարժէր հանգոյն ալեաց ծովու ընդհատ և խորթ հնչմամբք, և մերթ եռացեալ բարձրացեալ նիւթոյն՝ հոսէր զկողքեւք բրգանման բլրակին, զառաջինն շառափայլ կարմրագոյն երևեցուցեալ, և տակաւ սլացգուշնելով ըստ պաղելն և Թանձրանալ: Եթէ ընդեալ էր հողմոյն յայնմ պահու զմեզ, վտանգ ոչ փոքր 'ի վերայ կայր մեզ խեղդամահ լինելոյ 'ի ծծմբային ծխոյն անտի, կամ չախչախելոյ ընդ կուտակեալ հրահալեալ բովուցն՝ որք 'ի խորոց յատակին 'ի վեր ցայտէին. այլ քանզի գիպոյ էր հողին, յաջողեաց ինձ նկատել զտեսարանն զարմանալիս քաջ ընդ ժամ մի և կէս:

Ի հինգ յունիսի՝ յետ ահաւոր շառաչման, տեսաւ 'ի Նեապօլոյ լեառնն բորբոքեալ. և յետ երից աւուրց այն-

քան ստէպ ստէպ որոտայր, զի ոչ միայն պատուհասիցէն, այլ և տունքն գլխովին սասանէին: Յայնմանէ անընդհատ պայթեալ և զեղյր և երբեմն ի գիշերի արձակէր բոց սէգ նահաձև ընդ գագաթանն: Ի տան աւուր ամենեան իբրև ա- մենայն ինչ հանդարտեալ թուէր, նորոգեցան արհաւիրքն, և սաստկագոյն ևս որոտայր և ժայթքեր լեառնն: Ան- մարթ է Ճշդրիտ հասու լինել գղըրդմանցն ի սաստկագոյն Ճայթմունեան, բայց կերպարանեալ առ միտս գնահատ չըուկ մռնչման մրրկաց, գղաւաչման ծովու ծփելոյ, զորոտումն շանթից և գբոմբիւն ամպաճիպ անօթոց միանգամայն գոչե- ցելոց: Թէպէտ և մեք երկոտասան մղոնաւ ի բացուստ լսեաք զձայնն, սակայն և այնպէս ահաւոր էր յոյժ: Խոր- հեցաք մօտագոյնս մատչել ի լեառնն. և երեք կամ չորք ի մէնջ մտեալք ի նաւ, ելին ի քաղաք մի փոքրիկ առ ստորո- տով լերինն, և անդուստ յառաջ անցեալ գնացաք մղոնս իբրև չորս կամ հինգ մինչև հասաք մօտ ի հեղեղն հրեղէն որ խլմանէր ի կողից հրաբղխին, ուստի ուժգնին յոյժ և ա- հաւորագոյն հնչէր շառաչիւնն: Նկատեի յամսոն որ ի վե- րոյ խառնարանի լերինն՝ խառնուրդ պէսպէս գունոց, կա- նաչ, գեղին, կարմիր և կապոյտ. և նաև օդք հարեալ էին յաղօտ ինն գոյն շառագոյն ի վերայ երկրին՝ յոր հոսէր խանձն հրածորան: Ա յսպիսի կերպարանիք սաստկագոյն ևս ընծայեալք յարհաւրայ գիշերայնոյ՝ յանդիման առ- նէին ինձ տեսարան անօսվոր և ահեղ որպիսի չէր իմ երբ- եք տեսեալ, որ և ևս քան զևս աճէր ըստ մերձագոյնս մտաչելոյ մեր ի գեան հրեղէն: Հեղեղ յորդ հրահոսան ի գագաթանէ լերինն թաւալելով ընդ կողն անդնմագարձ ինն թափով զայրացման, խլեալ վարեր ծախեր զպլպիս և զձիւնենիս և զաուն, և ըստ անհարթ անհաւասար գրից լերինն՝ բաժանէր ըստ բաղում առաջս: Ընդարձակագոյն առուայն աւելի քան կիսով մղոնաւ լայն էր և հինգ մղո- նաւ ձգեր ըստ երկայնն: Յառաջեալ քան զընկերս իմ՝ խա- զայլ ի վեր ընդ լեառնն ցայն վայր զհզերբ հրեղէն գետոյն, մինչև սոխակեցայ յեաս ընկերիկ շտապ տագնապաւ, ըմբռ-

նեալ ի ծծմբային շոգւոյն, որ փոքր միւս ևս և հեղձամըղ- ձուկ առնէր զիս: Ի դարձին մերում՝ յերիր ժամու վա- ղորդայնոյն, լսեաք անընդհատ զմռնչիւն լերինն, և նման բիւք բոցս յորձանապտոյտս և քարինս հրաշէկս ժայթ- քեալս, որք յանկանէն բերէին զիւերպարանս աստղաձև հրթիռաց: Էր երբեք զի տեսանէի երկուս կամ երիս սիւնս հրեղէնս, և երբեմն մի միայն, այլ լայն և բաւական յու- նել զբովանդակ բերան բաժակին: Սիւնքս բորբոքեալք և վկմք հրեղինք թուէին ձգիլ ձկիլ շեշտուղիլ ընդ գա- գաթն հրաբղխին իբրև հազար ռանաչափ ի բարձրութիւն: Զայս օրինակ տեւեաց ժայթքումն լերինն աւուրս վեց կամ ութ: Իսկ յութ և տասն ամենեան, ամենայն հեռք յուզ- մանցն խաղաղացան, և հանդարտեաց իսպառ վեսուվ, չունելով ինչ նշան ծխոյ կամ բոցոյ:

ՊԼՐՔԼԷՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ:

ԿՈՐՈՒՍՑ ՆԱԻԱՏՈՐԻՆ ԵՒ ՉՕՐՍՑ ՏԻՐԵՐԻ ՑԱՆՀՐԺ- ՏՈՒԹԵՆՆ ՆԱՒԱՐԿՈՒԹԵԱՆ

Ա մառն ի վերջ կոյս խոնարհեր, և կէաք ի լեգեռնայ արձակեցան ընդ ցամաք ի ձմերոցս. իսկ զմեծ կէս մասն նոցա նաւատորմաւ ընդ Ամէսիա գնա ինքնին Տիբեր էած Լովիխան: Ծովն ի սիզբան անդ հանդարտ, ի բաղնիւն Թիակաց աւեթ բազմութեան նաւաց և ի բանութենէ առա- գաստից յուզեալ շառաչէր. այլ ապա յանկարծ ի կու- տակելոց Թուխ ամպրոպաց Թօթափեալ կարկուտ, և մըր- բիկք չուրջանակի յարուցեալ զալիս, ծածկէին յաչաց զա- մենայն և զդէմ իակնաւարկուելեան խափանեալ: Զօրականն անփորձ ծովու ահաբեկեալ՝ խռովեցուցանէր զնաւաստին, կամ ձախողակի օգնականութեամբ զնաւավարացն անգործ առնէր Ճարտարութիւն: Եւ ահա հարաւահողմն ընդ եր-

կիր առ հասարակ և ընդ ծով տիրապետեալ, և ի բարձ-
բայնն ափանց Գերմանիոյ, ի յորձախոր դեռոց և յամբա-
ւուԹենէ ամպոց հալածականաց զայրացեալ, և բռնաւո-
րագոյն ի խաուԹենէ մերձակայ հիւսիսախառն նահան-
գին յարիչաակեալ, գիր և տար յանդունդս Ովկիանոս
զնաւս կացոյց, կամ ի կղզիս չըջապատեալս ի ժայռից, և
կամ ի խարակս աներևոյԹս ընդ ալեօք, յորոց բաղում
ձգամբք հազիւ կարացին ապրել: Ա՛յլ ի մակընԹանալ
ալեաց ի հողին կոյս՝ ոչ ևս կարացեալ նոցա կալ ի խարըխ-
խի, և ոչ զալիան ի նեըքս զեղեալս արտաքսել, զձիանն,
զէրասուս, զկարապն և զղէնս իսկ ի ծով ընկեցին՝ Թե-
Թևաբեռնել զողնափայան, յոր ընդ հերձս կողից և ընդ
տախտակամածն ի վերուստ զեղուին ալիք:

Որչափ Ովկիան բռնագոյն քան զայլ ծովս է, և երկինք
Գերմանիոյ որչափ քան զայլս ի նահանգաց գժնդակագոյն,
այնչափ առաւելան արկածքն՝ յեղակարծ և ահագին տպե-
տիւք: Թշնամիք չուրջանակի ծովեզերք, և ծով այնպիսի
ծայրածաւալ և անդնդախոր՝ որ տիեզերաց Թուէր սպա-
ռուած, և ոչ ևս ուրեք անտի և անդր երկիր: Կէսք ի նա-
ւաց անտի ընկալան յանդունդս, և առաւելագոյնք ի կղզիս
հեռաստանեայս վարեցան, ուր զօրականն յանմարդի
յանմշակ երկրին կորեաւ սովամահ, կամ գիակամբք ձիոց
ի ծովեզերս անդր խրելոց պարենաւարեալ:

Եռաձին ևեԹ Գերմանիկեայ անկաւ յերկիրն Փաւ-
կաց. բայց նա ի ժայռս և ի հրուանդանս անդ զգոյն ամե-
նայն աւուրս գազերեալ, զցայգ և զգերեկ բողոքեր զանձ-
նէ՝ ջնասպարտս այնքանոյ աղետից զինքն համարեալ. և
հազիւ արգելին զնա իւրքն առ ի չկորուսանելոյ զանձն ի
ծով անդր գահավէժ: Ցետոյ ապա ի տեղի տալ ալեաց,
և ի շնչել աջողակ հողմոյ, մեսյորդք նաւատորմին ջանջա-
խեալք, սահաւուք ոմանքք Թիավարօք, ձորձս փոխանակ
առագաստից պարզեալ, դարձ առնէին, կէսք ի նոցանէ ի
նուազ խորտակելոցն ի քարշ ածեալ: Զորս Գերմանիկեայ
փութանակի նորոգել հրամայեալ, արձակեաց ի կղզիս

անդր առ ի խնդիր: Սովին խնամով բազումք ի նաւակոծե-
ցոց անտի ժողովեցան. բազումս ևս Անգրիւարք, փոքր մի
յառաջ գաշնակցեալք՝ գրաւեԹափս ի միջերկրեայց անտի
գարձուցին. և որք մինչև ի Բրիտանիա վարեալքն էին, յիշ-
խանաց երկրին յետս առաքեցան: Եւ որչափ որ ի հեռաս-
տանէ գառնայր, հրաշապատումս ևս զմրրկաց, զՀաւուց
անծանօԹից, զնհանգաց ծովայնոց, զմարդագէմ գազանաց՝
առեալոց կամ առ ահի երևուԹացեալոց վիպեր:

ՏԱԿԻՏՈՍ. Ցարևգիրք:

ՆԿԱՐԱԳԻՐ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՆԱԻՈՒՆՑՆ ՎՆՆՏՑԱ

Քանզի և նաւք նոցա զայս ձև օրինակի էին կազմեալք
և զինեալք: Սայլուզ և որովնց նոցա փոքր ինչ տափարիկ
քան զմերոց նաւացս, որով ծանծաղն և ջուրցն նաւազու-
Թեան դիւրատարք. առաջք նոցա ուղղաբերձ կանդնորդ,
նոյն և խեչք նոցին, մեծուԹեան կոհակաց ծովուն և կոծա-
նացն համեմատ: Նաւքն իսկ բնական կազմիւք, առ ամենայն
բռնուԹիւն և վիշտ վտանգի դիմատուրք: Տախտք նոտա-
բանացն ի դերանաց՝ առնաչափ մի լայն, հարատեալք բևե-
ռօք երկաԹեօք ի սառարուԹիւն բոյԹ մատին: Խարխոխք
փոխանակ կառանաց՝ երկաԹեղէն շղԹայիւք կապեալք:
Ի տեղի առագաստի՝ է նոցա մրԹի և կաշի վեր ի վերոյ
հանդերձեալ. առ ի չգոյէ կաւոյ և առ ապիտուԹեան
պիտոյից նորա, կամ որ առաւել սուղագուԹեան է նման,
զի ոչ հեշտին լինչ համարիէին ժուժկալել ընդդէմ այնչափ
փոԹորկաց աշխարհածովուն և այնչափ հոմանցն բռնու-
Թեանՙ և զնաւացն ահագին ծանրաբեռնուԹիւն վարել ա-
ռագաստիւք: Նաւացս այսոցիկ ընդ մերում նաւահանգի-
սն նոյնպիսի էր մըցուԹիւն, զի միայն արագուԹեամբ և
ԹեՀակացն վարելով զանցուցանէր զնոքօք. այլ ամենայն

ինչ՝ ըստ բնութեան տեղւոյն և փոթորկային ամէհուէհեան նոցա առաւել դիւրագէպ և յարմարագոյն էր: Եւ մեքն ոչ ինչ կարէին ստանալ նոցա առաջակողմ ցանկքն վասն անհնարին կարծրակուռ պնդութեան նոցա. և վասն բարձրութեան նոցին՝ ոչ դիւրին ինչ էր նեռաձիգ առնել 'ի նոսա. և նորին ազագաւ հեշտաբար 'ի ժայռս 'ի խութս սալարեալ ղօղէին: Ցաւէր և սա, զի 'ի վայրենանալ մրրկին՝ և տային զինքեանս հողմոյն և ալէկոծութեանն դիւրեաւ տանէին, և անկասկած 'ի խրուսոն կային, և 'ի ջուրցն թողանալ՝ ոչ ինչ 'ի վնասոյ և 'ի քարանց զանգիտէին, որ զմեքոցս նաւուց վտանգ երկիւղալի էր այս ամենայն:

ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ. Յիշատակարանք:

ՍԱՀՄԱՆԱԿԱՆՔ

ՍԱՀՄԱՆ ՀԱՐԱՏԱՍԱՆԱԿԱՆ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ.

ՊԱՏՈՒԻՐՔ ԱՌ ԱՅՍ

Սահման Հարատասանական է լայնատարը ասպարէզ Հարատարախօսուէ. սուաւ լուծանին ամենայն խնդիրք իրաւաբանականք. զի 'ի միաբանել երկուսեքք ընդ գոյութիւն իրին և պատճառաց նորա, ոչ այլ ինչ ինայ քննել՝ բայց զքնութիւն նորա, և սահմանել զաղերս նորա ընդ օրէնս:

Կղաւդիոս սպանաւ 'ի սորկաց Միլոնի. այլ իցէ սպանութիւնս այս նախանձկատեալ և կամաւ, թէ 'ի պաշտպանութիւն այս նախանձկատեալ և կամաւ, թէ 'ի պաշտպանութիւն ևեթ անձին գործեալ: Զիք տարաձայնութիւն զգործոյն. խնդիր զհանգամանաց նորին է: Մորինա հաձոյ եղև Ժողովրդեան. այլ կաշառմամբ արգելօք, կամ խորամանկելով զքաւեայս. զայս պարտ է սահմանել: Բաղմահոգւոյ 'ի Հռոմ եղև դատաստան առենախօսութեանն Կարբոնի 'ի պաշտպանութիւն Լ. Ոպիմեայ, որ յետ բռնհնութեանն ամբաստանէր 'ի սպանութիւն Կ. Գրակքոսի: Յայտնի էր գործն. այլ 'ի վտանգի հաստատակատեալ էին՝ էիւ իրաւունք բռնհնի հրովարտակաւ ծերակուտին տալ սպանանել զնռովարարն, կամ 'ի վտանգի անդ պարտ էր նմա պատկառ կալ օրինաց, որ պաշտպանէին զքաղաքացիս անդատապարտս 'ի նոցանէ: Օրէն էր այն ըստ վճռոյ ծերակուտին 'ի պահպանութիւն հաստատակատեալ էին՝ Չայտնի էր խնդիրն. պարտ էր սահմանել զնրաւունս ա-

պահովութեան աշխարհին, և զոր բդեշխին կոչէր վանդ և փրկութիւն հասարակապետութեան. գիտել թէ ցոր-վայր հասանէր իշխանութիւն ծերակուտին, և պարտ նո-ցին իսկ բդեշխին ընդ օրէնս և ընդ վճիռ ծերակուտին:

Ապա ուրեմն սահմանել՝ի ճարտասանութեան՝ է ընդ-արձակել, ՚ի ներքս ածել խնամս և օրինակս և հանգամա-նըս՝ որ զյատկութիւնս իրին բացատրեն, յանդիման առ-նել զայն յեղանակաւ իւիք ՚ի նպատս կարծեաց՝ զոր կամք ի՛նչն հաստատել, կենդանագրել զպատկեր նորին՝ ոչ միայն պայծառ երանգովք՝ այլ և խառնութեամբ լուսոյ ընդ ստուերի յաւելուլ զկենդանութիւն նորա: Իբր ոչ եթէ ճըշ-գրիտ ինչ սահման չկոչէ ուրեք պատկանաւոր ՚ի հատանել զնդրին, այլ կարևոր է առ այս՝ զի կոչէ յայտնագէս ճշգրիտ և անսպասանելի նորա ամենայն մասանց. և հանդերձ այսու ամենայնիւ՝ մարթ իսկ է նմա համառօտութեամբն խուսափիլ ձախողակի յիմացուածոյ դատաւորաց, եթէ ոչ խնամ կալցի ճարտարախօսն օժանդակել և տալ պա-րագ տպաւորելոյ զայն ՚ի միտս նոցա: Չկարէ ՚ի զգայու-թիւն և ՚ի միտս գատաւորին մուտ գտանել. զի չև ըմբըռ-նեալ՝ սահ ՚ի բաց: (Յղ. Ճարտարախօս.):

Այլ ոչ ամենայն ազգ ճարտարախօսութեան զնոյն զգուշութիւն պահանջէ՝ որ ինչ առեներականն, ուր դատ-խաղն և պաշտպան պարտին կալ միշտ ՚ի պահ՝ և հարկա-նել և պաշտպանել գոգցես միանգամայն: Վասն որոյ սահ-ման՝ որ յատենականին՝ է միջակեալ ներգործութեան, և պարտ է պատշաճել զայն շուրջանակի ամենայն զօրու-թեամբ ճարտասանութեան, ոչ այնպէս վանդաւոր է և զգուշալի ՚ի ներբողականին և ՚ի բաղխոհականին. բայց և տստ թեպէտ և չկոչէ այն միջնաբերդ, այլ է իսկ ճակատ կամ անդաստակ ապարանից կամ տաճարի, ուր պարտ է ճարտասանութեան ժողովել զհանդէս զօրութեան իւրոյ և զհաստատութիւն:

Կիկերոն ՚ի ճառին Մարկելեայ ՚ի խօսելն առ Կեսար զպարտուց նորա, այսպէս նախ տայ զսահման վիճաց-

փառք են՝ յոլովից և մեծամեծ վաստակոց առ իւրն կամ առ հայրենիս կամ առ ամենայն ազգ մարդկան ընծայելոց պայծառ և աշխարհաբարող համբաւ: Եւ ապա պարզա-բանել զայն, յարելով ինքն իսկ ՚ի կեսար. Ոչ այդ կեն-ցաղավարութիւն է քեզ անկ, որ ՚ի մարմին և ՚ի հոգի ամփոփեալ. այլ զայն ասեմ, զայն կենցաղ քեզ անկաւոր՝ որ դարուց ՚ի դարս կեցցէ յիշատակաւ, զոր յետինք պա-հեացեն, որում ինքեանք իսկ յաւիտեան պաշտպանեա-ցեն: Ահա ընդարձակութիւն և ընդլենաւորութիւն, ահա հաստատութիւն և ամբծութիւն վիճաց: Զարմա-նալի ապաքէն յետինք ՚ի լսել և յընդեռնուլ զինքնակալու-թիւնս, զպատառս, զՀռենոս, զՈվկիան, զնկերս, զպատե-բազմունս անթիւս, զյաղթութիւնս անդուլս, զարձանս, ձօնիս, և զյաղթանակս քո: Այլ եթէ ոչ քաղաքս այս քոյովք խորհրդովքդ և սահմանադրութեամբք հաստատեա-ցի, թափառեսցի և եթէ անուն քո հեռի և ՚ի բացեայ շուր-ջանակի, այլ հաստատուն կայս և բնակութիւն անշարժ ոչ կալցի: – Այս է սահման մեծավայելուչ:

Արդի ճարտարախօսք մեր ծանեան զարուեստ տալոյ սահմանս ճարտասանականս. ածիլ օրինակս երկուս, ղեր-կոսին ևս ՚ի դամբանական ճառէն ՚ի Թիւեսէն, որ յաճախէ փառս Ֆլեշիեի. այսպէս նա անդ սահմանէ զշնորհսն քա-ջութիւն վեհագինն իւրոյ. Իմս բանիւս ոչ զընդունայն և զանխորհուրդ յանդգնութիւն, և այլն: Տես ՚ի դամբա-նականի անդ:

Միւս ևս սահման տայ ղբանակի զօրաց. Չինչ է բա-նակ, և այլն: Տես անդ ՚ի ստորև:

Սահմանք խնամատարականք այնչափ յաճախեն նաև յընտանեկան իրս, զի առ ՚ի սահմանելոյ եւեթ և կամ վասն ոչ բարւոք սահմանելոյ անկանին վիճաբանք ՚ի հակա-ստութիւն: Վիթպակն դրեթէ միշտ ՚ի բառս է. զի որ ինչ հաստատեմ ես զնմաքէ, հաստատեմ զայն ըստ խնամատից՝ զոր ընծայեմն նմա. և զոր դուդ ժխտես զայնմանէ, ժխտես ըստ խնամատից՝ զոր տաս նմա: Ապա չեմք ինչ ներհակախօսք

որպէս Թուխիքը, զի ընդ անուամբ միոյ երիք զոյլ և այլ իրաց բարբառիք: Եթէ դու պարզաբար զմիտս իմ իմաներ, և ես զքոյդ, հաստատեիր զոր եան հաստատեմ, և զոր դու ժխտես՝ ժխտէի և ես: Արդ այս միաբանութիւն իմաստից մտաց՝ ի ձեռն սահմանաց ևեթ յայտնէ:

Են սահմանք՝ որ տեղի տան խորհելոյ, և են՝ որ ինա-յեն զսօղս յաշխատութենէ անտի. ընդ առաջինն են տու-եալքն յԱրիստոտելէ. Արդարն է օգտակար հասարա-կաց: Խոհեմութիւն է՝ առաքինութիւն իմացականին կար-գեալ յերջանկութիւն: Հեշտութիւն է միայն բարին վասն իւր բաղձացեալ: Բարութիւն կարծեաց անօգուտ էր, եթէ պարտ էր առնել զայն ի ծածուկ:

Ընդ երկրորդս են նորին իմաստասիրի սահմանքն. Բանաւորութիւն է միապետութիւն անսահման: Մեծ-անձնութիւն է բարերարութիւն՝ որ գործէ ճոխաբար: Սևամաղձն է ցաւ և հեշտութիւն միանգամայն. ցաւ՝ վասն արամութեան, և հեշտութիւն՝ վասն անցելոց իրաց յիշատակի:

Արդ յայտ է զի որք տեղի տան խորհելոյ, չեն պատ-կանաւոր հռետորականի. զի ամենայն ինչ անդ պարտի գոլ դիւրիմաց և ի քթթել ականէ: Ոչնկընդ-դրաց չիք ժամանակ կշռադատելոյ և ի վերայ կալոյ իրաց: Խորհուրդք հանգիստագոյ բառից ի բաց Թուղեալ՝ պար-տին Թողուլ լուսահետ տպաւորութիւն. այս խոկը ի ընդ Ճարտասանութիւն Ճառեալ և ընդ Ճարտասանութիւն դպաւոր:

ՄԱՐՄՈՆԹԵԼ. Տարերք բանաւիրտրնեան:

ՄԱՐԴ

Զինչ է մարդ, բայց մարմին սակաւ և դիւրեղծանելի, մերկ և անպատսպար ի բնէ, այլոց կարօտ օգնականու-թեան, ամենայն արկածից բախտի նշաւակ, և համայն իսկ իւրով ջանիւդ զօրութեամբն՝ որս և Ճարակ գաղանաց. գործած Թոյլ և ըղձ վեր ի վերոյ ևեթ արտաքայլեալ ե-րևութիւ, անբաւական ի տուկ ցրտոյ և տօթոյ և աշխա-տութեան, և հանգստեամբն դարձեալ և անգործութեամբ հիւծական: Անուղղ իսկ նորա բազմավտանգ, մերթ առա-ւելութեամբ և մերթ նուազութեամբ կերակրոցն ճշասի: Պահպանութիւն նորա բազմահոգ և տարժանելի, մուրա-ցածոյ և առանց հաստատութեան զօրութիւն նորա, յան-կարծ երկիւղիւ սասանի և յեղակարծ ձայնիւ ընդոստնու, իւր միայնոյ անպիտան և ինքնակար ի մնունդ: Եւ ո՞ապա ընդ մեռանել միոյն զարմացի, մինչ ամենեցուն իսկ հարկ ի վերայ կայ մեռանել: Ոչ մեծի ինչ զօրութեան պէտք են ի կորուստ նորա. հոտ և Ճաշակ և աշխատութիւն և արք-նութիւն և կերակուր և ըմպելի և այլն ամենայն առ ի կեանս պիտանացուք՝ մահաւիթք են նմա: Ընդ շարժելն ուրեք՝ իսկ և իսկ երազած լինի տակարութեանն իւրում. ընդ ամենայն երկինիք կեալ ոչ կարէ, ի ջուրցն փոփոխե-լոյ և յանտուղր օդոյ և ի գոյն արկածից և ի պատճա-ռաց դիւրաշխատելի: Կենդանի ազկազկ, փուտ և անտա-ւոր՝ լալեօք եկեալ ի կեանս, տակայն որչափ ազմուկս յոր-ղէ, յորպիսի խորհուրդս մտաբերի, մտացեալ ի սպառ զիւրոյ տակարութեանն զայսման: Անմահականս երկինէ և յաւէրժականս, և մինչ ի Թուուն և ի Թուներայս դէտ տին կայ և անօրէնն: Եւ այն ինչ զապագայիցն հոգայ զհե-ռաւորաց՝ գոյ հաստնէ մահ զգեստել զնա. զի և անուա-նեալն այն ծերութիւն զինչ է, բայց տակաւօրեայ ատաց չքնան:

ՍՆՆԿՈՅՑ. ՅՂ. Միխ. առ Մարկի:

ՄԱՀ

Ո՛վ, որպէս անդէմք են ամէնից չարեացն իւրեանց՝ որք ոչ գովելի համարին զմահ, որպէս գիւտ դեղեցիկ հնարից բնութեան: Զի թէպէտ երջանկութեան իցէ պատճառ, թէպէտ թշուառութեանց կատարած, եթէ խոնջ և տաղտուկ ծերութեան ածիցէ վախճան, և եթէ զառապ պատանեկութիւն՝ զզուարճացեալն ՚ի յոյս վայելից՝ ՚ի ծաղկի անդ հասակին խլեալ տանիցի, և եթէ զմանկութիւն՝ մինչչև զկատարած կոչեսցէ՝ ամենեցուն կատարած է, բազմաց դէղ՝ ամանդ ցանկալի և այլոց բարերար, մանաւանդ այնոցիկ՝ առ որս կանխէ ժամանել մինչչև իցէ կոչեցեալ: Սա տայ ազատութիւն սուրկայ ՚ի բանտութենէ տերանց նոցա, սա զգերեալ չղթայսն խզէ, սա հանէ ՚ի բանտէ զերս հրամանն բանտութեան արգելեալ պահէր անել. սա աքսորելոցն՝ որոց աչք և սիրտ ցանկութեամբ հայրենեացն հալին, ցուցանէ զի չէք ինչ խաւար թէ ատ ոք կամ անդ անկեալ գնիցի. սա զանհաւատարմն բախտիւ՝ որ զհատարակաց պարգևսն չարաչար բաշխէ և զծնեալսն նովին իրաւամբք զայլ ոք ընդ այլոց արկանէ խղխանութեամբ՝ հաւասարէ առհասարակ. սա է որ ոչ գործեաց ինչ երբեք ըստ հաճոյս այլոց. սա է յորում ոչ ոք զնուաստութիւն իւր ծանեաւ, որ ոչ յուշքէ ակնածեաց: Սորա ընորհ է զի ոչ առ ՚ի պատիժ ծնանիմք. սովաւ ընդդէմ սպառնալեաց բախտին խնդասիրեալ՝ ինքնիշխան և անբռնաբարելի պահեալ զոգիս. զսա ունիմ ինձ ապաւէն և պատսպարան:

ՍՆՆԿԱՑ. ՃՂ. Միխիթ. առ Մարկի:

ՋՐՈՒՑԱՑՐՈՒԹԻՒՆ

Եւ արդ եղիցի բանն, որպէս յայսմ մասին գերազանցեալ գտանին Սոկրատեանք առաւել, կամ երբեք ոչ խիստ. աղուհամեմ գտցի ՚ի նմին: Եւ ոչ՝ որպէս թէ ինքն իցէ Ժառանգ խօսիցն, արտաքոյ զայլս Թողուցոյս. այլ որպէս յայլ իրս, նոյնպէս և ՚ի խօսս հասարակաց, ոչ անպատահ համարեսցի զառաջ քան զամենայն տեսցէ, թէ զորո՞յ խօսի իրաց. եթէ զլուրջ բանից, երևեսցի անաչառ. եթէ զկատակաց, աղուաբան: Նախ քան զամենայն յառաջատես լինի, մի արդեօք խօսքն տացեն զինչնոյն պակասութեան անձին բարոյից. որ առաւել յաճախ պատահէ, յորժամ լինի խօսել մտադիր զբացականաց՝ բամբասանաց ազագաւ, կամ ծաղրելով, կամ խրատութեամբ, չարաբանութեամբ, և թշնամանադրութեամբ:

Բանք լինին ստէպ կամ զառանին գործոց, կամ զհասարակաց աերութենէն, կամ յաղագս արուեստիցն փութոյ և ուսման: Արդ պարտ է ջանալ՝ զի թէ սկսանիցի բերիլ յօտար զրոյցս, ՚ի նոյնս վերադարձցի բանն, և այն որպէս գեղք իրացն պահանջիցեն. զի ոչ ամենեքին նոյնմբք իրօք, և ոչ յամենայն ժամանակի, և ոչ միօրինակ զուարճանամք: Եւ զայն ևս պարտ է յուշ ածել՝ եթէ ցո՞ր վայր իցէ սփոփական զրոյցն. և զոր օրինակ սկսանէլցն գոյ պատճառ, նոյնպէս և վախճան առնելոյն գիտացիցէ:

ԿԻԿԵՐՈՆ. Ճաղ. պատշաճից:

ՃՇՄԱՐԻՏ ԱՐԻՈՒԹԻՒՆ

Ա՛յլ այն փքացումն ոգւոյ որ ՚ի վիշտս վտանգի և ՚ի վատահս երևեալ, եթէ անման իցէ յարդարութիւնէ, և մաքառիցի ոչ վասն հասարակաց փրկութեան, այլ վասն անձին օգտաշահութեանց, մոլեկան է: Զի ոչ միայն չէ այդ ՚ի սահմանի առաքինութեան, այլ մանաւանդ անագորոյն մտաց է, որ զամենայն ցրէ զմարդկութիւնն: Սորին վասն խմաստութեամբ սահմանի արիութիւնն ՚ի Սողոմոնէ, յորժամ ասէն զայն՝ Առաքինութիւն մրցական ՚ի կողմանէ արդարութեան: Վասն այսորիկ ոչ ոք է որ զարիութեան տուցաւ զիտուս դաւաճանութեամբ և չարութեամբ, և գովութեան եղև ժառանգորդ: զի չէ հնար վայելչական լինել խիք, որ անման է յարդարութենէ:

Եւ արդ արի և մեծասիրտ են համարելի՝ ոչ որ առնեն, այլ որ վանեն զանիրաւութիւն: Իսկ ՃՇմարիտ և խմաստուն մեծանձնութիւնն զՀամեստն զայն՝ որում առաւել զհետ երթայ բնութիւնս, ՚ի գործս հաստատեալ փիտէ, և ոչ ՚ի փառս. և առաւել կամի լինել՝ քան երևել իշխան: Քանզի և որ կախի զաչէտ խառնաղանձին մոլորութենէ, այնպիսին մի զրեսցի ՚ի թիւս վեհիցն արանց: Եւ կարի իսկ դիւրագոյն գրի ՚ի գործս անկրաւս՝ որչափ ոք բարձրամիտ է և վեառասէր: Եւ այս է առաքէն դիւրագայթ վայր. զի գժուարաւ ոք գտանի, որ չհետ յանձին կրելոյ զվաստակս, և ՚ի վտանգս լինելոյ միջամուխ, ոչ յանկանայցէ փառաց որպէս վարձուց գործոց իւրոց:

Ամենայնիւ արիւն և մեծասիրան՝ երկոքումբք իրօք առաւել ՚ի վեր երևի. յորոց միւն հաստատեալ է յանեսն առնել զարտաքին իրօք, ուր դնէ ոք ՚ի մտի թէ չէ արժան մարդոյ զարմանալ կամ ցանկանալ կամ զհետ լինել խիք, բայց միայն որ համեստն իցէ և վայելչական. և ոչ ներքոյ արկանել՝ ոչ մարդոյ, ոչ խռովութեան ոգւոյ, և ոչ բախսի: Իսկ միւսն է, զի յորժամ զայդ սիրտ ունիցիս զոր ա-

ստղիդ, գործս գործիցես ոչ միայն մեծամեծս և կարի օգտակարս, այլ և գժուարինս յոյժ և տարժանաւորս, և լիս վտանգաց կենաց, և յոգունց իսկ իրաց՝ որ կենաց են անկ:

Եւ այս երկուց իրացս բովանդակ պարծանք և մեծութիւն, ընդ նմին և օգտակարութիւն, ՚ի վերջնումն անգ է: իսկ պատճառն և բան որ առնէ զոր այր մեծ՝ յառաջնում անգ է: Վասն զի յայնմ է բանն, որ առնէ վեհանձնեալ և արհամարհող մարդկեղէն իրաց: Եւ այս տեսանի յերկուս՝ եթէ զայն ևեթ բարի համարիցիս որ համեստն է, միանգամայն և յամենայն ամբոխմանէ սրտի ազատ իցես: Քանզի և զորս գերապանծ և զարմանալի բազմաց թուին՝ դուզնաբեայ ինչ վարկանել, և քամահել զնոքաց անայլայլակ և հաստատուն խորհրդով, գործ է քաջասրտութեան և մեծանձնութեան. և զորս դառն թուին, ուր բազմապատիկ և պէտս հանդիպին այդպիսի զհանգ կենաց և ընչից մարդկան, այնպէս առնել՝ զի ոչ իւիք օտարանայցես ՚ի պայմանէ բնութեան կամ ՚ի պատուոյ առն խմաստնոյ, արիական ոգւոյ է գործ և մեծամուր հաստատութեան:

ԿԻՒՐՈՆ· Յաղ· պատուհասից:

ՄՈԼԱՐ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Վասն որոյ՝ մոլար ճանաչումն է բարեպաշտութեան՝ նկարել զնա ՚ի մտի համակ զանգիտօղ, ապիկար, տարակուսական, խղճական և կարճամիտ, որ զպարտսն առ մեզս ունիցի և զպարտութիւնսն առ առաքինութիւնս, որ սահպիցի գործել՝ և չիշխիցէ ձեռնարկել, մշտատաւան ընդ պէտս հասարակաց և ընդ բարեպաշտիկ խելս կասկածանացն, և ոչ յայլ ինչ ՚ի վար զկրօնսն արկեալ՝ բայց ՚ի խռով և ՚ի շիտակ հարկանել, ուր պարտն էր օրհնս և կարգս հաստատել: Ա՛յս զեղծմունք մարդկան են՝ զոր խառնաւալ

առնեն՝ի բարեպաշտութիւնն. այլ ոչ՝ի ընէ բարեպաշտութեան են: Նշանակ է այդ փանաքի և ակարամիտ ոգւոյ, բայց ոչ հարկ ինչ բարձրութեան և իմաստութեան կրօնից: Մխով բանիւ՝ անչափութիւն առաքինութեան է. բայց ուր անչափութիւն՝ի ներքս սպրդի, անդ վախճան առնու առաքինութիւն:

ՄԱՍԻԼԵՈՆ. փոքր քառասնորդք:

ՓԱՌԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Գիտեմ զի է աղնուական ինն նախանձաւորութիւն՝ որ ընդ հետս պարտուց ածէ՝ի փառս. սերունդն աղդէ՝ի մեզ, կրօնքն համարձակէ. այն խակ է որ հանէ սերունդ թեանց նշանաւոր քաղաքացիս, իմաստուն և ժրաջանս պաշտօնեայս, զօրավարս առաքինիս, մատենագիրս հռչակաւորս, իշխանս արժանագովելիս աւուրցն յետնոց: Ճշմարիտ բարեպաշտութիւն ոչ է ախտ վատութեան և հեղգութեան. կրօնք ոչ նկուն առնեն և ոչ մեղկեն զսիրտ, այլ աղնուացուցանեն և ամբառնան. նա միայն գիտէ յերիւրել արս մեծամեծս. փոքր է միշտ մարդ՝ եթէ ընդունայնութեամբ ևեթ մեծ իցէ. վասն որոյ գրգռութիւն և անդորձութիւն հակառակ են ևս օրինաց բարեպաշտութեան և պարտուց քաղաքական կենաց, և անպիտան քաղաքացին տաղտկալի է՝ ոչ միայն յընկերութենէ, այլ և յաւետարանէն:

Իսկ փառամոլութիւն, տենչ անյագ բարձրանալոյ՝ի վեր, ևս և՝ի վերայ աւերակացն այլոց, որդն՝ որ կրծէ զսիրտ և ջոյց բնաւ հանգիստ, ախտ՝ որ է գրգիռ մեծ՝ խորամանդ հնարից և ամենայն յուզից արքունեաց. պատճառ յեղափոխ սատմբակութեանց պետութեանց, և ցուցիչ աշխարհի նորանոր տեսլեանցն հանապազօր. ախտ՝ որ

յամենայն ձեռներէց է, և չիք ինչ նմա ծանրագնի, նոյն ինքն առաւել ժանտագործ է տէրութեանց քան զծուլութիւն ինքնին գլխովին:

Արդ Թշուառացուցանէ նախ զգերին իւր. փառասէրն յոչինչ վայելէ. ոչ՝ի փառն, զոր ազօտանուաղ տեսանէ. ոչ՝ի բարձս պատուոյն, առաւել ինդրէ վերանալ. ոչ՝ի բարեկեցութեանն, ազատն և ոանի՝ի լինութեան անդ իւրում. ոչ՝ի սպաս հարկի մեծարանացն, մահադեղ խառնեալ է նմա՝ի նոսին մեծարանքն՝ զոր ինքն պարտի հատուցանել այլում. ոչ յարքունատուր ընորհն, գառն է նմա և այն, զի բազմորդ են ընդ իւր և նախանձորդքն. ոչ՝ի հանգիստ իւր, Թշուառական է որչափ սոխալ՝ի հանգարտութեան կալ. Համան է, ցանկալի և նախանձելի ամենեցուն, բայց պատիւ մի ևեթ զլացեալ տարապայման իշխանութեան իւրում՝ իւրում խակ անձին անհանգուրժելի առնէ զինքն:

Այսպա ուրեմն Թշուառացուցանէ զինս փառամոլութիւն, բայց և անարգէ և՝ի սոյն արկանէ: Որչափ նուաստութիւնք՝ի հատանել բարձի և պատուոյ. երևել պարտ է՝ ոչ որ ինչ եմքս, այլ որպիսիս կամինն զմեզ: Նուաստութիւն պաշտօն առնելոյ, խոնհ և երկրպագութիւն մատուցանել անարգ կոծոյն. նուաստութիւն վատութեան, դիտել կլանել լեղւի լեղւի պատառս, համբերել զլացութեանց, և երբև ընորհս իմն ընդունել զնուաստութիւն կեղծեայ, ոչ մի ինչ միտս ունել անձին սեփական, այլ ընդ ձեռամբ կայցէ, և խաղրդ անառակութեանցն լինել առ՝ի բաժանորդ անշուշտ ընորհացն լինելոյ. հուսկ ապա նուաստութիւն պատճառանաց, պատճառիլ երբեմն՝ի կերպարանս բարեպաշտութեան, այլ բարի ձևանալ առ՝ի մեծանալ, և՝ի պէտս փառամոլութեան առնուլ զկրօնն խակ՝ որ դատապարտեն զայն: Ոչ մտացածին ինչ պատկեր է այս. արքունեաց բարք են, և վարք յոլովից՝ որոց անդն կենցաղավարին:

Թող յետ այսորիկ ասացեն մեզ՝ Թէ մեծանձն ոգւոց

է այս ախտ: Դրոշմ է այդ անարգ և վայրաքարշ սրտիւ, յայտանկատ նկարագիրը ոգւոյն վատութեան: Պարտուցն միայն խնամ՝ գիտէ ածել զմեզ 'ի փառս. իսկ որ 'ի նուաստութենից անտի և 'ի հնարիմաց խորամանկութենէ վարասիրութեանն գայցէ, ընդ իւր բերէ միշտ կերպարանս ինչ ամօթոյ՝ մեզ 'ի նախատինս. ոչ խոստանայ զթագաւորութիւնս աշխարհի և զամենայն փառս նոցա, եթէ ոչ ո՛րոց անկեալ երկիր պագանիցեն առաջի անօրինութեան. Եթէ անկեալ երկիր պագանիցես ինձ: Նուաստութիւնքդ կշռամբանք են միշտ բարձրութեան ձերում. բարձքդ և պատիւք յուշ առնեն անդադար զկորանդ որովք արժանի եղեալ էք. և անուանք իսկ պատուոյդ և պաշտամանդ՝ զինք լինին 'ի ձեզ ժողովրդեան 'ի նշաւակել զձեզ: Բայց 'ի միտս փառասիրին, յաջողութիւնն ծածկէ զամօթ հնարողութեանն. կամ 'ի վեր 'ի վեր ժամանել, և որ ինչ անդր տանի զինքն՝ այն և եթէ է զոր խնդրել իւր փառս. և զհռովմէական առաքինութիւնն որ ոչ իմիք կամին պարտական լինել՝ բայց միայն լաւութեան՝ պատուոյ և վաստակոց, համարի վիպասանական և թատերական առաքինութիւնս, և կարծէ թէ խորհրդոց բարձրահայեցութեան էր երբեմն զիւցազնսն յարդարել փառաց, իսկ բախտ՝ զորդիս նուաստութեան է սահմանել և անարգութեան:

Վասն որոյ՝ անիրաւութիւն ախտս այսորիկ է վերջին հանդամանք իւր, յաւէտ ևս առելի քան զանհնազանդութիւն իւր և քան զանօթանան: Այո, եղբարք իմ, փառասէրն ոչ այլ ինչ օրէնս ճանաչէ՝ բայց զոր նպաստամատոյց նմա լինիցի. եղեան՝ որ զնա բարձր առնիցէ, առաքինութիւն ազնուագործ է առ նմա. ինքն բարեկամ անհաւատարիմ, ոչինչ է առ նմա բարեկամութիւն՝ իբրև վնասակար թուիցի բախտին իւրում. յոռի քաղաքացի, ոչ յարգի առ նմա սուտութիւն՝ բայց եթէ օգտակար նմա եղիցի. արժանիք որ ընդ նմա 'ի հակառակս մտանեն, թերացնամի անհերելի են նմա. օգուտ հասարակաց՝ տեղի տայ միշտ իւրումն շահու. հեռի առնէ զաջողական 'ի սպառ

առաք, և 'ի տեղի նոցա սպրդի. զիրկութիւն աշխարհին պարտ բաշխի տայ իւրոյ մախանաց. և ոչ այնչափ ցաւեցէ նմա կորուստ իրացն աշխարհին 'ի ձեռս իւր, որչափ պահպանութիւն նոցին՝ խնամովք և խմաստութեամբ օգտարին:

ՄԱՍԻԵՆ. փորր քառասնորդք:

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՑ, ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Յանիրաւի զիւրմէ բնութենէն քրթմնջէ մարդ, իբր զի ապիկար և սակաւաժամանակեայ՝ 'ի բաղդէն առաւել քան յառաքինութենէն վարիցի: Ջանղն ընդ հակառակն քաջ կշռեալ, ոչինչ մեծ և գերագոյն քան զայն գտանիցէ, և զի փոյթ Ճարտարութեան պակասէ նմա քան թէ զբութիւն և ժամանակ: Այլ իշխան և առաջնորդ կենաց մահկանացուաց միտքն է, որ եթէ ընդ շաւիղս առաքինութեան փառաց լիցի 'ի ձգիր, մեծապէս Ճոխացեալ հզօր և շքեղ գտանի, և ոչ բախտին կարօտ՝ որ զանգծութիւն վարուց, զայլազգութիւն և զայլ բարեմասնութիւնս՝ ոչ ընդհատել ուժգին կարէ, և ոչ 'ի բաց առնուլ:

Իսկ եթէ 'ի թիւր ցանկութենէդ ոք ըմբռնեալ 'ի դատարկութիւն և 'ի հեշտութիւնս մարմնոյ զառածանիցի, զինքսահար հեշտալիօք դամ մի դգեցեալ, կորուսանէ առ յուղղութեան զղջմունքն, զժամանակ և զհանճար, և տկար ղբնութիւնն ամբաստանէ՝ զիւր մեղն զնոցա չիեալ: Զի եթէ այնչափ փոյթ էր մարգկան ղբարեաց գործոց, որչափ զհետ անպատշաճին և զանօգտակարաց և յաճախ իսկ զինքսահարաց դիմեն, ոչ արգելք բաղդն զնոսա՝ այլ նոքա զբաղդն վարէին, և յայն հասեալ մեծութիւն, զի ոչ ևս մահկանացուք՝ այլ յաւերժականք լինէին փառօք:

Եւ զի ազգ մարդոյ ի հոգւոյ և ի մարմնոյ է կազմեալ, վասն այսորիկ և բուսական գործք մեր և ջանք՝ կէսք զմարմնոյ բնութեան, և կէսք հոգւոյ զհետ երթան: Աւրդ գեղեցկութիւն դիմաց, դանդուց մեծութիւն, սոքօք հանգերձ և մարմնոյ կորով և այլ ամենայն ինչ սոցին սակի՝ վաղանցուկ են և դիւրաստաց. իսկ հանճարոյ վէմ են գործք և զօրէն հոգւոյ անմահք: Եւ զի ի կարճոյ ասացից, մարմնոյ և բարեաց բախտին, որպիսի սկիզբն՝ նոյնպիսի է և վախճան. ամենայն որ ծնանին՝ մեռանի, և որ աճէն՝ հնանայ: Իսկ հոգին անեղծ է և յաւերժական՝ ուղղիչ մարդկան ազգի, որ նուաճեալ վարէ զամենայն, և ինքն ոչ յուսկէ նուաճի: Որով զարմանալի ևս է նոցայն անմոռութիւն, որք անձնատուր ի մարմնոյ հաճոյս՝ չուայտութեամբ և վատութեամբ գնան, և զհանճար՝ քան զոր չկք ինչ պատուականագոյն, չկք ինչ գերագոյն ի բնութեան մահացուաց, անմշակ և անինամ թողուն վատութեամբ ի թմբիր ապականութեան, որ բազմապատիկ և զանազան են մտաց արուեստք, որով կարէին նոցա պայծառանալ:

Բայց սակայն առաւնակալութիւնք և իշխանութիւնք, և միանգամայն ասացեալ՝ ամենայն ինամք գործոց հասարակաց ոչ ինչ ըղձալի թուին ինձ արդ. զի ոչ ևս առաքինութեան են վարձք, և ոչ որք նենգութեամբն հասին յիշխանութիւն՝ անքոյթ ինչ այնու կամ առաւել առաքինիք ցուցան: Զի թէպէտ և յաջողացի քեզ բռնութեամբ իշխել հայրենեացդ և ազգակցաց, և բառնալ զեղծմունս, տակաւին անպատեհ է. մանաւանդ զի ի յեղափոխութիւն տեսչութեան՝ կոտորածոյ հարկ է և տարագիմ փախստեան և այլոց թշնամութեանց: Իսկ տարապարա վաստակել, և ոչ յայլ ինչ ձգնել, բայց ի խնդիր առեղծութեան, յեղեն անմոռութեան է գործ, որոց ոչ կամիցին անձառ և վնասակար աւելչիւ ի շնորհս սակաւապատուութեան նուիրել զպաշաճն և զազատութիւն:

Իսկ ի գործոց հանճարոյ ընդ պիտանեգոյնս համարի աւանդել գրով զյիշատակս անցից, զորոյ զառաւելու-

թենէն քանզի բազումք ձառեցին՝ լուել հաւանիմ, որպէս զի մի մնափառ ումք թուեցայց, զանձին վաստակս ի գովութիւն առեալ: Իցէն իսկ թէպէս որք վասն հրաժարելոյ խոյ ի գործոց հասարակաց, գաւարկութիւն համարեցին. զոքա ապաքէն այնոցիկ լցեն, առ որս ձարտարութիւն համարեալ է սպաս տանել ռամկին, և կոշնովք շնորհս խնդրել: Որոց եթէ ընդ միտ ածեալ էր, թէ յո՞ր ժամանակս դէպ եղև ինձ առենակալութեան հասանել, և ո՞ք ոմանք չկարացին հասանել յայն, և որպիսիք ապա ի կարգ ծերակուտին ամբարձան, խելամուտ արդեօք լինէին զի ոչ առ վատութեան եղև ինձ փոխել զնորհուրդս, այլ զի առաւել օգուտ էր հասարակապետութեան յիմիք գաւարկութենէս քան յայլոցն գործառնութենէ: Քանզի լուայ բազում անգամ Թէ Կ. Մաքսիմոս, Պ. Սկիպիոն և որք ականաւորք ի մերոց քաղաքացեաց սովոր էին ասել, զի ի հայել նոցա ի կենդանագիրս նախնեաց՝ վառեալ արծարծանէին միտք նոցա ի սէր առաքինութեան: Իբր ոչ եթէ ի նիւթն մոմեղէն և ի կերպարան պատկերին էր այն զօրութիւն, այլ ի յիշատակ գործոց նոցին վառէր բոցն այն ի սիրտ արանց աւագաց, և ոչ հանգարտէր մինչև առաքինութեան իւրեանց հաւասարել համբաւոյ փառաց նոցա:

ՍԱԼՈՒՏՏԻՈՍ:

ԳԻՐՔ ՅՈՎՔԱՅ

Ի գէպ է կարծել Թէ և զգիրս Յովբայ ինքն (Մովսէս) մատենագրեաց. զի և վեհմութիւն խմատից, և չքեղութիւն կարգի բանիցն ի ձահ պատահէն նմա: Իբրու այն Թէ՝ զի մի յամբարտաւանութիւն կրթեացին Հրեայքն՝ անձանց գրելով զնորհս Աստուծոյ, պարտ էր խելամուտ առ-

նել զնոսա թէ Աստուած ունի իւր ծառայս և ՚ի տոհմին Եսաւայ: Զինչ այլ ուսումն կարևոր, և զոր օգտակար խրատս հնար էր աւանդել Մովսէսի ժողովրդեան վերջացելոյ յանապատի անդ, իբրու զհանդէս նահատակութեանցն Յովբայ, որ թողեալ էր ՚ի ձեռս սատանայի փորձիլ յամենայն աղգս տանջանաց. և թէպէտ մերկ և սոսկ յընչից, որդեկորոյս և անմաան յամենայն միխիթարութեանց, և ՚ի վերայ այսոցիկ հարուածեալ չարաչար ՚ի մարմնի և փորձեալ հայհոյութեամբ և յուսահատութեամբ ՚ի միտս, սակայն արձանացեալ կայ անյողդողդ, յայտ արարեալ՝ թէ այլ հաւատարիմ՝ օժանդակեալ յաստուածուստ՝ դիտէ և յասպարիզն անդ ահաւորագոյն մրցանաց և ՚ի կարի գժնդակ վիշտս գրգռեալս ՚ի հնարից բանսարկուին՝ անպարտեալ կալ, և տանիմոս եղեալ ընդ աղէտս իբր ընդ աշխարհս, համբառնալ զինքն ՚ի բարձրագունիցն նկատմունս, և ՚ի միտ առնուլ ՚ի չարչարանս անդ զապրելիսր բնութիւն մարդկան, զամենամեծ զօրութիւն Աստուծոյ, և զանսահման խնամատարութիւն նորա: Ահա զայս ամենայն խրատս բովանդակէն գիրք Յովբայ: Այլ ՚ի պէտս ժամանակին զատեացս Հոխութիւն պատկ կապեցին նմա հաւատք նորա. բայց տակաւ ՚ի միտ առնու մարդն հոգւոյն որ այն իցէն Ճգնիք առաքինութեանց, և մատչի հուպ Հաշակել զնորս՝ որ անանձրեւ լինելոց էր ՚ի խաչէն:

ՊՈՍԻԽ. Խօսք ՚ի վէպս ազգայ:

ԱՒԵՏԱՐԱՆՔ

Եթէ պատմագիրս ոմանս կամիցիք որ ՚ի գործս իւրեանց զանկեղծ հաւատոյ և զվիամոութեան ասցեն ձեզ ընծայութիւնս, ընթերցցիք, աղէ, տեառըք, զաւետարանսդիրան, և տեսանիցէք եթէ զնարդ պարզ և անխառն իցէն

բանէն. չէն ՚ի նոսա ինքնապաճոյճ խորհրդածութիւնք և բառից Հռոմութիւնք, այլ ամենայն ինչ պարզութեան և անմեղութեան յայտարարք, մինչև զանձանց իսկ ոչ պատրուակելով զթերութիւնս. զոմանց զանխորհուրդ նախանձաւորութիւն, զայլոց զանձնընտիր լինել անպատուութեամբ, զամենեցուն զգիտութիւն և զչնչակատութիւն. զվատութիւն՝ որով ցրուեալ ՚ի փախուստ դառնան, և զուրացութիւն Պետրոսի, և զայլն ամենայն որ ամէն և կորանս ածէն ինքեանց, ոչ բնաւ լռութեամբ ծածկեն: Միաձայնութիւն նոցա ՚ի հիմնականն՝ հաստատուն եթէ սկիզբն Հմարտութեան մի է ՚ի նոսա, և տարաձայնութիւն ՚ի վիպագրութեան՝ երաշխաւորի մեզ եթէ չէ ՚ի նոսա դաշնաւորագայթ դաւակցութիւն: Ո՞ ՚ի վիպասանից ոչ ՚ի գովութիւն առնուցու զիւր նահատակն, ոչ ցանկութիւն ընդ այպանումն նոցին, և ոչ զգայուեսցէ ընդդէմ ՚Թշնամեացն: Այլ յաւետարանագիրսն չէն ուրիք լռութիւնք և հայհոյութիւնք և կամ զրոյց զայրագին, նա և չերևին ՚ի նոսա առեղծութիւն և հեռք ամբոխելոյ, կամ Հռոմութիւնք բանից. այլ նովին անկեղծաւոր պարզութեամբ պատմեն և զցաւս նորա և զտանջանս, որպէս և զհրաշագործ սքանչելիսն. և մինչ աստուածային ինն զօրութեամբ ցուցանեն առլցեալ, անդէն առաջի առնեն ՚ի նմա և մարդկայինս բնութեան զակաւրութիւնս, և վկայք ահաւոր տեսլեան խաչելութեանն նորա յայս բան համառօսին «Անդ հանին զնա ՚ի խաչ»: Եւ յաստացուածս նոցա և ՚ի բանս այնպիսի ինն պարզութիւն և Հմարտութիւն տեսանի, որով չէր մարթ խաբէութեանն կերպարանել. մինչ զի և Յինեաւնուէլն զնոսա ոչ ինչ կասկած պատրանաց ՚ի միտս անկանի, և ոչ իսկ առաւելութեան բանից. նա և յափրշտակիմք իսկ ՚ի նոսին. և առաքինութիւն և անկեղծութիւն բռնաբար զհետ իւրեանց առեալ ձգեն զմեզ: Ի զուր է ասել թէ աւետարանագիրք զպարզութիւն և զանկեղծութիւն կերպարանիցին, առ հեշխս ևս հրապուրելոյ. քանզի անմարթ էր նենգապատիր Հմարտութեան ամենուրեք կալ

'ի թագսի· զի զինչ այնուհետեւ յայտարար կինիք Աշմարտութեան մնայնի, եթէ խաբէութիւն այնպէս Աշպրատպոյնս նմանող նմին լինէր, առանց երբեք խայտառակելոյ: Աւրդարև աւետարանք չազգէն ինչ բնաւ 'ի սիրտս առաքեալսն խմասանոց կարծրացելոցն նիւթապաշտութեամբ, և ոչ իսկ յապականեալ և 'ի խանգարեալ հոգիս թերահաւատիցն, այլ ազդէր նա 'ի սիրտ Յովհաննու Ցակոբայ Ռուսացոյն, որոյ բանք Աշմարիտք 'ի բազմաց 'ի վկայութիւն առեալ է· «Խոստովանիմ, ասէ, եթէ մեծվայելչութիւն գրոց սրբոց հիացուցանէ զիս· և սրբութիւն աւետարանաց խօսի 'ի սիրտ իմ· զինարդ մանուկք են առնովաւ մեծապանծ մատեանք խմաստասիրաց··· Մարթ էիցէ ասել եթէ ըստ հաճոյս հնարեալ էին վէպք աւետարանապատումք· այլ անհնարին է այսպիսի հնարագիտութիւն· ոչ այնչափ ակնագոյնս վկայեալք են Սուրբ գործք՝ ընդ որս ոչ ոք երկմտէ, որպէս արարուածք Յիսուսի Քրիստոսի: Աւյն զի ոչ պարզել է զգեժաւորութիւնս, այլ և ևս յաւելուլ· զի անհասանելի ևս է միաբան գործակցութեան բազմաց համարել զդէրս, քան միոյ եթէ տալ զդէպս անցից որ 'ի նոսա··· Նա զի այնպիսի մեծ և յայտնի և անզուգական դրոշմք Աշմարտութեան են աւետարանաց, զի աքանչելի քան զդիւցազնն երևէր որ զնոսին Աարատարեաց »[1]:

ՖՐԻՑՍԻՆՈՒՍ· Յաղագս Քրիստ. կրօնից:

1. Եմիլ· գիրք Դ:

ԱՌԱԿՔ ԵՒ ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՆԿԱՐԱԳԻՐ ԱՌԱԿԻ

ՊԱՏՈՒԻՐՔ ԱՌ ԱՑՍ

Յօժարութիւն է մարդոյ 'ի բնէ 'ի լուր պատմութեան· իսկ առակ զարթուցանէ զհետաքրքրութիւն նորա, և զբօսացուցանէ զերևակայութիւն: Անգամն 'ի վաղնջուց ժամանակաց են առակք, և 'ի կարի իսկ 'ի հին յիշատակարանս ամենայն ազգաց գտանին: Գոգդես իմն յամենայն ժամանակի զանգիտեալ Աշմարտութեան 'ի մարդկանէ, և մարդկան 'ի Աշմարտութենէ: Որ ոք և լեալ էցէ պոիչ առակաց, եթէ իրաւունք երիչցա 'ի բերան սարկի՝ վասն լսելի լինելոյ տեառն իւրում 'ի կիր առեալ էցէ զայն լեզու, և եթէ յիմաստանոց ոք՝ առ 'ի հաշտ առնել ընդ իրաւունս զգուռզոզպոյնն 'ի տերանց զանձնասիրութիւն, մտաբերեալ էցէ տալ նոցին զախորժ և զուարթ զայն կերպարան, մի յայտնանէ է գիւաս այս՝ որ մարդկելէն մտաց առաւելագոյն յաձախեն փառս: Սակայն բարեյաջող արուեստիւ, Աշմարտութիւն՝ մինչև յանդիման լեալ մարդկան՝ իրաւախոհ լինի ընդ գոռոզութեան նոցա, և սիրէ երևակայութեան: Ընծայէ նոցա գիւաս իմն ախորժելի, և խնայէ զնոսա 'ի նախատանաց յանդիմանութեան և 'ի տաղտկութենէ իրատուց: Միտք զբաղեալ 'ի գիւաս իմիասից առակին, չգտանէ պարապ ընդդէմ դառնալոյ իրատուն· և յերևել ուրեմն Աշմարտութեան՝ գտանի ապաղէն· անձամբ

անձին հատանէ վէիս, զոր չկամէրն լսել յայլմէ. քանզի է ուրեք զի կամիմք գալ յուղղութիւն, այլ ոչ կամիմք դատապարտիլ յայլմէ:

ԼԱՀՄԲ. Ներբող ի Լափօնրեն:

ԳԱՅԼ ԵՒ ԳԱՌՆ

Ոչխարք ի փարախն իւրեանց կային յակատամանի, շունք ննջէին, և հովիւն ընդ հովանեաւ բարձրաբերձ կնձեւ նոյ զուարճանայր սրնգահն ընդ հովիւս մերձակայս: Եկն անդր գայլ մի սովալուկ, դիակ ի ցանկապատէն գՀօտն: Գառնուկ մի անփորձ, որոյ բնաւ իսկ չէր ինչ տեսեալ, սկսաւ բարբառել և ասէ առ որկորաժէտն. —

Ձի՞ ինդրես աստանօր. — Թալար փախուկ և նորածիլ, պատասխանեաց գայլն. չէք ինչ անուշակ և անձկալի քան Ճարակել զդալար ի կանաչազարդ մարգագետինս և անցուցանել զքաղց, և գնալ շնչուցանել զծարաւ ի մերձակայ ականակիս վտակէ. գոլ ես ասա զերկոսին ևս. իմ այլ իմիք կարօտիմ. սիրոյ եմ խմաստասիրութեան, որ ուսուցանէ չառանալ սակաւուք. — Ճշմարիտ ուրեմն է, պատասխանի էառ գառնուկն, զի երբեք դուս ոչ Ճաշակես զմարմին կենդանեաց. և քեզ բաւական է սակաւ մի խոտ. տալ սուրեմն եղբայրաբար կեցցուք և Ճարակեսցուք ի միասին: Անգէն վազվազակի էլ գառնուկն ի փարախէն և չոգաւ անդր ի մարգագետինն, ուր ժուժկալ խմաստասէրն յօշ յօշ պատառեաց և եկեր զնա:

Զգոյշ լերուք ի հրապուրող բանից մարդկան, որք կեղծեն յինքեանս զառաքինութիւն. գտեցարուք զայն պիսիս ի գործոց իւրեանց և ոչ ի բանից:

ՓԵՆԵԼՈՆ. Աստակր:

ԱՂՈՒՆՑՔ ԵՐԿՈՒ

Աղուէսք երկու յանկարծուստ զգիւերային մառեալ ի հաստատուն ուրեք, խողխողեցին զաքաղաղն, զհաւն և զվառեակս, և կոտորածիւն անցուցին զքաղց իւրեանց: Մին մանուկ եռանդուն, կամեր ծախեալ սպառել զամենայն. իսկ միւսն, ծեր և ագահ, խորհեր պահել պարէնս ապագայ, և ասէր. Որդեակ, խմաստուն արար զիս փորձն. իմ բազում ինչ տեսեալ է, յորմէհետէ եմս յաշխարհի. չէ արժան վատնել զամենայն բարութիւնս մերս առ օրին. յայսղեաց մեզ բախան և գանձ մեծ է զոր գտաք. պարտ է խնայութեամբ վարել նովաւ: Այս որ պատասխանեաց կրտսերն. — Կամիմ զամենայն ինչ ուտել սպառել, մինչդեռ եմս ասա, և յագել և անճաշակ լինել զաւուրս ուրախ. քանզի ո՞ գիտէ թէ եկեալ մեր այսր յաջողեսցի՞ մեզ օրն վաղուան. տանուտէրն սպանցէ զմեզ ի վրէժխնդրութիւն մահու հաւուց իւրոց: Եւ յետ բանիցս այսոցիկ իւրաքանչիւրն հաճեաց զկամս մտաց իւրոց: Կրտսերն եկեր կշտացաւինդ մերձ ի պայթել, մինչև հաղիւ կարացեալ երթալ յորջ իւր, անդ մեռաւ: Իսկ ծերն որ կարծեր առաւել խմաստութիւն՝ չափաւորել զախորժակ իւր և կեալ խնայութեամբ, դարձ արար ի վաղիւն անդր և սպանաւ ի տէառնէն:

Այսպէս ամենայն հասակի են իսկ թերութիւնք իւրաքանչիւր երիտասարդք բռնութիւնք են և ծայրայեղք ի հաճոյս իւրեանց, իսկ ծերք անուղղայք յապահովութեան:

ՆՈՑՆ:

ԱՐՋ ԵՒ ԿՈՐԻՒՆ ԻՒՐ

Սրջոյ ծնաւ կորիւն, կարի յոյժ ագեղ, զի և կերպա-
րան կենդանւոյ չերևէը 'ի նմա. այլ մարմին անձև ժան-
տատեսիլ: Զամօթի հարեալ արջոյն ընդ զաւակ այնպիսի,
երթայ հարցանել զորի զդրացի իւր, որ 'ի ծառին՝ շաղա-
կրատ ձայնիւն շշուկ մեծ յարուցանէր. Զի արարից, ասէ,
ազգակիցդ իմ բարի, զձիւաղդ փոքրիկ. կամիմ խեղդամահ
առնել զնա: Զդոյշ լեր, պատասխանի ետ նմա շատախօսն,
տեսեալ է իմ բազում այլ արջս, 'ի նոյն վարանս քոյին
ըմբռնեալս. երթ մեղմով լիզեսջիր զձոժիւնդ, և լեզի սի-
րուն և քեզ 'ի փառս:

Դիւրեաւ հաւանեցաւ մայրն խորհրդոյն 'ի շնորհս զա-
ւակին, և երկայնմտութեամբ լիզոյր զկորիւն իւր ժամա-
նակս ձիգս, մինչև ուր ուրեմն նուազեր ագեղութիւն
նորա, և չոգաւ շնորհս մատուցանել մաերմին, ասելով.
Եթէ չէր քո խրատեալ զկարճմտութիւն իմ, պատառեալ
էր անգթաբար զորդեակն իմ, որ արդ միակ ապուպուման է
կենացս:

Ո՛հ որպիսի բարիս խափանէ անհամբերութիւն, և քա-
նի չարեաց լինի պատճառք:

ՆՈՑՆ:

ՊԱՏԱՆԻՆ ԲԱՔՈՍ ԵՒ ՊԱՑ

Յաւուր միում պատանեակին Բաքոս, որ մարզէր առ
ոտս Սիլենեայ, խնդրէր զմուսայս յանառակի ուրեք,
զորոյ թռչնոց ևևթ գայլայլիկ և ազբերքայ խոխոջ աղ-
մկեին զլուռթիւն: Ձառագայթք արեգական չկարէին թափ
անցանել ընդ խիտ գալարութիւնն: Որդին Սեմելեայ, առ
ուսանիլ զատուածոյն բարբառ, նստաւ առ արմին հին-

աւուրց կաղնւոյ, յորոյ 'ի բնոյն ծնեալ էին մարդիկ բա-
զում ոսկեղինիկ գարուն: Տայր նա երբեմն և պատգամս,
և ոմեքիմ ժամանակին չէր իշխեալ եղծանել զայն իւրոյին
սայրատուր մանգաղաւ: Մերձ առ կաղնին հինաւուրց և
նուիրական՝ Թագուցեալ շհապատ մի մանուկ, ունկն
դնէր երգոց պատանւոյն, և 'ի ժպիտ ծաղրածու ծանու-
ցանէր Սիլենեայ զվերպատիս աշակերտին: Անդէն և Նա-
յադք և այլ յաւերժհարսունք անտառին ծիծաղէին: Դե-
ռատի էր պարտաւագիրն վայելչագեղ և զուարթ, գլուխ
իւր պահեալ 'ի բաղեղանց և 'ի բարուենակաց որթոյ. Ձա-
կատ նորա պատճռեալ յորկոյզս խաղողոյ, և փունջ բա-
զեղան կախէր ուսընդհանուր: Պատանին Բաքոս զուար-
ճանայր 'ի տեսանելն զտերևս նուիրականս իւրուն
աստուածութեան: Իսկ Պան 'ի գոսոյն 'ի վայր ծածկեալ
ահարկու և խոզանատեաւ մորթով կորեան ահիւծու, զոր
սպանեալն էր յանտառս: Ունէր 'ի ձեռին գաւազան ծա-
մածուռ և ոսոսախիտ. երևէր իմն յետուստ ագեաւն զքա-
մակն ծեծելով. բայց քանզի Բաքոս ոչ կարէր տանել խո-
բամանիկ երգիծանողին, որ պատրաստն էր միշտ 'ի ծաղրել
զվերպատիս իւր, ասաց նմա ատտիճ. Ո՛րպէս համարձակիս
դու այսպէս առնել զորդին Արամազդայ: Պայն անխռով
պատասխանեաց նմա. Է՛հ, և որպէս որդին Արամազդայ
իշխէ սխալել:

ՆՈՑՆ:

ԿԱՊԻԿ

Մեռեալ կապիկ մի չարածէր, ոդն նորա էլ 'ի խաւա-
րին կայս Պլուտոնի և խնդրէր գառնալ 'ի կենանս անդրէն:
Պլուտոն կամէր առաքել զնա 'ի դանդաղ և յապուշ մար-
մին իշոյ, և բառնալ 'ի նմանէ զդիւրաշարժութիւն, զաշ-
խուժութիւն և զչարութիւն. իսկ նա այնչափ կերպա-
րանս եցոյց ախորժականս և ծաղրածուս, մինչև անո-

ղոքեալ սանդարապետին չկարացեալ բռնաւորել զծաղք՝
եթող նմա ընտրել իւր բախտ: Իսկ նա խնդրեաց մտանել
'ի մարմին Թուխթակի, և ասէ. Գոնեա պահեցից այսուիկ
նմանութիւն ինչ ընդ մարդոյ, զորոյ ընդերկար տարայ կիս
զպատակեր: Մինչ կապիկն էի, առնէի շարժուածս իբրև
զնոսա, և գոլով արդ Թուխթակ՝ խառնեցայց 'ի նոցին հաճո-
յական զորոյս: Այն ինչ ոգի կապկին եմուտ 'ի նոր մար-
մինն, գնեաց զնա պառաւ ումն չատախօս, և սիրեաց
զնա յոյժ, և եդ 'ի գեղեցիկ վանդակի: Շուայտէր Թու-
թակն, և զօրն ողջոյն զուարճասրէր ընդ շատախօս պառա-
ւին, որ ոչ ինչ իմաստանախօսն էր քան զնա: Ի նոր արու-
եսան ընդարմացուցանէր զմարդիկ՝ յաւելոյր չգիտեմ
որպիսի ինչ 'ի հին արուեստ իւրմէ. շարժէր զգլուխն
հապահանջք, կափկափէր զկառուցն և 'ի բիւր եղանակս
զԹեան տատանէր, և Թաթիւքն այնպիսի դարձուածս առ-
նէր, յորս գեռ նշմարէին հապահանք փակռոխնայ: Պա-
ռաւն առնոյր միշտ զակնոցն 'ի ղլխին, և յոյժ ցաւեր նմա
ընդ ծանրալուրն լինել և չմմանալ երբեմն զբանս Թուխթա-
կին, առ որում առաւել դառներ նա հանճար քան առ այլս
'ի մարդկանէ: Այլ զեղծեալ սորա՝ եղև շատախօս խառ-
նակիչ և լիմար, և այնպէս չարաչար նեղէր 'ի վանդակին
և արբենայր ընդ պառաւոյն՝ մինչև մեռաւ, և եղ անդրէն
յանդիման Պղտատնի: Կամեցաւ նա յայնժամ առաքել զնա
'ի մարմին ձկան, առ 'ի համր կացուցանել զնա. իսկ նա
վէրսին հապահեցաւ առաջի անդնդհպէտին. և զի խլանաք
ոչ անատաւն հայցուածոց վաճառ մարդահաճոյին որ
ընթենին նոցա, հաւանեցաւ Պղտատն առաքել զնա 'ի մար-
մին մարդոյ. բայց ամենի համարեալ աստուածոյն առաքել
զնա 'ի մարմին առաքինի և խնամատուն մարդոյ, խորհեցաւ
մուծանել զնա 'ի մարմին առն շաղփաղփի և տաղտկացուց-
չի, որ ատէր միշտ, և մեծաբանէր, առնէր շարժուածս
ծաղրալից, և այպանէր զամենեսին, ընդհատէր զկարևոր
և զնմատուն զրոյցս, առ 'ի խօսել չիշխնս, կամ բանս
բիրտս յիմարութեան: Այնեղաս, որ ծանեաւ զնա յայդ

'ի նոր կերպարանս, ծիծաղեաւ՝ ասէ. Իմ իմ, ես ճանաչեմ
զքեզ. գու խառնուրդ իմն ես 'ի կապկէ և 'ի Թուխթակէ,
զոր տեսեալ է իմ երբեմն: Եթէ ոք բարձցէ 'ի քէն զձևս
և զբարքս, ուսեալս առանց ինչ դատողութեան, այլ
ինչ չմնայ 'ի քեզ: Կապիկ մի դեղեցիկ և քաջ Թուխթակ ոչ
այլ ինչ յառաջ ածեալ կացուցանեն՝ բայց զայր մի տխմար:

Ո՛հ որչափ մարդիկ յաշխարհի՝ պաճուճեալ կերպա-
րանօքն, մնոտի չարփաղփելով և աղնուական ձևով՝ զերկ
են 'ի մտաց և 'ի պատշաճ վարուց:

ՆՈՑՆ:

ԲՈՒ

Բուխճակի տեսեալ զանձն 'ի ջուրս ալքեր, և գեղեց-
կագոյն զանձն համարեալ, թէ ոչ քան զնա՝ որ անհաճոյ
էր ինքեան, այլ առաւել քան զդիեր՝ ընդ որ յոյժ զուար-
ճանայր, ասէր ընդ միտս իւր.—Մատուցից զոհս ընծայոց.
'ի ծնանիլ իմում՝ Աստղիկ արի 'ի վերայ իմ զկամար իւր.
գողարիկ սէր, խաղք և ծիծաղք Թռիչս տան զինև 'ի գգուել
զնս: Արդ պարտ է զի և խարտեաշն Հիմեն տայցէ ինձ մանր-
կունս՝ գեղաւորս որպէս զնս, որք լինին զարդ անտառաց
և բերկրութիւն գիշերոյ: Աւաղ զի ընտրելագոյն ազգ
Թռչնոց 'ի կորուստ մատնեցաւ. երանի հարսին, որ վա-
ղեսցէ զկեանսն՝ զնս տեսանելով: Մինչ յայսմ խորհրդի էր,
առաքեաց զորի ինդրել 'ի գիմաց իւրոց զգուստս արծուոյ՝
Թագաւորին օդոց: Որի գժուարանայր կատարել զհրեշ-
տակութիւնն. Ոչ բարւոք հանդիպեցայց ընդունելու-
Թեան, ասէր, յառաջարկելս զայդպիսի անդէպ հարսա-
նիս: Եւ որպէս արծիւն այն՝ որ խլիսկ յառել զակն իւր
յարեգակն, ամաւնանայր ընդ քեզ, որ ոչ բաւիս քանալ
զաչս քո 'ի լոյս առնչեան. այսու անհնար լինի ամաւնացդ
կալ 'ի միասին, միւսն 'ի առընչեան երեալ, իսկ միւսն 'ի

դիշերի: Եւ ի չհաւանել ունայնամիտ և անճնաեր բուոյն, որի առ ի հաճել ինա՝ չոգաւ խնդրել զարծուին. և ծաղր եկաց վասն անմիտ խորհրդոյն: Պատասխանի ետ նմա արծիւն. — Եթէ բուս կամ հարմանալ ընդ իս, եկեսցէ յետ ծագելոյ արեգական, տալ ինձ զողջոյն ընդ օդս: Բուն յանձնապաստան՝ կամեցեալ գնալ, շլացան անդէն աչք իւր, և կուրացեալ ի Հառագայթից արեգական, անկաւ ի բարձանց ի ժայռ ուրեմն, և հաւք առ հասարակ յարձակեալ ի նա, փետրահարսի արարին զնա: Խարուեալ Թռուեցաւ նմա Թաքչել ի քարանձաւ իւր, և հարմնացուցանել ինքեան զմի ի բուոց, որ եղև նմա հարսն արժանի: Ի դիշերի կատարեցան հարսանիքն, և գեղեցիկք յոյժ և հաճոյք Թռուչին իրերաց:

Զէ արժան ումեք խնդրել ինչ ի վեր քան զինքն, և ոչ խաբել յիւրոյն բարեմասնութենէ:

ՆՈՑՆ:

ՎԻՇԱՊ ԵՒ ԱՂՈՒԿՈՑ

Մի ի վիշապաց պահէր գանձ ի խոր քարայրի ուրեք, հսկելով առ նովաւ զոհս և զդիշեր: Աղուէսք երկու, խորամանկք յոյժ և անուանի աւազակք ըստ իւրեանցն արուեստի, շղոմիւք ընդ միմ մտեալ նորա, եղեն սերտ մտերիմք: Մարդահաճոյքն և փութկոտք էին միշտ վատահելիք: Պաղաքաւարէին ընդ նմա որպէս ընդ առն մեծի, զարմացեալք ընդ ամենայն մտացածին ցնորսն, և միշտ հաւանք ի կարծիս նորա, այլ առանձինն ծաղր առնէին զայրն խաբեալ: Յետոյ ուրեմն յաւուր միում ի քուն լինել նորա ի միջի նոցա, խողխողեցին զնա, և սիրեցին գանձուն: Հարկ եղև բաժանել զայն ընդ միմեանս. գործ դժուարահնձիւն, զի անօրէնք չմիաբանին ընդ միմեանս բայց ի գործ չարութեան: Մին ի նոցանէ սկսաւ բարբոյախօսել, և ասէ. — Ցինչ պիտանացու լիցի մեզ արծաթս այս. լաւագոյն էր քան զայս՝ սակաւ ինչ որս. երբեք ոչ ուտի մեռաղ, և անմարս է ոսկի. յիմար են մարդիկ զի սիրեն զայդքան մնռահ Ճոխութիւնս. մի և մեք հանգոյն նոցին լիցուք անմիտք: Միւսն պատճառեցաւ համոզեալ Թէ՝ ի բանից նորա. ապահովս արար զնա, զի կամէր զմասամասերն վարել կենցաղ, որպէս զԹիաս, ընդ իւր տանելով զամենայն ստացուածս իւր: Իւրաքանչիւր ոք կեղծաւորէր լքանել անդ զդանձն, և իւրաքանչիւր գարանեալ ընկերին՝ պատառեցին զմիմեանս: Մին ի նոցանէ ի մեռանելն ասէ ցընկերն, որ էր նոյնպէս վիրաւորեալ. — Ցինչ կամէիր առնել զարծաթն: — Ցոր ինչ դու կամէիր առնել, ասաց միւսն: Այր մի անցեալ առ նոքօք դիտաց զպատահար նոցին, և յիմարս զերկոսին համարեցաւ:

Ոչ ինչ նուազ ես քան զմեզ, ասէ ագռաւն. և դուք իրրև զմեզ ոչ դիտէք վարել արծաթով, և սպանանէք զմիմեանս առ ստանալոյ զայն: Գէթ ազգ մեր իմաստնագոյն գտաւ ցարդ, ոչ ի գործ արկեալ զդրամ. զոր ընկալեալ է ձեր առ դիւրութիւն՝ ի վնաս ձեր է այն, զի կորուսանէք զառօդ բարին ձեր ի խնդիր մատացածին բարեաց:

ՆՈՑՆ:

ԱՌԱՍՊԵԼ ԵՒ ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Յերիտասարդութեացն ումն ի դիպ այգուն այգուն բանակ զդրունս արևելից, ծաւալէ չաղ զովարար ընդ օդս, ծաղկունս ընդ դաշտս և յակինթ ընդ շաւիղս արեգական: Զարթնու երկիր ընդ առնուլ զազգ աւետեացն, և պատրաստի ընդունել զաստուածն՝ որ օր ըստ օրէ նորոգէ զնորայն կենդանութիւն: Իսկ աստուածն կենդանարար ծագէ, և երևի ի շուք վայելչական Թագաւորին երկնից.

Ճախրեն կառք նորա լծեալք ՚ի ժամուց, և խաղայ ընդ անհուն ասպարէզս երկնից՝ համասիրեւս լուսոյն և ջահիւք ճառագայթեալ: Ի հասանել նորա յարքունիս տիկնոջն Ծովուց, գիշերն՝ անանձրեւս նորին հետևորդ՝ պարզէ զքօղ իւր տիրերանդ, և ցանէ ընդ խորանարդ երկնից բոյկունս անթիւս: Յառնեն ապա միւս այլ կառք, աղօտաջահ և զուարթալոյս պայծառաւորեամբն՝ անուրջս ՚ի սիրտս զգայունս արկանել: և վարիչ նորին մի յաստուածուհեաց բազմեալ, հառաւարէ ՚ի լուսնեան, զըղձալի հարին պահանջելով զՆդիմիանի հովանին: Աչերն երկինս բանդ, համարձակ ոլորացեալ ՚ի ծագաց երկրի ընդ երկինս, հեռք են իրեայ լուսաշուքս պատգամաւորին Հերայ: Հողմք մեղմիկք և աշարկու մրրիկք՝ այսք են օգայինք, որք մերթ խաղան ընդ օգս և մերթ կառուեալ ընդ իրեարս՝ յարուցանեն զալիս ՚ի ծով:

Ի սաստոոս բլոյն քարայրն հովատուն և խաղաղաւէտ՝ օթևան է բարերար յաւերժգարսին, որ յանդաստանս սաիորոյն անսպառելի կայլակեալ վտակ՝ արգասաւորէ զառընթերական դաշտն: Անտի ընդունի նա զուարս զքնեալ օրիորդին, որ զգեղ իւր ՚ի փախստական ալեան նկատէ: Եթէ ՚ի նահմասաուեր մայրիս անդր մանիկս, ոչ լուսնեան անգ և ոչ միայնուհիւն զարհուրեցուցանէ զսիրտ քո, այլ շահապետք անտառաց և դաշտաց քնակեն անգ, և արհաւիրք դիւական զօրուհեան նոցա աղդեն ՚ի քեզ:

ՊԱՐԹԵՆԸՄԻ. Ղևոնդ. Ալիքարանեան:

ՈԳԻՔ

Իբրև ժամ եղև ջուայ, զգացի խղճիս կապանացն՝ որ զՀոգի ընդ մարմին զոդեն յիս. և զսոյ յաշխարհ նոր, ՚ի մէջ կենդանեաց էից, յորս էին բարիք և չարք, զուարճութիք և խոժոռադէմք, խոհականք և ապուշք: Չհետ եղաք նոցա առ վայր մի, և Թուէր ինձ՝ յանձանձէ նոցա զգուշանալ պետութեանց և զիւրաքանչիւր ուրուք, և զինդիրս խմասանոց և զկարծիս ոմանցին:

Ապա կին մի հսկայածաւ տարածեաց զքօղ իւր սեաւ ընդ կամարաւ երկնից, և հեղեկ լինէաք՝ եա պատուէրս պաշտօնէից իւրոց, որ զՀետ գնային նմա: Ի տունս բազմեմ յարամբի ՚ի ներքս մտաք. քուն և արբանեակք նորա սիրէին անդ լիաբուռն զնկին. լուսնիւն և խաղալ լուսնիւն բազմին սիրալ աւրնեթեր առաքինւոյն, և խիղճ մտաց և խուճապք անգոհականք սաստկապէս զմահիճս անօրինին շարժեալ տատանէին: Պլատոն գրեր զնեթելադրութիւնս դիւին Հոմերոսի, և երազք զուարճալիք թեւապարեին զօրիորդաւն Լիկորեաս:

Եւ կարապետն իմ ասէ ցիս. Արշալոյն և ժամք բանին զասպարէզ աւուրն. ժամ է մեզ ամբառնալոյ յօդս: Ահա դուք խնամակալք Ամենայ և Կորնելիոսի և Սպարտայ սաւառնին զքաղաքօքն, և Ճախր սահալ շուրջանակի վաթրն ՚ի բաց զորս և կարէն ՚ի չարեաց՝ որ սպառնան նոցա. սակայն գաշտք նոցա դինն յատկանութիւն. զի դուք հարեալ դարանեալք յամոց խիտ՝ դիմեն սպառնալեօք ընդդէմ հիւսիսայնոց:

Յառնեն և ՚ի գաւառս յայսոսիկ պատերազմունք, որպէս ՚ի ձերսդ. և Տիտանացն և Տիւփոնայ Ճակատամարտք դիւագունդ բանակաց էին բազմութիք:

Հայեաց արդ ՚ի ժիր արբանեակսդ, որ Հանդոյն ծիծառանց սրաթռիչ և անդադար Թևածեալ զերկիրս՝ սպրդեսիեն խորաշէնն և հետազօտ ակամբ. սոքա են տեսուչք իրայ մարդկան: Կէաք ազդմունս հեզաբար ներդրծեն ՚ի մահկանացուս որոց խնամարկեն, և կէաք զանողոքելին Նեմեսիս ՚ի վերայ չարագործաց արձակեն: Տեսանես զՀրեշտակսդ և զմարդմանս, որ երևէիցս առնեն անդադար. դոքա են, որ զուարս ձեր և զնուէրս մատուցանեն գից, և ածեն ձեզ ՚ի նոցանէ երազս բարեգուշակս

կամ ջարդապետ, և զդալտնին Հանդերձելոցն՝ որ ապա
յայտնին 'ի ձեռն հրամանաց պատասխանւոյ:

Յայնժամ ձայն բարձեալ, ասեմ. Ո՛ոդի խնամակալ,
ահա հասանեն առ մեզ էակք ահարկուք յաղթահասականք
և գժկերպք: Եւ նա ասէ. Փախիցուք. դուքս են ոգիք
Թշուառականք՝ որոց գժամին է բարեբաստութիւն այլոց,
և չնայեն յոք՝ բայց միայն որք 'ի վիշտս կեան և յողբս:

Ետս տուեալ 'ի մոլեգնութենէ նոցա, և ահա պա-
տահեցաք այլոց՝ ոչ ինչ նուազ գժնդակաց: Ժանտ Ա-
րէս, աղբիւր անապատ հերձուածոց որ յուզեն զմար-
դիկ, ձեմեր սիդաքայլ 'ի վերայ գլխոց նոցա, և շնչէր 'ի
սիրտ նոցա թշնամանս և վրէժխնդրութիւն: Ահաբեկ և
ակնկոր զհետ նորա սողեալ գնային աղաչանք, ողբերով
գնա ուր հերձուածք յառնէին: Փառք փախստական գնա-
ցին հալածեալ 'ի նախանձուէ, որ անձամբ զանձին զկողս
կեղեքէր. և Ճշմարտութիւն հալածեալ 'ի կեղծաւորու-
թենէ. իբրաքանչիւր 'ի բաղմահոյլ յոռութեանց, որ որո-
գայթս կամ սուսերս բարձեալ բերէին:

Տեսի յանկարծ և զբախան, և 'ի գոհանալն խռով զնը-
մանէ վասն պարզևացն զոր բաշխէ մարդկան, ասէ ցիս
ասասիս. Զպարգևեմ ուսիք երբեք ինչ, այլ միոյ սահ
ծանր առկոսեօք: Եւ զայս ասելով, Թանայր աջոյին միրգս
և ծաղկունս 'ի բաժակ Թուռնալոյ՝ զոր 'ի ձախսումն ունէր:

Անցին ապա առ մեզ երիս 'ի դիցն հզօրք, Թողուլ
զհետ իւրեանց շաւիղ լուսաւոր. և առաջնորդն իմ ասէ
ցիս. Սոքա են Արէսն ամէնի և խոհականն Աթենաս. բա-
նակք երիս ձախակողմն առ միմեանս 'ի Ինովեիս. ասատուածք
ուզին ինձանէ կալ առնիթեր Եպամինոնդաս զօրավարին
Թեբացւոց, և ասատուածն փուռնայ յօգնութիւն սպար-
տացւոց՝ որոց պարտութիւն առաջի կայ. զի պարս է ի-
մաստութեան յաղթանակել 'ի վերայ քաջութեան:

Հայեաց յերկոսին դէպ որ յերկիր վայրաբերին, մին
բարի և միւսն չար. դուքս գնան իշխել մանկան միոյ նո-
բածնելոց, և ընկերել նմա մինչև ցդերեզման: Այժմ ընդ

հակառակս միմեանց հնարին զերազ 'ի նա զամենայն լաւու-
թիւնս կամ զամենայն յոռութիւնս սրտի և մտաց, և յըն-
թացս կենացն հնարեսցին ձգել զնա 'ի բարին կամ 'ի չար,
ըստ զօրանալ ազդեցութեան միոյ յերկաքանչիւրոցն քան
զմիւսոյն:

Յուսայի տեսանել անդ ընդ ազօտ զիշխանն տիեզերաց
պար առեալ 'ի դարանակալաց աճուռոյ իւրոյ 'ի դերամա-
քուր էիցն՝ զորս խմաստասէրքն մեր կոչեն երևոյթս, նա-
խատիպս յաւիտենականս, ոգիս անմահս: Այլ ասէ ցիս
ոգին. Ինակէ նա 'ի վայրս անմատոյցս մահկանացուաց. մա-
տո նմա երկրպագութիւն և խնդուք յերկիր:

ՊԱՐԹԵԼԸՄԻ. Ղևոնդ. Ալեքսանդրեայ:

ԱՄՓԻՏՐԻՏ ԵՒ ՈՒՂԵԿԻՑՔ ԻԻՐ

Մինչդեռ զայսոսիկ ընդ միմեանս խօսէին, և ահա
դլխիւք Թեփամորքք, ոսկեձամձանէք և կապոյտք խաղային
ընդ ծով ամբառնալով փրփրադէզ զալիս: Չհետ նոցա
դային Տրիտոնք, զկեցին գալարափողս հնչեցուցանելով,
շուրջ պար առեալ զԱմֆիտրիտեայ կառաքն՝ զոր ձգէին
ծովաձիք ձիւնափայլք հրացայտ աչօք և ծիսաշունչ ռըն-
գամբք, և որ հերձեալ զալաւաղուկ ալիս՝ ակօս զհետ իւր
Թողուր լայնատարս 'ի ծովուն, կոնք զհետ իւր հրաշալան
ծովածին՝ սպիտակափայլ քան զվիղոսիկ, յեզ յանիւս ոս-
կիս՝ որք ընդ խաղաղ միանային ջուրց Թեթեւ սլանային:
Գնային զհետ կառացն 'ի լոյզ ցաւերժհարսունք ծաղկա-
պսակք դունդգունդ, և վարսք նոցա զուսանքն 'ի շունչ
հողմոց դեղածփեալ: Իսկ դիցուհւոյն գաւազան ոսկի յա-
ջումն 'ի սասա կոհակաց, և 'ի ձախմէ զծնդզք նորա 'ի ծուծ
սահանայն կախեալ որդեակն իւր, մանկիկ սատուածն Պա-
լեմոն: Դէմք նորա զուարթատեսիլ, և մեծավայելուչ

քաղցրութիւն ցածուցանէին զամպրոպս հոգմայոյզս և զսաւառ մրրիկ: Տրիտոնք զոսկեսանձ երիվարան երասանա-
էին. լսէնալիր 'ի վերոյ կառացն ծածանէր Թռիչս ծիրա-
նեփայլ առագաստ, գոգ առեալ 'ի քաղցրասիք շնչմանց
զեփիւռից՝ որ Թեւապարէին զնովաւ: Անդ Եւրոս ժիրա-
ժիր գայր երևեր ընդ օդս եռանդուն և անհանդարտ, դէմք
նորա սխուր և խորշոմ, բարբառ սպառնալից, յօնք Թաւք
'ի վայր անկեալք, և աչք նորա հրացայտք աղօտաճաճանչք
և խոժոռք, կարկեհին զհիւսախական ամէհիս և ընկրկեհին
զամպրոպս: Անդ և կէտք անհեթեթք և նհանգք առ հա-
սարակ անդնդայինք ծծեալ և զգայեալ ընդ ոնգունս իւ-
րեանց զաղտաղտուկ ալիս, խուժեին ձեպ 'ի ձեպ 'ի խորոց
վհից 'ի զնին դիցուհւոյն:

ՖԵՆԵԼՈՆ· Տիւևևաք:

ՄԱՀ ՆԻ ԸՆԿԵՐՔ ԻՒՐ ԱՒՐ ԳԱՀՈՑԻՒՔ ՊԼՈՒՏՈՆԻ

Այս պատուանդանաւ գահոյիցն գարանէր Մահ տըժ-
գոյն և անյագ, գերանդի սայրատուր 'ի ձեռին՝ զոր յաւէ-
լուր սրել անդադար: Թռիչս զնովաւ առնուին հոգ սեւա-
գեմ, կասկած անողորմ, վրէժխնդրութիւն արիւնաթա-
Թաւ և վիրաւից, հեռ անիրաւ, ագահութիւն անձամբ ան-
ձին կեղեքիչ, յուսահատութիւն անձնասպան, փառամո-
լութիւն արիւնահաձ՝ ապիկար 'ի վայելել յարգասիս չա-
րեացն գործեցելոց, նախանձ յինքն խակ Թունաթափ, և
առ 'ի չկարելոյ ինասել այլոց՝ մոլեալ 'ի զայրոյթ, ամ-
պարշտութիւն՝ որ անձամբ անձին անյաւատի պեղեալ խոր-
խորատ կորնչի անդ անյոյս, ցնորք անժպիտք, սիպք մե-
ռելոց՝ պակուցիչք կենդանեաց, երազք զահադեղիք, և
տըրտութիւն ոչ ինչ ընդհատ քան զխորագին անուրջս
անհամբոյր: Այսոքիկ առ հասարակ պատկերք դժնեա-

տեսիլք պար առեալ զվէան Պլուտոնիս, ընտրեն զարքունիս
նորա:

ՖԵՆԵԼՈՆ· Տիւևևաք:

ԱՑԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՔԱՐԱՅՐԻ

Կամիցիս գիտել Թէ քանի խոիր ընդ պայծառութիւն
և ընդ զեղչութիւս այսորիկ և ընդ խմանալի լուսոյն կայ-
ցէ: Համարեսջիր եթէ 'ի վիհ խոր ամբոխ մարդկան 'ի
շղթայս ծանուսն կաշկանդեալ կայցեն անշարժք ամենեքին՝
զհանդիպակացան ևեթ տեսանելով, և յետ կուսէ նոցա
հեռագոյն ուրեք 'ի բարձունս հրատ բորբոքեալ կայցէ, որոյ
նշոյլք 'ի վիհ անդր ծաւալեցին. և ընդ հրատն և ընդ վիհ
որմ 'ի միջի կացցէ՝ առ որով մարդիկ երթևեկիցեն, կէսք
լռելեայն և այլք զրուցաւորելով ընդ միմեանս, և 'ի ձեռս
իւրեանց կերպարանս մարդկան և անասնոց և աղգի աղգի
կահս բարձեալ բերիցեն՝ որոց ստուերք 'ի կողմն վհին
հանդէպ կապելոցն նկարիցին: Եւ 'ի տեսիլ պատկերացն
շարժականաց պատրեալ նոցա, կարծիցեն զստուերսն
կահս գոյատոր, և նոցին խակ ղշարժմունսն և զկենդա-
նութիւն և զխօսսն համարեսցին: Կաղցուք արդ զմի 'ի կա-
պելոց ասի, և առ 'ի փարատեալ զպատրանս նորա՝ խզես-
ցուք զկապանսն, և յարուցեալ զնա հայեսցուք չետս: Ի
տեսիլ նորոց իրացն ապիշեալ, յերկուասցի նա ընդ ձշմար-
տութիւն նոցա. և ղացեալ յակնախոիսղ նշուլից հրոյն,
դարձուսցէ զաչս 'ի բաց յանգոյ երևոյթեան՝ յորս յառա-
ջագոյն սլշուցեալ կայր: Անդրէն միւսանգամ մատուսցուք
զնա 'ի փորձ. բանի 'ի վեր ձգեսցուք զնա 'ի վիհն, Թէպէտ
և ձչնչէ, Թէպէտ ընդդէմ կքրիցի և տաժանաքայլ յա-
ռաջ մատիցէ: Հասեալ 'ի վերայ երկրի՝ ընդձեսցի անդէն
'ի պայծառութենէ տուընչեան, և յաճախ զփորձ ա-
ռեալ՝ հաղիւ ապա նշմարել կարասցէ զստուերս և զմար-

միոնս և զաստեղս դիշերոյ, հայել յարեգական և խելամուտ լինել զնա փոփոխել զկեղծանակս և արդասաւորել զղգալիքս ամենայն:

Որպիսի՛ ինչ արդեօք Թուեսցին նմա այնուհետեւ գովութիւնքն՝ ի խորափոր անձաւին ընծայեալք, որոց նախ տեսանիցեն և նկատիցեն զստուերսն անցաւորս. զինչ խորհիցի զնապարծութեանցն և զաստեղութեանցն և զնախանձայուզութեանց, զորս զնուութիւնք ստուերաց դրդեն՝ ի խաւարարդել ամբոխ եղկելեացն: Գուէթ գորովոյ սակս պեսցէ զնա գիմել յօգնութիւն նոցա, և նշաւակել զնոսին իմաստութիւնն և զծաղրելն գիտութիւն. այլ քանզի՝ ի միջօրեայ պայծառութենէն՝ ի խոր խաւարն խոհոյն անցանելով ոչ ինչ՝ ի սկզբան անդ տեսանել կարէ, յարիցեն նոքա ընդդէմ նորա, և կշտամբեսցեն զնաբրախտութիւն նորա, և համարեսցի նա առ նոսա օրինակ ահաւոր՝ ի ցոյց վտանգին՝ որ պահի՝ ի վերնապատառ անդր երթելոյն:

Ահաւասիկ մերոյս գծնդակ պայմանի Ճգրիտ պատկեր. անկեալ դնի ազգ մարդկան՝ ի լայնատարած վէմ շղթայակապ, պատաղեալ՝ ի ստուերս ունայնս և պատրողականս: Ասա բերկրութիւնք դառնութիւնս ձգեն զնետ. ընչից խաբուսիկ է ճաճանչ, առաքինութեանց խարխուլ են հիմունք, և նիւթականացս իսկ պատրիչ է գոյութիւն: Պարտ է մեզ ելանել՝ ի խաւարէ ասոյ, խորտակել զշղթայս, ամբառնալ անխոնջ Ճգամբք՝ ի վերաշխարհն լուսոյն, մտանել տակաւ՝ ի գերաբուն խնացութիւնն, և նկատել զաստուածային էութիւն նորա անխառն՝ ի զգայութեանց և՝ ի կրից: Յայնժամ լինցի մեզ տեսանել՝ զի յաստուած նորա լինանեն՝ ի բարոյական աշխարհն արդարութիւն և գիտութիւն և Ճշմարտութիւն, և՝ ի բնականն՝ լոյս արեգական և արդասիք երկրի և գոյութիւն ամենայն ելից: Մխոք որ՝ ի բարձրութիւնս յայս գամ մի ժամանեալ, զիտոյ առնուցու զյուզմանցն և զնանդից և զմայլմանց՝ զորս տեսիլ գերաբուն բարւոյն ներգործէ՝ ի նմա, ոչ ևս խոնարհեսցի յանձն առնուլ շղթունս մեր և զպատիւս, և

գամ թէ խոնարհեսցի և առ մեզ, հարկ լինի նմա միտչէն սովորեալ՝ ի խաւար մեր՝ պատմել զարգարութիւն որոց զստուերս ևեթ նորա ճանաչեն. և նորալոյս բանք նորա այնպէս անհեթեթք թուեսցին և ինքնասիրք, մինչև ծաղր առնել ամենեցուն իբրև զլիմար ոք, կամ որպէս զյանդուդն պատուհասել:

Սակայն այսպիսիս պարտ է գոլ խմաստնոցն մերոց՝ որք՝ ի գլուխ հասարակապետութեանն կացցեն, և այսպիսիս պարտ է բանականին կրթել զնոսա մանաւանդ Ճամն հինգ պարապեալ նոցա յուսումն նորին, խոհասցեն յէութիւն Ճշմարտութեան և արդարութեան և պատշաճից: Մի զտարատամ և զանտաղտ զայժմուս որ առ մեզ ծանօթութիւնս շատ համարեսցին, այլ զբուն զսկիզբն նոցա հետազօտեսցեն. մի ընթերցմամբ պատուիրանաց մարդկան ուսցին զսպարտս իւրեանց, այլ՝ ի հրահանգաց՝ զոր անդստին յանախիզբն էն ընդունին. և իբր անընդմէջ ընդ նմա խօսակցութեամբ ընկալցին զանխախտ դիտութիւն հաստ լինելոյ Ճշմարտութեան, զարիւնութիւն անդրդուելի՝ ի կորովել զարգարութիւն, և զգեղեցիկ յամառութիւնն առնելոյ զբարի՝ որում ոչ ինչ կարէ յաղթել, և որ ամենայնի յաղթէ՝ ի սպառ:

Ահա մինչ նոքա բոլորովին ընդ գերաբուն բարւոյն միացեալ, և զՃշմարիտ կեանն կելով, զերեսելիքս ամենայն՝ ի մոռացօնս դարձուսցեն, հաստարակապետութիւնն որ իշխէ առաքինութեանց նոցա՝ կոչեսցէ զիէս՝ ի նոցանէ՝ ի գործ պատերազմի, զայլս՝ ի պատշաճս իւրաքանչիւր հաստկին: Դարձեալ վերստին փորձեսցէ զնոսա մինչև հասցեն՝ ի լիսուն ամ սիոյն, և ապա վերաձեալք ակամայ՝ ի բարձրագոյն աւագութիւն՝ ևս քան զիս մերձեսցին ըղձիւք յէն գերաբուն, և՝ ի նմանէ ուղղեսցին: Ահնուհետև իմաստասիրութեամբ ընդ երկինս կցորդեալ, և աւագութեամբն ընդ երկիր՝ լուսաւորեսցեն զքաղաքացիս իւրեանց, բարեբաստս զնոսա յարդարեսցեն. և յետ մահուն իւրեանց կեցցեն՝ ի յաջորդս հրահանգեալս բանիւք և գոր-

ծովք նոցա, և աշխարհն չնորհսպարտ՝ կանգնեսցէ նոցա չերիմս, և կարգասցէ զնոսա չհաւատեաս իւր:

Ապա ուրեմն խմաստասէրքն, զորս կացուսցուք իշխանս ՚ի վերայ հասարակապետութեանս մերոյ, մի իցեն որպէս զձամարտակողքն անգործս և իբրև զխմաստական արհամարհս յաչս ժողովրդեան՝ անկարողք առաջնորդել նմա: Այլ իցեն անձինք արիասիրտք, մեծախոհք, պարապեալք յօգուտ հետ աշխարհին, քաջահմուտք ամենայն մասանց առաջնորդութեան երկար վարժիւքն և վեհ և վսեմ տեսականաւն նորին դիտութեամբ, և առաքինութեամբքն իբրեանց և մակացութեամբք՝ պատկերք և թարգմանք դիցեն ՚ի վերայ երկրի: Եւ վասն զի հասարակապետութեանս մերոյ անձուկ լինցին սահմանք, կարասցեն սոքա ՚ի կշիռ ակն ունել զամենայն կողմանս նորա: Սաստ իշխանութեան նոցա մեծարեալ յամենեցունց, պատուսպարան իւր կալցի ՚ի կարևոր ժամանակի զգուշդ անպարտելի և խաղաղասէր զօրականին, որ ոչ այլ ինչ իւր պարծանս ընդրեսցէ՝ բայց միայն պահ ունել օրինաց և հայրենեաց: Ժողովուրդն կեցցէ երանաւէտ ՚ի միջասահման՝ այլ յանկապուտս բախտի. զօրականն զերծ յառանին հոգոց, և փառաւորեալ ՚ի մարդկանէ արութեամբքն իւրովք. և առաւգանին ՚ի բերկրանս բարեբարութեան, և ունելոյ այնմ վկայ զգերաբուն էն:

ՊԼԱՏՈՆ. Հասարակապ. Գիրք Է:

ԲԱՐՈՅԱԿԱՆՔ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆՔ

ԶԻ ԲԱՐՈՅԱԿԱՆԻՆ ԳԻՏՈՒԹԵՆԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ՝

Է ՄԻԱԿ ՈՒՍՈՒՄՆ ԱՐԹԱՆԱՒՈՐ ԻՄԱՍՏՆՈՑ

Բարոյականն գիտութիւն էակաւ մասն է խմաստասիրութեան, և միայն արժանի գնդեցիկ անուանն սիրելոյ զխմաստութիւն. զի խմաստուն ոչ այն է՝ որ ինդրէ խելամուտ լինել գաղտնեաց բնութեան, յարգասէց անտի ՚ի պատճառան վերամբառնալ, և մտաց իւրոց ներքոյ արկանել զընթացս համագոյից: Բարեբաւն Սոկրատ խոստովաներ չգիտել յայսպիսեաց ասի և ոչ ինչ. սակայն հարցուն զնա յայս արար խմաստուն, զի ամենևին նա զուսումն իւր յայն՝ զոր հարցուն պատուիրեր մարդոյ ՚ի վերքան զամենայն. Ծանիր զանձն:

Յայս ուսումն անձին, յայս ճանաչումն մարդոյ, որ անուանն լեալ էր մինչև յՍոկրատ, և յետոյ բազում ջանիւ ածաւ ՚ի զարգացումն, բովանդակի բարոյական գիտութիւն: Բայց գիտութիւնս այս, որպէս յոգունք ևս այլք, եղև անտի և անարգասաւոր՝ ցորչափ յունական տեսութիւնս պարապեր. զի մարթ է գիտութեան լինիք գոլ ցանկալի, այլ ոչ և օգտակար, և չիք եսկ նորա իսկապէս օգտակարութիւն, եթէ ՚ի տեսութենէ նորա ոչ յառաջ գայցեն հնարք և կանոնք արուեստի ՚ի գործ անդր ՚ի նմանէ ուղերձեալք.

ղի 'ի կատարման է յարդ նորա: Ըստ այսմ՝ օրինակի աստեղաբաշխութիւն գոյն օգտակար երկրագործութեան, երկրաչափութիւն՝ մեքենականին դիտութեան, տարրաբանութիւն՝ բժշկութեան և ձուլադործութեան, այլոցն հանդերձ:

Ապա ուրեմն բարոյականն չէ դիտութիւն օգտակար, եթէ չիցէ ածեալ յարուեստս: Արուեստս այս, որ է բարեաւքն կենցաղավարել ընդ անձին և ընդ նմանիս իւր, և գոլ լաւ առ 'ի լինել երջանիկ, արուեստս այս ամիսոփեալ յօգուտ ևեթ կենաց, կացուցանէ զբարոյականին դիտութիւն խնամատարական: Եպիկուրեանք ոչ դիտէին այլ ինչ խնամատարութիւն. նիւթապաշտք արդիք 'ի նոյն ուշ նպատակի սահմանեն զայն: Այլ այս խնամատարութիւն ոչ միայն անձուկ և մնոտի յառարկայն իւր գոյանի, այլ և ատրատ և յեղյեղուկ յօրէնս իւր. զի եթէ պարտք գոլոյ բարի հաստատեալ կոչն յիշեմ երջանկութեան կարճատև կենացս, կանուխ այս գոյանի փոփոխելի և յեղյեղուկ ըստ ախորժակաց, ըստ յօժարութեանց, ըստ կրից, ըստ բնաւորութեանց և ըստ ցնորից մոռաց, որ այլայլեն և ատատնեն զերջանկութեան առարկայ: Որ ոք ոչ պարտ անձին համարի գոլ բարի՝ բայց առ 'ի լինել երջանիկ 'ի կենցաղումս ըստ ախորժակաց իւրոց և ըստ հաճոյից, փոփոխ ջնարս՝ անվթիթ ևս վարկուցեալ ընդ այլ ճանապարհ 'ի նպատակն իւր ժամանել, և լինի մոլի և չար ըստ օրինի 'ի կարծել իւրում պատշաճագոյն յերջանկութիւն իւր զմոլութիւն կամ զղեղն: Եւ ինասակար այսպէս գոյանի խնամատարականն դիտութիւն բարոյականին:

Իսկ կրօնականն դիտութիւն բարոյականին առանց հաւատոյ չէ վերոյ է և ընդարձակ և հաստատուն, և սահմանի Դիտութիւն բարւոյ կենցաղավարութեան վասն յաւիտենից կենաց: Արդ վասն յաւիտենից կենաց բարւոյ կենցաղավարութիւն՝ է բարւոյ կեալ և վասն անձին. և է իսկ այս ըստ առաւելազանցութեան ա-

բարութիւն ըստ պատշաճից, և ոչ ըստ ցնորից մոռաց երջանկութիւն: Ատանօր կամք աստուածային լինի 'ի միայն կանոն մարդկային կամաց, և օգուտք կենցաղոյս գուշակեալք անտես լինին առաջի անայլայլակ օգոյն հանդերձեալն մեծի:

Ըստ այսմ օրինակի բարոյականին կրօնական դիտութեան՝ գոյանի հաստատուն սկիզբն և վախճան և միջոցամենայն ինչ անդեղլի. նպատակ նորա երևելի, և ճանապարհ յերկիւրեալ. մնայ ևեթ մարդոյ քաջ գիտել՝ որովք պայմանօք խոստացեալ է նմա երջանկութիւն, և որմէ բարութեան սահմանեալ է այն 'ի մրցանակ:

Գիտեմ ընծայել բարոյականին միւս այլ վսեմագոյն առարկայ, կենցաղավարել մարդոյ ըստ աստուածային կամաց առ 'ի հաճոյ ևեթ լինել նմա հնազանդութեամբ, և զկեանս իւր և զամենայն աստուածատարգև տուրս նուիրել սրբչին նուէր մշանջենաւոր գոհութեան և սիրոյ: Ապաքէն չիք ինչ գովելի քան զայս. և սոյնիկեանցն իսկ բարոյականին գիտութիւն ընծայեր անձին զայս ներքանձնական բարոյականի անտպակ գիտատորութիւն, ոչ ներբերելով առաքինութեան 'ի սիրտ մարդոյ այլ ինչ խնդիր օգտի՝ բաց յառաքինութենէ: Այլ քանզի վտանգ է ցնդելոյ ամենայնի 'ի յոյժն անդայատանալ, առաւելազանց թուի ինձ բոլորովին անտեսութիւն օգտի 'ի սովորականս բարոյականի: Զի Աստուած 'ի տալ մարդոյ զիոյթ փրկութեան անձին, կամի զի փրկութիւն նորա գրգեսցէ զնա. և զի ետ նմա զայս և համարի նմա զայն յառաքինութիւն, ապա կամի զի յոյս զնա քաջալերեսցէ, և խոստմունք իւր ամրացեսցեն, եթէ կոչ ինչ ծանր և խիստ յօրէնս իւր: Զինք երկեսցել, ասէ Փառքաշ, զի հոգի կամ մահկանացու է և կամ անմահ. և ասի յառաջ գոյ խորը ծայրալիր 'ի բարոյականին. սակայն խնամատարքը առանց նկատելոյ զայս՝ յարմարեցին զբարոյական. զորպիսի կուբութիւն: Ապա ուրեմն և Փառքաշ վարկանի ինչ խնդիր օգտի 'ի բարոյականին, զոր յեղափոխ 'ի մարդում յաւիտենականն

գոյութիւն կամ դարձ՛ի չգոյութիւն: Հաւանիմ ընդ այս, և սահմանեմ զբարոյականն Գիտութիւն կենաց ըստ յաւիտենականութեան:

Ապա ուրեմն գիտութիւնս այս՛ի գործ արկեալ, է աւրուեստ ապահովելոյ զանապակ և զծայրալիր երջանկութիւն պատրաստեալ մարդոյ յանսկ կեանս, առանց՛ի բաց գնելոյ և զիոյթ հայթայթելոյ անձին և յատուկ կեանս զնշոյլս այնր երջանկութեան, որք՛ի հարւանցի ուշադրոյս են որպես աղօտ փայլատակունք՛ի ծոց ամպոց:

ՄԱՐՄՈՆԹԵԼ. Բառոյական:

ԱՍՏՈՒԱԾ ԱՂԲԻՒՐ ԼՈՒՍՈՑ ԵՒ ՋՕՐՈՒԹԵԱՆ

Գիշերախառն յարուցեալ որպէս զԻաւիթ գիտել զերկինս, զինչ էր զոր տեսի, ոմն Տէր. և քանի պանչէ լաֆրաշ պատկեր էր այն անհուն լուսոյդ: Գալով գայր աբեգակն և երկնաձիր պայծառութիւն ծաւալեալ շուրջանակի կարապետ լինէր գալստեան նորա. վերացան աստեղք, բայց կանգուն կայր դէմ լուսնի՛ի մահիկս արծաթի գեղանի և լուսաբորբոք, կղկաթ կաթողի զաչս յինքն յափշտակեալ. ուրանօր գոգցես մեծարանս իւն կամեցեալ առնել երկոյն արեւու՝ կայր զերեսս իւր՛ի նա հատատեալ ջինջ և պայծառափայլ. և հիւսաքոլորն այն փոքրիկ պարոնակ՛ի կողմն այն և եթ հիւսքանչ և ճաճանչաւէտ փայլէր՛ի ճառագայթարձակ նշուլեցն արփենւոյն՝ իբրև՛ի հօրէն լուսոյ, այլոլիւ ամենայնիւ մեալ գոլով և խաւար:

Ըստ առաւելահրաշ լուսոյ պայծառութեանն փառաւոր առնէ նա զպարգեւատուն առատահոս. նա աւանիկ այլ իմն ազդ այսպես շուք գնէր երկնաւոր լուսատուին. զի ըստ մտեալ արեգականն գողանայր զինքն յաչաց, և մա-

հիկ եղջերն տակաւ նուազեալ կարճատեր. մինչ զի ընդ լուսալիր ծագել արփենւոյն՝ ըստ ամն անկեալ թարշամ և շինանուտ լուսոյն՝ իբրև խորատուզեալ իմն կորնչել ընդ մեծաջահ աստեղն նշուլիւք:

Ասէ զի ոչ միայն նա թափուր՛ի լուսոյ մատագոյնս մերձեցելոյ արեգականն լուսատուի, այն յայտ իսկ էր, զի աստղ դուզնաքեայ՝ տեղի տայր վեհագունին, և նշոյլ աղօտաջահ՝ խառնէր՛ի լոյս մեծապայծառ, և մահիկ լուսնին որ գեղայօրէն նաև փայլէրն՛ի մէջ աստեղաց, անհետանայր՛ի յերկինից:

Աստուած իմ, լոյսդ յաւիտենական, ո՞ւր այս առակ օրինակի լոյծ հանգուցատիպ այնմ որ՛ի հոգիս իմ՝ ներգործէ առ՛ի քէն լուսաւորելոյ. անգուստ ուրանօր ակնարկեալ սպիտակափառ փայլէ, իսկ ուր ուրեք ոչ թափ անցանէն ճառագայթք քոյին՝ սիրէ անդ մեալ. այլ թէ երբեք բովանդակ զլոյսդ ամփոփեացես, անհնարին անդ՛ի վերայ հասանել խաւար և գայթակղութիւն...: Լոյսդ անճառելի, որում համայն վերընծայել պարտիմք միայնոյ պարգեւատուիդ՝ որ ես արդարև հայր լուսոյ, ոչ լոկ զլոյս մեր և զշնորհս, այլ և առնել խոկ. զի լոյս մեր՝ որպէս ինչ է էն, ընկղմի՛ի լոյս քոյ, և բարձցի և կորիցէ յանդիման աչաց քոց:

ՓՈՍԻԻՆ:



ԽԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՑ Ի ԲՆՈՒԹԵՆԷ

Ասէ շատ լոյծ, տեարք, խօսեցեալս ցայս վայր՛ի միտս ձեր, թոյլ տուք ինձ առ վայր մի և ընդ սիրտս ձեր բառնալ. բաղումք՛ի ձէնջ նորատուն կնք նորարբունք էք, և հոգիք ձեր մատաղաբոյս, ոչ ծաղկընկէց թարշամեալ՛ի խորտմեալ անատուածութեանն Թունից. ոչ գօսացեալ

յօգտածարաւ շահուցն ակնկալութենէ, և ոչ խոտա-
ցեալ յընդերկար հաճոյիցն ցանկութեանց. և յայն հա-
ւատ գեղեցիկ հաստեալ ձեր՝ յորում խանդք սրաթռիչք և
սիրտ գիւրազգած և արդարասէր, պատրաստական զձեզ
գործեն և գիւրամատոյց վէհանձն խորհրդոյ և անսուտ
Աշմարտութեան. արդ չիցէ՞ բնաւ դիպեալ ձեզ զի առ վայր
մի՛ ի բաց եդեալ զդիրս և զբանադատութիւն, յառիցէք
հիացեալ ընդ մեծագործիչ տեսիլ բնութեան. կարիցէք
երբեք զլոյզս սրտիցդ առնձահարել և ոչ յափշտակեալ
իբր՛ ի հիացման՝ ՛ի խորոց սրտից ձերոյ հառաչիցէք զՀա-
ռաչս Աշմարտութեան: Որպէս զի մեծ են գործք քո, Տէր.
և Աշմարտիւ իսկ՝ եթէ զՀաշակին առնուլ կամիցիմք սիրա-
յորդոր յուզմանցս որ յատուածածութենէն անդր զմեզ վե-
րաբերեն: Թողցուք զքաղաքս և զապարանս մեր, Թողցուք
զգրաւորական Ճոխութիւնս մեր, և զՀարատարագործ վաս-
տակս. զի զգնութիւն ոչ՛ ի գործարան խամանդոյն խնդրե-
լի է, ոչ՛ ի Թանգարանս հետախուզին, և ոչ յայնս որ
զմարդկան զօրութիւն և զՀարատարութիւն յանդիման առ-
նիցեն. և ոչ գարձեալ ածից զձեզ՛ ի շրջափակս պատուա-
բացն, ուր գաղանք Աֆրիկոյ և Ասիոյ և անտառաբնակք
մայրեաց մերոց՝ ՛ի գառագեղն շրջայատակ պահպանին,
զվայրագ ազատութենէն մեռուցեալք. զի արծուին բանտ-
արգել յինքն արգոյրս զաչս իմ ձգեսցէ, բայց ոչ ինչ աղ-
գեսցէ յիս՛ ի հիւսքանչ յուզմանց կրից՝ որպէս՛ ի տեսա-
նել իմ զԹագաւորն օդոյ այերաց բարձրաթռիչ և հոլանի
խոյացեալ՛ ի վերնագաւառս անդ որտընդոստ չանհիյ
կայծականց. և ոչ գարձեալ ասացից ձեզ զլինուորել զաչս
ձեր՛ ի գործին հրաշագէտ՝ և՛ ի հաստատութենէն երկնից
ասպատակել. զի ոչ միայն պարտասեցուցիչ է ական-
ողեաց, այլ և զի ծանր է ինձ զմի միայն կէտ զերկնից նկա-
տել. քանզի ընդարձակատարը երկնից կամարացն փափա-
քեմ, ուր անեզը ազատութիւն՝ զմտացս զօրութիւն և ըղ-
ձրխա զաղգմունս անպարագիծ ծաւալեսցէ: Եւ ո՛ւր ուրիք
գտանիցէ, տեսիլք, բնութիւնն այն՝ որ ազդոզագոյնս՛ ի հո-

գիս մեր խօսի քան զամենայն մարդկային Ճարտարիմաստու-
թիւն, եթէ ոչ՛ ի մայրիս հովանաւորս և վսեմականս, ուր
միայնութիւն և լռութիւն և սառուիրք լայնատարածք
վհորհրդականն ազդեն՛ ի հոգիս զներանձնութիւն և զեր-
կիւղ սրբանուէր. յեղեղս անդ ծովու ետ ընդ ետ զայրա-
ցեալ և անդորրացեալ, որոյ ալիք զոգեաս խաղալիկք ամենա-
զօր ձեռինն Աստուծոյ՝ զորս ըստ կամս խռովեցուցանէ և
ցածուցանէ. ՛ի կատարս անդ լերանց բարձանց ուր անապա-
տագիծ է աչաց տեսութիւն, և ընդ եղերս անեզրս բերեալ
աշխարհիս, անդանօր մարդ Թագաւոր տիեզերաց՝ զգափ
առնու իւրոյ պետութենէն, և հիացեալ ինն ընդ տեսիլ
ընդարձակատարը սահմանաց՝ ձորոց և հովտաց, լերանց
և դաշտաց, անդաստանաց և մարդաց՝ որ ընդ ոտիւք նորա
ծաւալին, սլանան միտք նորա Հարթչափետ անդր սքան-
չելեացս: Պարձեալ միւսանգամ զնոյն հարցուած՛ ի մէջ
առից. ո՞ւր արդեօք զՀրաշալիս բնութենէն նկատիցեմք՝
եթէ ոչ յերկինս անդ վերինս. յորժամ գիշեր խաղաղ և
պայծառ զնովաւ անկանիցի, և անչշունչ լռութիւն զերկիր
և զայերս ունիցի, և լուսին՝ քաղաքիկ լուսոյին՝ գոգեաս ցօ-
ղեսցէ աշխարհիս զանդորրութիւն և զաւուդութիւն. և իցէ՞
Թէ ոք ընդ միտ ածիցէ՛ ի ժամուն եթէ ոչ գոյ Աստուած.
Նա մանաւանդ հեշտ և քաղցր ազդեցութիւնք զՀոգիսդ
ընուցուն, և արտասուք աքանչանաց և գորովանաց յա-
չացդ ծորեսցին, և՛ ի ծունր իջեալ գոչեսջիր. Որպէս զի
հրաշագէղ են գործք քո, Արարիչ տիեզերաց. Աստուած
սրտի իմոյ, որպէս զի քաղցր են ինձ հաւատք քո, և զնդրդ
հնար իցէ ինձ անծանօթ լինել՛ ի քէն, մինչ ամենայն ու-
րեք փառք և մեծվայելչութիւն զքեզ քարոզեն. Աստուած,
որ ես Աստուած բարութենէդ, զմեզս մանկութեան իմոյ
մի յիշեր, և ընկալ զդրդիդ մոլորեալ որ՛ ի դիրկսդ հայ-
րենի ապաստան անկանիլ. մեծ է զօրութիւն քոյ յընթացս
աստեղաց, այլ մեծագոյն ևս ցուցցիս յուղղել զշաւիղ
սրտի իմոյ, և՛ ի հնազանդել զնա միշտ օրինաց քոյոյ ամե-
նաղօր և երկրպագելի տէրութենդդ:

ՓՐԻՁՍԻՒՈՒՄ. Պաշտ. Քրիստ. Հաւատոյ:

ԹԷ ՓՈՓՈԽԱԿԱՆ Է ԱՄԵՆԱՅՆ ԲԱՑ ՅԱՍՏԱՒԾՈՑ

Յուշ ածէք միանգամ ղյաղԹանակս, զոհերապետու-
Թիւնս տեղեաց տեղեաց, զչքեղ դաշնադրուԹիւնս, զՀո-
խուԹիւնս և զդէպս փառաւորս՝ որք կուռ զմիմեամբք
եւևել առնէին յամս անդ առաջինս ԹագաւորուԹեանս
այսորիկ: Դեռ ևս մծտ առ ձեզ են իրդ. և ոչ միայն հան-
դիսատեաք, այլ և բազմաց իսկ՝ ի ձէնջ անցեալ է անվհեր
ընդ վիշտս վտանգաց, և հաղորդակից լեալ հասարակաց
ցաւոց և փառաց: Ա՜յո, դրոշմեացին նոքա յարձանագիրս
Գաղղիոյ մինչև ցյեսուն Թուռնս մեր. այլ սակայն և այս
ամենայն իբրև զերազ ինն է վաղանցիկ, և կամ որպէս
զվայրկեան՝ որ էանց, որոյ և յիշատակ օր քան զօր անկանի
՝ի մտաց ձերոց: Ո՞չ ապաքէն սուղ է Ճանապարհն զոր
ինայ ձեզ կատարել. կարծիցեմք արդեօք եԹէ ապա-
գայքս քան զանցեալսն առաւել լինիցին հասատատուն:

Ամք երկարագոյնս Թուին գոլ՝ ցորչափ հեռի կան, այլ
մինչ հասեալք ժամանեն՝ անդէն վաղվաղակի գառնան ՝ի
չիք, խռնափեալք ՝ի մէնջ իբրև ՝ի միւսմ վայրկենի:

Հայեցարուք յաչխարհ, զի՞րդ և կամ յո՞ր վիճակ
տեսանիցիք զնա յառաջին ամս անդ կենաց ձերոց և զի՞րդ
այժմ: Աւրբուհիք նոր յաջորդեալ ընդ առաջնոյն. նոր ան-
ձինք հանդիսացեալ կան ՝ի Թատեր աշխարհիս. մեծագոյնք
յարարուածոց նորանոր գուսանօք յաջողեալ. նորանոր
անդք և դէպք, նոր հնարք, նոր կիրք, և դիւցազունք նո-
րանոր յառաքինուԹիւնս անդ որպէս և ՝ի մոլուԹիւնս,
որք գովեսից, Թշնամանաց, և կամ հասարակացն կշտամ-
բանաց ընդ լծով գտանին: Համառօտ ասել, նոր իմն աշ-
խարհ տեսանիցեմք անդրադարձաբար եկեալ ՝ի լոյս, և առանց
Ճանաչելոյ ձեր՝ ՝ի վերայ նշխարաց առաջնոյն յարուցեալ:

Ընդ ձեզ և իբրև զձեզ անցանիցեն ամենայն. երազուԹիւն
իմն անհնարին ածեալ ձգէ զամենայն ՝ի խորս յաւիտեան-
կանուԹեան. նախնիք մեր յերեսին հորդեցին առաջի մեր

զուրկն, զնոյն և մեք ՝ի վաղիւն արասցուք առաջի այնոցիկ
որոց յաջորդեցիմն մեզ: Նորոգին գարք և կերպարանափոխ
լինի տեսարան աշխարհիս, ածեալ բազմանան Թիւք մեռե-
լոց և կենդանեաց և հանապազ զմիմեանս յաջորդեն: Ան-
կայուն է ամենայն ինչ և շիջանի: Աստուած միայն է որ
անփոփոխ մնայ: Ուղիք գարուց՝ որք ընդ քարշ ածեն
զմարդիկ՝ առաջի աչաց նորա ընԹանան, և տեսանէ նա
զոկար մահկանացուս, որ յերազընԹաց հեղեղաց ասի
վարեալք՝ յընԹացս անդ Թշնամանս և նախատինս նմա
դնեն, և ՝ի վայրկեան այսր զերջանկուԹեան իւրեանց
կամին զվայելս, ընդ որ անցեալ գահավիժ Թաւալեալ ՝ի
ձեռս բարկուԹեան նորա և վրէժխնդրուԹեան:

ՄԱՍԻՑԼԵՈՆ. Քառասնորդք:

ՍՓԱՆՉԵԼԻՔ ԱՍՏՒԱԾՈՑ

Եւ արդ առցուք ՝ի քնին զքաՆչելիան Աստուծոյ որ
միօրինակ վայելէն ՝ի մեծամեծան և ՝ի մատունս յհից: Տե-
սանեմ զարեգակն՝ բիւրիցս բիւրուք մեծ քան զերկիր՝
ջրյան առեալ ՝ի միջոց վայրի, յորոյ ընդարձակուԹեանն
կէտ իմն է նա լուսաւոր, և ոչ աւելի ինչ: Տեսանեմ և
զայլս յարփիկ մեծագոյնս արդեօք քան զարեգակն, որք
ընդ այլ սահմանս Թաւալին հեռաւորագոյնս առ ՝ի մեզ:
Իսկ և անդր ևս քան զսահմանս անհուն վայրացն նշմարեմ
ես և այլ ևս աստեղս աղօտագոյնս, անԹիւս ՝ի բազմու-
Թենէ և անտեսս յաչաց. և երկիր յորում կամ՝ ընդ այսմ
ամենայնի համեմատեալ ոչ այլ ինչ էիցէ, բայց կէտ անբա-
ժան: Եւ այս ամենայն այնպէս կարգեալ և յօրինեալ, զի
անմարթ է ՝ի բաց բառնալ ՝ի նոցանէ զՀիւղ ինչ գոյացու-
քեայ, և չիանգարել զՀրաշալան զկերտուածն. որ և յար
՝ի շարժման կայ, և յայնպիսում շարժման՝ զի նովին գոյացս

յաւերժանան և յեղմունք սիեղերաց և կատարելութիւնք նոցին: Ապա ուրեմն հարկ ’ի վերայ կայ, զի վարիցէ զկերտուածս զայս ձեռն ամենազօր և անվաստակ ’ի բազմադարեան ժամանակաց և այսր, և մատուսիք նորա խաղայցեն սուաւր, զի ըստ ստուածեղէնն տուիցն զնոսա բերիցեմք:

Սակայն նոյն կերտուած ոչ նուաղ ինչ ածէ հիացումն և ’ի մանուկս ’ի մատանցն քան զոր ’ի մեծամեծան: Քանզի և զմանրն զայն նկատեալ՝ տեսանիմ ես անհուն և անհատ, և հիանան միաք իմ: Ցնծ ինձ, որպէս յանդամս փղին և վիշապ ձկան՝ նոյն և ’ի ընչին որդան զգեղապատշաճ յօրինուածն անդամոց. և գլուխ և մարմին, և սրունս և ոտս յարմարեալս՝ մեծամեծացն յար և նման կենդանեաց: Եւ յիւրաքանչիւր իսկ մատունս յէից ատաւ կենդանեաց են և մատունք և ջկղք, և երակք և նեարդք և արիւն. և յարեան անդ ոգիք և հիւթք. և ’ի հիւթս անդ շիթք բազմատասնեայք. և անատմանն բաղադրութեան սահմանաւոր այսր էակի չիք երբէք կայ և գադար:

Ի քաջածանօթ էքս առ հասարակ բազում ինչ նշմարեմք մանրացուցիս անծանօթս առ ’ի մէնջ: Եւ ’ի նոսին իսկ ’ի մանրացուցիս նշմարեալսն՝ որչափ ինչ իրք են՝ յորս և ոչ նա զօրէ ինչ տեսանել: Եթէ հնար էր ևս քան զևս նրբատեսս գործել զկապմածսն որք ատաւր լինին տկարութեան և խոշորութեան ականողեացս մերոց, քանի՞ նորս և չքնաղս տեսանիցաք մեք արդեօք: Այլ յոր ոչն զօրեն աչք՝ բեր զմիաս յառեացուք. միաք մեր զմանրացուցից կալեալ զտեղի, յանդիման արասցեն մեզ ’ի հիւթս իւրաքանչիւր բիւրաւոր աշխարհս նորանորս և աներևոյթս: Սակայն ոչ բաւեացուք մեք նկատել և նովաւ անգադար ’ի շամանդաղս անդ գիւտս նորահրաշս. այլ ’ի պարտասել նորին և ’ի լքեալ կասել՝ կացցեն մնասցեն անտեսք յաչաց մերոց և բիւր սքանչելիք ’ի փոքրագունին յանդամս որդան զածածի....:

Ո՞ այն ոք էիցէ որ պարզել մարթասցի զփափկութիւն զգայութեանցն որով ընարէ մարդ զազգի ազգի հաշակս

զբուրմունս իրաց: Եւ զիա՞րդ այնչափ բազում հնչմունք ձայնիկ ընդ ունկն իմ ազդեալ միանգամայն, և անչփոթք ներգործիցեն. և որպէս ’ի դադարել ձայնիցն և ’ի չքանալ՝ տպաւորեալ մնայցեն յիս նկարագիրք նոցին ճշգրիտ և կենդանի: Այո ինչ հարատարին՝ որ զմարմինս մեր յօրինեաց՝ այնքանեաւ խնամով ծածկոյթ իմն խոնաւ և վայրաբեր արկանել զաչօք մերովք, և զկանոն մեր ընդէր անփակ արարեալ: Քանզի աչք մեր խնուն առ ’ի ննջել, ասէ Կիկերոն. իսկ ականջս հարկ է ’ի խնուլ անգ աչացն կալ ’ի բաց, որպէս զի եթէ յանկարծագէալ ինչ վտանգ ուստեք հասանիցէ, ազդ ’ի շուինդն ձայնիցն արարեալ՝ զարթուցանիցէն զմեզ:

Ո՛ իսկ ’ի վայրկեան ժամանակի քանդակէ յաչս իմ զերկին զերկիր և զծով, զտարակայեալսն յինէն գրեթէ յանեաւս: Զիա՞րդ զետել և որիշ կարգ ըստ կարգի ’ի յանձուկ կազմածին զկայ առեալ անեղծ կերպարանք էից առ հասարակ կայցեն՝ յականէն արևու մինչև ’ի դուզնաքեայս իսկ ’ի շամանդաղս: Քանի՛ ևս հրաշակերտ իցէ ուղղայս մերոյ յօրինուած, յորոմ գանձեալ պահին դասք դասք սքանչելի տեսարանաց բազմապատիկ իրաց, որք յօրէ ծննդենէ մերմէ ազդումն ինչ ազդեալ իցեն ’ի մէջ: Զարմանամք առաքէն ընդ մատենիցն գիւտս, զի ’ի նոսա աւանդին յիշատակք անթիւ պատահարաց, և մ’թերք խմաստից. այլ զի՞նչ համեմատութիւն իցէ բնաւ ընդ չքնաղագոյնն ’ի մատենից և ընդ ուղեղ առն խմաստնոյ. և քանի՞ն առաւել պատուական է և նորահրաշ քան որ ’ի մատեանն յայնոսիկ՝ մ’թերքն որ ’ի սմա: Անդ ’ի փոքու շտեմարանին գտանես զրոյցեալ մի ըստ միոջէ զամենայն կերպարանս կարևորս. եթէ կարգաս զնոսա, գան. եթէ ’ի բաց արձակես, խորասուզին յաղս չգիտեմ յո՞ր ’ի ներքինս, և մեկնին առ ’ի տալ այլոց տեղի... Ո՛ր ձեռն Ճարտար գիտաց թագուցանել ’ի կարծեցեալ ածև զանգուածին զայնչափ նկարագիրսն չքնաղս և գեղարուեստս:

ՖԵՆԵԼՈՆ. Աստիճանք գոյութեանց Աստուծոյ:

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾՈՑ Ի ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ

Վէրին տեսչութիւնն ծածուկ հրամանաքն վարէ և ուղղէ զամենայն՝ որ 'ի կանխաւումն և 'ի կործանումն պետութեանցն սպառաւորին:

Աստուած ինքնին յերկինս 'ի վեր ունի զառաջնորդութիւն ամենայն թագաւորութեանց. ամենեցուն սիրտ 'ի ձեռին նորա կայ. է ղի սանձակոծէ զյաժարութիւնս նոցա, և է ղի թոյլ տայ, և զղորդէ զամենայն ազգ մարդկան: Եթէ աշխարհակալս կամիցի յարուցանել, զահ և զերկիւղ դնացուցանէ առաջի նոցա, և աննկուն արութեամբ վառէ և կազմէ զնոսա և զզօրս նոցա: Օրէնսդիրս կամիցի հանել. առաքէ 'ի նոսա զհոգի իմաստութեան իւրոյ և դիտութեան, և 'ի ձեռն նոցա զմեծատաղանդ ջարեացն զկատարելութիւն արդելոյ 'ի թագաւորութեանց, և հասարակաց խաղաղութեան հիմունս արկանէ: Գիտէ նա, զի թերակատար է իմաստութիւն մարդկան. լուսաւոր առնէ զնոսա, սրբէ և սրահայեացս յարդարէ, և դարձեալ անդրէն թողու 'ի տգիտութեան իւրեանց, և խաւարին և դեհեն և յամօթ լինին 'ի խորագիտութեան իւրեանց ըմբռնեալք և հանձարուին իւրեանց թակարդեալք:

Այսպէս ըստ անսեռիւթ շաւղաց արդարութեան իւրոյ առնէ զահաւոր զգառաստանսն. նա է որ 'ի հեռուստա ուղղէ և պատրաստէ զամենայն. հարկանէ զօրութեամբ, և 'ի բացեայ հարուածքն ազդէ:

Եթէ վախճան խօսիցի և կործանումն 'ի վերայ թագաւորութեան, թիւր են և զաղփազիսն հնարագիտութիւնք խորհրդականաց: Եգիպտոս պանծացեալն 'ի հանճար՝ արբեցութեամբ դեղեհ խուճապի և դանդաչէ. զի արկ տէր հոգի չիմարութեան 'ի խորհուրդս նորա. չգիտէ զօր գործէն, և հուպ ընդ հուպ կորնչի:

Բայց մի խաբեսցին մարդիկ. յորժամ հաճեսցի՝ դարձեալ կանգնէ զղլորեալն. և որ զկուրութեամբ այլոց այսն առնէր, յիւս թանձրամած խաւար ըմբռնի՝ նովին յաջողութեամբն իւրովք չացեալ յաճախ:

Այսպէս Թագաւորն Աստուած 'ի վերայ ամենայն ազգաց: Մի և սպա լուիցին 'ի մինչ բախտի կամ դիպուածոյ անուանք, կամ թէ ոչ զգիտութիւն մեր նոքօք առակեսցուք: Ինդզի որ ինչ թերատես մտաց մարդկան պատահարք թուին՝ գործ կատարեալ է այն խորհրդոց Բարձրելոյն, յոր 'ի յաւիտենից սահմանեալ կան իրաց իւրաքանչիւր կատարումն և պատճառք միով տեսութեամբ: Այսպէս 'ի կէս նպատակի ձգի ամենայն. և առանձաւութեան մտաց մերոց դէպք թուին մեզ և վրիպակք մարդկեղինք:

Վասն այնորիկ իրաւամբք ասէ Առաքեալն՝ եթէ Աստուած է երանելի, և միայն հզօր, Թագաւոր Թագաւորաց և տէր տերանց: Արդարև երանելի, զի յանխառն խաղաղութեան՝ անայլայլակ ամենեքին զամենեցուն զխոփոխումն տեսանէ. փոփոխ զամենայն անչեղլի խորհրդով. տայ և բառնայ զիշխանութիւնս, և յայլմէ յայլ փոփոխէ, ազգէ յազգ և ժողովուրդ 'ի ժողովրդենէ. զի գիտացեն եթէ աւանդ տուաւ նոցա այն, և իւր միայնոյ է տիրապէս իշխանութիւն:

Վասն այնորիկ անձամբ զչափ առնուն Թագաւորք՝ եթէ է նոցա իշխան գերագոյն: Շատ կամ սակաւ գործեն քան զոր խորհինն, և կեղակարծ են ցանգ ելք խորհրդոց նոցա: Զեն տեսեալք նոքա հանդամանաց իրացն՝ որովք յանցեալ ժամանակի գործք գործեցան, նա և գայն ոչ գիտեն եթէ զինչ լինիցի առ յապա. և առաւել չեն բաւական բանութեամբ զայն պահանջել: Նա միայն ունի զամենայն 'ի ձեռին, և զգոյն և չգոյն յանուանէ կոչէ, և ոչ ընդ ժամանակաւ է. և 'ի նմանէ հաստատեցան ամենայն ժամանակք, և կանխէ ունի զառաջս ամենայն խորհրդոց:

Ո՞չ ապաքէն անգիտանայր Ալեքսանդր՝ եթէ վասն սպարապետաց իւրոց ընդ արիւն և ընդ ապաժոյժ գոյ, և երկրակալութեամբն կործանումն նիւթէ տան իւրոյ:

Իբրև ՚ի բաց ազատուԼեան սիրոյ վառէր Բրուտոս զՀռոմայեցիս, չերազէր անգամ՝ եԹէ զաւերասան ըմբոստուԼեանն զսերմն ժանտ սերմանիցէ յոգիան, որով դժնդակագոյն ևս քան առ Տարկունեօք արմատս արձակեսցէ բռնակալուԼիւն՝ զոր խլել խորհէր կարճնովին: Յորժամ կայսերք չնորհուկս առնէին զօրականին, ոչ այնու մասք առնէին՝ զի տիրեսցեն յաջորդաց նոցա և ԹագաւորուԼեանն:

Համառօտ ասացից, բազում այն է զի տեսչուԼիւն մարդկան և յանկամն խակ ՚ի լուծմն ածէ զնորհուրդս օտարոտիս: Բարձրեալն միայն հնազանդ առնէ ընդ իւրև զամենայն: Յորժամ ՚ի մանուածոյ պատճառան միայն հայիցիմք՝ նորագործ մեզ իրք Թուին, սակայն ըստ ուղղուԼեան վճարի ամենայն:

ՊՈՍԻԻՔ. Խօսք ՚ի վեպս ազգաց:

ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՂՕԹԻՑ

Ի կանխել քոյ յաղօԹս, ո՛չ սիրա քո ԹևԹևանայ ՚ի քեզ, և անդորրանայ անձն քո:

ԶդառնուԼիւն վշտաց մեղմեն աղօԹք, և սրբեն զուրախուԼիւն. միւսմն քաղցրամոք և անպատում զօրուԼիւն ընծայեն, և միւսումն երկնային բուրմունս անուշից:

Զի՞նչ գործ է քո ՚ի վերայ երկրի. և յորմէ հաստեցարդ չուներցիս ինչ պէտս խնդրելոյ:

Ուղևոր ես՝ ելեալ ՚ի խնդիր հայրենեաց. մի՛ զգլուխս քո շրջեցես յերկիր. ամբարձ զաչս քո զի ծանիցես զուղին:

Հայրենիք քո յերկինս է, և մինչ վերահնեալ յերկինս հայիցիս, չզգա՛ս վտով ինչ երբեք ՚ի սրտի քումմ, և ո՛չ բուռն իմն տենչ վառիցի ՚ի քեզ. և միեԹ համր ինչ լցե այդ ըղձումն:

Են որ ասեն. Զի՞ պիտոյ են աղօԹք, անպատեհ է փոփոԽումն Աստուծոյ քան զմերն բնուԼիւն՝ ցածուցեալ խոնարհել ՚ի պաղատանս արարածոցս դուշաքէից:

Այլ ո՞ արար զդուշաքեայ արարածս. ո՞ եւ նոցա զսիրտ և զհանճար և զբարբառ շրԹանց. ո՞չ ապաքէն Աստուած:

Եւ որ այդչափ բարեբարեացն նոցա, Իբր ապա ընդ վայր հարցէ զնոսա, և ՚ի բաց մերժիցէ յերեսաց:

Այրդարև ասեմ ձեզ, զի եԹէ ոք խորհիցի ՚ի սրտի իւրում Թէ արհամարհեալ անարդէ Աստուած զգործս ձեռաց իւրոց, հայհոյիչ է նա Աստուծոյ:

Են և այլք որ ասեն. Զի՞ պիտոյ են աղօԹք. ո՞չ ապաքէն գիտէ Աստուած զպէտս մեր առաւել քան զոր խընդրեմքն և խմանամք:

Այո՛, արդարև գիտէ Աստուած զպէտս ձեր, և յայս սակս խակ կամի զի խնդրիցէք ՚ի նմանէ. քանզի սկիզբն կարևորաց Աստուած է, և ապաչէն զԱստուած սկիզբն է սահմանելոյ զնա:

Զպէտս որդւոյն քոյ խակ գիտէ հայրն. և միեԹ չիցէ արժան վասն այսր բարբառ ինչ հայցուածոց արձակել որդւոյն ՚ի շրԹանց, և նշան իմն յայտարար շնորհակալուԼեաց առ հայրն իւր ցուցանել:

Յորժամ ցաւք զանազանս ըմբռնեն, յորժամ յերկիւղէ ուստեք զարհուրեացին, և կամ յորժամ քաղցնուն, ո՞չ մանչեն լալագին: Այդ գոչիւն ձայնից նոցա ահա առ Աստուած աղօԹք են. և Աստուած լսէ նոցա: Յարարածոց անտի մարդոյ ևԹէ ուրեմն բարբառ ոչ մոցէ յականջս Բարձրելոյն:

Դիմեն երբեք երբեք հոգմունք ընդ անդաստանս ապականիչք գալարեալ, որք խակ և խակ Թառամեալ խոնարհին յերկիր, այլ ԼՀեալ ցօղոյ ՚ի վերայ՝ կազդուրեն զնոսա, և զընդարմացեալ գլուխս նոցա գարձեալ ՚ի վեր ամբառնայ:

Հողմք խորշակահարք անգադար զոգւով մարդկան չընչ-

չեալ՝ ցամաքեցուցանեն զնա, այլ ցօղ աղօթից զոգւոյն չի-
ջուցանէ զատապ։

ՏՐ ԼԱ ՄՐՆԵ։

ՉՕՐՈՒԹԻՒՆ ԱՂՕԹԻՑ

Ոչ խաբիմք, քրիստոնեայք, եթէ զամենայն ինչ աղո-
թից ընծայեացուք. որ զայն Թեւադիրն լինի Աստուած,
զանազան ինչ այնմ չկարէ. Ոչ թէ, ասէ Դաւիթ, 'ի բա-
զում զօրս իւր ապրեցոյն Թագաւոր, և ոչ սկայ 'ի բազում
զօրուԹեան իւրում։ Եւ ոչ հանճարեղ խորհրդոց գրելի
ինչ են յաջողուԹիւնք. Բազում խորհուրդք են, ասէ Ի-
մաստունն, 'ի սրտի առն. Ծաներ՛ուք զամբոխումն և զվա-
րան մարդկեղէն խորհրդոց. Բայց, 'ի վերայ ածէ, խոր-
հուրդ Աստուծոյ յաւիտեան մնայ. և 'ի քնին մտանել
մարդկան, կամք իւր միայն կատարին։ Ահաւասիկ ամենա-
կալ որ յորժամ կամի, Փաղէ զոգիս իշխանաց, Թողու և
զայն 'ի նոսա ըստ իւրում կամացն 'ի մեծ և սմօԹ նոցին,
և Յըմբռնել զնոսա 'ի խորագիտուԹեան իւրեանց։ Զի ոչ
է մարդոյ խմաստուԹիւն, ոչ արուԹիւն և ոչ խորհուրդ
առ Աստուած։

Մակաբեանքն քաջ էին, և սակայն պրեալ է, Թէ ա-
ռաւել քան զինուքն՝ աղօԹիւք խնդրուածոց տային Ձա-
կատս, վասն՛ահացեալք յօրինակն Մովսիսի. զի ձեռք առ
Աստուած ամբարձեալք՝ քան զհարիանելեացն առաւել
փլուզանէին զառջին։ Իբրև ամենայն ինչ տապալէր առ
ոտս Լուդուվիկայ, և հասեալ համարեցաք զաւուրս սքան-
չելեաց տեսանել, յորս պարիսպք անկանէին 'ի ձայն փո-
ղոց, Ժողովուրդք ամենայն առ դշխոյս դարձուցանէին
զաչսն, և 'ի տաճարի իւրմէ հաստեալ անկեալ համարէին
զփայլատակունսն սատակիչս քաղաքաց քաղաքաց։

Զի եթէ աղօթից չնորհէ Աստուած զանցաւոր յաջո-
ղուածս, քանիօ՛ն առաւել պարգեւեսցէ նոցա զՀոգմարիտ
բարիսն, զառաքինուԹիւնս ասեմ։ Ա՛յս բնաւոր արգասիք
են ոգւոյ՝ աղօԹիւք միացելոյ ընդ Աստուած. աղօԹք որ
ընդունին մեզ զայնս՝ ուսուցանեն և գործել զնոյնս, ոչ
միայն իբրև զկարևոր ինչ, այլ և իբրև առեալս 'ի Հօրէն
լուսոյ՝ ուստի իջանեն առ մեզ ամենայն պարգեւք կատա-
րեալք. և անդ իսկ է լըսուիլն կատարելուԹեան, զի խո-
նարհուԹեանն է հիմն։

ՊՈՍԻԻՒ. Ձառ դաւթան. Մ. Թևրևզայ։

ԲԱԶՄԱՊԱՏԻԿ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆՔ ԳՐԻՍՏՈՍԱԿԱՆ ԿՐՕՆԻՑ

Ա՛յլ տեսէք այժմ զի ընդ հակառակին չէք ոք ցակա-
նեալ և Թշուառ որ անմահն ելցէ 'ի կարեկից ձեռնտուու-
Թենէ քրիստոսականս եկեղեցւոյ։ Վկայեն մեզ վէպք եթէ
քանի վաւեալ էր նա հոգւով գԹասիրուԹեան անդսանին
'ի սկզբանէ, և զիարդ փայլէր նովաւ և 'ի հալածանս անդ,
և զիարդ յաղգաց յաղգս մշանջենաւորեալ, մինչև 'ի սպառ
ծաւալեցաւ մարդասիրուԹիւն նորա կառուցմամբ սպա-
հէն տեղեացն պատրաստելոց ընդ ամենայն աշխարհ առ 'ի
ձեռնտու օգնականուԹիւն աղքատաց և չուառացելոց։
Յաւելից ասել և 'ի փառս կանանցն սեռի, որ այնչափ գո-
րովալիք են և անձնանուէրք 'ի գործանս վշտացեալոց
մարդկուԹեանս, զի առաջին հիմնադիրք սպասաւնի աղքա-
տաց, կամ Թէ ըստ անուանակոչուԹեանն աղքատանոցաց,
որ 'ի տարեգիրս կրօնից Լիշատակի, տիկին ոմն է Հռովմա-
Լեցի՝ անուն Փաբիոլա 'ի չորրորդի դարուն։

Եւ զի՞նչ այլ բարիս մարդկուԹեան առնել էր կրօնիս,
զոր չէիցէ նա արարեալ արդեամբ. և 'ի մեր իսկ ժամանակս
քանի՛ սքանչելիք ոչ հրաշագործեցան 'ի նմանէ։ Նա ինքն ժո-

ղովեաց զբազմութիւն մանկտւոյն լքելոք. և զոր մարքին լքանէին խժաբար, ինքն զթալից զնոսա յանձանձեաց. նա ինքն հաւաքեաց և զմանկտին ալքատաց և ձրի ուսոյց նոցա զսկզբունս մարդկային վիճակի և զանբիծ քաղաքավարութիւն, առանց մնոսի պարծանաց. նա ինքն է որ աղդէ զմարդասիրութիւն և զարիւնութիւն 'ի սիրտս գըստերացն սիրոյ, որք երբեմն զՔրիստահաս մխիթարութեան պատրաստ կան սրանալ խոյանալ ուր ուրեք ձայն հնչէ կանաց Թշուառութեան զնոսա կոչեցեք: Ո՞ր կանգնեաց զՀիւրընկալ օթևանն 'ի յաւէժական սառնապատս լեռանց, յորում բազում անգամ զնչնաքարեալ կենացն զօր՝ պատսպարեաց ուղևորն, եթէ ոչ քրիստոնէութիւն: Ո՞ր աղդեաց 'ի հոգիս արանց մեծաց զնորհուրդ հնարիկեայ 'ի հրատառ և 'ի վայրենի ափունս՝ 'ի փրկանաւորել զեղբարս իւրեանց զգերեալս, եթէ ոչ քրիստոնէութիւն: Դարձեալ և յաւուրս մեր զինչ հոգի իցէ անառեսանելի միաբանութեանցն որք յայց ելանեն օթևանաց Թշուառացեալոց, իմանեն 'ի բանս, ուսուցանեն զոգեաս, և Թուին դիւրապատրաստ և առ ձեռն ունել ամենայն ցաւոց մխիթարութիւնս և ամենայն կարօտութեանց գարմանս պիտոյից. ոչ ապաքէն քրիստոնէութիւն: Նմա միայնոյ են փառք անզուգականք, բարեզարդելոյ, լուսաւորելոյ և հրահանգելոյ վայրենեաց նորոյ աշխարհին, և կանգնելոյ ընկերաշաղ ազատութեանց՝ որք զքրիստոնէական կրօնս դաւանին, և այնչափ առաւել գերազանցին քան զհասարակապետութիւն Պարսից՝ անմեղութեամբ բարուց, խմաստութեամբ օրինաց և յերանաւէտ կենցաղս անակնս և քաղաքականս, որչափ աւետարանին վարդապետութիւն վերագոյն է քան զհեթանոսութիւն: Արդ խոստովան լինցուք միամտութեամբ սրտի եթէ քրիստոնէութիւն զամենայն ինչ 'ի բարօրութիւն քաղաքաժողով ընկերութեան, անակնկալ կենցաղին և 'ի յանձանձանս չուառացելոցն անօրինեաց. և եթէ չյաւելու և էս 'ի բարեբարել, մեզ և ոչ նմա մեղս դնել պարտ է:

Ա. հաւասիկ այս է, տեառք, կրօնք քրիստոնէութեան.

ոչ որպէս ախորժեն յանդիման առնել զնա Թշնամիքն նենդաւորք 'ի նկարս՝ որոց երբենիցէ աւելութիւն է և կարծիք նանրախորհուրդք, այլ որպէս նկարեցաւ նա 'ի ձեռաց աստուածային իւրումն հիմնադրի, Հառագայթաձակ փայլմամբն՝ որով զնա պայծառացոյց, առաքինութեամբն՝ որով զնա գեղազարդեաց, և յաղթանակովքն՝ զորս տարաւ 'ի վերայ ախտից և մոլորութեանց: Սա այս կրօն է զոր կապտել 'ի մէնջ կամեցան ամբարիշտք. զայն՝ որ այնպէս միացեալն է ընդ մերոյ ազգայնութեանս, զի 'ի կործանել միոյն և զմիւսն զհետ իւր առեալ ձգէ: Ա՜յլ ահա եհաս ժամ զի անքակ զօդեացին դարձեալ ըստ առաջնոյ ուխտին սեղանն և աթոռ: Դարձցուք, տեառք, դարձցուք միաւանգամ վանն մերոյ օգոստս և վանն մերոյ բարօրութեան 'ի կրօնն սրբութեան, որ ընդ երկար ժամանակս եկաց անծանօթ և արհամարհեալ. առ այն՝ որ միայն կարէ պատել զվէրս մեր և վախճան առնել թշուառութեանս և հաստատել զնաղաղութիւն 'ի պետութեանս. և համառօտ ասել, առ այն՝ որ միայն կարողն է վերանորոգել զարքայութիւն մեր 'ի ծերութեան նորա, որպէս և ինքն ևեթ կարաց պատրաստել և յօրինել 'ի մանկութեանն նորա, և որ միայն կարողն է և ևս բարգաւաճել զնա նորանոր փառաք և յաղողութեամբ:

ՓՐԻՁՏՕՒՆՈՒՍ: Պատ. Քրիստ. Հաւատոյ:

ՀԱՒԱՏՑ, ՅՈՅՍ ԵՒ ՍԷՐ

Ո՛վ մարդ, ցածո զանձն քո. խոնարհեաց էջ յերկիր, Յանցաւոր մահացու. արի զՀակառակ քո 'ի հող և 'ի փոշի, և հեծութիւնք քո անմխիթար լցուսցեն զսահման երկրի, ուր աթոռն է Թշուառութեան, և ուր ետ քեզ Աստուած

վըհ֊ժինդիրն՝ յաքսոր և ՚ի դերեզման, զոր օրինակ Թէ ան֊
կելոյ Թագաւորի դուշնաքեայ իմն սահմանեսցի վճռակ։
Այլ ապէ զինչ ասեմ, նա մանաւանդ ուրախ լեր, և ընդ
նորոյն Սիոնի դոչեա Թէ Երանի՛ յանցուածոյն որ արժա֊
դաւոր զայդպիսի ունել փրկիչ մեծ։ Կրօնք չնորհեն առ
քեզ բազմապատիկ առաւել քան զոր կորուսեալ էր քո֊
նա ինքն վերամբառնայ զքեզ յայն ծագ կատարելութեան,
որ գերագոյն քան զհրեշտակս ընծայեցուցանէ զանձն քո,
որքան առաքինութեանն յաղթանակք վեհագոյնք իցեն
քան զանմեղութիւնն անգորրաւէտ և առանց մրցանացն։
Ջօրացեալդ աստուածային չնորհօք։ զարարսէր յօժարու֊
թիւնս ամենայն նկուն արարեալ ընկճեսցես։ Մի ոք այսու֊
հետև զապականեալ բնութիւնէ մարդոյն բողոքիցէ առ
նս։ չկարեմ ես, նա և չտեսանեմ իսկ այլ բնութիւն։
բայց որ վերականգնելն է և զարդարեալ։ Հաւատք բա֊
նան ինձ զերկինս առաջի, զագիտութիւնս իմ լուսաւորեն,
պնդեն զվարանս մտաց իմոց, և ՚ի բաց վանեալ զոր զնովաւն
մածամէր մաղձ նսեմատուէր՝ հոսանս լուսոյ գնացուցա֊
նեն։ Ցայսն զինի գնայ հետց նորա, կենաց զմայլումն
անսպառ և մտերիմ Սիրոյ։ Հաւատալ, յուսալ, սիրել,
այս է աւանիկ կրօնն ամենեքին։ Եւ ոչ մի զոհ ծանր
գայցէ, յորժամ աներկբայ առաջի կայ յոյս֊պարտք ամե֊
նայն քաղցր են սիրողին։ Սիրեա, և զոր ինչ միանդամ
հաճոյ Թուեսցի քեզ՝ կատարեա ոմն յեկեղեցւոյ վար֊
դապետացն քարոզէր֊ զի չէն այլ ինչ կամք սիրողին՝ բայց
՚ի համաց սիրելեացն։ Ո՛վ օրէնք սիրոյ, օրէնք վեմ և
աքանչելի, ո՛ր այն ինչ կայ զոր զասցի քեզ Հմմարիան քրիս֊
տոնեայ։ Ըստ օրինակի վարդապետին անցանեն նոքա յաշ֊
խարհի ՚ի բարիս գործել։ Գթութիւն իմն անսահման, որ֊
պէս և անսահման է որ ընդ զայն ՚ի նոսա Աստուած, կե֊
նագործէ զամենայն գործս նոցա, լցուցանէ զմիտս նոցա
բովանդակ, և զղացմունս նոցա արգասաւորէ։ Մինէ
անձանց ինչ կեան դոքա, եթէ վասն այլոց արդեօք։ տես
զնարդ ՚ի թիկունս սրանան ամենայն ցաւոց մարդկութեան,

տես զնոսա զի հանդոյն սամարացւոյն արկանեն զիւղն պա֊
տուհան ՚ի վերայ եղբարց իւրեանց։ Ոչ մի ինչ լքուցանէ
զնոսա, և չէք ինչ որ զնոսա պարտասիցէ. որչափ և թշուա֊
ռական կրես, այնքան առաւել սիրելի նոցին լինիցիս։
Գանձք նոցա ՚ի ժառանգութիւն են անանկաց. կեանք նո֊
ցա, ճիգն, արգահատանք, արտասուք, հասարակաց են
ամենեցուն որոց կրկեղեն։ Աղքա՞տ իցես դու, հիւա՞նդ, նուա֊
զեա՞լ ՚ի զօրութենէ. ապէ, գիւրեսցին քեզ նոքա. վէրս
ինչ ծածուկս զգայցէ սիրտ քո, զոր ցանկալի իցէ քեզ ՚ի
դառն գթութենէ անձնասէր մարդասիրութեան ծածկել,
ընթա, և անպատում լինի միխթարութեամբ լցուսցեն
սոքա զսիրտ քո, որ ամբեսցէ զզգեստս քո և ՚ի մոռացօնս
դարձուսցէ քեզ զնոսա։ Վասն նոցա չէք ոք յաշխարհի
ոսոխ, չէք ոք օտար. զմարդիկ ևեթ խնգրեն նոքա։ Եթէ
յանցեար ինչ երբեք, աներկիւղ յառաջ մատիր, սուբբ
են ՚ի թշնամանիչ կշտամբանաց չղթուհք նոցա. արգահա֊
տեսցեն քեզ, արտասուակցորդ լինին քեզ, տկարս
իբրև զքեզ դաւանեսցեն զանձինս իւրեանց, և քաղցր֊
ժպիտ յուսոյն չղթամբք ցուցցեն քեզ զերկիւղն հաւատա֊
կաց ։ Հարք առաքինիք, որդիք սիրասունք, փեսայք
ղաստոք, մտերիմ բարեկամք, և հպատակք են հաւա֊
տարիմք. և որպիսի զօրութիւն է նոցա. սակայն և այն֊
պէս ոչ միայն ոչ հպարտանան ՚ի վերայ անձանց, այլ և
հեծեծեն անդադար ընդ անարժանութիւն իւրեանց. զան֊
ձինս իբրև ծառայս անպիտանս առ ոչ ինչ համարին, և
յառաւօտաբաշխ ողորմութենէ անտի անսպառ բարութեանն
զիսոխարինայն ընդունել ակն ունին արիաւուր զնոսա֊
ցեալն առ նոսա։ Խաժանեալք յերկիրաւոր բարեաց՝ երկ֊
նաւոր հայրենեացն են ցանկացողք, յոր յառաջեալ կա֊
թսղեսեաց նոցա Փրկիչն։ Պատիւք, հաճոյք, ճոխու֊
թիւնք, նա զի և ամենայն իրք աշխարհի ոչ ինչ են առաջի
նոցա. ոչ զինն ատեն սիրեն նոքա, և ոչ այլոյ խիք փա֊
փագեն, բայց վշտացն խաչի։ Արտասուք՝ ցօղ խնդութեան
են նոցա. դժուարութիւնք՝ փառք. տանջանք՝ մանկունք հան֊

զըստեան: Աճ ապտակ յաջոյ ծնօտս նոցա, և ահա անդէն դարձուսցեն զքեզ զմիւսն. բարձ ՚ի նոցանէ զբաճկոն, և զշապիկս շնորհեսցեն քեզ մտադիւր: Վտարանդի հալածեա զնոսա, արկ զնոսա ՚ի բանտի, բարձ զկեանս նոցա կատամարհ քերանօք, նոքա առ մեղաքաւիչն Աստուած աղերս արկցեն վասն քո. և քաղցր նոցին բարբառք՝ օրհնութեան լիցին ձայնք:

Ահա աղէ մարդիկ էին սոքա, զորոց են բանքս. ոչ, աշակերտք Քրիստոսի: Որ մարդկային իւն գիւտս համարկցի զկրօնս, հանապ եղիցէ նա և ասիցէ. Մարթ էր և ինձ զսոյն հնարել վարդապետութիւն, փոխել զընութիւն մարդոյն, և առեղծանել զՀաւատս, զՅոյս, և զԱէր:

ՏՐ ԼՈ ՄՐՆԵ:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Իսկ մինչ այլ քաղցր և ախորժ պէտս ունիցիք, եղբարք իմ, վարել զաւագութիւնդ ձեր և զՀոխութիւն: Ի մեծարանս յանձն կորզել. բայց հպարտութիւնն իսկ ինքնին առաղնայ: Ի հրամայել այլոց և օրէնս տալ. այլ այդ՝ հոգը մեծութեան են, ոչ հեշտութիւնք: Ի տեսանել զձեօք խոնարհել զանբաւ ամբոխութիւն ծառայիդ և տըրկայ. այլ տեսողք են զոքա՝ նեղիչք և տաղնապիչք, քան հանդէս չքեղութեան: Ի բնակիլ յապարանս հոյակապս. այլ չինեք ձեզ, ասէ Յոր, անապատս՝ յորս գան վաղվաղակի յարկակիցք ընդ ձեզ լինել հոգք և մտահալատս տըխրութիւնք: Առ ՚ի ժողովել անդր զամենայն զուարճութիւն. լցցեն Թերևս զընդարձակ չինուածդ, բայց դատարկ Թողուցուն միշտ զսիրտս ձեր: Ի գտանել զոր ամենայն ՚ի Հոխութեան անդ ձերում անապատ աղբերս մտահաճոյ ցնորիցդ. պէսպէս աղբերակունքդ յամենքեն փութով. ամենայն ինչ ընդ փոյթ սպառի. հարկ է անդրէն յեաս ընդ կրուկ դառնալ, և անդադար սկսանել վերըսին՝ զոր անհամ սաղտիւրութիւն և կարևոր պիտոյ առնէ անգործութիւն: Արկէք ՚ի վար՝ որչափ և կամիք՝ զինչս ձեր և զիշխանութիւն յամենայն պէտս զոր ամբարատաւանութիւն և հաճոյք մարթել զօրեացեն. յագեալքք, այլ ոչ չատասցիք. ցուցցեն ձեզ զուրախութիւն, այլ ոչ Թողութիւն ՚ի սիրտս ձեր:

Ի կիր արկէք զայնս ՚ի պէտս երջանկութեան այլոց, ՚ի մեղմացուցանել և սփոփել զառաւակելոցն կեանս՝ զորս ծանրութիւն Թշուառութեան սահպեալ է Թերևս բիւր անգամ փափագել իբրև զՅոբ, զի տիւն որ ետես զծնունդ նոցա՝ լինէր նոցա յաւիտենական գիշեր գերեզմանի. յայնժամ ՚ի միտ առնիք զհեշտութիւն մեծութեանդ, ձաշակեսջիք զՀամարիտ քաղցրութիւն վիճակիդ. այս և եթէ շնորհ է՝ որ առնէ զայն նախանձելի: Այն ամենայն որ զձեօքդ պերճանք, յաղագս այլոց է. իսկ ձեր է միայն այս հեշտութիւն: Այլն ամենայն ունի զնըւ դառնութիւն, իսկ այս և եթէ հեշտութիւն քաղցրացուցանէ զամենայն: Ուրախութիւն բարի առնելոյ՝ գեր ՚ի վերոյ քաղցր է և սըրտալիր քան զընդունելոյն: Դարձ անդրէն ՚ի նոյն արարեք, հեշտութիւն է՝ որ ոչ երբեք հնանայ. որչափ ձաշակիցէ ոք, այնչափ արժանագոյն լինի ձաշակացն. գոյ սովորել ՚ի բարեկենդանութիւն՝ որով և անդադարել, բայց է միշտ անպակաս կրել յանձին՝ զուրախութիւն պատճառ լինելոյ բարեկեցութեան այլոց. ամենայն բարեբարութիւն ընդ իւր ածէ ՚ի սիրտս մեր զքաղցր և զթաքուն արիւտրս զայս. սովորութիւն՝ որ կարծրացուցանէ զսիրտ առ ամենայն հեշտութիւն, առաւնօր օր քան զօր առաւել աղդեսր զնա յարգարէ:

ՄԱՍԻԼԵՈՆ. փոքր Քառասնորդք:

ԱՒԱՔԻՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՈԼՈՒԹԻՒՆ

Յանիրաւի զԻրմէ բնութենէն քրիստոնէ մարդ, իբր զի ապիկար և սակաւժամանակեայ՝ ի բաղդէն առաւել քան յառաքինութենէն վարիցի: Ինդ հակառակն քաջ կշռեալ ոչինչ մեծ և գերագոյն քան զայն գտանիցէ. և զի փոյթ ձարտարութեան պակասէ նմա քան թէ զօրութիւն և ժամանակ: Այլ իշխան և առաջնորդ կենաց մահկանացուաց միաքն է, որ եթէ ընդ շահիլս առաքինութեան փառաց լցցի ի ինդիր, մեծասէս ձոխացեալ հզօր և չքեղ գտանի, և ոչ բախտին կարօտ՝ որ զամբծութիւն վարուց, զյաջողակութիւն և զայլ բարեմասնութիւնս՝ ոչ չնորհել ուժիք կարէ, և ոչ ի բաց առնուլ: Իսկ եթէ ի թիւր ցանկութեանց ոք ըմբռնեալ ի գտառարկութիւն և ի հեշտութիւնս մարմնոյ զառածանիցի, զնեալ սակաւ հեշտալեօք գամ մի դեպերեալ, կորուսանէ առ յաւլութեան զզօրութիւն, զժամանակ և զհանճար, և սակաւ զգնաւթիւնն ամբաստանի՝ զիւր մեղն զնովաւ չփեալ: Զի եթէ այնչափ փոյթ էր մարդկան զբարեաց գործոց, որչափ զհետ անպատշաճին և զանօգտակարաց և յաճախ իսկ զնեալսակարաց դիմեն, ոչ արդեօք բախան զնոսա՝ այլ նոքա զբախան վարեին, և յայն հասեալ մեծութիւն, զի ոչ ևս մահկանացուք՝ այլ յաւերժականք լինէին փառաք:

Եւ զի ազգ մարդոյ ի հոգւոյ և ի մարմնոյ է կազմեալ, վասն այսորիկ և բովանդակ գործք մեր և ջանք՝ կէսք զմարմնոյ բնութեան, և կէսք զհոգւոյ զհետ երթան: Արդ գեղեցկութիւն դիմաց, զանձուկ մեծութիւն, սոքօք հանդերձ և մարմնոյ կորով և այլ ամենայն ինչ սոցին սակի՝ վազանցուկ են և դիւրաւահ. իսկ հանճարոյ վեհ են գործք և զօրէն հոգւոյ անմահք: Եւ զի ի կարճոյ ասացից, մարմնոյ և բարեաց բաղդին, որպիսի սկիզբն՝ նոյնպիսի է և

վախճան. ամենայն որ ծնանին՝ մեռանի, և որ աճէն՝ հնանայ: Իսկ հոգին անեղծ է և յաւերժական, ուղղիչ մարդկան ազգի, որ նուաճեալ վարէ զամենայն, և ինքն ոչ յուժէքէ նուաճի: Որով զարմանալի ևս է նոցայն անմտութիւն, որք անձնատուր ի մարմնոյ հաճոյս՝ շուայտութեամբ և վատութեամբ գնան. և զհանճար՝ քան զոր չիք ինչ պատուականագոյն, չիք ինչ գերագոյն ի բնութեան մահացուաց, անմիակ և անխնամ թողուն վատութեամբ ի թիւրիր ապականութեան, ուր բազմապատիկ և զանազան են մահք արուեստք, որովք մարթէրն նոցա պայծառանալ:

Իսկ ի գործոց հանճարոյ ընդ պիտանեգոյնս համարի աւանդել գրով ղյիշատակս անցից:.... Քանզի լուայ բազում անգամ Թէ Կ. Մաքսիմոս, Պ. Սկիպիոն և արք ակաւնաւորք ի մերոցս քաղաքացեաց սովոր էին ասել, զի ի հայել նոցա ի կենդանագիրս նախնեաց՝ վառեալ սրծարծանէին միաք նոցա ի սէր առաքինութեան: Իբր ոչ եթէ ի նիւթեն մտեղէն և ի կերպարան պատկերին էր այն զօրութիւն, այլ ի յիշատակ գործոց նոցին վառէր բոցն այն ի սիրտ արանցն աւագաց, և ոչ հանդարտեր մինչեւ առաքինութեան իւրեանց հաւասարեալ համբաւոյ փառաց նոցա:

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ· Ցուզուրթ:

ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ

Գիտակցութիւնն նեղբին՝ երկրորդ ընծայութիւն է անմահութեան հոգւոյ: Կայ ի սիրտս ամենեցուն առեան ինչ հարցափորձի, ուր այր իւրաքանչիւր անձամբ զանձն եկակոչ արարեալ՝ ակն կալեալ ունայ վճռոյ վերհատուն դատաւորին: Եթէ ախտիցն ցանկութիւնք՝ բնութեանն

կաղմուածոյ արգասիք էին, ուստի՛ էին տալա տափնասպ տարակուսանացն որ յանձուկ արկանիցէ զաւուրս յօրացելոցն յանիրաւութենէ: Ընդէ՞ր այդչափ ահաւոր էին խղճին տափնասպ, մինչև նախապատիւ ընտրել մարդոյ՝ յաղքատութեան և յազգի ազգի տառապանս տուայտել, քան յանիրաւութենէ յաճախել իւր ստացուածս: Զի՛ է զի բոլոր արկանէ արիւն՝ և վէմ ձայն արձակէ. յափշտակեալ պատառեալ վագեր զորս իւր՝ և ննջէ յանդորրութեամբ. մարդ՝ ի տպանութիւն եկեալ, հատանի քուն յաչացն: Յաճմայի վայրս և յանապատս թափառի, ասկայն և՝ ի միայնութենէ իսկ սարսէ. զգերեզմանոք և զդամբանօք յածէ, այլ՝ ի գերեզմանաց իսկ երկիւղ է նմա. զաչսն կկոցեալս զվայրոք յածէ, և՝ ի տաճարի խրախութեան ջլշնէ յօրմունս անդր յառել, երկուցեալ մի գուցէ նշմարիցէ՝ ի նմա զմահահրաւէր գիրն: Յառաւելութիւն տանջանացն զարթնուն բովանդակ իսկ զգայութիւնքն. ի մթան աղջամղի երևութեանն նմա խօլականք տպատնալից, և ժահահոտ Ճապաղեաց ընդ ունդունն հարկանի. զգառնութիւն թիւնիկ Ճաշակէ և՝ ի կերակուրս անդ՝ զորս ինքնին խահագործէ. մինչդեռ խաղաղական լուսոյ ոչ ոք զաշխարհ համօրէն՝ զերբալսոր ականջնորա խռովեն աղմուկք աղաղակի: Ի գիրկընդխառն լինել ընդ սիրելւոյ բարեկամին, կարծէ ընդ հանգերձիւք նորա զդաշյինն երկայրի ծածկեալ:

ՇԱՂՈՊՐԻԱՆ. Ոդի Քրիստոնեութեան:

ԽՈՂՃ ՄՏԱՑ

Ա՛տեան իմն է գիտակցութիւն՝ ուր ոչ վայրապար հարկանի բողոք առաքինութեան, և ձայն նորա զօրաւոր՝ թէ և առ վայր մի յաղմկայոյզ կրեցն ծածկիցի՝ որ զինա-

կամիցին հեղձուցանել, բայց սակս ժառանգութեանն՝ վաղ կամ անագան զարթնուցանէ զնա ի գործ: Եւ ոչ մտացածին ինչ ցնորս արժան է կարծել զգիտակցութիւն՝ ի տեսանել անդ զանակնկալս ոմանս՝ ի մարդկանէ՝ որ՝ ի սպառ հեղձուցեալ էին զնոյն յանձինս իւրեանց. որպէս ապահովութիւն՝ որ անլսողս առնէ զոմանս կողկողագին հեծութեան աղեխից մարդկութեան. այլ պարտ է առաջել զերկեքեան՝ որ որչափ սակաւք են, նոյնչափ և ահագինք. զի մարդ ամբարիշտ անապրոյն՝ օտար է՝ ի բնութենէն, որպէս գիակն՝ որ ոչ՝ ի մարդկան է համարի: Քանի՛ սփոփական է միանգամայն և ահագին ներքինս այս դատաւոր որ հաւանի ընդ գործս մեր և կամ բողոք հարկանէ, արդարացուցանէ և կամ դատապարտէ: Սփոփանք արդարոյն՝ զի զվարձս ձգանցն տայ Ճշմարիտ՝ ի քաղցը և՝ ի սուրբ հրճուանս ուրախութեան. ահագին չարագործին՝ զի Թողու զնա՝ ի դառնութեան խղճի մտացն: Բայց եթէ ամենայն ինչ անխոտոր էիցէ, և ոչ ինչ՝ ի ընէ չար և կամ բարի, զիա՞րդ էիցէ զի չարագործն անձամբ անձին կայ և դատախազ և դահիճ. զիա՞րդ այնպէս սաստկատանջ արդարութեամբ զանձն դատապարտէ. ընդէ՞ր տափնապէն զնա խորհուրդք վրէժխնդրին Աստուծոյ, և մոլեգնութեամբ ընդ անձին ոգորի և Թշնամացուցանէ զինքն. քայթ խղճի զեղեռն ինչ գոլ ցուցանէ, և եղեռն՝ հարկս իմն և պարտս՝ զոր արժան էր կատարել:

Ա՛յլ տեսէք, տեսարք, թէ զինչ հանգամանք էին խայթից խղճի, և զինչ դժնդակն այն զգայութիւն. ոչ ցաւ ինչ է որ՝ ի խօթութենէ ազգիցի՝ ի մեզ, և ոչ արամութիւն՝ զոր ծնանին՝ ի մեզ աղէտք Թշնամութեան, այլ անձնագատ իմն յանդիմանութիւն, զոր առնէ մարդ անձին իւրում, իմացեալ զի հնազանդել պարտ էր նմա օրինաց, և նա աղաւաղութեամբն ոտնհար եղև նոցին: Ոչ յերկիւղէ պարսաւանաց կամ պատուհասի ծնանի՝ ի նմա այս զգայութիւն, այլ՝ ի խոստովանութենէ զոր պարտաւորի առնել մեղապարտն անձին իւրում, եթէ կամաւ եկն՝ ի զանցա-

ռութիւն պարտուցն. զի ահա յառնելն քոյ գործ ինչ արդարութեան և կամ գթութեան, ոչ բնաւ ընդ գործեցեալդ զքաջասիս, թէ և անշնորհ ապերախտութիւնն հասցէ քեզ ընդ այնը ընդդունել, և զատելութիւնս և զդսրսլանս ևեթ ձգել յանձին. նա թէ և 'ի գլխապարտութիւնն ևս համարեսցի քեզ առաքինութիւնդ, կամակար զանձն տալ յօժարեացիս, անխղճ 'ի մեղաց գիտելով զանձդ. հեծեծեացես ընդ անիրաւութիւն մարդկան և ընդ աղէտս ձաղատագրիդ, բայց խայթ խղճի հեռի լցէ 'ի սրտէդ: Իսկ ընդհակառակն եթէ իւիք գտայց մեղապարտ, թէ և եղեռն յանցանաց 'ի կատար փառաց զիս ժամանեցուսցէ, և երկիր համօրէն ծափաձայն զգովութիւն իմ հնչեսցէ, բայց առ նմին խայթ խղճի զսիրտ իմ կէղէքեսցէ. այսչափ գեր 'ի վերոյ է գիտակցութիւն քան զկարծիս և քան զդաշնակցութիւնս մարդկան: Ապաքէն գիտակցութիւն և խայթ խղճի՝ ըստ լուսաւորութեան մտաց և ըստ ճշդրիտ կամ աղօտ ծանօթութեան պարտուց մերոց՝ բուռն է և կամ նուազեալ և առաւել քան զառաւել զարգացեալ. բայց մղձաւանջութիւն մեծ լցէ ոչ բնածին զգայութիւն համարել զնա 'ի մարդիկ՝ աղատ յաղդեցութեանց բաժնից երկրի, և գաստիարակութեան և ծննդեան. զի ոչ գաղտնութիւն իրաց, ոչ առաւելք մեծութեան, ոչ օրինաց լուսաւորութիւն և ոչ զօրութիւն իշխանութեան՝ ոչ կարեն զվրիժական խայթս խղճի եղեռնագործին ցածուցանել. և սաստ իշխանութեան թէ և բազում անգամ անպատուհաս զվեզարանն կացոյց, բայց ոչ բնաւ զոյզս գիտակցութեանն հանդարտեցոյց: Տիբեր և Ներոն ծանեան զնայեան նորին, և մերթ ընդ մերթ սարսեին երկիւղիւ ահաբեկեալք 'ի չիշատակ եղեռանցն գործելոց: Մարթ է գիտակցութեանն զքնով անկանել, բայց մեռանել ոչ ևս. նա օրշափ ընդ երկար 'ի քուն կացցէ, այնշափ ևս սայրասուր և գժնդակ խայթոցքն եղիցին. իբրև զաւիծ զարթուցեալ որ 'ի քուն հանգստեանն նորանոր զօրութիւնս զգեցաւ 'ի պատառել զյափշտակութիւնն: Եւ արդարև մտացածին ինչ խօլա-

կան էր ներքին այս անձին յանդիմանութիւն, որով ըստ գտանել մարդ զանձն իւր, զոր և կոչեմք խիղճ մտաց. եթէ մարթ էր 'ի բաց տարագրել զնախահակիչն խոր զանազանութեան բարւոյ և չարի, և եթէ հնար էր զամենայն ինչ ինքնահաճոյս համարել, և դաշնակցութիւնս. եթէ այլ ուստեք չէր ինչ երկիւղ 'ի մարդկանէ, և պարտ էր զմիտան ընդ վայր վզդովեալս անդորրացուցանել:

ՖՐՑՑՍՏՆՈՒՍ· Պաշտ. Քրիստ. Հաւատոյ:

ՑԵՏԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ

Ատգին են բանքս, այլ ոչ վայրապար ասացեալ. յաձախ լսեմք՝ և յանհոգս կամք: Զի՞նչ քան զայս ահաւոր կայցէ որոց փոյթ 'ի մտի ունին ոգւոցն փրկութեան. սակայն բազումք և զգան իսկ ոչ. սակաւք գործեն ահիւ զանձնց փրկութիւն. այլք ղծաղուս գան, և կէսք՝ ընդ բազմութեան կեցեալ՝ 'ի մահուն յուսան որոշել 'ի նոցանէ. ամենեքին ակն ունին ընդոհս գտանել, ամենեքին պարզևաց հանգիպել:

Իմ չեն կամք աստանօր խօսել զայլոց 'ի մարդկանէ. համարիմ թէ դուք միայն իցէք 'ի վերայ երկրի, և ահա այս միայն խորհուրդ պաշարեալ ունի զիս, և ահիւ պատուցանէ զանձն իմ: Համարիմ թէ յետին ժամ իցէ ձեր, և կատարած աշխարհի. և ահա պատառին երկինք 'ի վերոսա, իբրև Քրիստոս փառօք 'ի տաճար այսր. ամենեքին նմա ակն ունիմք, ամենեքին իբրև պարտաւորք սրտաթունգք ունիմք լսել զվճիռ ընդոհսդյն կամ զդատակնիք անվախճան մահուն:

Այլ ես հարցանեմ առ ձեզ, և հարցանեմ ահիւ և դողութեամբ, և ոչ խոր ինչ արկանեմ ընդ ես և ընդ ձեզ, և ցանկամ ձեզ զայն յուզումն սրտի, զոր ես արդ յանձին

զգամ: Արդ հարցանեմ ձեզ. եթէ արդարև ինձանէր այժմ Քրիստոս՝ ի տաճար այսր, գայր յայս ժողով դատել զմեզ և ընտրել աշաւոր ընտրութեամբ զոգիս յայծեաց, արդեօք ամենեքեան յաջմէն դասէաք. կէսք արդեօք. արդեօք տան միայն գտանէր արդարս, զոր երբեմն ոչ եդիտ ի հինգ քաղաքան: Ա՛յլ ես չգիտեմ. չգիտիցէք և դուք: Դու, Տէր, դու միայն ճանաչես զքոյսդ:

Բայց թէպէտ և զայն չգիտիցեմք թէ ո՛յք նորայքն իցեն, այլ զայս քաջ գիտեմք՝ զի մեզաւորք էին նորա: Արդ որպիսի՞ ոմանք իցեն որ ժողովեալ իցեն աստանօր. բարձ և աւազութիւն առ ոչ ինչ համարին, մերկք և կողոպուտք կացցեք առաջի Քրիստոսի: Ո՞յք ոմանք իցեն ապա. բազուքք՝ մեզաւորք՝ որք ոչ կամին ապաշխարել, և բազմագոյնք որք կամին՝ այլ յապաղէն զդարձ իւրեանց. այլք ապաշխարեն՝ զի միւսանգամ անկանիցին, և առաւելագոյնք՝ որք համարին թէ չիցեն նոցա պէտք ապաշխարութեան: Ահաւասիկ ամենեքին սոքա ամբոխ կորուսելոց: Ի բաց բարձեք զայսոսիկ չորեսին ազգս մեզաւորաց՝ ի ժողովոյ սատի, քանզի և՝ ի մեծի աւուրն՝ ի բաց հալածեսցին: Արդ յառաջ մատիք, ով արդարք... և ո՞ւր իցէք: Մնացորդք Իսրայէլի՝ անցէք յաջակողմն. ցորեանք Քրիստոսի՝ զատերուք՝ ի յարդէն, որ պատրաստեալ է՝ ի ձրակ հրոյն... Ո՛վ Տէր, և ո՞ւր իցեն ընտրեալք քո. այս իցէ բաժին քո:

ՄԱՍԻԼԵՈՆ. Քառասնորդք:

ՆԵՐԿԱՑՆ ԵՒ ԱՊԱՇԻՆԻ

Ա՛յսպէս հանգոյն ծաղկան, որ փթթեալ այգուն և ընդ երեկս թարշամեալ՝ վինի կոխան, անցանեն մարդիկ. սահին ազգք իբր ալիք սրընթաց գետոյ. և ոչ ինչ զօրէ նա-

հանջել ժամանակ, որ առեալ ձգէ ընդ իւր զամենայն ինչ անշարժ յերևման: Դու իսկ, որդեակ իմ, դու իսկ որ այժմ վայելես՝ ի սիս առօյգ և բերկրապատառ մանկութեան, յիշեա զի հասանիդ այդ դեղածաղիկ ընդ փթթելն և գօսասցի. գայիս յանկարծ այլափոխեալ, ընդ ծիծաղք, զուարճութիւնք բերկրալիք՝ որ արդ զհետ քո գան, կորով, առողջութիւն և խնծկիք անցցեն որպէս երազք բերկրալիք՝ և թողցեն աւեթ սիսուր յիշատակ. հասցէ ծերութիւն անզօր և անընդունակ բերկրանաց՝ խորշք քեզ՝ ի յայս արկանել, կորացուցանել զքիկունս քո, կճռատել զանդամս, ցամաքեցուցանել՝ ի սրտի քում զաղբերակն խնդութեան, դառնացուցանել քեզ զկեանս, արկանել՝ ի քեզ զահ հանդերձելոցն, և անզգայ զքեզ առնել ամենայնի բայ՝ ի յուսոյ:

Հեռի՝ ի քէն կարծես ժամանակդ. այլ աւաղ, խաբիս դու որդեակ իմ. գայ հասանէ նա վաղվաղակի, և որ այնպէս արագն հասանէ, չէ հեռի՝ ի քէն. այլ հեռի՝ ի քէն է վայրկեանդ՝ որ անցանէ, ոչէացեալ այժմ իսկ մինչ խօսիմքս, և չիք նմա դարձ: Մի ապա, որդեակ իմ, վատահացիս յոր կանս. այլ՝ ի հանդերձեալս ակնկառոյց՝ պինդ կաց՝ ի խիստ և՝ ի դժուարութս ճանապարհի առաքինութեան, և անբիծ վարուք և սիրով արդարութեան պատրաստեսջիր քեզ տեղի յերանաւէտ օթևանս խաղաղութեան:

ՖԵՆԵԼՈՆ. Տիկնոջ:

ԳԵՐԵԶՄԱՆՔ

Երբեմ՝ արձան յիշատակի է կանգնեալ յեղերս սահմանաց կրկին աշխարհաց, որ յանդիման առնէ մեզ նախ՝ զվախճան ընդունայն վաստակութեանց կենցաղոյս, և զպատ-

կեր մշանջենաւոր հանգստեան. ապա զարթուցանէ ՚ի միոյ մեր խաուն ՚ի խուռն իմն յիշատակ երանական անմահութեան, որոյ հաւաստիք առաւելուն ըստ չափոյ առաքինութեան այնորիկ՝ զորոյ զյիշատակն յանդիման առնէ մեզ, և յայդմ իսկ հաստատեալ կան ամենայն մեծատրանք մեր: Եւ արդարև Թէպէտ չէիցէ ինչ բնաւ խոիր ընդ աճիւն Սոկրատայ և ընդ Ներոնի, սակայն ոչ ոք է որ զկայսերն հռովմայեցւոց կամիցի ունել յանտառին իբրու, Թէ և ամփոփեալ ՚ի սափոր արծաթի. և ոչ ոք է որ զՍոկրատայն ոչ դիցէ ՚ի պատուականագոյն տեղւոջ բնակութեան իւրոյ, Թէպէտ և ՚ի սափոր խեցի լցէ ամփոփեալ:

Ահա ՚ի պատճառս այսր ընդաբոյս բերման առ առաքինութիւն, շնորհք երևելի մարդկանն ազգեն ՚ի մեզ սքրտառուչ իմն պատկառանս: Նոյն ազդումն ներգործէ ՚ի մեզ զմորմոք՝ ՚ի տեսանել անդ զտապանս որ զսիրելիս մեր ամփոփեցին: Եւ ահա այսր աղագաւ ՚ի տեսիլ դոյզն հողւոյ կուսի որ ծածկէ զաճիւն մանկան սիրելւոյ, ՚ի գուժ խանդաղատիմք՝ յիշատակաւ անմեղութեան նորին. և դարձեալ սորին վասն գորովելոյ փղձկիմք ՚ի տեսիլ գերեզմանին, ուր հանգչի նորահարսն, սէր և ակնկալութիւն ընտանեացն իւրովք առաքինութեամբք: Առ ՚ի մեծարոյ ընծայեցուցանելոյ զոյնպիսի շնորհիս՝ ոչ կձեայց ինչ պէտք են, ոչ պղնձեայց և ոչ ոսկի գրուագաց. այլ որչափ անպաճոյճք իցեն՝ այնչափ խորագոյնս ներգործեն զթախծութիւն: Աղգողագոյնք ևս են անշուք պարզութեամբն քան ճոխութեամբ, հնութեամբն քան նորութեամբ, Թշուառութեանն յայտարար հանգամանօք քան պատուագիր անուամբք, առաքինութեանցն յորջորջանօք քան զօրութեամբ:

Ի բացօթեայ և յանշէն վայրս մանաւանդ խորագոյն է ազդեցութիւն նոցին. բաղում՝ այն է զի գերեզման մի անպաճոյճ՝ յորդագոյն տայ հեղուլ արտասուս քան զբարձրադահ դագաղն ՚ի մայր եկեղեցիս. անդ ցաւն առնու

վեմ իմն կերպարանս և բարձրացեալ ընդ հինաւուրց գեղձս գերեզմանաց, ձգի ընդլայնի երբև զբացարձակ դաշտս և զլերինս շուրջանակի, և դաշնաւորեալ զուգաձայնի ամենայն երևութիւց բնութեան, ծագման առաւօտուն, մտնջղոյ հողմոց, մռից արևուն, և խաւարչուտ գիշերոյ: Վաստակք յոգնատաժանք և վճռակ նուաստութեան ոչ կարեն շնջուցանել զաղդեցութիւն նորին ՚ի սիրտս հիքացելոց:

ՊԻՐՆԱՐՏԻՆ ՏՐ ՍԻՆ ԲԻՒՐ.

ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԻՆՆԱՑ ՅԵԼԻՍԵԱՆ ԴԱՇՏԻՆ

Յառաջ մատեաւ Տէրեմաք առ Նոստ, և էին նոքա բազմեալք ՚ի խնկահոտ ծառաստանի ՚ի յարաղուարձ և ՚ի մշտափթիթ դալարւոջ. վտակներ բազմահոյլ ականակիտ ուռոգանէր զդեղեցիկ վայրն, և զովք հեշտալի գործէր անդ անուր. և բազմերամբ հաւուց հնչեցուցանէին զմայրիս ՚ի քաղցրանուագ երգս իւրեանց: Ծաղիկք գարնայնոյ միահամուռ փթթէին անդ առ ոտս, և ազդ ազդ մրգոց աշնայնոյ կախէին զկոզերս ծառոց: Ոչ երբեք անդանօր հրատապ շընհանն ազդեր բոց, և ոչ սեաւ հիւսիսի իշխեր անդ շնչել, կամ ղձմերայնոյ ածել անդր զբուք: Ոչ մարտ արիւնահանձ, ոչ մախանք չարաշունչ ժանեօք խածաւիչք՝ որք խժս գալարունս կրեն ՚ի ծոցի և զբազկօք, ոչ սեր մրնչահանձ, ոչ կասկածանք, ոչ երկիւղ, և ոչ տարապարա խղճք լեբանաւէտ անդր ՚ի կայս խաղաղութեան մատչել կարէին: Անդ աներեկն ծագեր սիւս. գիշերոյ քօղ նսեմ բնաւին եր անդ անծանօթ. շուրջ պատեալք ՚ի լոյս զուարթ և անաղօտ մարմինք արդարոց, ճառագայթազգեստք էին զարդարեալ:

Զկնք այնմ լուսոյ նմանութիւն ընդ աղօտաճաճանչ լու-

սոյս՝ որ Ճառագայթէ յաչս մահկանացուացս հիքայ ոչ ինչ ընդհատ 'ի խաւարէ, զի է այն փառք երկնահրաշ քան թէ լոյս. մտանիկ Թափանցանց անօսր նրբուԹեամբ ընդ մարմին Թանձրախիտ քան Թէ նշոյլք արեգական ընդ բիւրեղ ականակիտ. չէ ակնախափոյ, այլ մանաւանդ կազդուրէ զաչս, ազդէ 'ի հոգի զուարԹուԹիւն անՃառ, նուաճ անանց նին երանեալքն այնոքիկ, ծագէ 'ի նոցունց և ցոլանայ 'ի նոսին. ընդմտանէ 'ի նոսա, և տարրանայ 'ի հոգւոյ որպէս կերակուր 'ի մարմին: Տեսանեն զայն, զգան և շնչեն, և է այն 'ի նոսա ազբիւր անապատ խաղաղուԹեան և խնդուԹեան. խորատուչեալ կան 'ի բերկրանս որպէս կայտառք 'ի ծովս. ոչ ևս ցանկան խմիք, ոչ ինչ ուտիճն և անկարօտք են ամենևին. զի անապակ այնր լուսոյ Ճաշակ՝ ընու զքաղց սրտի նոցա, յագին կշտասպինդ ամենայն խղձք նոցա. և լիուԹեամբն այնուիկ զեր 'ի վերոյ արշաւեն ամենայնի, որոց 'ի խնդիր է յերկրի սիրտ մարդկան Թափուր և ստվեալ: ՊարառուԹիւն ամենայն զուարձուԹեանց զնոքօք՝ ոչ ինչ Թուի յաչս նոցա, զի լիուլն երանուԹեամբն՝ որ 'ի ներքս 'ի նոսա է՝ անզգայք առնեն ամենայնի որ ինչ արտաքոյ նոցին են հեշատիք, զդիցն բերելով զնմանուԹիւն, որք նեկտարիւ և ամբրոսեաւ յագեալք՝ ոչ կարօտին Թանձր համադամից ազնուագոյն իսկ կօշկոյ երկրաւորացս: Ի խաղաղաէտ վայրսց անտի 'ի բաց խուսափին ամենայն չարիք. մահ, հիւանդուԹիւն, աղքատուԹիւն, ցաւ, զնջի, երկիւղ, և յոյս իսկ՝ որ բաղում այն է զի ոչ ինչ նուազ քան զերկիւղ է տառապեցուցիչ, գժուԹիւն, դժկամակուԹիւն և զայրոյթ չգտանեն երբեք անդր մուտս:

Երկինք բարձունք Թրակիոյ, որք զձիւնախաղաղ զառնապատ գագաԹուն յաւերժական ծրարեն յամպս, տապալեսցին յանդգնալիք 'ի հիմանցն 'ի միշտ երկրի կայկայելոց, և մի երբեք սիրտ արդարոյն այնոցիկ սասանեսցի: Գորովին ևեթ ընդ աղէտս որոց կենան տակաւին յերկրի. այլ գորով նոցա քաղցր է և անխռով, և ոչ այլչէ զանյեղլի նոցայն երանուԹիւն: ՄանկուԹիւն անծերանալի, երջանկուԹիւն անեղծական, և փառք աստուածահրաշ նկարին 'ի դէմս նոցա. բայց ցնծուԹիւն նոցա ոչ է խօլական և անպատեհ, այլ զուարԹ, ազնուական և մեծավայելուչ, այլ վեհ ինն Ճաշակ ՃշմարտուԹեան և առաքինուԹեան՝ որ զմայլեցուցանէ զնոսին: Ջնոյն ցնծուԹիւն սրտի կրեն յաւերժ անընդհատ, զոր կրէ մայր 'ի տեսանել զորդի իւր սիրելի ընդ մեռեալս համարեալ. բայց ցնծուԹիւնն այն մայրենի վաղանցիկ՝ ոչ անցանէ 'ի նոցանէ, և ոչ վայրիկ մի Թուլանայ, այլ նորոգի միշտ 'ի նոսին. զմայլին արքեցուԹեամբն, առանց ամբոխման մտաց և ապշուԹեան:

Ջրուցատրեն ընդ միմեանս զորոց տեսանեն և յորս վայելեն. առ ոտն կոխեն զմեղկ գրգանս և զնոտի մեծուԹիւնս կենցաղոյս՝ զոր աւաղեն. յիշեն խնդուԹեամբ զտխուր՝ այլ զարտաւախնճան աւուրս՝ յորս պարտ էր նոցա մաքառել ընդ անձին և ընդ ամբոխ արանց ժանտից 'ի հանդէս առաքինուԹեան, և աքանչանան ընդ օգնականուԹիւն դիցն՝ որոց կալեալ ձեռնտէ ածին զնոսա ընդ բազմադէմ վտանգս յառաքինուԹիւն: Ուղիս իմն առտուածեղէն անՃառելի հոսէ անսպառ 'ի սիրտս նոցա ներդոյացեալ, 'ի մէջ առնուն և զդան զերանուԹիւն իւրեանց, առանց վախճանին կատարածանաց: Նուագեն օրհնուԹիւնս դից 'ի միասին. մի բարբառ է ամենեցուն, մի խորհուրդ, մի սիրտ, և մի երջանկուԹիւն ծովացեալ յամենեսին յոգեխառնեալն 'ի մի:

Յաստուածահրաշ յայնմ հիացման անցանեն դարք եւ բազմունք քան զժամս առ մեզ. և բիւրք բիւրուց դարուց սահեալ՝ ոչ ինչ նուազեն զերանուԹիւն նոցա միշտ նոր և յար անթեղիւ: Թագաւորեն առ հասարակ, ոչ յաԹռուռ դիւրակօրծան 'ի մարդկանէ, այլ յանձինս իւրեանց անյեղլական իշխանուԹեամբ. զի ոչ ևս հարկ է նոցա մուրացածոյ իշխանուԹեամբ հեք և անարդ ռամկին գոլ ահարկու. ոչ ևս կրեն զԹագ կապտելի՝ որոյ շողիւն ծածկէ

այնքան արհաւիրս և հոգս գառնիս, այլ դիք ինքնին կա-
պեն նոցա ի գլուխ թագ անհապուռս:

ՖՆՆԼՈՆ. Տիվաք:

ՄԱՀ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ

Եւ եմուտ ի Բաբելոն մեծաշուք փառօք որպիսի չէր երեւեալ ուրեք, և զքեն վրիժուն Ելլադայ ինդրեալ, և զամենայն աշխարհն Պարսից ի սուղ ժամանակի ընդ ձեռամբ նուաճեալ, ապա ի հաստատութիւն նորոյ պետութեանն, կամ մանաւանդ ի յաղագս փառասիրութեան իւրոյ անուշանի լինել առաւել քան զԴիոնիսոս, խառնեաց գնաց ի Հնդիկս, և անդր ևս քան զյաղթողն Հրէական ընդարձակեաց զիշխանութիւն իւր: Բայց որ ընդ անապատս ոգորէր, ընդ դէտս և ընդ լերինս, և ոչ կասէր երբեք յընթանալոյ, հարկեցաւ լսել զօրականին, որ վաստակեալ ինդրէր արձակուրդ· և արձանս դերապանծ քաջութեանցն զտիմամբ Աբրահայ Թոդեալ, ընդ այլ Ճանապարհ դարձոյց զզօրս իւր, նուաճելով զՃանապարհայն զամենայն քաղաքս. և եկն եմուտ վերստին ի Բաբելոն ոչ որպէս աշխարհակալ ոք, այլ աստուածակերպ ահաւոր պատկառելի փառօք:

Բայց Թագաւորութիւն նորա մեծազօր ընդ համառօտ կենաց նորա սահմանեցաւ: Երեսուն և երից ամաց միջոցեւ երիվեր խորհուրդս մեծամեծս՝ որպիսի չէր ուրուք զմտաւ ածեալ, և հաստատութեամբ ակն ունէր բարեպատեհ եղիցի, վախճանեաց զկեանս իւր՝ միջոցեւ հաստատագոյնս հրաման տուեալ վասն Թագաւորութեանն. և եթող զկնքեալ իւր զանգօր և զտիար և մանկունս տղայս՝ որ անբաւական էին ծանուս բեռնին: Բայց գառնագոյն ևս աղէտք տան իւրոյ և պետութեան այն էին, զի զզօրավարսն ուսեալս առ

նմա ի պատերազմ և ի սէր փառաց՝ զհետ իւր Թողոյր: Յարաջատես եղև որոց յետ մահուն գործելոց էին. և առ ձգտելոյ զնոսա, և առ ահին դարձեալ զի մի անկողոս զնոսա արասցէ, ոչ ժառեաց ցուցանել զզբ յաջորդ իշխանութեանն կամ խնամակալ որգւոցն. այլ դուշակեաց միայն զի ի Ճապաղիս պատերազմաց յուզարկաւորեսցեն զնա բարեկամքն իւր. և ի ծաղկեալ հասակին վախճանեաց զկեանս իւր յոյժ Թախծեալ և տագնապեալ վասն անցելոյն որ անցանելոց էին յետ իւրոյ մահուն: Որպէս և եղեն իսկ, և տեսաք զպատահարս տերութեան նորա, և զահագին կործանումն ատեն. զի ի Մակեդոնիա ի հայրենի Թագաւորութիւնն՝ զոր ընդ բազում դարս կալան նախնիք նորա, որպէս յաշխարհ անտերունչ և յանժառանգ յամենայն կողմանց արշաւեցին Թշնամիք, և ընդ բազում ժամանակս աւար լեալ բանագունին՝ ապա հանց յայլ ոյլ: Այսպէս աշխարհակալն մեծ համբաւեալ և վհատգոյն ամենեցուն՝ վերջին Թագաւոր եկաց յազգի իւրում: Եթէ խաղաղութեամբ Թագաւորեր ի Մակեդոնիա, մեծութեամբ Թագաւորութեանն չհրապուրեին սպարապետք նորա. և այնպէս աջողէր նմա ժառանգեցուցանել որգւոցն զԹագաւորութիւն հարցն իւրոց: Այլ առաւելութեամբ իշխանութեան եղև պատճառք իւրոյն կորստեան. և այս եղեն արգասիք փառաց բազմայաղթ աշխարհակալութեանցն:

ՊՈՍԻԻՆ. Խօսք ի վեպս ազգաց:

ՍԻՐ ՀԱՑՐԵՆՆԱՑ

Հայրենասիրին անկ է զամենայն ջան ի մէջ առնուլ, զի հայրենիք իւր ահարկու ելցեն արտաքոյ և խաղաղ ի նեբքս: Յաղթութիւնք և դաշինք, յորում աշխարհին

կռեալք, պատկառելի վնա կացուցանեն առաջի ազգաց, պահպանութիւն օրինաց և ուղղութիւն բարուց՝ սոքա միայն հաստատեն ի նմա վնասակարութիւն: Վասն որոյ ի կացուցանել ընդդէմ թշնամեաց աշխարհին զօրավարս և պատգամաւորս քաջս, պարտ է ընդդէմ ապերասան հարձակումեան և ախտից՝ որ նկրտին ի կործանել զամենայն, կացուցանել զօրինս և զառաքինութիւնս որ կանդնեն զամենայն: Եւ ասի քանի՛ բազում պարտք կարևորք և անհրաժեշտք յաձախեն կարգաց իւրաքանչիւր քաղաքացոյ, և քաղաքայնոց իւրաքանչիւր առանձինն:

Արդ լուարուք ինձ դուք՝ զորոց բանքս են, և որոց վասն ցանկալի է ինձ բարբառ ազդասիրական առ ի բացատրել ընդ վայելուչն արժանեաց պշնմարտութիւնս՝ որոց համ խնամուտ դուք՝ յորս կամքի բորբոքել զհուր պատշաճից սիրոյ, որով բարեբաստագոյնք լինիցիք: Յիշեցէք զի իրաւունք անպարապրելիք և սրբազնք են հայրենեացդ ի վերայ աջողութեանց ձերոց և առաքինութեանց և ըղձից և գործոց առ հասարակ. և զի յոր կարգ կենաց և իցէք, զինուորք նորա էք պահակեալք, և պարտ է ձեզ հսկել միշտ նմա, և գիմել յօգնութիւն ի շրջակ ինչ վասնզի: Ոչ է ձեզ բաւական առ ի գոլ վայելուչ ի վեհ վիճակիդ ձերում՝ կատարել ևեթ զյանձնեալ ձեզ ի նմանէ գործս, պաշտպանել օրինաց նորա, ինդրել զօգուտ նորա, և հեղուլ իսկ զարիւն ձեր ի բանակի համ ի քաղաքամիջի վասն նորա: Ի է թշնամի ինասակարագոյն նմա քան զնիզակակցութիւն ազգաց և քան զհերձուած քաղաքայնոց, պատերազմն յամր և անհրևոյթ՝ այլ սասիկ և յարտաև, զոր մղեն հոյլք ախտից ընդդէմ ուղղութեան բարուց. պատերազմ այնչափ առաւել գժնդակագոյն, որչափ զի չիք հնար հայրենեացդ խափանելոյ զայն իւրովի կամ ժուժկալելոյ նմին: Թ՚ոյլ տուք ինձ, զի ըստ օրինակին Սոկրատայ տաց նմա բարբառել՝ որ ինչ անկ է նմա ասել առ որդիս իւր:

Յինէն ընկալցաք դուք զկեանս, և խնամատուն սահմանադրութիւնք հրաշանգեցին աստ զմիտս ձեր: Օրէնք իմ հսկեն յապահովութիւն տրուպ քաղաքացւոյն, և ամենեքին դուք երգոյք յայնի կամ լռելեայն նուիրել ըղձանս ձեր ինձ ի ծառայութիւն: Ա՚յսքիկ են իրաւունք իմ. իսկ դուք որմ իրաւամբք խախտէք զուղղութիւն բարուց, որ հաստատագոյն քան զօրէնս հիմունք են պետութեան իմոյ: Զդիտիցէք զի եղծումն բարուց թոյնք են սպառնալիք, և միւսմ ևեթ օրինակի ցսփութիւն մարթ է ապականել զազգ մի ողջոյն, և լինել նմա միատեսակագոյն քան զպատրաստութիւն ի պատերազմի: Եթէ սրիտութեան պէտք էին առ ի խիզախել ընդդէմ պատերազմական հասարակաց, մեծարեցէք արդեօք զայնոսիկ. չգիտիցէք զի սնափառ պերձանիքդ, որով հանդէս առնէք անպատուհաս զեղծութեանցդ ձերոց, և վատութիւն գործոցդ ձերոց, և վատութիւն գործոցդ ձերոց, և ապիրատ:

Ա՚յլ դուք խորհեալ անձանց զփառս իմ, իշխէք ամբարտաւանել առաջի օտարաց, զի եք ծնեալք ի քաղաքի՝ ուր կացին Սոլոն և Արիստիդէս, և սերեալք ի գիւցազանց՝ որ յայնչափ ի բազում պատերազմունս հաւուն զհնուց յաղթանակել: Ա՚յլ զինչ բաժին ընդ իմաստունան ընդ այնոսիկ և ընդ ձեզ, մանաւանդ թէ զի կայ ձեր և հարցն ձերոց. գիտիցէք ոչք են հայրենակիցք և որդիք աւադ ուրիերոյն այնորիկ. քաղաքացիք առաքինիք, յորմէ պայմանի և յորմէ ժամանակի և ծնեալք իցեն:

Երանի՛ էր հայրենեաց հոգս, եթէ ընդ առաքինութիւնս իւրեանց ոչ բերէին յանձին զձախողակի ներողամտութիւնն նպաստամատոյց ի կործանումն նորա: Լուարուք և դուք ձայնի իմում, դուք որք դարուց ի դարս ճշանդնեաւորիք զկենցաղագուտ ազգ մարդկան: Սահմանեցի օրէնս հակառակս անիրաւութեանց, այլ ընդդէմ ուխտից ոչ ևս. զի ձեզ ևեթ մարթ է լինել իմ վրէժխնդիր, և հալածել զնոսա հզօր թշնամութեան: Մի զինջն զայրոյթ ձեր, այլ բորբոքեսցի ի վերայ յոխորտութեան՝ որ խանգարէ զբարս, ի վերայ բռնութեանց, անիրաւութեանց և նենդութեանց՝ որք թագչին յերեսաց օրինաց,

և 'ի վերայ կեղծ լաւութեան, վեր 'ի վերոյ պարկեշտութեան, սուտ բարեկամութեան, և 'ի վերայ ամենայն անարդ խաբէութեանց՝ որք գողանան զմեծարանս 'ի մարդկանէ: Մի ասիցէք՝ Թէ փոխեցան ժամանակք և պարտ է զգուշանալ յերեսաց զօրութեան յանցաւորաց. առաքինութիւն անազդական, է առաքինութիւն անհին. զի ուր ոչն մանչէ նա 'ի տեսիլ յոռութեանց, շաղախի 'ի նոյնս:

Որպիսի՛ հուր ոչ 'ի սիրտս ձեր բորբոքէր, եթէ յանկարծ հասանէր գուժիկն՝ Թէ զէն առեալ Թշնամիք 'ի սահմանս այսր 'ի գրուն ձեր հասեալ են: Իսկ արդ ոչ եթէ 'ի գրունս, այլ 'ի միջի ձերում կայ Թշնամին, յաւէան աւագանւոյդ, 'ի ժողովս ազգիդ, 'ի դասատանարանս և 'ի տունս ձեր: Այնպէս արագ յառաջ խաղայ չարն, զի եթէ ոչ դիք և ջանք առաքինեացդ խափանեսցեն զնա՝ բարձոյն ընդ հուպ ամենայն յոյս հնարից ուղղութեան բարուց և փրկութեան աշխարհիդ:

Եթէ կշռամբանեսք այսոքիկ զորս լուաք՝ ազգեղին 'ի մեզ, ժողով մարդկան՝ առաւելագունց հեզութեամբս մեծով լեալ կայան վաղերց և օձից՝ փոխեր յօձեան խաղաղութեան և բարեբաստութեան: Այլ մի՛ յուսացուք առանել զփոփոխութիւնս զայս. զի Թէպէտ և բազում էցեն 'ի քաղաքացոց առաքինութեամբ զարդարեալ, այլ չիք ինչ չքնաղագիւտ քան զայր առաքինի. զի Հնմարիտ առաքինին այն է, որ յամենայն ժամանակի և յամենայն դէպս ընդդէմ ամենայն խաբանաց և հակառակ ամենայն հրապուրանաց է առաքինի:

Իսկ եթէ չկշռեն բարեսէրք գումարել ընդդէմ սաց և կամակորաց, գէթ միաբանեսցին յօգնութիւն լաւաց, բերելով յանձին զմարգասիրութիւնն ընդակից բնութեան, զոր 'ի դէպ իսկ էր արդ դարձուցանել 'ի ժողով մարդկան, ուստի հալածեցեն զնա մտահաճութիւնք մեր և ախտք: Ի նմանէ խրատեսք դադարել 'ի պատերազմէդ ընդ միմեանս, չառնուլ այլ ընդ այլս զնօթմամտութիւն ընդ չարասրտութեան, ներել Թերութեանց, և մերժել յան-

ձանց զկանխակալ կարծիս և զկասկածանս՝ որք են աղբիւրք դժնդակք հերձուածոց և աւերութեանց բազմաց: Ի նմանէ դարձեալ ուսանիցեք, զի քան զՀզօր պաշտպանութիւն և քան զառաւաձեան պարիսպ՝ մեծ ևս բարերարութիւն այն է՝ կարեկից լինել Թշուառաց:

Տեսանիս հանապազ զբազումս 'ի քաղաքացոց՝ որք հեծեն 'ի Թշուառութեան, և զայլս՝ որ ախտիանայ և եթէ կարօտին բանից և կարեկցութեան այլոց, և հարցանեմ՝ Թէ զինչ մարթ իցէ օգտակար լինել մարդկան, և Թէ բնութիւնն ընդ վիշտս զոր ածէ զմեզ՝ յաւելցէ արդեօք զիսոխարէնն: Յանկարծ դիտիցիր Թէ քանի՛ բերկրութիւնս զղուշ նա 'ի սիրտս հնազանդելոց ազդեցութեան իւրոյ: Եթէ երբեք զոք 'ի լաւաց զերծուցանիցես 'ի կարօտութենէ կամ 'ի մահաւանէ և կամ 'ի նախատանաց, վկայեն ինձ կիրք սրտի քո՝ զի 'ի միտ առնուցուս, Թէ են 'ի կենցաղս յայս վայրկեանք գորովանաց՝ որ զչտապից ամաց հատուցանեն զիսոխարէնս: Եւ յայնժամ ողորմեացես 'ի վերայ այնոցիկ՝ որք գժկամակին ընդ առաքինութիւնս քո, կամ որք յետ վայելելոյ չարգասիս նոցա՝ մոռանայցեն զնոսա: Մի՛ լեզի քեզ երկնչել 'ի նախանձոտաց՝ կրեսցեն նոքա զարժանին պատուհաս յանկարեկիր սիրտս իւրեանց. զի նախանձն է ժանգ, որ ուտէ զերկաթ: Մի՛ զանգիտիցես՝ յերեսաց քոց փախիցեն, կամ մանաւանդ 'ի խնդիր քո չջնջեսցին, եթէ ընդ բարերարութեան զոր ընկալան 'ի քէն՝ եղեն կցորդ մեծարանաց և շահ: Զի եթէ պարծանաց բարերարութեանդ եղծանիցիս, յանցաւոր ես, և եղկելի բարերարեալն 'ի քէն: Զի, որպէս ոմանք ասացին, պարտ է բարերարին մոռանալ զբարերարութիւն իւր, և ընդունողին յիշել զայն. և ես քեզ ասեմ, զի եթէ առաջինն մոռասցի զայն, երկրորդն յիշեսցէ: Եւ զի՞ փոյթ Թէ խաբեցիմ. մի՛ Թէ առ շահ ինչ օգտի պարտ իցէ բարերարել:

ՊԱՐԹԵԼԻՄԻ·Ոդևոր. Ագաթարանայ:

ՍԲԲԱՋԱՆ ՊԵՐՃԱԽՕՍ

Ի բեմէ անտի, զոր քրիստոսական ամբառնայր կրօն, վեհագոյն Ճշմարտութիւնք մեծաբարբառ հնչէին ընդ ծագս աշխարհաց, և սրբագոյն հրահանգք բարոյից դիւրընդունելս ընծայէին անկիրթ խուժանին. բեմ ահաւոր, որոյ առաջի՝ ի հեղութիւն փոխէին՝ որք արեամբ ժողովրդեան շաղախեցան կայսերք. բեմ խաղաղարար և խնամակալու, որ անագորոյն ոսոխացն բազում անգամ ապաւէնս մատոյց. բեմ, որ պաշտպան եկաց ընդ երկար դասից ամենայն ուրեք լքելոց, և ինքն միայն ի մէջ անցեալ՝ զնշաւունս աղքատաւն ընդդէմ մեծատան ցուցանէր, տկարին ընդդէմ հարստահարողին, և մարդոյն ընդդէմ անձին իսկ իւրոյ:

Անդ՝ ամենայն ինչ ազնուական ընծայի և ատուածծային՝ քարոզչին տիրեալ ինն ոգւոց՝ մերթ ամբառնայ և մերթ հարկանէ զնոսա՝ մարթ է նմա դէպ ազգն ինչ քան զփառս դնել նոցա առաջի, և ահաւոր քան զմահ, և՝ ի վերուստ երկնից յոյս ինն յաւիտենից՝ ի գերեզմանս անդր իջուցանել, ուր սարջանս աւետ բերէր Պետրոսիւս: Եթէ ըստ օրինակին Հռովմայ Ճարտարախօսին՝ զէգեան նահատակացն Արիսի մեծահռչակս գրուատիցէ, անմահութիւն հոգւոց նոցա շնորհէ, զոր յիշատակի նոցա միայն իշխէր խոստանալ Կիկերոն. և զՀայրենեաց երախտագիտութեան պարտիս՝ Աստուծոյ թողու հատուցանել: Եթէ քարոզող լինէր աւետարանին կամիցի, հարկ՝ ի վերայ կայ նմա առձեռն ունել զուսմունս դիւութեան բարուց, զիմրձ հմտութեան ընդ մարդն և ընդ գաղանիս կրից նորա, և յիմաստասէրս անդ և՝ ի հռետորան նախնեաց քննութիւն մշանչեր նաւոր: Նմին է անկ առաւել քան զվարժմի Ճարտարախօսս՝ ի վերայ հասանել Ճանապարհի սրտի մարդոյ, զյուզմունս ամենայն գիտել և զզգայմունս հոգւոց Ճանաչել բովանդակ. ոչ զի վառեալ զրգռիցէ զբռնն կիրս ժողովրդեանն և կամ զզայրոյթ նորա, ոչ զախտից արծարծել հրդեհ ատաւոր, և ոչ զնուր վրէժխնդրութեան և զքինու՝ յորում նախնին այն յաղթանակեր պերճախօսութիւն, այլ զի ցածուցանիցէ զնոսին և ամոքեալ սրբիցէ զոգիս: Կրից՝ ամենայնի եղեալ ախոյեան՝ առանց՝ ինձատաս ինչ իւր արբանեկելոյ զնոսա, ձեռնամուխ լինի զայլ իմն սահմագործել կիրս, եթէ արժան իցէ այդու զնորին զայն և զվեհմ անուանել զզգացմունս, որ ամենայնի յաղթէ և զամենայն՝ ի սիրտս ունի զտեղի. խանդ իմն կրօնական, որոյ է՝ ի բարբառ նորա, ի խորհուրդս և՝ ի բանս մարգարէական իմն ազդել ոգի, քան եթէ զկիրս սահեցուսիլ:

ՎԻԼԸՄԻՆ:

ԹԱԳԱՒՈՐ

Ջ՚ինչ իցէ Թագաւոր հեանդուն՝ ի ծնէ՝ ի նահատակութիւն, որ անգսաին՝ ի մատաղ հասակէն կայծակունս շուրջ փայլատակեցուցանիցէ, եթէ երկիւղն Աստուծոյ ոչ առաջնորդեսցէ նմա և՝ ի չափս ունիցի. աստղ մի նորահրատ և ժանտագործ՝ չարեաց աւետ բօթաբեր յերկիր: Ըստ ամենայն նորա յարուսեան յայն եղեռնաւոր, ընդ նմին աճեսցեն և աշխարհն տառապանք. և կարի խիստ յանդուգն և խիզախ գործոց առաջնորդութիւնք՝ հազիւ թէ դոյզն ինչ Թուսմբ ընդդէմ դնիցեն անատուելի ընթացիցն բռնութեան. ի չողիսն յաղթութեանցն համարեսցի շատցուցանել զկեղ զյանդգնութիւն նոցին կամ զանիրաւութիւն. յոյս աւետ յաջողութեան՝ հանցէ իրաւունս արդարութեան զնուցն. որ ինչ գամ մի Թուիցի նմա՝ ի փառս՝ օրինաւոր եղիցի. զժամս խաչական և մեծավայելուչ հանգստեան՝ վարկցի գատարկութիւն իմն ամօթալից և ժամս՝ ի փառաց իւրոց գողացեալս. գրացիք իւր, որոց կարէ տե-

բասլեաեալ՝ ի Թշնամիս դարձցին նմա. Ժողովուրդք իւր ինքնին արտասուօք իւրեանց և արեամբ մատուսցեն նմա զօձառս յաղթանակացն. սպառեսցէ և հիմնայատակ զաշխարհ իւր արասցէ առ այլոց սիրելս. յարուսցէ՛ի վերայ իւր զազգս և զազինս, զսիեզերաց խաղաղութիւն վերադովեսցէ, արասցէ իւր անուն՝ Թշուառացուցեալ ղբիւրս բիւրուց: Ո՛վ հարուած ազգի մարդկան: Եթէ գուցէ ուրբեք յերկրի Ժողովուրդ բաւական՛ի գովել զնա, չափի ինչ այլ՝ բայց ըղձանալ նմին այնպիսի ոք տէր:

ՄԱՍԻԼԵՈՆ. փոքր քառասնորդք:

ԱՇԽԱՐՀԱԿԱԼ

Փառք նորա, հանապազ արեամբ շաղախեսցի. անդադար ոք նուագեսցէ Թերևս զյաղթանակս նորա, բայց գաւառք և քաղաքք և անդաստանք ողբասցեն. կանգնեսցին նմա արձանք ամբարտաւանք անմահացուցանել զաշխարհակալութիւնն, բայց աճիւն տակաւին ծխեալ քաղաքաց՝ որ երբեմն ծաղկազարձքն էին, բայց աւերած և ամայութիւն անդաստանաց կապուտ կողպուտ եղելոց յաւարին գեղոյն՝ բայց քանդմունք պարսպաց՝ ընդ որով հանդարտեալ Ժողովք քաղաքացւոց Թաղեալ մեռցին, բայց աղէտք բազում և յետ նորա տեւեալ բաւեալ, սպազգեաց յիշատակք եղկելին անմխիթարացուցանել զընդունայնութիւն նորա և զանմտութիւն: Անցցէ իբրև զհեղեղատ՛ի գետիւել զերկիր, և ոչ իբրև զգետ մեծաբանիչ՝ որ նօթձիգէ ուրախութիւն և առատութիւն. անուն իւր գրեսցի՛ի յիշատակարանս ազատնեաց ընդ աշխարհակալս, այլ ոչ ընդ ընտիրս Թագաւորաց. և չիշեսցին վէպք արքայութեան իւրոյ՝ բայց՛ի յիշատակել զարիւն զոր գործեաց մարդկան: Ա՛յսպէս ամբարտաւանութիւն նորա, ասէ Հո-

զին ատուածեղէն, համբարձցի մինչև յերկինս, դլուխ նորա յամպս կպեսցի. ըստ ցանկութեան սրտի իւրոյ ելցէն նմա չաջողուածք իւր, և այս ամենայն փառաց ամբարտակ՝ լեզի ասպ շեղջակոյս տղմոյ որ ոչինչ Թողուցաւ զինի իւր՝ բայց ժահ և Թշնամանս:

ՄԱՍԻԼԵՈՆ. փոքր քառասնորդք:

ԱՂՆՑՔ ՄԱՐԴԱՀԱՃՈՒԹԵԱՆ

Վասն զի մարդահաճութիւն՝ զամբարհաւաճութիւն ծնանի, և ամբարհաւաճութիւն է մահադոյն վտանգ առաքինութեանց: Մարդահաճն՝ ընդհուպ մեծամեծաց առնելով անդր լաւութիւնս, տայ նոցա կորուսանել և զբնաձիրսն. միտութիւնք՝ որ յոյս առաքինութեան էին՛ի նոսա՝ փոխէ զոյն յատիթս յոտութեանց. արատիւնն այլանդակի՛ի յանդգնութիւն. ահաւորութիւնն՛ի սերնդեղն ազդեալ և յոյժ վայելուչ առն Թագաւորի՝ ոչ այլ ինչ է այնուհետև, բայց զզապանձ գոռոզութիւն՝ յարհամարհանս նմին և յանարդութիւն. սէրն փառաց՝ որ խաղայ՛ի նոսին ընդ արեան նախնեացն իւրեանց Թագաւորաց, փոխի յանմիտ սնապարծութիւն՝ որ զսիեզերս առ հասարակ կամի տեսանել յոտս նոցա խոնարհեալ. ցանկայ պատերազմաց՝ առ՛ի ժառանգել զնոսին պարծանս յաղթութեան, և ոչ միայն ընուաճէ զշխամիան, այլ և նորս բուսուցանէ, և զինէ ընդդէմ նոցա զաշխմանորդսն և զդաշնաւորս. մարդասիրութիւնն՝ սիրելի՛ի բարձրութեան, և զոգ առաջին ազդումն՛ի մանկութենէ հեռի հեղեալ՛ի սիրտս արքայից, ամիսոքի յանչափ առատութիւն և յանխոիր ընտանութիւն սակաւուց ոմանց սիրելեաց, և չՀողու ինչ այլ՛ի նոսա՝ բայց խստասիրտ անզգայութիւն՛ի ատատպանս Ժողովրդեան. և ինքն իսկ կրթեցին

պարտք, որում առաջին պահպանիչ նոքա են, և խնամոց պարապուն էր տղայական հասակին, ոչ ևս ինչ երևին նոցա, բայց մանկուց խաղք և զբօսանք տղայութեան: Ո՛չ, Թագաւորք՝ առաքինի ծնանին յաշխարս, և յօժարութեամբք՝ կարգին իւրեանց արժանաւորօք. սերունդն տայ մեզ ինոսա՝ օրպիսիս պարտին լինել. մարգահաճութեանն միայն առնէ որպիսիս են:

Ի գովութեանց գամ մի աղաւաղեալք, ոչ ոք այնուհետև իշխէ խօսել առ նոսա զնէզու Աշմարտութեան. նոքա միայն անգիտանան 'ի սէրութեանց իւրեանց՝ զոր նոցա ևեթ անկն էր գիտել. առաքեն դեսպանս յարքունիս և 'ի Թագաւորութիւնս հեռաւորս խնամալ զգաղանիս նոցա, և որ ինչ յարքայութեան անդ իւրեանց անցք անցանեն՝ ձիշխէ ոք ցուցանել նոցա. շաղաւաշութիւն բանք գարանեալ կան զանձուածն, պաշարեն զամենայն անցս, և չտան մուտ Աշմարտութեան: Վասն որոյ Թագաւորն միայն հիւր է 'ի Ժողովրդեան իւրում. կարծէ 'ի ձեռին ունել և վարել զամենայն Թագաւն զօրութիւնս սէրութեանն, և հրապարատ կագոյժ անգամ եղելոցն անծանօթ է. ծածկին 'ի նմանէ զընտասն, առաւարացուցանեն զօգուտն, զառապանս աշխարհին նուազեն, բազում մեծարանօքն խաբեն զնա. ոչ ինչ առաւգութեամբ առեանէ. ամենայն ըստ սրտի իւրում Թուի նմա:

Այս գառն կատարած է շողոքորթութեան: Սակայն այս ախտ հասարակ է ամենայն արքունեաց, և լաւագոյն Թագաւորացն խուռէ: Մանուկ արքային Յովասայ այն ինչ կօրհնեսցեալ զՏաւետարիմ քահանայապետն Յովիդայէ՝ զնմուտսն ինամակալ մանկութեան իւրոյ, և զայր՝ ընդ որ միայն հասանէր գեռ ևս Աշմարտութիւն մինչև առ ոտս աԹոռոյն, և ահա հրապուրեալ 'ի շողոմն գրանկացն, ասէ գիրն, մատնեաց զանձն 'ի խորհուրդս նոցա և 'ի կարիս իւր. Շրջեցեալն զմիտան Յովասու. յայնժամ լուաւ նոցա արքայ: ԶԹագաւոր բարի՝ շողոմութիւնն առնէ Թագաւոր ծնեալ 'ի Թշնաւութիւն Ժողովրդեան իւրոյ. նա է որ

զգաւազանն փոխէ 'ի լուծ բռնութեան, և չնեձելով Թեբռութեան արքային՝ զառաքինութիւնն ևս յանարգութիւն տանի:

ՄԱՍԻԼԵՈՆ. փոքր Քառասնորդք:

ՆԱԽԱՄԵԾԱՐ ԵՆ ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵՆՑՈՒՔ ՔՈՒՆ ՋՔՈՂՔՈՒՑԻՈՑՆ

Ցայս ամենայն եՀելիմն մատուիւրագոյնս Ճառէր մեզ զվաստակոց երկրի, զմայլեալ քաղցրութեամբ չինական կենացս: Յաւուր միում ընդ երեկս բազմեալ էաք առաջի տան նորա 'ի սեղան ընդ հովանեաւ ոստեաց խոնարհելոց գլխոք՝ և ասէ ցմեզ. Յորժամ ընդ անգաստանս իմ Ճեմիմ՝ ամենայն ինչ զուարթ և գեղածիծաղ է յաչս իմ: Հունձքս այսոքիկ և հասք և բանջարք վասն իմ են, մանաւանդ Թէ վասն կարօտելոց՝ զորոց խնամիմ զպէտսն՝ և պատրանս ինձ քաղցունս երբեմն հնարիմ առ 'ի յաճախել զբերկրութիւն վայելչութեան կենացս. Թուի ինձ յաւելուլ երկրի զնամս իւր մինչեւ 'ի գորով, և զի կանխեն քան զպատուս ծաղիկք՝ որպէս զի բարեբարութեանցն առ մեզ զուարթառատս պարտ է դոլ:

Նախանձ առանց հակառակութեան է ընդ խս և ընդ դրացիսն իմ. գան յաճախ առ խս, և բազմին ընդ խս 'ի սեղանս՝ որ բարեկամաց ևեթ իմոց պատրաստեալ է: Վատահք և անհակածք Ճառս արկեալ խօսիմք ընդ միմեանս, և յայտնեմք իրերաց զհնարագիտութիւնս մեր. զի իւրաքանչիւր ուսիք 'ի մինչ, յոյժ այլ ազգ յայլոց Ճարատարաց հնարագիտաց, այնչափ փոյթ է 'ի հմտութիւն պէտից որչափ անձին:

Եւ ապա գարձաւ առ աթենացիս ոմանս՝ որ այն ինչ եկեալ էին 'ի քաղաքէն, ասէ. Համարիք դուք կեալ ազատք 'ի շրջապատ պարսպաց ձերոց. այլ զղջատու-

Թիւնդ զայդ, զոր ընդհանէն ձեզ օրէնք, բառնայ անհնայ քառնաւորութիւն քաղաքաժողով կենակցութեան. Ձիպն հատանելոյ աւազութեանց և զպարտս այնոցիկ կատարելոյ, հնարք ընդհանս գտանելոյ առաջի հզօրաց, զդուշանալ առ՝ ի զերծանել յատիրատութեանց, պարտք և պատշաճք խստագոյնք քան զկարգս բնութիւն, հարկ հանապազորդ՝ ի զգեստս, ՝ի գնացս և ՝ի խօսս, անբերելի ծառայութիւն անգործութեան, յամր հալածանք ծանրատաղտուկ մարդկան, և զի մի մի թուիցեմ. չիք ինչ՝ ի դերութեանց որ ոչ զձեզ կաշկանդեալ ունիցի:

Շքեղ են ածք ձեր, այլ մերքս զուարթք. բերկրութիւնք ձեր վեր՝ ի վերոյ և վաղանցուկք, մերքս խակականք և կայունք. և բնաւ խակ աւազութիւնքն ձեր կացուցանեն զոք՝ ի գործ աշխուժականագոյն քան զՀրահանգս արուեստից, առանց որոյ ամենայն Ճարտարութիւն և վաճառականութիւն կործան անկանին:

Ընդհակառակ երբեք յոսկեձեղուն տպարանս ձեր զօգս զայս զուարթ, որ ընդ գալարագեղ կամարաւս փարի. և Ճաշք ձեր բազմածախք՝ իցէն լաւագոյնք քան զտաշտս փրփրադեղ կաթնիդ՝ որ արդ իսկ ահա կթեալ, և քան զախորժահամ մրգունքս ձեռօք իսկ մերովք քաղեալ: Եւ զի՞ր համ ոչ յաւելուցուն՝ ի կերակուրս մեր վաստակք, որ և՝ ի առատանիս ձմերայնոյ և՝ ի բոցակէզ ամառ ամարայնի ցանկալի են մեզ. և զորոց զնոյնն աշխատութեանն քաղցր է բժշկել մերթ՝ ի Թանձրախիտ մայրիս անտառին՝ ի շունչ զեփիւռից որ՝ ի գալարօղ՝ ի քուն հրաւիրեն, և մերթ առ Ճարճատիւն հրատին՝ որոյմ արկանեն Ճարակ զկոճեղս ձեռասուն խմոցս ծառոց. ուր մանկունքս իմ հանդերձ մարդն իւրեանց կան առ ինև, միշտ իսկ ցանկալիք խանդակաթ սիրոյ. և ուր պատսպարիմ անքոյթ՝ ի բքայոյզ մրրկաց, որ շուրջ զբնակութեամբս իմով մռնչեն:

Իմիք, զինչ է բարեբաստութիւն, եթէ ոչ առողջութիւն հոգւոյ. և եթէ այսպէս իցէ, ո՞ր այլ մարթիցի գտանել զայն, բայց ուր պէտք ընդ ցանկութիւնս՝ ի կշիռ

հաւասարութեան կան, ուր աշխատութեան յաջորդէ միշտ հանգիստ, և ընդ հոգս կցորդէ միշտ խաղաղութիւն:

ՊԱՐԹԵԼՄԻ. Ղեւոնդ. Ալիքարեանց:

ԱՌՕՐԵԱՆ

Յածէր նա թափառական ընդ երկիր. Աստուածք առաջնորդ տարաբաղդ աքսորելոյն:

Անցի ընդ Ժողովուրդս, հայեցան յինս և ես՝ ի նոսա, և ոչ՝ ի ծանօթութեան եկաք միմեանց:

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք:

Ի խոնարհել արեգական՝ տեսեալ էի ծուխ ընդ ամբառնալ՝ ի ծոցոյ հովտին, ասէի. վասն որ ընդ երեկս գտանիցէ զյարկ իւր ընտանի և առ իւրան անցեալ բազ-

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք:

Յո՞ գնան ամպքդ վտարանդիք՝ ի մրրկէ. վարիմ և ես հանգոյն գոցին, զի՞ փայլ թէ ունք:

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք:

Գետեզերիք են ծառքս և ծաղկունքս գեղանի, այլ չեն ծաղիկք և ծառք հայրենեաց իմոց. չբարբառին ինչ ընդ իս:

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք:

Ընդ մարդագետին գնայ առուակս մեղմընթաց, այլ չեն իւր մխրճունչք զորս լուայ՝ ի մանկութեան, և ոչ յիշատակս ինչ զարթուցանեն՝ ի սիրտ իմ:

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք:

Ֆաղցր են ինձ երգքս, այլ զվախիծ և զվիշտ զոր բերեն՝ չեն թափանցութիւնքն իմ և խինդք:

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք:

Հարցին զիս. Զի՞ լաս. ասեմ ցնոսա. և ոչ էր որ ելոյց, զի չիմացան զբանս իմ:

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք:

Տեսի զծերուհիս շուրջ պարս առեալս ի մանկանց, իբրև զծիլեհենի յիւրոց շառաւիղաց. սակայն ոչ ոք ի ծերոց կարդաց զնս իւր որդի, և ոչ ի մանկանցն ոք եղբայր իւր զնս ձայնեաց:

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք:

Տեսի և զծիծաղել օրիորդաց առ սիրատարփ ամուսինս, ծիծաղ սուրբ՝ որպէս զսիւգ առաւօտու, և մի ի նոցանէ ոչ ժամեր առ իս:

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք:

Տեսի և զերիտասարդս լանջս ի լանջս յարեալ գերկընդխառն զերերոք դողդոջս ի մի կցորդել զլուսնջ. բայց ոչ ոք ի նոցանէ կարկառեաց զաջ իւր առ իս:

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք:

Ի հայրենիս են և ևեթ բարեկամք, հարսունք, հարք և եղբարք:

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք:

Աքսորեալդ դու տարաբաղդ հանգիր ի լաղդ. ամենեքին վտարանդիք են իբրև զքեզ, և ամենեքին տեսանեն զհարս, զեղբարս, զհարսունս, զբարեկամս զի անցանեն և լինին աներևոյթ:

Հայրենիք չեն ատ ի խոնարհ, ի նանիր խնդրել զնա մարդ ատանոր. և զոր ունին օթևան է գիշերոյ:

Ցածի նա Թափառական ընդ երկիր: Ատուած առաջնորդ տարաբաղդ աքսորելոյն:

ԼԱՄՐՆԻ:

ՆԿԱՐԱԳԻՐՔ ԿԵՆԴԱՆԱԳԻՐՔ ԵԻ ՋՈՒԳԱԿՇԻՌՔ

ՊԱՏՈՒԻՐՔ ՎԱՄՆ ՍՏՆՑ

Կենդանագիր. Ստորագրութիւն կերպարանաց կամ բաղուց ուրուք, և մերթ երկաքանչիւրոցն ևս. եթէ նկէ ոք այնպիսի, որպիսի նկարագրի, որպէս ագահ ոք կամ նահանձոտ, կեղծաւոր, ցածուն վեր ի վերոյ, սիրող հաճոյ լինելոյ, ոչ ևս է նկարագրութիւնն այն կենդանագիր, այլ նկարագիր բարուց. և այս է խոիր ընդ երգիծաբանութիւն ներելի և ընդ երգիծաբանութիւն աններելի: Լապրիւյէր, որոյ նկարագիրս ևեթ բարուց էր արարեալ, ամբաստանեցաւ՝ որպէս թէ արարեալ էր նորա կենդանագիրս. չարամտութիւն պատշաճեցուցեալ ընտրին և նոքօք զրպարտեալ ընկարչին, կրկնակի հայհոյհոյեաց իւր ախորժ միահաղոյն. բանաստեղծութիւն, ճարտասանութիւն և պատմութիւն, կարեն հաւատարապէս նկարագրել. այլ ոչ նոյն եղանակ է նկարագրելոյ իւրաքանչիւրոցն:

Յամենայն ազգի ազգի Ճարտասանական Ճառս կարէ տեղի ունել կենդանագիրն. ի գովութեան և ի պարսաւս չէք ինչ քան զայն բնականագոյն. ի բաղմոհականին կարևորագոյն ևս է տալ ծանօթութիւն զմարդկանէ, զոր պարտ է նկարագրել ընտրս. յատենականին ևս բաւական որոյ և նկարագրել զնոսա. յամենայնի մարթ է դաղումն այն է զի ըստ անձնական հանգամանաց մարթ է դա-

աեղ ղեխաւորութիւն և զՀաւանականութիւն, զնակն իակ գործոյն և զաստիճան ներելոյ կամ խստութեան՝ որում է ոք արժանի:

Արդ ամենայն իակ ուրիք, ուր կարևոր իցէ Ճարտարախօսին տալ Ճանաչել ղոք, իրաւունք են նմա նկարագրելոյ զնա. և որչափ Ճշդիւն իցէ կենդանագիրն և խնդրելի և կարևոր գտանին, այնչափ է իսկաբանչ գեղեցկութիւն նորա. զի գեղ՝ի Ճարտարանութեան ոչ այլ ինչ է, բայց զուգաւորութիւն բարութեան ընդ զօրութեան հնարից:

Որպիսի և իցէ պատմութեան սեփականագոյն և ընդհանագոյն թուի այս եղանակ ծայրագաղ առնելոյ զնախագրերի և Ճշդիւն գծագրելոյ: Այլ և անդ իսկ՝ի պատմութեան, եթէ կարի յաՃախեացին կենդանագիրքը, լինին տաղտկալի: Եթէ իցեն Ճշդիւն, անզուգական, կարևոր խնացուած գործոյն և գիմաց՝ զոր բերեն անձինք, ազդութեամբն և զօրութեամբ, Ճշդութեամբն և նախատալին յատուկ գծիւք կազմեալ, ներգործեն՝ի մեզ զապաւորութիւն լուսափայլ Ճշմարտութեան՝ որ քաղ՝ի բաց ծաւալել զՀաւագայթս իւր: Այլ կենդանագիրը ուրուք առանձին՝ որոյ նկարագիրը բարուց չունի ինչ ազդեցութիւն, չէ ինչ խնդրելի. և՝ի զարդ աւելորդ մտանել՝ի պատմութիւն, և թէ չատ՝ զբօսուցանել զընդունայն հետաքրքրութիւն, անարժան խակասէն խմասանոյ և լրջամիտ ընթերցողին: Ապա ուրեմն միոյն կանոն լինի նկարագրել և եթէ անձինս, որ բարուքն և պաշտամունքը և կցորդութեամբն ընդ գործս կարևորս կարեն ցանկալի առնել միւսոցն զՀանաչութիւն և զանութիւն այնոցիկ ըստ նախատալին: Վասն որոյ գԺողովրդական և ցանկալի են կենդանագիրքը:

Պղատոնիքոս կցորդեաց զերկոսին. այլ չառնել անդ զզուգակշիռս անհրաժեշտ կարևոր է՝ի ներքս ածել զամենայն համեմատութիւն: Սակայն հատարած պետութեան համ կենայ ուրուք եթէ սուղ ինչ վերջաբան չուշ ածցէ ընդհանուր հանգամանս նորա, և չանգիման առնիցէ զանձինն տեսս չորս նկարագրին միանգամայն, զչէլեղմունս, ընդհակակիրս, զայլ և այլ կամ՝ զհակառակ հանգամանս՝ զորս գիտայ երևեցուցեալ իցէ՝ի նոսա, չիք երկբայել զի լեցի այն՝ի քաջութիւն և՝ի գեղեցկութիւն միջ: Այսպիսի է՝ի գիրս Տակիտոսի կենդանագիրը Տիբերեայ՝ի կատարած ինքնակալութեան, զօրութեան և պայծառութեան:

Դիւրին է՝ի միտ առնուլ թէ ընդէր յառանձին չիշատակագրս կենդանագիրք յաՃախին բնաւորապէս քան՝ի պատմութեան: Զի՝ի սմա չանկալի և եթէ տեսանել զայր հատարակաց. և դեպք ցուցանեն զոյն. իսկ չիշատակագիրք չանգիման առնեն զայր նոսկական և հարևանցի զհատարակայ իրօք անցանեն:

Կարդինալն Ռեց՝ի չիշատակագիրս իւր ընդ քողով չանգիման առնէ զտեսարան Ֆրոնտեանց. իսկ՝ի կենդանագիրն, յորս գծագրէ զչքնաւոր անձինս գիւցազնախառն կատակերգութեան այնորիկ, չանգիման առնէ մեզ չատ չախ զոր ինչ և ոչ գործք նոցա ցուցանեն:

Այսր ազգակս ուր ուրեք՝ի պատմութեան տատանել ազդեցութիւն է ուրուք քան երևոյթ, և որ տատանել գոյ ծէ ներքոյ քան արտաքոյ, ցանկալի է նկարագրել խնամով զնկարքն զոյն գաղանածածուկ ներգործիչ անցիցն պատմէլոյ: Վասն որոյ չիք կարևորագոյն ինչ և տատանել ցանկալի՝ի վէպս ինքնակալութեանն Տիբերեայ քան զկենդանագիրս Սէանոսի:

Ի Ճարտարախօս պատմագիրս, որպիսիք էին հինք զրեթէ առ հատարակ, և տատանաչեայ Թուկիդիդէս, Քսենոփոն, Սալուստիոս, Տիտոս Լիվիոս և Տակիտոս, եղանակ նկարագրութեան ոչ ինչ ընդհատ է՝ի Ճարտարանականէն, բայց միայն խոտագոյն Ճշդութեամբ և Ճշմարտութեամբ: Յուցիկ զայս օրինակօք՝ որ ամրագոյն զգամատութիւն տեսութեանցս:

Սալուստիոս նկարագրէ զԿատիլինա.—Լ. Կատիլինա (1).

(1) Տես յընթացս նկարագրութեանցս.

՝ի նկարագրէ ասաի և ՝ի կեսարուն Թուէ ձևակերպեալ Պօսիւէի զկենդանագիրը Ֆրոմուէլի. ուր եղանակ Ճարտասանութեան բարձրագոյն քան զպատմութեան է:

Տես անդր էս. Առն ուրուն հանգիստեալ, և այլն: Բայց զանազանութիւնս այս զգալի ևս է ՝ի կենդանագրին, զոր Կիկերոն տայ զԿատիլինայ, յարդարացուցանելն զԿելտոսի հուսակցութիւն ընդ գաւազրծին. պարսաւ մեծ հերքողական: Զհատուածն՝ Իր Կատիլինայ՝ պարտ է բաղդատել ընդ Սալուստեան. և է տեսանել յերկաքանչիւրում օրինակ հատարերութեան նկարագրական արուեստի՝ որպէս Ճարտարախօս և որպէս պատմագիր:

Այլ որոց ոչն գիտեցեն զբարբառ Կիկերոնի և զՍալուստեայ, առաջի առնեմք ՝ի մերում զերկաքանչիւր աղդի նկարագրութեան ընտիր օրինակ: Կարգինալն Ռեց ՝ի յիշատակագիրս իւր յօրինէ ըստ այսմ օրինակի զկենդանագիրս մեծին Ֆոնտէի և զԹիւրենի.

«Իշխանն Ֆոնտէ ծնեալ զօրավար, և այլն. Ահա քեզ պատմագիր:

«Թիւրենի էր ՝ի մանկութենէ, և այլն. Ահա քեզ Ճարտասանախօս:

«Տեսաւ ուրեք երբեք յարս երկուս»: Եւ չիք ինչ ակնառիկ հարևանցի ընթերցողաց քան զկենդանագիրս երեսակայութեան. և չիք ինչ որ առաւել ՝ի յայս ածէ զպատմութեն մատենագրի առաջի դիտաւորի և խոհականի առն: Այսոցիկ ընթեռնուցի զանց և առաջի աչաց ունելոյ զնախադասին, զանազանէ խոհական ընթերցող զկենդանագիրն նմանատիպ ՝ի տարատամ և ՝ի մատացածին կենդանագրէ:

ՓԱՐՍՈՆԹԵԼ. Տարերք թանասիրութեան. Գիրք. Դ:

ՑՈՑՆՔ

Յոյնք հանճարեղք ՝ի բնէ և քաջասիրտք՝ յառաջ քան զմանակաւ հրահանգեցան ՝ի Թագաւորաց և ՝ի գաղթելոցն Եգիպտոսէ, որք հատուածի ազգաւ սիւռեալ ՝ի զանազան կողմանս Ելլադայ՝ ծաւալեցին շուրջանակի զգեղեցիկ կարգս կենցաղականս յաշխարհին իւրեանց. նոքա զկրթանս մարմնոյ ուսուցին նոցա, և զգօտեկռիւս, զհեսի ընթացս, զձիընթացս, զկառարշաւս՝ այլովքն հանդերձ. զորս ևս ազնիւեալ կատարեցին գեղապանծ պատկաւն յօսսով յոլիմպիական տաղարիղին:

Օգտակարն քան զամենայն զոր ուսուցին նոցա եգիպտացիք՝ էր հլուԹեամբ հպատակել օրինաց, որպէս և զնարդ մատակարարեսցէ նոցա յօգուտ աշխարհին: Զեին երբէք զսոսկականս ոմանս՝ որ զանձանց միայն խորհիցեն. և յայնժամ զհասարակաց աղետից զգալ առնուն՝ յորժամ ինքեանն համբէն ՝ի նոյն ըմբռնիցին, կամ յորժամ ընդ այլ ազգս ամբոխեսցի և խաղաղութիւն տան նոցա: Քաջ ծանեան Ցոյնք մատն համարել զանձինս և զտոհմ իւրեանց մեծի մարմնոյ Թագաւորութեանն: Ի սոյն խնամս մնուցանէին հարք զորդիս. և անդստին ՝ի խանձարրոյ ուսանէր մանկտին երբէ՛ ՝ի մայր հասարակաց հայել ՝ի հայրենիս, ոտնակոխ առաւել քան ծնողացն իւրեանց երախտապարտ զանձինս համարելին: Քաղաքականութիւնն առ Ցոյնս ոչ ցուցանէր զբարեմտին միայն և զառ միմեանս պատուասիրութիւն՝ որով ընտելանայր եմք. այլ այր քաղաքացին կարդային նոքա զառ որեարն, որ զանձինս կցորդակից ասէին պատուհասին, և անխափան առաջնորդութեան օրինացն անսային, և յօգուտ հասարակաց ՃգնեԷին, զրկեալ և ոչ զոք: Ի միտս ամենայն յոյն մարդոյ զայս խորհուրդ անկեցին՝ որ ՝ի նախնումն կացին նոցա Թագաւորք ՝ի զանազան քաղաքս, որպէս Մինովս, Կեկրոփս, Թեսէոս, Կոդրոս, Տիմենոս Կրեսփոնտ, Եւրիսթենէս, Պատրոկլ, և

այլ նմանիք նոցին: Այմենեքեան սոքա սիրելի եղեն Ժողովըրդեանն՝ ոչ մարդահաճելով, այլ յօգուտ նոցա ճգնեալ միշտ ի հաստատուԹիւն իշխանուԹեան օրինաց:

ՊՈՍԻԻՆ. խօսք ի վեպս ազգաց:

ԱՓԵՆԱՅԻՔ

Մերթ ի կերպարանս ծերոյ երևի ի վէպս դիւրախաբ, և մերթ ի դէմս մանկան ազայոյ՝ զոր պարտ է զրգռել հանապազ. երբեք երբեք պայծառացեալ յիմաստս մեծախոհուԹեան, ծայրայեղ ի սէր զբօսանաց և ազատուԹեան, հանգստուԹեան և փառաց. զմայլեալ ի գովեստիս իւր, և հաճ ընդ իրաւացի կշտամբանս. արագամիտ ի հասու լինել առաջարկուԹեան խորհրդոց. կարճամիտ ի տեղեկանալ ստուգիւ հանգամանաց նորա և ի կանխատես լինել ելից. ահարիւռ աւազանուոյն անդէն ի ներել ոխերիմ թշնամեաց իւրոց. ի սրամտուԹենէ ի զթուԹիւն, ի վհատուԹենէ ի ատահակուԹիւն, և յանիրաւուԹենէ ի արջանս իւրև զիպելոյն դիւրայեղ. և առաւել քան զամենայն յողդողդ և ԹեԹևամիտ, մինչև ի կարևոր իրս և ի ծանուցանս և յանհնարինս խոկ՝ բառ մի վազեալ ընդ շրԹուն կամ բան ինչ ձարտար, զոյն տեսիլ կամ պատահար, բայց միայն յեզակարծ, բաւական է ի փարատել զամենայն երկիւղ ի նմանէ, և ի մոռացօնս ածել զամենայն չահ օգտի:

ՊԱՐԹԵԼԸՄԻ. Ոչիևոր. Ա. Ճևաբարսևայ:

ՑՈՅՆՔ ԵՒ ՀՈՌՎՄԱՑՆԵՑԻՔ

Այլ արդարև բաղդն է իշխան ամենայնի, և ըստ հաճոյս քան ըստ իրաւանց փայլէ և մեծանի: Աթենացւոցն արուեԹիւնք, որպէս ես կարծեմ, մեծամեծք էին ապաքէն և չքեղք, այլ նուազ քան զհռչակ համբաւոյն. այլ քանզի ականաւոր մատենագրաց հանճարք կացին առ նոսա, ընդ սիեզերս համօրէն մեծապէս հռչակեցան գործք նոցին:

Այսպէս այնչափ ինչ մեծ գրեցան արուեԹիւնք գործելեացն, որքան հանճարք զարմանալիք կարացին բարեբանել զայնս: Իսկ Ժողովրդեան Հռոմայ չէղև նոյն յոլովուԹիւն վիպագրաց. քանզի խոհականագոյնն ի նոցանէ գործօն ևս գտանէր, և ոչ ոք պճնաճար առանց ուժոյ ի կիր առնոյր. և ամենայն ոք լաւագոյն զգործելն քան զվասել համարէր, և սիրելի զարուեԹիւնս իւր յայլոց տեսանել գովեաւ, քան Թէ ինքն զայլոցն պատմել:

Այսր աղագաւ առ անկն և ի բանաւոր վարք անըստգիւտք պաշտէին: ՄիաբանուԹիւն համաշունչ, ազահուԹիւն և ոչ միւրուեաւքն և պատշաճ ի ընդ քան Թէ օրինաց բարգաւաճէին: Զկարգ և զկիս և զպատրանս ընդ Թըշնամիս վարէին. քաղաքացւոյ ընդ քաղաքացի զառաքինուԹեանց էր մրցումն: Ի պաշտամունս դիւ մեծափարԹամք, ի տան տակաւապէտք, ընդ բարեկամս հաւատարիմք էին:

Այսքիւք կրկին հնարիւք, ասեմ իսկ քաջուԹեամբ ի մարտի և ի յաջողել խաղաղուԹեան արդարուԹեամբ, և անճանց և իրաց աշխարհին հոգ ինամոյ տանէին:

Եւ առաջելոցս հաւատացիք մեծամեծք, զի բաղում անդամ պատուհասակոծ ի պատերազմի արարին զպարուեցեալս ընդդէմ հրամանաց ի կռիւ, և զդանդաղեալս ի կոչ փողոյն մեկնել ի մարտ, քան որոց զբօշն լքանել կամ հալածականք Թիկնադարձոյց լինել իշխեալ էր: Իսկ ի խաղաղուԹեան՝ բարեբարուԹեամբ քան ահարկու-

թեամբ զնչհանուրթիւն վարէին. և անիրաւեալք՝ լաւագոյն ընտրէին ներողամիտ լինել՝ քան վրէժխնդիր:

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ:

ՆԿԱՐԱԳԻՐ ԱԶԳԻՆ ՍՈՒԵՒԱՑ

Ազգ Սուեւացի մեծ է յոյժ, և քան զբնաւ զերմանացիս գոռ պատերազմող: Ահանդէս ունէր նոցա մարզս հարիւր, յորոց ամէ ամի հազար սպառազէնս՝ի միջէ միջէ հանեն արտաքս՝ ի սահմանաց իւրեանց՝ի պատերազմ: Ակլէք՝ի տան ձնան, և վասն իւրեանց և վասն նոցա մշակեն զերկիրն: Սոքա գարձեալ փոխանակաւ՝ի ընուլ ամին զինուորին, և նոքա՝ի տան կան: Որով ոչ հողագործութիւն և ոչ արուեստ և պատերազմավարձ հմտութիւն մարտի խափանի, այլ առանձին և սեփական զաւուցեալ ինչ ոչ են նոցա անդք. և չէ օրէն՝ քան զառաջի մի առաւել կալ ձեալ՝ի միւսմ տեղւոջ՝ի բնակութիւն. և ոչ շատ ինչ ցորենով, այլ մանաւանդ կաթամբ և խաշամբ կեան, և յաճախ յորսորդութիւն պարապեն. որ պարենիցն բնութեամբ և հանապազորդ կրթութեամբն և ազատութեամբ կենացն, — զի՝ի մանկութենէ ոչ՝ի գործ ինչ և ոչ յուսումն երթեք բերեալ պարապ՝ չառնեն ինչ ամենևին յակամայս, — և զոյժն աճեցուցանէ, և անարի յաղթանդամս և վնեխարիս գործէ: Եւ յայն հասին սովորութեամբն, զի՝ի ցրտաւառոյց անգամ վայրս ոչ ինչ այլ քան զնաչկեակս ունին ձորձս, — յորոց՝ի կարի իմն փոքրկութենէ՝ մերկ է մեծ մասն մարմնոցն, — և լոգանան՝ի գետս:

Վաճառականաց գոյ առ նոսա մուտս, առաւել՝ի վաճառել նոցա զկապուտս պատերազմացն, քան թէ առ՝ի տալ ինչ բերել առ ինքեանս՝ի ցանկալեաց: Եւս և գրաստս՝ զորս յոյժ սիրէ Գալլիա և մեծագնի սահանայ, գերմանացիս ոչ վարեն եկամուտս. այլ որ բուն անդրէնածինքն են յոռւիք և ոգեղք, զնոսա ժիրս և տոկունս օր ըստ օրէ կրթանօքն յարգարեն: Ի հեծելազօր պատերազմունս վազեն ասէպ՝ի ձիոցն և հետ կռուին, և զերիվարսն անդէն՝ի նմին տեղւոջ սպասել ուսուցանեն, յորս և երագս գառնան ելանեն՝ի պահանջել պէտոյիցն: Եւ՝ի բարս նոցա չինչ անարգ և վատ քան՝ի թամբս հեծանել. վասն որոյ թէպէտ և սակաւաւորք լինեն՝ իշևեն ընդ ամենայն ամբոխ թամբեալ առն և ձիոյ՝ի կռիւ մատչել: Գինի ամենևին ոչ թողուն մուծանել առ նոսա, զի նուաւա համարին լուծանել մարդկան՝ի ժրութենէ և մեղկել:

Մեծ պարծանս համարին աշխարհին իւրեանց՝ անդուսա՝ի սահմանաց իւրեանց ցմեծ վայրս ամայի լինել երկրին. զի յայս ինն այնպէս առնէ՝ թէ քաղաք ինդամ բազմաթիւք ոչ ունին հանդուրժել բնակութեան իւրեանց:

ՑՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ. Յիշատակարանէն:

ՕԳՈՍՏՈՍ ԵՒ ԿԻՆՆԱ

Դիւցազնն Օգոստոս՝ եթէ՝ի միահեծան իշխանութենէն առնուցու ոք զնա կշռել՝ թագաւոր հեզաբարոյ էր, բայց ընդ իշխանակիցսն առաւ խաղացոյց՝ի Հասարակապետութեան: Այն ինչ զութաւատնամենիւքն անցեալ էր, զղաչցն՝ի Ծոցին առ բարեկամն Թագոյց, զՄ. Անտոնիոս հիւպատ գաւով՝ի կողն եհար և բազմոց տարագրութեան եղև գործակից: Այլ զքառատնամենիւքն անցեալ՝ մինչ դեգերէրն՝ի Գալլիա՝ ազդ եղև նմա թէ Լ. Կիննա այր խօթամիտ՝ դարանակալ լինի քեզ. և որ գուշակն եղև՝ մի՝ի գաւակցացն էր, և զտեղն գաւոյն և զժամանակն և զորպէսն ելոյց Ճշգրիտ: Յայնժամ խորհեցաւ վրէժ առնուլ՝ի նմանէ, հրաման եառ՝ի խորհուրդ կոչել

զբարեկամս: Տաղնապեցաւ զգիչերն ոմքոյն զմեռաւ ածեալ
զի գառապարտելոյ էր զաղնուատոհմ երիտասարդն՝ զբեռ-
որդի Կն. Պոմպէոսի՝ զանպարան այլով մասամբ: Եւ ա-
հա չկարէը սպանանել զայր մի՝ որ յընթերս ընդ Մ. Ան-
տոնինոսի զառարագրուեթեանն Թեղադրեալ էր զգատակնիքն:
Յոգւոց հաներ սաէպ, բարբառ արձակէը պէսպէս և մի-
մեանց հակառակս: Իսկ զնաքդ. Թողացուցիչ զդաւաճանն
կենաց իմոց գնալ աներկեան, և ես՝ի ծուխս եղէց. և միեթ
ոչ լուծցէ զվրէժ նա որ զայս պլուխ՝ զնդրեալն վայրա-
պար յայնչափ քաղաքական կռիւս, և զպահեալն ողջա-
դամ յայնչափ ծովային և ցամաքային պատերազմունս, ՚ի
ծագել արդ խաղաղութեանն ընդ ծով և ընդ ցամաք, ՚ի
մահ եգեալ է ոչ եթէ սպանանել այլ զոհել. քանզի ՚ի
ժամ զոհագործութեան նորա ունէը ՚ի վերայ յարձակիլ:
Թարձեալ՝ չես լուելոյ պահ մի, մեծ ևս ձայնիւ բարբա-
ռոյ՝ ընդ անձին ոգորէը բարկութեամբ քան ընդ Կիննայի:
Զի՛ ևս կեաս, եթէ կորուսա քո օգտէ այնչափ բազմու-
թեան, և վախճան եղիցի պատուհասիդ, և արեան ձեռա-
գեաց: Գլուխ իմ նշաւակ եգեալ կայ աղնուատոհմիկ պա-
տանեկաց որք սրէն զսուսերս իւրեանց ՚ի վերայ իմ: Ոչ
այնչափ մեծագին են կեանք՝ մինչ առ ՚ի չկորուսանելոյ լինձ
զայն, այնչափ բազմութեան հարկ եղէ կորնչել: Անդ ու-
րեմն յողբ մատեաւ առ նա կինն իւր Լիւիա և ասէ. Եթէ
հաճոյ եղէ քեզ խորհուրդ կանացի, արա ըստ բժշկացն օ-
րինակի, որք յոչն օգտել սովորական դեղոյ՝ զկաուակա-
սըն փորձեն: Մինչև ցարդ խստութեամբ ինչ ոչ շահե-
ցար. զԱլուդիեն յաջորդեաց Լեպիդոս. Լեպիդոսի՝ Մու-
րենա. Մուրենայի՝ Կեպիոն և Կեպիոնի՝ Իգնատիոս, զի
զայսքան լսեցից, որոց ամէն մեծ էր յայնչափն յանդգնել.
փորձ փորձեա այժմ զդեռութեան, թէ որպէս յաջողես-
ցէ. ներեա Կիննայի. ըմբռնեցաւ ՚ի յանցանն՝ այսուհե-
տև չկարէ սանանել ինչ քեզ: Զուարթացաւ յոգի իւր,
զի եգեալ փաստաբան ինքնամատոյց. ընդոհս կալաւ կինոջն
և անդէն վաղվաղակի արձակեաւ զժողով բարեկամացն,

զկիննա միայն առ ինքն կոչեաց. և հանեալ զամենեսին ՚ի
սենեկէ անտի, և հրաման տուեալ աթոռ արկանել կին-
նայի, խօսել սկսաւ և ասէ. Զայս ինչ ՚ի սկզբանէ ինդրեմ
՚ի քէն. զխօսս իմ մի ընդմիջեսցես և յընթացս բանից իմոց
մի բողոք արկանիցես. տացի քեզ ժամանակ խօսելոյ հա-
մարձակ: Զքեզ, Կիննա, ՚ի ժամանակին՝ յորում գտի ՚ի
բանակի անդ Թշնամեաց, զքեզ ասեմ՝ ոչ զեղեալդ ևեթ,
այլ և զծնեալդ լինձ Թշնամի, ապրեցուցի. և զկայրենի քո
ժառանգութիւն բովանդակ քեզ շնորհեցի. և յաւուր
յայսմիկ այնչափ բարեբաղդ ես և այնչափ ճոխ, մինչ զի
յաղթեցելդդ յաղթականքն նախանձին: Ինդրութիւն քեզ
եառ ըստ քումդ ինդրոյ, զանց զայլովք արարեալ բաղմօք՝
որոց ծնողք զինուորակիցք իմ էին: Արդ յետ այսչափ առ-
քեզ երախտեացս՝ սպանանել զիս եգեր ՚ի մահ: Եւ ՚ի գո-
նէլ նորա յայս բան. Հեռի է յինէն խելագարութիւն այդ-
պիսի. ՚ի վերայ էած Օգոստոս. Կայ ՚ի գաղնդ, Կիննա,
քանզի յանձն առեր չընդմիջել զբանս իմ. Սպանանել,
ասեմ, զիս խորհիս: Եւ ած ևս՝ ՚ի մէջ զաեղին, զընկերսն,
զօրն, զկարգ դաւադրութեանն, և զայրն՝ որում ապըս-
պարեալ էր սուրն: Եւ իբրև եաես՝ զի զերկիլը նշմարէր, և
լուռ ևեթ կայր՝ ոչ ըստ հարկի դաշանցն, այլ առ մտացն
խղճի, ասէ դարձեալ. Եւ որո՞վ հոգւով գործես զայդ՝ զի
դո՛ւ արդեօք ինքնակալեսցես. օն և օն ասեմ, եղիւկ ժո-
ղովրդեանն հռովմէականի, եթէ բաց յինէն չիցէ այլ ինչ
խափան առ ՚ի թագաւորելոյ քեզ: Զես բաւական և տան
քումդ պաշտպանել. դեռ ևս իսկ ընդ առն միոյ ազատա-
գրելոյ յառանձինն գաս մտեալ՝ յաղթեցար: Այդպէս դիւ-
րին քան զամենայն ինչ համարիցի ընդդէմ Կայսեր խիզա-
խել: Ներեալ քեզ՝ եթէ ես միայն իցեմ դիմամարտ յոս-
ոց քո. այլ միեթ ասնիցէին քեզ Պաւլոս և Փաւիոս Մաք-
սիմոս, և Կոսսեանք և Սերուիլեանք և այնչափ բազմու-
թիւն աւագ արանց, որք ոչ ընդունայն անուամբք պան-
ծան, այլ որ պատկերօքն իւրեանց էն չքեղապանծք:
Բայց զի մի զառուարագոյն մասն մատենիս գրաւեսցեն

բանք նորա, Թէ երկրորդեցից բովանդակ, քանզի ընդ ժամն երիցս և աւելի խօսեցաւ, յերկարել կամեցեալ զայս պատիժ, որով և՛ ունէր շատանալ, ասէ ապա. Ահաւասիկ կեանս քեզ, կինիս, ընդհեմ վերատին, երբեմն Թշնամւոյ, այժմ գաւազանի և սիրասպանի: Յայսմ օրէ սկիզբն եղեալ բարեկամութեան ընդ իս և ընդ քեզ. և այս պայքար կացցէ՛ի մէջ Թէ ես արդեօք հաւատարմագոյն գտայ՛ի ընդհեղ քեզ զկեանգ, Թէ դու երախտապարտ ինձ գոլով: Յետ այնորիկ կամակորութեամբ ետ նմա հիւպատոսութիւն. ընդ՝ զոր ոչն համարձակեր ինդրել. և եղև նմա այնուհետեւ հաւատարիմ բարեկամ, և միայնակ ժառանգորդ. և ոչ մի ինչ գաւ գործեցաւ այնուհետեւ՛ի նմանէ:

ՍԵՆԵԿԱՑ. ՅՂ. Գրոբևան. առ Մարկի:

ԿԱՏԻԼԻՆԱ

Կատիլինա, այր ազնուազգի, կորովամիտ և ուշիղ, այլ ժանտ և չարաբարոյ. որում անգամին՛ի պատանեկութենէ պատերազմ համազգեաց, սպանութիւնք, յափըշտակութիւնք և աւանդին գժտութիւնք ախորժելի էին. և յայնս զմանկութիւն իւր կատարեաց: Մարմին ժուժկալ, քաղցոյ և սառամանեաց, և աչնութիւն՛ի վեր քան զհաւատս. սիրտ յանդուգն, նենգաւոր, յեղյեղուկ, կեղծաւոր և խորամանկ. չարին յայլոց իսս, իւրոցն վատնիչ, ախտամոլ՛ի ցանկութիւնս. առաւելեալ՛ի ճարտարիօսութիւն, նիազ յիմատուութենէ, սիրտ լոյնատարր, յանչափս և յանհնարինս և՛ի գեր՛ի վերոյս միշտ նկըրտեալ:

Ցետ տիրապետութեան Ղուկիոսի Սիւղայ մեծատենչ ըղձիւք մոլեր սա՝ նուաճել ընդ իւրև զհասարակաց պետութիւն. և յամենայն ինչ անխոիր լինէր ձեռնարկէց՝ միայն զի իշխանութեան հասանել կարասցէ:

Եւ էս քան զևս երթայր և վարանէր մտայղղ վայրագն այն՛ի չքաւորութենէ և՛ի խղճէ եղեռանցն, որոց երկաքանչիւր յաճախեալ էին չարեաքն՝ զորոց՛ի վեր անդր ասացաք: Հանդերձ սոքիմբք՛ի նոյն զնա գրգռէին և ապականեալ բարք քաղաքացւոցն, զորս կրկին ախտք չարաչարք և ներհականք տպդնապէին՝ զանառակ շնայտութիւն ասեմ և զագահութիւն..... Քանզի անձն նորա ժանտ, աստուածոց և մարդկան ատելի, ոչ չարքմիւն և ոչ՛ի քուն հանդչել կարէր. այնպէս խայթ խղճի կեղեքէր զմիտս նորա: Դէմք մեռելատիպ, աչք սրսռորեալ, գնացք մերթ շտապ և մերթ յամրաքայլ, և ապշութիւն իւն յերեսս նորա և՛ի կերպարանս նկարեալ երևէր:

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ:

ՍԻՂՂԱ

Սիղղա Սիղղա էր յազգէ պատրիկաց ազնուական, այլ առ յուղութեան նախնեացն շինչափառ գոգաս տոհմ նորա: Ի յոյն և՛ի լատին դպրութիւնս հաւատարապէս ներհուն. մեծահոգի, սիրող գրգանաց՝ այլ առաւել և փառաց. պարապեալ՛ի զեղծութիւն, այլ ոչ բնաւ առ հեշտութեան՛ի կարեւորաց արգելեալ. բայց միայն պարկեշտագոյնս մարթ էր նմա գնալ ընդ ամենայնի: Էր նա պերճախօս, խորագէտ, գիւրընտեալ, և ճարտարութեամբն՛ի կեղծել չհաւատալն: Անատաձիր՛ի բաշխս, մանաւանդ դրամոց. և թէպէտ երջանկագոյն քան զամենայն ոք էր յառաջ քան զքաղաքական յաղթութիւն, այլ ոչ երբեք գեր՛ի վերոյ քան զքաջութիւն նորա դառ բաղդն՝ մինչև բազմոց յերկբայս լինել՝ քաջագո՞յն արդեօք թէ բախտաղդագոյն գառ նա:

Արդ Սիղղա եկեալ յԱփրիկէ ՚ի բանակն Մարիոսի հեծելազօրաց, անհմուտն և անփորձ մարտի, ՚ի սուղ ժամանակի յաջողագոյն քան զամենեսեան գտաներ: Պարձեալ ելն և քաղցրութեամբ վարեր ընդ զօրականին, առատաձեռներ խնդրողաց, և բազմաց ևս ինքնայօժար՝ գժկամութեամբ ընդուներ բարերարութիւնս, և փութայր ՚ի հատուցումն նոցին առաւել քան պարտուց արծաթոյ: Իսկ ինքն ոչ պահանջէր փոխարէնս բարեացն, այլ գուն գործեր առաւելագոյնս իւր շնորհապարտս կացուցանել: Ընդ նուաստագոյնս զինքեանէր խօսել զկարևորաց և զբօսալեաց. ՚ի վաստակս, ՚ի չոլ և ՚ի պահ կանխեր ընդ նոսա. և ոչ երբեք որպէս փառամոլութեան է սովորութիւն՝ զբդեղնէն կամ զայլմէ ումեքէ չարախօսեր. բայց միայն ընդ իւրեր ումեք խորհրդով կամ քաջութեամբ գերազանցել զնա, և քան զբազումս վեհագոյն գտաներ. որովք ընդ հուպ Մարիոսի և զօրականին սիրելի եղև:

ՆՈՑՆ:

ՋՈՒԳԱԿԵՑՈՒ ԿԵՍԱՐՈՒ ԵՒ ԿԱՑՈՆԻ

Արդ զուգահաւասարք գոգցես սոքա յաշխուժականութեան, ՚ի տիս և ՚ի պերճախօսութեան, նոյն և ՚ի մեծանձնութեան, հանդիտապատիս և ՚ի փառս. սակայն այլ և այլ ճանապարհաւ: Կեսար բարերարութեամբքն և մեծագործութեամբ երևելի. արդարակորով կենօքն Կատոն: Նա գթութեամբ և հեզութեամբ պանծալի, սա անաչառ խրատութեամբ յաւելեալ զանձին պատիւ: Կեսար սիրեալ, Կատոն ՃՂդելով փառս ստացեալ: Մին ապաւէն չուառաց, միւսն թախն կոշկռձէ գլխոց անօրինաց: Նորայն ներող քաղցրութիւն, և սորայս անվկանդ

հաստատութիւն պանծալի լեալ: Հակիրճ ասել, Կեսար կերեւ ՚ի վաստակս և ՚ի աչունութիւն, խնամոտ զգործոց բարեկամաց և զիւրոցն անփոյթ, առատաբաշխ յարժանաւորս, ցանկայող մեծի իշխանութեան, զօրավարութեան և նորանոր պատերազմաց՝ ուր չքեղ փայլէ առաքինութիւն. իսկ Կատոն սիրող հանգստին և վայելուչ կարգաց, այլ յոյժ առաւելեալ ՚ի խստութեան՝ ոչ ընդ ճոխս ճոխութեամբ, ոչ ընդ խաղմարարս կռուով՝ այլ ընդ արքաքաղաքականութեամբ, առաքինութեամբ, ընդ համեստս՝ ցածութեամբ, ընդ անմեղս՝ ժուժկալութեամբ մրցեր. զլինելն լաւաբարոյ քան զերևել՝ նախամեծար ընտրեր. որչափ չէրն փառախնդիր, նոյնչափ և զհետ նորա յորդեին փառք:

ՆՈՑՆ:

ՊՈՄՊԷՈՍ

Պոմպէոս՝ գերաշխարհիկ լաւութեամբ, անսագիտա ուղղութեամբ, աննիւազ ՚ի ճարտարախօսութենէ. ցանկայող փառաց իշխանութեան, հրաւիրանաւ և ոչ հետամտութեամբ. զօրավար ամենահմուտ, քաղաքացի հնու ՚ի խաղաղութեան, եթէ ոչ գոյր կասկած հաւասարելոյ ուրուք նմա: Բարեկամ անյողդողդ, ներող թշնամանաց, հաւատարիմ ՚ի հաշտութիւն, և գիւրահաւան յիրաւախորհրդութիւն: Ոչ երբեք, կամ գոն ուրեք բռնացեալ իշխանութեամբն. և որ ՚ի բնաւից իսկ ախորժ գտաներ աղաս, եթէ ոչ ընդ մոլեկանագոյն ախտս համարիցի ՚ի սիրեալ աղաս քաղաքի՝ ուր հաւատարութիւն է ամենայն քաղաքացւոց՝ չկամել զոք իշխանակից իւր և համազօր:

Եղև կաթոգին առ իշխանութիւն, զի մատուսցի նմա այն առ ՚ի պատիւ, և ոչ թէ ինքնին յափշտակեսցէ զայն:

Ի պատերազմի՝ զօրավար քաջափորձ՝ ի խաղաղութեան՝ քաղաքացի ամենայնիւ հաւատա, միայն թէ ոչ կայցէ նմա ուսուեալք երկիւղ՝ ունելոյ զոք հաւատարոյզ: Ի բարեկամութեան անկեղծ. լընդունելութեան արհամարհանաց ոչ անողոքելի. յանդրէն հաշտութեան ամենայն իրաք հաւատարիմ՝ ի լինել առ նա հաստուցման՝ կարի գիւրալուր: Ցիշանութեան իւրում ոչ երբեք՝ կամ ուր ուրեմն վրեալ անչափութեամբ: Գոգցես յամենայն մոլութեանց անմասն, սակայն թէ ոչ ընդ ևս մեծագոյնս գրեսցի, ի քաղաքի որ ազատ է և ազգաց տիրուհի, յորում և ամենայն քաղաքացիք իրաւամբք են հաւասար, գժգոհութիւնն ի տեսանել զոք իւր զուգապատիւ:

ՎԵԼԼԵՅՈՍ:

ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ ՅՈՒԴՈՒԲԹԱՑ

Իբրև յարբուն եհաս Յուդուբթ, արութեամբ մարտնոյ, վայելչութեամբ կերպարանաց, և մանաւանդ զօրութեամբ հանճարոյն մեծագէս փայլեալ՝ ոչ ի շուայտութիւն և՝ ի դատարկութիւն անձեռատուր դառնէր, այլ ըստ բարուց ազգին՝ ի հեծելութիւն, յաղեղնաւորութիւն և՝ ի ձիարշաւս ընդ հասակակիցս իւր մրցէր. և թէպէտ զամենեսեան գերազանցէր փառօք, սակայն ամենեցուն սիրելի էր: Դարձեալ և յաճախ յորս հեծանէր, զաւիւծունս և զայլ գազանս առաջին կամ ընդ առաջինս վիրաւորէր. բազմութ գործէր առանց պարծելոյ:.... Յուդուբթ, այր ժիր և խորագէտ, խելամուտ լեալ ընաւորութեան Պ. Սկիպիոնի՝ որ զօրավարէրն յայնժամ հռոմայեցւոց, և՝ ի վերայ հասեալ գնացից թշնամեացն, մեծաջան և մեծավաստակ, հլու յամենայնի և դիմագրաւ՝ ի վտանգս՝ ի սուղ ժամանակի յայն փառաւորութիւն եհաս, մինչև մերոցն սիրելի և հռոմանատացւոց ահընկէց գոլ: Եւ որ արդարև գժուարինն է յոյժ, քաջ՝ ի պատերազմի և հանճարեղ՝ ի խորհուրդս էր. յորոց առաջինն՝ ի քաջութենէ՝ ի յանդգնութիւն, և երկրորդն՝ ի զգուշութենէ յերկիւղ զբազում սովոր է արկանել: Վասն այսորիկ Սկիպիոն՝ ի բազում գործս զՅուդուբթ յառաջ վարէր, ընդ բարեկամն ինա ունէր, և օր ըստ օրէ յաւելոյր ընդ նմա՝ ի մտերմութիւն. զի բանք նորա և գործք ոչ բնաւ վրիպէին: Սաքօք հանգերձ և մտացն ազատականութեամբ և արագութեամբ հանճարոյն զբազումս՝ ի հռոմայեցւոց սիգով բարեկամութեան յինքն յանկուցանէր:

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ. Յուգուրթ:

ՄԱՐԻՈՍ

Ի բազմաց հետէ անէնչ հիւպատոսութեան ստացեալ ինա. և առ այս՝ բաց յաղնուականութենէն ոչ ինչ պակասէր նմա. զի էր աշխատակ, արդարակորով, քաջահմուտ՝ ի զինուորութեան, գոռ՝ ի մարտի, սակաւապետ առանձին, անվհատ՝ ի գրգռանաց և՝ ի ձախորութեանց, փառաց ևւեթ ցանկացող: Ջանդի ծնեալ և սնեալ Արբինոն, իբրև յարբունս և՝ ի հասակ զինուց ժամանեալ, գարձոյց զաչս՝ ի զինուորութիւն, ոչ՝ ի յաշխատական պերճախոսութիւն և ոչ՝ ի քաղաքական փափկութիւնս վարժեալ, ի բարուցն և յառաքինի ճարտարութիւն զարգացաւ ընդ հուպ ոգի նորա անկնճ: Վասն որոյ յառաջնումն անդ նուաճի՝ ի հնդրել նորա զզինուորական արիւբունութիւն՝ ի ժողովգենէ, թէպէտ և անճանօթ էր բազմաց երեսաք, համբաւոյն ևւեթ անդէն հասանէր ինդրոյն: Եւ ապա յաճենակալութենէ անտի յայլ աւագութիւնս հետզհետէ ամբարձեալ, այնպէս միշտ վարեր յիշխանութեան՝ զի մե-

ծագումնին և համարկը արժանի: Բայց սա ինքն այր այսպիսի՝ չիշեսը Թեկն ածել զայնը իշխանութեան, յոր սպա փառասիրութեամբն դիմեաց գահավէժ: Զի Թէպէտ զայլ առենակալս ռամիկն ընտրեը, այլ զբդեշխութիւն ազնուականք իրերաց աւանդէին. և ոչ ոք յանտոհմից, Թէպէտ ականաւոր և վաստակաւոր երևելի, արժանի դատէր այնմ պատուոյ, իբր ստուերածս զնովաւ ածելով:

ՆՈՑՆ:

ԱՂԵՔՍԱՆԴՐ

Ա՛նդ տեսի զԱղեքսանդր, զայն՝ որ սպա ելից վերկիր զարմացմամբ և սգով: Էին նորա ամք ութ և տասն, և անդստին 'ի բազում պատերազմունս պայծառացեալ էր. և 'ի Քերոնեայ ձակատամարտին բևեկեալ և 'ի փախուստ դարձուցեալ էր զաջոյ Թէ բանակին Թշնամեաց. որ 'ի գեղ գիմաց նորա շուք մեծ յաւելոյր յաղթութիւնն այն:

Տիպք կերպարանաց նորա համեմատաբ, գոյն երեսացն պայծառ և կարմիր, արծուռնդն, աչեղ և հրաչեայ. հեղք նորա խարտեաշ և գանգուր. բարձրապարանոց, և փոքր ինչ յահեակ կոյս գլուխ նորա հակեալ. հասակ միջահասմանն՝ նրբաձարտ և ուղղորդ՝ մարմին բարեյօդ և 'ի հանապազօր հրահանգս կազդուրեալ. այլ և Թեթևընթաց՝ զնա տեսն գոլ, և կազմիկ յոյժ 'ի հանդերձս: Եւ եմուտ նա յԱԹենս հեծեալ 'ի ձի ահիպարանոց, որ ցլապլուխն կոչէր, ոչ ուրուք յառաջ քան զնա նուաճել կարացեալ վերիվար զայն, և որոյ երեքտասան քանքար էին գինք:

Ամենայն ուրեք այնուհետև զԱղեքսանդրէ Ճառս արկեալ խօսէին. արտմութիւն չեծող ինձ անձամբ հետազօտել զնա, այլ հարցի զնմանէ զոմն ասենասցի՝ որոյ բազում ժամանակս լեալ էր 'ի Մակեդոնիա, և առաց ցիս.

Ընդ բազում հանճարոյ և ազնազութեան մտաց բերէ նա յանձին ուսումնասիրութիւն անյագ, և ախորժակս առնուեսից՝ որոց նպատակ անծանօթ իրացն: Սիրելի է նկարագութիւն նորա, հեզ և հաւատարիմ բարեկամութիւն, և խղճք նորա և խորհուրդք ազնուականք: Բնութեանն անկեալ 'ի նմա զբազբոջս ամենայն առաքինութեանց, Արիստոտէլ ուսուցցոյց զնոսա խմաստիք: Ա՛յլ ընդ այս ամենայն բարեմասնութիւնս՝ բռնանայ 'ի նմա ախտ աղետաբեր նմին, գուցէ Թէ և բոլոր ազգի մարդկան. զիսառամոլ իշխանասիրութիւնն ասեմ, որ տագնապէ զնա զցայգ և զերեկ: Ա՛յնպէս ակներեւ 'ի հայեցուածս նորա, 'ի շարժուածս, 'ի խօսս և 'ի վարկպարագն իսկ գործս երևեալ, զի զմտաուցելոցն առ նա պատկառանք և երկիւղ գրաւեն զդէս: Յանկայ նա միահեծան իշխել ընդ տիեզերս, և զգիտութեանց մարդկայնոց յինքն ևեթ բովանդակել զգանձս: Տենչ փառաց, և բնաւ ամենայն պայծառ բարեմասնութիւնք հօրն զարմանալիք՝ երևին յորդին. այլ այս ևեթ ընտրութիւն կայ 'ի միջի, զի 'ի մին բարեխառնին այլևայլ բնաւորութեամբքն, իսկ 'ի միսն հաստատութիւն զառածանի 'ի յամառութիւն, փառասիրութիւն 'ի խելայեղութիւն, և արիութիւն 'ի կատաղութիւն: Զի ամենայն կամք նորա անդարձք իբրև զձակատագրին սահման, խուժէն ընդդէմ խափանաց՝ հանդոյն ուղևից յարուցեալ ահագին խոխոջիւք զժայռիւ, որ ընդդէմ հոսանաց նոցա կայցէ:

Փիլիպպոս այլևայլ հնարս 'ի կիր արկանէ առ 'ի հասանել յուշ նպատակին, իսկ Աղեքսանդր զսուսեր միայն. Փիլիպպոս ոչ ամօթ համարի 'ի խաղս ոլիմպիականս յաղթել սինքզքոր ոսոխաց, իսկ Աղեքսանդր ընդ Թագաւորս ևեթ կամի անդ ոսոխել: Թուի բնութեանն իսկ ազդել առաջնումն՝ զի ձգամիջ յայն բարձրութիւն հասեալ է, իսկ երկրորդին՝ զի 'ի ծոց մեծութեան է ծնեալ: Ելանաձաւոր հօրն, ցանկայ գերազանցել զնովաւ. և 'ի նմանութիւն Ա՛քիլլեայ նկրտեալ, Լանայ հաւատարել նմա: Զա՛քիլլես համարի վեհ 'ի դիւցազունս, և զՀոմերոս վեհ 'ի

քերթողս, այնու՝ զի անմահացոյց զդիւցազնն: Զնախատըպին զոր ընտրեաց իւր, զբաղում ինչ տիպս նմանուածեան բերէ նա յանձին. զնոյն բռնուածիւն բարուց, զնոյն սաստկուածիւն՝ ի մարտս պատերազմի, և նոյն զգացումն սրտի: Երանէր նա ուրեք զԱքիլլէս քան զամենայն մարդիկ, զի բարեկամ այնպիսի եղև նմա Պատրոկլ, և գովասան այնպիսի Հոմերոս:

ՊԱՐԹԵԼԸՍԻ. Ոդևոր. Ազնաբարս:

ՊԵՐԻԿԼԷՍ

Յառաջագոյն գիտաց Պերիկլէս զի ազնուատոհմութիւն և մեծութիւնք զդդ ընդ իրաւունն՝ զոր մատուցանէին նմա, կասկածելի առնէին զնա. ի վերայ այսորիկ և միւս ևս երկիւղ էր նմա: Ծերք՝ որոց ընդ Պիսիստրատեայ ձգեալ էր զկեանս՝ ի նա ենքն կերպարանէին զՊերիկլէս անգէն ի մանկութեանն, և Թուէր նոցա զձայն Պիսիստրատեայ և զնոյն նորին Ճարտարախօսութիւնն լսել ի բարբառ Պերիկլեայ. և զնաքդ մարթէր անտես առնել նոցա զայնքան նմանութիւնն հանդերձ այլովք բարեմասնութեամբքն: Վասն այսր ամենայնի Պերիկլէս զառաջին հասակն ետ յուսումն իմաստասիրութեան, ոչ խառնելով ի յանձանձանս իրաց աշխարհին, և ոչ այլ ինչ փառասիրելով՝ բայց զանուն քաջութեան: Ձեռ Արխիտեայ մեռանելոյ և աքսորանացն Թեմիստոկլի, Կիմոն զերասանակս ի ձեռն էառ ուղղութեան աշխարհին. այլ ի սակաւ արշաւանս պատառեալ Թողոյր զվստահութիւն ամենացուց տարտամ յայլս ի հետամտից, զի ոչ ոք ի նոցանէ բաւական էր կենքն հասատառել զայն:

Պայծառանայր յայնժամ Պերիկլէս որոշեալ ի մարդկանէ և հրաժարեալ ի զբօսանաց, զամենեցուն կենքն ձգե-

լով զուշ՝ հանդարտ գնացիւքն, պատկառանօք համեստութեամբ և անատգիւտ վարուք:

Ել նա ի հասանել ժամանակին ի բեմ, և ընդ նախընծայ փորձ Ճառիցն զարմացոյց զԱթենացիս. քանզի բարեմասին հասեալ ի քնէ՝ դոլով Ճոխաբան քան զամենայն մարդիկ, վեհագոյն ի Ճարտարախօսս Ելլադայ եկայ ջանիւ: Վարժապետք քաջք որ դաստիարակէցին զնա ի մանկութեան, նոքին զարձեալ օգնական լինէին նմա խրատուք՝ ներածելով զնա ի խորս բարոյականին և օրինաց քաղաքավարութեան. և զամենայն գիտութիւնս նոցա զբաւէր յինքն հանճարոյն: Ասաի խորութիւն Ճառից նորա և լիակատար հմտութիւն. ասաի ուժգնութիւն բանիցն, զոր մեղմէրն ըստ պատշաճի. ասաի վայելչութիւն նոցին, զորմէ ոչ երբեք անիծոյթ առնէր, վճարեալ յամենայն բռնազբօսմանուածոյ և ի ձևոյ. ասաի և այլ ամենայն հանգամանք բանից նորա, որովք համոզէրն և զայնոսիկ՝ զորոց ձայնքն հարեր զմիտս, և զհետ բանիցն իւրոց առեալ ձգէր՝ զորս ձայնքն հարեր խակ և չհամոզէր:

Էր ի Ճառս նորա վսեմութիւն իմն ահեղ, յորմէ ընկճէին միտք. և այն արդասիք էին կենակցութեան նորա ընդ Անաքսագորայ իմաստասիրի, որոյ զէից և զգաղտնեաց ստացա պարզելով նմա զօրէնս՝ զգերիմաստ միտս նորա երևի և ևս վերամբարձեալ:

Ոչ ինչ նուազ զարմանալի էր Ճարտարութիւն նորա ի բռնադատել զհակառակորդն, և ի խոյս տալ ի բռնադատութենէ նոցա, վարժեալ ի Զենոնէ իմաստասիրէ Էլէացւոյ, որ ի պատ ի պատ դարձուածս բանից սակաւ մոլորեցուցանէր զնա առ ուսուցանելոյ նմա զդողոզի էլս փախստի: Նմին իրի մի ի հզօր ոսոխաց նորա ասէր. Եթէ զգեստեալ արկից զնա ընդ ինև, նա զհակառակն կարծեցուցանէ մարտաւեսացն՝ կանգուն կալ յտին անպարտելի:

Բայց Պերիկլէս քանզի քաջ խելամուտ էր բնաւորութեան ազգին, զամենայն յոյս իւր եդ ի Ճարտարախօսութիւն. և զՃարտարախօսութեանն ևս քաջ գիտելով զարդ,

առաւել քան զամենեսին փոյթ ունէր այնմ: Մինչ չէ երեւեալ յատեան՝ յուշ առնէր անձին զի առ ապատոլեարն մնաչէր խօսել, առ Յոյնս, և առ Ալեքսեայս:

Եւ որչափ մարքերն՝ խորչէր ի բեմէ. քանզի հանապազ գուն գործեալ ի ծայր բարձրութեան յուշիկ ի վեր ելանել, երկինչէր թէ գուցէ յաղթանակք զաղթանակս մղեալ՝ կարի վաղ զարմացուսին Ժողովրդեանն հասուսցեն ի ծագ անդր, որում էջք յաջորդեն: Բայց Ժողովուրդն ածէր զնաւս, զի ձարտարախոս՝ որ յանչուշան գովութենէ խոյս տայր, կարի խիկ արժանի էր հաւատարմութեան՝ զոր ոչն խնդրէր, և զի հարկ էր կարևոր գոլ իրացն ձառելոց ի նմանէ, որ ատիպէին զնա լուծանել զդուութիւն:

Յայժ զարմացոյց նա զԱլեքսեայս և տիրական իշխանութեամբն ի վերայ կրիցն: Տարաժամեալ երբեմն Ժողովոյն մինչև ցգիշեր, և ուրացմն ի ամենէն խափանելով սահպ Թըշնամանօք զձառս նորա, և նախատինս զհետ նորա ձգելով՝ մինչ գնայրն ի տուն, նա հանդարտ և անխռով պատուէր եա միւսմ ի սարկայն՝ ջահ առաջի նորա ածել, և ընդունել զնա ի տուն իւր:

Եւ զի երկարեմ. երբեմն տեսանէր Ժողովուրդն ամենայն ուրեք ոչ միայն զՀանճար նորա, այլև զառաքինութիւն ըստ սեղջոյն և ըստ Ժամանակին, զի զվայրկեաց Ժամանակոյն յանձին բերէր զՀամեստութիւն և զսահմանութիւն, ի յանձնձանս իրաց աշխարհին՝ անտեսութիւն անձին և ուղղութիւն անյեղլի, և ի զօրավարութեան՝ փոյթ և ըղձութիւն չառնելոյ ինչ ի բաղդն ապատան, և զանձն մանաւանդ դնել ի կշեռ քան ի վտանգ արկանել զիւրիկութիւն աշխարհին. զայս ամենայն տեսեալ Ժողովրդեանն՝ խորհէր, ի մտի, զի որ զգովութիւնս և զնախատինս արհամարհէր, և զմեծութիւնս և զաւելին քան զկարևորն և ըղձուսս իսկ անտես առնէր, հարկ էր նմա այնպիսի ունել երանդն հայրենասիրութեան, որ խափաներ ի նմա զայլ կիրս, կամ ի մի յայն տենչ զամենայնն Ժողովէր:

Ա՛յս պատրանք առաւել քան զամենայն ինչ զօրավիգն եղեն Պերիկլեայ ի բարձրութիւնն. և միայց նա զամն իւր քառասուն ունել ի պատրանան զազգ իմաստուն՝ վրէժխնդիր իշխանութեան իւրոյ, և որ ոչ ինչ ընդհատ դիւրատարագութիւն էր ընդ զարմացուսին քան ընդ հնազանդութիւն: Բայց ի սկզբանն ոչ ամենայն Ժողովուրդն յարեալ էր ի նա... փայփայելով զամբոխ՝ նուաճեալ զՀոխս, նուաճեալ ապա և զամբոխն սանձահարելով զանձնահաճ կամն նորա, մերթ անզիջանելի խստութեամբ, մերթ հանճարեղ խրատուք, և մերթ ողբքանօք ձարտարախօսութեանն:

Ամենայն ինչ ըստ կամաց նորա գործէր, և ամենայն ինչ ըստ օրինադիր կարգաց կատարէր յերևմանն. և ազատութիւն յեցեալ անկասկած ի պահպանութիւն ձեռց հատարակապետական կարգաց, ընդհէր յանդգնասից ընդ աջողութեամբ մատց:

Բայց Պերիկլէս ըստ զօրանալ իշխանութեանն՝ նուազգոյն զսուս ի կիր արկանէր և գուն ուրեք երևէր: Մերնացեալ առանին ընդ ազգականս իւր և ընդ բարեկամս, հսկէր ի հեռուստ ի վերայ ամենայն խմբից, մինչգեռ ամենքին կարծէին պատազել զնա ի խաղալել կամ ի կերպարանափոխ առնել զաշխատն: Ալեքսեայք անդիմադարձք զօրութեան՝ որ գրգիր զնոսա, ակն ածէին ի գրգռոյն, զի հազիւ երբեք ազերսեր զօգնութիւն նոցա. և բռնութ յիմաստս և ի բացատրութիւն, ի տիպս կերպարանաց վհատուցին գից յանդիման առնէին զՊերիկլէս: Զի ի լսելն առնել նորա զձայն իւր ի դէպս կարևոր, ասէին՝ Արտասուգայ աւանդեալ նմա զիշխանութիւն իւր և զանգիս. իսկ արբանեկութեամբ ձեռաստն բարեկամացն գործելով նորա զգուշութեայս, գարձեալ Աքսամագայ նմանեցուցանէին զնա, իւր թէ ի վարել զտիեզերս՝ զթեթև ինչ յայս ի դից ի սպատահարիս իւր Թողոյր....:

Այլ անփոխանակելի և մեծ քան զամենայն կորուստս եղև մահ Պերիկլեայ, որ յերրորդումն ամի պատերազմին Ժանտ ախտին վարակեալ՝ զաւեցաւ ի կենաց: Բայց յաջորդոյն դառնացեալ Ալեքսեայսոյ ի վիշտս չարեացն, և

կատեալ՝ի նմանէ զիշխանութիւնն՝ դատապարտեալ էին զնա՝ի առգահս. այլ ապա սարջացեալ նոցա ընդ անիրաւութիւնն, և Պերիկլեայ հաշտեալ էր ընդ նոսա, թէպէտ և ատելացեալ ընդ հրամատարութիւնն, վասն յեղեղուկ մտաց ժողովրդեանն, և վասն բազմից յընտանեացն իւրոց և՝ի բարեկամաց մեռանելոց՝ի ժամս սխտին: Եւ իբրև՝ի շունչ վախճանին հասեալ կայր, և Թուկը խակ մեռեալ, գլխաւորք Աթենացւոց շուրջ կացեալ զմահճաքն՝ սփոփիչն զմիմեանս, յիշելով զվաստակս քաջութեան նորա և զբազմութիւն յաղթանակացն: Իսկ նորա յանկարծ՝ի վեր աւեալ զգլուխ իւր, ասէ. Յաղթանակքդ այդոքիկ բազդին են արդասիք, հասարակաց ինձ և այլոց զօրավարաց. այլ ինձ սեփական պարծանք այն են, զի ոչ ոք երբէք՝ի քաղաքացոյն նստուցի՝ի սուգ:

ՆՈՑՆ:

ԱԼԿԻԲԻԱԴ

Վ իպագիրքը զաթենացւոյ առնս նսեմացուցին զնշանաւակ. բայց այլք պանծացուցանեն զնա կարի յիրաւի զերծք յաջառանաց: Թուի իմն համահաւաքեալ բնութեանն՝ի նմա զչզօրագոյն արգասիս յատութեան և առաքինութեան: Ցեսցուք զնա սրդ ըստ քաղաքավարական մասին, որով ձգտեցոյց զկործանումն պետութեանն. և ապա՝ի սաորև ըստ կենցաղավարականին, որով էառ լուսն զեղծման միաբանութեան մարդկան: Այնուամենայնմ՝ութիւն, փարթամ մեծութիւն, չքնաղ կերպարան, ողոք շրթանց հրապուրող, միաք աջողակ և ընդ՝ձակ, և կցորդութիւն ընդ Պերիկլեայ, այս ամենայն նախամտանութիւնք շլացուցին՝ անդէն և անդ զԱթենացիս, և զնոյն ինքն զԱլկիբիադ նախ քան զնոսին: Ի սխ՝ յորում կարեկցութեան ևեթ կարօտ էր՝

նա և խրատուց, հոյլք փաղաքշայ ընթերին զնովաւ. զարմացոյց նա զվարժապետս իւր հլութեամբն, և զԱթենացիս ցոփ համարձակութեամբն:

Սակրատայ յառաջագոյն նկատեալ, զի կարի մեծասակար քաղաքացոյն հարկ էր լինել պատանւոյն՝ եթէ ոչ լինէր նա նոցին կարի յոյժ պիտանի, խնդրեաց առնել ընդ նմա բարեկամութիւն. և արար իսկ խնամութ՝ ջանիւքն, և մինչև՝ի սպառ եկաց՝ի նմին: Եւ ապա ձեռն էարկ նա՝ի զսպել զկպարտութիւն պատանւոյն, որ ոչն հանգուրժէր ստորանկել ումեք, և ոչ հաւասարել. և այնպէս հզօր էին Ճշմարտութիւն և առաքինութիւն՝ի բերանն Սակրատայ, մինչև արտասուել աշակերտին ընդ զառածանս իւր, և կրել զձաղանս անտրտունջ:

Ի մտանելն յասպարէզ ասադութեան, էզ՝ի մաի Ճարտարախօսութեանն ողոքանօք յաջողել՝ի նմա՝ քան զքով պարգեաց և առատաձեռնութեան. և անց եկաց նա՝ի բեմ: Դոյզն ինչ թերութիւն լեզուին զընորհս իմն անարուեստ ասաչոյ մանկութեան յաւելոյր՝ի բարբառ նորա. և թէպէտ դանդաչէր ուրեք ուրեք՝ի Ճառան առ՝ի գտանել զպատշաճ բառս, սակայն ընդ վեհագունից Ճարտարախօսացն ասթենացւոց՝ի համարի է: Վաղ ուրեմն էառ նա զիմոր քաղութեանն. և՝ի գործելոց արութեանց նորա ըզհանդերձեալն գուշակելով, ակն ունէին ամենեքին՝ կալց նորա մի՝ի քաջաց զօրավարացն Ելլադայ: Թողում զհեղութիւն նորա և զքաղցրութիւն և զայլ ևս մասունս բարեաց, որովք սիրելի էր այլոց: Զէր՝ի նմա առաքինութեանն մեծախոհութիւն, այլ քաջասրտութիւն ազդեալ՝ի գիտութենէ բաւականութեան իւրոյ: Ոչ խոչք և խուճք, և ոչ արկածք թշուառութեանց պակուցանէին զնա կամ վհատեցուցանէին. և Թուկը իմն նմա այնպէս՝ թէ իցեն ոմանք, որք ոչ վասն այլ իրիք ջանեն զամենայն զօր կամին՝ բայց զի չիշխեն առնել զամենայն զօր կարեն:

Բայ հարկի իրաց ժամանակին ստիպեալ՝ի ապաստանել թշնամեաց իւրոյ հայրենեացն, յաջողեցաւ նմա նուիլն

նախամանուածքն վատահայցուցանել զնոսա յինքն ի սպառ, և վարել զնոսա հանճարեղ խրատուքն: Եւ այս ինչ ուրոյն էր նմա, զի յոր կոյս և ձեռն տայր՝ յաղթանակէր կոչին այն, և ոչ մի ի բազում այնչափ յաղթութեանցն նորա նաեմացաւ պարտութեամբ:

Ի յանձնձանս իրաց՝ էր զի զհնարս աշխոյժ և խորախորհուրդ մտացն եւեթ ի կիր արկանէր, և էր զի զխորամանկութիւն և զնենգ՝ որ ոչն երբեք պատճառանաւք բարեաց աշխարհին են անբասրելի, և այլ ուրեք զՀնութիւն. որով կամ առ ի սիրել և կամ առ ի հաճոյ լինել յերիւրէր զանձն դիւրաւ ըստ իրաց ժամանակին: Ամենայն ուրեք զաչս ամենեցուն յինքն ձգէր, և նուաճէր զվարկ ամենեցուն. զարմացեալ էին Սպարտացիք ընդ սակաւասփռութիւն նորա, և Թրակացիք ընդ շատայատութիւն, Բիովատացիք ընդ սէր նորա առ խաղաղոյն հրահանգս, և Յունիացիք ընդ յուզութիւն նորա և ընդ հեշտասիրութիւն, և նախարարքն Ասիոյ ընդ զեղխութիւն նորա՝ որում ոչ կարէին հաւասարել: Աւաքինագոյն քան զամենայն ոք երևէր, եթէ օրինակս ախոյեանն ջունէր առաջի. բայց ախոյեանք ձգէին զնա ի քարշ, առանց ծառայեցուցանելոյ: Զօրինաւորութիւն և զզառածանս ախոյեանացն համարէր յաղթանակս իմն ի վերայ օրինացն և քարուց. և յոռութիւնք թուէին ի նմա մտափառութեան արգասիք:

Նշմարանք ինչ թեթևամտութեան և խոչութեան և անզգաստութեան, երևեալք ի մանկութեան նորա և ի պարապրդութեան, վաղվաղակի անհետ լինէին ի դէպս՝ ուր զգաստութեան և հաստատութեան պէտք էին. զի զժբութիւն յաւելցոյր ի խոհականութիւն. և ոչ դողանային գրգռանք վայրկեան մի ժամանակի, զոր վասն փառաց կամ առ ի շահ ինչ օգտի պարտ էր նմա ի կիր արկանել:

Հարկ էր հպարտութեան նորա եթէ վազ և թէ անագան զառածանել ի փառամոլութիւն. քանզի չէր իսկ հնար՝ զի որ դէր ի վերոյ քան զայլն վհճակեալ էր ի բնէ, և իշխանասիրութեան անձկով մաշեալ, չմտաբերէր ի հնազանդե-

ցուցանել իւր զամենեսին՝ յետ ձգելոյ յինքն զզարմացուն ամենեցուն:

Նմին իրի և յամենայն կեանս իւր կատածելի եղև գըլխաւորաց ի քաղաքացոյն. զի կէսք ի հանճարոյ նորա, այլք ի զառածանացն զանգիտեալ կասկածէին. որով մերթ սիրելի լինէր, մերթ երկիւղալի, և մերթ առեալ ժողովըրդեան՝ որ ոչն կարէր հրաժարել ի նմանէ. և ամենեցուն զնմանէ կարծիք միշտ ի մոլութիւն զգայառեալ, մերթ ծայրայեղ ցնծութեամբ փառաց ի փառս զնա ամբառնային, և մերթ մղձգին սրամտութեամբ ի մահ զնա դատապարտէին. զարձուցեալ զնա յաքսորանաց, և զարձեալ վերըստին յաքսոր զնա յուղարկէին: Մարգառեացն Տիմոն յուղղ ուրեմն հանդիպեալ նմա երբեմն, մինչ դառնայր նա ի տուն՝ զրաւեալ բեմբասացութեամբ զամենեցուն զմիտս, և անգր յուղարկէր զնա ամենայն ժողովն, ալ խաղաղութեան ետ նմա և ասէ. Քաջալերեցաց, օրգեակ, և մեծացիր. զի քեզ պատրաստի կորուստ ամենայն ժողովրդեան: Եւ այլ երբեմն խնչյեղեալ ոամկին, կամէր թաղաւորել նմա ի վերայ իւր. այլ նա թագաւորութեամբ ևեթ ոչ շատանայր, և ոչ իշխանութիւն փոքու գաւառի յԱթենս վայելէր նմա, այլ ինքնակալութիւն մեծ որով մարթէր տիեզերակալել: Պարտ էր նմա զհասարակապետութիւնն յորում ծնեալն էր՝ ամբառնալ գեր ի վերոյ, և տալ խոնարհեցուցանել զնա յոտս իւր: Սովին խորհրդով ձգեաց նա զԱթենացիս ի պայծառ նահատակութիւնն. որպէս զի մինչ զօրօք նոցա նուաճէր զաշդս, յանդգնասից գտանէին ընդ նովաւ նուաճեալ:

Բայց նախկին գժդմնութիւն Աթենացւոց ընդ նմա, իբր անգէն ի մտաս ասպարիզին խափանեալ զնա, յայտ արար՝ զի հանճար նորա և խորհուրդք կարի յոյժ ընդարձակք էին, և ոչ ի բարեկենդանութիւն հայրենեացն անկաւորք: Արդարև չկարէր Ելլադա, ըստ ասացուածին, Աչկիպիադս բերել երկուս. այլ յաւելուլ ի դէպ է, զի և մին աւելի իմն էր աթենացւոց:

ՆՈՑՆ:

ԱՆՆԻԲԱՂ

Ա.առաքեցաւ Աննիբաղ ՚ի Սպանիա. իսկ և իսկ յառաջին անդ եկաւորութեան՝ յինքն յանկոյզ զամենայն զօրականն: Հինաւուրց զօրականք՝ յարուցեալ ՚ի մեռելոց համարիեին զԱմիլկար՝ և անդրէն առ նոսա գարձեալ. զնոյն նկատեին աչօքն ՚ի դէմս, զբոց յաչս, զտեսիլ երեսաց, և զգծագրութիւն: Յետ սուղ ժամանակաց ՚ի վերայ անցանելոյ, ա.բար՝ զի նմանակցութիւն հօրն՝ փոքր եղև ՚ի յորդորս զամենեցուն ըսիրա առ ինքն ձգելոյ: Զեղև երբեք բնաւորութիւն ինչ մի և նոյն՝ քան զսթոյա յանկագոյն առ երկուինչ գլխովին այլատարազ, հրամայել և հնազանդել: Վասն որոյ ոչ դիւրին էր որոշել, ո՛ւմ առաւել սիրելի իցէ. զօրագրքնեն, եթէ զօրականին: Եւ ոչ իսկ Ա.առրուբալ յորժամ հարկ ՚ի վերայ կայր առնել ինչ գործ մեծի քաջութեան, զայլոք ընտրեր գլուխ կարգել. այլ և ոչ զօրականն՝ յայլոք զօրավար առաւել վառահէր կամ դիմագրաւէր: Բազում էր նորա համարձակութիւն միտք ՚ի վտանգս, բազում և խոհեմութիւն անդ ՚ի վտանգս: Ցոչինչ աշխատութեանց պարտաւէր նորա մարմինն, կամ ընկճէր հոգին: Ի ոմի և ՚ի ցուրտ հաւասար էր համբերութիւն. կերակրոյ և ըմպելեաց՝ կանոնաւոր չափ ըստ բնաւոր փափաքանացն՝ և ոչ ըստ հեշտութեան: Արթնութեան և քնոյ՝ անխտիր էին ժամանակք ՚ի տուէ և ՚ի գիշերի. որ ինչ յաւելանայր ՚ի գործառնութեանցն՝ այն էր բաժին հանգստեան: Եւ այնմ՝ ոչ փափուկ անկողին էր հրաւիրակ, և ոչ լռութիւն. բազումք՝ բազում անգամ աեսին զնա զնաւորական տա.ռատակաւծածկեալ գետնախշտի խառն ընդ պահապանս, և ՚ի դադարս զնաւորաց: Հանդերձք ոչինչ առաւելեալք քան զհասասարիցն. զինք և երիվարք՝ երևելի էին աչաց: Ի հեծելազօրս անդ և ՚ի հետևակախումբս՝ ամենայնիւ ա.ռաջին էր ամենեցուն: Ի պատերազմի՝ յառաջնեցաց, յետ մարթին կատարման՝ վերջին ՚ի դարձ: Ա.յսպիսի և այսչափ

առաքինութեանց առնս՝ հաւասարէին և մոլութիւնք մեծամեծք. անգթութիւն տմարդի. հաւատագրժութիւն դէր ՚ի վերոյ քան զՊունիկեան. ոչինչ ճշմարտութիւն, ոչինչ սրբազան, ոչինչ երկիւղ աստուածոց, ոչինչ երդումն, կրօն և ոչ մի: Ա.յսուիկ բնաւորութեամբ առաքինութեանց և մոլութեանց զնաւորեցաւ երեսամի ընդ զօրավարութեամբ Ա.առրուբալայ, ոչ հարևանցիկ արարեալ և ոչինչ, զոր անկ ինչ տեսանել և առնել այնմ՝ որ լինել ունի զօրագլուխ գերապանծ:

ԼԻՎԻՈՍ:

ՊԻԳՄԱԼԻՈՆ

Պիգմալիոն տուայտեալ անյագ ընչաքաղցութեամբ յաղեխից յարկիս օր ըստ օրէ զառածանի՝ առեալ լեալ ժողովրդեան: Ոձիր է ՚ի զուբ ժառանգել ինչս. ագահութիւն խելթ և կասկածանս ՚ի միտս արկանէ անդուլ բռնաւորին. հալածէ նա զընչաւէտս, և երկնչի յաղքատաց: Դարձեալ և գժնէադոյն ոձիր՝ առաքինութիւն. զի անհնար թուի բռնաւորին՝ համբերել առաքինեաց ընդ անիրաւութիւնս իւր և ընդ ապիրատութիւնս, և դառնացեալ զդրդռի ընդդէմ առաքինութեան՝ որ գատաստարս առնէ զնա: Ցուղղ տագնապի յամենայնէ. ամենայն ինչ կեղեքէ զսիրտ նորա. զարհուրի ՚ի տուէ և ՚ի գիշերի. քուն հատեալ է յաչաց նորա զցայգ և զգերեկ. և առ ՚ի պատուհաս յաշխարհն նմա դիք զգանձս, յորս չիշխէ վայելել: Որով իւիք երջանկանալն խնդրէ, նովին իսկ վրէժ յերջանկութենէ գտանի. վտանգ ընդ առաքին, երկնչի ՚ի կորուսանելոյ զոր ժառանգէն, և լցի ցանկութեամբ ատանալոյ:

Դուն ուրիք երևի նա արտաքոյ. նաև տխուր միայնակ լքեալ ՚ի խորս արքունեացն, բարեկամաց իսկ նորա ոչ իշխելով մատչել առ նա՝ թէ գուցէ լցին կասկածելի: Դուռն դեղ սահեղ սուսերամերկ տիպաւոր պահակերէ հանապազ զոր-

քունեաքն: Ինքն 'ի ներքս անդ ամրափակեալ կայ, ուր սեռնեակք երեսուն հաղորդականք են միմեանց դրամիք երկաթեաք, զորս նիզակ ազևեն վեցեակք զևբրաքանչիւր, և չէ յայտ յորում 'ի նոցանէ ննջեցեալ՝ և իբր հաւատոյ պատմի ոչ երբեք զաւուրս երկու անընդմէջ գիշերել նմա 'ի միում՝ առ ահի սրախողխող 'ի թշնամեաց լինելոյ: Անճանօթ են նմա քաղքք բերկրութենաք, և քաղցրագոյն քան զյանոսիկ բարեկամութիւն. եթէ զուարթութենէ լիցին բանք, մերժեալ համարի զայն յիւրմէ և անմասոյց 'ի սիրոյ իւր: Աչք նորա խորասոյզք հրացայտք դժնեայք և արիւնաուշք յեզևեալ յածին չուրջանակի. 'ի սին ասասաւիւն արհաւրօք ականջ, մահատիպ, նիհար, և 'ի հոգս տխուրս դեմք նորա հանապազ խորշմեալ: Լուռ կայ, հառաչէ, և սըրտառուչ յոգւոյ հանէ, չկարացեալ ծածկել զևիշտ մտացն՝ որ զաղիս նորա կեղեքեն: Անախորժ են նմա համագումք. որդիք նորա փոխանակ յուսոյ՝ ազդեն 'ի նա տագնապս. զի թշնամիս իւր զնոսա ոխերիմս արար. չիք կենաց նորա վայրկեան մի անեղևան, և 'ի ձագաղիս արեան այնոցիկ՝ յորոց կատածէ՝ յերկարաձգ զևեանս իւր: Զաձնու անմիտն 'ի միտ՝ զի անգթութիւն, յոր ապաւինի, նոյն զնա կորուսցէ. Յընտանեաց նորա ոք, հանգոյն նմին կատածաւոր, փութացաց փրկել զաշխարհ 'ի ձեռանէ մարդակերպ գազանին:

ՖԵՆԵԼՈՆ. Տիւևաք:

ՍՄԻՈՒՂ.

Տեսէք ազէ զԱաւուղ 'ի յաջողութեան իւրում և 'ի փառս: Ո՞ւմ ուժք զոյր անցուցանել աւուրս առաւել ցանկալիս և երջանիկս: Յաննշան և 'ի սոսկական բախտէ՝ տեառներ զանձն ամբարձեալ 'ի գահ արքայական. Թագաւորութեան իւրոյ սկիզբն եղեն յաղթանակք. որդին արժանաժառանգ պայազատ Թուելը յապահովել զթագն ազգի իւրում. ամենայն ցեղք հպատակեալ՝ սպաս հարկանէին փառաց նորա և հաճոյից, և իբրև զմի այր կային նմա հնազանդ: Ի՞մ այլ իմիք կարօտեր յերջանկութիւն, եթէ ոչ հնար առանց Աստուծոյ:

Կորոյս զերկիւղն տեառն, և ընդ նմին զհանգիստ իւր և զամենայն երանութիւն կենացն: Մատնեալ այսոյ չարի և Թուխ և այլանդակ մրրկաց փոթորկելոց, ոչ ևս ոք ճանաչէր զնա, և ոչ ինքն զինքն: Տաւիղ հովուի միոյ փոխանակ զբօսութեանելոյ զսիրութիւն նորա, բարբառք զմոլութիւնն: Դրուագիք նորա և յաղթանակք նուագելոյք 'ի գտեերացն Յուդայ, պարսաւ իմն և պախարականք են նմա: Թոյս տայ 'ի մեծարանաց աշխարհին և ջնարհել խուսել յանձնէ: Դաւիթ առ ոտս գահոյն երևեալ՝ առեղն լինի, և 'ի հեռանալն՝ գիտէ անշուշտ առաւել առեղութեան պատահել: Խանդաղատեալ ընդ մտերմութիւն նորա՝ գովէ զնա, և քան զնա մեզաւոր և անկրաւ գտոյ զանձն. իսկ 'ի վաղիւ անդր դարան գործէ նմա՝ ըմբռնել և սրկանել զնա յարեւէ: Դժկամակ լինի և ընդ գութ սիրոյ որդւոյն և 'ի խելթ կատածանաց ընդ այն մտանէ: Ամենայն գրանիկք արքունի ջանան խնդրեն՝ Թէ ի՞ք քաղցրանայցէ տխուր և վիատական գառնութիւն նորա. զուր ջան, ինքն իսկ ոչ գիտէ: Արհամարհեաց զԱմմուէլ առ կենդանեաս մարգարէին, և հնարի կոչել զնա 'ի գերեզմանէն և խորհուրդ հարցանել յետ մահուան: Ոչ ևս հաւատայ յԱստուած, և գիւրահաւան գտանի գիւահարոյ լինել: Ամպարիշտ է, և անապաշխարհակ՝ 'ի հարևանցի ասացեալ աստանօր՝ յոյժ սովորեալ առ անհաւանն: Խաբեբայս անուանեն զԱմմուէլն, զմարգարէս առաքեալս երբեմն առ 'ի յԱստուծոյ. կորով մտաց համարին իմն արհամարհել զպատկառելի Թարգմանս խորհրդոյն յաւիտենականաց, և ծաղր առնել զիանխաոտացութենէն՝ յելից իրացն ստուգեալս. Ժխտեն Բարձրելոյն զգիտութիւն հանդերձելոց, և զկարողութիւն պարգևելոյ

զնոյն հաւատարիմ ծառայից Իւրոց, և ապա զկնի՛ և տա-
րամուրհիւն ամկին՝ երեան հարցանէն զվհուկին:

ՄԱՍԻԼԵՈՆ. Փոքրիկ քառասնորդք:

ԳՐՈՄՈՒԿԻ

Գուաւ այր մի խորամանդ ծածկամիտ անհնարին, կեղ-
ծաւոր բազմահնար որպէս և ճարտար քաղաքական, ձեռն-
երէց յամենայն և գաղտնագործ, ի խաղաղութեան և ի
պատերազմի ժիր և անխոնջ. որ ոչնչ թողացուցանէր
բախտին յորոց կարէրն շորթել ի նմանէ հանճարով և յա-
ռաջատեսութեամբ. բայց և այնպիսի արթուն և կազմ աս-
ամենայն, զի ոչ երբեք ապախտ արար զդիպող ինչ ժամա-
ի նմանի մատուցելով. բովանդակ ասել, մի յանհնդարտ
և ի ժպիրհ ոգւոց անտի՝ որ Թուին ծնեալ ի կերպարա-
նափոխ առնել զաշխարհ: Քանի բազմամտանդ է վհճակ
ոգւոց այսպիսեաց, և քանիք երևին ի պատմութեան՝ ո-
րոց յանդգնութիւն մահագոյժ եղև նոցա: Բայց և զինչ
չգործեն, յորժամ Աստուած ի ձեռս առնուլ կամիցի
զնոսա:

Տուաւ սմա պատրել զժողովուրդս, և յաղթահարել
զերեսպաւորս: Քանզի իբրև եաես, զի յամբաւ խառնակու-
թեան անդ աղանդոց ատանելոց առանց ինչ հաստատուն
օրինաց, հեշտութիւն վարդապետելոյ անստատ և անար-
դել յամենայն իշխանութենէ յեկեղեցական և յաշխար-
հական՝ կախարդեալ էր զոգիսն, զիտաց այնպէս ճարտար
յանգուցանել զնոսա առ իրեարս, մինչև յայլանդակ շեղ-
ջակուռէ անտի կազմել մարմին մի ահաւոր: Իբրև գամ մի
գանձ ոք զմարթեանս օրասլոյ զնառնեալսն՝ ճանձիւ ա-
զատութեան, շատ է լսել ևեթ նմա զայնր անուն. այնու-
հետև կուրաբար զհետ ընթանայ: Սոցա ուշ եդեալ յա-

ռաջին խնդիրն որ մոլեցոյց զնոսա, երեթային միշտ առանց
հայելոյ զի՛ ի ծառայութիւն երեթային, և խորամանգ առաջ-
նորդին նոցա, որ կառուցէր և վարդապետէր և բիւր այլ և այլ
դէմս խառնէր՛ ի մի, վարդապետ լինէր և մարգարէ՝ որ-
պէս և զինուոր և զօրավար, տեսեալ Թէ այնպէս զուշ և
զուրուշ մոգեալ էր զամբոխին, զի իբրև յաստուածառաք-
ոմն գլուխս հայէին՛ ի նա զօրքն ամենայն՝ ի պաշտպանու-
թիւն աղատութեան. սկսաւ խելամուտ լինել, Թէ մար-
Թէր անդրադարձ ևս վարել ածել զնոսա:

Ոչ ճառեցից ձեզ զամենայն տարապայման յաջո-
ղութեանն գործոց նորա, ոչ զհռչակաւոր յաղթութիւնն՝
ընդ որ սրսմտեալ կայր առաքինութիւն, և ոչ զերկար
խաղաղութիւնն՝ որ ապչեցոյց զտիեղերս:

ՓՈՍԻԻՆ. Դամբանականք:

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԴ.

Նա ուսոյ՛ յառաջ գայցեն այլ ընդ այլոց կարծիք
զերեսպաւորութենէ Լուդովիկոսի ԺԴի. արքայութիւն մե-
ծափառագոյն քան զայլս ամենեսեան, և որ հաւասարէ պե-
ղեցկագոյն գարուց հանճարոյ մարդոյն, Թէ ոչ և քան
զնոսա գերազանցիցէ, բայց եԹէ՛ ի մտահաճութենէն պատ-
րանաց: Զի զինի բազմավրդով ժամանակաց անտիական
հասակին՝ ամբառնայ Լուդովիկոս յաՀոգ արքայութեանն
յորմէ՛ ի գերեզմանի և եԹ հասցէ նմա հրաժարել. քանի՛
պանչելիք զերեսպաւորութիւն նորին պայծառացուցանեն.
զի յօժանդակութիւն բարւոյ ժողովրդոց՝ պաշտպան կայ
նա կրօնից աստուածպաշտութեան, պայծառացուցանէ
զօրինադրութիւնն, և զհասարակաց տեսչութեանն մա-
սունս կարգեալ սահմանէ հրամանագրօքն, ընդ որ ցարդ
հիանամք. զարգացուցանէ զդիտութիւնս, զդպրութիւնս

և զարուեսաս, ընդարձակէ զտուրևառս չահալաճառուց, և ամենայն ուրեք հաստատէ զարգարութիւն, զօրէնս և զհաւատսդութիւն. առ Թագաւորութեամբն նորա պայծառանան պարծանք Փրանկիոյ՝ ձարտարախօսք և քերթողք, իմաստունք և իմաստասէրք, տաճնակալք և սպարապետք, և դասք առաքելագործ եպիսկոպոսաց: Յաւելու Լուդովիկոս վեց գաւառս՝ ի հայրենեաւանդ Թագաւորութիւնն և յամուրս ամրակառոյց զսահմանս պետութեանն պարըսպէ. Ժառանգէ զուցանէ Թոռին իւրում զգահն Սպանիացոց. և յաղթելոմս ծերութեանն խիզախ ընդդէմ բռնութեան դաշնակցացն Եւրոպայ արիասիրտ վեհանձնութեամբ. և անուն Փրանկաց և փառք մինչև՝ ի ծագս աշխարհի տաւառնեալ ընթանան՝ ի ձեռն նորա. մինչև յայնի լինել ընդ համայն Եւրոպէ գերազանցութիւն մտաց և հանճարոյ զոր յարդ ազգէ Փրանկիա զինի հարիւրոց ամաց և բազմավաղով յետափոխութեանց. որպիսի Թագաւորութիւն և քանի՛ փառք պարծանաց, զոր վկայիլ վկայեցին և այնոքիկ որք ոչ կէզակարծք յունկնդրացդ լմնց համարեացին. զի և չէր խակ մարթի հանճարեղին արանց պարտաւագիր լինել հանճարաշատ գործոյն, որպիսիք կային Մոնդեսքիէօ, Վոլտէռ և Ջըէսաէրիզ: Իսկ զարդիս ի՛նչ միտս արդեօք զայնց ժամանակաց բերիցին մտաց հանճարք ինքնապանծք. յանցանս ինն համարին Լուդովիկեայ զի ոչ արկ՝ ի կիր զյեզտնակս և զառեչութիւն որ օտարք էին՝ ի նորա ժամանակս. մեծաբարբառ յանդիմանեն զքաղաքական ինչ զառանցանս նորա և զյանցուածս փառասիրութեանն և զանձնական թերութիւնս՝ զոր ինքն իսկ մեծանձնութեամբն գաւառապարտեր. և զոր՝ ի սոսկական ոք այր չմարթէ պահանջել յամենայնի անպարտաւ գոլ՝ ի սեպհական անառասութիւնն, կամիցիմք, առաքը, զի զերծ յամենայն արատոյ իցէ արքայութիւն լի փառօք և պարծանօք ձգեալ ընդ ամս վաթսուն. և իցէ այս արդարութիւն. բայց զի՛նչ սանանել կարիցեն յաչազանք պարսաւագիտացն. անցանեն ընդունայն չարախօսութիւնք, և

ինան փառքն անկասպուտ. յաւերժասցի անուն Լուդովիկեայ՝ ի վերայ իւրոյ դարուն, և որ գալոցն են ազգք՝ մի դադարեսցեն կոչել զնա դար Լուդովիկոսի ձգի. որպէս ցայսօր յետ երկուց հազարաց ամաց ասեմք դար Աւգոստեայ. և ինձ ինդութիւն մեծ է զի՝ ի մեծահանդէս հրապարակիս առաւ ինձ դէպ և պատեհ չատագով կալ յիշատակի մեծին Լուդովիկեայ, նա աւանիկ և եռանդագոյզ որով զբանս իմ ընկալայք՝ վկայէ ինձ եթէ գոյ և՝ ձեզ սիրա հայրենասէր որպէս և յիս:

ՖՐԱՆՑՈՒԱՆՈՒՍ. Պաշտ. Ֆրիա. Հաւատոյ:

ԳՈՂՊԻՐ

Բարեբաստիկ պայծառութիւն Թագաւորութեան Լուդովիկոսի ձգի, իշխանականն պերճութիւն, և ժողովրդոց բարօրութիւն՝ աւաղեսցին միշտ զկորուստ մեծագործութեանն՝ ի պաշտօնեայս Գաղղիոյ: Նովաւ յայն ծագ պայծառութեան ամբարձան արուեստք, մինչև Լուդովիկեայ Թագաւորութեանն ժամանակաց լուսաւորագոյնս փայլել ընդ բովանդակ աւուրս միահեծան տէրութեանն: Եւ որ մեծն և զարմանալի է, պաշտպանութիւնն՝ որով առանձին իմն հովանաւոյր զնոքօք՝ ոչ արդիւնք միայն էին ախորժակաց իւրոց և ծանօթութեան. ոչ զգացումն էր որ սիրելի նմա զարուեստագիտան և զիմաստունս առ հասարակ ընծայեցուցանէր, այլ պաշտպան կայր նոցա իբրև զայր պաշտօնեայ. քանզի ծանօթ խակ էր նմա եթէ գեղարուեստից միայն է երևեցուցանել գերամբարձ զտէրութիւնս և անմահութիւն տալ նոցա: Այլ արժանի անմոռաց յիշատակաց. խնամք նորա՝ ի վերայ անառասութեան և պերճութեան հիւնք հովանացեալ. զառանին պէտս խնայութեամբ վճարեր և բարեյարդար ոճով՝ որ սեփական էր նմա, զայն

զոր հարկ ՚ի վերայ կայր նմա՝ առատաձեռնեալ անհնայ յաչս համօրէն Եւրոպայ ՚ի պատիւ փառաց տեառն Իւրոյ, և կամ ՚ի հարկէ հրամանին բերեալ. միաք արդարև զգօն, աննուազ ՚ի հանճարոյ: Ոչ ոք ՚ի գործս ֆան վնա Վէհափոյն (Տահիաոս): Ոչ ոք աւուրս ևեթ եկաց ՚ի խօշուճեան. ասի զնմանէ եթէ անկեալ էր ՚ի մահուն յերեսաց արքայի. խրատ մեծ վասն պաշտօնէից:

ՀԷՆՕՂ:

ԶՈՒԳԱՆՇԻՒՆ ԳՈՆՏԻ ԵՒ ԹԻՒՐՔՆԻ

Տեսանն երբեք ուրեք յարս երկուս նոյն առաքինութիւնք ՚ի բարս այնքան այլ և այլս, զի մի ասացից հակառակս: Մին գործել Թուրի խորախորհուրդ հանճարով միւսն յանկարծածագ լուսաւորութեամբ. ուստի սա առաւել եռանդնոտ, բայց առանց հրոյն Իւրոյ շուտակէզ լինելոյ. իսկ նա ցրտագոյն ինն, այլ առանց երկեր տարատմութեան. քան ՚ի խօսել՝ առաւել ՚ի գործելն խելացեթէ և տատամնեալ ինչ արտաքոյ, այլ ՚ի ներքոյ սիրտ և հաստատուն: Մին ընդ երեսին ՚ի ճամբարս՝ բարձրագոյն ինն տայ կարծիս զիւրմէ քաղաքենէն, և նորանշան ինն իրաց տայ ակն ունել, նաևայն կարգաւ յառաջ խաղայ, և ոտն ոտն գայ ՚ի նորահնար ահաւորութիւնն՝ որ զընթացս կենաց Իւրոյ վախճանեցին. միւսն՝ երբև հոգեշունչ ոք՝ անգամին յառաջնմէ ոգեզին հայանի ՚ի չափ ամենակատար Հարատարապետաց. մին անդուլ և տաստիկ Հգնութեամբ՝ ՚ի հիացումն յաւիշտակէ զազգ մարդկան, և պապանձեցուցանէ զնահանձ. միւսն՝ անդէն ՚ի սկզբան այնպիսի ինն արձակէ շողիւն փայլակնանշոյլ, մինչև չիշխել մահաց ՚ի վերայ երթալ նորա. մին՝ բարձրութեամբ հանճարոյն և չաւատալի հնարիւք արուեստն՝ ամբառնայ գեր ՚ի վերոյ

ամենայն վտանգից, և ՚ի դրժանաց իսկ բախտին հանէ իւր օգուտ. միւսն՝ առաւելութեամբ բարձրաշուք զարմին և մեծասքանչ երկնառաք խորհրդովք, և սիրալի ինն զնաց ծին բարուք՝ որ անծանօթ մարդկան է գաղտնիք, ծնեալ Թուի ձգել ածել զբախտն զհետ կամաց սրտի Իւրոյ, և ստիպել տագնապել զձակատագիրսն:

Եւ որպէս զի յարագ երկուսեան տեսցին միշտ նկարագիրք մեծամեծք, բայց այլ և այլք, մին ՚ի յեղակարծ հաւուածոյ խլեալ՝ մեռանի ՚ի վերոյ աշխարհին՝ իբրև զՅուդայ ումն Մակաբեան. կածի զնա բանաին որպէս զհայր իւր, արքունիքն և ժողովուրդն ամենայն հեծէ, բարեպաշտութիւն իւր գովի զոդ ընդ արուեստին, և յիշատակ նորա ոչ խամրի ժամանակաւ: Միւսն՝ ամբարձեալ զինուք ՚ի ծայրս փառաց հանդոյն Դաւթի, մեռանի ՚ի մահիճս Իւր՝ քարոզելով զգովութիւնս Աւրարչին, և խրատելով զազգատոհմն, և Թողու զամենայն սիրտ լի պատարուն փառօք կենացն և քաղցրութեամբ մահուն Իւրոյ: Որպիսի՞ տեսիլ, հայել և նկատել զերկուսին արագ, և ՚ի միտ առնուլ ՚ի միոյ միոյ յայնցանէ զարժանաւոր յարգանս միոյն:

ՊՈՍԻԻՆ. Դամիրճանեանց:

ՆԱՓՈԼԷՈՆ ՄԵԾՆ

Նափոլէոն Պոնափարթէ գիւղացի է մերոյս ժամանակաց, և յորժամ գիւղացի ասեմ, ըստ նախնեացն առաջնոց խնամամ եմ, այլ հանգուցեալ վհկին այնոցիկ՝ որ զաստուածածականն գոգցես ընկալան յերկրի զպատիւ. զաւաչարհ ամենայն գործովք արուեստի նոցա. անջինջ տպաւորեալ կացին մնացին ՚ի միտս մարդկան յիշատակք նոցա աղգայ յազգս, և փառաւորեցան դարուց ՚ի դարս. զի մեծամեծս յոյժ գործեցին քան զմարդոյ կարողութիւն,

և պատճառս այնու եառն առասպելեացն առեղծաբանու-
թեանց. վասն որոյ և յիրաւի է խմասանոց՝ ի կարծիս կասկա-
ծանաց անկանել, եթէ արդարև կացեա՞լ իցէ երբեք Հեր-
քիւլէս ոք և կամ Սեսոստր և Հռոմուղոս, որ ընդ ամե-
նայն տեղիս գովին հռչակաւ: Եթէ յանկարծ անհեթաս-
ցին երբեմն ուրեմն կարդք քաղաքականք յերեսաց երից
մասանց աշխարհի, և նշևարեալ ինասցեն քերթածք և եր-
գարանք և պատմութիւնք և պատկերք պղնձիք, և դեր-
բուկք աւերակաց, և յընդ աղօտ ժամանակս աւերա-
ծոցն այնոցիկ հարկանիցի յաչս վկայասանին նոյն և մի
անուն արձանագրեալ և՝ ի վիմին որ Յեսկուրեալ և՝ ի
մարմարիոնին որ՝ ի Կապիտոլ, և՝ ի բրդուձս որ յԵգիպտոս.
նոյն գտցէեալ անուն յաւերակս Շէհպրունայ, Փոցաա-
մայ և Քրիմլինոյ, որ և ընդ աւազոլք անհուն անառատին,
ոչրպէս արդեօք և կամ զիա՞րդ հաւատարիմ լինիցի նմա՝
եթէ միոյ և եթէ աշխարհականի, միոյ և եթէ միահեծան
ինքնակալի իցէ այն անուն, անուն գերագոյն օրէնսդրի և
քաջամարտիկ թագաւորի: Իցէ՞ բնաւ կարծելի տիեզերակա-
լութիւն այսպիսի և այսպուռնակ վիճիճութիւն աշխարհիս
կերպարանաց՝ ի ձեռաց միոյ առն, այսչափ ազգաց այլա-
փոխութիւն, և այսքան ցեղատեսութեանց՝ ի տատան-
մեայ ժամանակիւ քակտումն և հատատութիւն: Ո՞ ոք
երբեք դիւրահաւան լինիցի այնչափ յաղթութեանց ան-
թուելեաց, այնչափ անհուն աշխարհակալութեանց, միան-
գամայն և այնչափ բարգաւաճելոյ արուեստից, յարդա-
րելոյ ճանապարհաց, տաճարաց շքեղացելոց, կամրջաց
կառուցելոց, ձեմարանաց կանգնելոց, միանգամայն և Ան-
վերապ պիղելոյ և Ալպեան լերանցն հարթելոյ: Իսկ զինչ
ինչ ասել իցէ և զառաւելագունիցն կերպառածոց, զաահմա-
նադրութեանց, զմաունիցս օրինաց, և զկարգաց քաղա-
քականութեան. յորս բովանդակին կեանք և քաղաքա-
վարութիւն ազգաց և ժողովրդոց. և այսքիւք վաղ ընդ
վոյթ զինի համայնաջինջ խռովութեան, և՝ ի ժամանակի
անդուլ մարտից պատերազմաց անհետ՝ ի վերայ եկելոց:

Եւ ո՞վ ոք պանծասցի՝ ի մի միաբանութիւն ածել ընդ այն-
չափ արուեստից և զկործանութիւն ահագին, ընդ այնչափ
փառացն զԹողոլ լքանել՝ ի մարդկանէ. այլ և՝ ի լքանել
անդ՝ զառաջնում թագաւորաց, և զդաշնակցութիւն Եւրո-
պայ համօրէն առ անձամբ զգուշանալոյ յերեսաց միոյ և-
եթ առն, զվվկիան ինքնին նմին կարգեալ պահանորդ-
քանզի և ոանփոխ մի նորա շատ էր՝ ի տատանել զաշ-
խարհս. զարտասահմանութիւն նորա՝ ի վէմն ապառա-
ժուս հանգեալ Ադամաստորայ հսկային, և զառաջնում մա-
հու նորոյն Պրոմիթէայ, որք առ հասարակ զնահատեացն ա-
ռասպելեաց զան Թէ զպատմութեանց բերեն զկերպա-
րանս: Ո՞րպէս արդեօք՝ ի գրի հարցեն պատմաբանք ժա-
մանակաց զմահ Նափոլէոնի զանյայտն և զանգոր՝ հանգոյն
ծննդեան նորին. ուր և զկնի բազմամեայ ժամանակաց այն-
չափ հզօր է անուն նորա, մինչև մեծացուցանել զայր՝ որ
չնա մեծարիցէ. և կազդուրել զԹագաւոր՝ որ՝ ի գլուխ
անցեալ ժողովրդոց բազմաց մտաչի՝ ի պատուել զանգրին
կանգնեալ վասն նորա. ուր և նոքին իսկ, որ՝ ի վսեր ընդ
նմա եկին՝ եւևեր զմիմեամբք առնեն՝ ի պահպանել զիշա-
տակ նորա, իբր զմրցանակ յաղթութեան և իբրու զեղն և
զապար. հանգոյն գոգցես նահապետացն Հելլենաց որ
զղէնան Աքիլլեայ առ՝ ի միմեանց կորզիլն: Հոմերական է
ատատնօր ամենայն. ամենայն ինչ ահագին, ամենայն ինչ
զարմանալի է յաչս աձն, որ գետակն կալեալ ուշ ունիցի
ընթացից կենաց քաջիս անգոսին՝ ի կղզեայ անուն, յորում
խանձարրեցաւն՝ մինչև՝ ի կղզին յոր զԹողոլմին ընկալաւ.
արդարև վարսամ գեղափայլ և ահարկու, որ առ՝ ի ծագե-
ղս յարևելս և յարևմուտս առ հասարակ, ՝ի խորոց ծո-
վու՝ ի վեր ամբարձեալ՝ ի նոյն դարձ առնիւ խորատուզեալ:

ՍԱԼՂԱՆՏԻ:

ՀՈՄԵՐՈՍ

Ասպաքէն սկիւթականս անկիրթ զգայարանաց անըզգալն իսկ է բաղում ուրիք Հոմերական տաղիցն ներգաշնակութիւն՝ որ զմայլեցուցանէն զՀելլենս. բայց սակայն հնացեալ զարմանամբ, մինչ առանձինն զնա բարձրաթռիչ որպէս թէ ընդ երկինս սաւառնեալ՝ բոցատիպ ակամբ դիտելով զառ ի յերկրէքս, և որ ինչ ի նոսա հուր կամ երփն երփն փայլեն երանգք՝ յինքն ժողովելով. մինչ տեսանէմ զնա մերթ աւրնութերակաց տատաւածախառնմբ դիցն ակըմբել, և մերթ զի քննէ զսիրտս և զերկիամունս մարդկան: Ի զի բազմահնար ի գիւտս, և գեղով հիցս զուարճացեալ, ոչ ևս կարելով բերել յինքեան զՀուրն ծախիչ՝ ծաւալէ զայն ի նկարագրութիւնս իւր և ի բացատրութիւնս. և է զի զերկինս ընդ երկիրս համախմբէ ի կռիւ, և զկիրս ընդ միմեանս, և փայլատակմբք հանճարոյն շլացուցանէ զմիտս, և յափշտակէ զայն ցոլիւք խմաստիցն՝ որ բուն վսեմքն իսկ են, և այնպիսի ազդմունս տպաւորէ ի խորս սրտի՝ որովք թուի զերազ և ընդարձակել զայն: Զի յայսոսիկ մանաւանդ փայլեն գերազանցութիւնք քերթողիս. շունչ ինն և Հոգի տալ ամենայնի, և զոյզս անդադարս կրից իւրոց ազդել յայլս, արբանեկեցուցանել բանագունին ի կրից զամենայն, և զյարձակմունս նորա և զզառածանս և զզառացեանն հեատզօտել. հանել զնա մինչև յատկս ի վեր, և յորժամ պէտք իցեն ի վայր կործանել զնա զօրութեամբ խմաստից լաւութեան և առաքինութեան, զօրէն ինն բոցոյ հրաբուղխ լերինն՝ զոր հողին անդրէն ի վայր ի վիշտն մղեցէ. քաջ ի դէմս ածել զնկարագիրս աւազայ, և զանազանել ի միմեանց զնշանաւորութիւն զկորովութիւն և զայլ ևս իւրաքանչիւրոցն յորովութիւնս, ոչ անճաշակ ինչ և տպաւորութեամբ՝ այլ ի հզօր և յարագ շարժուած երփնուհեակ գրչի, կամ նորանոր ստեղծիւք մտաց անհնամաքաբ ինն ի քերթածին անդ սփռելովք:

Վերամբարձեալ ընդ նմա յերթեալս, նկատեմ անդ զԱստղիկ կամարաւն՝ ուսոյն անսպառ բոցք տարփանայց հատանին, իղձք ապաժոյժք, ողոք հրատպոյրք, և շրթունք և աչք զօշտիչք: Նկատեմ անդ զԱթենաս և զսրամտութիւնս նորա յայծենական ատպարին՝ զորմէ կախեն արհաւիրք և հերձուածք և բռնութիւն, և զարհուրելոյն Գորգոնայ պակուցանողական դէմք: Անդ Արամազդ և Պխիդոն հզօրագոյնք ի դիս. բայց Պխիդոն երեքարձենիւն շարժէ զերկիր, իսկ Արամազդ յօնիւքն ևեթ ակնարկութեամբ դողդոջեալ սասանեցուցանէ զՈլիմպոս: Իջանեմ յերկիր, և անդ Աքիլլես և Էյաս և Դիոմեդէս ահաւորացոյնք ի Հելլենս. բայց Դիոմեդէս խուսակ յերեսաց թրովական բանակին. Էյաս յետ բազում դիմամարտութեան ապա տայ տեղի. իսկ Աքիլլես երևի ևեթ, և յերեսաց նորա հալածին Թշնամիք:

ՊԱՐԹԵԼԸՄԻ. Ռեղևոր. Ա. Ճաքարեանայ:

ԵՍՓԻԼՈՍ

Եսքիլոս ընկալաւ զայն (զողբերդութիւն) ի ձեռանէ նորա (Փրինիքոսեայ) գծուծս զգեցեալ, սնդոյր ի յայտսն ծեփեալ կամ դիմակ անկենդան զերեսաց ածեալ. ջոյր նորա շնորհ և ոչ վայելչութիւն ի շարժմունսն. ազդէր իղձս ինն կարեկցութեամբ հազիւ զկիրս յուզելով, չև ևս ցրտացեալ ի սիրոյ ծաղրածութեանցն և խեղկատակութեանց՝ յորս զբօսնոյրն յառաջին ամսն, և տիպք կերպարանաց բանիցն ի նմա ուրիք ուրիք ընտիրք և վեհք, այլ բազում ուրիք անզօրք էին, նուաստք և ազտեղիք թանձր խնդհշութեամբք:

Եսքիլոս հայր ողբերգութեան, զի այսպէս արժան է կոչել զայն մեծ, հզօր և եռանդուն ոգւոյ ի բնութենէ էր դիպեալ: Լռութիւն նորա և հանդարտութիւն զկրս.

տուԹիւն բուսոյ բարուցն յանդիման առնէին: Ի Ճակատամարտս որ 'ի ՄարաԹոն, 'ի Սալամիս և 'ի Պլատիէս, ուր աԹենացիք բազումք առաքինացան, անդ և Եաբիկոս պայծառացաւ քաջուԹեամբ: Անդստին 'ի տղայ ամոյ վարժեալ էր 'ի գիրս քերԹողաց, որք մերձ 'ի ժամանակս դիւցազանց կացեալ՝ բերէին իմաստս մեծամեծս ըստ մեծագործուԹեանց նոցա: Վկոյք անցելոց դարուցն ընծայէին աչխոյժ մտաց նորա յաջողուԹիւնս և արիածս նշանաւորս, գահոյս շաղախեալս արեամբ, կիրս բռնաւորս և ծախողականս, առաքինուԹիւնս վեհս, ոճիրս և վրէժխընդրուԹիւնս գժնդակս, ամենայն ուրեք սիպս մեծուԹեան, և յաճախ ուրեք վայրագուԹեան:

Առ 'ի ապաւորագոյն գործել ղազդեցուԹիւն պատկերացս՝ պարտ էր զատուցանել զմի մի 'ի համախմբուԹենէն, յոր հնոց քերԹողացն կցորդեալ էր գնոսա: Վաղ իսկ քերԹողք երկդանենին տալից և առաջնոց ողբերգուԹեանցն արարին զայս, այլ չեզև նոցա փոյԹ մերձ մատուցանել մեզ զայնոսիկ: Զի յոյժ առաւել յուղին գուԹք յականատես լինել ԹշուառուԹեանց՝ քան 'ի լսել զպատմուԹիւն նոցա. նմին իրի Եաբիկոս 'ի կիր էարկ զամենայն հնարս Թատերական յանդիմանուԹեան, առ 'ի դնել առաջի աչաց զժամանակ և զտեղի տեսարանին, որով պատրանք փոխեցան ինն 'ի ՃշմարտուԹիւն:

Եմայծ նա և միւս այլ դերասան յողբերգուԹիւնս իւր առաջինս. և ապա օրինակ առեալ 'ի Սոփոկլէ՝ որ այն ինչ յասպարէզ անդր մտեալ էր, կացոյց և երրորդ զոք, էր զի յաւելցուր և չորրորդ: Ի բազմանալ դիմաց՝ մին 'ի գիւցազն վիպացն կերպարաներ, յինքն առաւել զկարեկցուԹիւն ձգելով. և զի այնուհետև արբանեկէր ևԹէ պարն, Եաբիկոս համառօտեաց զնորին մասն, այլ Թերևս ոչ բաւական նպատէս:

Բայց Եաբիկոս ստգտանի վասն 'ի ներքս մուծանելոց դէմս համերս. զի Աքիլլէս յետ մահու բարեկամին իւրոյ, և Նիովբէ յետ որդւոցն իւրոց մեռանելոց ձգին 'ի Թատր,

և փոխանին բաղում տեսարանք, իսկ նոքա անշարժ կան քօղարկեալ դիմօք անբարբառս: Ա՛յլ ևԹէ տայր արտասուել նոցա և ողբոց բանս բարբառել, ներգործէր արդեօք զսոսկումն՝ զոր ազդէ քօղն ինքն և լուռ Թեամբ և լքեալ Թողեալ ԹաղծուԹեամբն:

Յոմանս 'ի քերԹուԹեանց նորա կարի յոյժ ընդարձակ է բացատրուԹիւն վիպացն, յայլս ոչ բացայայտ. և ԹէպԹէ սխալէ յաձախ ընդդէմ կարգաց որ յետոյ սահմանեցան, այլ գրեԹէ զամենայն իսկ նշմարել ընդ աղօտ:

Ի դէպ է ասել զնմանէ՝ որ ինչ ինքն յաղագս Իպպոմադոնի դիւցազին ասաց, Թէ պակուցումն գնայ առաջի նորա՝ յամպս զգլուխն ծրարեալ: Ամենայն ուրեք ազդէ արհաւիրս սաստիկս և պիտանիս. զի ոչ առ այլ ինչ շարժեալ տատանէ զոգիս մեր, բայց առ 'ի վերացուցանել զնա անդէն 'ի հանդէս զօրուԹեան իւրոյ: Դիւցազունք նորա լաւ համարին ամպահար սաստկիլ քան զլատուԹիւն երբեք յանձն առնուլ, և արիուԹիւն նոցա անողոքելի ևս է քան զանհրաժեշտ օրինս հարկին: Ա՛յլ որ այնպէսն ջանայ նահնար լիներ 'ի յուզել զկիրս, գիտեր զպատշաճ չափ յուզմանն: Զգուշացաւ նա չաղախել երբեք զտեսարանն առեամբ. զի պարտ համարեր նկարագրուԹեանցն իւրոց պակուցիչս գոլ, և մի ածել սոսկումն:

Դուն ուրեք շարժէ նա զարտասուս կամ յուզէ զգուԹս, բնուԹեան զգեցեալ զնա 'ի քաղցր զգացմանէն՝ որ կարեկիցս խնդրէ իւր, և կամ մանաւանդ զի զտնեիսեր 'ի մեղկեալ զլօղս: Ոչ զՓեդրա և ոչ զԱնԹենոպէ մարԹեր նմա ածել 'ի տեսարան, կամ նկարագրել զսղոքանս և զմոլեգնուԹիւնս սիրոյ: Զի 'ի յարձակմունս կրից այսոցիկ նկատեր մեղկուԹիւնս և ոճիրս զկծուցիչս բարուց ՚ի պատասխար օրինակաւն. և կամեր զի որոց կարեկիցն ասիպիսք լինել, սոխակիւք և 'ի մեծարել զնոսա:

Անցցուք յառաջ հեռևել նմա ընդ անհուն ասպարէզն զոր եհատ. և առցուք 'ի քնին՝ որպէս զայլ և այլ մասունս ողբերգուԹեան յարդարիցէ՝ զվէպն, զբառս, զմեղեդս, զտեսարանս և զերգս:

Կարգաւորութիւն քերթուածոց նորա է ամենապարզ. չէր ինչ նմա փոյթ, կամ մանաւանդ անծանօթ իսկ էր նմա արուեստ պատրաստակերպ զգեստաւորութեան, կաշկանդելոյ և լուծանելոյ զհանգոյց արարուածոյն, կապակցելոյ սերտիւ զմասունս նորա ընդ միմեանս, փութացուցանելոյ կամ յամենայնի զերթ իրացն յայտնութեամբ անծանօթին և կամ այլովք հանդոյն ինն անկընկալ պատահարօք: Ի ուրեք՝ ղն պատմութեամբ ևեթ իրացն և կենդանութեամբ զրուցասարութեանցն շարժէ զունկնդիրս, և ի դարձեալ՝ զն կորովութեամբ ասացուածոյն կամ արհաւրօք տեսլեանն: Չմիութիւն արարուածոյն և ժամանակի կարևորագոյն համարէր, որպէս երևի, իսկ զտեղոյն միութիւն ոչ նոյնպէս կարևոր:

Պարն ոչ ևս առ՝ ի նուագել ևեթ՝ ի քերթուածնա նորա մտանել, այլ կցորդի ամենայնի: Պատասպարան է նա տառապելոց, խորհրդական թագաւորաց, ահարկու բռնաւորաց, մտերիմ ամենեցուն. և ի զի խառնի նա յարատուածն՝ ի սկզբանէ մինչև ցվախճան: Պարտ էր քերթողաց, որ յեա նորա կացին, յաճախագոյն՝ ի կիր արկանել զայս. այլ և ոչ ինքն Եպիկուս վարեր միշտ սուաբ:

Նկարագիրը և բարք դիմաց իւրաքանչիւր զրուց՝ ի ներքս ածէ՝ պատկանաւորք են նոցա, և դուն ուրեք օտարանան՝ ի բնաւորութենէն: Ի դիւցազնոյն ժամանակաց առնու գրեթէ զամենայն նախատիպս իւր, և գերակայէ զնոսա՝ ի բարձու՝ ուր Հոմերոս զիւրան կացոյց: Ախորժէ նկարագրել զարս քաջասիրաս, խիզախս, գերազանցս երկիւղի, ինքնանուէրս հայրենեաց, անցագս՝ ի տենչ փառաց և պատերազմի, վեհագոյնս քան զրեթէ ժամանակին, այնպիսիս՝ որպիսիս կամէրն պատրաստել ախոյեանս Եկլադայ՝ զի յաւուրս պատերազմին Պարսից գրէր զքերթուածսն:

Ի մէջ լուսափայլ Ճառագայթից ուրեք ուրեք՝ ի քերթածս նորա գտանի մթութիւն, ոչ՝ ի կարի համառօտութենէն ևեթ և՝ ի յանդուգն ձևոցն՝ ի ներքս անկեալ՝ այլ

և՝ ի նորանոր բառիցն, որովք չանայ Ճոխացուցանել կամ ամրակուռ զբանն կազմել: Ոչ հաճոյ թուէր Եպիկեայ բարբառել դիւցազանցն իւրոց իբրև զայլս՝ ի մարդկանէ. զրուցասարութեան նոցա վայելէր իսկ գոլ՝ ի վեր քան զնաւանդ խօսս, այլ յաճախ ուրեք և քան զծանօթ բարբառ նկրտի՝ ի վեր: Բառք ստուարակարկառք և խիտք՝ յաւերակաց այլոց բառից կազմեալք՝ ամբառնան երբեք երբեք՝ ի միջոց բանիցն յամրութիւն ասացուածոյն, հանդոյն ինն աշտարակաց բարձանց՝ որ զքաղաքորմովք կանդնեալ, որպէս այլաբանէ Արիստոփան:

Կարի հուժկու էր ճարտարիօսութիւն Եպիկեայ, և ոչ է՝ ի դէպ խնդրել՝ ի նմա ընտրութիւն, ներգաշնակութիւն և ձեղուածիւն կանոնաց: Թափէք մատց նորա կարի յանդգնեալք էին, և չէր մարթ ազատ լինել նոցա յարատուղութենէ և յանկմանց: Ոճ նորա առ հասարակ վեհ և վսեմ է, ուրեք ուրեք կարի յոյժ մեծ և շքեղ մինչև ցճարտարուածութիւն, և մերթ օտարաբարթ և գժպհի անարդ նմանութեամբքն, և մանկական ծեքնայիւք բառից, և այլովք թերութեամբք ընդելականօք գրչաց՝ որոց առաւել հանճարոյ է զրուածիւն քան կիրթ ախորժակաց: Այլ հանդերձ ամենայն թերութեամբքն արժանի է նա բարձրագոյն դասու ընդ գերահռչակ քերթողս ելլադայ:

ՆՈՑՆ:

ԵՍԿԻԼՈՍ, ՍՈՓՈԿԼ ԵՒ ԵՒՐԻՊԻԴԷՍ

Բայց Թէսպէս և Արիստոփան դժկամակութեամբ էր ընդ Եւրիպիդեայ, վէմս նորա՝ ի տալ Եպիկեայ զառաջինն տեղին, և Սոփոկլի զերկրորդն, և զերրորդն Եւրիպիդեայ, էր յայնժամ համաձայն կարծեաց առաւելագունից յԱթենացւոց: Այլ ես առանց հաստատելոյ կամ

եղծանելոյ զայն, պատմեցից որ ինչ փոխոխմանն Սոփոկլ և Եւրիպիդէս արարին ի վատառակս Եաբլնեայ:

Սոփոկլ, ըստ նախապատուհասի իմոյ բանիս, եմոյծ երբորդ զոք գուսան յառաջին ողբերգուհիհնն իւր. Թողում զյաւելուած նկարուցն՝ որովք զարդարեաց զնաղեւոյն, և զնշանակս՝ զորս յաւել ի ձեռս ոմանց յաւագացն իւրոց: Ըսագտանէր զերեսին զայսոսիկ Եաբլնեայ, զկարի բարձրուհիւն իմասից նորա, զնակայաձև կերպարանս ասացուածոյ, և զառաժանաւոր կարգաւորուհիւն առաջարկուհեանն. և համարէր խոյս տուեալ իւր ի թերուհեանց աստի:

Եթէ նախատիպք որ յանդիման առնին մեզ ի տեսարանի՝ յոյժ բարձունք էին, ոչ ևս մարթէր ազեաց նոցա գորովել զմեզ, և ոչ օրինակի նոցա իրատեալ զմեզ: Պիւցազունք Սոփոկլի են կշիռ ի բարձրուհեան, ուր զարմանք մեր և կարեկցուհիւն հասանեն. և վասն զի ի վեր են քան զմեզ, և ոչ հեռի ի մէնջ, ամենայն որ ինչ պատկանի նոցա՝ ոչ անընտանի է մեզ, և ոչ յոյժ ընդելական. և վասն զի յեւս ահագին հանդէսս քաջուհեան պահեն զդիարուհիւն, ածեն գորով իմն վսեմ՝ որ առաւելագոյն զերիս նկարագրի քերթողիս ընծայեն:

Այնպէս զգուշանայ կալ ի սահմանս ճշմարիտ մեծուհեան, զի առ ահի արտասահման անկանելոյ՝ ջմոռի իսկ երբեմն անգր: Յարշաւասոյր ընթացս, մինչդեռ ահա բոցածաւալ բորբոքի, յանկարծ կասեալ շնչանի. զի լաւ արգելօք համարի զանկումն կամ զարտուղուհիւն:

Չէր նա քաջայարմար զկայ առնոյ ի ահարուհիւնս մարդկեղէն սրտի և ոչ ի նուաստ ոճիրս. այլ խնդրէր հոգի հզօր և բազմագուէթ, նովին իսկ և շարժիչ ի գուէթ. հոգի՝ որ սահանիցի յարկածից, այլ անկուն առանց ամբարհաւճուհեան:

Սոփոկլ յածել զդիւցազնուհիւն ի պատշաճ չափն, ցածոյց զբարբառ ողբերգուհեան և մերժեաց ի բաց ըզբացատրուհիւնս՝ զորս աշխոյժ ցնորք մատց Թեսպրդեին

Եաբլնեայ, և որք արհաւիրս ի սիրտս տեսողաց արկանէին: Եղանակ բանից նորա, որպէս զհոմերականն, զօրաւոր է և մեծամայելուչ աշխուհական և քաղցր, և ի նկարագրուհիւն բռնագոյն իսկ կրից՝ քաջ պատշաճեալ պայմանի խօսելեացն:

Եաբլնեայ նկարեալ զմարդիկ վեհագոյնս քան զկար նոցա, Սոփոկլ որպիսիս անկ էր նոցա գոլ, իսկ Եւրիպիդէս որպիսիք են: Առաջինք երկոքին Թողին ի բաց զկիրս և ըզհանգամանս, զորս երբորդն վարկաւ ընդունականս մեծամեծ արգասեաց: Մերթ յանդիման արար տիկնայս բորբոքեալս սիրով, տափագեալս ի շնուհիւն և յոճիրս. և մերթ Թագաւորս կործանեալս յարկածից ի Թշուառուհիւն, մինչև մատրացիկ չըլլել ցնցուղովք: Նկարագիրըս այսքիկ, յորս ոչ ևս նշմարէին զրոշմն ձեռնին Եաբլնեայ և Սոփոկլի, սարտուցին անդէն ի սկզբան զոգիս: Կէսք առէին՝ Թէ չէ պարտ և ոչ միով իւրք պատճառանօք արատել զբարս և զաստիճան դիւցազնից ի տեսարանի. իսկ այլք՝ Թէ անպատիւ է գծագրել արուեստիս պատկերս անհամեստս, և վանդալաւոր՝ ընծայել տխուից զղօրուհիւն օրինակի արանց աւագաց:

Այլ ոչ ևս այն ժամանակ էր, յորժամ օրէնք պատուհասակոծ առնէին զճարտարս՝ որք անպարկեշտս զձեռակերտս յօրինէին: Մեղկէին ոգիք, և սահմանք պատշաճիցն օր ըստ օրէ ընդարձակէին: Բազմապոյնք յատենասացս փոխանակ դժկամակելոյ ընդ հարուածոն՝ զորս քերթուհեիհնք Եւրիպիդեայ տային հասարակաց կարծեաց, զգածէին կրիւք՝ յորս զբռնէին զնոսա: Փոխեղն քերթողս այս, աշխոյհակ ի յանդիման առնել զամենայն կիրս, զարմանալի ևս է ի նկարագրել զմոլեգնուհիհնս սիրոյ և ի յուզել զգուհես. զի անդ արդարև գեր ի վերոյ և քան զանձն իսկ ամբառնայ, և հասանէ ի վսեմն՝ յոր բնուհեանն չերևի սահմանեալ զնա: Աթենացիք ի գուէթ հանդաղատեցան ընդ ազէտս Փեդրայ անդէն իսկ ի յանցանսն, արտասուեցին ընդ Թշուառուհիւն Տելեփեայ, և ոչ ինչ մեղադրեցին քերթողին:

Եւրիպիդէս մինչ ամբաստանէին մեղկիչ ոգեբերու-
թեան, դուն գործէր ՚ի յարդարել զայն գովոց խմաստու-
թեան: Է ՚ի քերթածս նորա վարդապետութիւն Անաքսա-
գորայ վարժապետին իւրոյ յաղագս լինելութեան էից և
կարգաց բարոյականին՝ զորոց վարդապետէրն յայնժամ
Սոկրատ բարեկամն իւր: Եւ վասն զի ախորժելի եր Աթե-
նացւոց բազմաղուեսան ճարտարախօսութիւն՝ յոր ՚ի Պրո-
տիկեայ վարժեալն էր, Քանզի մանաւանդ պարարել նովաւ
զլսելիս նոցա: Որով վարժք խմաստասիրութեան և հռետո-
րականին զարգք ընդունելի եղեն յողբերգութեան. և այ-
սու ևս մասամբ Եւրիպիդէս քան զքերթողս որ յառաջ
քան զնա կացին՝ դասս երևելի:

Ի քերթութիւնս Եսքիլեայ և Սոփոկլի փութան կիրք
՚ի նպատակն, առանց յաճախելոյ խմասս՝ նահանջիչ ըն-
թացից իւրեանց. մանաւանդ Սոփոկլ ձեռ ՚ի ձեպս և գոգ-
ցես լինն անխորհրդաբար սահմանել միանգամայն զբարս, և
յայտնել զկիրս գաղտնիս զայնոցիկ՝ զորս ածէ ՚ի տեսարան:
Այսպէս յողբերգութենէն Անռիպոնայ, բառիս միով վա-
զելով ընդ չքերթուն սիկնոյն, յայտ առնէ զսուփանս նորա
ընդ որդւոյ իւրում Կրէոնի:

Եւրիպիդէս յաճախեալ զքերթս և զտեսութիւնս. ա-
խորժէ նա և պարս իսկ համարի հոլանել զդիտութիւնս
իւր. և բազում ուրեք պարապէ ՚ի ձևս ճարտասանականս:
Սմին իրի պէսպէս դատաստանք առնին զբերթողս, և յայլ
և այլ դէմս նկատի: Իբրև մի յիմաստասիրեայ բազում ու-
նի իւր կուսակիցս. աշակերտք Անաքսագորայ և Սոկրա-
տայ ըստ օրինակի վարժապետացն, ուրոց լինելին ընդ
յաղթանակել վարդապետութեան իւրեանց ՚ի տեսարա-
նի. և հերքեալ միայն զբացատրութիւնս ինչ նորոյ թարգ-
մանին իւրեանց նպաստամատոյց ինքնինքանութեան, հա-
մարձակ կացին ջատագով այնմ՝՚ որ յորդորէրն ՚ի սէր պար-
տուոյ և առաքինութեան, և որ ոչ անդ զկայ առեալ՝ քարո-
զէրն յայտնաբարբառ, զի ոչ զդիս պարտ է ամբաստանել
՚ի կիրս ամօթալիս, այլ զմարդիկ՝ որ չարախօսեանն զնոցանէ:

Եւ վասն զի զնդագոյնս հաստատէր զվարդապետութիւնս
կարևորս բարոյականին, դասեցաւ նա ՚ի Թիւ խմաստնոցն.
և համարեսցի մինչև ՚ի սպառ խմաստասէր ոգեբերդու:

Ճարտասանութիւն նորա, զառածեալ ուրեք ուրեք ՚ի
նմոսի յորդութիւն բառից, ոչ ինչ նուազ կացոյց զնա հըն-
չակաւոր ՚ի Ճարտարախօսս առ հասարակ, և մանաւանդ ՚ի
փաստաբանս: Չամոզէ եռանդուն խմասութիւն, և խեչա-
մուտ առնէ Ճարտարութեամբն՝ որով ածեալ թափէ զմի-
մեամբք զպատասխանին:

Գեղեցկութիւնք քերթածոց նորա, ընդ որս զարմա-
նան խմաստասէրքն և Ճարտարախօսք, Թուին յաչս պար-
սաւադիտաց նորա Թերութիւնք ծանունք: Իբր զի այն
յաճախաւոր ասացուածք հռետորականք, և առածք չեղ-
չակուռեալք, և գրուագք հմտութեանց և վէճք ընդվայ-
րաքննիք, խափանիցեն զլսելս կրից: Եւ յայն սակս իսկ յոյժ
՚ի վայր դասեն զԵւրիպիդէս քան զՍոփոկլ, որ ոչ ինչ ա-
վելորդ ՚ի ներքս խառնէ:

Եսքիլեայ ՚ի տիպս կերպարանաց բանիցն պահեալ ըզ-
քաջայանգուդն ձևս երիդունեցին տալոյ, և Սոփոկլի զմեծ-
վայելչութիւն գիւցազնականին, իսկ Եւրիպիդէս սահմա-
նեաց զբարբառս ոգեբերդութեան: Զպահեաց նա գրեթէ և
ոչ մի ինչ ՚ի բացատրութենէ սեփականելոյ բանաստեղ-
ծութեան, այլ գիտաց այնպէս ընտրանաւ ՚ի կիր արկանել
զսովորականս, զի Ճարտար զուգադրութեամբ նոցա՝ տկա-
րութիւն խմասցին զոգեկս իմն ծածկէր, և կարի իսկ հա-
սարակաց ՚ի բառից աղնուանային: Այնպիսի կախարդանք
են գիւթական այնր ասացուածոյ, զի կշիռ ՚ի միջասահմա-
նին կացեալ նուաստութեան և բարձրութեան՝ գրեթէ
միշտ ընտիր և յատակ գտանի, գրեթէ միշտ քաղցրալուր
հեղասահ և առ ամենայն խմասս մտաց գիւրայարմար:

Այլ նա կարի տաժանէր ՚ի կազմել զտոլս գիւրինս.
հանդոյն Պլատոնի և Զենքսեայ, և ամենեցուն որ միանգամ
նկրտին ՚ի կատարելութիւն, գատեր զերկս իւր խատու-
թեամբ ոսոխի, և խնամեր հայրենի գթով: Ցասել նորա եր-

բեմն՝ զի ՚ի յօրինուած երից տողից զաւուրս երիս աշխատ լեալ էր, ասէ ցնա մի ՚ի սինկզոր քերթողաց. Թէ ես էի, տողս հարիւր յերիս աւուրս յօրինէի: Եւ Եւրիպիդէս ասէ. Գիտեմ և ես. այլ ոչ ինչ աւելի քան զերիս աւուրս յերկարակեաց լինելին տողք քո:

Ոչ ումեք արդ պարսաւ այսպիսի իշխելի է առնել. այլ յաւուրս Աբիատփանեայ սովորեալ բազմաց ՚ի մանկութենէ յահեղ և ՚ի մեծավայելուչ եղանակ ողբերգութեան, սարսռուն ՚ի լուր նորաձև ոլորակացն բախելոյ զսանդիս նոցա: Այլ քաղցրութիւն Թուլացոյց ապա զնաստութիւն կարգաց ՚ի սուղ ժամանակի յայլմանակեալ:

Այլ ըստ կազմածոյ ողբերգութեանց՝ յայլոզ ՚ի բազմաց վկայի Սոփոկլ: Մարթի իսկ յուշանել, զի գրեթէ ամենայն օրինք ողբերգութեան ՚ի քերթութենանց նորա առան. այլ քանզի ուր զկիրթ անորժակաց բանք էին, քնոտութիւն բարւոյ մատենի գրեթէ միշտ գտանի մատեան յոռի, անտես ՚ի նմա լեալ զգօն և պատկանաւոր գեղեցկութենացն մասն ոչ սակաւ, նմին իրի հասարակաբար աւերէ շատ լինի ասել զքերթողս, զի ազատ գտաւ ՚ի մեծամեծ թերութենացն՝ որ սպառանին ՚ի քերթութիւնս իւրոյ ոսոխին:

Դուն ուրեք Եւրիպիդէս յաջողի ՚ի կարգաւորութիւն վիպացն. մերթ ՚ի հաւանականութիւն իրացն ստանել, և մերթ բանի զեկամուտ գեպս ՚ի ներքս մուծանել. և է ուրեք՝ զի ոչ ևս մի ինչ արարուածն գտանի, և գրեթէ միշտ ՚ի կնճիռն վիպացն և ՚ի լուծումն նորա միայ ինչ ցանկալի, և բազում՝ այն է՝ զի պարք նորա ոչ քաջ ընդ վէպսն կցորդին:

Իսկ Եաքիլ և Սոփոկլ Ճարտար արուեստիւ անդստին ՚ի բկղբանի ողբերգութեանն յայտ առնեն զաւագաքարկութիւնն, զոր և Եւրիպիդեայ երևի դողացեալ ՚ի նոցանէ ՚ի Մեդեայն իւր և յԻփիգենեայն ողբերգութեան: Բայց տարաշ քերթութեան նորա, Թէսպէս և գրեթէ միշտ անարուեստ, ոչ է դատապարտեալ ՚ի հանճարեղ քննողաց:

Եաքիլ, Սոփոկլ և Եւրիպիդէս եղեն և լեցին միշտ նախապատիւք ՚ի պայծառացուցիչս տեսարանին: Եւ զնաճրդ ապա ՚ի բազմապատիկ քերթութեանցն զորս ածին ՚ի պայքար, երեքատասան ողբերգութիւնք ևեթ առաջնոյն պատկեցան, երկրորդին ութեւտասան, և հինգ՝ երրորդին: Քանզի զյաղթութիւնն ամբոխն սահմանեաց, իսկ զկարդ քաջութեան նոցա հասարակաց դատաստան: Ամբոխին էին խնամակալք՝ զորոց գդուէր նա զկիրս, և սիրելիք՝ որոց պարզասպարան լինէր ըղձից. ասէ չարարուեստ հնարքն և բռնութիւնք և անիրաւութիւնք ՚ի ժամ վճռոյն ՚ի ներքս մղանէին: Իսկ դատաստան հասարակաց, այս ինքն է ողջամտագոյն մասին ազգին, թէպէտ և երբեք երբեք շլացաւ յաղօտ ինչ նշուլից գեղեցկութեան սփռելոց ՚ի հեռաւակ դրուածս, այլ ոչ յամեաց հատուցանել հանճարեղ մարդկան զիւրաքանչ կարգ և տեղի՝ խելամտել գերակայութեան նոցա ընդունային ճգամբք ոսոխաց նոցա և յաջորդաց:

ՆՈՅՆ:

ԻՊՈԿՐԱՏ ԿԱՄ ՍՏՈՑԳ ԲԺԻՇԿ

Ի կղզւոջ Կովծնաւ Իպոկրատ յառաջնումն ամի ութանեւերորդի ոլիմպիադին: Եւ էր նա յազգէ ասկլեպեանց, որք դարուց ՚ի դարս պահէն զուսումն աւանդեալ Ասկլեպեայ՝ զոր նախահայր ազգատոհմին իւրեանց համարին. և էն նոցա դպրոցք երեք, ՚ի Հռոդոս, ՚ի Կնիդոս, և ՚ի Կով:

Ասկլեպիաս ՚ի հօրէն իւրմէ ՚ի Հերակլիդեայ զնախակրթութիւնս գիտութեանց ընկալաւ. բայց վաղ խելամուտ լեալ, զի առ ՚ի գիտել զէութիւն մարմնոյ իւրքանչիւր հարկ էր հետազօտել զբաղկացուածսնորա, այնու մտադիւրութեամբ պարապեցաւ ՚ի բնաքննութիւն առ հասարակ՝ զի ընդ երևելագոյնս ՚ի բնագիտաց դասեցաւ վիճաբան:

Բժշկականին յայնժամ արուեստի աւանդապահք էին կրկին դասք արանց, որք զանխուէ՛ի միմեանց գուն գործէին կազմել նմա պայծառ յաղթանակ:

Այս իմաստասէրքս պարապեալք՛ի հետազոտութիւն էից առհասարակ՝ չկարէին անտես առնել զմարմին մարդկեղէն, և չսահմանել զպատճառս որ՛ի նմա ներգործեալ ստէպ յեղափոխութեանցն. և անդ զաւակին Ասկլեպեայ դարմանէր զախտս ըստ կարգաց հաստատելոց՛ի բազմաց բժշկութենէ, և երբեակ գպրոցք նորա պանծային նահանջընդդէմ իրերաց՛ի հնարագիտութիւնս իւրեանց բազմութ: Մինչդեռ իմաստասէրքս ճառէին, և ասկլեպեանք գործէին, Իպոկրատ զմտութիւնս իւրաքանչիւրոցն յանձին բերելով, երկնեաց զմի՛ի մեծամեծացն և՛ի կարեւոր խորհրդոց՝ որ թուականութիւնս նորս՛ի վէպս հանճարոյ սահմանեն. քանզի պատճառօք պայծառացոյց զիորձ, և զտեսութիւնս գիտութեան գործովք հաւաստեաց: Այլ՛ի տեսութիւնս յայսոսիկ այլ ինչ ոչ՛ի ներքս խառնեաց՝ բաց՛ի պատճառաց ազգի ազգի կրից, որ երևին՛ի մարդկեղէն մարմնի՝ նկատեալ ըստ հիւանդութեան և ըստ առողջութեան:

Սովին ոճով ամբարձեալ արուեստն՛ի փառս գիտութեան, անսայթաքելի ևս յառաջ խաղաց ընդ ուղին՝ այն ինչ բացեալ առաջի. և Իպոկրատ կատարեաց խաղաղութեամբ ընդօրաձեւութիւնն, որ զբժշկականն կերպարանափոխ արար զարուեստս: Լուիմ ասասնօր զդէղոյն յաջողութեան զհանդէս, և զզարմանալիսն գործեցեալս ուր և հասանէին ոտք նորա. մանաւանդ՛ի Թեսալիա, ուր և կեցեալ բաղում ժամանակս՝ վախճանեցաւ սակաւ ինչ յառաջ քան զհասանելն իմ՝ Յելլադա: Այլ զայն ոչ լուեցից, զի ոչ խնդիր ինչ շահու, և ոչ իղձք համբաւու ածին զնա՛ի տար աշխարհս, այլ յամենայնի՝ որ ինչ յաղագս նորա պատմեցաւ ինձ՝ խնամուա եղէ, զի մի ինչ էր նորա ցանկութիւն՝ սէր բարւոյ, և մի յամենայն կեանս նորա պարապուն՝ խնամել զախտաժէտս:

Եթող նա բաղում գիրս, յորոց կէսք օրագիրք էն՝ որ ախտից դարմանելոց՛ի նմանէ անընդհատ. այլք բովանդակեն որ ինչ՛ի փորձոյ իւրմէ եւ անցելոց գարուց լեալ արգասիք. և կէսք դարձեալ ճառէն զպարտուց բժշկի, և զյատկութենէ մասանց բժշկութեան կամ բնաբանութեան:

Ուշի մօք արժան է զամենայն գիրս նորա ընթեռնուլ. քանզի բազում ուրեք զսերմանս եւեթ վարդապետութեանն արկանէ՛ի նոսա, և զամենայն իսկ ուրեք համառօտագոյնս ճառէ, այլ՛ի սուղ բանն բազում ինչ բովանդակել. ոչ երբեք զարտուղի յառաջարկեալ նպատակէն, և՛ի դիմելն անդր՝ թողու զհետ իւր նշոյլս առաւել կամ նուազ լուսաւորս ըստ կորովութեան մտաց ընթեռնլեացն: Զի այսպէս սովոր էին նախնի իմաստասիրքս յաւելուլ նորանոր հմտութիւնս՝ քան յաճախել ճառս զայսմանեաց: Մաւեանք առնս մեծի զմաւնագրին բերեն յիւրեանս զնկարագիրս: Զնք ինչ սիրելի քան զանկեղծութիւն, որով խոստովան լինի զարհածս և զվրիպակս իւր: Տեսցես անդ զգուշակ զոր՛ի ճարակել ժանտախտին դարմանէր, և յորոց բազմագոյնք՛ի վերայ բազկաց իւրոց անչէացան: Եւ այլուր տեսցես առնիթեր Թեսալացւոց ուրուման հարուածելոյ՛ի գլուխ իւր քարամբ: Ոչ՛ի դէպ Թուի նմա՛ի սկզբան անդ ձեռնարկել՛ի հատուման. այլ ասա՛ի գժնդակ նշանացն՛ի միտ առեալ զսխալանս իւր, անտգան՛ի հնդեւասանէրորդում աւուր ձեռն՛ի գործ առնէ. և՛ի վաղիւ անդրը մեռանի վիրաւորեալն: Զայս ամենայն ինքնին խոստովան լինի, և դեր՛ի վերոյ արշաւեալ ամենայն ըղձից անձնասիրութեան՝ զսխալանս իւր աւանդէ առ՛ի խրատս: Եւ ոչ շատ համարեալ նուիրել զկեանս իւր՛ի սփոփումն վշտացելոց, և աւանդել՛ի գիրս իւր զվարժս գիտութեան՝ որոյ ինքն եղև հաւակ, եթող և կանոնս՛ի հրահանգս բժշկացս, զորոց ասատնօր՛ի հարևանցի տամ զտեսութիւն:

Կեանք սուղ, և արուեստ՝ որով վարիմք՝ այնքանեաց կարօտ վարժից, զի անդստին՛ի մատաղ տիոց պարտ է կըրթել մեզ՛ի նոյն: Եթէ առաջի կայցէ քեզ վարժել զոք՛ի

համբակաց, քննեա յուշիկ զարմարուեթիւն նորա. զի ե-
թէ ոչ նորա ՚ի քէն քաջ ընտրուեթիւն և ողջմիտ գա-
տուածն, հեզուեթիւն հանդերձ անյաղթող հաստատու-
թեամբ, աշխատասիրուեթիւն և առ ՚ի պատշաճն յօժա-
րուեթիւն, յուսալի է քեզ: Իսկ եթէ վչտանայ ընդ վչտա-
նալ, և սիրա նորա բարեգործով ախորժէ կարեկից լինել
մարդկան, գիտասջիր զի կապեսցի ոգի նորա ընդ արուես-
տին՝ որ ուսուցանէ օգնել նոցա:

Ուստ ՚ի մանկուեթենէ զեռս նորա ՚ի գործանս վերա-
բուժուեթեան, այլ ոչ ՚ի հատուած. զի զայն ՚ի ձարտարս
արուեստին պարտ է ապաստան առնել: Աճ զնա ընդ
կարգս գիտուեթեանց, և ուսցի ՚ի բնաբանուեթենէ զաղ-
դեցուեթիւն նահանգին ՚ի մարմին մարդկեղէն. եթէ կամիցի
շջջել ընդ քաղաքս առ ՚ի յուեղերս ՚ի հմուեթիւն, խրա-
տեա զնա զնել զդիրս վայրաց, զկեղմունս օդոց, զջուրս
երկրին ըմպելիս, և զբերս՝ որովք բնակիչք երկրին կեր-
կրին. և համայն ասացեալ, որ ինչ այլոյլ զկազմած կեն-
դանեաց: Ցուցցես նմա որ ինչ նշանք ախտից իւրաքանչիւր
կարապետք լինին, և որով զգուշուեթեամբ մարթի է խուսա-
փել ՚ի նոցանէ, և որպիսի ինչ գարմանով բժշկել զնոսա:

Եւ երբև ՚ի միա առցէ զվարդապետուեթիւնս քո պար-
զաբանեալս ՚ի կարդ զուցաորուեթեանց, և համառօտեալս
՚ի քէն ՚ի վճիռս դիւրընկալս յիշողականին, ուսուսցես նը-
մա զի բազմավաստակ ևս է գիտուեթիւն առանց փորձոյ,
քան փորձն ինքնին միայնակ. և զի ժամ է այնուհետև զո-
րէնան հանրակացս բազդատելոյ ընդ դէպս իւրաքանչիւր,
որոց հանապազ փոփոխելով պատրէն յաճախս զբժիշկս
վեր ՚ի վերոյ նմանուեթեամբքն. և զի գործեալ ոչ ՚ի փոշոշ
գալոցաց և ոչ ՚ի գիրս իմաստասիրաց և օրէնսդիտաց է ու-
սանիլ զարուեստս հարցանելոց զբնուեթիւն, և զգիուրին
ևս արուեստ՝ առնոյ ՚ի նմանէ պատասխանի: Զև ևս ձա-
նաչէ նա զբնուեթիւն, զի մինչև ցայսվայր նկատեաց զնա ՚ի
զօրուեթեան և անխափան յընթացս իւր: Աճ զնա յո-
ղեւանս ցաւոց, ուր բնուեթիւնն ծածկեալ ՚ի սուեղերայ մա-

հու, նշաւակն հինից թշնամւոյն սասանիլ յարձակմանց,
անկեալ և կանգնեալ առ ՚ի վերստին անկումն, յանդիման
առնէ ախտն զինողն զկարօտուեթիւն իւր և զզօրուեթիւն: Ի
տեսիլ մարտին համշակն ահաբեկ՝ տեսցէ զքեզ գէտ կա-
ցեալ առ ՚ի գտանել պարապ կանգնելոց զպաղեթուեթիւն, և
սահմանելոց զկեանս ախտացելոյն: Եթէ վայրիկ մի հատցէ
քեզ մեկնել ՚ի ճակատուն տեղւոջէն, հրամայեսցես նմա
կալ անդ և դիտել, և տալ տպա զհամար անցիցն և զփոփո-
խուեթեանց՝ որ գիտիցին ՚ի կալ քո ՚ի բացեայ, և որ ինչ
դեղ գարմանոյ ՚ի գեղ Թուիցի նմա առնել:

Գանգի կացուցանելով զնա տեպ ՚ի զինն ահաւոր և
հրահանգիչ տեսարանին, ընծայեսցես զնա ըստ կարի ՚ի
խորհուրդս Թագուստս բնուեթեան և արուեստին: Եւ ոչ
այսչափ միայն, այլ և զի յաշակերտել քո զնա խուն ինչ
վարձու՝ երդուաւ նա ՚ի պահել ՚ի բարս իւր և ՚ի պաշտա-
ման ուղղուեթիւն անյեղլի, մի զուխան զայն շատ համա-
րեսցի. զի առանց առաքինուեթեանց, որ իւրում պայմանին
են անկ, ոչ երբեք ընտրել կարասցէ զպարտան: Եւ որ այն
առաքինուեթիւնքն լցեն. ոչ ՚ի բաց առնուսդ զրեթէ և ոչ զմի
ինչ. քանզի այն խակ է պատիւ պաշտաման նորա. զի խըն-
դրի առ այն պարառուեթիւն ամենայն բարեմասնուեթեանց
մտաց և սրտի: Զի եթէ ոչ ՚ի զգուշուեթիւն և յիմաստու-
թիւն նորա արժան լցէ վստահել, ո՞ ՚ի տանուտեարց, ՚ի
կոչէլն զնա չերկնչցին՝ թէ գուցէ լցեսս զոք կամ նենգա-
ւոր ՚ի տուն իւր մուծանիցէ, կամ ապականիչ կնոջ իւրոյ
և դստերաց: Եւ զնմանդ մարթի վստահել ՚ի մարդասիրու-
թիւն նորա, եթէ անպատականաւոր զուարճուեթեամբ մա-
լիցէ առ ախտաժէտս, և կամ խոստուեթեամբ լիս և տա-
ժանուեթեամբ: Զիմիդ ՚ի հաստատուեթիւն մտացն, եթէ
սարկաւար մարդասիրուեթեամբ գգուիցէ զգժկամակու-
թիւն նոցա, և զկնճռիցն յանձնահաճ կամս նոցա: Զիմիդ
՚ի խոհականուեթիւն նորա, եթէ զարդուց պարապիցի, և
իւղովք անուշիւք օծանիցի, և հանդերձս շքեղս զգեցեալ
շջջիցի քաղաք ՚ի քաղաքէ, արտասանել ՚ի պարծանս ա-

րուեստին իւրոյ ձառա՝ յեղյեղելով վկայութիւնս ի քերթողաց: Զի՞նչդ ի գիտութիւնս նորա, եթէ ընդ արդարութեան հաստարակաց՝ որով այլ լաւ վարի առ ամենայն մարդիկ՝ ոչ ուղղիցէ և զայն, որով այր խնամատուն վարի ընդ անձին իւրում, և որ ուսուցանէ նմա, զի և բազմահմտութիւն թէ իցէ՝ կարօտ գտանի քան առաւելեալ գիտութեամբք: Չի՞նչդ ի դիպաւորութիւնս նորա, եթէ իշխեն նմա խօլ ամբարտաւանութիւն և նախանձ՝ որ ոչն երբեք եղև բաժին առն մեծախոհի, եթէ զամենայն ազնուական մտածութիւնս փոխանակեալ ընդ շահուց՝ մեծատանց և եթէ սպաս մատուցանիցէ, և եթէ օրէն համարեալ զովութիւնն յառաջադոյն սակ արկանելոյ բժշկութեան, յամառիցի ի կատարել զաշխատութիւնն՝ թէպէտ և հիւանդին ժամ ի ժամ զայրանայցէ ախտն:

Յոռութիւնքս այսոքիկ և թերութիւնք՝ զոգէտս և զյանդուգն մարդկանն բերեն Ճշդրիտ գնկարագիրս, որովք լի է Ելլադա. որք անարգեն զազնուականագոյնն յարուեստս, վաճառականք լինելով կենաց մարդկան և մահու. խաբեբայք ճնաճակարագոյնք ևս այնու, զի օրէնք ինչ նոցա ոչ ստնանեն, և ոչ նախատինք կորացուցանեն գնոսա:

Եւ որ այն բժիշկ իցէ, որ պատուէ զարուեստ իւր: Այն՝ որ ըստ արժանւոյն մեծարի յամենեցունց ներհուն գիտութեամբն, բազմաժամանակեայ փորձով, արդարակորով ուղղութեամբ, և անսոգիւտ վարուք: Այն՝ որ յամենայն վշտացեալս հաւասար դթով ակնարկէ, որպէս Աստուած ի մարդիկ, հաստանէ ի կարդալ նոցա յօգնութիւն առանց ակնառութեան, խօսի ընդ նոսա քաղցրութեամբ, լսէ նոցա մտադիւրութեամբ, երկայնամտէ կարճմտութեան նոցա, և ազդէ ի նոսա արիութիւն լինի՝ որ բաւական է երբեմն դարձուցանելոյ գնոսա ի կեանս: Այն՝ որ կարեկիցէ լեալ չարեաց նոցա, այնպագոյնս հետազօտէ ըզպատճառս և զղայրացումն նոցա, որ ի յեղակարծ պատահարաց ոչ ամբոխի, և որ պարտ անձին վարկանի կոչել զհամարեստ իւր յօգնութիւն՝ ի կարիս՝ խորհրդակից լինել

ընդ նոսա: Եւ այն դարձեալ, որ ամենայն զօրութեամբ մաքառեալ ընդ ախտին, գտանի հաճ և անպարծ ի չաղթանակելն. իսկ ի չյաջողելն՝ ուրախ լինի դարձեալ, զի դէթ վայրիկ մի դուլ արար ցաւոյն և սիրախտս ախտացեալին:

Ահա բժիշկն խնամատարն՝ զոր Իպոկրատ աստուծոյ նմանեցուցանէ, զանձին իւրոյ յանգէտս ցուցեալ այնու գնկարագիր: Այլք բազմահանճարք, գերազանցութեան հանճարոյ նորա խելամուտք, լուսոյ բազում անգամ զի առնէին՝ թէ միտքն ի սպառ մեծարեսցի նա ի բժշկայս որպէս նախասկիզբն և Ճարտարագոյն օրհնագիրս նոցա, և զի վարդապետութիւն նորա ընդունելի լեալ առ ամենայն ազգս՝ գործեսցէ բիւրս բիւրոց բժշկութեանց ընդ բազմահոլով պարագայս դարուց: Եթէ գուշակութիւնս այս լցի, ինքնակալութիւնք լայնատարածք ոչ հաւասարեսցեն ընդ անձուկ կղզեայն՝ որ եւս զայրն օգտակարագոյն մարդկան, և յաչս խնամանոց խոնարհեցոյն անուանք աշխարհակալ հզօրաց առաջի անուանն Իպոկրատայ:

ՆՈՑՆ:

ՀԵՐՈՆԻՄՈՍ, ԱՒԳՈՍՏԻՆՈՍ ԵՒ ԿՈՍՏԱՆԴԻՆ

Հերոնիմոս՝ տոհմիկ պանիոնեացի՝ անդատին յանախական հասակին երևեցուցանէր զհանճար իւր գեղեցիկ, այլ և զեռանդն կրից. ցնորք մտաց նորա անսանձելի՝ չտալ ինձնմէ դուլ և դադար. ի ծայրայեղ ուսումնասիրութենէ յանառակութիւն արագ արագ զառածանէր չհաւատալի: Յասկուս, անհանդարտ, գժուարին ի ներել թշնամանաց՝ մերթ խուժադուժ և մերթ վեմ հանճարով Թուի ինձ սահմանեալ յօրինակ մեծաց խակագործութեանց և կամ խստակրօն առաքինութեանց. բուռն միտք նորա ի հառվմ՝ կամ յանապատ վայելուչ գոն:

Միւսն ՚ի բարեկամաց իմոց Աւգոստինոս՝ ՚ի վերին ուրեք կուսակալութեան Կապադովկեայ, թէպէտ և իբրև ըզՀերոնիմոս դիւրայոյզ ՚ի կիրս, այլ ախորժելի ինն քաղցրութիւն բերէ յանձին, ընդաբոյս մտախոհութեամբ բարեհաճեալ բնաւորութիւն նորա: Բայց պարապաւելի է զվերծանել նորա հանճարոյն իւրով. և առաւելազանց գոլով սրտի՝ զառածանէ զնա երբեմն յաւիւն: Խուռն ՚ի բերանոյ նորա զվուն անդադար պերճ բացատրութիւնք և խմաստք խորինք, պայծառ նկարագրութեամբք զարգարեալ: Ծնեալ յԱֆրիկէ, եգիտ նա ՚ի կանայս՝ որպէս զՀերոնիմոս՝ վանդպ առաքինութեանց իւրոց և աղբիւրս վերպատանացն: Հաւատոյականին պեղոյ տարփացեալ, գայցէ թերևս օր՝ յորում ոք ՚ի հոգեկիր Ճարտասանից ածցէ զնա ՚ի հաւատս ուղղութեան. և եթէ երբէք մտցէ Աւգոստինոս ՚ի ծոց եկեղեցւոյ, լցցի նա միւս այլ Պլատոն քրիստոնեայ:

Իսկ Կոստանդին, որդի մեծի ինքնակալին, բերէ յանձին բովանդակ զնկարագիրս առն մեծի: Ընդ կորով սրտի կցորդեալ և զկերպարանաց վայելչութիւն, պիտանի յոյժ իշխանաց, յաճախելով զպայծառութիւն գեղեցիկ գործոց նոցա: Մայր նորա Հելենէ գտաւ բարեբաստիկ, ծնեալ ՚ի հաւատս Քրիստոսի. և Կոստանդին ըստ օրինակի հօր իւրոյ Թռւի միտեալ ՚ի նոյն օրէնս աստուածայնի: Ընդ կարի հեզութեան երևի ՚ի նմա դիւցազնական արուութիւն, և չդիտեմ որպիսի ինչ հրաշափառագոյն զոր տպաւորէն երկինք յայնոսիկ՝ որք ՚ի յեղափոխութիւն աշխարհն են սահմանեալ: Երանի նմա եթէ ոչ զառածանիցի ՚ի զայրոյթ բարկութեան, դառնացէա յայնոսիկ՝ որք հեղքն են բնաւորեալ: Ահաւ, քանի ողբոց են արժանի իշխանք՝ վասն հրամանաց նոցա անդէն վաղվաղակի կատարելոյ. քանի կրեկից արժան է լինել նոցա, ածեալ զմտաւ՝ զի արգասիք են նախկին չարժման նոցա, որ ինչ ՚ի նոսա տեսանեմք, և զի Աստուած առ ՚ի խրատել զնոսա ՚ի ղդուշութիւն կրիցի՝ ոչ ասյ նոցա:

ՇԱԴՈՊՐԻԱՆ:

ԿԱՐԴԵՍԻՈՍ

Ազք մեծահանճարք, յոր ծագս աշխարհն և իցէք, այս է ձեր ճակատագիրք. վիշտք և զղուանք և հալածանք, արհամարհութիւն իշխանաց, հովութիւն սոսկականաց, չարախօսութիւնք նախանձորդաց կամ որոց նախանձորդս ձեզ զանձինս համարիցին, աշխատութիւն և վտարանգութիւնք, թերևս և մահ անգամ անծանօթ ՚ի հեռաւոր օտարութեան ՚ի ձերոց հայրենեաց. այսոքիկ են ահա բաժինք վիճակիլ ձերոյ: Եւ զի՞նչ ասեմ. գուցէ արդեօք ձեռընթաքն ՚ի հրահանգելոյ զմարդիկ լինիցիք. Ոչ. մի այդպէս: Սակայն թէ եւ կամիցիք լինչ, միթէ ձեռնհաս իցէք ՚ի նոյն. միթէ կարո՞ղ լինչ իցէք սանձ դնել ձերումդ հանճարոյ, կամ զդէմ ունել զահագին թափոյ ուժգնութեանն որով վարէ նա զձեզ: Ո՞չ ապաքէն առ ՚ի խոկալ եկեալ է ձեր յաշխարհս, զոր օրինակ և արեգակն ՚ի լուսաւորել զաշխարհ, ո՞չ ապաքէն և ձերդ շարժուածն եկամուտ է ՚ի ձեզ իբրև զնորայն: Հապա անսասլիք ձերոյդ օրինաց, և մի բնաւ եղուկ զանձինս կարդայցէք: Զի՞նչ լինչ ազդիցեն Թշնամիք ձեր ընդդէմ Ճշմարտութեան. յաւերժական է նա, և այլն ամենայն անցեալ գնայ: Ճշմարտութիւնն է վարձ վաստակոց ձերոց. նոյն Ճարակ հանճարոյ, և նոյն զօրավիգն յաշխատութիւնս ձեր: Թաղուեալ լցին որ յանմտութենէ կամ ՚ի ցրտութենէ և կամ ՚ի խուժադուժ բարոյից բերեալք լռիեն զձեզ և հալածեն. այլ և շառաչ ևս համահարհուրդք ընդ ձեզ դառնին ծագոյ ՚ի ծագս աշխարհի: Ցիշեցէք առաքինիք, զի և նոքա չարչարակից են ձեզ և խորհրդակից. յիշեցէք զի Սոկրատ և Պլատոն նոցին նմանիքն՝ թէպէտ վաղամեռիկք՝ այլ բարեկամք ձեր են, և ՚ի գարս որ զկին՝ կացցեն անշուշտ այլք յոլովք, որ խնդամուտ բանից ձերոց եղիցին, և ձեզ հանդոյն զամենայնէ խորհեսցին: Մի ազդ և մի տոհմ է ք դուք և համօրէն արք աւագք՝ որ եղեն և որ գալոց են: Ոչ զի յայս ինչ վայ-

րի կամ յայն ինչ ժամանակի զեղծ առեալ գադարիցէք՝ լեալ էք դուք. հապա կեցջիք սակս ամենայն աշխարհայ և ամենայն ժամանակաց. ծաւալեսջիք զկեանս ձեր ՚ի վերայ կենաց աղքի մարդկան. նա և անդր ՚ի վեր ևս ամբարձջիք զմիտս ձեր. տեսէք զի ըստ պատկերի Աստուծոյ կերպարանեալ է հոգիդ ձեր. քաջացարուք ապա առաջի նոցին, որպէս վայել է Քրիստոսեանն սիրողաց: Բայց. ՚ի ձեզ ակնարկէ Աստուած, ձեզ անսայ, ընդ ձեզ հաճի, և դուք եղիցէք անձանց կարդայցէք: Հանդերձ սովիմբ, եթէ դարձեալ և զմարդկան ինչ խնդրիցէք զվկայութիւն, ահաւասիկ ես ձեզ այնմ երաշխաւոր. վկայութիւն ասեմ ոչ անզօր ինչ և անյայտ, որպէս այն որ ՚ի վաղանցուկ յայս կեանս մեր ընծայի, այլ անեզը և անկորուստ ընդ ժամանակս ձիգս դարուց բազմաց: Տեսէք աւանիկ՝ որպէս խաղացեալ գայ մատչի հանդերձեալն աղք, և զայս առ մի մի ՚ի ձէնջ արձակէ բարբառ. Սրբեա՛ զարտասուս քո. իրաւունս առնել քեզ եկի ես, և վախճան ոտառապանաց քոց. ինև ալք մեծահասնձալք շնչին զկենդանութիւն. ես վրէժխընդիր կացի Կարդեսեայ ՚ի թշնամեաց անձին նորա. ես զինչսարս նորին յատաւաժ վիմայ և ՚ի ձիւնախաղաղ լեռանց հանեալ փոխեցի ՚ի Փարիզ. ես եմ որ զբանսարկուն կռւիսհարեմ, և զբռնակալս նկուն կացուցանեմ. ես եմ որ խոտան գրեմ զչիրիմս կանգնեալս ՚ի մէջ տաճարաց ՚ի շուք իշխանաց աշխարհի, և մեծարեալ պատուեմ զանտաչն վէմ, որ զինչսարս հանճարեղին ծածկիցէ: Ցուշ լիցի քեզ, զի անմահ է հոգի քո, և անուանդ անմահասցի ընդ նմին: Ժամանակին ՚ի փախուստ սրանայ, և վայրկեանք զվայրկեանս փոխանակեն, և սահեալ ՚ի բաց գնայ երազ կենցաղոյս: Փոքր միւս ևս, և կեցցես դու. և ներեսցես անիրաւութեանց քոյոց ժամանակիդ, անգթութեան հալածչոյն քոց, և բնութեանն՝ փոխանակ զի զքեզ ընտրեաց ՚ի հրահանգել և ՚ի խրատել զմարդիկ:

ԹՈՄԱՆ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐՔ

ՎԱՍՆ ԽՈՐԱՄԱՆԴՈՒԹԵԱՆ

Սրդ խորամանդութիւն ըստ իւրում նկարագրին՝ թուի լինել կեղծիք բանից և գործոց առ ՚ի չարն: Եւ խորամանդ այն ոք է, որոյ առ Հշնամին մատուցեալ՝ խօսել կամի ընդ նոսա, որպէս այն թէ ոչ ինչ ամենևին ունիցի խէթ ընդ նոսա. և յերեսս գովէ զնոսա, որոց ՚ի թիկանց դարան գործէր. ընդ ինձս նոցա տրտմի ընդ նոսա, և չարաիսացն իւրոց Թողութիւն չնորհէ: Յաղագս անձին բամբասանաց և առ ղրկելոյ և առ ղչարեալս հեգուեմբ խօսի:

Եւ որ տեսլաւ տեսանել զնա և խօսել ինչ կամիցին, պատուիրէ դառնալ անդրէն յայլուս ժամու. և պատճառի՝ թէ այն ինչ եկեալ է, և թէ օրն տարաժամեալ է և ինքն տկար:

Եւ որ փոխ ՚ի նմանէն խնդրիցեն և հանդանակ ժողովիցեն. Տուրևաւ վաճառոց ոչ է, ասէ: Եւ յորժամ ոչ ինչ վաճառիցէ. Շահավաճառ, ասէ, բարւոք ընթանայ: Թէ լսէ ինչ, չլսելոյն առնէ. և թէ տեսանէ՝ չհայելոյն:

Ոչ երբեք ասէ յայտ զոր գործէն, այլ թէ՝ Խորհուրդ ՚ի մտի ունիմ. և թէ խոստովան ինչ ուրեք լինիցի, Մոռացեալ եմ, ասէ: Ի ինչ զոր՝ Տեսից, ասէ, ի զոր՝ Ձգիտեմ, և ի ընդ որ՝ Ձարմանամ, և ի ուրեք զի՝ Եւ ես ինքն զդոյն խորհիմ, ասէ:

Միով բանիւ, Ճարտար է միշտ յայս ձևս խօսից. Է՛ հ

ոչ հաւատամ, ոչ կարծեմ, զարմանք է. և յաւելու թէ՝ Ա՛յլ յայլմէ եղեալ եմ. և թէ՝ Ա՛յլ ոչ պատմեցաւ լինել. նոր և չքնաղ իրք են առ իս. երթ այլեւայլ ուժք ասա. քո՛ղ արդեօք անհաւատացից՝ եթէ նմա եդից մեղ, ոչ գիտեմ, տարակոյս է ինձ:

Ա՛յլ զգո՛յշ լեր, մի՛ վաղվաղակի հաւատասցես այսպիսի ձայնից և պատ՛ի պատ բանից և շառաչոսուլեանց, քան զոր չիք ինչ գտանել ջար: Ի կեղծաւոր և՛ ի նենգաժէտ բարուց յառաւել պարտ է զգուշանալ՝ քան յիժից:

ԹԷՈՓՐԱՍՏՈՍ. Նկարագիրք:

ՎԱՍՆ ՁՕՇԱՔԱՂՈՒԹԵԱՆ

Ձօշաքաղուլեան է ժողովել շահս անպատեհս: Եւ այնպիսի է զօշաքաղն, որ եթէ հաց տայցէ՝ ջընէ՛ի սեղան բաւական նկանակս. հիւր՝ որ առ նմա լինկանեալ լցէ՝ փոխ առնու՛ի նմանէ. ՛ի բաշխելն բաժին յընթերակերս, Աւրժան է, ասէ, կրկին մասունս տալ մատակարարին. և անդէն առեալ զնէ առաջի իւր: Գինի եթէ վաճառեսցէ, բարեկամին ևս ջանասցէ տայ: Ի թատրն յայնժամ երթայ հանդերձ որդւովք, յորժամ հանդիսաղիրքն ձրի թողացուցանիցեն: Իբրև հրեշտակուլեամբ ուրեք ընդ այլս առաքիցի յիշխանուլենէն, զթոշակ ճանապարհին տուեալ նմա՛ի քաղաքէն՝ ՛ի տան թողու, և յօրէկցայն փոխ մուրանայ: Ծառային իւրում բառնայ բեռն՛ի վեր քան զկար, և սակաւ քան զայլոցն տայ նմա զպէտսն: Եւ որ ինչ նմա անկանի տալ հիւրոյն տասնեակաւորին իւրում, զայն ևս՛ի նոցանէն խնդրեալ՝ երթայ վաճառէ: Ցօծանէլն՛ի քաղանիս, ծահաճոտ է իւղդ զոր գնեցեր ինձ, ասէ ցմանուէն, և օտարին իւղով օծանի: Թէ որ յընդօծնացն գտանիցէ սկսինձ՛ի փողոցի, չքատակաւէ հայցել և իւր

մասն, ասելով թէ Հերմէս հասարակաց է: Զպարեգօտ իւր տուեալ՛ի լուացուման, երթայ առնու յանօթ՛ի ծանօթիցն, և զայն ագանի յերկարեալ զբաղում աւուրս, մինչև անդրէն յետս պահանջեսցի: Եւ այլն այսպիսիս:

Ճշդաչափ և բարձրայատակ ամանով ինքնին բաժանէ ընտանեացն զպէտսն, քաջ հարթելով զերեսս թաթաղուն անօթոյն: Գիւրագին առնու՛ի բարեկամէն, և երթայ վաճառէ մեծագնի: Ի հատուցանելն զպարտս քառասուն ձիասուց՝ խորէ գրամս չորս:

Եթէ առ հիւանդուլեան չգնայցէն մանկունք իւր աւուրս ինչ՛ի դպրոց, ըստ նմին չափոյ հատանէ զվարձան. և զՆեթեաստրեան ամիսն ողջոյն չյղէ զնոսա յօսաումն՝ վասն տեսարանաց թատերոյն յաճախելոց, որպէս զի մի՛ զվարձս ամսոյն բռնադակ տայցէ: Ցորժամ՛ի ծառայէն հաս առնուցու, ՛ի նմանէ տուգանէ զտոյժս գրամոցն. զնոյն առնէ և յորժամ՛ի գործակալէն համարս առնուցու:

Իբրև կոչունս առնիցէ երդակցացն, ՛ի միջոյ անտի կերակրոյն բաժին խնդրէ որդւոց իւրոց. և զկէսս անգամ բողկից՝ զկոտորոյ սեղանոյն ընդ գրով արկանէ, զի մի՛ սպասահարիւս մանկտին գողանայցէ: Ուղեկից լեալ ուրեք ընդ ծանօթս իւր, նոցա ծառայիւքն պաշտի՛ի պէտսն, և զիւրն՛ի վարձու տայ յայնժամ հեռի ուրեք, և զգինոյ ոչ բերէ՛ի ծախս հասարակաց:

Եթէ հանգանակէ՛ի տան նորա լինելոյն, ՛ի համարի առնէ և զոր յիւրմէ անտի արկանիցէ փայտ, պղպեղ, աղ, քացախ և ձէթ՛ի ճրագ: Ցորժամ՛ի սիրելեացն ոք՝ իւր կամ գտաէրն հարսանիս առնիցէ, աւուրըք ինչ յառաջ աճապարէ խոյս տայ՛ի քաղաքէն, զի մի՛ և ինքն օժտաբեր ընծայատար լինիցի: Ի ծանօթիցն զայն ինչ երս առնու՛ի փոխ՝ որ քնաւ և չպահանջիցին յետս. և եթէ գարձուսցէ և՝ ոչ ումեք փոյթ լինիցի առնուլ:

ՆՈՅՆ:

ՎԱՍՆ ԱԳԱՀՈՒԹԻՒՆ

Ագահութիւն է չգիտել զպատիւ անձին՝ որ ծախիւքն լինիցի։ Եւ այնպիսի ինչ ոք է ագահն, որ զի Թէ յողբերգական յաղթանակ տարցի՝ պսակ փայտեղէն նուիրէ Սպանդարամետին, մանգպրեալ յանուն իւր։ Իբրև տուրքն մատուսցին ի Ժողովս Ժողովրդեան, ինքն լուռ կայ, և կամ յարուցեալ ի միջոյ անտի զանձն արտաքս Ճողոպրէ։ Ի հարսանիս դառերն՝ զամենայն միս զոհէն, բաց ի նուիրականացն, տարեալ վաճառէ։ Եւ հարսանեացն սպասաւորս ի վարձու ունի առանց ռոճկաց։ Իշխան նաւապետ կացեալ ի պատերազմի, զղեկավարին անկողինն տայ արկանել իւր ի պաղպաջունն, և զիւրան խնայէ։

Ցորժամ աւուրքն ընծայաբերութեան իցեն մանկանց առ վարժապետն, չառաքէ զնոսա առ նա, պատճառելով Թէ խօթ իցեն. զի մի նպաստ ի հանգանակն լինիցին։ Եւ ի վաճառանոցէ առեալ պաշարս, միս և խաւարտս, ինքնին յանթի հարեալ տանի։ Եւ եթէ զպատմուճանն ի լուացս տայցէ, ի տան նատի։

Եւ իբրև ազդ լինիցի նմա Թէ բարեկամն հանգանակ ժողովիցէ, յառաջագոյն զգուշացեալ խոպրըի ի նմանէ զձանապարհայն, և երկայն շրջանաւ գնայ մտանէ ի տուն իւր. գնով իւրում, որ և պատրաստ մեծ իցէ բերեալ նմա, ոչ առնու գնածոյ նաժիշտս, այլ մանկիկ մի արբանեակ ի վարձու ունի նմա ի պէտս՝ յորժամ ի կանանոցէն ի դուրս էլանիցէ։ Ցարուցեալ ընդ այգն ինքն ածէ աւել տանն, և զմահիճան յարդարէ։ Եթէ նատել ուրիք հասանիցէ, բազմական արկանէ իւր զգրպէտակն՝ զոր զգեցեալն է։

ՆՈՑՆ։

ՎԱՍՆ ԱՄԲԱՐՀԱՒԱՃՈՒԹԵՆՆ

ԱմբարհաւաճուԹիւն անշուշտ Թուի լինել ցոյգք անդոյ բարեաց։ Եւ ամբարհաւաճ այնպիսին է, որոյ կացեալ ի կիրճ ծովուն՝ պատմէ եկաց և պանդխտաց, Թէ քանի բազում են նորա ինչք ի վերայ ծովու. ճառէ և զսահից վաշխի՝ Թէ քանիսն իցեն, և Թէ ինքն որչափ ինչ շահեցաւ և կորոյս. և զայս այսպէս մեծամեծս կոտորեալ, առաքէ անգէն զմանուկն առ լոմայափոխն, առ որում գրամ մի ևԼեթ կայ նորա։

Եւ առ ուղեկիցն պատահ առեալ գիտէ ասել զճանապարհային, Թէ որպէս ընդ Ալէքսանդրի զինուորեցաւ, և զինքրդ եղև ընդ նմա, և որչափ ակահակուռ բաժակս յաւարի առեալ եբեր ընդ իւր. և զասիացւոց ճարտարացն վէճի՝ Թէ քաջ քան զԵւրոպէացիան են։

Եւ զայս ամենայն համբաւ զուռեչ առանց ի տարաշխարհ ուրիք ի քաղաքին էլանելոյ։

Սակ ևս, Թէ գիր հասեալ կայ նմա յԱլէքսպատրոսէ, որ պատմէ՝ Թէ երրորդ ինքն է մտեալ ի Մակեդոնիա։

Եւ Թէ տուաւ նմա իշխանուԹիւն առանց մաքսի վաճառս փայտից անտի հանելոյ, սակայն ինքն հրաժարեաց, զի մի ինչ յումեքէ յաչագեսցի. զի առ մակեդոնացիան աւաւել զգաստուԹիւն պիտոյ է։

Եւ Թէ որպէս ի սուվ առաւել քան զչինգ տաղանդ ծախք իւր հաշուիցին՝ վասն չքաւորաց քաղաքացւոցն ըզպէտսն մատակարարելոյ. զի զանազ ումեք ոչ դիտէ։

Եւ եթէ անծանօթք ումանք առ նովաւ իցեն բազմեալ, ստիպէ զմի ի նոցանէն քուեայս առնուլ՝ հաշիւս արկանել. և աճեցուցեալ զնոսա ցվեցհարիւր առ մնաս, եդեալ և անուանս իւրաքանչիւր նոցա ի դէպ, գտանէ տաղանդս տասն. և զայն ամենայն նպաստ լինել ասէ յիւրմէ ի հանգանակ սեղանոյ նոցա. և յաւելուլ՝ Թէ ոչ արկանէ ի համար զվերթակացուԹիւնս պատերազմիկ նաւացն, և ոչ զայլ ևս հասարակաց պաշտամունս զորս պաշտեաց ձրի։

Մատուցեալ և առ վաճառականս ընտիր երիւարաց՝ պատճառի գնել. անտի՝ ի Թանգարանն անցեալ՝ խնդրէ հանդերձս երկուց տաղանդաց, և մարանչի ընդ ծառային՝ Թէ ընդէ՞ր առանց արծաթոյ չորիս զնմ՝ կինի: Եւ Թէ վարձուք՝ ի տան և բնակիցէ, իմ հայրենի ապարանք են, ասէ առ անդէտսն, և վաճառել կամիմ, զի անձուկ է ինձ յընդունելութիւն հիւրոց. և Թէ կայ առ նմա ջուր ցուրտ՝ ի ջհնարոյ աննման, և պարտէզ ուռճացեալ առատ և փափուկ բանջարօք, և խոհակերտ հմուտ՝ ի պատրաստութիւն համադամոյ, և Թէ տուն նորա գոգ իջևան է, քանզի լի է զօրհանապազ, և Թէ բարեկամք իւր են կատան ծակ, զի ամենայն բարեօքն զոր առնէ՝ ոչ կարէ ընուլ զնասս:

ՆՈՑՆ:

ՎԱՍՆ ՁԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Լեզու, ասէ առաքեալն, հուր ծախիչ է, աշխարհ և ժողով եղեռնութեանց, չարիք անհնդորր. աղբիւր լի Թունաւոք մահաբերին. Լեզու հուր է. հանուրց Վրդովիչ: ախտ վրդովայոյզ և լի Թունաւոք մահաբերին: (Յակովբ. գ. 6–8): Եւ այս առ յիսէն զլեզու չարախօսին, որ ձեռն՝ ի գործ արկի զնշանագրիս և զհարազատ պատկեր դժնդակագունի ախտիս տալ ձեզ. ասացի իսկ՝ եԹէ լեզու չարախօսին հուր ծախիչ է, որ տոչորէ զամենայն յոր հասանէ. որ զարդն և զգործեան ընտիր, զպիծն և զուրբ հաւատոյ խամրէ. որ զաւեր և զամայութիւն ևեթ Թողու ընդ որ անցանէ. որ զընդերս անգամ երկրի պակղ գնալ խառնել ընդ ծածկագուշիցն. որ զպատուականն և զչքնաղ յաչս մեր՝ յաշխարհն անարգ դատէ. որ և մինչ Թագեաքն Թուխ և մերձ՝ ի չնչանել, հզօրեդպէս և աղետաբեր ևս քան զառաջինն գործէ. և զոր սպառեալն չքաւէ՝ մեծագնէ. դիտէ և երբեք հաճոյանալ և փողփողել միչտ մեղուցեալ. լեզու հուր է: Այսոյի իսկ կանխաւ Թէ չարախօսութիւն ժողով է եղեռնութեանց. ամբարտաւանութիւն լինի գաղանածածուկ, որ զչնչուլ յաչսն եղբօրն ականիկ մեզ, Թագուցեալ՝ ի մէնջ զդերանն որ յաչս մեր. նախանձ վատթար, որ՝ ի բնական ձրից և չաջողուածոց ընկերին վիրաւոր՝ ի դատախազ նմին անցանէ, չան՝ ի գործ արկեալ մեծագնել զփառս զորոց զրէն զնուաստութիւն կեղծագէմ, որ զպատրուակեալն գառնոտ, Թիւն սրտին՝ ի խօսսն արտայայտ. անարժան կեղծաւորութիւն, որ՝ ի վերին երեսս մեծարեալ և յօշտահ՝ ի ծածուկ. Թեթևամտութիւն ամբոխապարտ, որ անձին իւրում տիրել չգիտէ և ոչ անյողդողդ կալ՝ ի բանին, և որ զկեանս իւր չամառս և զանդորր՝ առ անմիտ ինչ սոգիւտ պատրագ զոր հաճոյական գոլ դիտէիցէ. անվրդով գաղտնութիւն, որ զեղբայրն բացակայ պատառէ. գայթագղութիւն՝ առիթ գլորման և մեզաց՝ որոց ձեռն լսեն. անիրաւութիւն, իւ շրպեալ շորթեալ զպատուականագոյնն եղբօր. Լեզու՝ հանուրց Վրդովիչ: Այսոյի իսկ ձեզ Թէ ախտ վրդովայոյզ չարախօսութիւն, որ սղմիկ զընկերութիւն, երկիւղիզկիչ զարբունիս և զքաղաքանի, քահանէ զսերտ մտերիմս. աղբիւր է քննայոյզ առերութեանց, և չոմ և մտանէ ընուՙ ի շմոր ևՙ ի խառն. ամենաւրեք ոխերիմ խաղաղութեան, քաղցրութեան և քրիստոսազարդ կրթանաց. Լեզու՝ ախտ Վրդովայոյզ: Յաւելից՝ ի վերջ Թէ աղբիւր է մահաբեր Թունոյ. ապականեալ հասարակ բղխեալքն առ՝ ի նմանէ, և ապականէ որ զնուաս պատեն. դեղեալ են համայն և գովութիւնք նորա, դրուատիք նորա չարարուեստ և լուսնութիւնն ապիրատ. ՙի չարժուածս ևՙ ի գնացան և համբուն իսկՙ ի հայեացս կրէ զնոյն, զոր և ծաւալէ ճարտար ատուեստ. Լեզու՝ լի Խռնօք մահաբերին:

ՄԱՍԻԼԵՈՆ. Քահոյք:

ԲԱՐԻ ԹԱԳԱՒՈՐ

Խաբէ որ միանգամ ապահով կարծէ զԹագաւորն անդ՝ ուր չէք ինչ ապահովութիւն՝ ի Թագաւորէն: Ապահովութիւն ապահովութեամբ դաշնաւորեսցի: Զեր պէտք կանխել զբարձրաբերձ ամբարս, և ոչ ամբացուցանել զԺողովրդեան առատապէս բլուրս, ոչ զկողս լերանց հաստանել, և բազմապատիկ պարսպօք և աշտարակօք զանձն պարսպել. զԹութիւն՝ անպատուար ապահովէ զիրկութիւն Թագաւորի: Մխայն ամրութիւն անպարտելի սէր քաղաքացւոյն է: Իբրև զի գեղեցիկ է կեալ փափաքմամբ բոլորեցուն, որոց և ուխտք սրտից՝ ոչ լու՝ ի լու ոսկեկանացն իցեն. և Թէ դոյզն ինչ Թեթեւեսցի առաջնութիւն, ոչ յոյս արծարծեսցի՝ ի մարդիկ, այլ երկիւղ. չկայցէ ինչ ուրուք այնչափ պատուական, զոր ոչն յօժարեսցի փոխանակել ընդ կենդանութեան իշխանին իւրոյ. զամենայն որ ընդ նա անցանէ, ընդ անձն իւր գլխովին անցեալ համարեսցի: Այսպիսօրէն անդուլ ցուցակութեամբ լաւութեան յայտ առնէ զի ոչ Թէթ տէրութիւնն է իւր, այլ ինքն տէրութեան հասարակաց: Ո՞ համարձակեսցի դաւ ինչ գործել նմա. ո՞ ոք՝ Թէթ՝ ի ձեռս իւր իցէ՝ զարթաբաղդութիւնս անգամ չկամիցի յետս նահանջել՝ ի նմանէ, առ որով ծաղկին արդարութիւն, խաղաղութիւն, ապահովութիւն և փառք. և քաղաքն ճոխացեալ՝ յորդեալ զերդս առատութեամբ ամենայն բարութեանց: Եւ ոչ այլով ոգւով նայեսցի ընդ առաջնորդ իւր, բայց որպէս՝ ի դիւն անմահս՝ Թէ գայնի մեզ յանկարծ՝ ի տէսութիւն՝ պատկառանօք և բարեպաշտութեամբ: Իսկ արդ զինչ իցէ. միթէ չիցէ նոցին մերձաւոր հաւերակալ նա որ աստուածանման երևի վարուք, բարերար և բազմապարգև և կարող՝ ի լաւ անդր: Ա՛յսոցիկ արժան է իղձ լինել և զայսոցիկ ղհետ երթալ, և այնպէս մեծանուն եղանել, զի և լաւանուն միանգամայն եղիցիս:

ՍՆՆԿԱ. Ցղ. Գրուբեան:

ԲՈՆԱՒՈՐ

Բռնաւորայ ընդաբոյս է անողորմութիւն: Բռնաւորն զանազանեալ է՝ ի Թագաւորէ ոչ անուամբ, այլ արդեամբք. քանզի և Դիոնեսիոս մեծն իրաւամբք մարթի նախատապատիւ համարիլ քան զբռնաւոն՝ ի Թագաւորաց: Իսկ զՂ. Սիլլա զինչ արգելուցու բռնաւոր կոչել, որ՝ ի սպառելոյ Թշնամեաց վախճան եւս սպանութեանց: Թող ինչ՝ ի պատուոյ դիկտատորութեան և՝ ի կարգ մտել պատմուճանազգեցից. սակայն ո՞ ոք երբէք՝ ի բռնաւորաց այնչափ անյագութեամբ արբ զարիւն մարդկային՝ որպէս զնա, որ հրաման եւս սրախողխող առնել զեօթն հազարս՝ ի քաղաքացւոց անտի Հռոմայ: Եւ մինչ մեռ առ տեղեաւն բազմեալ՝ ի տաճարին Բեղլոնայ՝ լսէր զմիաձայն գոչիւն ազազակի հազարաւորաց որք հետեւին ընդ սրով, ՝ի սոսկալ ծերակուտին՝ ասէ. «Մեք մերոցս ուշ դիցուք, հարք առեք սակաւք. սակաւք ոմանք խռովարարք՝ ի մահ մատնին իմով հրամանաւ»: Զայդ ոչ ասեաց, զի յաչս Սիլլայի սակաւք Թուէին: ԳԹութեամբ եւեթ մեծապէս որոշին՝ ի միմեանց Թագաւորն և բռնաւոր. Թէպէտ և երկոքին նովին զինուք են ամրացեալ, բայց առաջինն՝ ի պատապարանս խաղաղութեան վարի նոքօք. իսկ երկրորդն առ՝ ի սանձել մեծաւ ահարկութեամբ զատելութիւն մեծ: Հակառակօք՝ ի հակառակն վարի. առելի է՝ քանզի ահընկէց է, և կամի առ հընկէց լինել, քանզի առելի է: Ո՛զըմ վիճակ, այլ անձամբ անձին ողորմելի. զի չէ մարթ այլոց ողորմել այնպէս սուճն՝ որ արիւնհեղութեամբք և յափշտակութեամբք վարեաց զիշխանութիւնն, և խիճալիս անձինն կացոյց զամենեսին, զօտարս և զընդանիս. ՝ի զինուց երկուցեալ՝ ի զէնս անդր եղև ապաստան. ոչ՝ ի հաւատս բարեկամացն յուսացեալ, և ոչ՝ ի զաւակացն բարեպաշտութիւն: Որոյ չուրջ հայեցեալ յորս արարն և զորս առնելոցն է, և զիսիղճ մուացն տեսեալ յայտնապէս լի և ծանրացեալ ժանդա-

գործուածեամբ և առնջանօք. մերթ երկնչի 'ի մահուանէ, և մերթ ևս խղճ լինի այնմ. առելի անձին՝ քան իւրոց ծառայից:

ՆՈՑՆ:

ԱՑՐ ԲԱՐԿԱՑՈՂ

Եւ զի գիտասցես թէ չէն առողջ մտօք ըմբռնեալքն 'ի բարկուածենէ, հայեաց և 'ի կերպարանս նոցա: Զի որպէս մոլեգնելոցն սեպհական նշանակք են դէմք յոխորտ և սպառնական, ճակատ կնճռեալ, աչք խոժոռահայեացք, դնացք խուճապեալ, ձեռք անհանգարտ, գոյն թափեալ՝ առեպ և ուժգին յոգւոցհանումիւնք, նմանապէս և բարկացողացն նոյն նշանք են: Աչք փայլակնացեալք և բոց արձակեն, և բերք հրացեալք համակ՝ 'ի յորձնեռանդն յուզելոյ արեանն 'ի խորոց սրտին. շրթունքն դողդոջին, աղեսեալ փակին առատաժանք, քաշմնին հերքն և դիպչանն, հատկլեալ ատամունք շունչն, անդամոցն յօդք ճարճատեն ինքնատանջ, հեծումն և մռնչիւն և բարբառ կիսահագագ և կցկտուր, ձեռաց սեպ սեպ ընդ երեսաց բախումն, դեմքն ընդ ոտիւք գոփեալ և բովանդակ մարմինն դեղեւի. որոտայ ըսպառնալից, և համայն՝ տեսիլ խիս գարշ և քաշմնելի կերպարան անգեղեցից և սոնքացելոց երևի:

Եթէ առաւել նզովելի իցէ ախտն թէ առաւել գարշելի՝ չմարթէ ասել: Զայլս 'ի կրից թաքուցանել մարթ է և ծածկասէս ապա տանել նոցա. բայց բարկուածիւն անձնամատն նշաւակի յերեսս ցոլացեալ. և որչափ բուռն իցէ և սաստիկ՝ այնչափ մեծաբորբոք 'ի յայտ գայ: Ո՞չ տեսանես զի և կենդանեաց ամենեցուն՝ ընդ գրգռելն 'ի բարկուածիւն և 'ի վհատ՝ անդէն այլափոխին երևոյթք, և թողեալ զբնիկ կերպարանս հեզսրտութեան և հանդարտութեան՝ բովանդակ մարմնովքն դժնեհանան: Վարագոյց բերանքն փրփրին և կրճտեն

լով սրին առատաժանք. ցլուցն եղջիւրք առատանին ընդ օդս և առաջ ընդ ոտիւքն փոթորկի 'ի բախմանէ. առիւծք մռնչեն. օձից գրգռելոց փքացուածոյց այտուս պարանոց, և շանց կատաղելոց գժնեայ է տեսիլն: Զիք կենդանի այնպէս ահաւնատեսիլ և այնպէս վայրագ 'ի բնէ, յոր 'ի բորբոքելոյ բարկուածենէն ոչ յաւելցի գժնեհութիւն: Են են արգահրև և այլք 'ի կրից անթաքնելիք, ոչ ժխտեմ. ցանկութեանն, երկիւղն և յանդգնութեան ենն նշանք սեփականք որովք նշանակին, և սրտի յուզելոյ յուժգնագոյն կրից՝ հարկ է զի գոչակ լսցին երեսք: Զինչ ապա խոչրն իցէ. — Ահն՝ զի ուր այլք 'ի կրից նշմարին ևեթ, սա մերկապատանոց կայ:

ՍԵՆԵԿԱ. Յղ. Բարկոբևաև:

ԱՑՐ ՇՈՂՈՔՈՐԹ

Էր 'ի բանակի անդ յազգէ Դոլապաց Եւրիմաք անն անուն, որ գիտէր շողոքորթութեամբ ընդ միտ մտանել և ըստ ախորժակաց և բնաւորութեան արքային զանձն պատշաճել, հանճարեղ և ճարտար 'ի գիւտ հնարից հաճոյ լինելոյ նոցա: Զեր ինչ յաչս նորա գժուարին, և 'ի խնդրել ուղիղ զկարծիս նորա, գուշակէր զեւս ախորժելին: Զուարճախօս էր, երգիծանող ակարաց և մարդահաճոյ այնոցիկ՝ յորոց երկնչէր, ճարտար 'ի յերիւրել մեղմահաւան դրուածս համառօտագոյն խոկ որերոյ ընդունելի. զգօն ընդ զգօնս, զուարթ ընդ զուարթաբարոյս, և յամենայն կերպարանս դիւրափոխիս:

Անկեղծք և առաքինիք, որ միշտ նոյնպիսիք՝ պատկառական կարգաց առաքինութեան, ոչ երբէք այնպէս հաճոյ գտանին իշխանաց՝ որպէս որք շողոմիչն զկիրս բռնացեալս 'ի ոսա:

Չմուտ էր Եւրիմաք պատերազմի և 'ի յանձանձանս ի-

ըաց տեսչութեան, և՝ի խնդիր բանտի յարեալ էր՝ի Նեռ
տոր, և ստացեալ զմեծարմութիւն նորա. և որ ինչ կամէին
գիտել, որպայր հանէր՝ի խորոց մնապարծ սրտի նորա՝ ո-
րում ոչ անհաճոյ էին գովութիւնք:

ՖԵՆԵԼՈՆ. Տիւևաք:

ԵՐԻՔԹՈՆ ԿԱՄ ԳԻՒՏ ԴՐԱՄՈՑ

Պարտ է՝ինձ և զԵրիքթոն յուցանել քեզ յանձուկ
հովտիս, զոր որ արծաթի հնարաւորեաց դրամս առ՝ի դիւ-
րել զառուրևաւիկ շահաւէտութիւն ընդ կղզիս Ելլադայ,
բայց չարեաց հեռևանաց հնարիցն նախատես լեալ, խրատ
ետ ազգաց բնաւորականօք ձոխանալ գոյիւք, որ ձչմարիտ
մեծութիւնքն են: Գործեցէք, ասէր, զերկիր, ժողովել
հունձս յորդառատ և զեղումն գինւոյ և ձիթոյ, և ամե-
նայն բերաց. յաձախեսջիք զանգեայս՝ անանել կաթամբ նո-
ցա և զգենուլ զասր. այսու օրինակաւ հեռի լեցի՝ի ձէնջ
վանդ կարօտութեան: Ըստ առաւելուլ ձեզ որպէսզ՝ յա-
ւելցին մեծութիւնք ձեր, եթէ միայն վաստակասէրս գնո-
ցա ուսուցանիցէք. զի անսպառ է զօրութիւն երկրի, և ըստ
թուոյ և ըստ ժրութեան աշխատասրացդ գործի բեզնաւո-
րագոյն, առատաձեռն է՝ի հատուցումն երկոց, ասիւղ և
ժլատ Թերահոգ մշակին: Ինդրեցէք ապա նախ զառոյգ մե-
ծութիւնս, որ ընդն զանհրաժեշտ պէսս մարդկան, իսկ
զդրամս արծաթիս յարգեցէք որչափ պիտոյն է վասն զգուշ
չութեան՝ի հինից անխորչելի պատերազմաց, և՝ի տուր-
ւառս կարևորաց՝ որ պակասեն յերկրի ձերում. իսկ այլոց
առ հասարակ տուրևառք իրաց, որ զեղմութիւն ևեթ տա-
ծեն և զանպատա պերձանս և զմեղկութիւն, իցկիւ թէ ան-
կանիցին՝ի սպառ:

Յաւելցոյր դարձեալ նոյն ինքն Երիքթոն սահել յեղեւ-

զել. Երկիւղ մեծ է ինձ, որպեսզիք իմ, զի ազնաբերը լեցին
ձեզ հնարքք դրամոցս: Կասկածեմ զի դրդռեսցէ սա զազա-
հութիւն, զփառամոլութիւն և զպերճանս, տածեսցէ ա-
րուեստս բազումս ինքսակարս՝ մեղկիչս և ապականիչս բա-
րուց, տաղտկացուսցէ զերջանկին պարզութիւն, որ պատ-
րաստէ զամենայն հանգիստ և աներևակայութիւն կենաց, և
յարհամարհանս գիցէ զերկրագործութիւն՝ որ է հիմն կեն-
դաղոյս և ազբիւր ամենայն ձշմարիտ բարեաց. այլ վկայեն
ինձ դիք, զի բարեսէր մտօք աւանդեմ ձեզ զհնարս զայս
օգտակար՝ի քնէ: Եւ՝ի տեսանել ապա Երիքթոնի ապա-
կանեալ յարծաթոյ զազգս՝ որպէս գուշակեալն էր, խոյս
ետ առ վշտին՝ի լեառն ուրեք ամայի, և եկեալ անդ ազբա-
տութեամբ հեռի՝ի մարդկանէ մինչև յալիս ծերութեան՝
հրաժարեալ յամենայն իրաց տեսչութենէ:

ՖԵՆԵԼՈՆ. Տիւևաք:

ՄԵԾԱՏՈՒՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ

Այո, եղբարք իմ, ոչ դիպուածոյ տուրք են ծնանելդ
մեծ և հզօր. Ատուած ինքնին՝ի սկզբանէ աշխարհի սահ-
մանեալ էր զձեզ՝ի ժամանակեայ փառս, դրոշմեալ՝ի
հինք իւրոյ մեծութեանն և որոշեալ յամբոխէն՝ մարդկօրէն
մեծապայծառ պատուով և աւագութեամբք: Զինչ ինչ
արարեալ ձեր նմա՝ առաւել մեծարեցայք քան զայլ մարդ-
կիկ, մանաւանդ քան զյոյնչափ անչափ տառապեալսն,
որ հազիւ հաց արտասուաց և դառնութեան ճաշակին:
Ո՞չ և նոքա իբրև զձեզ գործք ձեռաց նորա են և նոցին
գնոց գնեալք. ո՞չ՝ի նմին կաւոյ եղէք. չիցէք թերևս առա-
ւել ծանրաբեռնիք մեզոջ. արիւնն՝ որոյ սերուն էք, թէ-
պէտ և շքեղ յաչս մարդկան, ո՞չ ապաքէն՝ի նմին թու-
նաւոր ականէ բղխէ՝ որ ապականեաց զազգ մարդկան առ

հասարակ: Անուն մեծափառ Ժառանգեցեք ի բնուստ, բայց առէք ևս հոգի այլաբուն և յայլ ինն յաւիտենական արքայութիւն սահմանեալ քան զդուշնաքեայս ի մարդկանէ: Զինչ առաւել իցէ ձեր առաջի նորա՝ որ յարատածս իւր չդիտէ այլ ինչ անուանս և խոերս բաց ի պարգևաց շնորհացս իւրոց: Սակայն Աստուած, հայր նոցին որպէս և ձեր, մանուկ զնոսա յաշխատութիւն, ի վիշտս, ի ցաւս և ի տառապանս, և ձեզ պահէ զուարախութիւն, զհանգիստ, զփառս և զպղփութիւն. նոքա ծնանին ի չարչարանս, ի բանալ զծնորութիւն աւուրն և զոմն, ի պաճարել վաստակով և քրտամբք իւրեանց զփափկութիւնս ձեր և զշայլութիւնդ. ի ձգել՝ թէ իշխիցեմ ասել՝ հանգոյն անարդ անասնոց զկառս մեծութեան ձերոյ և անխնամութեան: Այս անջրպետ ահագին՝ զոր Աստուած ընդ ձեզ և ընդ նոսա, իցէ ինչ տուեալ երբէք պատճառս ձեզ մտախոհութեան, թող թէ շնորհակալութեան: Ի ծնէ ժառանգ գտայք այսմ ամենայնի առաւելութեանց. և առանց զմիտագ ի վեր առ գերագոյն պարգևատուն ամենայն մարդկելինաց տանելոյ, համարեալ էք թէ կարևոր ինչ պէտք էին ձեզ այն ամենայն, քանզի միշտ ի նոսին վայելեցեք: Եղծուկ գուք ի ձեռակերտոց ձերոց պահանջէք գոհացողութիւն սերտ՝ նշանաւոր և անընդհատ, յերախտաւորելոցդ՝ ծառայութիւն յայտնատեսիլ. չմարթի նոցա և ոչ վայրկեան մի մոռանալ զառ ձեզ պարտսն. բարերարութիւնդ ձեր տայ ձեզ ի վերոյ նոցա երաւունս՝ ունել զնոսա ի մշանջենաւոր ծառայս: Այսր չափեցէք զոր պարտիք առ Տէր՝ առ բարերարն հարց ձերոց և բոլոր զարմիդ: Իսկ զինչ շնորհք ձեր գերիս ձեզ կացուսցեն, իսկ երախտիքն Աստուծոյ՝ ապերախտս և ապստամբս ևեթ յարուսցէն նմա:

ՄԱՍԻԼԵՈՆ. փոքր քառասնորդք:

ԱՍՏՈՒԱԾԱՄՈՒՏՑ ՄԵԾԱՏՈՒՆ

Հուսկ ապա, ամենայն ախտից հանդէս արարէք, դժնդակ և զոռոզ բռնութիւն վարեն ի սիրտս աստուածամոռաց մեծամեծացն: Թշուառութիւնք նոցա առաւել ծանրատաղտուկ են. ըստ տարապայման հպարտութեանն դաժանագոյն են և կորանքն: Աւելութիւն նոցին անհնարին. քանզի փառասիրութիւն յոյժ փքացուցանէ զնոսա, մոլեգնին և անողոքս դառնի զնոսին արհամարհանքն: Երկիւղ նոցին անչափ. ի ձմարիտ չարեաց յատակովայեալք՝ անձամբք անձանց առեղծանեն մոացածինս, և հոդմաշարժ խարշափուն առեն՝ նոցա լեառն իմն է որ գայ տապալել ի վերայ իւրեանց: Հիւանդութիւնք նոցա ցաւագինք. որչափ հարեալ ի կեանս իցեմք, նոյնչափ որ զայն վանգէ՝ զարհուրեցուցանէ զմեզ: Սովորեալք յամենայն անուշութիւն և հեշտալից զգայութեանց, թէթև ինչ ցաւ խանգրէ զերջանկութիւն նոցին, և անհանդուրժելի է նոցա. ոչ գիտեն մոացեալը վարել. ոչ խօթութեամբ, ոչ առողջութեամբ, ոչ բարեօք և ոչ չարեօք, որ անբաժանելի են ի մարդկելէն բնութենէ: Ցաւուցս նոցա կարձեն հեշտութիւնք. և տրամութիւնք՝ անմեկին ուղեկիցք նոցին, ձեպեն տապնատեն զնուացուած ամոց նոցա: Աւտղութիւն անժուժկալութեամբ խարխալեալ՝ ի յաճախութենէ դեղոյն խաթարի: Անչափ փոյթ զգուշութեան ինամոց յանդ հանեն՝ զոր հեշտութեանցն անչափութիւն չէր մարթացեալ. և եթէ յանչափութեանց փախուցեալք իցեն, փափկութիւնն և դատարկութիւն ինքնին լինի նոցա հիւանդութիւն ինչ և հիւծուածն՝ ապստամբ յամենայն հնարից ձարատարութեան, և նոյն իսկ հնարքն մաշեն և սպառեն զայն: Հուսկ ամենայնի՝ հպատակութիւն նոցա թախծալից. անեալք ի կեանս քմոյ և հաճոյից, որ ինչ նեղէ և տագնապէ զնոսին՝ խեղդ ընդ անձն անկանի նոցա: Հեռի յարքունեացն՝ համարին ի տխուր աքսորս կեալ. զառա-

ջեաւ տեառնն քրիստինէն անդադար վշտատակութենէ պարտուցն և ընեղութենէ բարեվայելչութեանց. ոչ կարեն տանել՝ ոչ հանգստեան սոսկական պայմանի, և ոչ փառաց աւագամեծար կենացն:

Այնպէս անտանելի է նոցա հանգիստ՝ որպէս ամբաստուին, կամ մանաւանդ ամենայն ուրեք ինքեանք ինքեանց բեռն են ծանր: Որ ապերասան և անօրէն կամի կեալ, լուծ ծանր է նմա ամենայն:

ՆՈՑՆ:

ՓԱՀԱՆԱՑՈՒԹԻՒՆ

Այսպէս ահա քրիստոսական քահանայութեան աղբիւր իմն է անապատ, յորմէ բղխեն անդադար ջուրք զովարարք՝ յամենայն ուրեք զկեանս և զարդասաւորութիւն առ բերելով. և իցէ՞ ուրեք գտանել յաշխարհի պաշտօն օգտակարագոյն քան զայս: Ապաքէն փառաւոր և կենսաւէտ է պաշտօն զօրականի՝ որ ի զէն վառեցի ի պաշտպանութիւն հայրենեաց, և խմաստնոյ որ ճոխացուցանէ զինս յարգասիս անքուն աքնութեանց և հնարագիտութեանց, և գտաւորի՝ որ պահ ունիցի անմեղկելի հաստատութեան օրինաց աշխարհին. բայց զինչ լինիցի կարգաց ընկերութեանն առանց կրօնից՝ թէ և անսասան կայցեն և զօրութիւն և խմաստութիւն և օրէնք. և զինչ լինիցին կրօնք առանց ուխտի քահանայութեան՝ որ մշտնջենաւորէ զուսուն նորին և զհրահանգս, շնչէ ի սիրտ մարդոյ զնորա աղդեցութիւնս, և տայ գործով կատարել զառաքինութիւնս պատուիրեալս ի նմանէ: Արդարև ոչ զինու և սպառազինութեամբ որպէս զզօրականն պաշտպանեմք մեք պետութեանս. այլ զինուորք Քրիստոսի Յիսուսի՝ պահանորդք արիութեամբ եմք ի վերայ պարսպաց քաղաքին սրբոյ. ի միում ձեռին կալեալ զաւագափող աւետարա-

նին, առ ի սգդ առնել և զգուշացուցանել յախտից և ի դայթակղութենանց սպանականաբարոյ վարուց և ընտանեաց. և ի միւսումն զսուսեր Հնմարտութեան՝ առ ի վանելոյ զվատթար վարդապետութիւնս՝ որ չարս գործեն զմարդ հաւանութեամբ իսկ մտաց: Ոչ ուսուցանեմք մարդկան, որպէս զնմանատունն, Ճանաչել զչքնաին աստեղաց, և զկազմած հողագնացս, զերկս վայրի որ բնակեն ի նմա և զբոյս դալարուոյ որ պճնեն զերեսս նորա. այլ ուսուցանեմք ժողովրդեան՝ երկիր պագանել և սիրել զարարիչ եղանակաց աքանչելեաց, և աւանդեմք նմա զառաքինն ի գիտութիւնս՝ զծանօթութիւն պարտուց իւրոց: Արդարև զեղեցիկ իմն է գտաւորի հսկել ի պահպանութիւն օրինաց, ի սանձահարել զչարս, և ի պարսպել զանմեղն ի ձեռաց այնորիկ որ զղջանն զնա. այլ եթէ գտաւորն իշխանութեամբն զոր ունի ի վերայ գործոց մարդոյ՝ պատուհասք զչանցանս եղեռանց գործեցեալս, սակայն քահանայն իշխանութեամբն զոր աղդէ ի խիղճն՝ զառաջս առնու մանաւանդ եղեռանցն. եթէ նա վերջ տայ կռուոց և անմիաբանութեանց, իսկ սա հեղձուցանէ զնոսին անդէն ի սկզբանն:

ՖՐԼՑՍԻՆՈՒՍ. Պատր. Քրիստ. Հաւատոյ:

ՆԱՄԱԿԱՆԻՔ

ՊԱՏՈՒԻՐՔ ՅԱՂԱԳԴՍ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ, ԵՒ ՕՐԻՆԱԿ ԿՐԹԵԼՈՑ Ի ՆՈՑՆ

Նամակագրութեան արուեստ եղև 'ի Համարի մեծի յաւուրս Լուդովիկեայ ծդ. Նովաւ եղեն անուանի Պալզաք և Վ.ուաթիւբ. և զհետ նոցա կացին նմանողք նոցին բազումք, և կան և յարդ և յաջողին: Այլ եթէ օրինակադիրք ոչ ևս գան յընթերցուին, հեռաւոյք նոցին անկեալ են 'ի սպառ 'ի մոռացօնս: Հետաքրքիրք ոմանք, զան թէ կիրթք յընարութիւն՝ պարապեն 'ի խնդրել անցս անուրս 'ի նամականին Կիւիաթենի և Տիւնուայէի սիկնոջ, և Մարանայի՝ որոյ նամականին մակագրի «Տաճիկ լրտես», այլովքն հանդերձ: Այս ամենայն մտաեանք անտես լեալ առ գիտունս, չեն այլ ինչ՝ բայց հաւաքուին անհետեւեթ երգիծաբանութեանց, առասպելանման վիպասց և ռամիկ պատմութեանց, Ճարակ վազանցիկ չարաբարութեան այնր ժամանակի որերոյն, խոտեալ յառ ապա եկելոց: Մի միայն հաւաքուին նամականւոյ արժանի գտաւ հասանելոյ մինչև ցմեզ՝ կացեալ յառ ապայս, և է այն, որոյ խմբագիրը ոչ խորհի՝ ոչ վիպասանութիւն ինչ յօրինել, ոչ երգիծաբանութիւն և ոչ այլ ինչ յայսպիսեաց. ամենեցուն

է խմանալ զի զԱվինեայ սիկնոջ է բանս: Ի քերթուածի ուրուն, որոյ վէպք 'ի բարեբաստագոյն ժամանակի ծրագրեալ՝ ոչ ևս է զարգիս կատարելի, յիրաւի ասի ընդանէ.

Ավինեէ զմայլելի, քանի՛ վայել են քեզ փառք,
Որոց գոլով քո արժանի՝ ոչ յուսայիր այնոցիկ,
Եւ ոչ ընդ միա խակ ածէիր զի քեզ որեար յառ ապա
Լիցի սիրատարփ, յոր գուն գործեն Ճրագինին այլք:
Դու 'ի սիրա Կրինեանու ըղքոյդ բացեալ զեղուիր.
Թուղթք քո պատիւ քեզ յօրինեն, մեզ պատրաստեալ ըղբօսանս.
Զոր 'ի զուր խընդրեն այլք, դու անաչխատ գըտանես:
Փանիկա եառուր դու արտասուել ինձ ընդ վախճան
Թիւրենի.
Ո՞ այլոք քեզ յաղթական եկաց յարուեստ պատմելոյ,
Կենդանագիրը սիպք արքունեաց, ոյց ցանկալի են մեզ
վէպք,
Քաջ 'ի քէն քան 'ի մատեանըս վիպագրաց նըկարին.
Ընդքաջազունս, զորոց ըզվիճակս ևԹէ այլուր ուսանիմ,
Տեսանեմ առ քև, լըսեմ և խօսակցիմ ընդ նոսա:

Եթէ առաւելագոյն գովութիւն նամականւոյ է ստէպ ընթերցումն նոցին, զի՞նչ առաւել գովեալ քան զնամականին Ավինեայ կայցէ. ամենայն ուրեք այնոքիկ ընթերցանին, 'ի քաղաքի 'ի գեղջ և յուղղոջ: Զկիք մատեան պատուական քան զայն՝ որ զքեզ զբօսուցանէ, որ ցանկալի լինի քեզ, որ զքեզ ուսուցանէ գոգցես իմն առանց խնդրելոյ 'ի քէն մատգրութիւն: Խօսակցութիւն իմն սիկնոջ սիրելոյ, ուր չէն պէտք Ճգանց, և ձգէ յինքն զոգի յոյ՝ որպիսի գրեթէ ամենայն մարդկի, զեթ զկէս աւուր:

Քաջ գիտեմ զի մանրապատում անցք դարուն այնորիկ և արքունեաց՝ որ անուանի եղեն յոյժ՝ կացուցանեն և այնոքիկ ըստ մասնէ ցանկալի ընթերցումն նամականւոյն Ավինեայ. այլ և արքունիք գերմանուհւոյն Աննայի և անցք Ֆրոնդեանց զրգեն զհետաքրքրութիւն. և սակայն սիկինն Մոթուէլ նուաղ ընթերցանի քան զսիկինն Ավի-

նեէ. է ինչ ապա ՚ի սմա առաւելութիւն մատենագրին. և ո՞ կարիցէ անգիտանալ զայն կամ չճանաչել: Եւ է այն ՚ի բարեխառնութեան բնականին ընդ փափուկ զգայուն և ընդ կրթի ախորժակ. է եղանակ ինն պատմելոյ յատուկ նմին: Ոչ ոք հաւատարէ կենդանութեան դարձուածոյ բանից նորա և դեղեցկի բացատրութեանցն. զգայ միշտ զոր ասէն և զոր պատմէ. նկարագրէ որպէս թէ առաջի աչաց ունելով զնախատիպն, և թուի ընթերցողին տեսանել զայն: Երևակայութիւն ազգու և շարժուն, որպիսի է սովորաբար ՚ի կանայս, յարնէէ զնա յայն ճամ որ յաջորդեն իրերաց, և տիրապետեն նմա յորս պարապէ: Տես ՚ի նամականին նորա զմահ Թիւրինի. ոչ ոք այնպէս ՚ի սրտէ ելոյց զնա. այլ և ոչ եա ոք այնչափ արտասուել ՚ի վերայ նորա. քան զամենայն դամբանական Ճառս առնն մեծի առաւել գորովէ սա զսրտա. ոչ միայն զի զամենայն ինչ ճշմարտիւ և զգալով պատմէ, այլ և զի չէ կասկածելի որ ինչ գրեալ ՚ի նամակի, որպէս այն որ ՚ի ներքոյենէն. ոչ է մարթ ժըխտել զայս: Դժուարին յոյժ ճիղն է ասել՝ լուարուք ինձ, գովելոց եմ. լուարուք ինձ, արտասուելոց էք. զի յայնժամ մանաւանդ զսպին արտասուք և զարմանք: Ի սակել Ճարտասանին զմեզ զարուեստիւբ՚ի գործ դնել, և արուեստի նորա մարթ է ընծայել զմսան ինչ փառաց քաջալինն գովասանելոյ: Տիկինն Սևինէ չկարեր արդեօք յօրինել զգեղեցկին Ճառ Ֆլեշնիէի. և եթէ առաւել ազգե նամակաւն, յընտանեկան խօսկցն է՝ որովք խօսի ընդ մեզ. չիք նորա պաշտօն յանձն առեալ ՚ի կատարումն. խօսկն միայն նորա ընդ մեր՝ առանց զեկուցանելոյ զառաջարկութիւն խօսկցն, և զի խօսի որ ինչ և զգայ:

Որ ոք կամի խելամուտ լինել և ուսանել ինչ ՚ի զբօսանս իսկ իւր, գոանէ ՚ի նամականւոջ անդ և այլ ինչ օգուտ. այս է՝ տեսանել անդ անաղօտ զոգի այնր ժամանակի, որպիսի ինչ էր յայնժամ անուն Լուդովիկեայ ԺԳի. որպիսի ինչ արքունիքն, որ եռանդն հոգևոր, որ ինչ յարդ քարոզչին ՚ի Վերսայլ, որ ինչ խոստովանահօր արքայն, որ ինչ յիսուսեան Հօրն Լաշեզի, առ որ ամբասանեալ Լիւքսամպուրգ՝ երթայր առանձնանալ՚ի կրթութիւն հոգևոր: Տեսանել անդ զոկարուեստիւնս խաղն ընդ կրօնից և զբօսանաց՝ որ բերեն զնկարագիրս տիկնայց երևելագունից. զփափկութիւն ոգւոյ՝ որ յօտանիկս անդ խառնէը ընդ շողոմս. զեղանակն տակաւին փոքր ինչ ասպետական և դիւցազնական, ոչ առանց հնարագիտութեան ՚ի բարձաձգութիւն: Սակաւք են մատեանք՝ որ առաւել տայցեն խորհել ընթերցողի, որք ՚ի խելամտութիւն քան ՚ի զբօսանս գան զնոքօք:

Միւս ևս ինչ է ՚ի միտ առնուլ ՚ի նամականին Սևինեայ տիկնոջ. զի մարթ է ուսիք ՚ի ձև բանիցն ցուցանել ախորժակ բաղում. իսկ ՚ի դատումն տակաւ. վասն զի ձև բանից ՚ի մտոց մերոց է, իսկ դատումն ոչ գոն ուրիք ՚ի մտոց այլոց, մանաւանդ կոչեցելոցն հասարակաց: Բայ նասիրաց վասնզ է ոչ բարւոք դատել զառ չահախնդրութեան, որ մինչև ՚ի մոլորութիւն զառածանի. իսկ հասարակաց մարդկան՝ ՚ի սկզբան անդ անընտրութեամբ՝ որ ասյ նոցա ընդունել դիւրաւ զկարծիս առեալս նոցա, և ապա յամառութեամբ՝ որով վիճեալ պնդին յընկալեալ կարծիս: Ա,յս իսկ է որ ասյ աւելի կամ նուազ տեւել մտահաճութեանց ՚ի մարդիկ, ալբիւր այնքանեայ անիրաւութեանց: Ասսի տիկնոջն Սևինեայ անիրաւութիւն առ Թասին, զոր մեք ասեմք՝ թէ «Անցեալ որպէս զնահատէն». և փակեր զզրմանս իւր ՚ի նմանել, զի մի կարծիցի չընկալ ՚ի կարծեացն իւրոց զԲոռնելեայ: Եւ ասկայն թուի թէ չկայցէ պարզագոյն ինչ և գիւրագոյն քան զզարմացումն ընդ երկոսին քերթողահարս. այլ ոչ զնոյն է խմանալ զառաւելագունից ՚ի մարդկանէ: Թուի ինն այնպէս թէ չգոցէ նոցա ախորժակ առաւել քան զախորժելոյ ընդ մի ևեթ ոք, և իցեն նախանձոտք և կասկածոտք ՚ի կարծիս իւրեանց որպէս տարփաւորացն է բնաւորութիւն, և չկարիցեն ներել զի համմտաւեցի ոք ընարելոյն ՚ի նոցանէ. չիցէ խակ պարտ յիրաւ առնել միտումն՝ տալ և միւսումն զնոր իրաւունս,

անաեղիտալի չարակամութեան: Են որք առ՝ի պարսաւել և եթէ զայլս՝ գովին զրք. և առ՝ի չհեռանալ՝ի մերմէ ժամանակէս, տեսի՝ի քսան ամս՝ եօթն կամ ութ մատենագիրս, յորոց իւրաքանչիւր մի ըստ միոջէ եկաց որպէս «միակ քերթող, միակ հանճար, միակ քանքար», իբր թէ չգոյր այլ առ մեզ: Ապաքէն միաբանեցին ամենեքեան յայնժամ՝ի մուսայօնս արկանել զայլս առ հասարակ. այլ պարտ է թողուլ և այլոց զիւրեանցն տեղի:

Եւ այլ ինն սոգիւտ ծանրագոյն եղև զԱևինեայ ոիկնոջէ, այլ ոչ յիրաւի, իբր թէ յոյցս առնիցէ՝ի նամակագնին ոչ իւրոյ ինչ զգայմանց, որպէս թէ չսիրեր նա զդուստր իւր: Ամբաստանութիւնս այս ոչ միայն առանց ապացուցի է, այլև ընդդէմ հաւանականութեան. ոչ է մարթ արուեստակել զեղանակն զայն բանից. եթէ ոիկինն ԵՒևինեի չսիրեր զդուստրն՝ ո՞ սոիպէր ընդ՝ի զեղուլ այնպիսի դրոյ խանդակաթ, առ՝ի՞նչ տաժանաւորն այն կեղծաւորեիւն. որ ըստ բաւական անհնարին իսկ է. գիւրագոյն իսկ է կեղծել տարփանս քան զգորով մայրենի. և չէր մարթ ոիկնոջս առանց այնր գորովոյ յառաջ բերել զայն հրաշազան յորդութիւն բացատրութեանց, զոր անկեղծութիւն և եթէ կարի կացուցանել ազատ՝ի ծանրատաղտուկ միաձայնութենէ:

Միշտ անալի է սրտութիւն, միշտ ձարձրանալի և անզօր. Իսկ բընութիւն միշտ ճշմարիտ և նոյն հետայն ըզգալի: Պուալոյի է ասացուածս. այլ եթէ չէր նորին, էր իսկ հասարակաց մտաց:

ՅՈՎՀՈՒՐՓ. Ըմբռացք բանասիրութեան:

ՏԻԿԻՆՆ ՍՆՎԻՆՆԷ Ա.Ր ԴՈՒՍՏՐՆ ԻՒՐ

Ահա օր սոսկալի, դուստր իմ սիրեցեալ. վկայեմ և ես ինքնին զի ոչ ևս այլ կարեմ հանդուրժել: Ընդ այն ցաւ ինձ մանաւանդ զի Թողն զքեզ այդպէս. խորհիմ և Թուեմ զամենայն քայլափոխս քո, Թուեմ և զմնան. և իցէ մեզ հնար այդ օրինակ գնացիւք հանդիպել երբեք երբեմն: Սկիրա իմ առ քև ևեթ կայ յանդորրու. անդ՝՝ի բնիկ կայի իւրում կայ, և ընդ այն միայն ախորժէ:

Որ ինչ եղևն յառաւօտուս՝ աղքե յիս ցաւ սաստիկ, և կեղեքէ զսիրտ իմ, զորոյ զկան երն քեզ անկ է խմաստասիրել: Ես յանձին իմում կրեցի զայն և կրեցից ընդ երկար: Զսիրտ իմ և զմիտս դու ինքն գիտաւել ունիս բովանդակառանց արտասուաց խորհել զքէն ոչ կարեմ, և զքէն խորհիմ միշտ, մինչ զի անընդհատելն են ինձ կիրքս. այլ զի ծայրացեալ են, անկն ունիմ զի ոչ երկարատեք իցեն՝՝ի նմին տատակութեան: Ամենուրեք զքեզ խնդրեմ միշտ, և ամենուրեք պակասկ ինձ ամենայն, զի դու ինձ պակասես: Աչք իմ՝՝ սովորեալք՝՝ի հանդիպել քեզ յառաջ՝ այս ընդհատատան ամիսք են զի ոչ ևս գտանեն զքեզ: Անցեալն ժամանակ քաղցր և սիրելի, ցաւագին գործէ զառաջինսն, մինչև առ սակաւ սակաւ սովորեալ ընդելացայց. բայց ոչ ցայնվայր զի ոչ ևս անձկալութեաց կարօտացայց տեսանել զքեզ վերստին և գիրկս զքև արկանել:

Զինք ինձ առաւել քան զանցեալն ակն ունել յապագայսն. գիտեմ որչափ ինչ՝՝ի բացակայութենէն քո կրեցի, և այնու առաւել եղկելի գտանիմ, զի յանխորհուրդս ապարն ինձ սովորոյթ անհրաժեշտ տեսանելոյ զքեզ: Թուի ինձ՝ զի՝՝ի մեկնելն իմ ոչ որչափ պարտն էր փարեցայ զքև: Եւ ընդէր էր ինձ ինայել. ոչ ցուցի քեզ ըստ բաւականին թէ որչափ գոհ գայց ընդ գորովելիր խանդաղատանս քո. ոչ ըստ բաւականին յանձն արարի զքեզ Կրինեան ոիկնոջ, և

ոչ ըստ բաւականին ընորհս կալայ նմա վասն ամենայն խնամոյն և սիրոյն զոր խոստացաւն ինձ. ապաեաղ մնացից արդեանց նոցին ըստ ամենայն դլխոց:

Ապահիմ անձկակարօտ, և չիք ինձ միխիթարութեան ուստեք ակն ունել՝ բայց ի Թղթոց քոց, որոց հառաչախառն ապաեաղ մնամ և մնացից դեռ ևս: Համայն ասել, դուսաւ իմ, կեամ միայն վասն քո: Տացե ինձ Տէր ընորհս սիրելոյ զնոքն յաւուր միում այնպէս որպէս զքեզդ սիրեմ: Զեղև երբեք անյաւուրման թախծագին քան զմեզ. զի և ոչ բանիւ միով չարժեցան չքնութիւք: Ողջամբ մնա, որդեակ իմ սիրեցեալ. կարեկից լեր ինձ զի Թողի զքեզ: Աւաղ, ահա դարձեալ նամականի:

ՓՐԻՍՏԱՓՈՐ ԳՈԼՈՒՄՊՈՍ ԱՌ ԱՐՓԱՑՆ ՍՊԱՆԻՈՑ

Տէր արքայ,

Ի Տիկկոյ–Մենաեայ և ի Թղթոյն զորս աւանդեմ նմա, գիտասցէ Փառք ձեր եթէ որպիսի Ճոխ բովս ոսկւոյ դամ ի Վերակուա և թէ որպէս խորհէի Թողուլ զեղբայրն իմ առ գեռոնէն Պեռլինայ, եթէ կամք երկնից և աղէտք մեծագործք քան զամենայն չէին լեալ ինձ խափան: Սակայն շատ է ինձ զի Տէրութիւն ձեր մեծափառ և որք գՀետ ձեր, ժողովեացեն զփառս և զօգուտ ամենայնի. զի գիւտն յանկ եղեալ, և զի ձեռն բարեբախտագունի ուրուք քան զՀշուառն Գոլոմպոս՝ արկեալ ասա գՀիմունս աշխարհակալութեան: Եթէ հաձեացին երկինք հաստւցանել զՄենաեա ի Սպանիա, նա ինքն խելամուտ արասցէ անշուշտ զդշխոյն իմ սիրուհի, որպէս և զՏերութիւնդ մեծափառ, զի ոչ ամերոյն միոյ կամ դղեկի գիւղք են ասոնք, այլ բազմաժողով հպատակաց, և գաւառաց և անբաւ Ճոխութեանց՝ զորս ոչ լսեաւսարը միաք բովանդակել կարեն, և ոչ ընչաքաղց ագահութիւն ցանկանալ:

Բայց ոչ քարտէս, և ոչ լեզու մահկանացուի կարասցեն երբեք բացայայտել զվիշտս և զվիրս հոգւոյ իմոյ և զմարմնոյ, և ոչ նկարագրել զվիշտս և զվտանգս որդւոյ իմոյ և եղբօր և բարեկամաց: Ա,յս տասն ամիսք են և աւելի զի ի տախտակամածս նաւացն մերոց՝ խրելոց առ Ծովեզերբ՝ ագանիմք բացօթեայք: Աւազոջադոյնքն մնացեալք ի նաւատեառն իմոց, տպատամբեցին ընդ առաջնորդութեամբ Սերվիլեանն Բերատայ, և բարեկամք իմ հաւատարիմք առ իս, կամ խոթացեալք են, և կամ յոգիս ապատանք: Սպառեցան պաշարք հնդկայնոց, և քանեն նոքա զմեզ, և անշուշտ կորիցուք ի սովոյ: Ալէքսս այսոքիկ յարակից այլ ևս հանդամանօք՝ այնպէս Ծանրացան ի վերայ իմ, զի եղէ ես ողորմ խաղալիկ բախտին, և Թշուառագոյն քան զոր ուրեք երբեք եռես աշխարհ, որպէս այն Թէ և երկինք ցասուցեալ սաստիկն մխանայց սպանիացւոց՝ պատուհասեալ իբրև ոճիր զսպաս Ծառայութեան մեծի ձեռնարկութեանս իմոյ՝ զարժանաւորն վարձուց: Երկինք, և որք ի նմա բնակեալքդ էք սուրբք, Թող գիտասցէ արքայն Փերդինանտոս, և վեհապն սիրելին իմ՝ դշխոյն Իզաբելլա, զի վասն առաւելութեան եռանդեանս իմոյ ի Ծառայութիւն և ի շահ օգտինոցա՝ գոյ վաստաբախտ քան զամենայն մարդ կենսակիցս. քանզի անհնար է վշտակիր լինել իբրև զիս և կեալ կենդանի: Խրեամ և սատսան իսկ տեսանեմ սարսափելիս զարտասհ վախճանն իմ և զորոց ընդ իս գքաջացն հիքացելոց, որք առ սէր իմ կորնչելոց են ընդ իս: Աւաղ, արդարութիւն և գԹութիւն տեղի տուեալ ամբոխեցան յերկինս, և եղեն մեծ Թուխպ այսօր՝ մեծապէս բարերարել մարդկան, և կամ լինել յաւադիր: Յաղէտից սասի չարեաց բեռն անբերելի եղեն ինձ կեանք, և խրեամ գուցէ սնոտի անուանիք պատուոյ մշանջենաւոր Ծովակալութեան և փոխանորդի արքայի տեղի արարեալ ինձ զնա տղդին սպանիացւոց:

Ծիծաղեցի ոք արդեօք առ սրամտութեան, տե սեալ զՆարան ոքը գործին ի խզել զԼեզ կենաց՝ որ մերձ ի հատանել է. քանզի ծերացեալ իսկ եմ հասակաւ, և յօդացաւ անբերելի տանջէ զիս, և ի ցաւոց այսի և ի բիւրուց էս այլոց պարտասեալ՝ անկեալ դնիմ ոգեսպառ ի վայրենեաց միջի, ուր էեն իմ ոչ կերակուր և ոչ գեղ ի դարման մարմնոյ, և ոչ քահանայ կամ խորհուրդք սուրբք ի զօրավիգն հոգւոյ. ապաստանեալքն յինէն, և որդին իմ և ամենայն բարեկամք խօթացեալ կան հիւծեալք և օրհասականք: Լքեն զիս Հնդիկք, և քաղաքապետն Սրբոյն Թոմինիկոսի առաքեաց առ իս առուտրել յաւէտ զմահ իմ, կամ ի թաղել զիս ասա կենդանւոյն, քան թէ ի նպաստաւորել մեզ. քանզի նաւակն առ ի նմանէ առաքեալ չեբեր առ մեզ ոչ զօրոյ ինչ և ոչ թուղթ, և ոչ առնուլ ինչ ի մէնջ կամեցաւ. յորմէ առնուամ գուշակել զի պաշօնակից մեծապատիւ Տեառնդ կամք այս էցեն՝ ասա վախճան առնել ուղեւորութեանցն իմոյ և կենաց:

Ո՛վ իսկուհի մայրդ Աստուծոյ, որ կարեկից ես Թշուառացելոց և զրկելոց, ընդէր չեղև ինձ կորնչել ի Կենելէ Պռվասիլլայ, յորժամ կողոպտեացն զիս և զեղբայրն իմ Յոսկեւոյն՝ որ այնքան ծանրագին լեալ էր մեզ, և առանց դառնալոյ, առանց յանդնանց և առանց սուտերաց իսկ եղեռան, արկեալ ի շղթայս՝ առաքեաց զմեզ ի Սպանիա: Շըղթայքս այսօրիկ, աւաղ, միակ գանձք իմ են այսօր՝ որք Թաղեացին ընդ իս, եթէ գոայց բարեբախտ՝ գադաղայ և դերեզմանի միոյ լինել արժանի. քանզի ցանկամ ի պատիւ անուանն սպանիացւոց՝ զի և յիշատակ եղեռանկան և անիրաւ սպանութեան կորնչէ ընդ իս խաղաւ: Եթէ այդպէս լեալ էին իրք, ա՛լ փառաւորեալ Կոյս, ոչ ընդ ամիաս տան կամ երկոտասան Թողեալ էր զմեզ Ովբանդոսի առ ափն չարախտաւատ կորստեան, որոյ ապիրատութիւն ոչ ինչ ի վայր քան զաղէտս մեր է: Ո՛վ, դեռ մի և այս եղեռն ամօթապարտ՝ յաւելցէ արատել զանուն Կասթիլեան, և երանի թէ դարք ապագայք մի գիտասցեն երբեք զի ի դարուս յայսմիկ գտան ապիրատք յայն վատութիւն հասեալք, մինչև կարծել պաշտօն առնել Փերդինանդոսի՝ կործանելով զվատաբախտն Գոլոմպոս, ոչ վասն իւրոց ինչ յանցանաց, այլ զի եգիտ և պարգևեաց Սպանիոյ աշխարհ մի նոր:

Դու ինքնին Աստուած ամենազօր, դու ազգեցեր և առաջնորդեցեր ինձ յայդ: Յոյս ինձ զաղօրմութիւն քո, և հաճեաց ակնարկել քաղցրութեամբ յայս գործ վատաբախտիկ. ողբասցէ զիս աշխարհ ամենայն և որ ի նմա սիրոյն և արդարութեան և մարգասիրութեան. և դուք, հոգիք սուրբք երկնաւորք, որք գիտակք էք անմեղութեանս իմոյ, ներեսջիք մարգման ժամանակիս, որ նախանձոտն է յոյժ և անկարեկիր ի վիշտս իմ: Նաքա որք ծնանելոցն են՝ լացեն անշուշտ յաւուր միւմ, ի լսել զի Գոլոմպոս իւրովք ընչիւք, և սակաւ ինչ ծախիւք, մանաւանդ Թէ առանց իւրեք արքունական նպաստից, վանդակ կենաց իւրոց և եղբօրն, ի քան ամս, չորիցս ուղեւորութեամբ, այնպիսիս մատոյց Սպանիոյ սպաս մեծամեծ ծառայութեանց՝ որպիսիս էք ուրուք ի Թագաւորաց և ի Թագաւորութեանց ընկալեալ երբեք. և սակայն առանց իրիք ամբաստանութեան եղելոց զնմանէ՝ լքեալ Թողաւ կորնչել աղքատ և հէգ, կապեալ յամենայնէ բաց ի կապանացն իւրոց, այնպէս զի որ եան Սպանիոյ աշխարհ մի նոր, չկարաց ոչ ի նորն յայն և ոչ ի հինն գտանել հիւղ մի աղքատին ի պատապարանս իւր և Թշուառ ընտանեացն:

Սակայն եթէ երկնից կամք էցեն տակաւին հալածել զիս, և չիցէ հաճ ընդ գործս իմ, իբրու եթէ գիւտ նորոյ աշխարհիս աղխատութիւք իցէ հնոյն, և կամիցի պատուհասել զիս, վախճան առնելով վատաբախտիկ կենացս ի Թշուառութեան վայրիս, դուք, հրեշտակք սուրբք, որք նպաստամատոյց էք անմեղին և զրկելոյն, հասուցէք զԹուղթս զայս առ վեհապն իմ սիրուհի, գիտէ նա որչափ ինչ կրեցի ես ի փառս իւր և ի ծառայութիւն. մեծ է արդարութիւն նորա և գԹութիւն, և ոչ հանդուրժեսցէ զի եղբայր և որդիք

այնորիկ որ Հան Սպանիոյ Հռոմէթիւնս անբաւ, և յաւէլ յինքնակալութիւն նորա աշխարհս լայնածաւալ և թագաւորութիւնս անծանօթս, կարօտ գոյին հայր, և մուրս զութեամբ հայթայթեսցեն զկեանս իւրեանց: Տեսցէ նա, եթէ կեայ, զի անդթութիւն և ապախտաւորութիւն յաշխարհն գցաւսուն երկնից: Ձհռոմէթիւնքն զորս յայտնեցի կոչեսցեն համօրէն զաղգ մարդկան ՚ի յաւար և յարուսցեն ինձ վրէժխնդիրս. և գուցէ յաւուր միում կրեսցէ ազգն զպատուհաս անօրէնութեանցն, զորս չարութիւն, ապիրատաւորութիւն և նախանձ գործեն այսօր:

ՊԼԻՆԻՈՍ ԱՌ ՏԱԿԻՏՈՍ

Ընթերցայ զգիրս քո, և խնամով, որչափ կիսն էր, նշանակեցի զոր ինչ զեղծելի և զոր ինչ փոփոխելի համարեցայ ՚ի նմա: Քանզի սիրելի է ինձ ասել զշմարտութիւն, որպէս և քեզ լսել յօժարութեամբ. զի որ առաւելագոյն գովութեան է արժանի, առաւելագոյն սիրով զսգաստանն ընդունի: Այժմ ես ինքն փոխարէն ակն ունիմ գրոցն իմոյ առ ՚ի քէն նշանագրութեամբք: Ո՛վ գեղեցիկ և ցանկալի փոխանակութեանս: Զիա՛րդ բերկրալի է ինձ՝ զի թէ յեանոց փոյթ ինչ զմէնջ կայ, պատմեսցի որով միամտութեամբ և պարզութեամբ սրտի և հաւատարմութեամբ եղեալ առ միմեանս: Աչնորս և նորանշան իրք են երկուց ոմանց, գրեթէ հասակակցաց, և ոչ ՚ի սպառ աննշան եղելոց ՚ի գրականութեան, (Ցարկ է ինձ Ճգնելով խօսել զքէն՝ քանզի և զինէն են բանքն), օժանդակել իրերաց ՚ի վաստակս: Ի պատահութեանս խնամ՝ մինչգեռ անուամբ և փառաք փայլէիր դու, ցանկալի էր ինձ նախանձաւոր և հետևող ՚ի բացոյսս՝ այլ մերձաւորագոյն քեզ գոլ և երևել: Են և այլք բաղումք պայծառացեալք հանճարով, այլ ես՝ ՚ի նմանութենէ բնութեան բերեալ՝ զքեզ ընտրեցի ինձ օրինակ զե-

բագոյն և արժանաւոր ՚ի նմանութիւն: Եւ ընդ այն խընդամ մեծասէս զի ուր զգրականութենէ բանք լինին, անբաժան յիրերաց յիշատակիւք. զի որք զքէն առնուն խօսել, զնս լինքն տեսանեն յանդիման: Իցեն և այլք վերագահեալք քան զմեզ զերկոսեան, այլ զի փոյթ է ինձ թէ յոբնմ վայրի զուգեցեալք իրերաց, քանզի որ մերձաւորագոյնն է քեզ՝ նա է ինձ առաջին: Զայս և ՚ի կատակ տեսեալ ինչ քո, զի երկաքանչիւր մեզ, թէ ոչ թերևս միոյ ուրուք ՚ի մէնջ մերձաւորագոյն լեալ ինչ ոք բարեկամ, նոյն հրեշտակ և նոյն բաժին հաւասար կարգեալ է:

Այս ամենայն յայն յանդին՝ զի ջերմադոյն ևս սիրով սիրեսցուք զմիմեանս, զորս այսչափ բազմադիմի զօգք՝ գիտութեան, բարուց, հմտաւոյ, և կատակարաց ևս կամք կցորդեն ընդ իրեարս. Ողջ լեր:

ՍԵՆԵԿԱ ԱՌ ԼՈՒԿԻԼԻՈՍ

Յո՛ և գառնամ զծերութիւն իմ տեսանեմ յանդիմանեալ: Եկի այսր յագարակն իմ և բողոք ունէի վասն ծախուց տանն մերձ՚ի փուլ եղելոյ: Աւե՛ղ ցիս տեսեան. Ոչ յիմոյ ինչ Թերահոգ խնամոյ են ձեռագործք, զի որ ինչ՚ի կարի իմում էր արարի. այլ զի հինաւուրց տունն է: Սակայն տունն այն գաստակերտ իմ է՝ և զինչ ինձ լինիցի եթէ ժամանակ կիցք իմ քարինք այդպես խարխալին: Զայրացեալ ընդ այն՝ իսկ և իսկ կալայ պատեհ Թափելոյ զգաստութիւն իմ: Ահա, ասեմ, անխնամ Թողեալ Թուին ինձ ասօղքդ տեղեաՀափք ամենեքին, գօս և խեղանիւթ ոստոք վարակեալք, և ծրպէս զաղիր և բորբոսեալ բունքն են. զորս Թէ շուրջ զարմանիցն պեղեալ ոք և բաժակեալ էր, ոչ այդպես լինէին: Երդուաւ այրն ՚ի բահան իմ՝ ոչ ինչ ամենեքին պակասեցուցեալ ՚ի խնամոց, այլ ծառդ այդոքիկ ծերացեալք են: Բայց ասօղքն այնոքիկ, (մի ոք լուիցէ) ձեռատունկք իմ են,

և ես ինքն սեսի զաղաթեանալ նոցա զառաջինն: Եւ գաթ-
ձեալ ՚ի դուռն կողմն՝ ասեմ. Ո՞ է զառամեալդ այդ ծեր՝
արժանապէս առ գրանն կառուցեալ, զի և երեսք իւր ՚ի
դուրս են (1): Ո՞ւր գաեր դու զդա. և զինչ այդ հաճոյք
իցեն քեզ բառնալոյ զմեռեալ օտարի:—Իսկ զինչ, ասէ կանգ-
նեաւն. ոչ ճանաչես զնա. ես եմ Փիլիկիոս, վարձաւորի քո
Փիլոսիգեայ որդի՝ մանկիկ զբօսանաց քոց, որում զպատ-
կերիկն բերեիր խաղալիկս: — Աւեմ. Այդարև զառանցէ
դա. Ինչպէս մանկիկ ՚ի զբօսանս լինէ. սակայն մարթի. զի և
առաջինքն նորա մեծաւ մասամբ թօթափեալ են:

Շնորհապարտ եմ ապարակին խնամ որ այդպէս ամեն-
ուրեք զծերութիւն իմ կացոյց լինել յանդիման: Հապա,
ընդդրկեսցուք զայն սկզբով. լի և առաւելեալ է միթարու-
թեամբք՝ եթէ գիտասցէ ոք վարել նոցա. հանգստացինք
են պատուք հասուննացեալք. մանկութիւն վայելչացոյն ևս
՚ի կատարածին է. արբեցողաց բերկրալի ևս է ուժգն վեր-
ջին, որով զղլսեալ գինահարին ՚ի սպառ. հեշտութեանց
ամենայնի ՚ի սպառուածին է հզօրագոյն ազդեցութիւն:
Հաճոյագոյն ևս է անցեալն հասակ՝ այլ ոչ սպառեալ. նա
և այնմիսկ՝ որ մօտ ՚ի վախճանել է, թուի ինձ՝ զի ոչ սա-
կաւք խցեն իւր բերկրութիւնք, գէթ՝ զի ազատ ՚ի ցանկու-
թեանց՝ լինի նմա այն ՚ի բերկրանս: Զհարդ քաղցր է
խոյս տալ ՚ի ցանկութեանց և պարտասեցուցանել զնոսա:
Աւելցես. ծանր է և գժպհի տեսանել զմահ զառաջեալ: —
Այլ նախ՝ որպէս ծերոյ նոյնպէս և երիտասարդի պարտ
է զառաջեալ ունել զմահ. զի ոչ եթէ որպէս ՚ի համա-
րակաց՝ կոչիցիմք ըստ կարգի: Եւ գարձեալ՝ չիք ոք այն-
չափ զառամեալ, որում չիցէ օրէն միոյ ևս աւուր ակն
ունել. և մեն մի օր՝ ոտնփոխ մի է ընթացից կենաց: Կե-
նացն բովանդակութիւն յաջորդութեամբ մասանցն բուս-

(1) Գիտելի ՚է հնութեն սովորութիւն էր առ գրան կանգ-
նել զմեռեալն՝ երեսս ՚ի դուրս ունելով. յայն ակնարկեն
բանքս հեղինակն ասացեալք:

բի. և են նորա շրջանակք՝ մեծագոյնք զիրքուժիք պա-
րունակեալք, և մի այլ որ զամենեքումբք ոլորտացեալ
պարունակի: Է՝ որ յօրէ ծննդեան ձգի մինչև ցօրն վեր-
ջին, է որ զպատանեկութիւնն բովանդակէ, է որ զըն-
թացս մանկութեան, և հուսկ ապա՝ է որ զառաւօտա-
կանն բերէ զչափ ժամանակի, որոյ բաղմապատկութեամբն
բովանդակին կեանք: Ամենայնն շրջան անձուկ է. անձ-
կագոյն ևս աւուրն. սակայն և այնր սկիզբն է և կատարած՝
յարևելից յարևմտեաս ձգեալ: Այսր ազգաւ Հերակլի-
տոս, որ վասն գժուարիմաց բանիցն Սկոտինոն (Մթին)
կոչեցաւ՝ ասէ. «Մէն մի յաւուրց հաւասար է այլոց». զոր
այլազ այլազգ առնուս խնամալ: Ոմն ըստ ժամուցն թուոյ
զհաւասարութիւնն դնելով, և ոչ սխալէ. զի եթէ քան և
չորս ժամք են աւուր, հարկ է ամենայն աւուրց հաւասար
գալ երեքեան. զի որով չափով կարճն ակն, նովին չափով
գիշերն երկայնի: Այլ ոք ըստ նմանութեան առնուս խնա-
նալ զմի օրն հաւասար այլոց. իբրև զի ոչ ինչ երկարագոյն
է և նորա չափ ժամանակի քան զբովանդակեեալն ՚ի մի օր
ընդ ակն և ընդ գիշեր. որոյ թէպէտ ըստ չայորդել եղա-
նակաց փոփոխին չափք՝ մերթ երկայնելով և մերթ կարճե-
լով, բայց ոչ այլայլին:

Հարկ է մեզ ապա զմին մի յաւուրց որպէս վերջապահս
կարգել չորոց կենաց մերոց և իբրև լրումն նորին և սպա-
ռուած: Պօղոսիոս որ զԱսորիս յերկար վարչութեամբն
սեփականեաց, ՚ի գինեբրուս և ՚ի խրախճանութիւնս
զգալից հայկերդիցն մահուն իւրոց կատարեալ, յըն-
թրեաց անտի յատկապատ իւր ՚ի խրախճանակացն յոչ-
զարկաւորեր ծախճային հնչմամբ ներգաշնակաւոր երգոց
գոչելով՝ Եկեայ, եկեայ (Βεβίωται). և զայս նա զօր ամենայն:
Արդ զոր նա անխիղճ մտօք՝ մեզ ուղղութեամբ սրտի առ-
նել պարտ է. և մինչև ՚ի քուն մտեալ՝ ասել բերկրալից
խնդութեամբ՝

Կեցի, զընթացս իմ կատարեալ, զոր ինձ Հրամանքըն
հնդեցին:

Զվաղուն, եթէ հաճեսցի տալ մեզ Աստուած, ընկալցուք զայն ուրախութեամբ: Երանելի է, և վաստակ յանձն իւր՝ որ անդորր մտօք վաղորդայնոյն ակն ունի: Որ ասէն թէ՝ ՚ՆԵՂ, աւուր աւուր յարիցէ ՚ի շահել:

Այլ արդ ժամ է կինքելոյ զքնութիս: Սակայն, ասիցես. Ա՞յդպէս զուրկ և անմասն ՚ի շահաւէտ ճոխութենէ հասցէ առ իս Թուղթդ: — Մի ինչ հոգար. դոյզն ինչ ածցէ ընդ իւր. բայց զի՞նչ ասեմ դոյզն. մեծ ինչ մանաւանդ. զի զինչ պատուականագոյն քան զնմասս զայս՝ զոր աւանդեմն նմա քերել առ քեզ թէ՝ Զար է կեալ ՚ի կարօտութեան: Բայց չէք ինչ հարկ կալոյ ՚ի կարօտութեան: — Եւ զնա՞րդ: — Բաց են ամենուսա ճանապարհք դիւրին և համառօտ եւանելոյ յաղատութիւն (1). ընդհակ են Աստուծոյ զի ոչ զոք կաշկանդեալ ունի ՚ի կեանս. մարթ է և օրէն զկարօտութիւնս իսկ առ ոտն կոխել: — Այոյսս. Եպիկուրեայ են այդ բանք, և զի՞ է քեզ և ընդ բանս օտարի: — Որ ինչ արգարն է և ճշմարիտ, այն իմ է: Ոչ դադարեցայց զեպիկուրեայն երկրորդել առ քեզ. զի որք բառիկ ևեթ ուշ ունին, և ոչ ըստ խօսեցելոցն՝ այլ ըստ խօսելեացդ զբանն յարգեն, ՚ի միտ առցեն զի որ ինչ յաշխարհի բարութիւնք են՝ հասարակաց են համայն:

(1) Այս վերնագիր վարդապետութիւն է սոյնիկեանց, յորոց առնու և Սենեկա օրինաւոր համարել զանձնասպանութիւն՝ ասս և յայլ գիրս իւր. ոչինչ յիշելով զի կեանք գերագոյն պարգեւք են Աստուծոյ. և որ պարգեւեացն զայն, ինքն է տէր կենաց և մահու:

Ց. Ց. ԲՈՒՍՏՈՑ ԱՌ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՄՆ ՈՐ ԽՆԴՐԻՐ ԲՆԱԿԱՆԱԼ, Ի ՄՈՆՄՈՐԱՆՈՍ ԶԻ ՕԳՏՆՈՑՑԻ Ի ԼՈՒՐ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆՑ ՆՈՐԱ

Ոչ գիտես, տէր, առ ո՞գրես. առ այր մի ապիկար, ծանրացեալ կարեօք, և որ ևան է, բաղմաղբաղ յոյժ միշտ չկարել յաճախ տալ քեզ պատասխանի, Թող Թէ ընկերել ընդ քեզ որպէս կամիս: Պատուասիրես զնա՝ կարծելով Թէ կարող իցեմ օգտել քեզ. և գովելի ևս ես այնու որով բերիս յայդ ցանկութիւն: Սակայն և ոչ վասն այնորիկ հարկ իցէ քեզ բնականալ ՚ի Մոնմորանոս: Զևն պէտք այդչափ ՚ի հեռատես երթալոյ ՚ի խնդիր սկզբնատարերց բարեյաջանին:

Խորամուխ լեր ՚ի սիրա քո, և անդ գտցես զայնոսիկ. և ինձ չէ մարթ ասելն ինչ ասէլքան զոր Թելադրէ քեզ խելք քո՝ եթէ կալցիս զնա քեզ խրատատու: Աճաքինութիւնն չէ ՚ի գիտութեանց սակի՝ յորոյ ուսուցմն այդչափ պատրաստութեանց պէտք իցեն. շատ է Թէ կամեցի ոք՝ և եղիցի առաքինի. եթէ իցեն ՚ի քեզ սիրատես այդ կամք, կատարեալ է ամենայն և երանութիւն քո պատրաստ:

Եթէ ինձ անկ էր խրատատու կալ քեզ, զայս առաջին տայի քեզ խրատ. մի երթալ զհետ յանկութեան սրտից, որով բերիլ ասես առ տեսողական կեանս՝ որ անգործութիւն իմն է հոգւոյ: Մարդ հաստեալ է ոչ ՚ի խոկալ, այլ ՚ի գործել: Աշխատասուր կեանք, սահմանեալ մեզ Աբարչէն, քաղցր է և հեշտալի սրտի առն բարւոյ՝ որ անձնատուրն իցէ ՚ի նոյն ՚ի կատարել զպարտս իւր, և զօրութիւն առցէ հասակիդ չէ տուեալ քեզ առ ՚ի վատնել զայն յանգործ տեսութիւնս:

Աշխատեաց ասա, տէր, ՚ի պայմանի կենացդ՝ յորում էդիր զքեզ ծնողք քո և տեսչութիւնն: Այս առաջին պատուէրք են առաքինութեան որում տեղիս. և եթէ կալ քո ՚ի բարիլ՝ պարապելով ՚ի գործ պաշտամանդ յորում ես. զբ-

ժառաքընդել Թուեսցի քեզ ընդ առաքինութեան՝ արա զոր լաւագոյն է. դարձ՛ի գաւառ քո հայրենի. երթ առ ընտանիս քո, ապաս տար և խնամեա զնոցա զո առաքինիս. անդ լցցես սիրատիս զպարտան՝ զոր գնէ՛ի վերայ քո առաքինութիւն:

Առաւել դիւրըմբռնելի է կեանք առաժանական՛ի քնիկ գաւառի, քան հետամուտ դոլ բախտի՛ի Բարելը. գիտելով ջաւի, որպէս ոչինչ անծանօթ է և քեզ, զի ամենայն վատթարագոյն ևս հնարիւք՝ յաճախագոյնք են անդ գտտարկատրա սրինակք քան յաջողեալք՛ի բախտ:

Մի՛ ի Թշնաւութիւն Թուեսցի քեզ կեալ որպէս կեայ հայր քո. չիք պատճան կենաց՝ որ աշխատութեամբ, արհեստութեամբ, անմեղութեամբ և բաւականութեամբ չլինիցի դիւրատար՝ որոյ մտադիւր հպատակեսցեն այնմ՛ի կատարումն պարտուց իւրեանց:


Ահաւասիկ, տէր, իրաւք՝ համաղօրք այնոցիկ համայն զորս Թէ գայիր ընդունել ասա՛ի Մանմոնասի: Զիւեն Թէ, ըստ քումց քոց, և խիթամ զի ոչ յօժարեսցիս զնետ երթալ այսոցիկ. բայց ոչինչ երկայիմ զի սարջասցիս ապա յաւուր միում: Մաղթեմ քեզ բախտ այնպիսի՝ որոյ յիշատակ չլցէ երբեք գժպտիլ քեզ:

ՊՈՄԵՆ ԱՌ ՎՈՂՔՆ ՑԵՏ ՀԱՅԱՐԱԿԱՑ ԴԺԲԱԽՏՈՒԹԵՆՆ ԻՒՐԵՆՑ

Ահաւասիկ մեզ, տէր, ազատութիւն. վերաժինդիր լցցուք զբարեացս՝ յոգւոյ մեզ զայնս՛ի վար արկանելով: Թողցուք՛ի բաց զաւանութիւնական ազայամուութիւնն, որք այնջամի մեայլ արկին զկենցաղավարուքդ քով, և այսպէս գառնացուցին զերիտասարդութիւն իմ: Դոյզն ինչ առաւելութիւն փառաց, գոյն յաւելուած ճոխութեանց բնաւ իսկ

զինչ իցեն: Երջանկութեան լիցուք զկեա և ոչ երևութից երջանկութեան: Համեաւ իսկ գերափայլեալ ոչ արժէ երբեք զաշխատութիւնն. Կարօտս ե. տենչալը յառանձնութիւն, և Ովիդիոս ցանկալը լինել յիմար:

Ահաւասիկ մեզ ազատութիւն. ոչ ևս՛ի Պատգիլ կամ ևս, և ոչ գուշալեցնիս՛ի Պհռլին: Ցոգւոյ մեզ՛ի վար արկցուք զպատեհս զայս որում յամենայն վայրկենի կորընչելմարթ է: Ցարգեսցուք զմեծութիւնն՝ ինքնակալ որոց մերձենան առ նա, և զզօրութիւնն՝ սոսկալի և այնոցիկ որք վարեն զայն: Եւ Թէ ձշմարիտ է զի չիցէ մարթ խորհել անվտանգ, խորհեսցուք մի: Որ ինչ բերկրութիւն իցէ՛ի խորհելոյ, հաւատարեսցի՛ երբեք բերկրանաց աներկեան ապահովութեան: Շատ լիցին մեզ քո վաթնամեայ փորձ, և իմ վեցամեայ նուաստանալ: Ցաւելցուք՛ի զգօնութիւն, կամ գէթ՛ի խոհեմութիւն. և ամենայն խորշոմք ծերութեան և յիշատակ աղևից և վտանգ՝ Թշնամանք ժամանակի և իշխանութեան, փոխեսցին մեզ իսկապէս՛ի բարիս:



ԱՆՆԱ ՏՐ ՊՈՒԼՆ ԱՌ ՅՑՐ ԻՒՐ ՀԵՆՐԻԿՈՍ Ը.

Յաստուն ալքայական փառացդ և բանաստղծութիւնս իմ այնպէս յեղակարծ իրք են ինձ՝ զի չգիտեմ զինչ գրել և յիմ իմիք անբասիր առնել զանձն իմ: Առաքեցեր առ իս պատգամաւոր զքեզ, զորոյ գիտես զհնացեալ ոխութիւնն առ իս, ասել՝ զի չիցէ ինձ մարթ գտանել շնորհս առաջի քո մինչև խոստովանեալ զձշմարտութիւն: Չև կատարեալ նորա զպատգամաւորութիւն իւր՝ քաջ իսկ խելամուտ եղէ խորհրդոց մտացդ: Սակայն եթէ խոստովանութեամբ ձշմարտութեան լիցի ինձ, որպէս ասեգ, եւանել յաղաւթութիւն, մտադիւր յօժարութեամբ հպատակեցայց հրամանացդ: Բայց Հեղգութիւնդ քո մի՛ ոչնիցի երբեք զի

կողակից քո հեգ յանձն առնուցու մեղանս, զոր և զմտաւ ածեալ չէ: Զկիք ուրեք երբեք լեալ Թագաւորի լծակից հաւատարիմ յամենայն ի պարտս իւր և առաւել եւս խանդակաթ և անկեղծ սիրով՝ քան զոր եպիս Մեծուհին քո Յինա նա ըստ Պուլէն. որոյ շահացեալ արդեօք անուամբն այնուիկ՝ կացեալ մնացեալ էր լիւրուհին չափու պայմանին, յոր Թէ հաձեցեալ էր Երկինից և Մեծուհեանդ քո Թողուլ զնա: Այլ և ի փառս անդ՝ յոր ամբարձեալն զնա քեզ գահակից, ոչ այնպէս անկայ ես ի քուն մոռացուհեան անձին իմոյ, մինչև չերկնչել յարհնուհենէ ասել յորում գանիմս արդ: Ֆանզի բարձրուհին իմ ոչ ինչ աւելի հիմն հաստատուհեան ունելով քան զվաղանցուկ հաճոյս՝ զոր կալարն առ իս, ոչ ինչ երկմտեի՝ զի գոյնի յեղափոխուհին ի տիպ դիտակին յոր հաձեցարն, բաւական իցէ ի դարձուցանել այլուր զաչս քո: Ամբարձեր զնա ի նուաստուհենէ ի գահ արքունական՝ վերառեալ ի շքեղշուք փառս տիկնուհեան: Բարձրուհին արդարև գեր ի վերոյ արժանեացս, որպէս և առանց ինչ իմոյ երաւանց: Սակայն եթէ Փառք քո հաձեցաւ արժանի համարել զնա այնմ, մի լեցի քեզ, Թագաւորդ մեծ, անիրաս յողդողդուհեամբ մատց և չարանենդ սադրանօք Թշնամեաց իմոց մերժել զնա յարքունական երեսացդ. և մի Թողուցուս զի կեղտ դժնեայ և չարաշուք, որպիսի է անհաւատարիմն դոլ առ քեզ, աղաւեսցէ զհամբաւ ամուսնոյ քո և զդաստեր իշխանուհւոյ:

Հրաման տուր ապա, Թագաւորդ իմ, առնել հարձ փորձ դաւաստանի, քանզի ըստ օրինաց արդարուհեան. և մի Թողուցուս զի Թշնամիք իմ ոխերիմք՝ լեցին ինձ դաւաթաղ և դաւաւոր: Հրամայեա զի հրապարակաւ լեցի հարցափորձն. ոչ ինչ երկնչեմ Թէ գուցէ ամօթապարտ գոյի հաւատարմուհենէս իմ. նա՝ տեսցես զի ելցէ ի լոյս արդարուհին իմ, փարատեսցի խէթ մտացդ, անդորրասցի սիրտ քո, և զղպարտուհին փակեսցէ զբերան իւր. կամ եթէ ոչ՝ աշխարհալուր նշաւակեսցին մեղք իմ: Այսու օրինակաւ՝ որպէս և զիարդ կամք լեցին երկնից և կամ քեզ՝ անօրի-

նել զինէն, փառք քո անսպիւռ լիցէ յաչս աշխարհի, և մեղք իմ յանդիմանեալ յարգարուհենէ՝ համարձակուհին լեցի քեզ առաջի Աստուծոյ և մարդկան ոչ միայն ի պատուհասել զնս որպէս ամուսին անհաւատարիմ, այլ և զհետ երթալ սիրելուհեանդ առ նա՝ որ պատճառքն է աղետից իմոց, և զոր վաղագոյն ևս անուանել խակքեզ կարէի. զի ոչ անծանօթ ինչ էր և քոյոյ աչերուհեանդ եթէ մինչև ցոր վայր ժամանէր խէթ կասկածանաց իմոց յիրիդ յայդմիկ:

Ի վերջ՝ եթէ հաստատուհեամբ եդեալ է քո ի մտի կորուսանել զնս, և եթէ մահուամբ իմով, զոր ածէ ի վերայ իմ զղպարտուհին, հարկ է քեզ հաստնել ի վայելս ցանկացելոյ երջանկուհեանդ, աղաչեմ զՏէր ներել մեծելոն յանցանացդ. ներել և Թշնամեացն իմոց որք արբանեկենքեզ ի նոյն. և ի յեսունուն աւուր ի նստել իւր յաթեռնի, որում և ես և դուս հուսկ ընդ հուսկ կացցուք յանդիման. և ուր արդարուհիւնս իմ, որպէս և զիարդ դատեցեալն աստ՝ ցուցցի յայտ յանդիմանուհեամբ, աղաչեմ զնա մի խնդրել ի քէն համար ասասկասպահանջ վասն անօդուրմ գնացիցն՝ զոր Թէ կալցիս ընդ իս:

Իմ միակ և վերջին խնդիր առ ի քէն այս է՝ զի յիս ևեթ Թափեսցի բովանդակ ցասուհին բարկուհեան քո, և աղատ որեւէն հեգ և անպարտական, որ վասն իմ՝ որպէս լսեմ՝ ամրապահեսա կան ի բանտի, արձակեսցին անպատուհաս: Եւ Թէ դոքն երբեք չնորհս առաջի քո, եթէ կոչ անուանն Աննայի քաղցրացաւ երբեք յունկն քո, մի զլասցիս ինձ զնորհս զայս. և ես ոչ ևս յաւելից աչխատ առնել զաերուհենդ քո որ և է օրինակաւ. այլ ընդ հակառակն ջերմեռանդն պաղատանօք խնդրեցից անդուլ ի Տեառնէ զի հաձեսցի խնամարկել քեզ և առաջնորդել յամենայն գործս քո:

Ի տխուր բանտին..

ՊԵՏՐՈՍ ՊԵՄՊՈՑ ԱՌ ԱԼԴՈՍՏԻՆՈՍ ՓՈՂԻԿԴՈՆ Ի ՀՌՈՎՄ

Համարիմ զի լուար զուշևորութենէ իմմէ յիմոյն Ադբլայ, և յԱդդոսանենայ Պէացցարոյ։ Բայց զի լսցին և ինձ պատճառաբ խոսելոյ ընդ քեզ, կամիմ զի երկրորդ անգամ լուիցես զայն յինէն։ Ելեալ յերիվար, որպէս տեսերդ, կարի տիար ի խոթութենէս, զոր շնորհեաց ինձ Հռովմ ի վարձ փոխարինի այցելութեան իմոյ առ նա։ Սակայն ըստ յամենայն ի հեծելութեան, և կազդուրեցայ. մինչ զի ի վախճան ուղևոյս գալ զանձն իմ այնպիսի, որպիսի սովոր իսկ եմ լինել։ Կամ իղձք զոր ունիմ խուսափելոյ ի Հռովմայ «յորմէ հիւրընկալ մեծարեցայ», կամ փոփոխութիւն օդոյ կամ շարժումն մարմնոյս շնորհեցին ինձ զառողջութիւնդ, կամ թէ ըստ դիպաց երեքին ևս ի միասին։ Իբրև եկի ի Պատաւիոն, այց եղի բարեկամաց, և նոքա ինձ, և իմքն անտի ապա ի դիւղին իմ ասա որ յոյժ հնդութեամբ ընկալաւ զիս, յորում և բնակեմս խաղաղութիւն, մինչդեռ ի Հռովմ ցանգ ի վատաիս և յաղմուկս։ Ոչ ևս լսեմ լուրս ապստիալիս և անհաճոյս, ոչ ևս խորհիմ ի գաս, ոչ ևս ընդ հոգաբարձուն խոսիմ, կամ ընծանամ ի ժողովս քննութենից. ոչ ևս լսեմ ազաղակ, բայց զոր լսելի առնեն ինձ սոխակք շուրջանակի ընդհակառակս իմն մեծաւ ընդ իրեարս, և այլ երամք թռչնոց, ամենեցուն միանգամայն խրնամանի ներդաշնակութեամբքն թռչնի հաճել զիս։ Ընծեռնում յոյժամ կամիմ, շրջագայիմ մերթ ի հեռուստս, մերթ ի ձի, և բազում անգամ գնամ յանտառակն որ ի գլուխ պարսպիզիս. և ի պարսպիզ ասեմ իմիմ, որ յոյժ զուարճալի է և գեղեցիկ, է զի ընդ երեկոյս քաղեմ ձեռամբ իմով զմրգեղէնս ընծրեացն, և է զի ընդ առաւօտս ընդմիջողակի մի եղակաց, որք ոչ միայն քաղցրացուցանեն զբերան, այլև զսեղանն բովանդակ լի առնեն հոտովք։ Լռեմ ասել զի պարտէզն իմ և տունն և ամենայն ինչ զորս ողջոյն լի են վարդիւք։ Բայց ի սոցունց, ունիմ և նաւակ մի փոքր, յորում մտեալ ձեմս առնում նախ ընդ գեղեցիկ գետակն, որ մշտահոս ընծանայ զառաջեաւ տան իմոյ, և ապա ընդ Պրենդա, ընդ որ խաւարի գետակն իմ սպագոյն անցիւք. և է Պրենդա գետ գեղեցիկ և զուարճատեսիլ, որ և այլուր ուրեմն զարտարասան իմ առագանէ. ընդ երեկոյս՝ ժամանակս ձիգս գնամ ի նմա զաղապաձեմ, յորում ժամու ջուրք քան զցամաք հաճոյ ընծային ինձ։ Ասյպէս ունիմ ի մտի լինել առա զամառն ողջոյն. և զաշունն բովանդակ, ընդ ժամանակս ժամանակս գնալով ի Պատաւիոն ի տեսանել զբարեկամս՝ զառուրս երիուս կամ զերիս, որպէս զի առ քաղաքաւ վայելչագոյն ևս երևեսցի ինձ գիւղ. Ողջ լեր։

Ի գեղջէ ի 6 Մայիսի 1525.

ՏՈՐԿ. ԴԱՍՍՈՑ ԱՌ ԱՆՏՈՆ ԳՈՍՊԱՆԴԻՆԻ

Զինչ արդեօք ասիցէ աւերն իմ Անտոնիոս՝ զմահ լսելով իւրոյն Պասսոյ. զի որպէս և ինձ Թուի ոչ յամենայնէ հատանել այս գուժիկան. զգամ զմնռալուստ եղս կենաց իմոյ՝ յորմէ հետէ ոչ դառաւ գեղ բուժիչ տաղտկալի ախտիս, որ յաւելաւ ի վերայ առաջնոց այլոցն բազմաց, և որպէս հեղեղ սրընթաց և անարգել ահա գայ յամբշտակել զիս։ Ոչ է ժամանակս խոսելոյ զառաւտւմ բաղդէս, զի մի կոչեցից զայն անշնորհակալութիւն աշխարհի, որ յաղթութիւն համարեցաւ իրրև զմրտրացիան մի վարել զիս ի գերեզման, մինչգեռ համարեալ կարծէի՝ եթէ փառքն այն՝ զոր ի կորանս յաջողակաւոյ ժառանգելոց էր դարս այս յիմոյ գրուածոյ, ոչ խափան աներախտի զիս Թողուցէ։ Տանել էառ զիս ի վանս յայս Ս. Անդրիսու, ոչ յայն սակս միայն զի զաւրութիւն օդոյ տեղւոյս բժիշկք գերագոյն ասեն քան զամենայն Հռովմայ, այլ գոզջիր առ սկիզբն առնելոյ ի վերնական տեղւոջէ ասելոյ կենակցութեան ասուածազգեաց Հարցս՝

զքաղաքավարութեան իմոյ յերկինս: Աղօթեաջիր վասն իմ առ Աստուած. և հաւատա աներկբայ, զի որպէս ոչ գադարեցի՛ ի սիրելոյ և՛ ի պատուի ունելոյ զքեզ՛ ի կեանս յայս, զնոյն և՛ ի հանդերձեալսն ի ստոյգ կեանսն արարից, որպէս ինչ վայելէ անկեղծ և ճշմարիտ սիրոյ: Յանձն առնեմ զքեզ ընդհատն Աստուծոյ, որպէս և զիս ինքնին:

Հռոմ, ի Ս. Ննոքրիոս, 1595.

ՊԵՏՐՈՍ ՊԱՄՊՈՑ ԱՌ ՆՂԲՕՐՈՐԴԻ ԻՒՐ Կ. ՊԵՄՊՈՑ

Ոչ գիտեմ Թէ ինչ արժան աշխատ լինել առ՛ի յիշեցուցանելոյ զպարտս քո. քանզի ամենեցուն իսկ՝ որոց գուցէ պատեհ, որպէս և ես իսկ քոյ, պարտք են լինել քաջ ոգի, առաքինի և գիտուն: Մերթ՛ ի զուր յօդս ցրուել զբանս իմ վարկանիմ, լուեալ Թէ զինքդ յամսոյ հետէ հեղգացեալ ես յուսումն և պղերգ դառեալ առ ամենայն ինչ. և մերթ զինքդ ես ինձ ընդ այս, և փափագեմ դառնել քեզ այնպիսի որպէս և հարկ է գառնել քեզ, զոր իբրև որդի սնուցի և առ որդի ունիմ: Այլ՛ ի բաց Թողեալ զվարանս իմ, ոչ լսեցից յասելոյ՝ Թէ չնաշքիր չմնալ պարտականն անձին քոյմ. զի չէք քան զայդ պարտականութիւն մեծ և ինամսիչ զանցառուին: Այո՛զ ես մտրմնով և առօդ հասանիւ, բաւական առ ամենայն վաստակ. ունիս դաստիարակ, որպիսի ոչ ունին որդիք Թագաւորին Փառնկաց. և ինչ՛ ի պարգեւաց բաղդի չպակասեր ինչ քեզ: Այրդ յոյշ լսցի քեզ, զի Թէ ոչ աշխատ լինիցիս ամբարել քեզ արդիւնս՝ ի զարդանալ տիոցդ՝ անձամբ անձին չկարասցես. և ոչ լինիցի քեզ բաւական զոր եան ինչ ասց քեզ:

ՍԵՐՈՒԻՈՍ ՍՈՒԼՊԻԿԻՈՍ ԱՌ ԿԻԿԵՐՈՆ

Իբրև աղդ եղև ինձ գոյժ մահուան դառեր քոյ Տուլլիայ, ցաւեաց ինձ մեծապէս՝ որպէս պարտն էր, և հասարակաց մեզ զաղէտն համարեցայ: Եթէ ոչ ասա՝ այլ այդր առ քեզ կայի, տեսանելիր արդեօք զցաւս իմ: Եւ Թէպէտ միխիթարութիւն այդպիսի ապիկար է և դառն, զի որոց մատուցանելն զայն պարտ է՝ մերձաւորք և ընտանիքն՝ նովին կրեալք զդաժեալքն, առանց Ճգնոյ և բաղում արտասուաց զայդ սպաս հարկանել ոչ կարեն. զի ինքեանք մանաւանդ յայլոց կարօտին ընդունել միխիթարութիւն քան տալ զայն այլում. սակայն որ ինչ՛ ի միտս իմ գայ՛ ի ժամուս՝ կամեցայ գրել առ քեզ համառօտիւ: Իբր ոչ եթէ՛ ի մոռացօնս քեզ համարիցիմ զգրեալքս, այլ զի միտք գրաւեալ՛ ի ցաւոյ՝ չկարիցէ Թերևս խորհել՛ ի նոսին:

Ընդէր լսէ քեզ այդչափ վշտովել յընտանի ցաւոցդ. յուշ լսցի քեզ զոր մինչև ցարդ արար ընդ մեզ բարեան. եբարձ՛ ի մէնջ զամենայն՝ որք ոչ ինչ ընդհատ քան զորդիս՝ սիրելիք մարդկան պարտ է Թէ լսցեն. զերկիր հայրենի, զարդ, զհամբաւ և համայն իսկ՝ զպատիւ. և զինչ միտս ևս այսուհիկ ցաւով յաւելուլ կարիցէ. կամ ո՞ր այն սիրտ, որ ընդ այնքանեաց ցաւոց անցեալ ընդ կիրճ՝ և ոչ պնդացեալ լսցէ և սովորեալ առ ոչինչ գրեզ զամենայն: — Բայց ընդ մահ դառերդ մորմոքի սիրտ քո. գիտեմ և ես: Սակայն և՛ ի ցաւս անդ խորհել քեզ պարտ է և զայն՝ զոր և մեք իսկ յեդեղեմք յաՃախ՝ Թէ՛ ի չարեաց ժամանակիս ոչ չարաբաստ ինչ են նոքա որոց մարթ իցէ անցաւ և անվրդով սրտիւ զմահ ընդ կենաց փոխանակել: Եւ զինչ՛ ի ժամանակի աստ յայսմիկ առաջի կայր դառեր քո. ո՛ր գործ, ո՛ր ակնկալութիւն բարեաց կամ միխիթարութիւն սրտի: Թերևս՝ զի ընդ մեծազգեայ ուրուք պատանւոյ ընկերեալ՝ վայելչո՛ ի կեանս: Այո՛ ոչ գժպատեհ ինչ է քեզ՝ որպէս կարծեմ, ի պատանեաց ժամանակիս՝ ըստ արժանի պատ-

տուոյ անուանդ ընարել զոք վեսայ, յոր կարիցես անկասկած հաւատալ զծնունդս քո: Թերևս զի ծնցի որպես և ինդասցէ՛ ի նոսա՝ տեսեալ զի բարգաւաճեն փառօք· զի զհայրենի ժառանգութիւնն անտեսեն անձամբ· զի՛ ի պատիւ և յաւագութիւնս պետութեան վերամբառնան տակաւ· զի՛ ի պէտս և՛ ի կարիս բարեկամաց ազատաբար լինին ձեռնկալու: Այլ ո՞ր այն յատացելոցդ որ միտչէև տուեալ՝ չնչէ բարձեալ առ՛ ի մէնջ:

Սակայն դառն է կորուսանել զորդի:— Դառն է այո, բայց գառնագոյն յոյժ՝ կրել զոր կրեմքս արդ և հանդուրժել: Կամիմ ատանօր յուշ քեզ առնել զայն՝ որ ոչ ատկաւ եղև ինձ՛ ի մխիթարութիւն, Թերևս և զքո իսկ զցաւդ մեղմել կարացէ:

Ի գառնալ իմում Աֆիոյ՝ մինչ յԵգինայ նաւէի՛ ի Մեգարա, զաչս շուրջ զվայրօքն արկեալ դիտէի· Եգէտ կայր ինձ յետոյտ, ՛ի հանդիպոյ Մեգարայ, յաջմէ Պիրէոն և՛ ի ձախմէ Կորնթոս: Համայն քաղաքք բարգաւաճեալք երեւեին, և զարդիս հարթատակ անապատացեալք՛ ի տեսիլ· և մտախոհ եղեալ յանձն իմ՝ ասեմ. մեք՝ դուզնաքեայք ոմանք մարդիկ զաբիմք և վշտանամք եթէ մեռցի կամ սպանցի ոք՛ ի մէնջ, և ահա քաղաքք բազումք և մեծամեծք անկեալ գնին գիակնացեալք՛ ի միում վայրի: Եւ ընդէր իցէ քեզ, Սերուիէ, մուանալ՝ զի մարդ մահկանացու ես ծնեալ: Զայսոսիկ ածեալ զմտաւ, հաւատա լինէ, զի քաջալերեալ զօրացայ ոչ սակաւ: Նոյնպէս և դու, եթէ հաճոյ քեզ իցէ, այծ կայծ զառաջեաւ զայնչափ բազմութիւն մեծատայծառ արանց արդ իսկ եղելոց՛ ի կորուստ, զաշխարհիս նուազել, և զսասանել դաւառաց· և միթէ ցաւեսցէ քեզ այդչափ ընդ դուզնաքեայ կորուստ կենաց կնոջ միոյ, որում թէ ոչ այժմ, բայց յետ սակաւուց հարկ էր մեռանել՝ զի մահկանացու էր ծնեալ: Եւ ապա՛ ի տեսութեանց ասի ամփոփեալ զմիտս քո՝ զայն խորհեալդ առաւել որ արժանի և վայելուչ քեզ իցէ· զի դուստրն քո եկեաց՝ փրչափ անկ էր նմա կեալ· զի եկեաց ընդ ընկերս.

հաշտութեան· զի զքեզ զհայր իւր եաես կուսակալ բնդեղաշխ և հաւատհմայ· զի ընդ մեծազգի երիտասարդացամուռ նացաս· զի համօրէն գրեթէ՛ ի բարութիւնս և՛ ի հաճոյ վայելեալ, և հուպ՛ ի վախճան ընկերհաշտութեան զկեանս իւր վճարեաց: Եւ զի՞նչ պատճառք կցեն քեզ և կամ գտերդ՝ բողոքելոց զբաղդին: Հուսկ ապա՝ յուշ լինցի քեզ զի Կիկերոն ես· այն՝ որ զայլս խրատեիր յաճախ: Մի իբրև զյոռի բժիշկն եղիցիս՝ որք յախտակրութիւնս այլոց խոտանան ունել զդիտութիւն արուեստին, և զանձինս բժշկել ոչ գիտեն: Այլ դու զոր այլոցն օրինադրես՛ ի հաստատութենէ մտաց, նոցին և ինքնդ հպատակեսջիր՝ հաստատութեամբ մտաց յուշի կալեալ զնպատակ: Զկք ցաւ՝ որ երկարութեամբ ժամանակաց ոչ ցածուցեալ մեղմացի· բայց քեզ ոչ արժան, ոչ՛ ի դէպ անալ ժամանակի, այլ խստութեամբ քով կանխել ընդ առաջ: Եւ թէ գուցեն խմացք՛ ի գժտս, նա՝ որ սիրեացն զքեզ այնչափ և որ գութ մեծ առ իբրն բերէր, գժկամակեացն անշուշտ ընդ ցաւոցդ անչափութիւն· լուր ապա գտեր քո, լուր բարեկամացդ և ընտանեաց, որոց ցաւ մեծ է ընդ արամութիւն քո· լուր և աշխարհին քում, որում թէ պէտք լինչ լինիցին, գիտասցէ վարել խորհրդով քով և օգնականութեամբ: Հուսկ ապա, քանզի յայն հասեալ կամք՛ ի պայման, զի և զգուշութեանս պամիկ մեզ պէտք են, ասս չտալ ուժք կարծիս՝ որպէս թէ ոչ զգուսաս քո, այլ զաշխարհս և զյաղթութիւնս այլոց աշխարհիցս:

Ամչեմ այլ ևս յերկարել առ քեզ զբանս իմ գուցէ անվստահ՛ ի խոհականութիւն քո երևեցայց: Վասն որոյ և միոջ ևս այսուիկ վախճան արարիցս գրութեանս: Տեսաք զքեզ՛ ի նուագս նուագս գերեզկատիս վարեալ՛ ի յաջողութիւնս բախտին, և մեծամեծ գովութեանց եղեալ արժանի· ցոյց մեզ արդ, զի և՛ ի ձախողակս բախտին գիտիցես վարել նովին չափաւորութեամբ· և մի առաւել քան զարժանն ծանրասցին քեզ ցաւքդ, զի մի յամենայն առաքինութենէ՝ յայսմ միայնում թերացեալ երևեսցիս:

Իսկ ես յինէն կողմանէ՝ յորժամ գիտացից զի հանդարտեալ եցես և անդորրացեալ հոգւով, ոչ վերջացայց ՚ի դրելոյ քեզ զգործեցեալսն ասա, և թէ զնարդ կայցէ գաւառս. Ողջ լեր:

ԿԻԿԵՐՈՆ ԱՌ ՍԵՐՈՒԻՈՍ ՍՈՒԼՊԻԿԻՈՍ

Ես իսկ արդարև ցանկայի, Սերուլէ, զի որպէս ասեն՝ մերձ առ իս կայիր ասա ՚ի ծանր և ՚ի դառնակսկիծ աղէտս իմ: Եւ թէ քանի օգտամատոյց ինձ լինէիր մերձաւորութեամբդ՝ միսիթարելով զիս և որպէս հաւատարմոյդ ցաւոյս լինելով, ոչ ինչ գժուարին է ինձ ՚ի միտ առնուլ այնու՝ զի յընթեռնուլն իմ զթուղթդ, միսիթարեցայ ոչ սակաւս: Քանզի և զայնպիսիս գրէիր առ իս, որք բաւականք եղեն մեղմել զսուգ իմ, և զքո իսկ ցուցանել զիւրս ցաւոց ՚ի միսիթարելդ զիս: Սակայն որդի քո Սերուիոս՝ ամենայն կարևոր սպասաշարկութեամբք, որոց յայնպիսումն պահու ինձ պէտք էին, եցոյց զիւր առ իս մեծարանն, և զայն իսկ՝ եթէ որչափ հաճոյական ինչ քեզ առնել համարէր այնու հոգւով մարդասիրութեան բերեալ առ իս: Էր նորա արդարև ուրիք ուրիք սպասս հաճոյականս հարեալ առ իս, այլ ոչ ուրիք հաճոյագոյն քան զայս:

Բայց ես ոչ բանիւք քովք միայն և համակարիք ընդ իս ցաւակցութեամբդ միսիթարիմ, այլ և քոյով մեծազօր արժանեօքդ. քանզի ամօթ ինձ համարիմ՝ ոչ այնու հոգւով տանել ցաւոցս, որով դու՝ ձոխացեալդ այդքանեաւ իմաստութեամբ՝ արժան համարիս ինձ տանել: Սակայն ընկճեալ ուրիք ՚ի ցաւոցս, հանդուրժել ՚ոչ կարեմ. զի զուրկ եմ ՚ի միսիթարութենից անտի՝ որք ՚ի նմանօրինակ աղէտս մերձ կային այնոցիկ, զորս օրինակ ինձ կալեալ եմ զառաջեաւս: Քանզի Կ. Մաքսիմոս, որ զորդին իւր կորոյս զայր հիւպատոսական՝ զպայծառացեալն մեծագործ արութեամբք. և Լ. Պաւլոս, որ զերկուս՝ յաւուրս եօթն կորոյս. և ձերդ Գալլոս, և Մ. Կատոնէ, որ զպերճացեալն հանճարով և արութեամբ կորոյս զորդին, յայնպիսում կացին ժամանակի, յորում պատուեալք և մեծարեալք աւագութեամբք ՚ի հասարակաց Պետութենէ, ՚ի մեղմին ցաւք նոցա. իսկ ես արդ՝ մինչ զուրկ և անմասն յամենայն վայելչութեանց անտի զորս դուք յիշատակէս, և որք բազում քրատից և վաստակոց ինձ եղեն, մի միայն միսիթարութիւն որ կայցէ՝ զայն ևս կորուսի: Անդ յայնժամ էր ինձ ոչ ՚ինպատասբարեկամացս և ոչ ՚ի հոգս տեսչութեան հասարակաց պետութեան զբաղնուլ և սփոփիլ մտօք. ոչ դատաստաց ՚ի հրապարակ ելանել յօժարիլն, և ոչ յատեան խորհրդոյ երևել. Թուէր ինձ, որպէս և էրն իսկ, եթէ ամենայն արգասիք վաստակոցն իմոց և բանտին կորուսեալ լիցեն ՚ի սպառ: Սակայն ածեալ զմտաւ թէ այդոքիկ ամենայն՝ և քեզ և այլոց ոմանց հասարակաց են աղէտք, մինչ բուռն առնէի անձին հանդուրժել, էր որ իմ զօրավիգն և տպաւէն, որոյ քաղցրախօս բանիւք փարատեին յինէն ամենայն ցաւք և հոգք: Այլ արդ կարեվէր հարուածովս այսոսիկ՝ և առաջինքն այն վերք, որք ողջանալն Թուէին, զայրանան և ևս: Զի ոչ եթէ, որպէս երբեմն, մինչ ՚ի հոգոց Պետութեան դառնայի Թախծագին՝ ընդունէր զիս տունն և սփոփէր, նոյնպէս արդ՝ Թախծեալս ՚ի տան՝ կարիցեմ ՚ի գործս Պետութեան սփոփանս անձին գտանել և ՚ի բարութիւնս նորա վայելել: Վասն որոյ և ՚ի տանէ և ՚ի պետութենէ զուրկ և ամայի լքեալ կամ: Ոչ տունն զան ՚ի պետութենէ ընկալեալ զցաւս իմ գիտէ փարատել, և ոչ պետութիւնն զընկալեալսն առնէին: Եմին իրի քեզ ինամ անձ կանոք և վաղագոյն որչափ մարթ է՝ ցանկամ տեսանել զքեզ: Զիք ինչ այլ որ այնպէս սփոփել զիս կարասցէ՝ որպէս կենակից քեզ լինել և խօսակից ընդ միմեանս՝ որում և վաղ իսկ, որպէս լոե լինէր, հանդիպել ակն ունէիր: Քանզի ՚ի բազում գլխոց ցանկամ տեսանել զքեզ փութապէս. և առաւել ևս զի կանխեալ խօսեսցուք ընդ միմեանս

թէ արդեօք արժան իցէ վարել՝ ի ժամանակի ասա՝ յորում հարկ է մեզ յարմարել զանձինս կամաց միւսին, որ խոհական է և բարեբարոյ, և որչափ դիտեմ՝ ընդ իս հակառակուածիւն ինչ ոչ ունի, և ընդ քեզ բարեկամութիւն մեծ: Նմին իրի բազում խոհականութեան գործ է՝ ընտրել թէ զկնի գնացս պարտ իցէ մեզ ունել ընդ նմա. ոչ՝ ի գործել ինչ, այլ՝ ի բարեկամութիւն նորա և՝ ի մարդասիրութիւն անդորր դառնել. Ողջ լեր:

ՊԼԻՆԻՈՍ ԱՌ ԲԵԲԻՈՍ

Տրանկուիլլոս բնակակիցն իմ ցանկայ ստանալ զագարանին փոքրիկ, զոր բարեկամն քո լսեմ թէ վաճառէ: Փոյթ կալջիր աղաչեմ, զի ստացի նա զայն ըստ արդար գնոց. զի այնպէս ցանկայ ստանալ: Քանզի ստացեալն չարաչար՝ դժպհի է միշտ, վասն այն մանաւանդ զի յանդիմանէ ինձն հանապազ զանմտութիւն տեառնն: Յայնմ փոքրիկ ագարակի, թէ ըստ արժանւոյն միայն գնեսցի, բազում ինչ իրք են ցանկալիք խնամս Տրանկուիլլեայ. մեծաւորութիւն՝ ի քաղաքն, դիւրութիւն հանապարհացս. վայրացն չափաւորութիւն և հանգամանք անդաստանին, որ զբօսեցուցիչք են՝ ի հոգս: Արդարև պարապեալոց յուսումն, որպիսւոյ ուժգնէ է բանս, շատ իսկ է այնչափ ինչ տեղի՝ ուր մարթի իցէ նոցա կազդուրել զմիտս, սփոփել զաչս, շուրջ զնայրօքն գալ, հորդել ուղի մի՝ ի ձեմ, այց առնել որթատնկոցն և թուրել զնորատունկս իւր: Զայսոսիկ բացայայտեցի քեզ զի գիտասցես քաջ որչափ նա ինձ և որչափ ես քեզ եղեց ընտրհատարար, եթէ զագարակինն զայն՝ զդրուատեսցն այդպիսեօք առաւելութեամբք, լինի նմա ստանալ այնու յաջողութեամբ՝ զի մի ապա սարջանայց լինի պատճառ:

ՊԼԻՆԻՈՍ ԱՌ ՄԱՐԿԵԼԼԻՈՍ

Տրամաբանեալդ զրեմ քեզ զԹուղթս. Փոնդանի մերոյ դուստր կրասեր վախճանեցաւ: Ոչ տեսի երբէք օրիորդ ղուարթագեմ իբրև զնա, սիրելի իբրև զնա և իբրև զնա արժանաւոր ոչ երկայնակեաց միայն լինելոյ, այլ գոգդես և անմահութեան: Զև ևս չորեքտասանամեայ՝ և զծերուհւոյ խոհականութիւն և զտիկնոջ ղեկծնութիւն բերեր չինքեան՝ մանկականաւ հանդերձ քաղցրութեամբ և կուսականն պարկեշտութեամբ: Զիմրդ զպարանոցաւ հօրն փաթեր. որմէ համեստութեամբ և սիրով ընդ մեզ՝ ընդ հայրենի բարեկամս գրկախառնէր. որպէս զնուագիչս իւր, զդասախարակս և զվարժապետս ըստ իւրաքանչիւր պաշտամանցն անկի պատուասիրէր. որմէ փութով և մտադիւրութեամբ ուսանէր. որչափ ճշդելով և զգուշութեամբ զբօսնոյր. զիարդ համբերատար ժուժկալութեամբ և որով պնդութեամբ հոգւոյ յետնումն ևս տոկաց ախտակրութեան: Հլու էր բժշկաց, քաջալերէր զբոյրն, քաջալերէր և զհայր. և զանձն իսկ, զԹողացեալն յամենայն զօրութենէ մարմնոյ՝ արտասնդեր հոգւոյն զօրութեամբ, որ ոչ եթող զնա մինչև՝ ի սպառ, ոչ երկարաւոր հիւանդութեամբն և ոչ երկիւղիւ մահուն նուաղեալ. որով բազմադէմ, ծանր և անձկայրեաց ցաւոց եթող մեզ պատճառս: Ո՛վ մահ, արդարև դառն և եղերական. ո՛վ, և քան զմահն իսկ՝ մահուն տարադէպ օրհաս: Ա՛յն ինչ պատրաստեալ էր՝ ի հարսնութեան ազնիւ պատանւոյ, այն ինչ հարսանեացն օր սահմանեալ, այն ինչ և մեք կոչեցեալք՝ ի նոյն՝ և ահա ղուրախութիւն այնպիսի՝ որպիսի՛ սուգ փոխանակեաց: Զկարեմ բացայայտել բանիւ զմի ազդոյ վերս ընկալայ՝ ի հոգի՝ ի լսել իմում թէ Փոնդանոս ինքնին (քանզի բազմահնար են ցաւք՝ ի ցոյց ապիտից) հրամայեաց՝ զի որ ինչ՝ ի հանդերձանս ղեսատուց, ականց և մարդարտաց սահմանեալ էին ծախք, ՝ի խունկս, յօծանելիս և ՝ի բուրմունս անուշից

Ծախեսցին բովանդակ։ Ընդ որում արդարև հանճարեղ և՛ի սկզբնաբոյս հասակէ հեռատեսութ բարձրագոյն գիտութեանց և արուեստից. այլ զոր ինչ լուաւն և զոր ինչն իսկ ասաց յաշակերտս՝ մերժէ արդ համայն. և յայլոց ամենայն առաքինութեանց՝ ի բաց կացեալ՝ և՛ ի գութ և՛ ի գորով համակի։ Ներբեսցես նմա զայն, նա և գովեսցես իսկ զնա՝ եթէ զոր կորոյսն ածցես զմտաւ։ Զի կորոյս զդուսաւ՝ որ ոչ զբարան միայն, այլ և զդէմս, և զկերպարանս նորա բերէր, այնչափ ձշգրտասիրութ զՀօրն պատկերէ կենդանագրեալ յինքեան։ Վասն որոյ՝ ի գրելդ առնս վասն այնքանոյ արգար ցաւոյն, յուշ լինի քեզ մի խրատականաւ լինի ուժգնութեամբ զնա մխիթարել, այլ կարեկցաբար և ամոք բանիւք։ Ժամանակ՝ ի վերայ անցեալ՝ զօրեսցէ ոչ սակաւ հեշտընկալ առնել նմա զայն։ Նորանոյ վերք՝ ի գարմանող ձեռաց զարհուրեալ նախ՝ և ապա ժուժկալեն, և տակաւ՝ ի խնդիր իսկ լինին այնմ։ Նոյնպէս և նորահաս ցաւք հոգւոյ՝ զառաջինն անընդունակ մխիթարութեան՝ մերժեն զայն. այլ տակաւիկ մի յետոյ կարեկցաբար մատուցելոցն՝ լսել ախորժեն. Ողջ լեր։

Տ. ԿԻԿԵՐՈՆ ԱՌ ՏԻՐՈՆ

Որպէս յառաջագոյն գրեցի քեզ Ավիլիոյ՝ զօր մի յամեցաք անդ. զի Կուինտոս չէ էր հասեալ առ մեզ։ Անտի նախ քան զլուսանալ առաւօտուն չուեալ՝ յառաջ քան զվեցերորդ օր նոյեմբերի գրեցաք քեզ զայս Թուղթ։ Դու եթէ սիրես զմեզ զամենեսին՝ մանաւանդ զնա զվարժապետ քո, կազդուրեաց և զօրացիր։ Ի բազմահոգ վարանս՝ քեզ նախ սպասեալ ճնամ արդարև, ապա Մարկոնի քոյովդ Թղթով։ Անձկամբ ամենեքեան, մանաւանդ ես, տեսանել զքեզ վազագոյն, այլ քաջառողջ, ով իմն Տիրոն. վասն որոյ մի կարի չտապեսցես. քաջ իսկ տեսից զքեզ զօր ամենայն, եթէ առողջասցես։ Մարթ է ինձ կալ զուրկ՝ ի քոյոց սպասաւարկութեանց. ցանկամ առողջութեանդ նախ վասն քո, և ապա վասն իմ, ով իմն Տիրոն. Ողջ լեր։

Տ. ԿԻԿԵՐՈՆ ԱՌ Ս. ՄԱՐԻՈՍ

Ի քաաներորդի չորրորդի ամսոյս եկի՝ ի Կումա ընդ քոյուդ՝ մանաւանդ թէ ընդ մերսում Լեբոնի. ընդ հուսկ խորհիմ երթալ՝ի Պոմպէա. այլ կանխեցից գրել առ քեզ։

Ապաքէն միշտ իսկ ցանկալի է ինձ լինել ընդ քեզ, այլ առաւել ևս յորժամ ասա կայցեմք. և ահա հուսկ ընդ հուսկ լիցուք՝ի միասին. վասն որոյ եթէ իցէ քո դաչն ինչ ընդ ոտնառութեան՝ չայլ օր թողցես զայն։ Ինամ կալ քոյ առողջութեան անձինդ, և ինա ինձ լիցէ յետ երկուց կամ երից աւուրց. Ողջ լեր։

Տ. ԿԻԿԵՐՈՆ ԱՌ ՍԻԼԻՈՍ

Ընդէր իցէ ինձ չանձն առնել քեզ զնա ինքն՝ զոր և դու ինքնին սիրես։ Այլ զի գիտասցես թէ ոչ միայն սիրեմ ես զնա, այլ և խանդաղատիմ զնովաւ, վասն այնորիկ պրեմ զայս։ Քան զամենայն ընտրհս քո, որք բազումք են և մեծամեծք, հաճոյական ինձ իցէ՝ եթէ ինամեսցես զնա ինոս այնպէս, զի ծանիցէ թէ ես զնքն և դու զնս սիրեցես։ Զայս ես խնդրելով խնդրեմ առ ի քէն։

Անցին գնացին մերքն համայն. մխիթարեսցուք ապա և մեք հասարակաց բանիւն թէ՝ Զինչ այլ, երբ լաւագոյնն այս է։ Բայց զայսցանէ բերան՝ ի բերան։ Արա դու զոր առնեսդ, սիրեա զնս և գիտասջիր զի և ես սիրեմ զքեզ. Ողջ լեր։

Տ. ԿԻԿԵՐՈՆ ԱՌ ՊԼԱՆԿԻՈՍ

Ընկալայ զհամառօտագիծդ՝ յորմէ չէղէ գիտակ որում ցանկայի, և գիտացի զայն ինչ՝ որ քաջածանօթին էր ինձ: Քանզի որով արիւրեթամբ սրտի հասարակաց ազնիւցն տո-կայցես՝ ծանեայ ոչ. իսկ Թէ ոչքափ սիրիցես զնա՝ քաջ իսկ գիտէի: Բայց Թէ և զմիւսն զայն գիտէի, ըստ այնմ զԹուղթն իմ յերիւրեալ չարմարէի: Եւ Թէպէտ գրեալ էր իմ յառաջագոյն զոր ինչ պարտ վարկայ գրել, սակայն յայսպիսւոյ ժամանակի հարկ համարիմ աղդ առնել քեզ համառօտիւ՝ զի մի զքեզ միայն համարեսցիս լինել՝ի վտանդի. մեք ամենեքեան՝ի մեծի կամք և՝ի հասարակաց վտանդի: Նմին իրի՝ չէ քեզ արժան զանձինն և ևԹ ինդրել և ընդ քոյդ միայն հոգալ ընդ բախտ՝ խոյս տալով՝ի հասարակաց աղետից: Վասն որոյ նովին հոգւով որով միչտ՝ ամրապինդ կացցուք ընդ միմեանս: Զայս ես կարեմ յուսալ առ՝ի քէն և յինէն կոդմանէ խոստանալ. Ողջ լեր:

Տ. ԿԻԿԵՐՈՆ ԱՌ ՏԻՐՈՆ

Անդրիկոս աւուրբ միով քան զոր ինայի՝ անագանեաց հասանել, վասն որոյ զդիշերն՝ի գլուխ հանի յերկիւղի և՝ի վարանս: Ի գրելոյդ չէղև ինձ յայտ ևԹէ զնարդ կայցես, բայց զիւր եղև սրտի խոյ: Ես արդ հեռի յամենայն զուարճութենէ և՝ի բնութից գպրութեանց՝ մինչչև զքեզ տեսեալ, չկարեմ դառնալ՝ի նոսին: Զվարձս բժշկին որչափ ինչ և խնդրեսցէ՝ հրաման տուր խոստանալ. զայս և առ Սուսմիոս գրեցի: Լսեմ զի անձկակարօտ նեղիցիս, և բժըշկին զայդ տուեալ պատճառս վտանգելոյ առողջութեանդ: Վասն այսորիկ եԹէ սիրես զնս, զարԹո՝ի Թմրութենէ զգպրութիւնս քո և զվարժս գիտութեանց, որոյ վասն սիրելի ես ինձ յոյժ: Պարտ է քեզ զօրանալ նախ հոգւով, զի և մարմնով զօրասցիս: Զայս ինդրեմ ես՝ի քէն վասն քո և վասն իմ: Զանկատաս առ քեզ կաչքիր, զի լաւագոյն սպաս հարցէ քեզ: Պահեսջիր ինձ զանձն քո. օրն խոստացեալ մերձ հասեալ կայ. կանխեցից խակ քան զայն, եԹէ ևկեացես. Ողջ լեր և գարձեալ ողջ լեր:

Տ. ԿԻԿԵՐՈՆ ԱՌ ՏԻՐՈՆ

Եգիպտաց եկին եհաս առ իս յերկոտասան Ապրիլի. և Թէպէտ ծանոյց ինձ զի զերծ՝ի սպառ՝ի չերմանէ և բարւոք կայցես, սակայն զի ասաց ԹԷ ոչ կարացեր գրել առ իս, անկայ՝ի հոգս. և վասն այն մանաւանդ՝ զի Հերմիա, որ գալոցն էր յայնմ աւուր, ոչ եհաս: Յանհնարին վարանս կամ վասն խօԹուԹեանդ քո, յորմէ Թէ զերծուսցես զնս, զերծուցից և ես զքեզ յամենայն հոգոցդ քոց: Եթէ գիտէի Թէ համարձակ կարես ընԹեռնուլ՝ բաղում ինչ գրէի արդեօք: Յոյս ինձ զհանճար քո, զոր մեծարեմս յոյժ, ՝ի պահել զքեզ ինձ և քեզ. խնամելով խնամեսջիր զանձն քո ամենայն զգուշուԹեամբ և Ողջ լեր:

Ահն ինչ աւարտեալ զԹուղԹս՝ եհաս Հերմիա. ընկալայ ՝ի նմանէ զդողդոջուն գրուԹիւնդ. և չէն ինչ զարմանք՝ յետ այնքանոյ ծանր ախտակրուԹեանդ: Զեգիպտաս առ քեզ դարձուցի. զի չէ անհամբոյր բարուք, և որպէս ինձ ԹուեցաւԼ, սիրէ զքեզ. ընդ նմա և զնոհակերն՝ զի սպաս հարցէ քեզ. Ողջ լեր:

Կ. ՊԼԻՆԻՈՍ ԱՒՐ ՓԱՌԻՈՍ ՑՈՒՏՈՍ

Բազում ժամանակք են զի ոչ գրես Թուղթ առ իմ. ասես ջունել ինչ՝ ի գրել: Գրեսջիր գէթ զայդ զի գրելոյ ինչ ոչ ունիս. և կամ զայն՝ որով սկիզբն առնիին ծե. ծուխքը մեր, եթէ «Խնդամ ընդ քաջողջութիւնդ, և ես ինքնին ողջ եմ:» Շատ է ինձ այս, զի և չիք ինչ կարևոր իբրև զդա: Կարծիցես թէ առ ծաղը ինչ ասիցեմ զայս. ոչ այդպէս, այլ հաւատա ստուգապէս: Քանո ինձ զի գործես. զի վիշտ մեծ է ինձ չգիտել զայդ. Ողջ լեր:

ՅԱՌԱՋԱԲԱՆՔ

ՊԱՏՈՒԻՐՔ ՅՈՂՈՒԴՍ ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Հանճարաբանութիւն՝ ախորժելի է՝ ի վերատեսութեան և՝ ի տալն. այլ՝ ի գահ վարդապետութեան, յատենի կամ՝ ի բեմի, է մանրանկար ինն՝ ի բարձու յոյժ զետեղեալ առ՝ ի տեսիլ. և ոչ յառաջ բերէ արդասիս մեծամեծս՝ ի բազմահոյլ հրապարակի: Իսկապէսն Ճարտասանութիւն տա. րագրէ զամենայն նուրբ և հետաղօտեալ խմաստս, գժուարիմացս ժողովրդեան: Ո՛ն անդր, և զինչ իսկ օգնէ զրոյց ինն փայլուն՝ ի շարժել կամ՝ ի վառել զոգի ամբոխի՝ որ՝ ի սկզբան անդ յանդիման լինին Ճարտարախօսին որպէս Թումբ անշարժ, քաջ՝ ի բաց՝ ի ղգայմանց նորին և՝ ի պատրաստ յօժարութենէ, և որ հաղիւ ընծայէ նմա ցուրտ ինն և տարտամ ունկնդրութիւն:

Նախերգանաց պարտ է գոլ պարզ և համառօտ առ՝ ի ձգել լինքն զսիրտ ունկնդրաց. այլ արժան է բազում խնամով յօրինել զայն: Վարդապետութիւն և օրինակ վարժապետաց արուեստին խրատեն ամփոփել զայն՝ ի բացատրութեան միոյ ևեթ գլխաւոր դիտաւորութեան, յայտ առնելոյ և որոշելոյ զամենայն ընդարձակութիւն ա. ռաջարկութեան Ճառին, կամ զիրաց զորմէ կամք իցեն Ճառել: Անդէն՝ ի յայտ առնել զայն Ճարտասանին՝ նովին իսկ յուցցէ առանց բազմաբանելոյ զուշ նպատակին, և տարեալք

յօրինուածոյն անդէն 'ի յայտ գայցէն՝ որպէս բնական և կարեւոր բացատրութիւն առաջարկութեանն, և տրամաբանութիւն իմն խնդրականին՝ քան կշռադատութիւն տնօրինեսցէ զընտրութիւն յարակից երից՝ յորս պարտ իցէ ամփոփել, 'ի բաց եդեալ որ ինչ հատարակացն է և տարատամ, խմնալի և սահելի, և սահմանել զՃառն ընտրողութեամբ Ճշդելով բացայայտութեամբ և Ճշգրտիւ. և համային ասացեալ՝ տարերք պայծառք կարեւոր արդասեօքն ցուցցին զնմատաս խորինս Ճարտարախօսին խելամտութեան, որ յաւելցէ զվերուծութիւն հանճարոյ 'ի զօրութիւն պաշտաման իւրոյ, առ 'ի գերել զմտադրութիւն ակնթարթոյլ ժողովոյ, յանկուցանելով զնա յամենայն խորհուրդս իւր՝ կարեւորս զայնոսիկ ընծայելով և ցանկալիս:

Այսպիսի է Պօսիւէի Ճարտարութիւն, ուր առ 'ի զարթուցանել աղդողաբար զոգիս՝ ասէ 'ի յառաջաբանի դամբանականին 'ի Հանրիեթ անգղուհւոյն, կամել 'ի մի աղէտս ողբալ զամենայն վիշտս մարդկան աղգի, և 'ի միում մահուցս անել զմահ և զոչնչութիւն զամենայն մարդկային մեծութեանց: Որ ինչ ոչն պատրաստէ առ զվեստս դիտաւորութիւնս Ճառին, ուստիպետ է 'ի յառաջաբանութեան. ապա 'ի բաց կացցէն 'ի մասնէ ասել Ճարտասանութեան ամենայն նուրբ խելամտութիւնք, Ճոխաբանութիւնք, հատարակ աեղիք, և նկարագրութիւնք իսկ և այլաբանութիւնք փառասիրականք. զի Ոչ է պարտ, ասէ Ճարտարապետն հռովմայեցի, և ոչ 'ի կիր առնուլ անդ զբառս արտաքոյ սովորական իւրեանցն խմացուածոյ, զի մի Թուխսի Ճառն բազում հանդերձանօք յօրինեալ: Ընդ կարձագոյն Ճառապարհ 'ինպատակ անդր դիմեսցուք. ամենայնի պարտ է դոլ առաջարկութեան սեփական. ըստ բացատրութեանն Կիկերոնի, յառաջաբանութիւն ոչ այլ ինչ է, բայց դուռն Ճառին: Մի նմանեսցուք Ճարտասանացն Ճոխաբանից, որք փոխանակ մտանելոյ իսկոյն յառաջարկութիւն անդր՝ յաջ և յահեակ դարձադարձ առնեն որպէս ուղևոր անդէտ ուղւոյն, և Թողուն զունկնդիրն տարատամ վիրաց՝ զոլոց

հանդերձեալ են Ճառել: Յառաջաբանին սկիզբն իսկապէս անդ է, ուր 'ի յայտ գան պատճառք և դիտաւորութիւն Ճառին:

Ընդ ածել 'ի յայտ առաջարկութեանն՝ պարտ է փութալ քաջ տահմանել զայն: Կարեւոր է զգուշութիւնս այս մանաւանդ յիմանալի խնդիրս, զի անվրէպ զհետ գայ թափառել 'ի տարտամ տեսութիւնս, եթէ ոչ կանխեսցէ զգուշութիւնս այս տահմանելոյ զայն 'ի սկզբան Ճշգրիտ յայտարարութեամբ: Ապաքէն վտանգաւոր է բարձրաբանել 'ի յառաջաբանի. և 'ի հանապազորդ փորձոյ խրատիմք չլսատահել յիշձս սերձ նախերգանաց. սակայն և կարեւոր է, որպէս յառաջ ասացաք, ցանկալի առնել զՃառն մտադրութեան զբաղելոյ ունկնդրաց. և չհամարիմ հակառակ կանոնաց արուեստին՝ ընդոստուցանել անակնկալ խնամութիւք զմիտս նոցա յիւրեանցն խորհրդոց, և ձգել զհետ կամաց Ճարտասանին՝ որ գիտիցէ գերել զնոսա և տիրել նոցա. բայց միայն զի ուժգնին այն շարժուձն մի պատրեսցէ զակնկալութիւն նոցա, և յաղթանակ Ճարտարախօսին տակաւ յառաջ խաղայցէ:

Կամիմ, ասէ Մոնթէյն, Ճառս՝ որ զնախկին յարձակումն 'ի հզօրագոյն մաս խնդրոյն տայցեն. խնդրեմ փառաս հզօրս և հատատուն անդէն 'ի սկզբան: Եւ յիրաւի. զի չիք ինչ կարեւորագոյն և գժուարագոյն քան տիրել ունկնդրոյց, յանկուցանել զնոսա յինքն իսկոյն, և 'ի մուտս անգ առաջարկութեանն չարժելել զնոսա, քան Թողուլ յերկրի զնդրեւնն նոցա, և տարտամ զերևակայութիւն: Սենեկայի Տրովադայն իւր ողբերգութիւն բանայ զնախկինն տեսարան վտեմական իմն մնախօսութեամբ, երբեակ ևեթ տողիւք չարժելով զսիրտս ամենեցուն. երևի 'ի բացել քաղաքն Տրովադայ հրդեհեալ. Եկաբէ չղթայակապ մնաւոր 'ի Թատեր, 'ի տեսանել զտեսիլն զայն ոչ ինչ ընդհատ յաղիողորմ բախտէն իւրմէ՝ հառաչէլով բացագանչէ զսերձախօս զայս բան. Բառունք, որ 'ի զօրութիւն ձեր վստահիք, որ տիրէք բազմահոյլ աշբունեաց,

որ ոչգ խիթայք ՚ի յողդողդ նպաստից դիցն, որ քաղցը ՚ի քուն զարաւանուն վախէք ՚ի յաջողութեան, հայեցուք յԵկաբէ, տեսէք զՏրովադա: Ո՞վ ոք ՚ի լուր բանիցս ոչ յինքն մտանէ. ո՞վ կարէ խոսել յարհաւրաց այսպիսւոյ հակադրութեան, և ոչ ամբարձել զաչս ՚ի յերկինս խորհի, եթէ ոչ յայլ ինչ՝ այլ յանհասատութենէն և ՚ի վանգս իւրոյ բախտին: Ա՛յսպէս քաջի Ճարտասանի պարտէ յօգուտ ՚ի կիր արկանել զամենայն որ ինչ շուրջ զնովքն է, առ ՚ի շարժել զսիրտս մարդկան և յինքն յանկուցանել: Գիտելիցիկ է ըստ այմ օրինակի յօրինել պերճ զկիզբն Ճառի. այլ չկարեմ ըստ բաւականին կրկնել, զի պարտ է հետևորդացն արժանալոցս գոլ՝ ՚ի վերամբառնալն զուխկընդիս յայս բարձրութիւն:

ՅԱՌԱՋԱԲԱՆ ՁԱՌԻՆ ՈՐ ԸՆԴՊԵՄ ԿՏԵՍԻՓՈՆԻ

Տեսանէք, ով արք աթենացիք, քանիցն պատրաստութիւնք և Ճակատք յօրինեալ կայցեն, և պաղատանիք ընդ հրապարակս ՚ի գործ առեալք յոմանց՝ զի ջափոյքն և օրինաւորքն մի յարդիւնս եկեսցեն ՚ի քաղաքիս: Ա՛յլ ես՝ նախ ՚ի դիմս, երկրորդ անգամ յօրինեմն և ՚ի ձեզ մեծահաւասար հասանել կամ այսր, և ոչ մի ինչ կազմութիւն մեծագործ քան զօրինեմն և զիրաւունս առ ձեզ համարեալ:

Յանկալի էր արդ, ո՛ արք աթենացիք, թէ համօրէն ժողովուրդ խորհրդեան Հինգհարիւրոցն և ժողովք ժողովրդականն ուղիղ վարեին ՚ի վերահսկուացն, և օրինադրեալքն ՚ի Սոլոնէ ՚ի հասաւոյ լինէին օրէնք ՚ի բարեկարգութիւն Ճարտարախօսաց: Զի մարթիցի նախ երիցագունին ՚ի քաղաքացիս ըստ օրինացն հրամանի ցածութեամբ մատչել յառեան, առանց ամբոխի և խռովութեան, տալ խորհուրդ բարեաց քաղաքիս ՚ի հմտութենէ փորձոյ. և ապա՝ ուժ ուժիւք և յայլոց քաղաքացւոց կամ իցէ՝ կարգաւ ըստ հասակին ի ըստ միոյնի

Յայտնի առնել զամենայնէ վիճաս իւր: Զի թուի ինձ, թէ այսու օրինակաւ քաղաքս բարւոք անօրինեսցի, և նուազ վնասիցեն փուբսիչք գատաստանաց: Բայց քանզի որ ինչ գամ ի յառաջագոյն բարւոքն էին վկայեալ՝ եղծաւ բարձաւ այժմ ամենայն, և համարձակ գրեն ոմանք արտաքոյ օրինացն հրամանս, և զդիրսն զայն այլք ոմանք ՚ի վճիռ հանեն, ոչ արդարապէս վկայակալք գահերիցութեան, այլ հայթայթանօք առեալք զաճառն. և եթէ յայլոց խորհրդակացս ոք՝ իրաւամբք վճռակեալ ՚ի գահերիցութիւն հաւաքալ գտանիցի, և զձեր ընտրութիւնդ ուղղութեամբ հրատարակիցէ, որք զքաղաքավարութիւնն ոչ հատարակաց լինէ՝ այլ սեփական իւրեանց ձեռնհասն վարկանին, սատանեն՝ մի՛ իշխել պատմել: Եւ զամին ՚ի հարկի ծառայութեան կացուցեալ, և անձամբք անձանց առեալ իշխանութիւնս, և զօրինեալ գատաստանսն ջրեալ, որ ինչ ըստ իւրեանց անձնական կամակ հաճութեանն իցեն՝ զայնս ընտրեն խրտխռով լռեալ կայ գեղեցկագոյնն և խնամանագոյն ՚ի քարտոց քաղաքիս, թէ որոց ըստ յիմնեմնականն եղեալ իցեն՝ ո՛ ՚ի նոցանէն կամ միջի հրապարակիսս լինել, և դարձեալ յայլոց աթենացւոց մի ըստ միոյէ: Եւ Ճարտասանին սատակութեան ոչ զօրեն ունել զդեմ, ոչ օրէնք, ոչ նահապետք, ոչ տումն գահերից, տասնեւորդ մասն քաղաքիս:

Եւ զի այս այսպէս, և ժամանակք քաղաքիս այսպիսի՝ որպիսի դուք իսկ տեսանէք, մի՛ ևեթ մասն տեսչութեան կայ մնայ ՚ի ձեռս, եթէ և ևս նշմարեմ ինչ, զանիրաւացս փուբսիչք ամբաստանութեան: Իսկ եթէ և զայս քակտիցէք, կամ քակտեցան տալիք թոյլ, ահա կանխեմ ասեմ ձեզ՝ զի առ փոքր փոքր զվարչութիւնն բռնադեալ ՚ի ձեռս ոմանց լքանիցէք յանդգնս: Քանզի քաջ գիտէք, արք աթենացիք, զի առ մարդիկ համօրէն՝ երբեմն քաղաքավարութիւնք են. ինքնակալութիւն, տակաւատպետութիւն և ընկերավաշտութիւն. ինքնակալութիւնք և տակաւատպետութիւնք վարին ըստ կամս իշխեցողացն, իսկ քաղաքք ընկերավաշտք՝ հաստատուն օրինօք: Մի ոք ասա՛ ՚ի ձենջ անպիտացի զայս,

այլ հաւատաքի ամենայն ոք, զի յորժամ եկեալ յառեան մանկիցէ դասել զամբաստանութիւն անիրաւութեան, յաւուրն յայնմիկ առաջի կայ նմա զղջառութենէ իւրմէ հատանել վճիռ։ Վասն որոյ և օրէնսդիրն զայս նախ կարգեաց յերդման անդ դատաւորացն. Վճիռ ըստ օրինացն տացէ. զի Ճարտար գիտէր թէ յորժամ պահեսցին քաղաքին օրէնք, և ընկերհաշտութիւն կացցէ յանասանին։

Զայս ընդ ուշի կալեալ ձեր՝ առեալ պարտիք զերս հակառակ ինչ օրինաց այցելն հրաման, և մի ինչ յանիրաւութեանց անտի փոքր համարել, այլ մեծագոչն զամենայն։ Եւ զայս իրաւունս ձեր՝ մի ուժիք ի մարգկանէ տալ թոյլ յափշտակել. ոչ զօրավարացն բարեխօսութեանց, որ ի բազում ժամանակաց հետէ գործակից ոմանց եղեալ Ճարտարախօսաց՝ ապականեն զքաղաքավարութիւնն, և ոչ աղաչանացն հիւրոց, զորս ի մէջ ածեալ ոմանց՝ զերծանին ի ձեռաց առնոյ անօրէն քաղաքավարութեամբ իւրեանց։ Ամենայն զօրինակ ամենայն ոք ի ձէնջ յամենի մանուկ՝ դասալիք լինել յոր կարգեցաւն ի մարտի, նոյնպէս և այժմ ամաչեսջիք Թողուլ զտեղին՝ յոր յօրինացն դասեցայք պահապանք ընկերհաշտութեան յաւուր յայնմիկ։

Եւ զայն ևս պարտ է յուշ ածել, զի զարդիս քաղաքացիք ամենայն՝ որոց զքաղաքս ձեզ յանձն արարեալ է, և զվարչութիւնն ի ձեզ հաւատացեալ, կէաք սատ են և ունկն դնեն դատաստանիս, և այլք հեռի՝ իւրաքանչիւր ի գործ իւր. յորոց պատկառեալ, և երդմանցն զորս երդուալք յիշօղ եղեալ և օրինացն, եթէ յանգիմանեսցուք զկատեսիւն՝ արտաքոյ օրինացն գիր հանեալ, և սուտս գրեալ և ընտասակաս քաղաքիս, լուծէք, արք աթենացիք, զանօրէնս հրամանսն, պինդ կալջիք քաղաքիս զընկերհաշտութիւն, զքնշամիս օրինացն և քաղաքիս պատուհասեսջիք, և որ հակառակ օգտի ձերում գնացեալքն իցեն։ Եթէ սովին մոգք ունկն մատուսջիք առաջնիկայ խօսից, քաջ գիտեմ զի արդար և ուղիղ ըստ երդմանդ՝ և ի շահ օգտի ձերոյ և ամենայն քաղաքիս առնիցէք գատ։

ԵՍՓԻՆԷՍ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ՁԱՌԻՆ ՈՐ ՅԱՂԱԳՍ ՊՍԱԿԻՆ

Նախ քան զամենայն, ով արք աթենացիք, ուխտիւք խնդրեմ յաստուածոց և յաստուածուհեաց բոլորեցունց, զի զնաման զոր ընդ քաղաքիս և ընդ ձեզ ամենեսին ունիմ ես հանապազ, նոյն և ի ձէնջ առ իս գտանիցի ի հանդիսի սատ յայսմիկ. և ապա, որ վասն ձեր է մանաւանդ և ի ձեր բարեպաշտութիւն և ի փառս, զի սացին ձեզ դիք՝ մի խորհրդակից առնուլ զգատաւոսին, եթէ զնաւրդ պարտ իցէ ձեզ լսել ինձ. զի անագորոյն իմն այդ լինիցի. այլ զօրէնսն և զերդումնդ, յորում առ այլովք ամենեքուքիք իրաւամբք՝ գրեալ կայ և այս. Երկոցունն կողմանցն միատեղ գնել ունկն։ Որ այն ինչն է, ոչ միայն մի ինչ կանխել առնել գատաստարտ, և զնոյն միամտութիւն երկոցունցն ընդոհել, այլ և որով չարգաւ և որով ոճով և կամիցի և ընտրիցէ իւրաքանչիւր ոք յոսոխացն, Թոյլ տալ նովին և վարել։

Արդ ես յոյժ նեղ գտանիմ՝ ի մարտի տատ քան զԵսքինէս, մանաւանդ երկուք այսոքիւք մեծ ամեծօք, ով արք աթենացիք։ Մի, զի ոչ զնացին իրաց գուսպարիմք. քանզի ոչ նոյն է ինձ այժմ՝ ի ձերմէ մտերմութենէդ վրիպել, և նմա չյաջողել՝ ի գատախաղութիւնն. այլ ինձ... բայց չկամիմ տալ ինչ գԺպատեհ՝ ի մուտս տատ Ճառիս. իսկ գա՝ վարկպարտղն անհնէթ յիմքէ չարախօսք զինեն։ Եւ միւս ևս, որ յամենայն մարդկէ՝ ի բնէ հատատութիւն է, բամբասանաց և ամբաստանութեանց մտագիւր մատուցանել ունկն, իսկ ընդ անճնագոյն խոժոռել։ Արդ՝ որ հեշտալին է յայսոսիկ, այն գմա տուեալ է. իսկ որ, որպէս բանիս կարգ է ասել, զամենեսեան խեղդէ և մղձկէ, այն ինձ մնայ։ Եւ եթէ սովին երկիւղած մոգք չարկից՝ ի Ճառ զատ՝ ի յինէն գործեցեալսն, Թուեցայց չունել ինչ՝ ի հերքումն չարախօսութեանցն, և ոչ՝ որով ինդրեմն պատկիր յայտ առնել։ Իսկ եթէ՝ ի գործս իմ և՝ ի անտեսութիւնս անցա-

նիցեմ, բաղում անգամ հարկ լինի ինձ խօսել զանձինէ: Այսուհետև զոն զոյծեցից կարի ինն չափով զայն առնել. իսկ զոր իրքն ինքնին սահիցին, այն ինչպս ի նա յիրաւի երթեալ կրնեսցի՝ որ յարոյցն զայսպիսի պայքար:

Թուի ինձ, ոմն արք զատաւորք, թէ խոստովան լինիցիք զոչ ամենեքեան, զի այս հասարակ ընդ իս և ընդ Կաեսիփոն է զոչպարած, և ինձ ոչ նուազ ինչ վուերոյ արժանի: Զի յամենայնէն անկանել զատն է և գժնդակ, մանաւանդ եթէ յառնէ Թշնամւոյ հասանիցէ այդ ի վերայ, և ևս առաւել ի ձերմէ խնամոտ և մարդասէր կամացն վրնպել, որչափ և մեծ իսկ է այդմ լինել արժանի: Եւ քանզի այսպիսի ինչ է պատերազմս այս, աղաչեմ և խնդրեմ յամենեցունց ի ձէնջ առ հասարակ՝ ունկն մատուցանել պատասխանատուեցեանս խնամ առ բողոքն՝ ըստ ամենայն իրաւանց, որպէս ինչ օրէնքն հրամայեն, զորս օրինադրօղն ի սկզբանէ Սոլոն, իրաւախոհ առ ձեզ և ժողովրդապետաց, ոչ գրով ևեթ հաստատուն լինել պարտ համարեցաւ, այլ և ձերով զատաւորացդ երդմամբ: Ոչ եթէ թերահաւատ ինչ ի ձէնջ լինելով, որպէս ինձ Թուի, այլ տեսեալ՝ զի զբազայն և զբամբասանս՝ որով վասն յառաջագոյն ձառնելոյն զօրաւոր զատին զատախազն, չիք զատապարտելոյն ի բաց անցուցանել, եթէ իւրաքանչիւր զոք ի ձէնջ ի զատաւորացդ՝ ոչ երկիւղածութեան առ դիսն պատկառ կացեալ, երկրորդի ևս խօսողին իրաւանցն մեծարանս առնիցէ, և երկայնունցն հարթ և հաւասար յոնդրութիւն մատուցեալ՝ այնպէս ամենայնի տեղեակ և խելամուտ լինիցի:

Աւրդ, քանզի որպէս Թուի՝ զբովանդակ կենաց անձինս առաջի կայ ինձ այսօր ասլ համար և զհամաշխարհի քաղաքավարութիւնս, կամ է ինձ՝ որպէս ի սկզբանն՝ միւսանգամ պատառել առ դիս. և ապաչեմ, ձեզ լու ի լու, նախ՝ զի զոր իմ առ քաղաքս և առ ձեզ ամենեսին կալեալ է միշտ խնամս, նոյն և ի ձէնջ առ իս լինիցի ի մարտի աստ. և գարձեալ, զի որ օգուտ ինչ է ի հասարակաց ամենեցուն փառս և ի բարեպաշտօն իւրաքանչիւր, զնոյն ամենեցուն ձեզ շնորհեացեն զիք խորհել և խմանալ զպատեհս զայսմանէ:

ԴԻՄՈՍԹԵՆԷՍ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ՄԻԼՈՆԻ ՁԱՌԻՆ

Վասն քաջի առնն մատուցեալ ասլ պատասխանի, ո՛ առենակալք, թէպէտ և խիթամ երկիւղ զիս պատեհ, ոչ կարեցով ի զատ Ա. Միլոնի բերել յանձին զարժանին զայն հոգի արիական նորայուն զուգահասասար՝ որ առաւել քան ընդ անձինն, ընդ ընկերհաշտութեանն հոգոյ փրկութիւն, սակայն նորոյ հրապարակիս նորաձև կերպարան ահարկու է աչաց, որք յոր կոյս և հայեսցին՝ զնախնին խնդրեն կարգ առենական, և զչինաւանդ օրէնս զատաստանաց: Զի ոչ որպէս միշտ ակնյահոյ առենակ պարփակեալ է ի շրջակայից, և ոչ, որպէս սովորն էր, ժողովրդ խռնեալ զիւք. և պահապանք, զորս տեսանիք առ ամենայն մեհենիւք՝ Թէպէտ և ընդդէմ բռնութեան կարգեալք, այլ ոչ ազդեն մեզ խրախոյս: Զի Թէպէտ և ամենայն կարևոր և փրկաւէտ պահպանութեամբք իցեմք պատապարեալք յառենի տատ և ի զատատանին, սակայն չկարեմք կալ ամենևին աներկիւղ: Եւ կասկած ինչ Թէ էր ինձ, առենակալք, զի ընդդէմ Միլոնի կարգեալք իցեն զգուշութիւնք, արդ իսկ արգելք տեղի տայն. գիտելով ջան՝ զի ի խռան այնքանեաց զինուց և բռնութեանց չիք տեղի ապենախօսի: Այլ խրախուսեալ սրատանդէ զիս կն. Պոմպէոսի՝ մեծխնատ և արդարակորով առնն խոհականութիւն, որ արդարութեան իւրում ոչ արժան համարի զամբաստանեալն, զոր իբրև մեղապարտ արկ ընդ զատաստանաւ առենակալաց, նեսկց զօրականին տալ նշանակ. և ոչ խնատութեան իւրում ի ձահ՝ զզրգռեցեալ խուժանին

յանդգնութիւն՝ հասարակաց իշխանութեամբ սպառազէնել: Ապա ուրեմն այդ ամենայն հանդերձանք զինուց և հարբիւրապետաց և զօրականին՝ ոչ չարագուշակ ինչ՝ի վտանգ մեր, այլ մանաւանդ՝ի պատուապարանս մեզ պարտաստեալ էին և՝ի յորդոր բերէին յանձին սիրտ ոչ միայն անվըրդով, այլ և արիական. և ոչ միայն օժանդակին ինձ՝ի պատասխանատուութիւն, այլ և խոստանան զլուռութիւն: Իսկ այլն ամենայն ժողով բազմութեան քաղաքացեաց, զորս տեսանէք ակնկառոյս ուսոյ և որչափ ծայր ինչ տաճկիս էին երևելի, և ակնկալուն ելից դաս՝ոս այսորիկ, ամենեքեան՝ի մեր կոյս են, և չիք ոք՝ի նոցանէ, որ՝ի կալ իւր ջատագով ուղղութեանց Միլտնի՝ չհամարիցի իւր զսեռ. կեանս զայս դաս, և վասն որդւոց իւրոց և ընչից և հայրենի աշխարհին: Միայն Թշնամի և հիւսասակար մեզ այնոքիկ են՝ զորս Պ. Կլաւդեայ մոլեգնութիւն յափշտակութեամբք, հրկիզութեամբք և ամենապարիկ սպանիւք հասարակաց պատրաստեաց. որք և յերկիւղն համախմբութեան խրատեալ գրգռեցան կանխել քան զձեզ և տալ գոյմամբ զգաստութիւն՝ զոր ձեզ պարտ է սահմանել: Որոց աղաղակ եթէ երբէք լսցի լսելի, զայս ձեզ յուշ արասցէ՝ զնա ևեթ ունել առ քաղաքացիս, որ վասն փրկութեան ձերոյ անդադրութեամբ արհամարհեաց միշտ զայդ աղտ մարդկան, և զմեծագոչ աղաղակ նոցա:

Հապա զօրացարուք, իրաւարարքդ, ՚ի բաց դիք զամենայն երկիւղ՝ եթէ լսցէ ՚ի ձեզ: Եւ եթէ երբէք զլուս և զքաջօրեայն, եթէ երբէք զվաստակաւորս ՚ի քաղաքացեաց լսցէ ձեզ իշխանութիւն դատելոյ, և բռնադակ ասել՝ եթէ ուրեք երբէք տուեալ լսցեն դէպք արանց ընտրեալ նոց ՚ի վերհագուելոցն գասէ՝ հաստատել արդեամբք և վըճռով զիւրեն խնամոցն զոր ՚ի դէմս իւրեանց և ՚ի խոտս ցուցանեն յաշխարհ առաքելելոցն, այս է ահա ժամ և ժամանակ՝ յորում ամենայն իշխանութիւն տուեալ է ձեզ սահմանելոց, եթէ պարտ լսցէ նուէրելոցս ՚ի վերայ իշխանութեան ձերոյ՝ հեծել միշտ հիքաբար, թէ նեղելոցս ընդեր-

կար ՚ի չարախտավատ քաղաքացեաց՝ ձեօք և ձերով զօրութեամբ, ուխտապահութեամբ և խնամատութեամբ խուն ինչ յանդորը ելանել: Քանզի զի՞նչ այլ գժախըմբեր և առաւել վչտալի և տապնապեցուցիչ, առնակալք, քան զկիրս երկաքանչիւրոցս, որք մեծաշուք վարձուց ակնկալութեամբ տուեալ զանձինս մեր՝ի սպառս հասարակաց պետութեան, և յերկիւղէ խժգժագոյն պատուհասից չեմք ինչ զերծ: Ապաքէն գիտեմ զի յայլ ամենայն մըրկայողղ ժողովս՝ ամպրոպք և մրրիկք ձայնելոց էին՝ի գլուխս Միլտնի, զի պաշտպան և ջատագով եկաց միշտ լաւաց՝ ընդդէմ անօրինաց. այլ սատ յայսմ առնի և՝ի ժողովի՝ ուր որք մեծապայծառք յամենայն կարգաց բազմին դատաւորք, ոչ անկաւ բնաւ՝ի միտս իմ թէ հակառակորդաց Միլտնի լսցի երբէք ակն ունել ոչ միայն շնորհանելոյ՝ի ձեռն այդքանեացդ արանց զկեանս նորա այլ և փառաց նորա ածել սուտերածս:

Բայց՝ի սերկեանս պատասխանատուութեան վասն առաջիկայ եղեռնաս, ով առնակալք, ոչ առիւծ խօսել զնաև զարապետութենէն Միլտնի և զգործեցելոցն՝ի նմանէ՝ի փրկութիւն հասարակաց պետութեան՝ մինչև ցուցեալ ձեզ ակն յայտնի զառ՝ի Կլաւդիոսէ պատրաստեալ դառնն ընդդէմ նորա: Եւ ոչ արկից ձեզ ազելս ներել մեզ զձերն՝ի շնորհս մեծապայծառ երախտաց նորա առ հասարակապետութիւնն: Եւ ոչ, եթէ Կլաւդեայ մահուամբ եղև ձեզ փրկութիւն, խնդրեցիք՝ զի Միլտնի քաջութեանն պրեպիք զայն, քան թէ բարեբախտութեան հռովէական ժողովրդեան: Ապա եթէ պայծառագոյն քան զլոյս յայտնեցին ձեզ ամենայն գաւաճանութիւնք նորա, ազաչել ազաչեմ և երդմնեցուցանեմ զձեզ, ով դատաւորք, զայս ևեթ չնորհել մեզ յայնժամ, զի՝ի կորուսանել մեր զամենայն՝ տացի մեզ դեթ ազատութիւն պաշտպանելոյ կենաց մերոց՝ի ժպրհութենէ և՝ի զննուց թշնամեաց:

ԿԻՍԵՐՈՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ՁԱՌԻՆ Ա. ԼԻԿԻՆԻՈՍԻ

ԱՐՔԻԱՑ ԳԵՐԹՈՂԻ

Եթէ գուցէ ինչ վիս հանճար, դատաւորք, որոյ իրա-
դէս եմ նիազուԹեանն, կամ Թէ խօսից վարժուԹիւն՝ յո-
րում ոչ ժխտեմ փոքր ’ի շատէ զիս պարապեալ, կամ Թէ
ինչ այսր իրի հմտուԹիւն՝ ’ի կրԹուԹենէ աշխուական
արուեստից և ’ի հրահանգից, յորոց վկայեմ զի ոչ երբեք
սպառուցեալ եմ ’ի կեանս իմ, զայնր ամենայնի նախ
Ա. Լիկինիոս այս իրաւի պահանջեցեալ լինէն զպատուէ՝
դրեԹէ սեփական իմն իրաւամբք: Զի որչափ հեռագոյնս
զօրեն ակնարկել միտք իմ յիւր անցեալ զառանցեալ ժա-
մանակաց՝ և զմանկուԹեանն յուշ ածել խորին յիշատակ,
անդրադառ ’ի վերուստ առեալ արկեալ ’ի միտ՝ զսա տեսա-
նեմ նախ նշանաւորդ ինձ կացեալ ’ի սկսանել և ’ի զարդա-
նալ ’ի կիրԹս ուսմանցս այսոցիկ: Զի եԹէ ձայնս այս բար-
բառոյս, որս խրախուսանաւքն և օրինաւքն յորդորեալ,
եղև երբեմն ոմանց ’ի փրկուԹիւն, ապա յորմէ զոյնս ըն-
կալաք առ ’ի զօրավիգն այլոց լինելոյ և զայլս կեցուցանե-
լոյ, սմին ինչեան ապաքէն, որչափ ’ի կարի մերում է, և
օգնուԹիւն և փրկուԹիւն արժան է մատուցանել: Եւ մի
ոք ընդ այս բանս մեր զարմացի Թերևս, որպէս զի այլ
իմն ’ի տմս իցէ հանճարոյ զօրուԹիւն քան զայս գիտու-
Թիւն և գՀրահանգս խօսից, և ոչ մեք յայս աւեԹ ջանս հա-
մակ նուիրեցաք զանձինս: Զի և ամենայն արուեստք առ
մարդկուԹիւն պատկանաւորք՝ ունին ինչ ընդ միմեանս ա-
ղերս, և իբրև ազգակցուԹեամբ իմն ընդ իրեարս կե-
ռեալ են:

Այլ զի մի ուռեք ’ի ձէնջ զարմանս Թուեսցի, յօրինա-
կան յայս ինդիր և ’ի հրապարակաւ դատաստան, ուր
դատ վարի առ դատաւորի հռովմէական ժողովրդեան,
առ առն ընտրականի, և առաջի անաչառ քննողաց, ’ի
ժողովի և ’ի իւրան այսքան մարդահոյլ բազմուԹեան, այս-

պիսիս արկանել ինձ Ճառս, որ ոչ միայն ’ի սովորուԹենէ
դատաստանաց, այլ և յատենական սձոյ խօսից օտար են,
աղաչեմ զձեզ՝ շնորհել ինձ ’ի գաթի ասա զայս ներբուին
վայելչական դատափեաձելոյս, և ձեզ՝ որպէս ակն ունիմ՝
ոչ ինչ դժպհի. զի ’ի Ճառելս զգերազանց քերԹողէս և
զբանիբուն առնէս՝ ’ի հրապարակի ասա արանց գիտակա-
րաց, և առ բարեխորհուրդեանդ ձերում, և ’ի դատա-
զուԹեան այսր դատաւորի, ԹողուԹիւն առնիցէք ինձ խո-
սել փոքր մի համարձակագոյնս, և վասն առն այսպիսւոյ,
որոյ առ խաղաղական և ուսմնասէր կենացն՝ չէք երբեք ’ի
դատ ինչ և ’ի վտանգ անկեալ, վարել նոր իմն և անսովոր
օրինակ բանից: Զոր եԹէ տեսից շնորհեալ ինձ առ ’ի ձէնջ,
արարից անշուշտ, զի զԼիկինիոսս զայս՝ զմեր քաղաքացի՝
ոչ միայն չդատիցիք արժանի վտարելոյ ’ի համարոյ քաղա-
քացւոցս, այլ մանաւանդ ընդունելոյ, Թէպէտ և չէր իսկ
բնաւ:

ԿԻԿԵՐՈՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ՁԱՌԻՆ ԿԻԿԵՐՈՆԻ ՈՐ ՎԱՄՆ

ԱՐՔԱՅԻՆ ԴԻՈՏԱՐԱՅ

Մինչ իսկ յամենայն առեանս, Կ. Կեսար, ’ի սկզբան
խօսից սովոր եմ խոովել սակաւիկ, առաւել քան զոր ’ի
դեպ Թուիցի վարժուԹեանս և հասակիս. այլ մանաւանդ
այնպէս ամբոխ զիս բազում ինչ յայս գաթ, զի որչափ
վատահուԹիւն իմ բերէ յիս փոյԹ և քան առ ’ի պաշտպան
կալ փրկուԹեան արքային Պիոտարոսի, նոյնչափ խիԹ կաս-
կածի անբաւականուԹեան անձինս ’ի գերև հանէ: Նախ,
պաշտպան լինիմ գլխոյ և բախակ առն Թագաւորի, որ Թէ-
պէտ և ինքնին չէ ինչ անիրաւ ’ի քում աչեթ վտանգին,
բայց այնպէս անսովոր ինչ է առն Թագաւորի գլխապարտ
լինել, զի յառաջ քան զայս անկուբ իմն է: Երկրորդ,

զայն Թագաւորը՝ զոր յառաջն համօրէն աւադանեալ հան-
դերձ սովոր էի գովաբանել վասն անհատ երախտեացն առ
պետութիւնս մեր, այժմ սակաւիկ ջատագով նմին կալ՝ ի
դժնդակ յանցանաց: Ա՛ռ սոքօք, և յանդգնութենէ
միոյն՝ ի դատախազին, և՝ ի քարուկանութենէ միւսոյն
յաւելու յիս ամբոխումն: Անգութ կատաղը, զի մի ասա-
յից ամպարիշտ և անօրէն, որ Թոռն գոլով զՀաւն՝ ի վտանգ
գլխատարութեան ընկէց, և զահաւիկաս երիտասարդու-
թեան իւրոյ արկ զնովաւ՝ զորոյ զալիսն պահել և պահպա-
նել պարան էր, և զպարծանս քաջութեան գեռաժաղկ
հասակին՝ անօրէնութեամբ և եղերամբ հանաւ. զՀաւուն
ծառայ՝ վարձուք կաշառաբեկ արարեալ՝ վարեաց՝ ի չարա-
խօսութիւն զտեառնէն, և՝ ի հրեշտակացն հեռաց ընդ ար-
տաւղի եհան: Իսկ զփախստական ծառային՝ զչարախօսի
տեառն իւրոյ, և տեառն հեռաւորի, և տեառն սերտ մտեր-
մի պետութեանս, յորժամ զերեսան տեսանէի, յորժամ
զբանսն լսէի, ոչ այնչափ ընդ վիշտս արբեալական աշխար-
հին ցաւէր ինձ, որչափ ընդ հասարակաց մեր ամենեցուն
վտանգս երկիւղ յիս ընծայեր: Զի ուր ըստ նախնեացն
կրօնից՝ և ոչ խոշտանգանօք օրէն է պահանջել զծառայ այր
ղեռնէ իւրմէ, յորում տանջանացն ցաւք գիտեն տալ և
յահատոյ կամս զշնչմարիտ ձայնն արձակել, երևեցաւ ծա-
ռայ մի՝ որ զոր յերաշխեպան անդ չմարթէր նմա՝ ի բերան
առնուլ՝ զնա յայտ յանդիման համարձակ չարախօսեաց:

Եւ այն ևս, Կ. Կեսար, խառնվ զնս երբեմն. բայց՝ ի
խոր ծանուցեալ զքեզ՝ դադարեմ յերկիւղէս: Գանգղ ինքն-
նին անօրէն լինի է, բայց քոյով իմաստութեամբդ յոյժ
արդարանայ: Զի պյանցանաց առ նա խօսել, յորոյ՝ ի
կեանն ներգործել յանդիմանի յանցաւածն, եթէ առանձ-
ինն ուշդի ականարկեսցես, ծանր է. զի չիք դրևթէ ոք, որ
իւրում վտանգին դատաւոր նստեալ՝ ոչ առ ինքն մանաւանգ
նախատաւոր լինիցի քան առ առնաքարշն. այլ քո, Կեսար,
վեհագոյն և չնաշխարհիկ բնութիւն ցածուցանէ յիս զայս
տադնապ: Զի ոչ այնչափ խիթամ՝ զինչ դու զարքայէն

Դիոտարայ, որչափ խելամուտս եմ՝ զինչ այլոց զքէն դա-
տաստան առնել կամիցիս: Խռովեալ եմ և տեղւոյս օտա-
րութեամբ. զի զդատ մի մեծ այսպիսի, որ ոչ երբէք՝ ի
պայքար եկեալ է, ընդ յարկաւ տանդ խօսիմ, արտաքոյ
ժողովոյ խօսիմ և ամբոխին, յոր Ճարտարախօսացն յե-
ցեալ ելև ել առնեն մրցութիւնք. յայս քո, ի բերան քո
և յերեսս ակնկառոյց կամ՝ ի քեզ միայն նկատեմ, առ
քեզ միայն հային ամենայն բանքս: Որ ինչ ինձ՝ ի յոյս դա-
մագիս Ճշմարտութեան լինելոյ զօրաւորքն են, առ եռանդն
հոգւոյս և առ ամենայն ուժգնութիւն խօսից և՝ ի մրցու-
թիւն՝ յոյժ թեթևք: Զի եթէ զայս դատ, Կ. Կեսար, ՝ի
հրապարակին խօսէի՝ քեզ խակ լու՝ ի լու և քո գատողու-
թեամբ, որպիսի զուարճութիւն բերեր յիս խուռներնեծայ
խնճոյ հռովմէական ժողովրդեան: Զի ո՞ր այն քաղաքացի՝
որ Թագաւորին այնմիկ չլիներ թիկունք, զորոյ զաւրուն
զամենայն՝ ի միտ ածէր մաշեալ՝ ի պատերազմունս հռով-
մէական ժողովրդեան: Գոյր ինձ գէտն ամբառնալ՝ ի
տաճար անդր խորհրդոյ, հայել՝ ի հրապարակ անդր, և
զինքնին իսկ զերկինս վկայ ունել: Ա՛յսպէս՝ ի յիշատակել
ինձ զաւտուածոցն անմահից և զժողովրդեանն Հռովմայ և
զաւազանութեան բարերարութիւնս առ Դիոտարոս արքայ,
անհնար էր պակասել յինէն բանից: Զորս քանզի՝ ի նեղ
արկեալ յանձկի կացուցանեն որմունքս, Ճնշեալ նուազն
տեղեաւն և գատաստացութիւնս: Գո է, Կեսար, բաղում
անգամ ղբազմոյ աւուն նախօս եղելդ, յանձին քում
նկարել որ ինչ այժմ յիսն կրի. զի դիւրաս քո արդարու-
թիւնդ և ունկնդրութեանդ մտադիւրութիւն՝ զամբոխումն
նըս զայս կարճեսցէ լինելն:

ԿԻՆԵՐՈՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԵՐԿՐՈՐԴԻ ՓԻԼԻՊԵԱՆ ՁԱՌԻՆ

Որով բախտիւս լինել ասացից, Հարք առեղծակալք, զի՛ ի քահանէսին ամս յայսոսիկ չեկաց զբ ընկերհաշտութեանս Թէսմոն Թշնամի, որոյ չկայէ՛ ի նմին ժամանակի և ընդ իս՛ ի մարթ գոռացեալ: Զէ՛ ինձ ինչ հարկ յանուանէ զոք նշանակել, գուք ձեզէն՛ ի ձեզ յուշ ածէք: Նոքա՝ առաւել քան զոր գոյր ինձ ցանկալ՝ եառն ինձ վրէժս: Ընդ քեզ զարմանամ, Անտոնիէ, զի որոց գործոցն նմանող եղեր, ի նոցա կատարածէն ոչ ինչ զարհուրիս: Ընդ այս ոչ այնչափ զարմանայի յայլս. ոչ զբ՛ ի նոցանէ ամբարձաւ ինձ ինքնակամ Թշնամի. ամենեցուն՝ ընկերհաշտութեանս ազգաւ՝ յինէն զայրացեալ: Դու, և ոչ բանիւ ինչ իւրք զկնճռալ, որպէս զի յանգգնագոյն քան զյ. Կատիլինա, մոլեգնի քան զպ. Կլոդիոս երևեսցիս, ինքնաձեռն յարձակեցար յիս Թշնամանօք. իբրև զի զևեռալոյ ընդ իս՝ գովութիւն քեզ լինել առ քաղաքացիս համարեցար: Զինչ վարկայց արհամարհեա՛լ զիս. ոչ նշմարեմ՝ ոչ ի կեանս իմ, ոչ ի շնորհս, ոչ ի գործս պաշտամանցս և ոչ ի չափաւորութեանս հանճարոյ, թէ զինչ արդեօք անգոնել կարիցէ Անտոնիոս: Արդեօք ի կարծիս ինչ եղև, թէ յաւելի ա՛ւագանեցոյս՝ գիւրին իցէ նմա բամբասել զիս. բայց առեանս այս՝ քաղաքացւոյ բաղմոց հոյակապից զբարւոք առնութեան պետութեանս ետ վկայութիւն. իսկ ինձ միայնոյ՝ զերկութեանն: Արդեօք ոգորի՛լ ընդ իս կամեցաւ՝ ի պայքար բանիւ. այլ այդ շնորհք է առ իս. զի զինչ յորգայդոյն, զինչ պարարտագոյն՝ քան ինձ փոխանակ անձինս և ընդդէմ Անտոնիոսի ձառ արկանել: Այլ այս իսկ է անշուշտ. ոչ համարեցաւ հաւասար լինել առ իւր նմանեան՝ թէ Թշնամի հայրենեաց իցէ, եթէ չլինիցի ինձ ոխերիմ:

Առ որ յառաջ քան զայլոց իրաց տալոյ պատասխանի, ըզբարեկամութենէն ապահաս առնելոյ՝ որով զինն ըստգիա, և յաչս իմ ոճիր յանցանք են, ասացից սակաւուք:

ԿԻԿԵՐՈՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՏԻԼԻՆԵԱՆ ՁԱՌԻՆ ԿԻԿԵՐՈՆԻ

Յիբրև իցէ՞ քեզ այդ, Կատիլինա, մերով երկայնմտութեամբս զեղծանել. ցո՛ր ժամ խաղ առնիցէ զմեզ տակաւին գաղանութիւն քո այդ. մինչև ցո՛ր վայր մոլեցցի անձակատար ապերասանութիւն: Ո՞չ Պալատականն գիշերապահ, ո՞չ պարեկապահք ոստանին, ո՞չ երկիւղ ժողովրդեան, ո՞չ առաքինեացն համօրէն միաբանութիւն, ո՞չ տեղիս ամրապահեսս տանի ծերակուտին, ո՞չ տեսիլ սոցա և երեսք համբուն սասանեցուցին զքեզ: Զիմանա՞ս զի հոյանեալ նշաւակ կան խորհրդոց սրտի քոյ. և զի սոցա ամենեցուն՝ ի միասս ըմբռնեալ է գաւաճանութիւն քո՝ ո՞չ տեսանես: Թէ՛ ի գիշերի ասա յայսմիկ և թէ՛ ի գնացելումն զինչ ինչ քո գործեալ իցէ, յո՛վ երթեալ, զոյս գումարեալ և զինչ առեալ խորհուրդ՝ զո՛ ի միջի կարծես անգիտանալ: Ո՛վ ժամանակաց, ո՛վ սովորութեանց: Զայդ ամենայն գիտէ ծերակոյտն. գդեաշին տեսանէ, այլ դեռ ևս կենդանի կայ դա: Կենդանի՞ կայ. նա աւանիկ և յատեան այսր եկեալ՝ համաշխարհն խորհրդեան լինի խորհրդակից. զմի մի՛ ի մէնջ՝ անհարկելոյն՛ ի մահ սահմանել հնիցէ: Եւ մեք, եհէ՛ արքս զօրութեան, հատուցեալ համարիմք պետութեան զպարտս, եթէ՛ դորա մոլեգնութենէն և՛ ի վրիժակացն ևեթ ապրեացուք: Վաղ ուրեմն՛ ի մահ արժան էր, Կատիլինա, յօդաղարիլ զքեզ՛ ի հրամանէ բգեշխին, ի գլուխ քո հանել զեղեւնն՝ զոր դու վաղուց ամենեցուն մեզ նիւթեաս:

ԿԻԿԵՐՈՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ Կ. ՏԱԿԻՏՈՍԻ ՏԱՐԵԳՐԱՑՆ

Ա. Սկսեալ ՚ի սկզբանէ կացին ՚ի Հռովմ. զազատութիւն ապա անդ և զբդեաշխս կացույց Բրուտոս: Իշխանապետք անդ ՚ի սահմանեալ ժամանակի ընտրէին, և ոչ տասնապետաց իշխանութիւն քան զերկեամ մի և անդր ապրէին:

Հազարապետաց զօրականին սատա բգեշխական ոչ ընդերկարեաց: Ոչ Կիննայ և ոչ Սիլլայի եղև երկարաւև հրամատարութիւն. Պոմպէի և Կրասոսի վաղ ՚ի կեսար անց իշխանութիւն, և սպառազինութիւնք Լեպիդեայ և Անտոնիոսի յանկ եղին յԱւգոստա, որ իշխանական անուամբ զաշխարհն պարտատեալ յընտանի գժտութենից ընդ իւրև նուաճեաց:

Վաղինդհանի ազգին հռովմայեցւոց յաղողութիւնք և արիածք յահանաւոր մատենագրաց արձանագրեցան, և ոչ պակասեցին արք գերահանճարք ժամանակագրել զնրս Աւգոստեայ, մինչև զողոմից զվհերատութիւն ՚ի ներքս մուծեալ: Վասն որոյ Տիբերի Կալիգուլեայ, Կլաւդեայ և Ներոնի պատմութիւնք առ ինքնակալութեամբն նոցա առ երկիւղն, և յետ մահու նոցա, զի դեռ ևս վառ և բորբոք էր առեղծութիւն, ստայօդք աւանդեցան:

Այսր աղագաւ խորհեցայ սակաւուք և զԱւգոստեայ աւուրցն վերջնոց անցանել, և ապա զՏիբերի և որ զհետ նոցին ինքնակալաց ՚ի գրի առնել զպատմութիւն, յերկաքանչիւրոցն իսկ անայլայլակ յատելութենէ և յաչառութենէ, որոց պատճառք քաջ ՚ի բացեայ են լինէն:

ՏԱԿԻՏՈՍ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԿԱՏԻԼԻՆԵԱՆ ԴԱՒԱԿՑՈՒԹԵԱՆ

Որք միանգամ գլեալ զայլովք կենդանեօք չանան, պարտ է նոցա մեծամեծին գուն գնել՝ չվարիլոյ կեանս գատարկապորտս հանգոյն անասնոց, զորս բնաւթիւնն երկրաքարշս արար և որովայնի սորուկս: Այլ մեր բովանդակ զօրութիւն՚ի հոգւոջ և՚ի մարմնի եդեալ է. զհոգին՚ի հրամանատար գիտեմք, և զմարմին՚ի ծառայ, մինդնդ անմահս և բաժանելիք՝ և միւսն ընդ անբանս: Վասն այսորիկ արգարագոյն ինձ թուի հանճարով քան զօրութեամբ ուժոյ՝ գործս լինել՚ի խնդիր. և քանզի կեանքս զօր վարելք վազանցուկ է, յիշատակս ըստ կարի երկարագոյնս թողուլ զանձանց: Զի սակաւատաւ է և դիւրաթարշամ՝ ընչից և գեղեցկութեան գործք, իսկ առաքինութեան՝ շքեղ և յաւէրժական: Սակայն ընդ երկար վէճ էր՚ի մարդիկ, ուժիվ արդեօք թէ առութեամբ ոգւոյ պատերազմ՝ վճարիցի: Քանզի չև իսկ ձեռն՚ի գործ արարեալ՝ խորհրդոյ սէքք են, և ապա արդեանց՚ի դէպ ժամանակի: Այսպէս երկաքանչիւրն ինքնին անբաւական՝ իւրեարց կարօտին սատարութեան:

Վասն այսորիկ՚՚ի սկզբան անգ թագաւորք, քանզի այս եղև յերկրի առաջին յողջոյնս իշխանութեան, զանազան կալան շաւիղ. կէսք զհանճար, այլք զմարմնոյ կորով հրթռէին. և զի դեռ յայնժամ կեանս անցանկասէրս վարէին մարդիկ, այլ այլ իւրովքն բաւականացեալ վայելէր: Այլ զնին ապա իւրև Կիւրոս յԱսիա, Լակեդեմն և Աթենք՚ի Յունաստան՝ զքաղաքս նուաճեցին և զժողովուրդս զբռամբ ածէին, և աւնչ սիրապետութեան գրգեր զնոսա՚ի պատերազմ, և ծայր վառաց՚ի գերագոյն իշխանութեան գնէր, յայնժամ ուրեմն յայս իմն այսպէս՚ի վանդակ և յարգեանց իրացն եղև՝ զի բաղում ինչ զօրէ՚ի պատերազմի հանճար: Զի եթէ հանճար թագաւորայ և իշխանաց՚ի խաղաղութեան և՚ի պատերազմի միապէս զօրանայր

հաստատագոյնս, ևս և օրինօք վճարէին իրաց կենցաղոյս պայմանք. և չտեսանէաք արդեօք զօտարին ընչից յափըշտակութիւն, և զամենայն ինչ կերպարանափոխ լեալ կամ վեր ՚ի վայր խառնակեալ: Քանզի նովին ևեթ հնարիւք հեշտեաւ յակաստանի կայ ուրախութիւն, որով և կանդնեցաւն յառաջագոյն: Այլ իբրև փոխանակ արուեստից՝ վատուեթիւն, և զգաստութեան և արդարութեան՝ զեղծուածիւն և գոռոզութիւն յորդեալ ՚ի նենգութս զեղուն, յայնժամ ապա և բաղդն և սոլորութիւնք յայլ կին կերպարանս առեալ փոխին: Այսպէս ըստ բանին ևեթ իշխանութիւն ՚ի լաւագոյն ոք ՚ի նուազ բարւոյն փոխաբերի: Յորժամ մարդկան աղէտ զերկիր գործեն, ընդ ծով նաւարկեն, չինուածս կառուցանեն, այն ամենայն՝ առաքինութեանց սակի են. այլ յոլովագոյնք ՚ի մահացուաց՝ որովայնի և քնոյ անձնատուրք, անդիտաք և անկիրթք իբրև զնժգեհս ոմանս անցին ընդ կեանս, որոց արդարև հակառակ օրինաց բնութեան մարմինքն հեշտալի, իսկ հոգիքն եղեն ծանրաբեռն: Ես ոչ ինչ ընդդատ ՚ի մահուանէ զնացս կեանս համարիմ: զի երկաքանչիւր ընդ լուսութեամբ ծածկին: Եւ արդ ինձ այսպէս թուի թէ կեալ և վայելել հոգւով այնոցիկ է՝ որ վաստակոյ ինչ պարապեալ, գովելի ինչ գործով և պիտանի արուեստիւք ՚ի խնդիր լինին համբաւոյ: Սակայն ՚ի խուռն բազմութեան գործոց, բնութիւն ցուցցէ զիւրաքանչիւր ձանձարոյն:

Գեղեցիկ է բարիս գործել հասարակաց, այլ և բարւոք խօսել ոչ ինչ անհեղի. ՚ի խաղաղութեան և ՚ի պատերազմի պարտ է մեծանուն հանդիսանալ, որ գործեցին և որ զայլոց գործս ՚ի գրի հարին՝ գովութեանց գան արժանաւորք: Թէպէտև և ինձ գլխովին ոչ զուգական փառաց համարիցին արժանի մատենագիրն և մատենագրչաց գործօն, սակայն և այնպէս ամենագժուարին վարկանիմ գործ վիպագրել զդէպս. նախ այնու խակ՝ զի բանքն հաւասարել պիտին գործոցն. երկրորդ անգամ, զի եթէ ուրեք զեղեռնութիւն ՚ի պարսաւել առնուցուս, բազմաց առ չարութեան և առ

նախանձու թուիցին բանքդ: Ուր եթէ զմեծամեծ արուեստեանց և զփառաց լաւորերոյ յիշատակ առնիցես, զոր ինչ ոք գիւրագործ անձին վարկանի՝ առ ոչ ինչ գրե. իսկ եթէ գեր ՚ի վերոյ՝ կեզծիս ստայօպս առդնէ: Այլ ևս ՚ի սկզբան անդ ՚ի պատանեկութեան հանգոյն բազմից մեզաց ժրաջան ՚ի գործ հասարակաց. և ընդ առաջ ելլին ինձ խոչ ընդոտն խափանարարք ոչ սակաւ: Քանզի փոխան ցածուեթեան, ժուժկալութեան և առաքինութեան՝ զօրանային յայժամ ժպրհնութիւն, ընչից վատնումն և արծաթասիրութիւն: Յորոց թէպէտ ՚ի բաց գարշէին միաք իմ՝ յանսովոր չարագիւտ արուեստից, սակայն գիւրահրապոյր ՚ի բազմագիմի յոռետութիւնս անդ ոլիք՝ որպացեալ կային ՚ի ծուռակ փառասիրութեան. և մինչդեռ ՚ի խառնակալ գնացից այլոց խորշէի՝ նոյն տեսչ փառաց և համբաւոյ և մխիանք ըստ օրինակի այլոց և զնս տանջէին:

Իսկ յորժամ ՚ի բազմապատիկ աղէտից և ՚ի վտանգաց անդորրացան միաք իմ, և ընտրեցի զինայորդ կենաց իմոց անցուցանել հեռի ՚ի հասարակաց գործառնութենէ, ոչ յօժարեցի մեզկութեամբ և գաւարկութեամբ զպատուական ժամանակն պարապոյ վատնել, և ոչ ՚ի գործել զերկիր, կամ յարշաւանս որոց, կամ յայլ ինչ ծառայական վարել զկեանս ՚ի գործ. այլ կրկին գարձ առնելով ՚ի ձեռն արկեալն յինէն ուսումն, յորմէ անխորհուրդն փառասիրութիւն սարսոյց զնս, եդի ՚ի մտի՝ ընտիր առնելով ՚ի հոգւոյ մեկնին վնասց՝ գրել որ ինչ արժանի յիշատակի ինձ թուէին. մանաւանդ զի յանկեալութենէ, յերկիւղէ և ՚ի կողմնասէր խորհրդոց ազատ էին միաք իմ. և արդ զկատարեալեայ գաւակցութենէն, որչափ ինչ ձգտրտացոյնս մարթացայց, սակաւուք աւանդեցից: Քանզի զայդ գործ վանեղեռանն նորութեան և մեծի վտանգին, ընդ առաջին յիշատակելս համարիմ: Այլ մինչև բուռն հարեալ զանցին պատմել, արժան է սակաւուք տալ զնկարագիրս առնն, թէ որպիսի ոք էր:

ՕԱԼՕՒՍՏԻՈՍ.

ՑԱՌԱՋԱԲԱՆ ՁԱՌԻՆ ՀՆՆԵՐԻԿԻ ՄԱՐԻԱՄՈՒ ԳԱԼԼԻՈՑ

Որ Թագաւորէն յերկինս՝ Հանուրց Թագաւորութեանց տէր, որում միայնոյ են փառք՝ մեծութիւն և իշխանութիւն, նա ինքն միայն է փառաւորեալ՝ի գնել օրհնս Թագաւորաց, և տալ նոցա յորժամ հաճեսցի՝ խրատս մեծամեծս և ահագինս: Թէպէտ բարձր առնիցէ զքահս, թէպէտ նկուն. Թէ հաղորդս զօրութեան իւրում արասցէ զնշխանս, և Թէ առ ինքն զայն ամփոփեալ՝ զնիքութիւն աւեթ նոցին Թողցէ՝ի նոսա, զպարտս նոցուն ուսուցանէ նոցա բարձրագոյն օրինակաւ ըստ իւրում արժանին: Ինձ՝ի յընձեռեալ նոցա զգօրութիւն իւր, հրաման տայ՝ի պէտս բարեաց աշխարհի վարել զայն՝ իբրև զինքն. և յամենիմն փեղէն, յայտ առնէ նոցա, Թէ ամենայն մեծութիւն նոցին փոխ առեալ է, և զի Թէ և յաճառս ամբարձեալք՝ ոչ ինչ ընդհատ ընդ ձեռամբ իւրով են և ընդ գերակայ իշխանութեամբն: Այսպէս խրատէ նա զԹագաւորս՝ ոչ բանիւք աւեթ և պատգամօք, այլ և արդեամբք և օրինակօք. Աչք, ականջք, գլուխ՝ի մի առնէ, խրատէ նոսա ամենեքեան այսպիսի ձևիւ:

Ինքնահաճեալք, զորս յիշատակ մեծի գշնոյիս, զբաւեր՝ սիրելոյ և մոր Թագաւորաց հզօրաց, և երից Թագաւորութեանց բամբչանս, ժողովէ՝ի կողմանց կողմանց յայս պաշտօն սգաւոր, ձառս այս ցուցցէ ձեզ մի յահաւոր օրինակաց անտի՝ որ յանդիման առնեն յաչս աշխարհի զնշխանութիւն իւր բովանդակ: Ի մի աւեթ կեանս տեսանիցէք հանդերձ օրհնութեամբ, և մի աւեթ կեանս տեսանիցէք հանդերձ նզովիւք: Երջանկութիւն անսահման, նոյն և տառապանք. երկար և խաղաղ վայելք միոյ յերեսելի Թագաց սիեզերաց. ամենայն փառք զարմի և մեծութեան հաւաքեալ՝ի մի կշռի, որ մատնի տպա յամենայն Թշնամանս բաղդին. իրաւունք արդարութեան յաջողութիւն գրեալ նախ, և տպա յետս ընդդէմ յանկարծ

պատահարք, անկուսր փոփոխմունք. ապստամբութիւն յերկար սանձահարեալ, հուսկ տպա ընդվզեալ սիրտցեալ՝ի սպառ. ատամբակութիւն ապերասան ամենևին, օրհնք բարձեալ, Թագին մեծվայելչութիւն առ ոտն հարեալ՝ ցայնժամ անծանօթ ոճրագործութեամբք, յափշտակութիւն և բանակալութիւն ընդ անուամբ ազատութեան. դէմոյ մի փախատեայ՝ ոչ ուրեք ինչ գտեալ տպատան յերեսին Թագաւորութիւնան, և աշխարհ իսկ իւր հայրենի՝ տեղի աքսորանաց միայն լեալ նմա այնուհետև. ինն ձանապարհք բամբչան ընդ ծով մրրկածուփ. ովկիանոս հիացեալ՝ տեսանելով զնիքն յայնքան նուազս հասուցեալ անցեալ պէսպէս հանդերձանօք և յայլեայլ պատճառս. ամօթ մի անարգաբար տապալեալ, և աքանչելապէս կանգնեալ վերըստին:

Զայդ ասադիկ ուսուցանէ Աստուած զԹագաւորան, այդպէս ցուցանէ աշխարհի զնշխանութիւն փառաց նորա և պերճանաց: Եթէ մեզ պակասեցեն բանք, եթէ ձագաք ոչ հասասարեցեն մեծութեան և բարձրութեան առաքարկութեանս, արդիւնք իրացն ինքնին խօսեցցին բաւական. սիրա մեծի գշնոյիս՝ ամբարձեալ երբեմն բաղմապատիկ երկար բարեբախտութեամբք, և տպա յեղկարծումն տարակարծի՝ի խորս ընկղմեալ դառնութեան, շատ իսկ բարձրաբարբառ խօսեցցի. և եթէ չկարէ օրէն տառնձին ուժմբ խօսել խրատս առ իշխանան զնորանչան անցիկս, Թագաւոր ումն մատուսցէ ինձ զբարբառ իւր՝ ասել ցնոսա. Աչք, ականջք, գլուխ՝ի մի առնէք, խրատէք ամենեքեան այսպիսի ձևիւք. խելամուտ լերուք՝ մի մեծամեծք երկրի, ուսարուք՝ դատաւորք աշխարհի:

ՊՈՍԻՒԷՔ. Դամբանականք:

ՅԱՌՈՒՋԱԲԱՆ ՀՈՌԻՆ ԼՈՒԴՈՎԻԿՈՍԻ ՊՈՒՐՊՈՆԱՑՒՆ ԻՇԽԱՆԻՆ ԳՈՆՑԻ

Ի բանալ բերանոյս՝ ի գովեստ անմահ փառաց Պուրպոնեանն Լուդովիկոսի՝ իշխանին Գոնտաէի, նոյնչափ խոտորեալ տեսանեմ զանձն իմ՝ ի մեծութենէ իրացն, և՝ եթէ ներբեսցի ինձ խոտորման լինել, յանդգնութենէ իսկ աշխատութեանս: Ո՞ր այն կողմ մարգաբնակ սիրելեաց՝ որոյ չիցէ լուեալ զյաղթական իշխանին Գոնտաէի և զղարմանալիս կենաց նորա. ամենայն ուրեք պատմեալ հաչակին. գալլացին պանծացեալ նոքօք՝ ոչնչէ ուստերանէ օտարուստն: Եւ որ զինչ և ձառեցից ես ձեզ այսօր զնմանէ, յետնեալ յամենայնի քան զմիսս ձեր, կայցէ ինձ տակաւին տալ պատասխանի գաղանի մեղադրութենադ զինեն՝ ի վայր յոյժ քան զերացն արգիլնս ձեալոյ: Ապիկար ձարտարախօսքս ոչնչէ զօրեմք՝ ի փառս ոգւոց գերագունից. արդար է խոստումն՝ ի բանս իւր, թէ՝ Գոթծք իւր լեթէ գովեցեն զնա: Ա՛ռ անուամբք մեծամեծօք՝ այլ ամենայն դրուատիք նուաստանան, և անպատշաճ պարզութիւն լեթէ հաւատարիմ պատմութեան՝ կարասցէ թերևս կալ տոկալ առաջի փառաց իշխանին Գոնտաէի:

Սակայն, մինչև զվէպս զայս հանցէ՝ ի լոյս պատմութիւն՝ որ հաստուցանելոյց է զայն հանգերձեալ յաւիտեանցն, պարտ է ըստ կարի մերում հաձել զշնորհակալութիւն միոյ հաստատակաց, և հպատակել հրամանի մեծին՝ ի թագաւորս: Եւ որ երախտիք չիցեն առ թագաւորութիւնս յիշխանէ անտի՝ որ զուտն գալլիական փառաւորեաց, ողջոյն զանուն գալլիացի, զդար իւր, և գոգեաս զմարգիսութիւն առ հաստատակ: Լուդովիկ Մեծն իսկ՝ եկն եղ յայս խնամս մտաց. ողբացեալ նախ զայրս զայս զմեծ, և արտասուօքն՝ ի միջն անդ բովանդակ արքունեացն տուեալ նմա զհրաշափառագոյն գովութիւնն զոր մարթէր նմա ընդ

գունել, ժողովէ աւասիկ՝ ի հաչականուն տաճարիս զամենայն փառաւորս արքայութեան իւրոյ՝ առ՝ ի զհամաշխարհն պարտս հաստուցանել յիշատակի իշխանիս. և կամի զի բարբառս իմ անգօր՝ կենդանացուսցէ զայս սպազդած տեսիլ, և զամենայն զայս թագաւորական հանգէս: Օ՜ն և կայք արդ բուռն արտասուօք ցաւոցս:

Աստուած՝ մեծ իմն և արժանավայելուչ այսմ բեմիդ՝ յանգիման լինի մտացս. այն ինքն է Աստուած՝ որ առնէ զպատերազմօղս և զաշխարհակալս: Դու ես, ասէր առ նա Դաւիթ, որ ուսուցեր զձեռս իմ՝ ի պատերազմ, և զմատունս իմ՝ ի ճակատամարտս: Եթէ նա է որ շինէ զաղօրութիւն, ապա նա տայ և զայլ մեծամեծ ձիրս զբնականս և զգերաբնս՝ զորաի և զմտաց: Ամենայն՝ ի ձեռանէ նորա՝ ի հզօրէ գայ. նա է որ առաքէ յերկինից զաղնուական մտածութիւնս, զհարկս ուղղս խնամատութեան և զամենայն հանճար բարւոյ. այլ կամի մեզ գիտել՝ ընտրութիւն առնել՝ ի մէջ պարգեւաց զորս ետղոյ՝ ի ներշնամիս իւր, և որոց պահէ ծառայից իւրոց: Որ որոշէն ընդ բարեկամս իւր և ընդ այլս ամենեսին, բարեպաշտութիւնն է. մինչ չև զայս պարգև ընկալեալ յերկինից, այլն ամենայն ոչ միայն չէն ինչ, այլ և դառնան լինին՝ ի կործանումն փերևեբառելոցն նոքօք: Առանց այսր անհրնս պարգևի բարեպաշտութեան՝ զի՞նչ լինէր իշխանն Գոնտաէի մեծաւ սրտիւն հանդերձ և մեծաւ հանճարուին:

Ոչ, եղբարք իմ. եթէ բարեպաշտութեան չէր սրբեալ զայլ ևս առաքինութիւնսն, ոչ գոքա իշխանիդ սիրտիանս ինչ գտանէին ցաւոցն, ոչ աստուածամերձ քահանայապետ ինչ յաղթես իւր վատահութիւն, և ոչ ես ինչ զբաւիղն՝ ի գովութիւնս՝ զոր պարտիմ այսքանով մեծի առն: Արդ օրինակաւս այսուիկ կարկեցուսցուք զփառս մարդկեղենս. փշրեսցուք զկուռս փառամոլիցն. անկցին կորիցեն առաջի սրբոյ սեղանոյս: Հաւաքեսցուք այսօր՝ ի մի, — զի և մարթի իսկ՝ ի հոյակապ առնս — զամենայն գեղեցիկ գեղեցիկ հանգամանս վեհական բնութեան, և՝ ի պարծանս

Ճշմարտութեան՝ յանդիման կացուցուք յաշխարհանաղ իշխանիս, թէ որ ինչ գիւցազնական կատարէ, որ ինչ զաշխարհն վտառ ՚ի ծագ բարձրութեան տարեալ հանէ, քաջութիւն, մեծանձնութիւն, բարեբարութիւն՝ ըստ սրտի մտանց, աշխոյժք, սուբ միաք, պերճութիւն և վեհմտաց հանճար ըստ մասանց ոգւոյ, պատիւ երեւոյթք լինէին՝ եթէ բարեպաշտութիւն չգոյր ընդ նոսին, և զի բարեպաշտութիւն է մարդոյ առնական ինչ: Զայս տեսջիք, տեարք ՚ի յաւէրժ յիշատակաց արժանի վարս բարձրապատիւ և մեծազօր իշխանիս Լուտուիկեայ Պուրպոնեան, իշխանին Գոնտեի և առաջին արեանառու Թագաղարմ իշխանի:

ՊՈՍԻՒԷ. Դատբանականք:

ՅԱՌՈՒՋԱԲԱՆ ՁՈՒՐՆ ՀԵՆՐԻԿԻ ԱՆՆԱՅԻ ԱՆԳԼԻՈՑ

Ինձ ուրեմն պահեալ կայր և զայս հարկ սպասաւոր պաշտաման հատուցանել բարձրապատիւ և հզօր բամբասնս Հենրիկեի Աննայի Անգլիոյ՝ տիկնոջ իշխանին Օռլէանայ: Այլ՝ որ տեսանէի այնպէս մտադիւր ուշակալ ՚ի հարկանելս իմ զսոյն սպաս մօր իւրում դշխոյի, այսպէս ուրեմն վաղվաղակի էր լինելոց պատճառ նոյնօրինակ ճառի, և իմոյ ցաւագին ձայնիս մնայր այս աղիտաւորմ սպասաւորութիւն: Ո՛վ ունայնութիւն, ո՛վ ոչինչ, ո՛վ անգիտաք բանտին իւրեանց մահկանացուք: Կարծէր ինչ նա քնաւ յառաջ քան զամիս ատեն: Եւ դուք, տեարք, ածկիք ինչ զմտաւ, մինչդեռ յանկնարին արտասուս հարեալ կայր ՚ի տեղւոջս յայսմիկ, թէ այսպէս փութանակի ժողովելոց իցէ զձեզ անդր՝ աշխարել զինքն: Ո՛վ բամբիշն, զարմանալիգ երկուց մեծաց թագաւորութեանց, չէր շատ Անգլիոյ լալ զբաժանումն քո ՚ի նմանէ՝ առանց հարկ լինելոց նմա ողբալ և զմահդ. և Գալլիոյ՝ որ եւս զքեզ դարձեալ վերստին այնչափ ցնծութեամբ պար առեալ ՚ի նորանշոյլ փառաց, միթէ չէին այլ ևս հանգիստք և այլ ինչ յաղթանակք վասն քո՝ ՚ի գարձիդ քումմայսրէն ՚ի հաչակելի ուղեւորդ, ուստի առեալ ածէր այնքան պարծանս և այնպիսի գեղեցիկ ակնկալս: Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է:

Այս բարբառ ևեթ մնայ ինձ, զայս միայն ներէ ինձ խոկա՝ ՚ի նորանշան պատահարիս՝ ցաւ մի այսպիսի արդար և կարեւոր: Վասն որոյ ոչ յուղեցի ՚ի գիրս սուբբս՝ գտանել բնաբան մի պատշաճաւոր սիւնոյս. ապա անաշխատ և անխոհեմ զառաջին բանս ժողովողին, յորս ԹԷպէտ և յեղյեղուկս արկեալ է ունայնութիւն, այլ ըստ նա՝ գեռ ևս ոչ բաւական ՚ի պէտս առաջի եգեալս խորհրդոյ: Կամ է ինձ՝ ՚ի միոյ միայնում թշուառութեան աշխարել զթշուառութիւնս ազգի մարդկան առ հասարակ, և ՚ի միում ևեթ մահու՝ յանդիման առնել զմահ և զոչինչն ամենայն մարդկեղէն մեծութեանց: Այս բնաբան, յորժ ՚ի դէպ ամենայն վիճակի և ամենայն դիպուածոյ կենցաղոս, առանձին իմն իրաւամբք վայելուչ է ողբանութեր առաջարկութեանս, զի ոչ ուրեք այսպէս յայտ յանդիման մերկացան և համաձայնաձայն նշաւակեցան ունայնութիւնք աշխարհիս: Ո՛չ. յետ գամ մի զայս տեսանելոց մեր, առողջութիւն չէ ինչ՝ բայց անուն ևեթ, կեանքն՝ երազ, փառքն՝ երեւոյթ, հնորհքն և հաճոյք՝ վաղանցուոր ղեօսանք. ամենայն ինչ մնոտի է ՚ի մէջ՝ բայց յանկեղծ խոստովանութենէ ընդունայնութեանցս առաջի Աստուծոյ, և ՚ի հաստատուն խորհրդոյ արհամարհելոյ զամենայն որ ինչ և է մեզ:

Այլ միթէ զշնարհաւորութիւն խօսկիմ. զոր ՚ի պատկեր իւր արար Աստուած զմարդն՝ միթէ տուեալ ևեթ իցէ. զոր յերկնից յերկիր եկն խնդրել Յիսուս Քրիստոս, զոր ոչ անարգութիւն համարեցաւ դնել բոլորով իւրով արեամբն, ջնջել ևեթ իցէ: Ապէ ՚ի միտս եկեսցուք ՚ի մոլորութենէս. ապաքէն պատրէ զմեզ այս սխուր տեսիլ մարդկային ունայնութեանց. և յոյս աշխարհիս ՚ի գերեւ եղեալ յանկար-

ծոյն մահուամբ սիկինոջ՝ անդրադոյնս վարէ զմեզ: Ոչ նե-
րելի է մարդոյս խոտել բոլորովին զանձն՝ գուցէ ընդ ամ-
պարիշտան խաղ ինն ի ձեռս դիպուածոյ վարկուցեալ ըզ-
կեանս, սակրիւք և սուահակ գնայիցէ ըստ կամս զաշացու-
յօժարութեանցն: Սակայն իբրև ծողովողին սկիզբն եդեալ ա-
ռաւածելէն գրոյն զասացեալ բանքս, և զամենայն էջըն
լցեալ արհամարհութեամբ մարդկայնոցս, կամ ասա
հաստատուն լինչ առաջի առնել մարդոյն, և զամենայն
ճառան տանի կնքել յայս. ՅԱստուածոյ երկիր և զպատուե-
րանս նորա պահեա. զի այս է մարդն ամենևին. զի զամե-
նայն արարածս ածցէ Աստուած ի դատաստան՝ յամե-
նայնի անտես արարելոցն, եթէ բարի և եթէ չար: Վասն
որոյ՝ ամենայն ինչ մնասուն է ի մարդն, եթէ յայն հայեցիմք՝
զոր տայն աշխարհի. իսկ եթէ զոր Աստուածոյն պարտի՝
զայն զմտաւ ածիցեմք, մեծարգի՞ է ամենայն: Դարձեալ
միւսանգամ մնասուն է ամենայն ի մարդն, եթէ միա եդեալ
նայիցեմք յընթացս մահկանացու կենացն. բայց պատուա-
կան է ամենայն, կարևոր ամենայն, եթէ զվախճանն յոր
յանդ եւանիք՝ նկատիցեմք, և ղհամար զոր պարտի տալ զա-
մենայնէ:

Խոհացուք ուրեմն այսօր առաջի սեղանոյս և դամբա-
նիս զառաջինն և զվերջինն պատգամս ծողովողին. զմին՝ որ
զուշանայնութիւն մարդոյն ցուցանէ, և զմիւսն՝ որ սահմանէ
զմեծութիւն նորա: Դամբանս այս արասցէ զմեզ խելա-
մուտ ոչնչութեան մերում. միայն թէ սեղանս՝ յորում
հանապազօր մատչի վան մեր պատարագ մեծագին՝ ուսուա-
ցէ մեզ միանգամայն զպատիւ մեր. երկոցուն և միայ հա-
ւատարիմ եղիցի սիկինոս՝ զոր արտասուեմք: Տեսցուք զոր
մահ արգաւախճան խլեաց ի նմանէ, տեսցուք զոր մահ
բարի պարգեւեաց նմա: Ասյսպէս ուսցուք արհամարհել զոր
նա անվիշտ էնիք. զի զմիտս մեր բովանդակ յայն յառեսցուք՝
զոր ընդդրկեաց նա չերմեռանդն աենչմամբ, յորժամ հո-
գի իւր պարգեալ յամենայն երկրաւոր խորհրդոց և երկ-
նիւք լցեալ՝ յոր հուպն կայր, եառես զլոյսն յայս յանդի-

ման: Այդ են Աշխարհութիւնքն՝ զորոց Ճառելոցս եմ, ար-
ժանի զայնս համարեալ լսելեաց իշխանիս մեծի, և ժողո-
վոյս՝ ականատեսի ընդ սիեզերս:

ՊՈՍԻՒՆՅԹ. Դամրեանականը:

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԿՈՐՈՉԻՆ ՅՈՂՈՎՈՂ ՕՐԻՆԱԿԻ ՄԵՆԱՄԵՆԱՑ

Տէր արքայ,

Այս վճակ է Թագաւորաց և իշխանաց աշխարհի, զի
կան ի կորուստ և ի փրկութիւն մարդկան. և ի տալ
երկնից զնոսա յերկիր, մարթի ասել զնոսա շնորհս կամ
պատուհաս յողորմութենէ կամ յարդարութենէ իւրմէ
պատրաստեալս Ժողովրդոց:

Այր, տէր արքայ, յաւուրն բարութեան յորում ըն-
ծայեցար աշխարհի Գալլիացւոց, և ածեալ ի տաճարն
սուրբ հնչեաց զքեզ քահանայապետն ի վերայ սեղանոյն
սրբով նշանաւն հաւատոց, Աշմարիտ էր ասել զքեն. Մա-
նուկս այս մեծաշուք ծնեալ է ի կորուստ և ի փրկութիւն
բազմաց:

Յիսուս ինքնին ի ժառանգէնն այսօր ի տաճարին զնոր
Թագաւորութիւն իւր, չէ ազատ յօրինաց աստի: Օրինակք
իւր և սքանչելիք և վարդապետութիւն, որ գործելոցն են
զփրկութիւն յոգնահոգս հօտին Իսրայէլի, չկցին արդարև
պատճառք գլորման և գայթագղութեան այլոց Հրէից, բայց
եթէ յանհաւատութենէ իւրեանց՝ որով առաւել անպա-
տասխանի լինիցին. և նոյն աւետարան եղիցի կիսոց ի փըր-
կութիւն և յաղաստութիւն. այլոց ի կործանումն և ի դա-
տապարտութիւն:

Երանի իշխանաց և մեծամեծաց, եթէ սրբութիւն նոցա
միայն ի՞չ պատճառ պարսաւի և գայթակղելոց արանց ա-

պահանջելոց, և օրինակք նոցա իբրև զՅիսուսին մի՛ լինիլին
՝ի խոչ և ՝ի խոտո՛ւթ և ՝ի դատապարտութիւն ախտի, քայց
միայն առաւել և անպատասխանի զնոյն կացուցանելով, և
օրինակ լինելով առաքինութեան և պատուական:

Վասն որոյ, եղբարք իմ, դուք՝ զորս Աստուածա-
յին բարձրացոյց քան զայլս ՝ի մարդկանէ, մանաւանդ դու,
Տէր արքայ, զոր ձեռն աստուածծեղէն՝ պահապան արքա-
յութեանս՝ կորզեաց ՝ի միջոց կործանման և աւերակաց
տանն արքունի, առ ՝ի կանգնելոյ զքեզ ՝ի վերայ գլխոյ մե-
ծոյդ, դու՝ զոր իբրև զկայծակին ինչ պատուական՝ արծար-
ծեաց ՝ի ծոց սուրբ մահու, ուր զմեծափառ առհին
քո շինոյդ, ուր և դու ինքնին ՝ի շինանել կայիր, այո՝ Տէր
արքայ, գարձեալ առնուս ասել, այդ ահաւադիկ է պատ-
րաստեալ քեզ յերկինից վիճակ. կաս դու ՝ի կորուստ և
՝ի փրկութիւն բազմից. Սա նոյ ՝ի գլուխս և ՝ի խնգնոտա-
բաղձոյ ՝ի մէջ Իսրայէլի: Իշխանաց և մեծամեծաց օրինակք
՝ի մի կայս կամ ՝ի միւս կողմ շրջին անդրաժեշտ. անմարթ
է նոցա միայն առանձինն կորնչիլ կամ փրկիլ: Ա՛յս ՃՇմար-
տութիւն մեծ՝ լինիլոյ հիմն ճառիս:

ՄԱՍԻԼԻՈՆ. Քառասնորդք:

ՅԱՌԱՋԱԲԱՆ ՅԱՂԹԱՆԱԿ ԿՐՕՆԻՑ ՓԱՐՈԶԻՆ

Տէր արքայ,

Ընդունայն յաղթանակք աշխարհակալաց՝ առեալ ինն
և ևթն էին ամբարհաւաճճութեան, արատասուց, յուսահա-
տութեան և մահու, զի մարդկային ախտից էին յաղթա-
նակ ախտալի, և զհետ իւրեանց ոչ այլ ինչ Թողուին քան
զլարաշուք հետս փառամոլութեան յաղթողացն, և գերու-
թեան պարտելոցն:

Յաղթանակ Յիսուսի այսօր՝ աղբացն իսկ նուաճելոց
յաղթանակ է խաղաղութեան, ազատութեան և փառաց:

Յաղթանակէ Թշնամեացն՝ առ ՝ի փրկել զնոսա և հա-
ղորդս առնել իշխանութեան իւրում: Յաղթանակէ մեղաց՝
ընդեալ և բեւեռեալ ՝ի խաչափայտին զմահահրաւէր ձեռա-
գիրն մերոյ դատապարտութեանս, և բղխեցուցանէ անտի ՝ի
վերայ մեր աղբիւր բժշկութեան և շնորհաց: Յաղթանակէ
մահու՝ առ ՝ի հաւատարիմ առնելոյ մեզ զանմահութիւն:

Ա՛յս են փառք աստուածպաշտութեան. ցուցանէ նախ
զնախատինս և զարշարանս խաչին, այլ յաղթանակ է այն
շքեղ, և հանդէս մեծ ընծայեալ երկրի ՝ի մարդոյն: Զկնի
ինչ յաշխարհի մեծ քան զառաքինութիւն, այլ ամենայն
պէս պէս փառք՝ կամ ՝ի դիպաց են արդասիք, կամ շողքոր-
թութեան և մոլորութեան մարդկան գիւտք. իսկ սա յԱ-
րարչէն միայն է և յիւրաքանչիւր անձնէ: Թագաւորաց և իշ-
խանաց սա ամենէ համարի, և սակայն սովաւ ևևթ է նոցա
մեծ լինել, զի սովաւ ևևթ կարէն յաղթօղ լինել Թշնամեաց
իւրեանց, կարեաց իւրեանց և մահու իսկ գլխովին:

Յայտ արասցուք զշնչմարտութիւնս զայսոսիկ՝ որ հաւա-
տոց ՝ի մեծ փառս են, և նուիրեսցուք ՝ի պարծանս կրօնից
զնորատ աւուրս վերջնոյ, որ է օր մեծ յաղթանակացն Յի-
սուսի:

ՄԱՍԻԼԻՈՆ. Քառասնորդք:

ՅԱՌԱՋԱԲԱՆ ՀՕՐՆ ԲՐԻՏԵՆԱՑ

Ի տեսիլ նորահնար հանդիսի այդքանոյ ուխկնգրացդ,
Թուի ինձ, եղբարք իմ, Թէ արժան էր ինձ ասել՝ բանալ
զշրթունս իմ առ ՝ի պնեղոցութիւն ձեր աղերսել ևևթ՝ ՝ի
շնորհս անհնչանի ուրուք քարոզչի, որ ՝ի ինդրելոցն ՝ի ձէնջ
բարեաց հանճարոյ զրկեալ իցէ, յորժամ զձերոյ փրկու-

Թենեդ Ճառք ՚ի մէջ անկանիցին: Ա՛յլ սակայն այսօր պյլ-
աղք իմն կիրք ազդին չիս: Ա՛յո սրտով եմ յանձնէ, բայց
Թէ ինչ առ ուսոյնուԹեան անարդ խուՃապիւք խոնարհի-
ցիմ, զայդ և գլխովին հանէք ՚ի մտաց: Օ՛ն անդր ՚ի բաց
առ՝ Թէ պաշտօնեայ ոք երկնաւոր ձերումդ ներողամտու-
Թեան կարօտանալ խորհիցի: Զի ամենեքեան գուք, ո՛ր ոք և
իցէք, մեզանչականք էք իբրև զիս: Ա՛մաչի երեսաց Ա՛ստու-
ծոյն իմոյ և ձեր բախել զկուրծս իմ ՚ի պահուս յորդորեալ
սահիմ, ես որ մինչև ցայսօր ընդ յարիւս յարդածած-
կոյթ տաճարաց զարդարուԹիւնս բարձրելոյն պատմեալ,
քարոզէի տառապելոց՝ որ կարօտէին հայի, զնիստ Ճգնու-
ԹեաՀաշնալուր ՃմարտուԹիւնս հաւատոց իմոց ծանուցանէի:
Վա՛յ Թշուառացեալս, և զի՞նչ գործեցի զայդ: Ձանանկան
դառնացուցի, զսիրելի բարեկամս Ա՛ստուծոյ, և զանհեդ
և զմիամիտ մարդիկն, փոխանակ սիրոփանաց և կարեկից
գԹոյն, ահիւ և դառնուԹեամբ լցուցի: Ա՛հա աստանօր
յաւարգանին, ՚ի մեծատունս, ՚ի հարստահարողս տառա-
պելոց, կամ ՚ի յանդուդն և յանապաշաւ մեղաւորս և եԹե
աչք իմ ԹարԹափին: Ա՛հ, ասա միայն արժան էր զորբա-
նուէր բարբառն ըստ համօրէն որոտագոչ ազդեցուԹեանն
հնչեցուցանել, և յաջոյ բեմիս արձանացուցանել ընդ իս
զմահ՝ սպառնալեօք վառեալ, և ՚ի ձախմէ զմեծազօրն Ա՛ս-
տուածՃ՝ հասեալ ՚ի դատաստան: Երկերուք ապա դողու-
Թեամբ առաջի իմ, որ լսէիք ինձ, արք ամբարտաւանք և
անարդուք. զի ահա ՚ի ձեռին ունիմ այսօր զվէճս ձերոյ դա-
տակիցդ: ԿարևորուԹիւն փրկուԹեան, մահուն ստու-
գուԹիւն, և ահաւոր պահուն անստուգուԹիւն, անա-
պաշաւ խոստուԹիւն, դատաստանն յետին, ընտրելոց սա-
հաւուԹիւն, գժոխք, ՚ի վեր քան զամենայն՝ յաւիտենա-
կանուԹիւն, ո՛հ յաւիտենականուԹիւն. այսոքիկ են ահա
զորոց խօսել հանդերձեալ եմ, և զորս ձեզ միայն արժան
էր պահել: Ինձ չէն պէտք ձերոցդ կարծեաց, որ գուցէ
ինձ ՚ի դատապարտուԹիւն և ձեզ ՚ի կորուստ լինիցին: Ա՛յլ

մինչդեռ ես անարժան պաշտօնեայս բարձրելոյն ընդ ձեզ
խօսիցիմ, նա ազդեսցէ ՚ի սիրտս ձեր. զի չեմ իակ անաե-
ղեակ ողորմուԹեանց Նորա: Այնդ յայնժամ առ ահի ան-
ցելոց ամբարշտուԹեանցդ զարհուրեալ, ՚ի դիրկս իմ դե-
մեալ անկանիցիք՝ արտասուօք ըղձուԹեան և ապաշաւա-
նաց. և առ խոյԹ մտացդ խղճի խեղամուտ լինիցիք Թէ ոչ
անձնահս ինչ եցեմ բարբառեալ:

ՃԱՐՏԱՍԱՆԱԿԱՆՔ

ՋՈՒԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԸՆԴ ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ

Ցուր է կարծել Ճարտասանին՝ թէ լոկ նմա հանճար համոզելոյ զմարդիկ, եթէ չլոկ նորա ուսեալ զարուեստս Ճանաչելոյ զնոսա: Ուսումն բարոյականին և Ճարպարսոսութեան համածինք են. և զուգաւորութիւն նոցա այնպէս է վաղեմի, որպէս խորհելոյ ընդ խօսելոյ: Ոչ բաժանէին երբեմն ի միմեանց գիտութիւնքս այսոքիկ երկոքին անբաժանելիք ի բնէ. խմաստասիրին և Ճարտարախօսի հասարակաց է ստացուած իմաստութիւն. բարեբաստիկ տուրեաւ էր նոցա, և կատարեալ համաձայնութիւն ընդ արուեստս բարւոք խորհելոյ և բարւոք խօսելոյ, մինչեւ էր անկեալ ի միտս զանազանութիւնն այն թշնամանագիր Ճարտասանից, ապահարզանն այն ողբալի մտաց և բանին, բացառութեան և զգայման, Ճարտարախօսի և իմաստասիրի: Եթէ գոյր ինչ ի միջի նոցա խոիր, բողոքին էր այն՝ ի նպաստ Ճարտարախօսութեան. իմաստասիրութիւն չատանայր ասի ի բերան առնել, Ճարտարախօսութիւն գուն գործէր ի համոզել. և համարէր մտադիրս հլուս և բարեսէրս զունկնդիրս. սա գիտէր ազդել ի նոսա մտադրութիւն, հլուիթիւն և բարեսիրութիւն:

Սասա բարոյականին, անաչառութիւն բանին, ճշդ և խիստ արամաբանութիւն՝ զարմանալի կացուցանէին զիմաստասիրութիւն. հեղութիւն ոգւոյ բնական կամ հանճարի-

մաց, գեղեցկութիւն բանի, և ձիրք երևակայութեան, սիրելի առնէին զՃարտարախօս: Միուսմն միտք, միւսումն սիրտ՝ էին ձեռնտու. այլ սիրտ ապստամբէր յաճախ ի ճշմարտութենէ, որոց խելամուտ էին միտք. իսկ միտք էջրաժարէր երբեմն ի հպատակելոյ զգայմանց սրտի: Իմաստասէրն, օրինաւոր Թագաւոր, եղանէր յաճախ աշարհիս երրև զբռնաւոր. իսկ Ճարտարախօսն վարէր բռնութիւն այնպիսի քաղցր և ախորժ, որ Թուէր օրինաւոր տերութիւն:

Յառաջնումն դարու Ճարտասանութեան եղև տեսանել Ելլադայ ի վերադունից Ճարտարախօսացն իւրոց հիմնարկեալ զտէրութիւն բանի ի վերայ Ճանաչման մարդոյ և ի վերայ օրինաց բարոյականին: Բնութիւն, վսեմութիւն փառաց իւրոց, ի զուր ժխտէ նմա զարտաքին ձիրս, զհամր զոյն Ճարտարախօսութիւն, զիշխանութիւն զայն ակնարկ՝ որ հիացուցանէ զոգիս ունկնդրաց, և լինքն ձգէ զվարկ նոցա, չև Ճարտարախօսին արժանի լեալ այնց: Վսեմութիւն բանիւ նորա ոչ ատչէ ունկնդրին յաւիշտահակելոյ ի հիացումն, պարտիլ և ազատութիւն զգակատութիւնն զայնոսիկ գիտելոյ. ծածկին այնոքիկ ի փայլմանէ զօրութեան նորա. տեղի ատչէ ունկնդրին առաջի թափոյ նորա, առանց զընթացս նորա տեսանելոյ, որպէս արձոյ ընդ օդս չհետ երթիցէ, առանց գիտելոյ որպէս վերացաւ յերկրէ:

Ճարտարախօսն, փնացիկ ժողովրդեան իւրոյ գտաւոր անաչառ, մարդասիրագոյն քան զնեթողս նորին երևեսցի. իշխեսցէ առաջի առնել նմա զտխուր պատկեր զդժնդակ և զտաժանաւոր առաքինութեան, և ածցէ զնա ի մեծարել զդժուարին և յաճախ զբարեացսիկ իսկ պատչաճն, քան զախորժ պիտանին և քան զբերկրանս անարժան յաջողուածոյ:

Իշխանութիւն արքային Մակեդոնիոյ սարսեցոյց առաջի ղօրութեան բանից՝ աթենացւոյ Ճարտարախօսին. բախտ Ելլադայ կացոյց ի կախ ընդ Փիլիպպոս և ընդ Դեմոսթենէս,

և որպէս չկարէ նա երկարակեաց քան զաղատութիւն հայրենեացն լինել, այսպէս և ոչ հայրենիք նորա կեալ յետ նորա: Եւ ուստի՛ արգասիք այսպիսիք դերաշխարհիկին Ճարտասանութեան. որ ազբերական հրաշից այնքանեաց, որոց պատմութիւն և եթէ յետ այնչափ գարուց ածէ տակաւին զմեզ ի զարմացուցանել: Զնոյն և չեն այսոքիկ զիրք պատրաստեալք ի վարժոցի Ճոռոմութեան. միայնատակուրեքս այսքիկ և չանիթք, յորոց զգողանի հարկանին Թագաւորք ի գահոյս իւրեանց, կազմեալ են ի գերակայ ուրեք վայրի: Ի ծոցոյ խնամատութեան առեալ էր նորա զայս քաղաքավարութիւն յանդուգն և արիական, զայս ազատութիւն անյողդողդ և աներկիւղ, զայս հայրենասիրութիւն անսպառ սէրն. ի բարոյականին ուսման ընկալեալ էր նորա ի ձեռանէ բանականին զայս ամենազօր սէրութիւն, զայս գերագոյն իշխանութիւն ի վերոյ ոգւոց ունկնդրեալ: Պզատնի սկզբ էին առ ի կազմել զԻեմոսթենէն. որպէս զի վեհագոյնին Ճարտասանից զՀարիկ իւրոյ համբաւոյն բովանդակ ընծայեսցէ վեհագունին խնամատարիցս:

ՄԱՐՄՈՆԹԵԼ.

ԲՆՆՈՒԹԻՒՆՑ ԱՌ ԻՒՐՈՆ

Եթէ ոչ արուեստիւն ձեր և հաւատարմութիւն յայտնի էր ինձ, ի զուր զկնի բարեպատեհ ընդ առաջ լինէին մեզ, և վայրապար արդեօք էր ակնկալութիւնս այս մեզ ուրախալոյս, և ոչ ես առ ապշութեան կամ առ յանդգնութեան զանատոյդն փոխանակ ստուգին խնդրեի: Այլ զի ի բազում և ի մեծամեծ վտանգս ծանեայ զձեզ քաջս և ինձ հաւատարիմս, ի չքեզ և ի մեծամեծ արուեստիւնս ձեռնարկել խրախուսեմ. զի հաւատար ձեզ և ինձ շահ և դեան առաջի աչաց նկատեմ: Քանզի համակամուԹիւն ի կամել զնոյն և ի չկամել՝ հաստատուն բարեկամութեան է նշանակ:

Զոր խորհեցայն, իբրաքանչիւր ուժք ի ձէնջ կանխաւ ծանուցի. բայց արդ օր ըստ օրէ և ևս վառի յիս խանդ՝ յածել զմտաւ Թէ որպիսի պայման կենաց առաջի կայ մեզ, եթէ մեք մեզնէն չհանիցեմք զանձինս յաղատութիւն: Քանզի յորմէ հետէ հաստատակաց պետութիւն ի ձեռս և ի կամս սակաւուց ոմանց հզօրաց անկաւ, Թագաւորք և չորրորդապետք՝ հարկատուք նոցին կացին միշտ, և ազգք և աղինք ընծայաբերք նոցին. այլք առ հասարակ անզօրք և զօրաւորք, տհմիկք և անտոհմք՝ ընդ ոտիկս ի համարի եմք առանց չնորհի, Թափուր յիշխանութենէ, հպատակք նոցա, որոց՝ եթէ հասարակաց պետութիւնս յուժի կայր, ահաւորք լինէաք: Այսպէս ամենայն չնորհք, իշխանութիւն, պատիւ և Ճոխութիւնք առ նոսա են, կամ առ որս նոքայն ախորժեն. և մեզ բաժին՝ մերժումն միայն, վատնեք, դատափետութիւն և ալքատութիւն:

Ձերբ այսոցիկ ժուժայցեմք, ո՛ քաջք. չկայ լաւագոյն միջանել արուեստիւք քան զիշատս և զամօթալից զայս կեանս, այսն և կատակ ամբարտաւանութեան այլոց լինել, և ի վախճանի անարգանաք կորնչել:

Երդուեալ ի դիս և ի մարդիկ, զի ի ձեռս մեր է յաղթութիւն: Հասակ առայդ և ոգի արիական ընդ մեզ է. խոկ ի նոսա ամբ և Ճոխութեամբ ամենայն ինչ ծերացեալ շատ է ձեռն ի գործ առնել, և յաջողեցոյն ամենայն: Քանզի ո՛ոք ի մահացուաց, որոյ իցեն արիական միտք, և հանդուրժել մարթասցի ընդ առաւելութիւն մեծութեանց նոցա՝ զորս վաստնեն առ ի լիր արկանել ի ծովս, և առ հարթելոյ զլերինս, ուր մեզ առանինքն անգամ կարևորք պահասեն:

Նոքա առն ի տուն յարեն, իսկ մեզ և ոչ յարիք զաղքատսն. պատիկերս գնեն, անդրիս և զրուագս. քանդեն զչինուածս, և այլս փոխանակ կազմեն, և համառօտիւ ասացեալ՝ ամենայն հնարիւք վատնեն զդրամս և շռայլեն, սա-

կան և այնու տարապայման զեղխութեամբ չկարեն յաղթել մեծութեանց. իսկ մեզ կարօտութի՛ւն տան, պարտք արտաքոյ, ձախողութիւնք, և դժնդակագոյնին կասկած: Արդ զի՞նչ այլ մնայ մեզ, քան զձշտաւոր կենդանութիւն: Եւ առ ի՞նչ թմրեալ չզարթնուցանք տակաւին: Ահա, ահա ւասիկ որում յաճախ ըղձակերան լինիք, ազատութիւն, ընդ նմին և փարթամութիւն, փառք և վայելչութիւն առաջի կան մեզ. զայս ամենայն յաղթականաց ետ բաղդն ի վարձ: Ինքնին իսկ դեպք, ժամանակն, վառնդք, կարօտութիւն, փարթամ կողոպուտ պատերազմին՝ քան զյորդոր ձառիս քաջալերեալ զձեզ խրախուսանն:

Թէպէտ իբրև սպարապետ ընդունիցիք զիս և թէ որպէս զինուորակից, ոչ հանճարով և ոչ արութեամբ վերջացայց յօժանդակելոյ ձեզ: Զայսմանէ, թէպէտ և հիւպատ, հաւատարակից ընդ ձեզ, որպէս յուսացեալս եմ, դարձեցից. և դուք, եթէ կարիք, ի հպատակել առաւել քան ի հրամայել լինիք կազք:

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ. Կատիլինա:

ԲԱՆՔ ԿԱՏՈՆԻ ԸՆԴԴԷՄ ԽՈՐՀՐԴՈՑՆ ԿԵՍԱՐՈՒ

Յոյժ այլազգ են ինձ կարծիք, ո՛ հարք համապրեալք, ի կշռել զՀանգամանս ժամանակիս և զվառնդ, և ի խորհել զկարծիս ոմանց: Ընդունայն թուի ինձ երկայնել ձառս զպատուհասս՝ որոց ընդդէմ հայրենեաց, ծնողաց, զիւ և ընտանեաց զէն առեալ է. յատկահոլել զանձինս ի նոցունց իրատէ ժամանակս, քան նստել ի խորհուրդ թէ զինչ արժան իցէ սահմանել նոցա պատուհաս: Ալլոց եղեռանց, յետ ի գլուխ ելանելոյ նոցին՝ դնի պատուհաս. իսկ ասա՝ եթէ ոչ նախահաղ զառաջս առնուցուք, ընդվայր ապա ի կատարել իրացն խնդրեսցի վրէժ. յետ միանգամ ի ձեռս

անկանելոյ քաղաքին, չինայ ինչ այնուհետեւ պարտէլոյն: Այլ, ծո՛ւ և ծո՛ երդուեալ յանմահ դիս, առ ձեզ բողբեմ, որ զապարանս ձեր միշտ և զագարակս, զանդրիս և զնկարս նախամեծար եդիք քան զկատաղակաց պետութիւնս, եթէ ըղձալիս ձեր զյիշեսիկ, որ զինչ և իցեն, պահել ախորժիք, և գրգռանայ ձերոյ պարապել. սեմափեցարուք փոքր մի, և խնամ կալիք հայրապետութեանս: Զեն ատ բանք ոչ զբաժիկ և ոչ զանիրաւութեանց դաշնակցաց, ազատութիւն մեր և կեանք կան ի վտանգի: Խաղասմս բազում անդամ, ո՛ հարք համապրեալք, խօսեցայ յատենիս, բողբ կալեալ զղեղս գնայից և զագահութենէ քաղաքացւոց, և զբազում այսր ազագաւ հակառակորդս ինձ յաղուցի. զի որ ինձ և մեզ խնդրէիցի երբէք անկնատնալ ի ջարիս, էիարէի այլոցն անառակ չարագործութեանց՝ ներել: Թէպէտ բանք իմ արհամարհ ձեզ թուէին, սակայն հաստահիմն էր հաւատարակատութիւնն, և հզօր զօրութեամբն կարէր զյուղութիւնդ ձեր անտես առնել: Այլ արդ ոչ ևս են բանք զբարելաւ կամ զյոռի կենցայ, և ոչ եթէ սրբամբ և քանի հզօր իցէ աերութիւն ժողովրդեան Հռովմայ. այլ թէ այսօրիկ որպիսի ինչ և իցեն, մեռացե՛ն մեզ. եթէ մեօք հանդերձ անկցին ի ձեռս թշնամեաց:

Զգթութենէ ատատնօր և զհզօրութենէ իցեն բանք. ապաքէն ի բազմաց հետէ կորուսաք զատոյգ անուանս իրաց. քանզի շայլել օտարին ընչիք՝ առատաձեռնութիւն կոչի, և ժարհութիւն ի չարիս՝ արութիւն քաջութեան. այսպէս ահա ի խորս չարեաց հասեալ կամք: Թող առատաձեռնեսցին, քանզի այս է սովորոյթ ժամանակիս, յընչից գաշնակցաց. լցին ողորմածք ի գանձատաս հասարակաց, այլ մի զարիւն մեր շայլեսցեն, և մի առ ի խնայել անօրինաց ոմանց՝ զաւս օրէարն համարիչն ի կորուստ մատնեսցեն: Ձարտար և գեղեցիկս Կ. Կեսար փոքր մի յառաջ խօսեցաւ յատենիս զկենաց և զնահատանէ. Թուի թէ յառատապէս համարիցի նա որ ինչ պատմին զգժոխոց, և չհաւատայցէ զորոշումն չարագործաց ի բարեաց, և զկայս

նոցա խաւարինս, տխուրս, ահաւորս և դժոխըմբերս։ Ա՛ման այսորիկ իսկ և առաջարկէր՝ զինչ նոցա ՚ի դանձս հասարա-կաց առնուլ, և զնոսա ամենրա ՚ի պահեստի ու-նել. Թէ գուցէ ՚ի կալ ՚ինալ նոցա ՚ի Հռոմ, կամ յամենեսի դաւադրաց կամ ՚ի վարձիան խուժանէն յաւիշտակեացն բառնութեամբ։

Որպէս եթէ ժանտագործ և եղեռնաւոր մարդիկ ՚ի քաղաքիս միայն իցեն և ոչ ընդ բովանդակ Իտալիա. կամ թէ ոչ առաւել ևս զօրացուն անդ ժպրհութիւն, ուր տակաւ իցէ ընդդիմարկել զօրութիւն։ Ընդունայն է ապա խոր-հուրդ նորա՝ եթէ երկինչցուն ՚ի վտանգս նոցին. եւ եթէ ՚ի հասարակաց երկիւղին ինքն միայն չերկինչի, այնչափ ևս առաւել ինձ և ձեզ երկեղուկս արկանել։ Եւ արդ որ ինչ ղէնաւորեալ և զինեալ նորին սահմանեցէք, անշուշտ լե-րուք զի և զոջըն իսկ զօրացն Կատիլինայ և զդաւադրաց հատէք վէմս։

Որչափ գուբ արիագոյնս գործիցէք, այնչափ ևս առա-ւել նոքա սրատաբեկեալ վհատեսցին. իսկ եթէ փոքր մի մեղկացեալ զձեզ տեսանիցեն, անդէն վայրագագոյնս զբոհ տայցեն։ Մի համարիցիք թէ նախինք մեր զինուք ընդար-ձակիցին զպահպանութիւնս. եթէ այդպէս էր, պայծառագոյնս զինչ առ մեզ պարտ էր տեսանել. զի քան առնոքօք՝ յա-ճախագոյն է մեզ և նիզակակցաց և քաղաքացւոց և զինուց և երիվարաց բազմութիւն։ Ա՛յլ ինչ էր ապա որ զնոսա հոյակապս արար և երևելիս, որոյ և հեաք անդամ չերևին արդ. առանին աշխատասիրութիւն, արտաքոյ՝ արդարա-կորով վարչութիւն, և ՚ի խորհուրդս՝ միաք ազատ և ան-զբաղ ՚ի հեշտութենէ և յահաւից։ Սոցին վտանգ սիրե-այժմ ՚ի մեզ շռայլութիւն և ագահութիւն, կարօտութիւն հասարակաց և ձորհութիւն իւրաքանչիւրոց։ Գովելի զիարդ թամութիւն և ՚ի գաւարկութիւն հատեալ կամք. չեք խոիր ընդ յոսին և ընդ լաւ. զամենայն վարձս առաքինու-թեանց կապակ գահասիրութիւն։ Եւ չէն ինչ զարմանք, զի ուր իւրաքանչիւր որ ՚ի ձէնջ զանձին եւեթ խորհիցի,

և առանին հեշտութեան և ասա՝ արծաթոյ և շնորհաց ապաս տարցի, հասարակապետութեան լքեալ ՚ի վերայ յարձակեացն թշնամիք. այլ թողում զայս ամենայն։

Երդուան աղնուականք ՚ի քաղաքացւոց՝ հրայրեաց կո-րուսանել զհայրենիս, զաղգն գաղղիացւոց զօսերիսն ա-նուան Հռոմայ ՚ի մարտ հրաւիրեն. զօրագլուխ թշնամեայ՝ բանակաւ առ գուբս հասեալ կայ, և գուբ գանգաղիք տա-կաւին և երկմտիք թէ զինչ ընդ առնուլ պարապայն գոր-ծիցէք։

Ողորմեցարուք, քաջ է, ողորմեցարուք ՚ի մանկանն՝ առ սէր փառաց զառածեալ. արձակեցէք զնոսա զկն ՚ի ձեռին, այլ գուցէ հեղուսիլունգ ձեր այդ և գԹուրութիւն՝ ՚ի զինել նոցին գարձցի ձեզ ՚ի թշուառութիւն։ Ահագին ՚ի վերայ հատեալ ձեր վտանգ, և գուբ չերկինչիք այսի։ Սխա-լեցի, և կարի խոկ երկինչիք. բայց առ պղերգութեան և Թուլութեան՝ միմեանց ձեալով գանգաղիք։ Թերևս յան-մահ գիս յուսացեալ իցէք, որ բազում անգամ պահեցին զհասարակապետութիւնս զայս ՚ի ծանր ծանր վտանգս. բայց ոչ ուսանիք և ոչ կանայք աղերսանօք խոնարհին զիք յօդնականութիւն. այլ հսկելով, ժրութեամբ և խնամուն խորհրդով յաղթղի ամենայն։ Իսկ եթէ ՚ի վատութիւն հա-տեալ հեղգայեաս, վայրապար կարգաս զասասուածս ցա-սուցեալս ընդ քեզ և թշնամիս։

Ա՛ն նախնեաք մերոք՝ Տ. Մանլիոս Տորկուատոս ՚ի գալ-ղիական պատերազմի հրամայեաց ՚ի մահ տալ զորդին, զի ընդդէմ իշխանութեան հօրն ընդ թշնամեան կռուեցաւ. և պատանեական վեհաղունն զաարապայմանքաքօթութեանն ելոյծ մահաւարք զպատուհաս. եւ գուբ վերհրեալ գանգաղիք գեռևս թէ զինչ վտիս տայցէք անգութ հայրենադաւ մարդ-կան. իբր այն եթէ անցեալ կեանք նոցա զայժմու եղե-ռնան քաւիցեն։ Խնայեսջիք ՚ի պատիս իշխանութեան Լեն-տուլեայ, եթէ երբեք խնայեաց նա յամօթ պատկառա-նաց, ՚ի համբաւ իւր ՚ի դիս և ՚ի մարդիկ. ներեցէք Կեթե-գեայ մանկութեանն, եթէ այս առաջին նուազ իցէ զինն առ-

նըլոյ նորա ընդդէմ հայրենեաց: Եւ զինչ զԻաբինեայ, զԱահաւիլեան և զԻեսաբեայ ասացից. եթէ առողջ միաք էին նոցա, ոչ արդեօք յայնպիսի խորհուրդս ընդդէմ հասարակապետութեան մտաբերէին: Կնիք բանիս, ո՛ հարք համագրեալք, եթէ գոյր եղև ազգս ի վերնադասոյ գահանէ, երդնումի՛ ի դիս, զի համբերիմ արդեօք դիւրաւս, որպէս զի խրատեալ՝ ի վանդիմն՝ ուսանիցէք չարհամարհել զբանիս: Այլ արդ յամենուստ պաշարեալ կամք. Կաթուղիկոս ունի զօրօք զանոց. այլք՝ ի պարսպի և՝ ի քաղաքամիջի են թշնամիք. չիք հնար խորհել ինչ կամ գործել՝ ի ծածուկ. փութալոյ պէտք են:

Եւ քանզի եղեռնաւոր խորհրդով անօրէնն քաղաքացւոց անկաւ պետութիւնս՝ ի վանդ մեծ, և վկայութեամբ Վրաստեայ և Աղբրդոցայ յաղթահարեալք խոստովան եղեն նոքա զկոտորածս, զերդեհս և զայլ գժնդակ և անդուլ եղեռնսն ընդդէմ քաղաքացւոց և ընդդէմ հայրենեաց պատրաստեալս, ինձ Թուի զի խոստովանեցելոցն՝ որպէս յայտնեաց՝ ըստ նախնեացն մերոց օրինաց պարտ է պատուհաս մահու կապել՝ ի վերայ:

ՆՈՑՆ.

ՍԿԶԲՏՔ ՊԱՏԵՐԱԶՄԱՅ

Սկսաք, այսոքիկ ուրեմն են ազէտք՝ զորս զհետ իբանոց առեալ ձգեն պատերազմունք: Որպիսի կոյր մեղեցութիւն վարէ զհեթ ազգ մահկանացուաց. աւուրըստ աւուր առեալք առեան նոցա յերկրի, և այնոքիկ լի ազէտիւք. առ ինչ իցէ ձեռնել նոցա և ևս զմոռալուան մահ. առ խիճ յաւելուլ վիշտս դժոխըմբերս՝ ի գառնութիւն անդր, ուրով լցին զիք զկարճատև զայս կենցաղ: Եղբարք միմեանց գոլով, զմիմեանս զիշատեն՝ անագորոյիք քան զգազանս վայրենիս:

Ոչ ոգորի առիւծ ընդ առիւծ, և ոչ վագր ընդ վագր մաքառի. զհամազգեաց ևեթ գարանին նոքա: Մարդ ևեթ բանաւոր գժնդակագոյն քան զանբանս՝ և առ համազգիսն անզգամ: Եւ զինչ չահ՝ ի պատերազմացդ. միթէ չկայցէ երկիր առաւել քան զկար միջակութեան մարդկան: Եւ զինչ ապա, բայց անափառութիւն և իղձ համբաւի աշխարհակալութեան յուզէ պատերազմունս՝ ի գաւառս բազումս. և մի ոք՝ ի ցասմանէ դիցն առաքեալ յաշխարհ՝ անափառութեան իւրում զոհէ գազանաբար զբազումս. հարկ է ամենայնի մատնել՝ ի կոտուած, ամենայնի թաթաւել յարիւն, ամենայնի ձարակ գոլ հրոյ, և ապրելոցն՝ ի հրոյ և՝ ի սրոյ՝ սովալուկ կորնչել. որպէս զի այր մի՝ բոլոր մարգկութեանն ոսկերք՝ բերկրեսցի և անափառեսցի ընդ աւեր համաշխարհական: Աւաղ այլանդակ փառացն. և իցէ՞ իակ մարթ ըստ արժան բառականին գարշել յայնպիսեաց և եպերել զայնպիսեան օտարախորհրդս՝ ի մարգիս. Թենէ: Զեն իակ և չեն այնպիսիքն դիւցազունք, և ոչ իակ մարդիկ, այլ նզովելիք գարուց՝ ի գարս՝ որոց զարմանալիս կարծէին գոլ: Ո՛հ, քանի՞ զգուշութեան պէտք են Թագաւորի՝ ի պատերազմ. չէ իակ բառական Թէ իցէ այն արդար, այլ պարտ է զի և կարևոր իցէ յօգուտ հասարակաց. ոչ է օրէն հեղուլ զարիւն ժողովրդեան, բայց միայն առ՝ ի փրկել զնոյն ինքն յանհնարին կարիս իւր: Բայց բազում այն է՝ զի հրապոյրք մարդահաճոյից, ձախողակի պարծանք, ընդունայն վրէժիմնդրութիւն, զօշաքաղութիւն ընդ գերեզիկ կերպարանօք պատարուակեալ, և գաղանի համախոհութիւնք, առեալ ձգեն զԹագաւորս՝ ի պատերազմ՝ որ ածէ՝ ի վերայ նոցա Թշուառութիւն, և ամենայնի վանդ տարապարս, և նոյնչափ աղէտս ժողովրդոց նորա՝ որչափ Թշնամեաց:

ՖՆՆԵԼՈՆ. Տիլեմաք:

ՍԵՐ ՄԻ ՍԻՐԱԿՈՒՍԱՑԻ ՋԱՋՍՏՈՒԹԵՆՆ ԳԵՐԵԶՄ

Անդծերոն (Նիկողայոս) պատկառելի ախոյեան և հանդարտութեամբ, որոյ որդիք երկու՝ ի պատերազմի անդ անկան՝ միայն ժառանգիք ազգին և մեծութեանցն, հրաման ետ ծառայից իւրոց յառաջ վինքն մատուցանել՝ ի բեմն առեղծուածոյ: Եւ իբրև եկն, դադարեցին ամենայն ամբոխն՝ ի խոր լռութիւն, և ասէ. Զիք ոք հայր եղուկ քան զիս, և քան զբնաւ սիրակուսացիսդ զաղէտս պատերազմիս կրեալ, յորում որդիս կրկին կորուսի՝ զսիրելիսն և զյուսդ ծերութեան իմոյ: Զարմանամ իսկ ընդ արիութիւն ձեր և ընդ բազդ. զի՝ ի վերայ հայրենեաց զկեանս փոխանակեցին՝ զոր վաղ կամ անագան անխրաժարելի օրինայ բնութեանն տուժել հարկ էր. այլ ոչ կարեմ անընդոստ կալ՝ ի կարեվեր խոցոյս՝ որ մաշուամբ նոցա հարաւ չիս, և չափշռել և չհօրչել յաթենացւոց՝ որ պատճառք եղեն մարտին մարդախաշոշք, և զիս անզաւակեցին: Այլ քան զայս վիշտս իմ՝ առաւել դառն են ինձ նախատինք հայրենեաց, որպէս լռել կարեմ. և անմահ նախատինս հրապոյրդ անգթութեան ածեն զնովաւ: Արժանի իսկ են ամենայն պատուհասիդ և չարեաց աթենացիք՝ որք զտարապարտ պատերազմդ յարուցին. այլ ոչ վրէժինդիր մեղայ արդարադատ գիք պատուհասեցին զնոսա, և լի զվրէժ մեր լուծին: Եւ արդ վասն զի զէնընկէցք նուաճեն՝ ի մեզ զօրավարք նոցա՝ յուսով շնորհել կենացն, որպէս առանց կշտամբութեան զկեանս նոցա բառնայիցեմք, կոխելով զվրաւունս աղգաց, և նախատիկեմք զյաղթութիւն մարտին՝ խուժադուժ անգթութեամբ: Համբերիցէք առնառել զիսաս ձեր առնգեալ ընդ ամենայն երկիր՝ զի ասիցեն. ազգ՝ որ նախքան զամենայն ազգս՝ ի քաղաքի իւրում կանգնեաց տաճար Ողորմութեան, բնաւ և ոչ եգիտ՝ ի քաղաքի ձերում ողորմութիւն: Ա՛յս էին յաղթութիւնք և ախոյեանք՝ որ

յաւէրժ պանծացուցանեն զքաղաքս, և ոչ գթութիւն՝ ի նուաճեալս, զգաստութիւն՝ ի ծագ բախտին, և երկիւղ՝ զի մի պերճ և հպարտ ճոխութիւն՝ ի ցասումն ածցէ զդիս: Ցիշեք ապաքէն՝ զի սա էին Նիկիաս, զորոյ զբազդ սահմանեք, զդատ ձեր յաւէնի աթենացւոցն էտ, ամենայն զգրութեամբ իւրով և ճարտարութեամբ բանից շրջել ջանացեալ զնոսա՝ ի խորհրդոց պատերազմիդ: Եւ ի դատակնիք մահուդ հատուցումն արդար քաջի զգրաւարին նախանձաւն՝ զոր վասն ձեր նախանձեցաւ: Այլ ինձ լաւ է մահու չարաչ մեռանիլ, քան զանիրաւութիւնդ զայդ տեսանիլ յաշխարհին իմում՝ ի քաղաքացնոց իմոց ներգործեալ:

ՌՈՒՆՑՆ. Հ ևախօստրիևն։

ԹԷ ԸՆՏՐԵԼԻ Ի ԹԱԳԱՒՈՐ ԽԱՂԱՂԱՍՆԵՐ ՌԱՆ ՋԱՋՈՂԱՆԿՆ ՄԻՍՑՆ Ի ՄԱՐՏՍ

Թագաւոր՝ որ՝ ի խաղաղութեան և՛ի պատերազմի գիտիցէ վարել զժողովուրդ իւր, և չիցէ կարօղ յերկոսին և՛ս, կիսամամնեայ է նա թագաւոր: Սակայն զաջողակն և՛ի մարտի զթագաւոր՝ ի կրնտ եդեալ ընդ իմաստուն թագաւորն, որ թէպէտ անհմտա՝ ի մարտ, այլ՝ ի կարեւոր ժամանակի գիտիցէ մղել զայն՝ ի ձեռն զօրավարաց իւրոց, նախամեծար զսա քան զնա համարիմ: Թագաւոր պատերազմասէր՝ զակառակ միշա՝ ի պատերազմեաս, զա՝ ի տարածանել զգեռութիւնն իւր և զիսաս, խուժան աւերանաց ածէ զաշխարհան: Զինչ օգուտ իցէ ժողովրդեան՝ նուաճել թագաւորի իւրոյ զազգս և զգունս, և՛ե չիցէ ինքն բաբեբաստիկ ընդ նուաճ: Այլ զի երկայն պատերազմաց գՀեա գան և չարիք յոլովք, նոցին խակ չաղթահանացն՝ ի չիտես անդ զսանցեալ: Յուշ լիցի՝ քանի ծանրագնի եղև Եզեդայ յաղթանակել՝ ի վերայ Տրոյա-

դայ. զի զամն տան մեաց նա անտէրունէ անթագաւոր: Ամենայն ինչ վեր ի վայր դղրդի պատերազմաւ, անկանին և օրինք և մշակութիւն և արուեստք. և լաւագոյնք իսկ ի թագաւորաց զայնու ալիկաւ սակաւն ի մեծագոյնն ի քաղեաց, ներել ապերասան համարձակութեան և զբաս վարել ի գործ: Քանիք ի քարագործաց, ի ժամանակի խաղաղութեան պարապուրք պատժոց, ի վերդովմունս պատերազմաց վասն յանդգնութեանն վարձատրին: Աչխարհակալ արբեցեալ ի փառաց, ոչինչ ընդհատ քան զպարտեալն կործանել զազգ իւր յաղթական: Թագաւոր անբաժ ի բարեմասնութենից՝ որ ի ժամանակի խաղաղութեան են կարևոր, չկարէ տալ ժողովրդեան իւրում ի վայելուչն զարգասիս յաղթութեան մարտի. որպէս ոք զի պաշտպանիցէ զանդաստանս իւր ի յափշտակութենէ գրացւոյն, և զնորայն իսկ գրաւիցէ, այլ չգիտիցէ վարել զայն և աւերմանել առ ի ժողովել զհունձս: Յաւէր յապականութիւն և ի կործանումն թուի այն պիսին ծնեալ, և ոչ ի յարդարել զբարեկենդանութիւն ժողովրդեան խմաստուն տեսչութեամբ:

Մասիսյոք արդ առ թագաւոր խաղաղասէր: Ապաքէն չէ նա բաւական յաշխարհակալութիւնս մեծամեծս, և կամ զի տպաւորագոյնս ասացից՝ չգոնիէ նա զբարեկենդանութիւն ժողովրդեան իւրոյ առ ի նուաճել զազգս յաղթաբաւ: Այլ եթէ արգարև կարող իցէ նա բարւոք առաքինորդել ի խաղաղութեան, ոչ իւիք կարօտի ի պահպանել զժողովուրդ իւր յերեսաց թշնամեաց: Եւ թէ որպէս, լուարուք: Քանզի արդար է նա հեզ և բարեհամբոյր ընդ սահմանակիցս իւր, չոյ երբեք նոցա պատճառս խառվելոյ զնաղաղութիւն. հաւատարիմ է ի դաշինս, և սիրեն զնա նիզակակիցք իւր՝ վասն հաւատալ ի նա անկասկած: Եթէ իցէ ոք ի սահմանակից նորա անխաղաղասէր, գոռոզ և ամբարտաւան, այլք ի նոցանէ առ հասարակ կասկածեալ ի խռովասէր դրացւոյն, և չունելով ինչ խնդիր ի խաղաղասէր թագաւորէն, միաբանին ընդ բարւոյն՝ զի

մի հարստահարեսցին ի չարէն: Ուղղութիւն, հաւատարմութիւն և հեզութիւն՝ կացուցանեն զնա իրաւարար որոց չուրջ զնա բնակին սէուռութիւնք: Եւ ուր թագաւոր յանդուգն առնէ և այլոց ամենեցուն թագաւորաց, և նշաւակ զննուց նիզակակցութեան նոցա, նա փառաւորի որպէս հայր և պաշտպան յամենեցունց ի նոցանէ:

Ախորճիկ են բարեմասնութիւնք նորա առ արտաքինս. իսկ ի ներքս կարևորագոյնք և: Զի եթէ բարւոք առաջնորդէ նա ի խաղաղութեան, չայտ է զի խմաստնագոյն օրինօք վարի. խափանէ զղեղնութիւն, զվեղկութիւն և զամենայն արուեստս տածիչս ախտից. ծաղկեցուցեալ զսիտանին առ կարևոր սէստս կենաց. և մանաւանդ սովորեցուցեալ զժողովուրդ իւր յերկրագործութիւն, որով զերծուն առատապէս պիտոյք. և ժողովուրդն ուսեալ աշխատասէր, անպաճոյճ ի կեանս և սակաւապէտ, գիւրաբ ըզպարենիկն հայթայթելով ի մշակութենէ անդաստանացն, աճէ և բազմանայ: Անդ է տեսանել ժողովուրդ անբաւ, զազ քաջառողջ հուժկու և կորովի, ոչ կնաւտեալ ի հեշտութենէ, կիրթ յառաքինութիւն. ոչ ի հրապոյրս վատ և փափկասուն կենաց զակատեալ, արհամարհող մահու, որ զմեռանելն լաւ համարի քան զկորուստ ազատութեան՝ յոր վայելէ ընդ տեսչութեամբ խմաստուն թագաւորի, որ ընդ բանիւ և ոչ թէ ընդ իւրև հնազանդեցուցանէ զժողովուրդ իւր: Եթէ հէն սահմանակից ի վերայ յարձակեսցի, թերևս ազգն այն ոչ գոցի քաջամարտ ոչ ի բանակ հարկանել, ոչ ի ճակատ յարդարել, և ոչ ի պաշարումն քաղաքաց զկաղմածս մենքենայից ուղղել. այլ բազմութեամբն և արիութեամբ և ժուժկալութեամբն ի վաստակս և սովորութեամբն յաղթաթութիւն և կորովութեամբն ի մրցումն և անհնկուն յարկածից առաքինութեամբն գոցի անպարտելի: Եւ եթէ չդիտիցէ թագաւոր ինքնին զօրավարել՝ զօրավարս կացուսցէ հմուտս, վարեալ նոքաք՝ անկորուստ զիւրն պահելով զինչանութիւն, և նպաստս ի կռիւ զինիզակիցս իւր առեալ զազգս. և որք

ընդ ձեռամբ նորա լցեն, լաւ համարեցան զմահ քան մնանել ընդ լծով բռնաւոր և անիրաւ Թագաւորի. և զկնի իսկ փոխանակ նորա մարտիցեն: Տես ինձ քանի պատապարանք 'ի վանդա իսկ մեծամեծս պատրաստ կան նմա: Ապա ուրեմն Թագաւոր խաղաղասէր՝ որ անհմուտն լցէ մարտի, Թէպէտ և Թերի գանի՝ չկարելով ընուլ զմի 'ի կարեւորագոյն պաշտամանց իւրոց և յաղթել Թշնամեաց, սակայն զեր 'ի վերոյ է քան զԹագաւոր աշխարհակալ՝ որ վերջացեալ 'ի բարեմասնութեանց կարեաւորաց 'ի խաղաղութեան, քայլ ևեթ լցէ 'ի պատերազմի:

ՖԵՆԵԼՈՆ. Ցևիևաք:

ԹԱԳԱՒՈՐԻ ԶԻ ԲԱՒԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻԻՆ ԵՒԵՔ

Ոչ, Տէր արքայ. Թագաւոր՝ որ զինուորական առաքինութեամբք ևեթ լցէ զարգարեալ, 'ի խեթի կայ՝ չլինել մեծ առ յաղայն: Ալան իւր միայն է ջանացեալ, և ոչ ինչ արարեալ Ժողովրդոյն. և Ժողովրդոյն է միշտ յապահովել զփառն և զմեծութիւն Թագաւորին: Համարեսցի Թերևս աշխարհակալ ոք մեծ, այլ ոչ երբէք Թագաւոր մեծ. յաղթեսցէ պատերազմաց, այլ չկարասցէ սիրտ նուաճեցէ ոչ. տիրեսցէ 'ի տարաշխարհս, այլ սպառեսցէ զնոսա. հակիրճ ասացեալ, զօրավարեսցէ բանակաց քաջութեամբ, այլ չարաչար անառեսցէ զհնազանդեալսն:

Իսկ Թագաւոր, Տէր արքայ, որ միայն յերջանկութեան հպատակացն խնդրիցէ իւր փառս, առաւել ընտրեսցէ զխաղաղութիւն և զհանդարտութիւն՝ որում միայն է երանելիս առնել զնոսա, քան զմարտից յաղթութիւնս՝ որ իւր միայնոյ իցեն, և զնոսոն պարծանան փոպաբշիցեն. Թագաւոր՝ որ ոչ այլ ինչ համարիցի զանձն՝ բայց պաշտօ-

նեայ Ժողովրդոյն, և գանձ պատուական՝ զսիրտս հպատակացն. Թագաւոր՝ որ օրինացն և օրինակացն ազօնութեամբ՝ հալածիցէ յաշխարհէն զանկարգութիւնս, զարբին սովորութիւնս յուղղութիւն ածիցէ, 'ի հաստոլ պահիցէ զվայելչութիւն վարուց հասարակաց, զմեծնայն ոք 'ի կարգին ունիցէ, զղեխութիւն և զպատահականութիւն անձիցէ՝ որ քան զմարտս պատերազմաց և քան զդժնդակ հարուածս առաւել օրհասարեր են ազգութեանց. պաշտման և կրօնից հարցն համարձակութիւն տայցէ՝ պայծառութիւն և մեծվայելչութիւն, և միահարթ հաւատարմութիւն՝ որ զմեծարանացոյն անկորուստ պահէ 'ի Ժողովրդեան. ալիդ կալցի զսուրբ աւանդ հաւատոցն՝ ընդդէմ ամենայն յանդգնութեան խեթ և սատարակ ոգւոց. որ զհպատակսն իրրև որդիս տեսանիցէ, զարքայութիւնն՝ իրրև զաղգատոհմն իւր, և զիշխանութիւնն վարիցէ համակ յերջանկութիւն որոց հաւատացին նմա զայն. Թագաւոր այսպիսի՝ յամենայն ժամ՝ եղիցի մեծ. զի և է իսկ 'ի սիրտս Ժողովրդոյն: Պատմեսցեն հարք որդւոց զերանութիւն կենաց իւրեանց առ բարեգործ ազերամբն. սոքա զգուշեցեն ցՁեռուսն իւրեանց, և յիշատակն ազգէ յազգ պահեալ 'ի տունս տունս, եղիցի արձան ընդակից՝ կանգնեալ 'ի ցանկի որմոյն հայրենականաց. յաւերժացուցանել յամենայն յաւիտեանս զանուն բարեհամբաւ Թագաւորին:

Ոչ, Տէր արքայ, ոչ եթէ անդրիք և արձանագիրք իցեն՝ որ անմահացուցանիցեն զԹագաւորս. Թէ վասն անագան՝ այն ամենայն խաղալիկ լինին ժամանակին և յեղափոխութեան առօրեից: Հռովմ և Յունաստան 'ի նանիր յաձախեցին երբեմն յանբաւս զպատկերս Թագաւորացն իւրեանց և կայսերաց, և զմեծնայն հանճար արուեստին Թափեցին՝ պատուական ընծայեցուցանել զնոսա հանգերձելոց յաւիտեանն. 'ի նրսոնա արձանաց անտի բոլորեցունց հաղիւ մի ևեթ հասեալ կայ ցմեզ: Որ ինչ 'ի կուռ և 'ի պղինձ գրոշմի՝ փուխով եղծանի. նակ որ 'ի սիրտս՝ յաւիտեան կայ:

ՄԱՍԻԼԵՈՆ. փոքր քառասնորդք:

ԴԻՄՈՍԹԵՆ ՑԱՂԱԳԻՐ ՊՍԱԿԻՆ


Սակայն զԼեճամեճան՝ ի վարչութեանցս և՝ ի գործոց՝ ի բաց Թողում. զի նախ՝ այնպէս համարիմ, թէ ըստ կարգի՝ զանիրաւին համարս պարտիմ տալ. և երկրորդ՝ թէ և ինչ ոչ տացից զայլոց քաղաքավարութեանցս, համայն իւրաքանչիւր ուրուք՝ ի ձէնջ վկայ են ինձ միաք:

Բայց զբանան զորս դա վեր՝ ի վայր հարեալ շտոգանեաց յաղագս առընթերագիրն օրինաց, ասասուածովքն երդուեալ, ոչ զձեզ ինչ նոցին խնամուա եղեալ համարիմ. բազմաց՝ ի նոցանէ և ոչ ես ինքն ինչ մարթացայ կալ՝ ի վերայ: Ապա պարզաբար ընդ ուղիղ ճանապարհ զերաւանց խօսեցայց:

Ա. ինչափ օտար է յինէն անպարտական զանձն ասել համարոյ, որպէս դա այժմիկ բազում անգամ չարախօսեր և այնդեր, որպէս զի և խոստովան ևս լինիմ զամենայն ասուրս կենաց իմոց պարտապան լինել համարոյ զայնմ ամենայնէ, որոց գամ մի մասակարար կամ անօրէն երևեցայց՝ ի միջի ձերում: Իսկ զորոց յիմոց ընչից ինձէն՝ ի կամակարուց եառս ժողովրդեան, և ոչ մի օր պարտ գտայիմ զանձն համարս տալոյ, լսես, Եաքինէս, և ոչ զայլ ոք ամենեքեան, թէ և յինուանց անտի ոք իշխանացն լինիցի: Զի՞ որ այն օրէնք լցեն՝ այդչափ անիրաւութեամբ և ամարդութեամբ լի, մինչ զի և որ յիւրոցն ինչ տայցէ, և գործ մարդասիրութեան և առատութեան գործիցէ, զրկել զնա՝ ի ընորհակալութենէ, և մատնել՝ ի ձեւս զրպարտչաց, և զնոսա՝ համարատահանջս սրոցն կացուցանել՝ ի վերայ գլխոյ նորա. փարգատա, և ոչ մի ամենևին: Իսկ թէ գա ասէ, թող ցուցանէ, և ես հանդերձեալ և լուռ եղէց: Այլ չէք ուրէք, ոմ արդ աթենացիք: Բայց դորա զրպարտել առեալ, քանզի՝ ի տալն զինչս՝ ի վերայ տեսլարանացն կայի յայնժամ, առեանն, ասէ, գովեաց զնա մինչ դեռ

տակաւին պարտականն էր հաշիւ տալոյ: Ոչ և վասն միոյ երկիք յորոց հաշուի պարտականն էի, այ զրպարտիչ, այլ վասն որոց եառուս: — Բայց և պարտպաշէն էիր, ասէ: — Եւ յայդ իսկ սակս իրաւամբք գովեցայ, զի զծախսն մատուցի, և ոչ ինչ հաշուեցայ: Զի հաշիւք՝ հաւատաեաց և քննողաց կարօտին, իսկ տուրքն՝ դոհութեան և գովեստի է արժանի: Վասն այսորիկ գրեաց և սա զինէն զայդոսիկ:

ԴԻՄՈՍԹԵՆ:



ԴԻՄՈՍԹԵՆ ՑԱՂԱԳԻՐ ՊՍԱԿԻՆ

Փիլիպպոս զԵւբիա յիւր վաթրեալ՝ պատուար պատրաստեաց ընդդէմ Ա.տաիկեաստանի, որ ձեռն արձակեաց՝ ի Մեգարա, որ զՈրէոն առ, որ զՊորթմոս բրեաց, որ կացոյցն Յորէոս զՓիլիսաիդես բռնաւոր և Յերեսբիա զԿլիտարքոս, որ զՀեղեսպոնտոս նուաճեաց, որ պաշարեաց զԲիւզանդիոն, և զհելլենական քաղաքանին՝ էր որ սասակաջինչ արար, էր յոր վաթրանդիս տարեալ գաղութ բնակեցոյց. որ զայս ամենայն արար և կատարեաց՝ բուռն ինչ եղէ արդեօք, և զրկեաց զլացաւ և զրժեաց դաշանցն և եղծ զհաշտութիւնն, թէ ոչ. և արժան էր արդեօք երևեալ ուժիք՝ ի հելլենացւոց՝ կանգնել կալ նմա կրճիմ՝ ի գնացից անտի, թէ ոչ: Եթէ այդմ էր արժան, այլ Ելատայ երևեալ կալ Միւսացւոցն անուանեալ առ և աւար, մինչդեռ տակաւին ողջ էն և՝ ի միջի աթենացիք, ապա ընդ վայր վաստակ եղէ ես խօսել զայդցանէ, ընդուներ Ձգնեցաւ և քաղաքս՝ ինձ անսացեալ. և այն ամենայն որ գործեցաւն՝ լսեին ինձանէ, և իմ միաք: Իսկ եթէ պարտէր յառնել ուժիք ընդդէմ այդոցիկ անոյեան ընդդիմադար, ոմ այլ արժան էր լինել՝ բայց միայն ժողովրդեանն աթենացւոց:

Արդ զայդ անօրինեցի ես յայնժամ. և դէտ ակն 'ի վերայ եդեալ՝ զի զամենայն մարդիկ նա 'ի ծառայութիւն արկանէը, ընդդէմ կացի, և անդադար եղէ 'ի փոյթ խօսելոյ և խրատելոյ՝ մի Թողուլ լքանել զայդոսիկ Փիլիպպոսի:

ԴԻՄՈՍԹԷՆ:

ԱՏԵՆԱՐԱՆՈՒԹԻՒՆ ՍՈԿՐԱՏԱՑ

Չեօթանասնամեակիւք անցեալ, զայս առաջին նուագ յանդիման լինիմ ատենի: Աստանօր տարաշ բանից և ձևք, ամենայն ինչ նոր է ինձ. և զի 'ի լեզու օտար հանդերձեալ եմ խօսել, այս մի ինչ խնդիր է ինձ 'ի ձէնջ, միա դնել փաստից քան բառից. զի ձեզ պարտ է առնել զարդարութիւն, և ինձ խօսել զշմարտութիւն:

Եւ յետ սրբելոյ յանձնէ զկէզա ամպարշտութեան, անցանէ յերկրորդ գլուխ ամբաստանութեանն: Չկղծուցիչ մանկտւոյն աթենացւոց ամբաստանիմ. ցուցցեն զմի ոք յաշակերտաց իմոց, զոր 'ի յոռութիւն ձգեալ իցեմ: Չքաղաքացի 'ի նոցանէ տեսանեմ յատենիս. յոտն կացցեն, վկայեսցեն ընդդէմ զեղծուցողին իւրեանց: Եւ եթէ դոքա ակն ածեն լինին, ընդէր հարք և եղբարք դոցա և ազգականք չկարդայցեն զնաստութիւն օրինաց 'ի վերէմբնդրութիւն, և ընդէր Մելիտոս զվկայութիւն նոցա անտես առնիցէ: Չի նոքա ոչ միայն չամբաստանեն զինէն, այլ և 'ի թիկունս լինի հասեալ կան:

Ոչ զգայարութիւնք Մելիտեայ և Անիտոսի դատապարտեսցեն զիս 'ի մահ, այլ առելութիւն անափառ և անիրաւ մարդկանն զորոց նշաւակեցի զգիտութիւն և զարհամարհս. առելութիւն որ զբազումս 'ի լաւից կորոյս և կորուսցէ, զի չհամարիմ թէ մահուամբ իմով յագեսցի:

Զառելութիւնն զայն յանձն ձգեցի ցանկութեամբ խելամուտ լինելոյ զօրութեան հրամանին պատասխանելոյ դեղափական հարցկին, որ վէհ քան զամենայն խնամատունս եցոյց զիս: Աստանօր 'ի բարկութիւն բրդեցան դատաւորք. բայց Սակրատայ յառաջ ածեալ զբանան, ասէ. Զարմացեալ ընդ պատգամն, հարցի զնախանաւորս յամենայն կարգէ քաղաքացոյց. և ամենայն ուրեք գտի յանդգնութիւն և կեղծաւորութիւն: Չանացայ երկմտեցուցանել զնոսա ընդ իւրացանչիւր քաջութիւն, և արարի ինձ ոսոխս անհաշտելիս. և 'ի միա առի՝ զի չէք զբ խնամատուն, բայց միայն Աստուած. և զի պատգամախօսին այլատացութեան այս էին խնամատք, զի որ չհամարի զանձն խնամատուն՝ նա խնամատադոյն է 'ի մարդիկ:

Եթէ վասն անցուցանելոյ իմոյ զամս բազումս 'ի խընդիրս վտանգաւորս զիս ամբաստանիցեն, իմ պատասխանի այս է. Արհամարհելի են կեանք և մահ՝ առ 'ի լինել սիտանի մարդկան: Դիտացի՝ զի 'ի հրահանգել զնոսա սահմանեցին զիս երկինք. և որ զվտանգ մահու յանձն առեալ՝ ոչ լքի զդաս իմ յոր կացուցին զիս զօրավարքը Ամֆիպօլիս, 'ի Պոտիէա և 'ի Դելիոն, պարտ է ինձ արիագոյն ևս կալ ուր կացուցին զիս դիք 'ի միջի ձերում, և չկարեմ դասալիք լինել առանց ընդդէմ դառնալոյ հրամանացն նոցա, և զվատութիւն յանձն առնլոյ:

Եւ ոչ այսչափ միայն. այլ թէ և անպարտ կամիցիք արձակել զիս՝ զի մի ևս խօսիցիմ, ասացից ձեզ, Դատաւորք արդարք, և սիրելիք ինձ. Աստուծոյ պարտիմ հնազանդել առաւել քան ձեզ. և մինչև իցէ չիս չունչ, ոչ դադարեցայց, որպէս մինչև յայժմ, յասելոյ համարձակաձայն ամենեցուն՝ որ ընդ առաջ լինին ինձ: Ո՛չ ամօթ համարիցիք հետամուտ լինել մեծութեանց և փառաց, և անփոյթ առնել զգանձս խնամատութեան և զշմարտութեան որ հոգւոյդ ձերում զարդ գործէն և կատարումն: Թաղանձեցուցից զնոսա ժառանգութեամբ և խնդրով, և ամաչեցուցից ընդ կուրութիւն իւրեանց և ընդ սուտ առաքի-

նուէիւնս, և ցուցից զի նախամեծար առնեն քան զամենայն բարիս որ ինչ արհամարհանաց են արժանի:

Զայսոսիկ հրաման է ինձ Աստուծոյ քարոզել անլռելի մանկանց և ծերոց, քաղաքայնոց և օտարաց. և որով՝ ի հնազանդելն իմում հրամանի նորա՝ պարգեւք մեծագոյնք պարգեւին ձեզ, նովին իսկ՝ ի մասնելդ ձերում զիս՝ ի մահ՝ մերժեսջիք զպարգեւն Աստուծոյ, և ոչ ես զոք գտանիցէք յայս նախանձ վառեալ: Ձեզ պաշտպան կամ յատենիս մինչ Թուիմն պաշտպանել անձին. զի Թէպէտև Անիտոս և Մելիտոս կարեն զսպարտել զիս և աքսորել և բառնալ ՚ի կենաց, այլ ինաեւէ ինձ ոչ կարեն. և աւաղելիք են քան զիս, զի են անիրաւք:

Այլ ՚ի խուսել ՚ի հարուածոյ նոցա, ոչ ըստ օրինակի այլոց ամբաստանելոց հնարս գաղտնածածուկ ՚ի կիր արկի կամ յայտնի սպերանս: Այլ յոյժ մեծարանաց և ոչ գումի հնարեցայ արկանել ՚ի ձեզ արտասուօք խնդրել կամ որդւոց իմոց կամ բարեկամաց, շուրջ ածեալ զնոսա զինեւ. զի զգումի ՚ի տեսարանի արժան է յուզել ողորմելի տեսլեամբք, իսկ ասա ՃՀմարտասիրութեան ևեթ պարա է ՚ըսել առնել զձայն: Երդուեալ իսկ է ձեր յանդիման ամենեցուն՝ դատել ըստ օրինաց. արդ եթէ երդմնահարուածեան հրապոյրս ՚ի ներքս արկից՝ ամպարշտութեան գոյդ մեզ պատարա: Այլ ես խնամոգոյն ևս եմ քան զհակառակորդս իմ թէ է Աստուած, և անվեհեր յարդարութիւն նորա և ՚ի ձերդ լինիմ ապաստան:

ՊԱՐԹԵԼԵՄԻ. Ողևոր. Ալեքսանդրեան:

ԵՍՓԻՆԷՍ ԸՆԴԴԷՄ ԿՏԵՍԻՓՈՆԻ

Դիք ՚ի մեի տեսանել զՄոլոն՝ որ դեղեցիկ դեղեցիկ օրինօք զընկերհաշտութիւնս զարդարեաց, զայրն Ճարտա-

րամիտ և զօրէնագիր քաջ, որ իբրով վայելչականաւն ի մասատութեամբ հայցէ ՚ի ձէնջ, մի և մի բնաւ զՊիտոաթեն խօսան նախամեծար ընտրել քան զերգմունդ և զօրէնան. զԱրիստիդես, որ զհարկս Հելլենաց բարեկարգեաց, յորոյ ՚ի վախճանելն՝ զդատերան ժողովուրդն ամուսնացոյց, որ արդ կոծ առնու ՚ի վերայ անարգանաց արդատութեան, և հարցանէ՝ Թէ համբուն ամաչեցէք ոչ, զի զԱրիստիտես զելեացի, այն որ երեր եմոյծ յԵլլադա զՄատոց ոսկին, և եկ ընակացեալ էր ՚ի քաղաքին և հիւր ժողովրդեան աթենացւոց, փորը միւս ևս և ՚ի սպանանել եկեալ էին հարքն ձեր, և ՚ի հասարակ կամաց հաւանուԹենէ տարագիր արարին ՚ի քաղաքէս և յամենայն երկրէ տերութեան իւրեանց. իսկ դուք՝ զՊիտոաթենէս, ոչ զատ՚ի Մարացն զոսկին բերեալ, այլ և զկաշառաբեկին, և արդ ևս կաշառաքն յղփացեալ, ոսկի պսակաւ հանդերձիք արտասուրեալ և զՊեմիստոկլէս, և զանկեալսն ՚ի Մարաթեան և ՚ի Պլատիէս, և զնոսին իսկ զնախահարցդ չերիմս, ո՞չ կարծիցէք անգ հաչել հաւաչել յոգւոց հանել, եԹէ դա որ ինքնին իսկ խոստովան լինի խաւն ընդ խաւժգուժան հակառակ հելլենացւոց մրցեալ, պսակի առնիցի արժանի:

ԵՍՓԻՆԷՍ:

ԿԱԼԱՎԻՈՍ ՇՐՋԻ ՋՈՐԴԻՆ ՑՍՆԱԳՈՐՈՑՆ ԽՈՐՀՐԴՈՑ

Ակաչեմ զքեզ, որդեակ իմ, դուք արկեալ օրինաքն որ կցորդեն զորդիս ընդ ծնողաց, մի գործել և կրել քեզ զանլուրս հօր քո ակնեալս:

Սակաւ ժամք են յորմէհետէ երգուեալ աստուածովքն ամենայն և աչ խաղաղութեան տուեալք՝ հաստատմունք Թիւն խոստացաք. արդ զնուիրական ձեռս այն ինչ մեկնեալ ՚ի խօսակիցն լինելոյ, զինեացոնք անգէն ընդդէմ նո-

բա: Եվեալ ՚ի հիւրամեծար սեղանոյդ, յորում երբորդ ՚ի Կամպանիացւոց պատուեցար Յ[Ա]ննիբաղայ, շաղախեցեալ զայն արեամբ հիւրընկալուիդ: Զ[Ա]ննիբաղ կարող եղէ հաշտ առնել ընդ որդւոյն, և զորդիդ չկարիցեմ ընդ Ա[Ա]ննիբաղայ: Թէպէտ և սրբութիւնք չկային, ոչ հաւատարմութիւն, ոչ կրօնք և բարեպաշտութիւն. յանդգնեացուք յեղեռն, թէ չհասանէ մեզ անտի և կորուստ: Մի[Ա]յնակ յարձակեցաւ Յ[Ա]ննիբաղ. առ ինչ ապա ամբոխ ազատացն այնոցիկ և գերեաց. էր աղագաւ ամենեքին ՚ի մին յայն ակնհաւոյցք. զինչ բաղուկքն անթիւք. ընդարմացոյն Թերևս ՚ի քում կատաղութեանդ: Երեսացն Ա[Ա]ննիբաղայ, որում սպառազինացն բանակք չհանդուրժեն, յորմէ սարսէ հռովմէականն ժողովուրդ, գո՞ւ հանդուրժիցես:

Ախոփնական կոյրեկ. հանդուրժիցե՞ս խոցել զնս ինքն, յորժամ զմարմին իմ արկիցե պատուար մարմնոյն Ա[Ա]ննիբաղայ, զի ընդ խոցել քո զնս՝ հարցես և զնա:

Ա[Ա]տէն իսկ յանձն առ զպարտութիւն, քան թէ ան[Ա]դէն յաղթեացիս: Պատուեացին առաջի քո ինդրուածք իմ, որպէս եղեն այսօր վասն քո:

ԼԻՎԻՈՍ:

ՅԱՆՊԱՏՐԱՍՏԻՑ Ա[Ա]ՏՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԿՐԱՍՈՍԻ Ի ՋԱՏԱԳՈՎՈՒԹԻՒՆ ՊԼԱՆԿԻՈՍԻ

Զ[Յ]ի բազմեալ կաս, Բրուտէ. զինչ կամիս թէ պատռեմ այդ զքէն հօր քում պատմեացե. զինչ այնոցիկ, զորոց զպատկերն տանին ընդ դմա. զինչ նախնեացն քոց, և զինչ առ Բրուտոս, որ յարքայական իշխանութենէ զԺողովուրդն ՚ի բաց Թափեաց: Ցո՞ր գործ կամ ՚ի պատիւ կամ յառաքինութիւն դեգերեալ է քո՝ զոր նա երթեալ ծանուսցէ նմա. ՚ի յաճախութիւն հայրենի սատցուածոց,

այլ այդ ազնուատոհմ զարմիդ չէ ինչ վայելուչ. բայց գէր թէ այդպէս իցէ. սակայն սեւ ինձ զի չիայ ինչ առ քեզ, հեշտութեանցն վատնեալ զամենայն. թէ ՚ի հրահանգս քաղաքական իրաւանց, այդ և հօր քոյ է սեփական. իսկ քո զսպասս տանն կարասեաց հանեալ ՚ի վաճառ, և զաթոռն անգամ չթողլը յոր նա բազմէրն ՚ի ժամ խորհրդոց: Թէ ՚ի մերոց զինուորական կրթանաց, այլ քո՞ի կեանդ չիք տեսեալ զձակատ պատերազմի: Ի ձարտարախօսութիւն արդեօք, յորմէ թափուր ես ամենևին, և զամենայն հնարս լեզուիդ և զբարբառոյ ծախեցեր յամօթապարտ արուեստ զրպարտողի: Եւ գու համարձակիս զոյս տեսանել, արկանել զակն ՚ի դոսա, կալ յատենի, ՚ի քաղաքի, յանդիման աչաց քաղաքացեաց, և ՚ի մեռելոյն նա և ՚ի պատկերացն ինքնին ՚ի զարհուրիս, յորոց ոչ միայն ՚ի նմանատիպ հաւատարութենէ, այլ և ՚ի բնակակից դասակցութենէն վերջացեալ գտանիս:

ՌՈՒՖՆ. Պատմ. Հռոմ:

ԳԵՐՄԱՆԻԿՈՍԻ ԵՒ ԱՐՄԻՆԻՈՍԻ ՓԱՋԱԼՔ ԱՌ ԲՈՆԱԿՍ ԻՒՐՈՆՑՆ

Գիլբերտն այնորիկ զուարթաբար եղև հանգիստ Գերմանիկեայ: Թուէր նմա ՚ի տեսլեան զոհ մատուցանել, և ՚ի ցայտել արեան զոհին զձորձոլ իւրով, միւս այլ գեղեցկադոյն մատուցանէր նմա Աքգոստա հան իւր: Քաջալերեալ աւետաւոր գուշակութեամբն՝ զոր և հաւաստեալք հատատէին, համարձակեաց զզօրականն, էտ նոցա նախահոգ խնամատութեամբ հրահանգս վասն առաջիկայ պատերազմին, և ասէ. մի կարծէք թէ գաշտավայրք լեռն նպատատամատոյք եղեն հռովմայեցւոց զօրականին, այլ և մայրիք և անտառք՝ եթէ գիտիցէ յօդուտ ՚ի կիր արկանել զայնս:

Բարբարոսացն ասպարքք անարդիլք և նիզակք երկայնաբունք չէն ինչ գիւբակիրքք ՚ի Թփռաս և յանտառախիտս որպէս զեզգ և զոսաեր և զղջասն պատշաճեալս ՚ի մարմին: Յաճախեցէք զչարուածս, ՚ի տէգ նիզակի որոնեալ զդէմս. գերմանացւոց ոչ զրահք են և ոչ սաղաւարտք, և ասպարքք իսկ նոցա ոչ երկաթապատք և ոչ ճոշիւք ամրացեալ՝ այլ ողորհիւս, այլ տախտակ նուրբ նկարէն: Առաջին եւեթ ռադմ ձախատուն նոցա է նիզակաւոր, այլոց լսխաս եւեթ մխեալս ՚ի հուր կամ գեղարգուհս կարճաբունս կրելով: Մարմին նոցա դժուէ՛ատեսիլ սուղ ինչ եւեթ առկայ ընդդէմ յարձակման. չկարեն նոքա ժուժկալել հարուածոց, անզգայք են նախատանաց, անփոյթք հաճոյ լինելոյ զօրավարաց, դասալիկք, փախստեայք, ահաբեկք ՚ի ձախողակս, և ոանհաղք իրաւանց ատուածոյնոց և մարդկայնոց ՚ի յաջողութեան: Եթէ խոնջք ՚ի նաւարկութենէ, ցանկայք վախձան առնել աշխատութեան, ՚ի ձախատամարսի պատրաստեալ կայ այն: Մերձ կայք յԱլբիս քան ՚ի Հռենոս, անդ վախձան լիցի պատերազմի, եթէ զզօրավար ձեր՝ որ զՀետ քաջութեան հօր իւրոյ և հօրեղբօր նկրտի, յաղթող ՚ի նմին երկրի կացուցանիցէք: Ի բանից սատի վառեցաւ եռանդն զօրականին. և ուռաւ նշան ՚ի պատերազմ:

Անդի և Արմինիոս և զօրավարք գերմանացւոց խրախուսէին զզօրս իւրեանց, ասելն. Հռովմայեցիքդ, քան զբանակն Վարոսի վտաք, ու ՚ի խուսել ՚ի պատերազմէ՝ յապատամբութիւն մտաբերեն: Կէաք վիրալից ՚ի թիկունս, այլք յայլեկոծութենէ և ՚ի մրրկաց խեղեալք, գան դարձեալ ձայնատուր լինին վրէժխնդրութեան թշնամեաց և սրամտութեան դից, ՚ի նաւս ապատատանեալ և յանդնաց ուղին ովկիանոս՝ զի մի զք զդէմ ունել կարասցէ և հալածել զինքեանս: Այլ յորժամ պատերազմ խառնեսցի, ոչ օգնեսցին պարանոցք հողմք և թիակք: Ցուշ լիցի ձեզ ապահովութիւն նոցա, անդրդուելի և զգուշութիւն. զինչ այլ ինայ ձեզ, բայց պաշտպանել ազատութեան կամ մեռանել նախ քան զդերութիւն:

Այսպէս յեռանդն պատերազմի զզօրս վառեալ ՚ի գոյն զնոսա ՚ի գաշն անուանեալ Իդիստաւիս...:

ՏԱԿԻՏՈՍ. Տարևգիրք:

ԿԻԿԵՐՈՆԻ ՋԱՏԱԴՈՂՈՒԹԻՒՆ ՊԼԱՆԿԻՈՍԻ

Զի թէպէտ յանկալի է ինձ՝ ամենայն առաքինութեամբք ճոխանալ, բայց չէք ախորժագոյն քան լինել ինձ և երևիլ երախտագէտ: Զի այս առաքինութիւն միակ՝ ոչ մեծ միայն քան զամենայն, այլ և մայր է այլոց առհասարակ: Զինչ է բարեպաշտութիւն, բայց կամք երախտագէտ առ Ծնողս: Ոմք էին բարի քաղաքացիք, ոմք ՚ի պատերազմի, ոմք առ տնին բարեացապարտք առ հայրենիս, բայց որք յիշատակողք են երախտեաց հայրենեաց: Ո՞յք էին սուրբք, ոմք պաշտօնասէրք, բայց որք զդից անմահից զպատուապատշաճ ընծայս՝ արդար պատուասիրութեամբք և երախտաճանաչ մտօք մատուցանեն: Զինչ բերկրութիւն լինէր ՚ի կենցաղումս ՚ի բառնիլ բարեկամութենէ: Իսկ ո՞ր բարեկամութիւն եղիցի ՚ի մէջ ապերախտից: Ո՞՚ի մէնջ քաջանուանդ, որ ոչ հանապազ յուշն ունիցի ընծրհակալս յիշատակաւ զնուէրսն, զդաստիարակս և զսուցիչս, այլ և զտեղիս անգամ զանմոռնչս՝ ուր մնաւն և ուսաւ: Որո՞ւմ հնար է լինել այնպէս զօրաւոր, կամ եղև երբեք, որ կարող լիցէ կալ յոտին առանց սատարութեան բազում բարեկամաց, որում արդարև անհնար է կալ մընալ ՚ի բառնիլ յիշատակի և երախտագիտութենէ: Ոչ ոք ինչ այնպէս սեպհական գտանի մարդոյ, որչափ ընդ միմեանս կապիլ՝ ոչ միայն բարեբարութեամբ այլ և ևլաւականութեանն ցուցակութեամբ. և ոչինչ այնպէս ար-

մարդի, այնպէս անագորոյն և վայրենի, քան զործել գործ՝ մինչև երևիլ ընկալեալ բարեբարուբեհանն ջասիմ անարժան, այլ և ընկճեալ յայնմանէ: Եւ զի այս այսպէս է, ապա նկունն եղէց, ով լաւերացի, ամբաստանուբեհանդ զինէն. և յերախտագիտուբեան մասին՝ յորում անհնար է լինել անչափ. բայց քանզի այսպէս են քո կամք, խոստովան եղէց թէ եմ անչափ. և խնդրեցից 'ի ձէնջ ո դառաւորք՝ բարեբարել ահն, որոյ պարտաւադիր՝ յայնմ զնա պարտաւէ, զի անչափ երախտագէտ ասիմ:

ԿԻԿԵՐՈՆ:

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՎԻՐԻՈՍԻ ՎԻՐԻՈՍԻ ԸՆԴԴԻՄ ՈՐՈՇՄԱՆ ՆԵՐԱԿՈՒՏԻՒՆ ԿԱՊՈՒԱՑ

Ոչ տեսից զԱպպիոս Կլոդիոս, և զկ. Փուբլիոս ամբարհաւաճ յաղթուբեամբ խրոխտապանծս, և ոչ ձեռնակապք ձգեցայց ընդ քարշ ընդ Հռոմ քաղաք 'ի տեսիլ յաղթանակի, զի ապա 'ի բանս, կամ 'ի ցից պրկեալ դաւաղանահերձ թիկամբք՝ որկից զպարանոցս ընդ հռովմէական տապարաւ. և ոչ քանդեալ տեսից և հրկէզ զՀայրենիս, և ոչ յափշտակեալ 'ի պղծուբեհն զմարս կամպանիացիս, և զկուսանս, և զաղտաստզի մանկուձս: ԶԱվբա՝ յորմէ էր ծագումն նոցա, հինն 'ի վեր տապալեցին, առ 'ի չինալոյ յիշատակի արմատոյ նոցա և ծագման. Թող թէ համարեցայց խնայել նոցա 'ի Կապուա, առ որ առաւել է նոցա ոխերիմ տաեղուբեհն, քան առ Կարքեդոն: Ասան որոյ՝ որոց 'ի ձէնջ կամք են տեղի տալ յաւէտ օրհասի, քան տեսանել զայս ամենայն դժնդակագոյնս, նոցին պատրաստեալ են այսօր և յօրինեալ առ իս կոչունք: Որոց կշտապինդ վայելեսցեն 'ի դինի և 'ի կերակուր, շուրջ յածեցուսցեն զնոյն բաժակ՝ որ ինձն մատուսակի: Այն

ըմպելիք՝ ազատ կացուսցեն զմարմին 'ի տանջանաց, զոգի՝ 'ի թշնամանաց, զաչս և զականջս 'ի տեսոյ և 'ի լսոյ ամենայն դժնդակաց և յանարժանից՝ որք կան մնան պարտելոց: Եղիցին և արք պատրաստականք, որք 'ի փայտակոյտ մեծ վառեալ 'ի գաւթի տպարանիցս՝ արկցեն զդիակնացեալ մարմինս: Ահա մի միայն է ձանապարհ հաճեստ և ազատ՝ առ մահ: Նոյն իսկ թշնամիք զարմացեն ընդ արուբեհն, գիտասցէ և Աննիբաղ՝ զի եթող ինքն և մատնեաց զքաջ նիզակակիցս:

ԼԻՎԻՈՍ:

ԿԵՍԱՐ ԻՐԱԽՈՒՍՈՂ ԶՋՕՐԱՆՆ ՁԵՐԿՆՁԵԼ Ի ՊԱՏԵՐԱԶՄԵԼՑՆ ԸՆԴ ԳԵՐՄԱՆԱՑԻՍ

Ս.յսոցիկ միա եղեալ կեսարու, ժողով կոչեալ, և յամենայն կարգէ զՀարբիւբատեան յատեան անգր մատուցեալ, ծանուսն յանդիմանեաց զնոսա. նախ, զի արժան էր նոցա խնդրել կամ զմատս ածել՝ յոր կողմ վարիցին կամ որով խորհրդով: Ի բգեշխուբեան իւրում՝ չերմադոյնս ցանկացեալ Արիովիստ բարեկամուբեհան հռովմէական ժողովրդեանն, էր իւրմէ ուժգնագոյն համարել զնա յանդղդնաբար լիւբոց պատշաճիցն նչահաւել: Ի միս առեալ զնորս դերս նորա և յարգարուբեհն պայմանացն հայեցեալ, համանեալ եմ թէ ոչ զիմ ինչ և ոչ զհռովմէական ժողովրդեան զնորհս արհամարհիցէ նա: Իսկ եթէ մոլեգնեալ և խելագարուբեամբ ձակատ տայցէ, զմէ զանգիտիցէ. կամ ընդէր զանձանց քաջուբենէ կամ զիմմէ խնամոյ անհոգացար. այդմ թշնամիդ եղեալ է հանդէս յաւուրս հարց մերոց, յորժամ Կիմբրացւոց և Տեւտոնաց հալածեալ 'ի Կ. Մարիոսէ՝ ոչ սակաւ գովուբեան զօրն քան զինքնին իսկ զզօրավարն դատեցաւ արժանի. եղեւ և զար-

դիս Իտալիա ՚ի ծառայասատամբ խազմի անդ, որոց և փորձ ինչ և հրահանգք առ ՚ի մէնջ ընկալեալք՝ նպատս լինելին. յորմէ խմանալ է, քանի՛ առաւելութիւն կայ ա֊րիական ժուժկալութեան. զի յորոց երբեմն յանդիմուց անգամ երկնչէին վայրապար, յետոյ զղնեալսն իսկ և զյաղթականն ՚ի պարտութիւն մատնեցին. հուսկ ապա, սոքա այն գերմանացիք են՝ ընդ որս յաճախ պատերազմեալ հելուետացւոց, ոչ միայն յիւրեանց աշխարհին, այլ և ՚ի նոցայն ևս յաղթահարեալ են զնոսա. և սակայն մերում զօրականին ոչ ունկնկին գալ ՚ի կշիռ: Իսկ եթէ ո֊մանց խրատուիլ ինչ անկանիցի ձախող պատերազմին և փա֊խուստ գալ ևացւոց, սոքա եթէ քննեցեն՝ ՚ի վերայ հասա֊նիցեն, զի յերկարութենէ գուպարածին յոգնեալ գալ ևացւոց, իբրև Աբիովիստ ամիսս բազում կայր մեայր ՚ի Ճամբարին և ՚ի Ճահիճն և ոչ ՚ի կռիւ ինչ ելանէր: Ի յուսահատել նոցա ՚ի մարտէ և ՚ի ցրուել՝ նա յանկարծիւ յեղակարծուստ իմն անկեալ նոցա ՚ի վերայ, խելօք և հան֊ճարով քան քաջութեամբ յաղթեաց նոցա: Բայց խելք որ ընդ խուժս և անհմուտս տեղւ ունկնի, նովին և ոչ ինքն ան֊ին ունի զմեր զօրս ըմբռնել: Իսկ որք զերկիւղ ՚ի ցորեան և յանձուկս Ճանապարհաց պատճառիցին, ժպրհուածեամբ գնան. զի կամ զնամուց զօրավարին լինին յուսահատ, կամ պատուէր հրամանի նմա ՚ի վերայ գնել թուին. այդ֊քիկ ինձ անկ են. զցորեան՝ Ակիսատնացիք, Լեւկացիք, Լին֊կոնք մատակարարեացին. կայ իսկ այժմիկն ցորեան հա֊սուն յանդաստանս: Ջճանապարհէն՝ դուք ձեզնի ՚ի կար֊ճոյ լինիջիք խելամուտ: Իսկ զի անուշնկնդիր ասին լինել հրա֊մանիս և ոչ գիմագրաւ արշաւել, ոչ ինչ ընդ այդ խոռվիմ. քանզի գիտեմ ընդ ոյս ոմանս է զօրուն անսաստութիւն հրամանի, զի կամ չարաչ վճարեալ իւրացն՝ ձախողանք պատահեալ են, կամ եղեռն ինչ երևեալ՝ ազահութիւն յանդիմանեալ. իմ անարատութիւն՝ ՚ի բովանդակ կեանս իմ, իսկ յաջողութիւն՝ ՚ի հելուետացւոց անդ մարտին առ֊աւ: Վասն որոյ, զոր յապաղելոցն էի այլ ևս աւուրս,

վճարեցից ՚ի մտոյ. և ՚ի գիշերի առ յայսմիկ զզորբորդ պահու՝ չոչ արարից զի փութով առից ՚ի միտ, պատկա֊ռանք արդեօք և հարկ պաշտաման աղտղտագոյն եցէ ՚ի ձեզ, թէ երկիւղ: Իսկ եթէ այնուհետև ոչ ոք եկեսցէ զնէս, սակայն ես՝ տասներորդ գնդապետ ևեթ երթայց, զոր֊մէ ոչ ինչ յերկուանամ, և եղիցի ինձ այն՝ գունդ գլխա֊պահ: Ընդ գունդն ընդ այն առաւել սիրեցեալ էր կեսար, և վասն քաջութեանն՝ վստահ յոյժ ՚ի նոսա:

ՑՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ. Ցիշատակարանք:

ԲԱՆՔ ԱՐԻՈՎԻՍՏԱՅ ԶՕՐԱՎԱՐԻՆ ԳԵՐՄԱՆԱՑԻՈՑ ԱՌ ԿԵՍԱՐ

Ա֊ռ պահանջանս կեսարու սակաւ ինչ էս Արիովիստ պատասխանի, զանձին առաքինութենէն բազում ինչ Ճա֊ռեաց. Իմ ոչ կամաւ է, ասէ, անցեալ ըստ Հռենոս, այլ ՚ի Ժեէզ և ՚ի հրաւիրմանէ նոցին գալ ևացւոց. ոչ առանց մեծի յուսոյ և մեծաց փոխարինաց զառն և զազգ իմ լքեալ. տուն բնակութեան է իմ ՚ի Գալլիա՝ ՚ի նոցունց հնոր֊հեալ, պատանդք նոցա յօժարակամ մատուցան ինձ. հարկս հանեմ իրաւամբք պատերազմի՝ զոր յաղթողաց է արկանել պարտելոց. ոչ ես ընդ Գալլիացիան, այլ Գալ֊լիացիք ընդ իս եաուն պատերազմ. ամենայն քաղաքք Գալ֊լիոյ յարեան ՚ի վերայ իմ՝ ՚ի պատերազմ և ընդդէմ ինձ բանակ կառուցին. զամենայն զօրն զայն միով Ճակատու վարատեցի վկայիգեալ. եթէ այլ կամիցին փորձ փորձել, ՚ի մաքառել պատրաստ եմ. իսկ եթէ ՚ի խաղաղութեան կալ լաւ համարին, անօրէն է յուրատս կալ ՚ի հարկայ՝ զոր ցայսօր ժամանակի հատուցեալ է: Բարեհամութեան հռովմէական ժողովրդեան ինձ ՚ի զարդ և ՚ի թիկունս ար֊ժան է լինել, ոչ ՚ի վնաս. և նովին յուսով խնդրեցի ես

զայն. եթէ ժողովուրդն հռովմէական հատանիցէ զՀարկս և հանցէ լինելն զկապատակս, ոչ սակաւ յօժարութեամբ հրաժարեցայց մնոադիւր 'ի բարեկամութենէ ժողովրդեանն Հռովմայ, քան զոր փափաքեցի: Իսկ զբազմութիւն գերմանացւոց 'ի Գալլիա անցուցանել, զայդ ոչ 'ի կռուել ընդ նոսա առնեմ, այլ յիմ յատկովութիւն. վկայ է այսմ, զի չեկի՝ բայց եթէ աղաչեալ. և ոչ պատերազմ եւոու, այլ ընդդէմ կացի: Իմ նախ քան զժողովուրդն հռովմէական եկեալ է 'ի Գալլիա: Ցառաջ քան զայս ժամանակ՝ ոչ երբեք բանակք ժողովրդեանն Հռովմայ ընտ սահմանադանդին Գալլիոյ եղեալ էին: Արդ զինչ կամիցի այս լինել. ընդէր եկէ գալ 'ի տացուածս իմ, այս իմ է նահանգ Գալլիա, որպէս այն՝ ձեր: Որպէս ինձ չէ օրէն 'ի ձեր սահմանդ արշաւել, այսպէս և ձեզ անիրաւ է՝ խափանել զիս յիմոց իրաւանցս: Իսկ զի զԵգուացիք բարեկամս ասէս կոչեցեալ 'ի հրամանէ աւագանւոյն, ոչ այնպէս իմաստուն եմ ես և ոչ այնպէս անտեղեակ իրաց, մինչև չգիտել՝ թէ յայն ինչ անցեալ պատերազմին Ալլոբրոգաց՝ օգնականութիւն մատուցին Եգուացիք հռովմայեցւոց, և նոքա 'ի մարտս պատերազմացն ընդ նս և ընդ Արեւուանացիս 'ի թիկունս առին զժողովուրդն հռովմէական: Պարտ է ինձ կասկածել թէ կեղծաւորութիւնք բարեկամութեամբ ուշիս դու զօրս 'ի Գալլիա առ 'ի զիս նուաճել: Եթէ ոչ 'ի բաց դնայցես կամ զզօրսն 'ի կողմանց ասսի հանիցես, ես զքեզ ոչ առ բարեկամս, այլ առ թշնամիս կալայց. զի եթէ սպանից ես զքեզ բազմայ յաղնուականացդ և յիշխանացդ ժողովրդեանն Հռովմայ մնաւածոյ ինչ գործիցեմ. զայս ես 'ի հրեշտակաց անտի նոցա տեղեկացեալ դիտեմ, զորոց ամենեցունն նոցա զնորհս և զբարեկամութիւն՝ քոյով մնաւոմամբն շահիցիմ. իսկ եթէ թափեսցես լինիլն, և եազատ թողուցուս ինձ զգալական սատացուածս, պարգեւս մեծամեծս ընդ այնր հատուցից քեզ. և որ զինչ պատերազմ կամիցիս մղել, անաշխատ և անվտանգ վճարեսցես:

ՑՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ. Ցիշտատակարանք:

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԻՆՈՒԿԻՈՍԻ

Իշխանապետիդ եմ, կրկին եղէն 'ի սին աւուր՝ քո յաղթութիւնք պայծառափայլք. քաջութեամբ քով թշնամեաց յաղթեցեր, խոհեմութեամբդ և մեծանձնութեամբ յաղթեցեր քուո իշխանակիր: Ահաչնով յաղթութեամբդ փրկեցեր զմեզ, և երկրորդաւն՝ խրատեցեր. և որչափ իմս պարտութիւն Աննիբաղայ՝ ամօթալի եղև ինձ և մահառիթ, նոյնչափ և յաղթել քո ինձ՝ եղև ինձ կենսառիթ և պանծալի: Ասան որոյ կոչեմ զքեզ՝ իմ հայր, չունելով այլ ինչ անուն յարգական քեզ ընծայել. թէպէտ և իմ առ քեզ պարտիք՝ մեծ իցեն քան զոր ունիմ առ հայր՝ որ զիս ծնաւ: Զի նմա պարտիմ զանձին իմոյ և եթէ զկենանս. իսկ քեզ պարտիմ իմովս հանդերձ՝ և զփրկութիւն քաջացս այսոցիկ առ հասարակ:

ԼԻՎԻՈՍ:

ԿԻԿԵՐՈՆ ԸՆԴԴԷՄ ՎԵՐՐԵՍԻ

Փակին 'ի բանս դատապարտեալքն. կարգի նոցա պատուհաս մնաւն, զորոյ զչափ առնուն տառապեալ ծնողք նաւապետացն. արգելուն նոցա մաուիլ առ որդիս իւրեանց. արգելուն բերել առ զաւակս իւրեանց կերակուր և հանդերձ: Հարք..... անկեալ գնեին առ սեմաք, և մարք Թշուառականք՝ զգիչերն ապանեին առ զրամբք բանտին, զգեաչք 'ի վերջին տեսոյ որգուոյն. որք ոչ այլ ինչ աղերս արկանէին, բայց հրաման՝ զի զորգուոյ գրեան շունչ ընկալցին 'ի բերան: Կայր անդրէն բանդապետն խաչահանուհ՝ սրբատորին, մահ և արհաւիրք դաշնաւորաց և քաղա-

քացւոց, 'ըԱեսխոսն զայն ասեմ, զդահիճ, որ յամենայն հեծուեթեանց և 'ի ցաւոց՝ վարձս շահէր հաւատոյս: Զի մատիցես առ նա՝ ուր զայսչափ. զի առցես հրաման կենդանւոյ առնել առ նա՝ այսչափ: Ո՛չ ոք 'ի բաց հրաժարէր: Զի՞նչ տացես ինձ, զի մեռուցիչ զորդի քո՝ միով ևեթ բանիմբք տապարի. և զի՞նչ զի մի բաղում անգամ հարցի. զի առանց ինչ ցաւոց, կամ կառանց կարձեցի 'ի կենաց: Եւ յաղագս այսր իսկ վճարիւր արծաթ գահճին: Ո՛վ մեծի և անբերելի ցաւոցս. ով դառն և դժնդակ ապերախտ: Ո՛չ ըզկեանս որդւոց, այլ զմահուն չուեթափուրթիւն գնոց գնել բռնադատեին ծնողքն: Ինչպէսիք իսկ գլխովին պատահեակքն զայսմ զարկուացոյ իսօսէին ընդ Աեսխոսի, զայսմ միակ բանիմանէ. և զսոյն յետին (չնորհ) պաղատէին որդիք 'ի ծնողաց, արծաթ մատուցանել գահճին առ 'ի դիւր չարչարանաց նոցա:

Բազում մորմոք և ծանուցիք նիւթեցան ծնողաց և մերձաւորաց. բազմօք: Բայց և այնպէս՝ (գէթ) մահն եղիցի՝ վերջինն: Ո՛չ, մի եղիցի: Եւ միթէ գուցէ ինչ՝ անդր ևս քան զայս ձգիլ անգթուեթեան: Այո՝ կայ միւս ևս: Զի որդիք նոցա իբրև գլխատեսցին տապարաւ և սպանցին, մարմինքն անկցին գազանակուր: Թէ դառնագէա էիցէ այս ծնողին, Թող գնեսցէ արծաթոյ զնշխանուեթիւն Թագմանն:

ԿԻԿԵՐՈՆ:

ԿԻԿԵՐՈՆ ՎԱՍՆ Կ. ԼԻԳԱՐԻՈՍԻ

Եւ արդ, Կեսար, իցէ Թէ Թուիցիմ քեզ ինչ 'ի դատ Լիգարիոսի մատգիւր պարապեալ, զպետս նորին ճառեալ: Որ զինչ և իսօսեցայս՝ կամիմ բովանդակել 'ի մի գլուխ մարդասիրուեթեան քոյ կամ գեթուեթեան կամ ողորմուեթեանդ: Բազում դատս իսօսեալ է իմ, Կեսար, և ընդ քեզ

ևս, յորժամ 'ի պատճառս պատուոյ և փառաց քոց յամէիր յաստեղս հրապարակիս. բայց ծո և ծո, ոչ երբեք այսու ոճով, նեղեցէք, դատաւորք, սխալեաց, զվիպեաց, ոչ կարծեաց. եթէ երբեք այսուհետև.....: Զայդ օրինակ՝ առ հայր օրէն է բարբառել. իսկ առ դատաւորս, ոչ արար, ոչ արկ 'ի միա, սուտ են վկայք, ընաս ստայօդ: Դիր, Կեսար, Թէ 'ի դատիս Լիգարիոսի՝ դատաւոր իցես. հարց, յորմէ պահապան գնդի եղեալ իցէ: Լուռ լինիմ. և ոչ զայսոսիկ 'ի հանդիսի անցուցանեմ, որ առ դատաւոր ևս իցեն Թերևս զօրաւորք: Տեղապահ երթեալ յառաջ քան զպատերազմն, Թողեալ, լքեալ 'ի խաղաղութեան, մարթիս պաշարեալ, յայնմ ոչ դաժան, այլ և հոգւով և ջանիւք բովանդակ քոյ: Առ դատաւոր սովոր են այս բանք, այլ ես առ հայր բարբառիմ. մոլորեցայ, ընդ խօլ գործեցի, զինչ է ինձ, 'ի գթուեթիւնդ ապաւինիմ, Թողուեթիւն խնդրեմ յանցանացս, նեղիլ պղտչեմ: Եթէ չկք ուրուք առեալ զինդրելին, յանդգնաբար. եթէ բազմից, դու նոյն ինքնդ ձեռն կարկառ՝ որ զկոյն ետուր: Եթէ չկցէն ինչ Լիգարիոսի պատճառք յուսոյ, մինչդեռ ինձ առ քեզ և վասն այլոց ևս գոյ տեղի մաղթանաց. Թէպէտ և ոչ 'ի ձառս կայս՝ եդեալ է կայս գատիս, և ոչ 'ի ձգուիս այնոցիկ՝ որ պաղատին առ քեզ վասն Լիգարիոսի կերպն քո կարևորք: Զի տեսի և 'ի միա առի, կինչ առաւել դէտակն ունէիր, յորժամ բազմօք 'ի վերայ փրկուեթեան ուրուք գուն գործէին. քան զաղերս՝ հաճոյագոյն էին քեզ աղաչաւորացն գաւաք. և ոչ կայն հայէիր՝ Թէ քանի սիրելի քեզ կցէ աղերսաւորդ, այլ Թէ քանի այնմ՝ որոյ վասն տառապէր: Ուսոյ և այնպէս ձոխաբար ընձեռես դու քոյոցդ, զի երանելի ևս Թուիս կինձ երբեմն՝ վայելելոյն յառաջուեթիւնս քո, քան զքեզ՝ որ այնպիսի առաջապարգև առ նոսա գտանիս: Սակայն, որպէս ասացիս, ուսանիմ զի առ քեզ առաւել զօրէն ազերսարկուացն դառք քան պաղատանք. և դու առաւել 'ի նոցանէ շար-

Ժիս՝ զորոց զՇմարիա ալէտան 'ի ինդրուածան անդ տեսա-
նիցես։

ԿԻԿԵՐՈՆ։

ԿԻԿԵՐՈՆ ԸՆԴԴԷՄ ԱՆՏՈՆԻՈՍԻ

Չերծաւ կեսար Ա՛լէքսանդրիոյ բարեբախտ, որպէս Թուէը յաչս իւր. բայց ըստ իս, որ առ ընկերհաշտութիւն չարաբաստ իցէ, բարեբախտ լինել ոչ ունի։ Կանգնեալ նիզակ առաջի մեհենին Ա՛րամազդայ նահանջողի, ստացուածք կն. Պոմպիոսի, — աւա՛ղ ինձ, արտասուք հատեալ, այլ կսկիծ ցաւոց 'ի սիրտս միեալ հարստեալ կայ, — ստացուածք, ասեմ, Պոմպիոսի մեծի՝ 'ի գԺնդակ բարբառ քարոզին մատնեալ։ Ցայն տեսիլ միայն՝ մռաայեալ քաղաքիս զգերութիւն իւր՝ հեծեաց. և 'ի սարկանալ ոգւոյ, յահ և յերկիւղ պաշարել ամենայնի, ազատ մնայ հեծութիւն հռովմայեցի Ժողովրդեան։ Ցակին ունել ամենեցուն, թէ ո՛իցէ այնպէս ամպարիշտ, այնպէս խելագար, այնպէս դից և մարդկան թշնամի՝ որ յայն եղեռն վաճառու հոլանալ յանդգնեալ զանձն յառաջ վարեսցէ, գառ և ոչ ոք՝ բայց Անտոնիոս միայն. նա զի և բազում ամբոխութիւնք կային ընդդէմ կանչ, յայլ ամենայն կամակարողք ձեռներէց։ Մի ոք աւեթ գառ յայն ինչ ըզրնալ, յորմէ զարհուրեալ խուսափիլ ամենեցուն Ժողովրդեան։ Ապա ուրեմն՝ ափշութիւն այնպիսի զքեզ անհաւ, կամ՝ Ճչգրտագոյնս ասել՝ կատաղութիւն այնպիսի, զի նախուսա՝ վաճառուց դին հատանող 'ի տեղիս յայս ծնեալ առ 'ի չտալ, ապա դինս և Պոմպիոսի հատանող, և չգիտիցես տակաւին զքեզ զաղիր և գարշելի հռովմէական Ժողովրդեան, ոչ և զդիս ամենայն և զամենայն մարդիկ թշնամիս քեզ լեալ և լինելոց։

ԿԻԿԵՐՈՆ։

ՄԵԿԻՊՍԱ ՀՈԳԵՎԱՐ ԱՌ ՅՈՒԴՈՒԲԻՐ

Մանուկ զքեզ, ո՛ Յուդուբեր, որբ 'ի հօրէ, անյոյս և ամատացուած, յարքայութիւն իմ ընկալայ՝ ակն ունելով բարերարութեամբս իմով սիրելի լինել քեզ իբրև ղՀայր, և չեհաբեցայ խոկ։ Չի զայլ ամենայն պանծալի առութիւնս քո Թողեալ, 'ի գառնալ քումմ 'ի մեծոյ 'ի պատերազմէն Նումանտիոյ՝ զիս և զԹագաւորութիւնս իմ փառաւք պայծառացուցեր. քաջութեամբ քով զբարեկամս մեր հռովմայեցիս՝ մաերմագոյնս գործեցեր. 'ի Սպանիա զՀամբաւ ազգատոհմիդ նորոգեցեր, և որ գԺառարագոյնն է 'ի մահկանացուս՝ փառաւք յաղթանակեցեր նախանձողն։ Եւ արդ քանզի բնութիւնն վախճան առնէ կենացս, երկնեցուցանեմ զքեզ յաջս Հայս և 'ի Թագաւորութիւն իմ, և աղաչեմ զքեզ, զի զտոհմակիցս քո և բարերարութեամբս իմով եղբարս՝ ընդ սիրելիս քո կալցիս, և մի՛ քան զարիւն քո զտարս քեզ նախամեծար ընդունեսցես։ Ոչ զբաց խոսիմ, և ոչ դանձք պատասպարանք են Թագաւորութեան, այլ բարեկամբ՝ զորս ոչ գինուք է ստանալ և ոչ դանձուք Ժողովել, այլ արդեամբք և հաւատարմութեամբ։ Եւ ո՞ արդեօք բարեկամագոյն կայցէ եղբօր քան զեղբայր. և զո՞ ոք յօտարաց հաւատարիմ գտցես, եթէ քոյոցդ լինցիս Թշնամի։ Թողում ձեզ Թագաւորութիւն հաստատմամբ, եթէ առաքինասջիք. իսկ եթէ անպիտանք իցէք, Թագաւորութիւն խարխուլ, զի միաբանութեամբ ամենն փոքունք, և գԺառութեամբ տապալին հզօրք։ Այլ քեզ, Յուդուբեր, երկայգունիդ հատակաւ իմաստութեամբ, անկէ առաւել քան զնոսա զդոյչ լինել, զի մի՛ յայսպիսեայ ինչ հանդիպեսցէ. զի յամենայն վէճս հզօրագոյնն Թէպէտ և հարստահարիցէ, քանզի կարողագոյն է՝ Թուի հարստահարել։ Եւ դուք Սդերբաղ և Հեմբասաղ, մեծարեալ պատուե-

ցեք զայր այդպիսի, նմանողք լերուք առաքինութեանց նո-
ցա, ջան դիք ղի մի միայն յորդեգիրս իմ, այլ և յորդիս
բարեբաղդ գտայց:

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ. Յուգուրթ:

ՊԱՏՄՈՒԹԱՆ ՏԻՐԵՐԻ ԱՒՐ ԲՈՂՈՔ ԵՐԿԱՈՒՏԻՆ ՋՋԵՂՈՒԹԵՆՆԷ ԱՒԱԴԱՆՈՒՑՆ

Յայլ դէպս, Հարք առեղնակալք, լաւագոյն Թերևս էր
բերան'ի բերան տալ հարցուածոց ձերոց պատասխանի որ
ինչ յօգուտ համարէի հասարակապետութեան. այլ
յայսմ լաւ ևս դիպաւ կալ ինձ'ի բացեայ, ղի մի գուցե
յակնարկել ձերում'ի դէմս և'ի կասկած այնոցիկ՝ որք
ամօթապարտ զեղծուածեմբն կշտամբիցին, ես ինքեանս ա-
կանատես նոցին որպէս Թէ յանդիմանիցեմ զնոսա: Եթէ
չինուածապետք՝ արք հոյակապք՝ կանխէին հարցանել
ցիս, Թերևս հաւանէի անտես առնել զյոռութիւնսն ա-
ձեցեալս և արմատացեալս, քան յանձն առնուլ՝ զի յայտ-
նի լիցի զօրից եղեռանց ապիկար գտանիմք զդէմ ունելոյ:

Այլ նոքա ապաքէն զպարտս պաշտաման իւրեանց
կատարեցին, որպէս կամէի զի և այլք յաւադայ զիւրեանցն
ընուին: Իսկ ինձ արդ ոչ արժան է լռել, և ոչ դիւրին
բարբառել. զի ոչ զչինուածապետի, ոչ զգանձապետի, և
ոչ զդէմս կրեմ զրգելոյ. մեծագոյն ինչ և բարձրագոյն
խնդրի յինքնակալէ. զի ուր զյաջողութեանց իւրաքան-
չիւր որ անձին ընծայէ զփառս, մեղադրանք ամենայն զնո-
վաս անկանին: Զի զօր ինչ նախ ակայց արգելուլ, և յա-
ռաջին կարգն դարձուցանել. զանարատանին անսղորդ ըն-
արձակութիւն, զսպասաւորաց աղգ աղգ և զբազմութիւն,
զարծաթի և զոսկւոյ կշիռ, զպղնձի և զատատակաց
հրաշակերտս, զարմնից և զկանանց անխտիր հանդերձա-

նէն, Թէ զկանանւոյ պահեալ ականակուռ արկանելիս՝ ո-
րով գանձք մեր'ի տար աշխարհս առ Թշնամիս մեր ան-
ցանէն գնան:

Գիտեմ իսկ զի'ի խրախճանս և'ի ժողովս ազգանին
այսոքիկ, և խնդրին հնարք ուղղութեան. այլ եթէ ոք օ-
րէնս դիցէ, տայծս եթէ սահմանեսցէ, նոքին իսկ բողո-
քեսցեն՝ որպէս կործանումն այնուիկ Հռովմայ և կորուստ
մեծապայծառ որերոյ ածեալ, և ոչ զոք անփորձ'ի չա-
րեաց Թողեալ: Սակայն, և ոչ մարմնոյ ախտք'ի պառա-
ւելն և'ի զայրանալ՝ առանց սաստիկ և դառն դեղոյ ապա-
քինին, այսպէս և հրատապ ախտաժէտ, որ ապականեալ
և անձամբ զանձն ապականէ, ոչ շնջանի դեղովք նուազ
զօրաւորօք քան զախտաբին ցանկութիւնն՝ որով տոչորի:
Աչխուժ'ի նախնեաց մերոց օրէնք հնարեալք, այնչափ և
զորս գիւցազնն Աւգոստ օրինադրեաց, այնոքիկ'ի մոռա-
ցօնս անկան, և այսոքիկ՝ որ չար ևն է՝ արհամարհեալ
խափանեցան, և առաւել ևս համարձակութիւն ետուն
զեղծութեան. զի որ զչև արգելչաւն կամի, խելայ ևս
զի մի արգելցի. իսկ որ զարգելչաւն առ ոտն կոխէ ան-
պատուհաս, ոչ ևս երկիւղ'ի նմա և ոչ ամօթ տեղի գտա-
նէ: Ա՛ւ ի՞նչ պանծալի երբեմն էր խնայութիւն. զի ամե-
նայն ոք զանձն'ի չափու ունէր, զի միոյ քաղաքի էաք քա-
ղաքակից. և ոչ'ի տիրել մերում Իտալիոյ՝ ցայս վայր զա-
ռածեալ էին հրապոյրք. արտաքին յաղթութեամբք զայ-
լոցն սովորեցաք վաստնել, զմերան ներքնով: Քանի գուշ-
նաքեայ, քանի Թեթև Թուեսցին՝ զորոց չինուածապետք
բողոքեն, եթէ այլոյր զաչս գարձուցանիցեմք: Զիք ոք՝ ո-
րում միոյն իցէ ասել Թէ Իտալիա նպաստից արտաքուստ
կարօտի, Թէ կեանք ժողովրդեան Հռովմայ ընդ արկածս
ծովու և մրրկայ ծփին, և եթէ ոչ պաղաբերութիւն գա-
ւառաց հասցէ յօդնութիւն տերանց և ծառայից և ան-
բեր մերոց անգաստանաց, ոչ անտառք մեր և ոչ հովոյք
կերակրեսցեն զմեզ: Ա՛յս հոգ՝ ինքնակալին Թողեալ է,

Հարք առեներակաք, և յապահո առնել նորա զայս՝ հիմն ի վեր տապալեսցի հասարակապետութիւնն:

Ա.յլոց չարեաց անգամն ի նոցունց պատրաստի դալման. զմէզ ամօթ, զաղքատս հարկ, և զմեծատունս յաղուրդ ածէ ի լաւ անպր. իսկ եթէ ոք յաւագանւոյն այնքան բերէ յանձին ճարտարութիւն և սատ զդէմ ունելոյ չարեացս, դովեմ զնա, և շնորհ ունիմ զի զհոգ իմ թեթեւացուսցէ: Իսկ որոց միանգամ կամք լցեն կշռամբել և եթէ զյոռութիւն, և զփառս այնուիկ ժառանգեալ՝ գերդեռեն զհեռ, և յիս զբեռն զամենայն առնեն ապաստան, յայտ լեցի ձեզ, Հարք առեներակաք, զի և ոչ ինձ կամք են թշնամութեանց լինել ձայնատուր. զի ուր ծանուներս, և բաղդատ այն է՝ զի և անիրաւս հրեմ վասն հասարակապետութեան, իրաւամբք խնայեմ զանձն յայնցանէ՝ որ ոչ ձեզ և ոչ ինձ լցեն յօգուտս:

ՏԱԿԻՏՈՍ. Տարեգիրք:

ԹՕՎՓ ԳԵՐՄԱՆԻԿԵԱՑ ԱՌ ՁՕՐՍ ԻՒՐ Ի ՄԵԿՆԵԼ, ԱԳՐԻՊՊԻՆԱՑ ԱՌ Ի ՆՄԱՆԷ

Զկեն ինձ հարսն և որդի քան զՀայր և քան զՀայրենիս սիրելագոյնք. այլ հօր իմում փառք իւր, և ինքնակալութեան Հռովմայ լցեն այլ բանակք՝ որ պաշտպանեսցեն նոցա: Զկին և զորդի, զորս ի փառս ձեր սիրելի էր ինձ նուիրել, վերծուցանեմ ի մահէնէ. որպէս զի որ առաջիկայ ոճիր՝ իմով ևեթ արեամբ քաւեսցի, և մի մահուամբ Թոռիւն Աւգոստեայ և սպանմամբ նուոյն Տիբերի պարտաւորագոյնք գտանիցիք: Զի զինչ յառուրս Յայսմիկ ոչ իշխեցիք գործել, զինչ ոչ առ ոտն կոխել: Զինչ կոչեցից զձեզ, զօրականս, որք զորդի ինքնակալին ձերոյ շուրջ պաշարեցիք զինուք. քաղաքացիս, որք ի բաց մեք-

ձէք զիշխանութիւն ծերակուտին, որք զԹշնամեաց իսկ իրաւունս, զարբութիւն հրեշտակութեան, և զօրինս աղգաց լուծէք: Դիւցազնն Յուլիոս միով բանիւ զարտասանութիւն բանակին ցածոյց, կուիրինեանս ձայնելով զՅոնսիկ՝ որք երդմնազանցքն լեալ էին. և դիւցազն Աւգոստոս սաստիւ ևեթ զնոսին և ակնարկութեամբ զլեգէոնան սպառնացս ահացոյց: Թէպէտ չև ևս հաւատար նոցին՝ այլ նոցին սերունդ եմք և մեք, զոր սպանիացին իսկ և ասորին զօրական Թէ արհամարհէր՝ զարմանք Թուէին և դժպհի. իսկ դուք առաջին և քանիերորդ լեգէոնք, մինդ զօրաւ ի Տիբերեայ ընկալեալ, և միւսդ ի բազում պատերազմունս մարտակից նմին, և այնքան մըցանակօք ի նմանէ ձոխացեալ, զայդ պերճ փոխարէն զօրավարիդ ձերում հատուցանէք: Զա՞յս ուրեմն մեայ ինձ ածել առ հայր իմ զորոյ, (մինչդեռ ի գաւառաց առ հասարակ ընդունի զորոյս առատաւորս.) զի նորին իսկ զօրք՝ նորին իսկ հինաւուրց զօրականն՝ ոչ շատ համարին զարձակուրդ և զմրցանակ, և աստ ևեթ գործին սպանութիւնք հարիւրապետաց, մերժումն հազարապետաց, բռնաքարութիւն պատգամաւորաց. աստ պատնէշք և գետք արեամբ ներկեալ, աստ իբրև ի մէջ Թշնամեաց մեայ ինձ ժամ ի ժամ սպասել մահու:

Ընդէր յառաջնուստի իսկ աւուր առնի ոչ Թողէք ձերձել ինձ ի կող զերկաթն զայն, բարեկամդ խորհրդակցդ: բարեկամագոյն քան զձեզ էր և բարերար՝ որ սուսեր ինձ մատուցանէր: Զի լաւ էր ինձ մեռանել յայնժամ չև զայսքան հզերութիւն զօրացն իմոց տեսանել. և ընտրեալն ի ձէնջ զօրավար Թողլոյր արդեօք անպատուհաս զիմ մահ, այլ զվարսոն և զերեցունդ լեգէոնացն խնդրել խնդրեր զվրէժ: Մի ներեսցեն դիք յափշտակել բերկացուց, որ պատրաստ կան, զփառս և զպարծանս ձեռնատուութեան հռովմէական պետութեան առ ի նուաճել զաշխ Գերմանիոյ: Հոգի քոյին աստուածարեալ, դիւցազնդ Աւգոստէ, և պատկեր քո, Հայր իմ Դրուսէ, յիշատակ քոյին, զզօրականիս՝ որ զամենի հարեալ կայ, ի սէր փառաց՝ քա-

հեացեն զբիծ, և՛ի կորուստ Թշնամեաց չքվեսցեն զղայրոյթ քաղաքական: Իսկ դուք, զորոց փոխեալ արդ նկատեմ զդէմն և զսիրտ, եթէ ծերակուաւին զՀրեշտակս, հնազանդութիւն զօրավարիդ, և ինձ զինի և զորդի կամիք հատուցանել, մեհենցարուք,՛ի բաց կացէք՛ի խռովարարաց այսի· այդ առհաւատչեայ սորջանաց, այդ իսկ հաւատարմութեան ձերոյ լինի գրաւական:

ՏԱԿԻՏՈՍ· Տարնգիրք:

Մ· ՏԵՐԵՆՏԻՈՍ ՎԱՍՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ԸՆԴ ՍԻԱՆՈՍԻ ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ, ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՌՆԷ ՎԱՍՆ ԱՆՁԻՆ

Ա՛ճծադէս ՚ի ասահակար ջարիք էին այնց Ժամանակաց, զանարգագոյն իսկ ամբաստանութիւնս ՚ի գործ արկանել գլխաւորսայ Ծերակուաւին, կիսոց յայտնապէս, և բազմաց ՚ի ծածուկ: Ոչ ինչ էր խարը ընդ օտար և ընդ ազգական, ընդ բարեկամ և ընդ անծանօթ, ընդ նորագէտ ինչ և ընդ վաղեմի: Որ ինչ ՚ի հրապարակի, որ ինչ ՚ի խրատ խօսուն, զնմին խմբէք խօսեցեալ ելանէր յատեան· այլ քան զընկեր փութայր կանխել ցուցանել զոր յանցաւոր, կէսք ՚ի պաշտպանութիւն անձանց, և առաւելագոյնք օրինակաւ այլոց որպէս ՚ի ժանտախտէ ապականեալ: Բայց Մինուկիոս և Սերուէոս գտատպարտեալ, յանձն առին ՚ի վեր հանել զդատակնռութիւն· ՚ի նոյն սահիպեցան և Ցուլիոս Աֆրիկանոս ՚ի Սանտոնեայ քաղաքէ Գալլիացւոց, և Սէոս Կուադրատոս, զորոյ ոչ գոյ գրնագատառ: Գիտեմ զի բազումք ՚ի պատմագրաց լռեն զդրդունց այլոց զվանդ և զպատուհաս, պարտասեալք ՚ի յաճախութենէ նոցա, և կամ առ ՚ի չտալոյ ընթերցողաց զծանր և զախտաբ տագնապութիւն՝ կրեալ յինքեանց· այլ մեզ Թուի բազում ինչ արժանի գիտելոյ, Թողեալ յայլոց անյիշատակ:

Զի ՚ի նմին ժամանակի, յորում այլք ուրանային զբարեկամութիւն Սէանոսի, Մ· Տերենտիոս ասպետ՝ հռովմայեցի ամբաստանեալ ՚ի նոյն՝ խոստովան եղև զայն, այսպէս առ առենակալս բարբառեալ· Առաւել արդեօք՝ ինձ ինձ ՚ի յաջողութիւն յաբրատա կալ քան խոստովան լինել զանցանս իմ· այլ որ ինչ և եղէք իրացն դիպիցին, խոստովանիմ բարեկամ լեալ Սէանոսի՝ ցանկացեալ բարեկամութեան նորա, և՛ի գաանեզն զայն՝ ուրախ լեալ: Տեսի զինա ընդ հօր իւրում ոստիկան առենական զօրաց և ապա ՚ի քաղաքական և՛ի պատերազմական պաշտամունս հասեալ· ազգականք նորա և մերձաւորք ամբառնային ՚ի բարձ և՛ի պատիւ, և որ ոք Սէանոսի էր բարեկամ՝ ընդհանուր առ ինքնակալին գտանէր· իսկ որոց Թշնամի էր նա կային յերկիւղ և՛ի Թշուառութեան: Ոչ զոք ածից յօրինակ· իմովք եւԹէ վտանգաւ պաշտպանեցից ամենեցուն, որ անպարտքս եմք յեղեռանէ յեսին դաւոյն: Զի ոչ Վոլսինացւոյն Սէանոս սպաս հարկանէաք, այլ մասին կլուսեան և յուլիան ազգատոհմից՝ յորս խառնեալն էր խնամութեամբ· քոմմոդ վեսայի, Կեսար, քոմմոդ իշխանակցի՛ ՚ի բռնեխութեան, ՚ի քէն կարգէր՛ ՚ի յանձանձանս հասարակապետութեան: Ոչ է մեզ դատել զմ՛ ՚ի վերայ այլոց և վասն էր կացուցանես: Քեզ զգեշապոյն իշխանութիւն եառն գնք, մեզ ծնան փառք հնազանդելոյ: Ցեսանեմք մեք որ ինչ յայտնապէս աչաց մերոց ընծային, ոմա՛ ՚ի քէն գանձք և պատիւք, և այլ ոմանց առաւելագոյն իշխանութիւն բարերարելոյ կամ ՚ի նսեմեալոյ ընդհեալ· և ոչ ոք ուրանալ կարացէ զՍէանոսի ընդհին այսմիկ հանդիպել: Զգաղանի խորհուրդս իշխանին և որ ինչ պատրաստէ նա զանիսուլ, ոչ է արժան հետազոտել, երկբայելի իսկ է և վտանգաւոր, և ոչ իսկ յայտնի: Չարք առենակալք, մի զվերջին աւեթ առնդրա Սէանոսի առաջի աչաց ունիցիք, այլ զվեշտասան ամս· մեծաբեաք և զԱտրիոս և զՊոմպոնիոս ձերբազատս իսկ և բազանս նորա գոլ՝ պատիւ մեծ համարէր: Զինչ ապաշպանեսցէ այս ամենեցուն անհատիր· քաւ լեցի· այլ ՚ի

խաղր արդար սահմանեալ, պատուհասեսցին դարանակալութիւնք հաստարհակատուրեան և դաւակիցութիւնք ընդդէմ ինքնակալին. այլ բարեկամութեան և մեծարանացն Աֆանուս ելք՝ և զքեզ քաջդ արանց և զմեզ անպարտ արձակեսցեն:

Վստահութիւն բանիցն, և այն զի գտաւ ոք որ յայտ առնէր որ ինչ յածէրն ի սիրտս ամենեցուն՝ այնպէս ազգդոյ եղև, զի չարախօսք նորա ըստ չարեացն յառաջագոյն գործեցելոյ՝ ալքսորանօք կամ մահուամբ պատուհասեցան:

ՏԱԿԻՏՈՍ. Ցարնգիրք:

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՑԻՇԵԱՆՆ ԳՈՆՑԻ

Չի հարկ է խօսել միանգամ՝ զերացն զորոց յաւիտեան լռել կամէի, մինչև՝ ի բանաստրգել կալանն, և ոչ ընդ միա անգամ ածեալ էր նորա, թէ իցէ բնաւ համարձակել յապիրատ ինչ ընդդէմ աէրութեան. և՝ ի մեծի անդ պատուին՝ եթէ ցանկայր ինչ ընորհաց, առաւել ևս արժանի լինել ցանկայր: Ա՛յս իսկ ասայր նմա ասել. — մարթի ինձ ասասանօր առաջի սրբոց խորանացս կրկնել զբանան զորս իմ իսկ լուեալ է՝ ի բերանոյ նորա, քանզի զնորս սրտի նորա յայտ՝ ի վեր հանեն, — արդ յորժամ բանք անկանելին զոզորմ բանաստրգելութենէն, ասէր, թէ անյանդ քան զանմեղսին մոի անդր, և եղև յանդաւոր քան զբնաւս:

Եղև՛ւ, ածէր Թափէր նա, իմ շունչ և կեանք՝ ծառայութիւն արքային էր և աէրութեանն բարեաւաճանք: Էր՝ ի բանս նորա աէտանել զանկեղծ ապաշաւ ընդ ցայն վայր մղել արկանել անբախտութեան իւրոյ զինքն: Բայց առանց արդարացուցանել նկրտելոյ՝ զոր նա ինքն համարձակաձայն դատապարտ արար, առ վճռսելոյ բնաւ զայնմանէ՝ ասասցուք, Թէ զոր օրինակ՝ ի մշանջենաւոր փառն՝

սրբոց ապաշխարելոյն յանցանք, ծածկեալք յորոց արարիչն՝ ի քաւութիւն նոցին, և յանբաւ փառաւորութենէ աստուածեղէն ողորմութեանցն, ոչ ևս երևին այնուհետև, այսպէս՝ ի յանցանս յայս սերաիւ խոստովանեալս և ապա այնպէս Ճոխաբար քաւեալս հաւատարիմ ծառայութեամբք, չէ արժան յայլ ինչ հայել՝ բայց՝ ի խնարհ խոստովանութիւն իշխանիս զղջականի. և՝ ի գթութիւն արքային մեծի որ մոռացօնս սրար նոցին:

ՊՈՍԻԻՆ. Դամբանականք:

ՑԱՂԱԳԱՏ ՎՏԱՆԳԻՑ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԵՆՆ ՄԵՆԱՄԵՆԱՑ

Կոստանդիանոսք և Թէոդոսք տեսին երբեմն զսէր իւրեանց առ Եկեղեցի՝ չքնեալ հակառակ Եկեղեցւոյ, և նախանձու Աշմարտութեան՝ ձեռն առեալ մոլորութեան: Իշխանաց, Տէր արքայ, չէ արժան ձեռն՝ ի կրօնն կարկառել, բայց եթէ՝ ի հովանի լինել և պահպանել զայն. երանդն նոցա անդ միայն օգուտ է Եկեղեցւոյ՝ ուր՝ ի հովուացն խնդրիցի: Ի խնդիրս վարդապետութեան՝ միայն փոքր և խնամ աւանդակրաց վարդապետութեանն զօրհնոց է առնոսա. այլ ամենայն ձայն արտաքոյ միաբան ձայնի հովուաց՝ կեղտակարծ առ նոսա լինիցի: Աստ կալցին անձանց միայն զպատիւ պաշտպանութեան, և զՀոյ և զդատաստանի՝ Թողցեն՝ ի նոսա: Հպատակ իւրեանց են եպիսկոպոսք, այլ ըստ հաւատոցն՝ հարք են նոցա: Ծնունդ նոցա ընդ իշխանութեամբ գահուն արկանէ զնոսա, այլ՝ ի խորհուրդս հաւատոց՝ իշխանութիւն աՀռոցն փառս անձին համարի հնազանդել իշխանութեան Եկեղեցւոյ: Թագաւորքն էին ինչ այլ, բայց առաջին մանկունք նորա. և Թագաւորքն մեր միշտ՝ ի մեծ պարծանս Թագին իւրեանց

համարեցան զանուն անդրանիկ որդւոյ նորա: Ոչ այլ ինչ իրաւունք են նոցա՝ բայց միայն տալ ՚ի կատարումն ածել զՀրամանս նորին, և կանխելով ՚ի հպատակութիւն՝ լինել այլոց հաւատացելոց օրինակ հնազանդութեան: Ցորժամ կամեցան ապարթանել անդր քան զսահմանդ անցանել, և յափշտակել զվարդապետութեան իրաւունս՝ զքահանայութեանն պահեստ, զայրացուցին զվերս Եկեղեցւոյ, Թող Թէ չբժշկեցին. ամբաստան մինչնորդութիւնք նոցա՝ նորանոր վէրս գործեցին, և ծնան ոճիրս նոր անուս: Ամենայն հնարողութիւնք հաշտութեան ՚ի խաղալել զոգին ապստամբութեան և ածել ՚ի միութիւն, համաձայնեցուցին զնոսա յերկպառակութիւն և յըստամբակութիւն. և իշխանութիւն նոցա՝ ՚ի մինչնորդելն միայնակ առ ՚ի մտանելոյ զնոսա ՚ի Ճշմարտութիւնն՝ յաւէրժացոյց հանապազ զմոլորութիւնսն: Գոյ նոցա պարտ առնուլ զառաքանակաւն և պահպանել իբրև զԴաւիթ, այլ ոչ ձեռն ՚ի նա արկանել: Կառուցեալ կայ գահն ՚ի նեցուկ և յատպաւէն սրբոյ վարդապետութեանն, բայց ոչ արժան ոչ պատշաճ նմա՝ լինել այնմ օրինս, և ոչ առեան՝ ուստի վճիռք նորա ելանիցեն:

Ո՛հ. եթէ կարիք և շահախնդրութիւն մարդկային չպատճառէին զգահն, բարեպաշտութիւն արքայից լիներ անշուշտ՝ անեղկեան յոյս Եկեղեցւոյ. բայց բազում այն է՝ զի զհրօճանախրութիւն նոցա հակառակ նոցին իսկ շահու դրգռեն ՚ի գործ, կամ մնոսին պատճառանօք շահու նոցա՝ ան զհակառակն կրօնից գործել:

ՄԱՍՈՒԼԵՈՆ. փոքր քառասնորդք:

ՎԵՐՋԱԲԱՆՔ

ՊԱՏՈՒԻՐՔ ՑՆԴՆԴՈ ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԵՆՆ

Ի բեմական կամ ՚ի վարդապետական Ճարտասանութեան, ուր անկ է առաւել ըղձակերտ առնել ունկնդրացս զՃառն և շարժել զսիրտս նոցա, վերջաբանութիւն էական մասն է Ճառին. զի նա զյետին ցունցն տայ ոգւոց, և ձգէ զկամս և զվիժս յօժարութեան ազատ ունկնդրացս: Ոչ նոյն կարևորութիւն է յառեղական Ճարտասանութեան, ուր պարտ է դատաւորի յանձին բերել զդէմս օրինաց, ուր ոչ զկամս ՚ի յօժարութիւն՝ այլ զվիտս ՚ի հաւանութիւն խնդրի ածել: Այլ զի մարդ է և դատաւորն ինքնին, չէցէ անօգուտ ըղձակերտ առնել և զնա ՚ի նպատս անմեղութեան և տկարութեան, արդարութեան և Ճշմարտութեան. և վերջաբան սրտաշարժ չէ ինչ անարժան Ճարտարախօսութեան, եթէ չէցէ ՚ի կիր արկեալ ՚ի յաղթանակ անիրաւութեան տուութեան և եղեռան:

Յառնախօսութեան, ուր դատումն էցէ անմէջ ՚ի մի կոյս, վասն որոյ և ծաղրելի լինի է հանդէս առնել անդ սրտաշարժ Ճարտասանութեան, պարտ է վերջաբանութեան դոլ համառօտ բովանդակութիւն առաջարկութեան Ճառին. այս ինքն տնփոփել անդ զմատունս սփռեալս և լուսաբանեալս յընթացս Ճառին, յուշ ածելով ունկնդրացս զայնոսիկ ՚ի դատել նոցա զայնմանէ. և յօրինի վերջաբանս այս՝ կամ անցանելով ընդ ծայրս իրաց՝ մի ըստ միոջէ ՚ի համար ածելով, և կամ անդրին ՚ի մէջ ածեալ զբաժա-

նուաճն Ճառին՝ բացատրելով զինուածս պատճառաբանութեանց՝ որ զմասանց իւրաքանչիւր գլխաւորաց արարեալ։

Լաւ ևս է, ասէ Կիկերոն, ի մէջ ածել անդրէն սուղ բանիւ զպատճառս հակառակորդին, և որովք այնոքիկ հերքեալ լցին և եղծեալ։ Ըստ այսմ օրինակի՝ ոչ զպատճոյցս ևեթ Ճառին, այլ և զհերքուածն փաստից հակառակորդին յուշ ածեալ ունկնդրաց, իրաւունք լցեն առնել խօսքին հարցանելոյ զնոսա ևթէ խնդրիցէ՞ն այլ ևս ինչ, և կայցէ՞ մնայցէ՞ ինչ գժուարութիւն դառելոյ զիրացն, կամ տարակոյս փարատելոյ։ Կանոնն հանրական, զոր տայ Կիկերոն վասն այսր քաղուածոյ Ճառին, է առ ի յուշ ածել անդրէն զկարևոր ևեթ մասունս, և առ ի տալ իւրաքանչիւրոց յայնցանէ առաւելագոյն զօրութիւն. այլ ըստ կարի նուազ ընդարձակութիւն. որպէս զի ոչ Ճառն նորոգեալ թուէսցի, այլ յիշատակ նորին։

Արագ արագ թուութիւն մասանց, ձեալ ի ձեպոյ երկայնաբանութիւն, ձեռնարկութիւն՝ որ ամփոփիլ զգասն ողջոյն ի մի կէտ տեսութեան, բաւէ ոչ գոն ուրեք ի վերջաբանութիւն։ Գեղեցիկ օրինակ է առ այս Իսաւյն առաջարկութիւն սահմանելոյ՝ Ոդիսեայ թէ իւր անկ լցեն սպառազինութիւնք Աքիլլեայ. Արկցին ի մէջ թշնամեաց զինք գիւցազնին, և հրամայեսցի մեզ գնալ առնուլ զոյնոսիկ. և որ ոք յիւրաքանչիւրոց ածցէ զնոսա, նա լինքն նոքիմիք վարեսցի։

Այլ եթէ գասն լինքնին, ի բնէ տայցէ տեղի սաստիկ իմն Ճարտասանութեան, քաղուածն այն՝ զոր Կիկերոն կոչէ Թոռոն Տասանց պահանջէ զհետ իւր կիրս իմն Ճարտասանական ցասման կամ կարեկցութեան։ Ցասումն է առեալի կացուցանել զանձն կամ զդասս հակառակորդին, և պարտ է նմա յառաջ գալ ի հանդամանսց՝ որ ծանրացուցանեն զդասն, իսկ վերջաբանութիւն ապերասկան, զոր Կիկերոն կոչէ ազէր, է առ ի շարժել զունկնդիրս ի կարեկցութիւն։ Պարտ է, ասէ նոյն ինքն, ողբալ նախ զգիս և պատրաստել ի դութ. և հնարք, զոր պարտ է ի

կիր առնուլ առ այն, հայթայթին յընդաբոյս տկարութենէ մարդկան, և ի զօրութենէ բազդին՝ որում եմք խաղալիք ամենեքին։ Արդ յածել ի մէջ զտեսութիւնս զայսոսիկ ծանր և բազմիմաստ ոճով, ասէ վարժապետս այս Ճարտարխօսութեան, յածնուն միտք մարդկէղէն և ածին ի կարեկցութիւն՝ նկատելով զանձանց տկարութիւն յայլոսն նմանեալ իւրեանց։

Այլ ընդ առնուլ ի միտ զչարժուն սրտի ունկնդրաց՝ ոչ ևս պարտ է, ասէ Կիկերոն, յերկարել զողբս. զի ըստ բանից Ապոլոնեայ Ճարտարախօսի՝ Զիք ինչ որ արագ քան զարտասուս ցամաքեսցի։

Օրինակ հոգեշարժ վերջաբանութեան է այն, զոր Կիկերոն առնէ յատենաբանութեան իւրում ի ջատագովութիւն Միլոնի։ Անդ Ճարտարախօսն աղերսաբանութեամբ փրկէ զամբաստանեալն ի խոնարհելոյ յաղաչանս, և պահէ նմա զամենայն արժանապատուութիւն՝ որ անկ է առն ազատի ի չարաբաստութեան։ Այլ գեր ի վերոյ քան զաղերսաբանութիւն է ցասումն նախակարգեալ անդ, յորում ցուցանէ նա անօրինակ Ճարտարխօսութեամբ զի եթէ Միլոնի դարանեալ էր կենաց Կլոդիոսի, պարտ էր հասարակապետութեան փոխանակ պատուհասելոյ զնա՝ ընդ հնում։

Ի վարդապետական Ճարտասանութեան է նպատակ ինչ շարժման սրտի ի վերջաբանին, որ բազմահայեան Ճառից ևեթ պատկանի. այսոքիկ է շարժել զսերտս ունկնդրաց ի կարեկցութիւն անձանց և ի գարշուն յիւրեանցն ախտից, կամ յարհաւիրս ընդ վտանգ անձանց։

Դուն ուրեք պատահէ Ճարտարախօսի քրիստոնէի ջատագովել զդասս բացակայից. բայց միայն ի խօսքին զաղաքատաց և զողբոց՝ որպէս Վինկենտ պաւլացւոյն, յորժամ աչերն առ բարեպաշտ տիկնայս ունկնդիրս իւր. Հապա տիկնայք, կարեկցութիւն և գութ ետուն ձեզ ընդունել յորդորիս զմանկտիդ. եղերութք դուք դոցա ըստ չնորհաց ի մայր ի լքանել Թողուլ զնոսա մարց իւրեանց ըստ բնու-

Թեան. լքանիցէք զնոսա արդ և դուք. դադարիցէք արդ ի գոլ նոցա մայր առ ի լինել նոցա դաստուր: Մահ նոցա և կեանք են ի ձեռս ձեր: Զբարեաս նոցա և զդատ յանձն առեալ է իմ. ժամ է արդ առլոյ դատակնիք, և յայտ առնելոյ եթէ ոչ ևս կամիք ողորմել նոցա. կեցցեն, եթէ կամիցիք հանապազորդել նոցա զթեաձեր խնամս ձեր. մեացին, եթէ փակիցէք ի նոցանէ զդուռն ձեր:

ՄԱՐՄՈՆԹԵԼ:

ՎԵՐՋԱԲԱՆ ՔԱՐՈԶԻՆ ՅԱՂԱԳՍ ՓՈՐՁՈՒԹԵԱՆՑ ՄԵՆԱՄԵՆԵԱՑ

Ամենակալ Տէր, պահապանդ մանկութեան թագաւորաց, մանաւանդ որբացեալ թագաւորաց, մերժեա զամենայն զհաղբս զայսոսիկ ի մեծապին մանկանէս՝ զոր պահեցեր մեզ յողորմութեան քումմ: Կարէ կարգալ առ քեզ որպէս երբեմն արքային ըստ սրտի քումմ: Հայր իմ և մայր իմ Թողին զիս: Ա՛յն ինչ բացեալ իմ զաչս ի լոյս, անդէն մահ կանխահաս փակեաց զաչս Ագեւայդի, որ տարաւ զիս յարգանդին, որոյ և սիրելի և մեծաշուք տիպք կերպարանացն նկարեալ կան յերեսս իմ. նոյնպէս և զբարեպաշտօն արքայազնին՝ որ հայրն է կենացս, որոյ և աստուածատեր խնամոք գրոշմեացին անջինջ ի սրտի իմում. Հայր իմ և մայր իմ Թողին զիս: Ա՛յլ դու, Տէր, որ հայրդ ես Թագաւորաց և Աստուած հարցն իմոց, ընդ քոյով պահպանութեամբ առեր զիս, և ի հալանի Թևոցդ և հայրագորով խնամոցդ ծածկեցեր զիս: Եւ Տէր ընկալաւ զիս: Մեծաշնորհ Տէր, պահեա արդ զանմեղութիւն իւր իբրև զդանձ մեծարգի քան զթագն, զարգացս զայն ընդ հատակին. առ ի ձեռոգ զսիրա նորա, և անսուրբ հոգւ հնչա յանկութեան մի երբէք պղծեսցէ զսրբարանն՝ զոր ի յաւիտենից քեզ սեփականեցեր. Պահեա զամբծութիւն: Հայեաց ի

սերմանս ուղղութեան և Ճշմարտութեան՝ զոր վարեցեր ի հոգի նորա. ի միտս արդարութեան և իրաւանց՝ որ օր ըստ օրէ բարգաւաճին և ընդարձոյս բնածին Թուին ի նմա. ի գեղաբողբոջ առաքինութիւնն առ խորամանկութիւնս և առաքեան գովեստս շողմարարին. և մի՛ սար երբէք թոյլ մարգահաճութեան՝ ապականել զբարեգուշակ նշանս հանդերձեալ երջանկութեան մերոյ:

Թագաւորեացէ ի մեր բարեբաստութիւն, և ի փառս իւր լինի Թագաւորեալ: Փառասիրութիւն իւր եղիցի միայն երջանկացուցանել զհպատակսն. պարծանք իւր սիրելի քան զամենայն՝ լինի անուն բարերար և խաղաղասէր Թագաւորի. այնչափ աւելի մեծ եղիցի, որչափ սիրելի ժողովրդեան իւրում: Ամենայն Թագաւորաց բարեաց՝ կացցէ օրինակ, և խաղաղարար այս իշխան՝ Թողէ աւս զհետ իւր իշխանս նմին նմանս. Զի գոն ինացուածք առն խաղաղարարի: Ընկալ, ով Տէր, զուխտս մեր զայսոսիկ, և լինիցին մեզ առհաւատեայ խաղաղութեան այսր կենացս, և յոյս հանդերձելոյն. Ամէն, եղիցի:

ՄԱՍԻԼԵՈՆ. փոքր Քառասնորդք:

ՎԵՐՋԱԲԱՆ ՔԱՐՈԶԻՆ ՅԱՂԹԱՆԱԿ ԿՐՕՆԻՑ

Թագաւորքն սուրբք որոց անուանքն գրեալ են ի յիշատակարանս մեր, լինիցին ցանկ մեծամեծար շուք Թագաւորութեանն, և շքեղ օրինակք գարուց ի գարս աւանդեալ յաջորդացն իւրեանց:

Զառաջինն հայեցուածս աչաց քոց, Տէր արքայ, պշուցեալ է ի վարս բարեպաշտին այնոցիկ արքայից՝ քոյոց նախնեացդ. հանապազօր եռանդն ածէն քեզ յառաքինութիւն ի ձեռն մեծագոր օրինակացն: Յիշեա զմեծն Կարոլոս և զուզուելին սուրբ, որ պայծառացուցին զձառնանչ

Թագիդ զոր կրես՝ անեղծական փայլմամբ արդարութեան և բարեպաշտութեան. և զայս յեղկեղն զոր հանապազ յունկն մեծութեանդ՝ զգօնութեան խրատք: Մի և այդչափ խակ ի վեր ելաներ. մերձ ես յօրինակս կարևորս քեզ՝ որպէս և սիրելիս, և ի մօտագոյն ականէ բղխէ յերակս քո բարեպաշտութիւն՝ ընդ արեան հօր բարեպաշտի և մեծաշուք հաւու հօրդ:

Դու միայն ես, Տէր արքայ, գահու նոցին պայազատ, իցէ՛ թէ և առաքինութեանցն լինիցես. իցէ՛ թէ մեծապանծ օրինակդ կենդանացոյն ի քեզ նմանութեամբ առաւել քան անուամբք. իցէ՛ թէ լինիցես և դու օրինակ յաջորդացն քոց թագաւորաց:

Եթէ գուէթ գորովմ մերոյ ոչ պատրէ զմեզ, եթէ մանկութիւն այնքան խնամովք և ընդ այնպիսի ձարտար ձեռօք գաստիարակեալ, յորում բնութեան աղնուականութիւն քան զկրթութեանն կանխել յառաջել թուի զոր ամենայն, ոչ յընդունայն ըղձապատում գուշակութիւնս հանէ զանձնէս մեր, այժմէն իսկ ահա երևի մեզ այսպիսի յոյս, այժմէն տեսանելիք ցոլացեալ ի հեռուստ զառաջին նշոյլս հանդերձելոյ բարեկենդանութեան, այժմէն նախնեացդ փառաւորութիւն նկարեալ ի ճակատդ աւետաւորէ մեզ զմեծամեծ բարեմասնութիւնդ: Արդ՝ ո՛ տայր, Տէր արքայ, — և այս իղձ բովանդակիչ ամենայն — ո՛ տայր թէ յաւուր միում այնպէս մեծ լինիցիր, որպէս հաց մեզ սիրելի:

Մեծդ Աստուած, եթէ այս իմ աւետ ուխտք և խնդրուածք էին, վերջինք անշուշտ՝ զորս պաշտօնն իմ, կապեալ այսուհետև՝ գաղանի խորհրդովք տեսչութեանդ՝ ի հոգս միոյ յեկեղեցեացդ քոց, ներե՛ք ինձ մատուցանել քեզ ի վեհապոյր տեղւոջս, եթէ իմ միայն ուխտք և պաղատանք էին այսոքիկ, ես, ով եմ ես՝ զի յօտասցայց թէ ելանիցեն մինչև յաթոռդ քո. այլ ազերքս են այսոքիկ թագաւորացն սըրբոց՝ որ հովուեցին պետութեանս, և արկեալ զնոցս իբրեանց առաջի յաւիտենական սեղանոյն առ ոտս գառինն,

ինդրեն ի քէն վասն մեծաշուք մանկանս զոսկին արդարութեան, որում ինքեանք եղեն արժանի: Ազերքս են մանեանդ բարեպաշտօն արքայազնին՝ ծնողի սորա, որոյ անկեալ որպէս յուսամբս՝ յերկինս առաջի երեսաց փառաց քոց, անլռելի պաղատի ի քէն՝ միոյ միայնոյ ժառանգիս թագին իւրոյ՝ լինել և ժառանգ շնորհացն և ողորմութեանց՝ որովք առ նա ինքն կանխեցեր յառաջագոյն:

Ազերքս են ամենեցուն սոցա իմոց ուսկիզբացս, որոց հաւատացեալ զինամն մանկութեան սորա, կամ կապեալք անընդմիջելի ընդ վեհապետս անձին իւրում, սփռեն առաջի քո զսիրտս իւրեանց, որպէս զի մանուկս այս մեծապին, գոգցես որպէս եղեալ հեծութեանց մերոց և արտասուաց, ոչ միայն անկորուստ պահպանեսցի, այլ և փրկութիւն եղիցի իւրում ժողովրդեան: Զի՞նչ ևս տասցից. աղերքս են այսոքիկ, ով Տէր, զոր ազգն ողջոյն ուղերձէ առ քեզ այսօր ընդ իմ բերան, ազգ՝ որում հովանի եղեր ի սկզբանէ, որ և ի վերայ ամենայն մեզաց իւրոց՝ մանն է տակաւին ծաղկաւէտ՝ Եկեղեցւոյ քոյ սրբոյ:

Փակիցեմ մեծդ Աստուած, զպուճս ողորմութեանց քոց՝ ընդդէմ այսչափ պաղատանաց: Աստուած զօրութեանդ զարձ արդ առ մեզ. Աթոռոջ զօրութեանդ դարձ: Հայեաց ի բարձանց երկնից, և տես՝ մի զանառակութիւնս՝ զայսպիսի և զգազանի, այլ զաչեաս առաջին քրիստոնեայ թագաւորութեանս, զայգուցս սիրելւոյ՝ զոր ձեռն քո անկեաց և այնչափ վկայից արեամբ առագեցաս. Հայեաց յերկինս ի քեզ, այդ արա այգեցոյս այսմիկ զոր գնկեաց ազ ֆո: Արկ ի վերայ նորա զառաջին աչս ողորմութեանդ. և եթէ մեզք մեր ստիպեն տակաւին դարձուցանել զերեսս քո ի մէնջ, գոնեայ անմեղութիւն շնորհաշուք մանկանս զոր ետուր ի վերայ մեր, հրաւիրեսցէ և տացէ զքեզ ժողովրդեան քումմ. ի չէրայ ուրդոյ մարդոյ՝ զոր ազբաղոսցէր գնա ի ֆեզ: Շատ իսկ տառապեցուցեր զմեզ, Աստուած ահաւոր. դարձիր ընդ մեզ զարտասուս՝ զոր տան մեզ հոսել այնչափ գանք և հարուածք հե-

ղեալք ՚ի վերայ մեր ՚ի սրտմտութենէ բարկութեան քոյ· փոխանակ աւուրցն ցասից և ցասման և վրիժուց՝ շնորհեա աւուրս ուրախութեան և գթութեան· ուր առաւել եղեն պատուհասքդ՝ առաւելեսցին շնորհք քո, և ցանկալի մա- նուկս լիցի մեզ պարգև՝ ՚ի գալման կոյսեառնացս:

Արա զսա, Աստուածդ մեծ, Թագաւոր ըստ սրտի քումմ, այս է՝ հայր Ժողովրդեան իւրոյ, Եկեղեցւոյ քումմ պաշտպան, օրինակ վարուց աշխարհին, խաղաղարար մա- նաւանդ քան յաղթօղ ազանց, դրացեաց իւրոց միշտորդ իրաւարար՝ քան թէ ահ և երկիւղ· և զի Եւրոպէ առ հասարակ նախանձեսցի ընդ երանութիւնս մեր· և յառա- քինութիւնս սորա խանդաղատեսցի առաւել, քան թէ ընդ յաղթանակս սորա և ընդ աշխարհակալութիւնսն լինելոյ նախանձաբեկ:

Լուր, Աստուած իմ, սիրալիր և արդար աղաչանացս· և ժամանակեան պարգև քո՝ լինիլ մեզ առ հասաւատչեայ պատրաստութեամբ մեզ ՚ի յաւիտեանս. Ամէն, եղիցի:

ՄԱՍԻԼԵՈՆ· փոքր Քառասնորդք:

ՎԵՐՋԱԲԱՆ ՓԱՐՈՉԻՆ

ՅԱՂԱԳՍ ՕՏԱՐԹԵԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՓԱՌԱՑ

Կրօնք, պաշտօն բարի առ Աստուած, մտերմութիւն ամենայն պատուիրանաց զոր նայն հրամայէ մեզ առ ՚ի պէտս այլոց և մեր, միաք սուրբ և յատակ յամենայն խղճէ, սիրա ուղղընթաց յամենայն ընդդիմակացս՝ որ խոչ ընդ ոտն անկանիցին, պինդ առ ամենայն հրապոյրս՝ որ չուրջ պատիցեն սատերբուրել զնա, ամենայն ծորելեացս դեր ՚ի վերոյ և Աստուծոյ միայն հլու հպատակ, այդ աւագիվ է փառք անվթեպ, և հիմն ամենայնի՝ որ մեծ զմարդիկ յարդարիցէ: Եթէ զնաբիսիդ զայդ խախտեացես, կործանի շի-

նուածն ողջոյն, լաւութիւնք համօրէն տապալին, և չինայ ինչ, վասն զի մեք միայն ձիամք:

Տէր արքայ, լեցի արքայութիւնդ քո զարմանալեօք ըս- քանչելի, տարցիս մինչև ՚ի ծագս երկրի զփառս անուան քոյ, ամենայն աւուրքդ մեզ մի նշան յաղթութեան կանգ- նեսցեն, յաւելցես այլ ևս նորանոր պատկս ՚ի խոյրս թա- գաւորացն՝ քոյոցդ նախնեաց, սիրելիքդ ամենայն գովու- թեամբդ հնչեսցեն, եթէ Աստուած չիցէ ընդ քեզ, եթէ փոխանակ արդարութեան և բարեպաշտութեան հպար- տութիւն լինիցի շունչ գործոցդ, ոչ եղիցես Թագաւոր մեծ· յաջողութիւնքդ ՚ի մեղս դարձցին, յաղթանակքդ ՚ի համաչարհի ազէտս· լինիցիս ահ և երկիւղ դրացեացդ, այլ ոչ եղիցես հայր Ժողովրդեան քումմ. կարիքդ ևեթ լի- նիցին քոյ առաքինութիւնք, և ՚ի վերայ ամենայն դրուա- տից, զոր տայցէ քեզ մարդահաճութիւն անմէտ ընկերն Թագաւորաց, յաչս Աստուծոյ, Թերևս և ապառնեաց, ոչ այլ ինչ Թուեսցին այնոքիկ քան Թէ արդարև խակ յո- ռութիւնք: Այսուհետև վասն վեհափառ մանկանս, Տէր Աստուած, փառս ոչ զմարդկայինս զայս խնդրեմ ՚ի քէն, արդէն խակ նկարեալ երևի այն ՚ի ճակատ իւր, նա և յե- րակունան խակ խաղայ ընդ արեան նախնեացն իւրոյ Թա- գաւորաց· և անգամին ՚ի ծննդենէն մեծ հառս դու զնա յաչս մարդկան, իբրև զի արարեր զնա ծնունդ արեան դիւց- աղանց· այլ զառ ՚ի քէն փառան: Զպարգևս բնութեան՝ որովք աղնուացուցեր զնա՝ պերճացո անեղծական փայլ- մամբ բարեպաշտութեան· յամենայն սիրելի հանգամանան՝ որ այժմեն ժողովրդեան իւրում ցանկալի առնեն զնա, յաւել և զայնոսիկ որ գիտեն հաճոյ առնել զնա յաչս քո· ՚ի սերունդ նորա և ՚ի քաջութիւն ազգին ապաստան արա զնոսա աշխարհակարգ փառացն· ոչ այլ ինչ խնդրեմք առ ՚ի քէն, մեծդ Աստուած, բայց դէտ ակն ՚ի վերոյ դնել պահպանութեան նորա և փրկութեան: Նախնեացն իւրոց պատմութիւնք երաշխաւորեն մեզ զքեզ և զբարգաւա- ճանս արքայութեան իւրոյ, այլ դու միայն ես բաւական

եբաշխաւոր լինել անմեղութեան և սրբութեան կենցաղ։ Աշխարհի փառք ժառանգութիւն լիցի ձեզ կարգեալ ՚ի հարց անտի իւրոց ըստ մարմնոյ. այլ դուք, Աստուած մեծ, հայրդ ըստ հաւատոյ, տուր նմա զնմաստութիւնն զփառս և զժառանգութիւնն որդւոց քոց։

Սիրա նորա հանապազ ՚ի ձեռս քո լիցի, և սիրտ նորա մեծ ևս եղիցի քան զյաջողուածս նորա և զյաղթանակս. երկիցի ՚ի քէն ահաւորդ Աստուած, և թշնամիք իւր սարսեսցեն ՚ի նմանէ, սիրեսցեն զնա իւր ժողովուրդք, կացցէ տեսիլ զարմանասքանչ ՚ի դարս դարուց. և զի չիայ ինչ մեզ յայնժամ խէթ զփառաց իւրոց, ոչ ևս ինչ խիթք կաթսեցուք վաւխաքէլ ՚ի մեր երանութիւն. Ամէն, եղիցի։

ՄԱՍԻԼԵՈՆ. փոքր ֆառաւանորդք։

ՎԵՐՋԱԲԱՆ ԳԱՐՈԶԻՆ ՑԱՂԱԳԱԾ ԹԼ Ի ՍԻՐՏՍ ՄԵԾԱՄԵԾԱՑ ՋԻՆՋ ԱՐԳԵԼ ԼԻՆԻՑԻ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ

Փրկիչ իմ այսօր սիրելն առնես և զոս թագաւորել ՚ի վերայ հանուրց ազանց. վերջին հեծութիւնքդ նուիրեան լիին երախայրիք են թագաւորութեանդ, և խաչիս նուաճելոց ես զսիրելսդ։ Մեծդ Աստուած, նա հաստատեսցէ զարքայութիւն պատուական մանկանս, զոր աստ առ ոտս քո տեսանես. կրօնքն սուրբ օրհնեսցէ զնաւակատիս նորա և պսակեսցէ զաւուրս նորա. նախնիքն իւր մեծաշուք բազմեցուսցին զայն ՚ի գահ ՚ի միջի մերում, նոյն ինքն պահեսցէ ՚ի նմա զմանուկս վեհափառ, որպէս չիք ինչ տակաւին մատուցանել քեզ՝ բայց զանմեղութիւն իւր, զկարցն հաւատս, զաղէտսն որ զարքայական օրրանն պաշարեցին, և զսիրայօրդոր խանդաղակաւթ գոռով իւրոց հնազանդելոցն։

Կեցո զորդի սրբոց բազմաց և պաշտպանեայ հաւատոցն սրբութեան. նոքա երբեմն զմահ ընդ կեանս խառնեցին և ՚ի բաց եդին զթագ իւրեանց, երթալ թափել զժառանգութիւն քո. պահեա մեծագին մանկանս զնոսա, զի կարօղ լինիցի յաւուր միում հովանի և պահապան լինել եկեղեցւոյ, զոր ատ քեզ հայր այսօր ՚ի ժառանգութիւն արեամբդ քով ստացեալ. գարձան եկին նոքա բարձեալք զորբանուէր աւարտման Խաչին. աւանդն սուրբ, որով Ճնոհացուցին զթագաւորեալ քաղաքս զայս, բարեպաշտութեան հարցն պատուական առհաւատչեայն, Ճեպեսցէ մանաւանդ այսօր զնորս քո ՚ի թիկունս օգնականութեան սորա։ Մի թողուր զժառանգ այնչափ թագաւորաց որ առաջին գտան վրէժխնդիրըդ անուանդ քո և փառաց։ Սուրբ բարկութեանդ ինայեաց ՚ի սա ՚ի հարուածս անդ վեհափառ տոհմին իւրոյ. տուր մեզ, մեծդ Աստուած, վայելել ՚ի բարերարութեան քումմ, զոր այնչափ ծանրագնի գնեցաք. բարեբախտ նշխարս այս բազմաթիւ հոյակապ դիմոց զորս տեսաք անկեալս միահաղոյն, դարման լիցի կորըստեանց մերոց, և սրբեսցէ զարտասուս մեր. լո զաս զմիայնս՝ ամենայն ընորհագդ, զոր յանապատ գանձոք պահեալ էիր այնչափ իշխանաց, որ թագաւորիլոց էին փոխանակ սորա, և որոց անկ իսկ էր թագն. միայն ՚ի սա՝ զոր ինչ բաժանելոց էիր ընդ այլս, և արքայութիւն իւր բովանդակեսցէ զամենայն օրհնութիւնս և զաղգի ազգի երանութիւնսն, որոց ակն ունէաք ՚ի միոջէ միոջէ թագաւորութեանց արքայազանցն՝ զոր օրհաս տարաժամ սուր տարաւ ՚ի մէնջ. որոց անշուշտ ոչ զլացար զթագն երկրաւոր՝ յոր կարգեալն էին ՚ի բնէ, բայց առ ՚ի հիւթել նոցա զյաւիտենականն յերկինս. Ամէն, եղիցի։

ՄԱՍԻԼԵՈՆ. փոքր ֆառաւանորդք։

ՎԵՐՋԱԲԱՆ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԻՆ ԳՈՆՏԻ

Եկայք, ժողովուրդք, ճն եկայք այժմիկ. այլ մանաւանդ եկայք իշխանք և տեարք, և որ գաւիք վերինիր, և որ զդրուշս երկնից բանայք մարդկան, և առաւել քան զբնաւս՝ դուք արքայք և տիկնայք, ազնուական շառաւիղք Թագաւորացդ բազմաց, լուսաւորք Գալլիոյ, այլ այսօր նահատակեալք և ի Թուխս համակեալք ցաւոցդ՝ իբրև մառախլապատք, եկայք տեսէք զդրոյն ինչ որ մեայ մեզ յայնչափ ի մեծաշուք սերունդենէ, յայնչափ մեծութենէ, յայնչափ փառաց. ակն արկէք չուրջանակի յամենայն կողմանս: Աւաղիկ է զոր կարօղ գտաւ առնել փառասորութիւն և բարեպաշտութիւն ի պատիս դիւցազնին. չքեղ անուանք, արձանագիրքք, մնոտի նշանակք այնք՝ որ ոչ ևս է ի միջի, պատկերք յարտօսրաթոր կերպարանս շուրջ զչիմաւ, և անցաւոր օրինակք ցաւոց՝ զոր ամենայնիւ հանդերձ՝ վարէ տանի ժամանակ. սիւնք՝ որ մինչև յերկինս ամբառնալ Թուին զբարձրանշան վկայութիւն չքութեան մերոյ. և յամենայն պատիս յայս՝ չիք ինչ որ ի միջոյ պակաս իցէ, բայց այն ևեթ՝ որում լինին: Լացէք արդ ի վերայ ողորմ մնացուածոց մարդկեղէն կենաց, ողբս առէք ի վերայ եղուկ անմահութեանն՝ զոր ընծայեմք դիւցազանց:

Այլ մա մաոիք մանաւանդ ևս դուք՝ որ հրաբորբոք ընթանայք յասպարիսին, հոգիք պատերազմականք և ամեհիք. ևս ոք արժանագոյն գտաւ հրամանատար ձեզ կալոյ. այլ յիմ ումեք պարկեշտագոյն գտէք զհրամանատարութիւն: Աչխարեցէք ուրուն զմեծ զօրավարն, և ասացէք հեծեծելով. Աւասիկ որ առաջնորդէրն մեզ ի վտանգս. ընդ սուաւ վարժեալ կրթեցան այնքան անթուանի զօրապետք, զորս օրինակք իւր բարձրացուցին յառաջին պատիս պատերազմի. կարող էր ուրուն իւր տակաւին վանել զմարտս, և աւասիկ ի լռութեան ասա իւրում՝ ա-

նուն անգամ խրախոյս մեզ հարկանէ, և միանգամայն ազդեցութիւն առնէ մեզ, Թէ առ ի գտանելոյ ի մահու զնըշմար ինչ մնացեալ ի վատակոցս, և չերթալոյ ամենևին անյոյս ի յաւիտենից յարկս մեր՝ ընդ երկրաւոր արքային պարտ է պաշտել և զարքայն երկնից: Տարայք ուրեմն պաշտօն Թագաւորին այնմիկ անմահի. որ լինէ ազորմութեամբ, և զմի ևևեթ հեծութիւն անգամ Թուեսցէ զձեր, և զբաժակ մի չուր մատուցեալ յանուն իւր, քան Թէ այլք բնաւ զարիւն ձեր հեղեալ բովանդակ. և սկիզբն հաշուելոց զժամանակ պիտանի ծառայութեանցդ՝ առէք յօրէ յորմէ ընծայեցէք զանձինս ձեր Տեառն բարեբարի:

Իսկ դուք ոչ գայցէք յայս տխուր մահարձան, դուք՝ ասեմ, զորս հաճեցաւ նա հանել ի կարգ բարեկամաց: Ամենեքին միահամուռ, յոր չափս մտերմութեան իւրոյ և ընկալեալ իցէ զձեզ, փարեցարուք զչիրմաւս, հեղէք արտասուս հանդերձ պաղատանօք, և սերացեալք ընդ իշխանին մեծի դիւրահեշտ բարեկամութեան և ընդ անուշակ կենացն հաղորդութեան, պահեցէք զիշատակ դիւցազնին՝ որոյ հաւատար էր բարութեան իւր ընդ սրտին ատելութեան: Ո՛ տայր Թէ սկրեալ լինէին ձեզ միշտ խօսք զնմանէ, ո՛ տայր Թէ շահէիք յատաքինութենէն նորա, և մահ նորա զոր արտասուէք՝ լինէր ձեզ ի մխիթարութիւն, հանգոյն և յօրինակ բարի:

Իսկ ինձ, եթէ ներկացի յետ այլոց ամենեցուն գալ և ինձ հատուցանել զպատին պարտս առ այս գտմբարան, ոչ իշխանն, այլ արժանաւոր գովութեանց մերոց և ցաւոց, յաւիտեան կեցցես յուշ յիշատակիս. պատկեր քո կենդանի նկարեալ կացցէ անդ, ոչ անվեհեր քաջութեամբդ որ զպաղութիւն աւետեր, ոչ. չհամիմ տեսանել ինչ ի քեզ զոր եղծանէ ի նմա մահ. այլ ի պատկերն անդ կերպարանք իցեն քեզ անմահականք. տեսից զքեզ անդ որպիսի հերն յաւուրն յետնում ընդ ձեռամբն Աստուծոյ, յորժամ փառք նորա սկսան լինն երևել քեզ: Անդ տեսից զքեզ առաւել յաղթական քան ի Փրխտուրկ և ի Ոզ-

ռոա. և հիացեալ ընդ չքնաղ յաղթանակդ՝ 'ի խոստովա-
նութիւն գոհութեան գոչեցից զգեղեցիկն բարբառս աշա-
կերտին սիրայոյս. Ե՛ այս է յաղթութիւնն՝ որ յաղթէ աշխարհի,
հաւատքն մեր. Ճշմարիտ յաղթութիւն, որ կոխան դնէ ոտից
մերոց զբնաւ աշխարհ, հաւատքն մեր են: Վայելեա արդ,
իշխանդ, 'ի յաղթութիւնդ յայդ, վայելեա յաւիտեան՝
անմահ զօրութեամբ պատարագիս. հաճեաց ընդ յետին
ճիպն ծանօթ քեզ ձայնի. դու վախճան առնիցես ամենայն
ճառից այսոցիկ: Ցայսմ հետէ՝ փոխանակ զայլոց մահ ող-
բալոյ, մեծդ իշխան, կամիմ ուսանել 'ի քէն՝ սուրբ առ-
նել զնոս. երանի թէ 'ի սպիտակ ալեաց աստի խրատեալ
զհամարոյն՝ զոր կայ ինձ տալ ընդ պաշտաման սպասաւո-
րութեանս, պահեցից հօտիս՝ զոր պարտիմ մնուցանել բա-
նիւ կենաց՝ ընդխարեալ միացորդս ձայնիս որ նուաղի և
զեռանգանայ՝ որ չիջանի:

ՊՈՍԻԻՆՔ:

ՎԵՐՋԱԲԱՆ ՁԱՌԻՆ ՈՐ ՎԱՍՆ ԱՐՔԱՑԻՆ ԴԻՈՑԱՐԱՑ

Ոչինչ յինէն կարծեմ ապախտ արարեալ, այլ թո-
ղեալ ինչ 'ի յետին մասն գտից, որ այն ինքն է՝ ամենայ-
նիւ ամենայն իրօք հաշտեցուցանել Հառից զքեզ ընդ Ինո-
սարի: Չի ոչ ինչ խիթամ թէ դու ցասնուցուս ընդ նա,
այլ կասկածեմ՝ գուցէ կարծիցես զնա գժգամեալ ինչ ընդ
քեզ. որ, հաւատա ինձ, Կեսար, բայց 'ի բաց հեռի է ա-
մենևին. զի զոր 'ի քէնդ ունի՝ զայն ընդ միտ արկանէ, ոչ
զոր կորոյսն, և ոչ տոյժ ինչ 'ի քէն կրեալ համարի զանձն.
այլ բազմոց բաղում ինչ քեզ ընծայել արժան գտանելով,
ոչինչ ըմբռնացաւ ընդ առնուդ զայնս յինքենէ՝ որ 'ի
միասում կողմանն գտեալ էր: Չի եթէ Անտիոքոս, մեծն
ասիացւոց Թագաւոր, երբև 'ի պարտութիւն մատնեալ

առաջի Սկիպիոնի՝ մինչև 'ի Տաւրոս լեռն Թագաւորել
հրաման ընկալաւ, կորուսեալ զամենայն կողմն Ասիոյ՝ որ
այժմ մեր է, նահանգ, սովոր է ասել՝ Թէ բարի եղև նմա 'ի
հռովմէական ժողովգունէն, զի 'ի ծանր ծանր հոգոց ազա-
տեալ՝ 'ի չափ եթէ սահմանի արքայութեան վայելից, դիւ-
րագոյն ևս է Պիոտարայ սիրովիլ զանձն. զի նա զմոլորու-
թեանն տարաբ տուգանս, սա զվերնպատացն: Զամենայն
ինչ, Կեսար, պարգևեցեր դու Պիոտարայ՝ շնորհելով նմա
և որդւոյն զանուն Թագաւորական: Ի կրկին և 'ի պահել
զայդ անուն, ոչ ինչ 'ի յերախտեաց հռովմէական ժողո-
վըրդեան, ոչ ինչ 'ի յարդանաց աւագանւոյն նուաղեալ
համարի անձին: Մեծաւ և քաջալեր հոգւով կայ, ոչ լինի
նկուն Թշնամեաց և ոչ իսկ բախանին: Բազում ինչ յառա-
ջագոյն վաստակովքն վճարեալ վարկանի, և ունել 'ի մտի
և յարուցեան իւրում՝ զի ոչ իւիք կարիցէ 'ի գերևս առ-
նել: Չի որ բախտ կամ որ արկած կամ որ զգեհաարանք
զամենայն զօրագլխոյ գվճիռսն եղծանել մարթայցէ: Քան-
զի զամենեցունց 'ի նոցանէ փառազարդեալ է, որ միան-
գամ յետ հաւանելոյ նորա 'ի չափս արուեստեան ընդ դու-
մարտական երևելոյ՝ մղեցին մարտս պատերազմաց Յաֆա,
'ի Պոնտոս, 'ի Կիլիկիա, և յԱսորիս: Իսկ զաւագանւոյն
գինանէ բազում և մեծապանծ վկայութիւնս՝ աւանդեալս
'ի հաստատակաց գիրս հռովմէական ժողովրգեանս և յար-
ձանս՝ որ հնուելիւն ժամանակաց ընկլցէ, կամ որ մոռա-
ցօնք ընկենցեն: Զինչ և զառաքինութենէ նորա ասացից,
զինչ զմեծանձնութենէն, զմեծարոյ բարոյին, զանսասա-
նելի հաստատութենէն, զորս գիտէք ամենայն և խոս-
տուն՝ զլուխ և աւարտ բարութեան, և ոմանք՝ միայն բա-
րիս ասացին, և զայսոսիկ՝ ոչ առ բարւոք ևեթ, այլ և առ
երջանիկ կեանս բաւական լինել առաքինւոյն:

Զայս ամենայն նորա զմտաւ ածեալ, և զգայդ և զգե-
րեկ 'ի նոցանս խորհելով, ոչ միայն ոչ ինչ գժգամի ընդ քեզ,—
զի ոչ ապաշնորհ ևեթ, այլ և անմիտ ևս երևիմ,—նա և զա-
մենայն իսկ զհանգստեան և զանդորրութեան ծերութեան

իւրոյ շնորհս՝ գթութեանդ քո խոստովանի: Եւ զի յա-
ռաջմէ իսկ սովին հոգւով եղէ, ոչինչ յերկուանամ՝ թէ
թղթովդ, զորոյ ղպատճէնն ընդերցայ, և ի ձեռս այսր
Բլեսամիոսի եառուր առ նա ի Տարրահոնէ, առաւել ևս
քաջալերեսցի և թափեսցէ զամենայն տարտամութիւն:
Քանզի պատուիրես նմա՝ բարեյոյս լինել և սրտապնդել,
զոր գիտեմ թէ ոչ վայրապար սովոր ես գրել: Քանզի յուշ
գայ ինձ՝ զի և առ իս գոգ նովին բանիւք գրեցեր, և ես ոչ
ընդունայն ինչ զյուսոյ բարւոյ իրաւոյս հրամանդ ի նա-
մականուդ ընկալայ: Տառապիմ արդարև վասն արքային
Դիոտարայ, ընդ որում զբարեկամութիւն առեցայ ինձ
ընկերհաչտութիւնս, ղհիւրութիւն՝ երկոցունցս կամք զո-
դեցին, զմտերմութիւն՝ ընտանութիւնն եբեր, իսկ զսերտ
սիրոյն կապ՝ սպասք նորա մեծամեծք զոր ինձ և զօրուս
իմում եհար՝ կատարեցին: Այլ ուր վասն նորա տառա-
պիմ, անդ և վասն արանց բազմաց հոյակապից, որոց ի
հարկէ չէք ինչ. քո տուեալ բնաւ ծանօթս. զի ոչ քո բա-
րերարութիւնդ երբեք յերկբայս ինչ անկանի, ոչ տագ-
նապ տարակուսի յաւիտեան ի միտս մարդկանն հարցա-
տեալ ինայ, ոչ երկիւղ ումեք երբեք հասանէ՝ որոց դամ
մի քեզ յերկիւղէն ազատեալքն իցեն:

Զիք ինչ ինձ հարկ, Կեսար, զոր ի ծանր վտանգս օրէնն
ես փորձ փորձել, թէ որով արդեօք օրինակաւ բանիւ հնար իցէ
զգուշ և զնեանս քո յուղել: Զկարօտիմ ինչ. նա ինքնին
գիտէ ընդ առաջ ելանել ազաչաւորաց և վտանգելոյ՝ ա-
ռանց ուրուք բանիւ հրաւիրանաց: Դիր առաջի քո զերե-
կոսին Թագաւորան. և զոր աչօք ոչ կարես՝ մտօքդ տես:
Զոր զլացար սլամաութեան, ողորմութեան տացես ան-
շուշտ: Խաղում են գթութեանդ քո արձանք յիշատակի,
այլ մանաւանդ անվթար փրկութիւն այնոցիկ՝ որոց
զկեանն շնորհեցեր. որ եթէ ի սոսկականն փառք իցեն,
առաւել ևս ի Թագաւորան յիշատակեսցին: Ձնուն ար-
քայական սուրբ եղև միշտ ի քաղաքի ասա, իսկ ուխտա-
կից Թագաւորացն և բարեկամաց՝ ամենասուրբ: Զանուն

զոր ի քում յաղթութեանդ կորուսանել կասկածեցին
Թագաւորքս, առ ի քէն պահեալ և հաստատեալ, վստահ
եմ՝ զի զնոյն աւանդեսցեն յորդւոց որդիս: Իսկ դեսպանքս
այս արքունիք, Հիերաս և Բլեսամիոս և Աֆոխրոնոս, քեզ
և մեզ ի վաղուց յառաջածանօթք, ի փրկութիւն Թա-
գաւորացն իբրեանց զանձինս իբրեանց տան ի քո ձեռս,
և նովին հաւատով և առաքինութեամբ ճոխացեալ Դորի-
լաւոս, դեռ ևս ընդ Հիերայ դեսպան առ քեզ առաքեալ-
արք՝ արքայիցն կարևոր բարեկամք, և քեզ՝ որպէս յու-
սամ՝ ընդունելիք: Հարց և փորձ արա զԲլեսամեայ. նոքա
ինչ գրեալ առ Թագաւորն՝ ոչ քեզ ի փառս: Իսկ Հիե-
րաս՝ ողջոյն իսկ զլեալս իւր առնու, և զամենայն
մեղսպարտութիւնն յանձին ունի փոխանակ Թագաւո-
րին. զկոչ հիշողութիւնդ աղերսեալ, յուրատս կայ՝ թէ
երբեք ի Դիոտարի շամչաութեանն խուն ինչ ի քէն մեղ-
նեալ իցէ. ի գլուխս սահմանացդ անդ առ ձեռն զինքն
ասէ լեալ, և մինչև ի ծագս նոցուն խաղացեալ. ընդ քեզ
յերանելդ ի լուսալեաց, ի զինելդ զընծայն յետ ընթե-
րեացն, ի յանկողնին մտանելդ. և ի նոյն սպաս ցանկոր-
դեալ առ քեզ ի վաղիւ անդր: Վասն որոյ եթէ ի չարա-
խօսութեանդ անուն յայնցանէ արգարև խորամանդեալ ինչ
իցէ, ոչ խորշի թէ զերեսանն զայն նմա գրեսցես: Նմին իրի,
Կ. Կեսար, իւրմ լինիմ, զի գիցես ի մաի թէ գտատատան
քո այսօր՝ կամ մեծաւ անարգանօք աղիողորմ կործա-
նումն հատուցանելոյ է Թագաւորացդ, կամ փրկութեամբ
հանդերձ՝ բարեփառ համբաւ անարատութեան: Ցորոյ
միւսն փափաքել նոցա անողորմութեանն է, զիւրան պահ-
պանել՝ քում գթութեանդ:

ԿԻԿԵՐՈՆ:

ՎԵՐՋԱԲԱՆ ՁԱՌԻՆ ՈՐ ՎԱՅՆ ԱՐՔԻՒՑ ՓԵՐԹՈՂԻ

Վասն որոյ, գառաւորք, պահեցէք զայրդ նովին պատկառելի պառաւուին՝ զոր տեսանէք սիրելի եղեալ բարեկամացն շքոյ և հնուելեան, և այնքանեաւ հանձարուին՝ որչափ արժանն իցէ զսոյն վարկանել, զոր հանձարոյ արանց աւագայ տեսանէք եղեալ ցանկալի. իսկ իրաւամբք գառասանաի որ օրինացն շնորհիւ, բանիւ ազատ քաղաքին, Լուկուլլեայ վկայութեամբ, և արձանագրոքն Մեսելլոսի հաստատեալ է: Եւ զի այս այսպէս, ինդրեմք 'ի ձէնջ, գառաւորք, եթէ ոչ մարդկեղէն ևեթ, այլ և աստուածեղէն իմն ընծայութեան հարկ է 'ի մէջ անցանել, զի զայն՝ որ զձեզ, որ զզօրապլուխս ձեր, որ զարհական հանդէսս հռովմէական ժողովրդեան յաւէժ գեղազարդեաց, որ և յայս 'ի մեր և ձեր առանին արդի վանդակ՝ խոստանայ տալ անեղծական վկայութիւն գովութեանց, որ և յայնմ ժուռ է՝ որ միշտ առ ամենեսեան ընդ սուրբս են համարեալ և քարոզեալ. այնպէս 'ի ձեր հաւատս ընկալեալք, որպէս զի ձերով մարդասիրութեամբդ 'ի գոյութիւն լինել երևեցան, քան 'ի ինքեան՝ յերեսաց խաւարութեան: Զոր ինչ զդատէս, ըստ իմում սովորութեան, համառօտ և պարզ խօսեցայ, գառաւորք. վասն եմ թէ ամենեքեան հաճ և հաւան իցէք ընդ այն. իսկ զոր ոչ ըստ առենից և ոչ ըստ գառասանական օրինի զհանձարոյ առնն ձառեցի և զուսմանէ նորա առ հասարակ, յուսամ 'ի ձեզ, գառաւորք, թէ 'ի բարւոյ մասին զայն ընդունիցիք. իսկ որ զբուն գառողութեանն պաշտօն ունի՝ զնմանէ գիտեմ աներկբայ:

ԿԻԿԵՐՈՆ:

ՎԵՐՋԱԲԱՆ ՁԱՌԻՆ ՈՐ ԸՆԴԴԷՄ Ս. ԱՆՏՈՆԻՈՍԻ

Արդ յիշեա, Մ. Անտոնիէ, զօրն զայն՝ յորում ընթերցեր զնշանապետութիւն. առաջի աչացդ նկարեա զքրիստոնէութիւն աւագանւոյն և զհռովմէական ժողովրդեանն, մոյծ ընդ նմին 'ի կշիռ զշահավաճառան քո և զքոյոցդ. յայնժամ 'ի միտ առցես՝ որչափ ինչ 'ի միջի իցէ փառաց և շահուց: Բայց զոր օրինակ են որ յանախ խնդրեն կամ թմբրութեամբ զպայծոյն չառնուն զհամ կերակրոց, նոյնպէս վաւաշոտք, ընչաքաղցք, չարագործք չունին զձաշակ ճշմարիտ փառաց: Այլ զքեզ եթէ փառք չարժեն 'ի գործս ուղղութեան, ոչ և երկիւղ խոտորեցուցանէ 'ի չարեաց գործոց: Ի գառասանանալ ոչ երկնչիս. եթէ առանմեղութեան, գովեմ. եթէ առ բռնութեան, չիմանաս՝ թէ աներկիւղն 'ի գառասանանալ յիմէ պարտիցի զանգիտել: Զի եթէ յարանց քաջաց և յընտրական քաղաքացւոց ոչ զարհուրիս, վասն զի զինուք մերժեալ որոշեալ են 'ի մարմնոյդ, նոքին խակ քոյդք, հաւատա ինձ, ոչ հանգուրժեացեն քեզ յերկար: Խակ զինչ կեանք իցեն՝ զգայդ և զգերեկ յիւրոցն խակ 'ի խեթի և 'ի կասկածի լինել. բայց եթէ՝ կամ մեծ ևս երախտիք ընորհատրամս քեզ զնոսա կացուցեր՝ քան զոր նա զոմանս յորոց խորշեցաւն, կամ թէ իցես ինչ գու յիմիք 'ի համեմատութիւն ընդ նմա գալոյ արժանի: Իբր 'ի նմա հանձար, մտաւորութիւն, ուշ, դպրութիւնք, խելամտութիւն, ժրութիւն. անցեալ երբ ընդ հանդէս մարտից պատերազմաց, թէպէտ և ազնտաբեր ընկերհաշտութեան, սակայն մեծամեծս. ամն ոչ սակաւ՝ թագաւորութեան ուշ եդեալ, չանիւ մեծաւ և ահագին վանդակք՝ զոր 'ի մարն էր 'ի պլուխս տարեալ. տրովք, յիշատակօք, առատութեամբ պարենից և խրախութեամբք զանգէտ ամբոխն ողբեալ. զիւրան՝ պարգեւօք, զհակառակորդն՝ զթութեան կերպարանօք զիւրեւ ածեալ: Զի և

այլ. է զի ահիւ սատոից, է զի երկայնմտութեամբ յա-
րատարի՝ ի ներքս մուծեալքեր՝ յաղատ քաղաք այսր՝ զսովո-
րութիւն ծառայութեան: Գոյ ինձ համեմատել զքեզ
ընդ նմա յիշխանասիրութեան, իսկ յայլում ամենայնի՝
ոչ իւիք բերես նմանութիւն: Բայց ի բազում չարեացն,
որովք յոգի խարեաց նա զընկերհաշտութիւնն, գէթ այս
ինչ գոանի բարի, զի ուսաւ Ժողովրդն հռոմէական՝
սրչափ ինչ ուժիք հաւատոս ընծայեսցէ, յոյս ոմանս վատահ
գնիցէ, յորոց զերայլ լինիցի: Արդ զայսոսիկ չածնս ինչ զմե-
տաւ, չառնուս ի միտ՝ թէ արանց քաջաց շատ է ուսանել
քանիսն գեղեցիկ իցէ ինքնին, երախտաւոք քաղցր, անուամբ
գերափառ, սատակիլ զայր բռնաւոր. որ նմա ոչն համբե-
րին արք, մինէ քեզ տարցին: Նա յետ այսորիկ, հաւա-
տա ինձ, մի զմիով եւ և եղս արասցեն ընդհանալ յայս
գործ, և ոչ դանգաղելոյ ժամուն կալցին ակն:

Ազէ հայեաց, ապաչեմ, գամ մի յընկերհաշտութիւնն,
Մ. Անտոնիէ. արկ ի միտ՝ յորոց ծնեալդ ես, և մի ընդ
որս կենցաղիագ. ընդ իս՝ որպէս և քեզ կամք լցեն. ընդ
ընկերահաշտիս գարձիր ի սէր և ի հաճութիւն: Այլ
զքէն՝ գու քեզէն առիր, ես զանձինս յայտ յանդիման
վկայեցից: Պահեցի զընկերհաշտութիւնն յերիտասարդու-
թեանս, ոչ լքի ի ծերութեան. արհամարհեցի զսու-
սերան Կասիլինայի, ոչ չարեայց ի քոյոցդ. նա աւանիկ
համակար մատուցից զանձն, եթէ մարթիցի ազատութեան
քաղաքիս՝ խոով մահուամբ յառնել անդէն ի կեանս. որ-
պէս զի ցաւք հռոմէական Ժողովրդեան՝ ծնցեն ուրեմն
զոր երկինեն ի վաղուց: Զի եթէ յառաջ քան զամս իրիւ
զքսան, ի տաճարի սուտ յայսմիկ տասցի վան առն բդեշ-
խութեամբ պատուելոյ, թէ չէ հնար տարաժամ պատա-
հել նմա մահու, որչափ Ճշմարտագոյն եւս տասցիչ այժմիկ
վան ալեւորիս: Այլ ինձ, Հարք առնեակաք, արդէն փա-
փաքելի իսկ է մահ, յետ յանկ հանելոյ զպարտս պաշտա-
մանցն՝ յորս վիճակեցայ և կատարեցի: Երկու ինչս միայն
խնդրեմ. մի, զի ի մեռանելս՝ ազատ Թողուցեալ զԺողո-

վուրդն հռոմէական. մեծ եւս ինչ քան զայս ինչ պարգեւել
չէք բնաւ դիցն անմահից. և միւս, զի իւրաքանչիւր ուժիք,
ըստ գործոց ձեռաց իւրոց առ ընկերհաշտութիւնն, նոյն-
պէս և ի գլուխս նորա հշուեցին փոխարէնքն:

ԿԻՆԵՐՈՆ:

ՎԵՐՋԱԲԱՆ ՄԻԼՈՆԻ ՃԱՌԻՆ

Ա՛յլ որ ինչ յաղագս գատիս այսորիկ՝ շատ լիցի ցայս
վայր. Թէ արդեօք և արատաբոյ քան զսահման սորա և անդր
իսկ քան զբաւականն բանիք իմ ձգեցան: Զինչ այլ միայ,
բայց յորոք անհեալ ժառէ ի ձէնջ, ով գատաւորք, զի
ընորհիցէք առնն քաջի զներուծիւն՝ զոր չնգդրէր նա, և ես
իսկ ըստ ոչ կամաց նորա ինդրեմ զայն և ժամ: Եթէ ի հե-
զուէ մեր ամենեցունն զարատասուս, ոչ մի արտօսրնչմարիցէք
ի Միլոն, եթէ միշտ զնոյն դէմս, զնոյն անայլայլակ հաստա-
տութիւն ի ձայն նորա և ի բանս առատիկ, մի լիցի ձեզ
պակասել ի ձերմէ ներողամտութենէդ. նովին իսկ թերեւս
առաւելագոյն չնորհի գատիի դա արժանի: Զի եթէ ի
սուսերամարտական կռիւս և ի դատս սինքերս մարդկան՝
զերկչոտան և զաղաչաւորս սովոր եմք արհամարհել, իսկ
զքաջասիրտս և զորս անվեհեր՝ նմանի դիմագրաւին՝ ցանկամբ
ապրեցուցանել, և ընդ նոսա առաւել ցաւ մեզ՝ որք ոչն
զգթութիւն ի մեզ ինդրիցեն, քան որ Թախանձիցեն
զայն, քանի առաւել առ հզօր քաղաքացիս պարտ է մեզ
առնել զայդ: Այլ զնս, ով գատաւորք, նուաղեցուցանեն
և զսիրտ իմ կեղեքեն բանք Միլոնի, զորս լսեմ անդադար
և հնչեն յունկն իմ հանապազ. Ողջմբ կացցեն քաղա-
քակիցք իմ, ողջամբ մնացցեն. մի հասցէ նոցա չնաս,
ծաղկեսցին և երանելի լցեն. կանգուն կացցէ քաղաքս
մեծապայծառ, կեցցեն հայրենիք իմ սիրելիք, որպէս

և վարեցանն ընդ իս. Թող զնիեցայց ես ՚ի վայելից, զի չէ ինձ հնար վայելել ընդ նոսա, Թող առանց իմ, այլ լիմ ձեռն վայելեսցեն քաղաքակից իմ զընկերհաշտութեանն խաղաղութիւն. ահա հրաժարիմ մեկնիմ ես ՚ի բաց: Եթէ չիցէ ինձ մարթ զբարութիւն ընկերհաշտութեան վայելել, գնեմ ՚ի բաց կացից ՚ի տեսոյ չարեաց նորա, և հասեալ վաղագոյն ՚ի քաղաք ուրեք օրինապահ և աղատ, հանգիցայց անդ: Ո՛վ վաստակ իմ ՚ի զուր ձեռնարկեալք. ով յոյս մնոսի, խորհուրդք ընդունայնք: Հաղարապետս Ժողովրդեան, յորժամ ՚ի տեսանել զվատթարութիւն ընկերհաշտութեան, եռու զանձն իմ ՚ի վաստակել վասն ծերակուտին՝ որ առկայծէրն, վասն ասպետաց Հռովմայեցւոց՝ որոց նուաղեալ էր զօրութիւն, վասն լաւորերոց, որք զամենայն իշխանութիւն՝ ՚ի բռնութենէ Կլաւդեան զինուց կորուսեալ էր, էր ինձ բնաւ կարծել յայնժամ զի ՚ի լաւացն օգնակից նութենէ լքեալ գտանիցիմ. յորժամ զքեզ — քանզի առ իս խօսի նա յաձախ — յորժամ զքեզ դարձուցի ՚ի հայրենիս, կարէի երբեք ածել զմտաւ թէ ինձ պակասեսցէ տեղի ՚ի հայրենիս: Ո՞ւր է արդ ծերակոյտն, որում էաքն պաշտպանք. ո՞ւր ասպետք Հռովմայեցիք, որ ընդ քեզնէնին. ո՞ւր եռանդն նախանձու աղատ քաղաքաց. ո՞ւր աղաղակ Խոպլոյ. ո՞ւր ուրեմն և քոյ ձայն Մ. Տուլլիէ, յոգունց պատսպարան, յոգունց պաշտպանութիւն. միթէ ի՞նձ միայնոյ, որ այս քանիցս ՚ի վերոյ քո զանձն ՚ի մահ մատուցի, չիցէ բաւական յօգնականութիւն:

Զայսոսիկ, ով գաւառուրք, ոչ լալագին՝ որպէս ես արդ, այլ նովին դիմօք՝ որպէս տեսանէք զի՝ բարբառի: Զաւէ վասն ապաշնորհ քաղաքացեացն արարեալ՝ զոր արարն, այլ միայն վատասիրաս ասէլով զնոսա և զանգիտողս յամենայն վտանգաց: Ցուշ ևեթ առնէ ձեզ, զի յապահովութիւն կենաց մերոց՝ զամին և զնատնաղանձ բազմութիւն, որ Պ. Կլաւդեայ հրապուրանօքն սպառնայր գոյից ձերոց, յինքն յանկոյց. ոչ միայն յեղաշրջեալ զմիտս նորա քաջութեամբ, այլ և երիւք հայրենի առացուածովք իւ-

րովք զնա ողոքեալ: Ոչ իսկ խիթայ նա. զի որ խաղաղացոյց զժողովուրդն առատաբաշխութեամբք, ոչ ածցէ զձեզ մեծամեծ վատահոքն յընկերհաշտութիւն: Ցաւելու և զծերակուտին յայսոսիկ իսկ ժամանակս տեսեալ յաձախ զլաւահամութիւն առ ինքն. և զձեր և զդասուց ձերոց խնամս, զբանս, զդիմելութիւնս տանել ասէ ընդ իւր յուրեք և բանան առաջնորդեսցէ նմա: Ցիշեցուցանէ նա՝ զի քարոզին ևեթ ձայն, որում ոչն իսկ ցանկայր, պահասեաց իւր. այլ համօրէն ժողովրդեանն հաւանութիւն որում միայն ըղձանայր, բդեաշխ զնա յոյս տալ. և եթէ նոյն արդ ընդդէմ իւր զինեսցի, կասկած չարութեանն, և ոչ թէ եղեան գործոյն զնա պատուասէր կացուսցէ: Եւ զայն գարձեալ որ Ճմարիտ իսկ է, ասէ. զի որք քաջք և խնասունք՝ ոչ այնքան վարձս ուղղագործութեանն սովոր են խնդրել, որքան զգործելն զուղղութիւն. և ոչ իւր անվտանգ ինչ ընդ ամենայն կեանս գործեալ. զի չիք ինչ գերապանծ քան զերծուցանել զհայրենիս ՚ի վտանգաց. երանի՛ որոց այն ՚ի վտանգ գրեցաւ ՚ի քաղաքացեացն. այլ և ոչ թշուառ այնոքիկ, որք բարերարութեամբք զքաղաքակիցսն զանցուցանեն. այլ քան զամենայն վարձս առաքինութեան, եթէ վարձուց պարտ իցէ ակն ունել, պայծառագոյն վարձք՝ փառքն են. սա միայն է, որ մեզ զկարճութիւն կենաց հանդերձելոցն յիշատակաւ քաղցրացուցանէ, որ մերձաւոր զհեռաւորսն կացուցանէ, և կենդանիս զմեզ ՚ի մահու անդ առնէ. սանգուղք իմն է սա, և ընդ աստիճանս սորա գոգդես յերկինս վերամբառնան մարդիկ: Զինէն, ասէ, խօսեացի միշտ ժողովուրդ հռովմէական, խօսեացին ամենայն ազգ և ազինք. և ոչ լռեացեն երբեք դարք: Նա աւանիկ յայսմ իսկ ժամանակի, յորում թշնամիք իմ բորբոքեն ամենուստ զբոց նախանձու, յամենայն ակումբս գոհութիւնք մատուցանին աստուածոց, և խնդակցութիւնք մեզ, և հռչակ զմեզ ընծանայ: Թողում զսօնս Լեարուբարցւոց անտի կատարեալս և զտարեհանս ՚ի նոցանէ կարգեալ: Այս հարիւրե-

ըորդ օր է՝ ի սպանմանէ անտի Պ. Կլաւդիոսի, միով կարծեմ աւելի. և ահա՝ ի ծայրս սահմանաց տէրութեան ժողովրդեանն Հռովմայ, ոչ միայն համբաւ նորա, այլ և իշխանութիւն համատիպիւռ ծաւալեցաւ: Վասն որոյ չէ՛ լինձ փոյթ ենէ ուր մարմին իմ կայցէ. զի ահա ընդ ամենայն երկիր փառք անուան իմոյ տարածեալ, և միշտ իսկ կայցէ ինաւցէ:

Զայսոսիկ դու առ իս յաձախ՝ անլուր՝ ի սոցանէ՝ յեղյեղիր. և արդ ես՝ ի լուր քո, Միլոն, երկրորդեմ: Արդարև զքեզ, որ զայդ արիութիւն յանձին բերես, չկարեմ գովել ըստ արժանի բաւականին. այլ որչափ աստուածային ինն է առաքինութիւնդ այդ՝ ի քեզ, այնչափ առաւելագոյն ցաւով անկասիմ՝ ի քէն: Եւ եթէ լինէին յափրշտակիս, չիցէ ինձ և ոչ սփոփումն բողոք բառնալոյ ընդդէմ այնոցիկ՝ յորոց զայդպիսի վէրս առնուցուս: Զի ոչ եթէ թշնամիք իմ յափշտակեցեն զքեզ յինէն, այլ մտերիմ բարեկամք՝ որոց չէք չար ինչ գործեալ ինձ, այլ միշտ իսկ բարիս: Զկարեք, ով դատաւորք, այնպիսի ինչ դառն հատուցանել ինձ ցաւ. — թէպէտ և զինչ քան զայս դառնագոյն — զի՝ ի մոռացօնս ինձ այս ոտն արկանել որչափ ինչ բարերարեալ է ձեր առ իս: Զոր եթէ ձեր մոռացեալ իցէ, կամ ընդ իս եթէ գժգոհեալ իցէք, հիմ ոչ յինէն՝ այլ՝ ի Միլոնէ հանէք զվրէժ: Քանզի համարեցայց կեցեալ զիս բարեբաստիկ, եթէ հացէ ինձ մահ, չև տեսեալ զմեծ զայդ չարիս: Այսմանօր մի եւեթ սփոփումն քաջալերէ զիս, Տ. Այնիէ, զի ոչ երբէք վերջացեալ գոյ առ քեզ՝ ի պարտուց երախտագիտութեան և սիրոյ: Ես ընդդէմ ոխութեան հզօրաց եղէ վասն քո դիմադրաւ. ես բազում անգամ զմարմին իմ և զկեանս նշաւակ զինուց թշնամեաց քոց կացուցի. ես բազում անգամ վասն քոյ աղաչաւոր՝ յաղերս խոնարհեցայ. զինչս և զառացուածս իմ և զորդւոյն իմոյ ընդ քեզ յաղէտս քոյ բաժանեցի. և այսօր իսկ եթէ պատրաստեալ իցէ՝ ի վերայ քո բանսութիւն, եթէ վասնզ ինչ կենաց քոց կայցէ, յիս ազաւէմ գարձուցա-

նել զայն: Զինչ այլ ինաց արդ, զինչ առնել ինձ կամ խօսել փոխան քոյոցդ առ իս երախտեաց, բայց զբախտ քո՝ որ զինչ և էն՝ համարել զիմ: Զհրաժարեմ, չմերժեմ զայն, աղաչեմ ևս զձեզ, ով դատաւորք, բարերարութեան՝ զոր ցուցէք ինձ յաձախ, տուք լսուն ազատութեամբ սորա, և մի՛ կորստեամբ եղծուն:

Յարատասեաց խնդ ոչ չարժի Միլոն. չհաւատալի՝ ի նմա փայլէ արիութիւն: Ածք է նմա աքսոր, ուր չիք տեղի քաջութեան. զիմ համարի նա կատարած բնութեան, ոչ պատուհաս: Թողցուք զնա որպէս բնաւորեցաւն՝ ի ծնէ. իսկ դուք, զինչ խորհուգս կայցէք, ով դատաւորք: Զմիշատակ Միլոնի պահեալ, զինքն՝ ի բաց վտարիցէք. և իցէ՞ ուրեք՝ ի վերայ երկրի տեղի՝ լինել առաքինութեան սորա արժանաւոր օթևան, որպիսի ատ ուր ծնաւն: Աւ ձեզ բողոքեմ, առ ձեզ քաջք արանց, որք արիւն բազում վասն ընկերհաշտութեան հեղէք. առ ձեզ՝ ի վանդ անպատուելոյ առնն և քաղաքացւոյ բողոքեմ, հազարապետք և զօրականք. որք ոչ ակնառաւէք միայն, այլ և սպառազէն կայք, և դատաստանիս այսմիկ վերահսկուք, առաքինութիւն այդպիսի մերժեսցի, վտեսցի՞, ընկեսցի՞ ի բաց: Աւաղ ինձ, եղեւ Թշուառականիս: Կարացեր դու, Միլոն, ՝ի ձեռն սոցա դարձուցանել զիս ՝ի հայրենիս, ես ոչ կարացից ՝ի ձեռն սոցա ունել զքեզ ՝ի հայրենիս: Զինչ սոց պատասխանի որդւոց խնդ, որք միւս այլ ծնող իւրեանց զքեզ համարին. զինչ և քեզ, եղբայր իմ Կուինտէ, որ երբեմն ինձ վշտակից և կաս արդ ՝ի բացեայ. չկարացի՞ ես պաշտպանել Միլոնի, և փրկել զնա՝ ի ձեռն այնոցիկ՝ որոց նպաստիւք փրկեաց նա զմեզ:

Եւ յորպիսումն դատի չկարացի. — ՝ի հաձոյականն ամենեցուն. և վասն ոյց չկարացի. — վասն այնոցիկ, որք Պ. Կլաւդիոսի մահուամբն առաւելապէս խաղաղացան. և ոյր աղաչանօք. — իմ իսկ: Զինչ մեղայ, յոր եղեռն անկրնաւոյ, ով դատաւորք, ՝ի հետազօտել, ՝ի յայտնել, յերևան ածել և ՝ի յուել զնպատակելս հատարակաց կորըս-

աեան: Ցաղբերէ ասաի բղխեն յիս և յիմաս վիշտք ամենայն: Ընդէը դարձուցէք զիս. Թերևս զի յանդիման աչաց իմոց աքսորեացին այնոքիկ, որ եաուն դարձուցանել զիս այսբէն: Մի հանդուրժէք այդմ, ազաչեմ, զի ծանրագոյն լինէ ինձ քան զաքսոր: Մա՛րթ իցէ դարձ լինել զայն համարել, ՚ի բաժանել իմեմ ՚ի նոցանէ՝ յորոց ձեռն դարձայ:

Ցանկարծ տային աստուածք անմահք (ներեսա լինէ հայրենիք իմ, մի գուցէ որովք ասեմն առ գուԹ Միլտնի՝ անգըԹանալ առ քեզ Թուխցիմ) յանկարծ տային դիք զի Պ. Կլաւդիոս ոչ միայն կենդանի, այլ և գաստաւոր և բդեաշխ և իշխանապետ կայր, քան Թէ զաեսիլն զայն տեսանէին: Ո՛վ անմահ դիք, որպիսի այր քաջ և կեցուցանելոյ՚ի ձէնջ արժանի, ազ գաստաւորք: Ա՛յլ Միլտն. ծն անդր, ՚ի բաց տար. զերաւացի վրէժն ելոյծ նա. մեք, եԹէ հարկ այնպէս իցէ, զանիրաւն կրեացուք: Ա՛յրս այս, վասն հայրենեաց ծնեալ, ուր այլ ուրեք վայելչապէս մեռանիցի, եԹէ ոչ ՚ի հայրենիս իւր. կամ եԹէ յանկարծ վասն հայրենեաց, պիշատակ արուեստին պահիցէք, և ոչ Թողուցուք կրի մարմնոյ նորա շիրիմ կանգնեացի Իտալիա: Եւ ո՛ր ասցէ զվէրս իւր հալածելոյ ՚ի քաղաքէ ասաի զայրդ զայդ, զոր ՚ի մերժել ձեր՝ քաղաքք ամենայն առ իւրեանս կոչեացեն: Երանի՛ երկրին՝ որ զդա ընկալցի. ապաշնորհ Հռոմ՝ եԹէ զդա արտաքսիցէ, Թշուառ՝ եԹէ կորուսցէ: Ա՛յլ կացցեն ասա բանք. հեգմտիզմուկ յորտասոսաց՝ չկարեմ այլ ևս խօսել. և չկամի իսկ դա արտասուօք լինել պաշապանեալ: Ազաչեմ զձեզ, ազ գաստաւորք, և պազատիմ, զի ՚ի տալ ձեր վՀնա, որ ինչ զդայդ՝ այնմ անսայցէք: Հաւատացէք ինձ, զի զառաքինուԹիւն ձեր և զարգարուԹիւն և զհաւատս, գովեսցէ մեծատէս նա ինքն[1], որ յընարուԹեան գաստաւորաց՝ զբարեբաս զիմաստագոյնս և զարիագոյնս մեծարեաց:

ԴԻՈՆԵՐՈՆ:

(1) Ա՛յս ինքն Պոմպէոս՝ որ չէր բարեկամ Միլտնի, և ընտրող գաստաւորացն էր:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՊԱԼԱՏ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ

ՅԱՆԿ

Ցառաջաբան
Կանոնք արուեստի մատենագրուԹեան

ՊԱՏՄԱԿԱՆՔ

	Էջք
Պատուէրք առ Ճարտասանական պատմուԹիւն	3
Նախամարդն պատմէ զառաջին չարժուսն և զզգացուսն և զգաստուսն որ յետ ստեղծմանն	6
Ովհաս Իգոմենեայ	11
Մոլորել Կիմոդոկեայ յանգաստի և առաջնորդուԹեամբ Եւդորի հասանել առ հայր իւր	14
ՄանկուԹիւն Կիւրոսի	20
ՄանկուԹիւն Պօղայ և Վիրգինեայ	30
Փախուստ ՚ի հայրենի հողոյն	33
Անցք ՚ի ժանտախան Միլտոնս	35
Ժանտախտ ԱԹենայ	37
Իդիպոս ՚ի ԿիԹերոն	43
Սողոն և Կրիւսոս	47
Մենամարտ Մերովէի ընդ Կելտացւոյն	49
Աւուսն ՊասԹիկի	51
Կոտորած Ենիչերեաց	53
Մարտ և մահ Կասիլինայ	55
Մեաելլոսի ընդ ՅուգուրԹայ պատերազմ	57
Աւուսն ամլոցի	60
Փիլինեան եղբարք	62
ԿայսերուԹիւն Հռոմայ առ ժամանակաք գալատեան Տեառն	

	էջ
Հռոմ մտանեալ 'ի ձեռս բարբարոսաց	64
Ճակատամարտ Ռոքռոյ	66
Անդ. ընդ Պերզինա	68
Մենամարտ Որատեանց և Կուրատեանց	71
Պատերազմ Թերմապիլեայ	73
Մահ Եպամինոնդայ	77
Մահ Կիկերոնիի	79
Մահ Կուստաւս Ադոլիի արքային Շուեդաց	80
Մահ Կարոլոսի Ա. Անգղոյ	83
Մահ Դիւբենի	87
Մահ Դիւբենի	88
Մահ Հէնրիկէի դշխոյի	89
Մահ Մարեմայ Սուարտայ	91
Յաջորդութիւն աշխարհակալութեանց Ալէքսանդրի	95
Յուզարկաւորութիւն Խպլիտասայ	96
Գեանադամբանք	101
Մահ Գերմանիկեայ և գարձ Ագրիպպինայ 'ի Հռոմ բերելով զաճիւն ամուսնոյն	103
Յարձակել Ներուեանցն 'ի վերայ բանակին Կեսարու և արկանել շփոթս 'ի նմա	107
Հռամիզդ հալածի յիւրոցն. Զենոբիա կին նորա խոցեալ 'ի նմանէ կարեվէր, փրկի մազապուր	109
Պուլխին և Վարենոս, միմեանց ոսոխք, իրերայ նըպատաս լինին 'ի մարտի	110
Կործանել շուրջ տեսանելեաց սուսերամարախց և բիւրաւորաց փիլենացւոց կորնչել ընդ նոսա կամ վիրաւորել	111
Ճակատամարտ Փրխուրայ	112
Պատերազմ և պարտութիւն դերմանացւոց 'ի Կեսարէ	114
Պատերազմ Գերմանիկեայ ընդդէմ Արմինիոսի	115
Ներուեանցն պարտութիւն 'ի զօրացն Կեսարու	120

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆՔ

Բնական և Հարատևանական նկարագրութիւնք և Պատուէրք առ այս	121

	էջ
Գարուն 'ի Յունաստան	122
Հովուական կենցաղ	123
Բոյնք թռչնոց	125
Սէր թիանօր 'ի ձագունս իւր	127
Երգ թռչնոց	129
Զուռ կամ տեղափոխութիւն թռչնոց	131
Աւուծ և վագր	135
Գիշեր չքնաղ	136
Խրախճանութիւն չինականաց	137
Քարայրն Կալիփսեայ	140
Տօնք Աստուծոյ	142
Աստիան ափունք Վոսիորի	144
Հովիան Յորգանանու	145
Հովիան Տեմպեան	147
Նէապոլիս	150
Քաղաքն Տիւբոս	151
Հռոմ	153
Բեահիկ	155
Սպառաժն Արաբիա և բարք Արաբացւոց	158
Խորհրդածութիւնք 'ի վերայ աւերակաց Պալմիրայ	161
Անկեալոց ապիկար զինուորաց	164
Զինք Տեմպեայ	165
Ամփոփումն դիականց Վարոսի և զօրականացն անկելոց	168
Բանաք	169
Փոթորիկ	171
Փոթորիկ	172
Մրրիկ յանապատի	173
Նշանակ և աւեր մրրկի 'ի կղզին Գազղեոյ	174
Թաթառ	176
Պայթուցմն Վեսուվի	178
Կորուստ նաւատորմին և զօրաց Տիբերի յանհմտութենէ նաւարկութեան	181
Նկարագիր կազմութեան նաւացն Վենետացւոց	183

ՍԱՀՄԱՆԱԿԱՆՔ

	Էջք
Սահման Ճարտասանական և իմաստասիրական և Պատուհերք առ այս	185
Մարդ	189
Մահ	190
Ջրուցատրութիւն	191
Ճշմարիտ արիութիւն	192
Մոլար բարեպաշտութիւն	193
Փառասիրութիւն	194
Առաքինութիւն և ախտ, գործունէութիւն և անգործութիւն	197
Գիրք Յովբայ	199
Ակեսարիք	200

ԱՌԱԿՔ ԵՒ ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ

Նպատակ և նկարագիր առակի և Պատուհերք առ այս	203
Գայլ և Գառն	204
Աղուէսք երկու	205
Արջ և կորիւն իւր	206
Պատանին Բաքոս և Պայ	206
Կապիկ	207
Իոս	209
Վիշապ և Աղուէսք	210
Առասպել և Այլաբանութիւն	311
Ոգիք	212
Ամիխարխա և Ուղեկիցք իւր	215
Մահ և ընկերք իւր առ գահոյիւք Պլուտոնի	216
Այլաբանութիւն քարայրի	217

ԲԱՐՈՑԱԿԱՆՔ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆՔ

Բարոյական գիտութեան գերազանցութիւն ի միակ ուսումն արժանաւոր իմաստնոյ	221

	Էջք
Աստուած աղբիւր լուսոյ և զօրութեան	224
Ծանօթութիւն Աստուծոյ ի բնութենէ	225
Թէ փոխհատուցական է ամենայն բաց յԱստուծոյ	228
Աքանչելիք Աստուծոյ	229
Տեսչութիւն Աստուծոյ ի պատմութենէ	232
Կարևորութիւն աղօթից	234
Զօրութիւն աղօթից	236
Բազմապատիկ օգտակարութիւնք քրիստոսական կրօնիդ	237
Հաւատ, Յոյս և Սէր	239
Բարեգործութիւն	242
Առաքինութիւն և Մոլութիւն	244
Գիտակցութիւն	245
Խիղճ մտաց	246
Ցեխին դատաստան	249
Նեբկիայի և Ասպատնին	250
Դերեզմանք	251
Երջանկութիւն առաքինեաց յԵլիսեան դաշտին	253
Մահ Ալէքսանդրի	256
Սէր հայրենեաց	257
Սրբազան պերճախօս	262
Թագաւոր	263
Աշխարհակալ	264
Աղէտք մարդահաճութեան	265
Նախամեծար են գիւղական կեանք քան զքաղաքացւոյն	267
Աքսորեալն	269

ՆԿԱՐԱԳԻՐՔ ԿՆՆԴԱՆԱԳԻՐՔ ԵՒ ԶՈՒԴԱԿՇԻՌՔ

Պատուհերք	271
Յոյնք	275
Ամենայնիք	276
Յոյնք և Հռովմայեցիք	277
Նկարագիր ազգին Սուրբայ	278
Օգոստոս և Կիննա	279

էջ

Կատիլինա 282
Սիլլա 283
Ջուգակշիռ Կեսարու և Կատոնի . . . 284
Պոմպէոս 285
Պատանեկութեան Յուլիոս Կեսարի . . . 286
Մարիոս 287
Ալէքսանդր 288
Պերիկլէս 290
Ալկիբիադես 294
Աննիբաղ 298
Պիւռռոսի 299
Սաւուղ 300
Գրոմուէլ 302
Լուդովիկոս ԺԴ 303
Ֆոլտէր 305
Ջուգակշիռ Գոնաէի և Թիւրենի . . . 306
Նափոլէոն Մեծն 307
Հոմերոս 310
Եաքիլոս 311
Եաքիլոս, Սոփոկլ և Եւրիպիդէս . . . 315
Իպոկրատ կամ Սույդ բժիշկ 321
Հերոնիմոս, Աւգոստինոս և Կոստանդին . 327

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐՔ

Վասն խորամանգութեան 331
Վասն զշաքաղութեան 332
Վասն ագահութեան 334
Վասն ամբարշտաձռնութեան 335
Վասն չարախօսութեան 336
Բարի թագաւոր 338
Բռնաւոր 339
Ա. յր բարկացող 340
Ա. յր շողոքորթ 341
Երիքեթան կամ Գիւտ գրամոյ 342
Մեծատունք աշխարհի 343
Ատուածամուռայ մեծատուն 345
Քահանայութիւն 346

ՆԱՄԱԿԱՆԻ

էջ

Պատուէրք յաղագս Նամակագրութեան . . 348
Տիկինն Սեվինեէ առ դուստրն իւր . . . 353
Փրիսատիոր Գոլումպոս առ արքայն Սպանիոյ . 354
Պլինիոս առ Տակիտոս 358
Սենեկա առ Լուկիլիոս 359
Յ. Յ. Րուսսո առ երիտասարդ ոմն որ խնդրեր քնա-
կանալ 'ի Մոնմորանսի զի օգտեսցի 'ի լուր
դասախօսութեանց նորա 363
Պոմպէ առ Վոլթէռ յետ հասարակաց դժբախտու-
թեան իւրեանց 364
Այնա որ Պուլէն առ այր իւր Հենրիկոս Ը. . . 365
Պետրոս Պեմպո առ Աւգոստինոս Ֆոլկեդդա
'ի Հռոմ 368
Տօրկ . Դասոս առ Անտոն Գոսդանդինի . . . 369
Պետրոս Պեմպո առ եղբօրորդի իւր Կ. Պեմպո . 370
Սերուիոս Սուլպիկիոս առ Կիկերոն . . . 371
Կիկերոն առ Սերուիոս Սուլպիկիոս . . . 374
Պլինիոս առ Թեբիոս 376
Պլինիոս առ Մարկելլինոս 377
Տ. Կիկերոն առ Տիրոն 378
Տ. Կիկերոն առ Մ. Մարիոս 379
Տ. Կիկերոն առ Սիլլոս 379
Տ. Կիկերոն առ Պլանկիոս 380
Տ. Կիկերոն առ Տիրոն 380
Տ. Կիկերոն առ Տիրոն 381
Կ. Պլինիոս առ Փաբիոս Յուստոս 382

ՅՈՒՆԱԶԱԲԱՆՔ

Պատուէրք յաղագս Յառաջաբանութեան . . 383
Յառաջաբան Ճառին որ ընդդէմ Կաեսիփոնի . . 386
Յառաջաբան Ճառին որ յաղագս պսակին . . 389
Յառաջաբան Միլոնի Ճառին 391
Յառաջաբան Ճառին Ա. Լիկիանոսի Ազքիայ քեր-
թողի 394

էջ

Յառաջաբան Ճառին որ վասն արքային Դիոտորայ· 395
Յառաջաբան երկրորդի Փիլիպպեան Ճառին . . 398
Յառաջաբան առաջին Կատիլինեան Ճառին . . 399
Յառաջաբան Կ· Տաիլիտոսի Տարեգրացւոյ· . . 400
Յառաջաբան Կատիլինեան դաւակցութեան . . 401
Յառաջաբան Ճառին Հէնրիկէի Մարիամու Թալլիոյ 404
Յառաջաբան Ճառին Լուդովիկեայ Պուբպոնեան իշխանին Գոնտէի 406
Յառաջաբան Ճառին Հէնրիկէի Անգլիոյ . 408
Յառաջաբան քարոզին Յաղագս օրինակի մեծամեծաց 411
Յառաջաբան Յաղթանակ կրօնից քարոզին . . 412
Յառաջաբան Հօրն Բրիաենայ 413

ՀԱՐՑԱՍԱՆԱԿԱՆՔ

Զուգաւորութիւն Իմաստասիրութեան ընդ Ճարտասանութեան 416
Բանք Կատիլինայ առ իւրան 418
Բանք Կատոնի ընդդէմ խորհրդոյն Կեսարու . . 420
Պղէտք պատերազմայ 424
Մեր մի Սիրակուսացի զաղատութենէ գերեաց . 426
Թէ ընտրելի է Թագաւոր խաղաղասէր քան զպատերազմի միայն ի մարտս 427
Թագաւորի չէ բաւական զինուորական առաքինութիւն եւեթ· 430
Դիմոսթենէն յաղագս պսակին· 432
Դիմոսթենէն յաղագս պսակին· 433
Առենաբանութեան Սոկրատայ 434
Եպքինէս ընդդէմ Կեսխինոնի 436
Կալավիոս շրջէ զորդին յանագորոյն խորհրդոց . 437
Յանպատրաստից առենաբանութիւն Կրասոսի ի ջատագովութիւն Պլանկիոսի 438
Գերմանիկեայ և Արմինիոսի քաջալերը առ բանակս իւրեանց 439
Կիկերոնի ջատագովութիւն Պլանկիոսի· . . . 441
Բանախօսութիւն Վիբիոսի Վիրիոսի ընդդէմ որոշման ծերակուտին Կապուայ . . . 442

էջ

Կեսար խրախուսէ զղօրան չերկինչել ի պատերազմ ընդ Գերմանացիս 443
Բանք Արիովիստայ զօրավարին Գերմանացւոյ առ Կեսար 445
Առենաբանութիւն Մինուկիոսի 447
Կիկերոն ընդդէմ Վերրեսի 448
Կիկերոն վասն Կ· Լիգարիոսի 450
Կիկերոն ընդդէմ Անտոնիոսի 451
Մեհիպա հոգեվար առ Յուպտրէթ 452
Պատասխանի Տիւբէրի առ բողոք ծերակուտին զղեղխութենէ աւազանէյն 454
Թօաք Գերմանիկեայ առ զօրս իւր ի մեկնել Ագրիպպինայ առ ի նմանէ 456
Մ· Տերենտիոս վասն բարեկամութեան ընդ Սէքստոսի ամբաստանեալ, պատասխանի առնէ վասն անձին 458
Դամբանական յիշատակն Գոնտէ 459
Յաղագս վտանգից բարեպաշտութեան մեծամեծաց· 459

ՎԵՐԱՋԲԱՆՔ

Պատուէրք յաղագս Վերջաբանութեան· . . 461
Վերջաբան քարոզին՝ Յաղագս փորձութեանց մեծամեծաց 464
Վերջաբան քարոզին՝ Յաղթանակ կրօնից . . 465
Վերջաբան քարոզին՝ Յաղագս ատութեան մարդկային փառաց 468
Վերջաբան քարոզին՝ Յաղագս թէ ի սերտս մեծամեծաց զինչ արդեւ լինիցի առաքինութեան· 470
Վերջաբան դամբանականին Գոնտէի . . . 472
Վերջաբան Ճառին որ վասն արքային Փիլոտարայ . 474
Վերջաբան Ճառին որ վասն Արքիայ քերթողի . 478
Վերջաբան Ճառին որ ընդդէմ Մ· Անտոնիոսի . 479
Վերջաբան Միլոնի Ճառին 481

330

Инв. № 1953 г.

2013